Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Федор СОЛОГУБ

МЕЛКИЙ БЕС

Перевел на армянский язык
Вардан Ферешетян

Հրատարակվել է «Թարգմանության ինստիտուտ»
ինքնավար ոչառեւտրային կազմակերպության
աջակցությամբ, Ռուսաստան:

Fyodor SOLOGUB

LITTLE DEMON

Translation into Armenian by Vardan Fereshetyan

Vogi-Nairi

ՖՅՈԴՈՐ ՍՈԼՈԳՈՒԲ

ՉՆՉԱԴԵՎԸ

Թարգմանիչ՝
Վարդան ՖԵՐԵՇԵԹՅԱՆ

Ստեփանակերտ 2018

ՀՏԴ 821.161.1-31Սոլոգուբ
ԳՄԴ 84(2Ռուս)-44
Ս 667

«Գեղarm» հանդեսի մատենաշար

Ֆյոդոր ՍՈԼՈԳՈՒԲ
Ս 667 **Չնչաղեը**: Ստեփանակերտ:
Թարգմ. ռուսերենից՝ Վ. Ֆերեշեթյանի:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ.,2018.- ... էջ:

Ֆ.Սոլոգուբի «Չնչաղեը» վեպը ռուս գրականության արծաթե դարի դասական գործերից է: Վեպի գլխավոր հերոսի՝ գավառական ուսուցչի կերպարի միջոցով հեղինակը հետազոտում է իր ժամանակի հասարակական ու ընտանեկան միջավայրերը, եւ այնտեղ հայտնաբերում չափազանց շատ չարիք ու մեղսավոր կյանք:

«Չնչաղեը» իր արժանի տեղն է զաբղեցնում այնպիսի հանրահայտ ստեղծագործությունների կողքին, ինչպիսիք են Գոգոլի «Խելագարի գրառումները», Դոստոեւսկու «Կրկնակը», Գարշինի «Կարմիր ծաղիկը», Չեխովի «Մարդը պատյանի մեջ»-ը եւ այլն:

ISBN 978-9939-1-0697-7

ՀՏԴ 821.161.1-31Սոլոգուբ
ԳՄԴ 84(2Ռուս)-44

© «Ոգի-Նաիրի», թարգմանության համար, 2018

«Ես այրել էի ուզում նրան, կախարդուհուն չար»

I

Տոնական պատարագից հետո ծխականները ցրվում էին տներով: Ոմանք կանգ էին առնում ցանկապարսպի մոտ, սպիտակ քարե պատերի ետեւում, ծեր լորենիների եւ թխկիների տակ, եւ զրուցում էին: Բոլորը տոնականորեն զուգվել էին, բարեհամբույր միմյանց էին նայում, եւ թվում էր, թե այդ քաղաքում ապրում են խաղաղ ու համերաշխ: Բայց ամենը լոկ թվում էր:

Գիմնազիայի ուսուցիչ Պերեդոնովը, կանգնած իր ընկերների շրջապատում, նրանց ասում էր.

-Ինքն իշխանուհի Վոլչանսկայան խոստացել է Վարյային, դե դա հաստատ: Հենց որ, ասում է, նրա հետ ամուսնանա, դե ես տեղնուտեղը նրան տեսուչի տեղ կապսպրեմ:

-Դե դու ինչպե՞ս Վարվարա Դմիտրիեւնային կնության կառնես,- հարցրեց կարմրադեմ Ֆալաստովը,- չէ՞ որ նա քո քույրն է: Մի՞թե նոր օրենք է ելել, որ քույրերի հետ էլ կարելի է պսակվե՞լ:

Բոլորը հռհռացին: Պերեդոնովի շառագույն, սովորաբար անտարբեր-քնատ դեմքը վայրագ դարձավ:

-Երրորդ պորտի...,- մռլտաց նա, բարկացած զրուցակիցներից կողք նայելով:

-Դե ի՞նչ, հենց քե՞զ է իշխանուհին խոստացել,- հարցրեց պճնազգեստ, դալուկ ու բարձրահասակ Ռուտիլովը:

-Ոչ թե ինձ, այլ Վարյային,- պատասխանեց Պերեդոնովը:

-Դե ահա, իսկ դու էլ հավատում ես:- Ասել ամեն ինչ էլ կարելի է: Իսկ դու ինքդ ինչո՞ւ իշխանուհուն չես ներկայացե՞լ:

-Հասկացիր, որ գնացինք Վարյայի հետ, դե բայց իշխանուհուն չբռնացրինք, մի հինգ րոպե ուշացանք,- պատմում էր Պերեդոնովը,- նա գյուղ էր գնացել, երեք շաբաթից կվերադառնա, իսկ ես ոչ մի կերպ չէի կարող սպասել, այստեղ էր պետք գալ՝ քննություններին:

-Ինչ-որ կասկածելի է,- ասաց Ռուտիլովն ու ծիծաղեց, փտավուն ատամները ցուցադրելով:

Պերեդոնովը մտորմունքի մեջ ընկավ: Զրուցակիցները ցրվեցին: Նրա հետ միայն Ռուտիլովը մնաց:

-Իհարկե,- ասաց Պերեդոնովը,- ես ուզածիս հետ կարող եմ: Միայն Վարվարան չի:

-Անշուշտ, քեզ հետ, Արդալյո՛ն Բորիսիչ, ուզածդ կնշանվի,- հաստատեց Ռուտիլովը:

Նրանք ելան ցանկապարսպից եւ դանդաղ անցնում էին չսալարկած ու փոշոտ հրապարակով: Պերեդոնովն ասաց.

-Միայն ահա, դե ինչպե՞ս իշխանուհին: Նա կբարկանա, եթե ես Վարվարային լքեմ:

-Դե, իշխանուհին ի՞նչ,- ասաց Ռուտիլովը:- Դու նրա հետ կատու չես կնքելու: Թող որ նա սկզբում քեզ տեղ տա,- կհասցնես պսակվել: Թե չէ դե ո՞նց էդպես, զուր, ոչինչ չտեսած:

-Դա ճիշտ է... - մտասույզ համաձայնվեց Պերեդոնովը:

-Դու էդպես էլ Վարվարային ասա,- համոզում էր Ռուտիլովը:- Սկզբից տեղը, թե չէ, իբր, ես էդպես էնքան էլ չեմ հավատում: Տեղը ստանաս, դե ու պսակվիր, ում հետ ուզում ես: Դե դու ավելի լավ է իմ քույրերից վերցրու,- երեքն են, ցանկացածին ընտրիր: Կրթված օրիորդներ են, խելացի, առանց շողոքորթության ասած, Վարվարային զույգ չեն: Նա նրանց եղունգն էլ չարժի:

-Դե-ե...- փնչացրեց Պերեդոնովը:

-Ճիշտ: Ի՞նչ է քո Վարվարան: Ահա, հոտ քաշիր:

Ռուտիլովը կռացավ, պոկեց մոլեխինդի խավոտ ցողունը, ճմլտեց այն տերեւների ու կեղտաճերմակ ծաղիկների հետ եւ, այդ ամենը մատներով տրորելով Պերեդոնովի քթին տարավ: Նա անդուր, ծանր հոտից կնճռոտեց: Ռուտիլովն ասում էր.

Տրորես ու դեն նետես,- ահա եւ քո Վարվարան: Նա ու իմ քույրերը՝ դա, ախպերս, երկու մեծ տարբերություն են: Աշխույժ օրիորդներ են, ժիր,- ցանկացածին վերցրու, քնել չի թողնի: Դե ու ջահել են,- ամենամեծը քո Վարվարայից եռապատիկ ջահել է: Այդ ամենը Ռուտիլովն ասում էր, ըստ իր սովորության, արագ ու զվարթ, ժպտալով, բայց նա, բարձրահասակ, նեղկուրծք, թվում էր վտիտ ու թուլակազմ, եւ նրա գլխարկի տակից, նոր ու մոդայիկ, ինչ-որ խղճուկ ցցվում էին նոսր, կարճ կտրած բացագույն մազերը:

-Դե, դու էլ՝ եռապատիկ՝ ծուլորեն հակաճառեց Պերեդոնովը, հանելով ու սրբելով ոսկե ակնոցը:

-Դե, ճիշտ որ,- գոչեց Ռուտիլովը:- Տե՛ս, աչքից բաց չթողնես, քանի ես ողջ եմ, թե չէ՝ նրանք իրենց սնապարծությունն ունեն,- հետո կուզես, դե եւ ուշ կլինի: Դե միայն թե նրանցից յուրաքանչյուրը մեծագույն հաճույքով հետդ կամուսնանա:

-Հա, էստեղ բոլորն ինձ սիրահարվում են,- մռայլ ինքնագովությամբ ասաց Պերեդոնովը:

-Դե, ահա տեսնում ես, ահա դու էլ պահը որսա,- համոզում էր Ռուտիլովը:

-Դե ես, կարեւորը, չէի ուզենա, որ նա սմքած լինի,- ձայնի մեջ կարոտով ասաց Պերեդոնովը:- Դե ինձ գիրուկ մեկը:

-Դե դու էլ այդ հաշվով մի անհանգստացիր,- եռանդագին ասում էր Ռուտիլովը:- Նրանք հիմա էլ թխլիկ օրիորդներ են, իսկ եթե լրիվ չեն էլ ծավալվել, դե դա մինչեւ ժամանակը հասնի: Կամուսնանան, ու նրանք էլ կլցվեն, ինպես մեծը: Դե մեր Լարիսան, ինքդ գիտես, ինչ կուլեբյակա է դարձել:

Դե ես կամուսնանայի,- ասաց Պերեդոնովը,- միայն թե վախենում եմ, որ Վարյան մեծ կագ ու կռիվ սարքի:

-Կագ ու կռվից վախենում ես, ահա թե դու ինչ արա,- խորամանկ ժպիտով ասաց Ռուտիլովը,- հենց էսօր էլ պսակվի, ոչ թե վաղը՝ ջահել կնոջ հետ կհայտնվես տանը, ու ամենը պրծավ գնաց: Ճիշտ, ուզո՞ւմ ես, ես դա հենց վաղը երեկոյան դրստեմ: Ո՞ւմ հետ ես ուզում:

Պերեդոնովը հանկարծ հռհռաց, ընդհատ ու բարձր:

-Դե եղա՞վ, դե ի՞նչ, թխի գա՞,- հարցրեց Ռուտիլովը:

Պերեդոնովը նույնքան հանկարծ դադարեց ծիծաղել եւ մռայլ, կամացուկ, համարյա շշուկով ասաց.

-Կմատնի սրիկան:

-Ոչինչ էլ չի մատնի, մատնելու բան չկա,- համոզում էր Ռուտիլովը:

-Կամ էլ կթունավորի,- վախվորած շշնջում էր Պերեդոնովը:

-Դե դու ամեն ինչում ինձ վստահիր,- եռանդուն համոզում էր նրան Ռուտիլովը,- ես էնքան նրբորեն ամեն ինչ գլուխ կբերեմ...

-Ես առանց օժիտի չեմ ամուսնանա,- բարկացած գոչեց Պերեդոնովը:

Ռուտիլովին ամենեւին չզարմացրեց նոր թռիչքն իր մռայլ զրուցակցի մտքերում: Նա միեւնույն ոգեւորությամբ հակաճառեց.

-Փախուկ, դե միթե նրանք անօժիտ են: Դե, ի՞նչ, եղավ, ի՞նչ է: Դե, ես վազեմ, ամեն ինչ կարգավորեմ: Միայն թե, ոչ մեկին ոչ մի ծպտուն, լսում ես, ոչ մեկին:

Նա թափահարեց Պերեդոնովի ձեռքը եւ փախավ նրանից: Պերեդոնովը լուռ նայում էր նրա ետքից: Օրիորդ Ռուտիլովները մտաբերվեցին նրան, զվարթ, ծաղրասեր: Անհամեստ միտքը նրա շուրթերի վրա աղտեղի ժպիտի նման մի բան արտամղեց, այն մի ակնթարթ հայտնվեց ու անհետեց: Նրա մեջ աղոտ անհանգստություն ելավ: «Դե իշխանուհու հետ ոնց էդպես,- մտածեց նա:- Դրանց տակ գրոշներ են, եւ հովանավորություն էլ չկա, իսկ Վարվարայի հետ տեսուչ կդառնաս, դե իսկ հետո տնօրեն էլ կդարձնեն»:

Նա նայեց փութագար փախչող Ռուտիլովի ետքից ու չարախնդորեն մտածեց. «Թող վազվզի»:

Եւ այդ միտքը նրան հույլ ու աղոտ հաճույք պատճառեց: Բայց նա տաղտուկ զգաց այն բանից, որ ինքը՝ մենակ է. գլխարկը քաշեց ճակատին, բացագույն հոնքերը կիտեց եւ փութկոտ ուղեւորվեց տուն չսալարկած, ամայի փողոցներով, որ աճել էին սպիտակ ծաղիկներով պատված թավուտով, եւ մեկ էլ ջրկոտեմով, կեղտակոլոլ խոտով: Ինչոր մեկը կանչեց նրան ցածր ու արագ ձայնով.

-Արդալյոն Բորիսիչ, մեզ մոտ անցեք:

Պերեդոնովը բարձրացրեց խոժոռ աչքերն ու զայրացկոտ նայեց ցանկապատին: Այգում դռնակի ետեւում կանգնած էր Նատալյա Աֆանասեւա Վերշինան, փոքրիկ, նիհարիկ, թխամաշկ կին, ամբողջովին սեւազգեստ, սեւահոն, սեւաչ: Նա կեռասենուց սարքած մուգ մուշտուկով ծխախոտ էր ծխում եւ թեթեւակի ժպտում էր, ասես այնպիսի մի բան գիտեր, ինչը չեն ասում, բայց ինչին ժպտում են: Ոչ այնքան բառերով, որքան թեթեւ, արագ շարժումներով նա Պերեդոնովին իր այգի էր կանչում՝ դռնակը բացեց, կողմ քաշվեց, ժպտում էր խնդրողական եւ դրա հետ մեկտեղ վստահ եւ ձեռքերով ցույց էր տալիս,- մտիր, իբր, ինչ ես կանգնել:

Եւ մտավ Պերեդոնովը, ենթարկվելով նրա, ասես հմայախոսող, անհունչ շարժումներին: Բայց նա տեղնուտեղը կանգ առավ ավազե շավղիկի վրա, ուր նրա աչքն ընկան չոր ճյուղերի կտորտանքնները, եւ նայեց ժամացույցին:

-Նախաճաշելու ժամն է,- քրթմնջաց նա:

Թեպետ ժամացույցը վաղուցվանից էր նրան ծառայում, բայց նա հիմա էլ, ինչպես միշտ մարդ տեսնելիս, հաճույքով նայեց դրա մեծ ոսկե կափարիչին: Տասներկուսին քսան էր պակաս: Պերեդոնովը որոշեց, որ կարելի է փոքր ինչ կենալ: Նա մռայլ քայլում էր Վերշինայի ետքից շավղիկներով, սեւ ու կարմիր հաղարջի, արքայամորու, փշալից հաղարջենու ցածրամած թփերի կողքով:

Այգին դեղնում ու վառվռում էր պտուղներով եւ մեկ էլ ուշահաս ծաղիկներով: Այստեղ շատ պտղատու ու հասարակ ծառեր ու թփեր կային՝ ցածրիկ ճյուղատարած խնձորենիներ, կլորատերեւ տանձենիներ, լորենիներ, հարթ շողշողուն տերեւներով բալենիներ, սալորենի, ցախկեռաս: Ծամբուկի թփերի վրա կարմրատակում էին պտուղները: Ցանկապատի մոտ հոծ աճում էր սիբիրյան խորդենին,- ծիրանեգույն ջղերով մանրիկ դալկավարդագույն ծաղիկները:

Հրավառ թփերի տակից հանում էին իրենց փշոտ ծիրանեգույն գլխիկները: Կողքը կեցած էր փայտե տունը, փոքրիկ, գորշավուն, մի կացարանով, դեպ այգին ընդարձակ ճաշասենյակով: Այն հաճելիո ւ հարմարավետ էր թվում: Իսկ դրա ետեւում երեւում էր բանջարանոցի մի մասը: Այնտեղ օրորվում էին կակաչի չորուկ տուփիկները եւ մեկ էլ երիցուկի ճերմակադեղին խոշոր կապագլխարկները, արեւածաղկի դեղին գլխիկները ճլորում էին թոշնելուց առաջ եւ օգտակար հմայախոտերի միջեւ բարձրանում էին հովանացածաղիկները՝ սպիտակ արմատագերանի եւ դալկածիրանեգույն խնդամոլային տառեղնատունկի մոտ, աճում էին բացդեղին գորտնուկներն ու մեկ էլ ցածրամած իշկաթնուկները:

-Պատարագի եղե՞լ եք,- հարցրեց Վերշինան:

-Եղել եմ,- մռայլ պատասխանեց Պերեդոնովը:

-Ահա եւ Մարթան էլ վերադարձավ,- ասում էր Վերշինան:- Նա հաճախ է մեր եկեղեցի գնում: Դե ես էլ ծիծաղում եմ՝ դե այդ ո՞ւմ համար եք, ասում եմ, դուք, Մարթա՛, մեր եկեղեցի գնում:

Կարմրում, լռում է: Գնանք, տաղավարում նստենք,- ասաց նա արագ եւ առանց որեւէ անցման այն բանից, ինչ մինչ այդ էր ասում:

Այգու մեջ, ճյուղատարած թխկիների ստվերում, կեցած էր հին գորշավուն տաղավարը,- երեք աստիճան վեր, մամռապատ տախտակա-

մածը, ցածրիկ պատերը, վեր հեսանված լայնափոր գերաններն ու վեցաթեք կտուրիկը:

Մարթան նստել էր տաղավարում, դեռեւս պատարագից զուգված: Նրա հագին ժապավենակապերով բացագույն զգեստ էր: Կարճ թեւքերը մերկացնում էին կարմիր արմունկները, ուժեղ եւ մեծ ձեռքերը: Մարթան, ի դեպ, գեշ չէր: Պեպենները նրան չէին փչացնում: Նա նույնիսկ լավիկի համբավ ուներ, հատկապես յուրայինների, լեհերի շրջանում,- նրանք այստեղ քիչ չէին:

Մարթան Վերշինայի համար ծխախոտ էր լցնում: Նա անհամբեր ուզում էր, որպեսզի Պերեդոնովը նայեր իրեն ու հիացքի մեջ ընկներ: Այդ ցանկությունը մատնում էր իրեն նրա միամիտ դեմքի վրա անհանգիստ սիրալիրության արտահայտությամբ: Սակայն, դա գալիս էր ոչ այն բանից, որ Մարթան սիրահարված էր Պերեդոնովին՝ Վերշինան ուզում էր նրան գործի դնել, ընտանիքը մեծ էր, եւ Մարթան կամենում էր սիրաշահել Վերշինային, որի մոտ նա մի քանի ամիս ապրում էր, Վերշինայի ծեր ամուսնու մահից հետո,- սիրաշահել իր եւ եղբայր գիմնազիստի համար, ով նույնպես հյուրընկալվում էր այստեղ:

Վերշինան եւ Պերեդոնովը մտան տաղավար: Պերեդոնովը մռայլամած ողջունեց Մարթային ու նստեց՝ ընտրեց այնպիսի տեղ, որպեսզի գերանը մեջքը քամուց պատսպարի եւ որպեսզի ականջները միջանցահովի տակ չընկնեն: Նա նայեց Մարթայի վարդագույն փութփուլներով դեղին մաշիկներին ու մտածեց,որ իրեն փեսա են որսում: Դա նա միշտ մտածում էր, երբ տեսնում էր իր հետ սիրալիր օրիորդների: Նա Մարթայի մեջ միայն թերություններ էր տեսնում՝ շատ պեպեններ, եւ կոպիտ մաշկով մեծ ձեռքեր: Նա գիտեր, որ նրա հայրը, շլյախտիչ է, քաղաքից մի վեց վերստ հեռավորության վրա մի փոքրիկ գյուղակ էր վարձակալել: Եկամուտը քիչ էր, երեխաները շատ՝ Մարթան ավարտել էր նախագիմնազիան, որդին գիմնազիայում էր սովորում, մյուս երեխաներն ավելի փոքր էին:

-Գարեջուր թույլ կտա՞ք լցնել,- արագ հարցրեց Վերշինան:

Սեղանի վրա բաժակներ էին դրված, երկու շիշ գարեջուր, թիթեղյա տուփով մանրաշաքար, գարեջրով թրջված մելքիորե գդալ:

Կխմեմ,- կցկտուր ասաց Պերեդոնովը:

Վերշինան նայեց Մարթային: Մարթան լցրեց բաժակը, հրեց Պերե-

դոնովի կողմը, եւ ընդ որում նրա դեմքին տարօրինակ ժպիտ էր խաղում, ոչ այն է վախեցած, ոչ այն է բերկրալի: Վերշինան արագ ասաց, ասես բառերը ցրիվ էր տալիս.

-Գարեջրի մեջ շաքար դրեք:

Մարթան Պերեդոնովին մոտեցրեց շաքարով թիթեղյա տուփը: Բայց Պերեդոնովը սրտմտոտ ասաց.

-Ոչ, դա՝ գարշանք է, շաքարով:

-Դե ի՞նչ եք ասում, համեղ է,- միահունչ ու արագ ասաց Վերշինան:

-Շատ համեղ է,- ասաց Մարթան:

-Գարշանք է,- կրկնեց Պերեդոնովը եւ բարկացկոտ նայեց շաքարին:

-Ինչպես կուզեք,- ասաց Վերշինան եւ միեւնույն ձայնով, առանց կանգառի ու անցման, այլ բանից խոսեց. - Չերեպնինն ինձ ձանձրացնում է,- ասաց նա ու ծիծաղեց: Ծիծաղեց եւ Մարթան: Պերեդոնովն անտարբեր նայում էր՝ նա ուրիշի գործերի մեջ ոչ մի մասնակցություն չէր ունենում՝ մարդկանց չէր սիրում, նրանց մասին այլ կերպ չէր մտածում, քան միայն իր օգուտների եւ հաճույքների հետ կապված: Վերշինան ինքնագոհ ժպտաց ու ասաց.

-Կարծում է, թե ես իր հետ կամուսնանամ:

Սարսափելի լպիրշ է,- ասաց Մարթան, ոչ այն պատճառով, որ այդ էր մտածում, այլ այն պատճառով, որ ուզում էր Վերշինային հաճոյանալ ու սիրաշահել:

-Երեկ պատուհանի մոտ ծիկրակում էր,- պատմում էր Վերշինան:- Այգի էր մտել, երբ մենք ընթրում էինք: Պատուհանի տակ չան էր դրված, մենք անձրեւի տակ էինք դրել՝ լրիվ լցվել էր: Տախտակով ծածկված էր, ջուրը չէր երեւում, նա բարձրացել չանի վրա ու նայում էր պատուհանից: Իսկ մեզ մոտ լամպ էր վառվում,- նա մեզ տեսնում է, իսկ մենք նրան չենք տեսնում: Հանկարծ աղմուկ ենք լսում: Սկզբում վախեցանք, դուրս թռանք: Իսկ դե նա էլ ջուրն է ընկել: Սակայն մինչ մեր հասնելը դուրս էր պրծել, լրիվ թաց փախավ՝ շավղի վրա թաց հետքն է: Դե իսկ մենք մեջքից էլ ճանաչեցինք:

Մարթան ծիծաղում է բարալիկ, բերկրալի ծիծաղով, ինչպես ծիծաղում են բարեկիրթ երեխաները: Վերշինան ամեն ինչ պատմեց արագ ու միապաղաղ, ասես ցրիվ էր տալիս՝ ինպես խոսում էր միշտ,- եւ մե-

կեն լռեց, նստել ու բերանի ծայրով ժպտում էր, եւ դրանից նրա թուխ եւ չոր դեմքը խորշոմել էր, եւ ծխելիքից սեւ ատամները թեթեւակի բացվել էին: Պերեդոնովը մտածեց ու հանկարծ հռհռաց: Նա միշտ մեկեն չէր արձագանքում այն բանին, ինչը նրան ծիծաղելի էր թվում,- նրա ընկալումները դանդաղ ու բութ էին:

Վերշինան մեկը մեկի ետքից ծխախոտ էր ծխում: Նա իր քթի տակ առանց ծխախոտի ծխի չէր կարող ապրել:

-Շուտով հարեւաններ կլինենք,- հայտարարեց Պերեդոնովը:

Վերշինան արագ հայացք նետեց Մարթայի վրա: Նա փոքր ինչ կարմրեց, երկչոտ սպասումով նայեց Պերեդոնովին եւ տեղնուտեղը աչքերն այգու կողմն արեց:

-Տեղափոխվո՞ւմ եք,- հարցրեց Վերշինան:- Իսկ ինչո՞ւ:

-Գիմնազիայից հեռու է,- բացատրեց Պերեդոնովը:

Վերշինան անվստահ ժպտում էր: Ավելի ճիշտ մտածում էր, թե նա ուզում է Մարթային ավելի մոտ լինել:

-Բայց չէ որ դուք այնտեղ արդեն վաղուց եք ապրում, արդեն մի քանի տարի է,- ասաց նա:

-Դե տանտիրուհին զզվելի արարած է,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը:

-Իբր թե՞,- անվստահ հարցրեց Վերշինան, եւ ծուռ ժպտաց:

Պերեդոնովը փոքր ինչ աշխուժացավ:

-Նոր պաստառ է փակցրել, բայց գեշ է,- պատմում էր նա:- Կտորը կտորին չի բռնում: Հանկարծ ճաշասենյակում դռան վերեւում բոլորովին այլ նախշ է, ողջ սենյակը զարդանկարներով եւ մեկ էլ ծաղիկներով, իսկ դռան վերեւում շերտագծերով եւ մեկ էլ մեխակներով: Եւ գույնն էլ ամենեւին այն չէ: Մենք գուցե եւ չնկատեինք, բայց Ֆալաստովը եկավ, ծիծաղում է: Եւ բոլորն են ծիծաղում:

-Դե էլ ինչ, այդպիսի այլանդակություն է,- համաձայնվեց Վերշինան:

-Միայն թե մենք նրան չենք ասում, որ մենք դուրս ենք գալու,- ասաց Պերեդոնովը եւ ընդ որում ձայնն իջեցրեց:- Բնակարան կգտնենք եւ կգնանք, իսկ նրան չենք ասում:

-Անշուշտ,- ասաց Վերշինան:

-Թե չէ, թերեւս, կագ ու կռիվ կսարքի,- ասում էր Պերեդոնովը, եւ նրա աչքերի մեջ վախլուկ անհանգստություն արտացոլվեց:- Դե մեկ էլ

արի ու նրան ամսվա համար վճարիր, էդպիսի գարշանքի համար:

Պերեդոնովն ուրախությունից հռհռաց, որ դուրս կգա ու բնակարանի համար չի վճարի:

-Կպահանջի,- նկատեց Վերշինան:

-Թող պահանջի, ես չեմ տա,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը:- Մենք Պիտեր էինք գնացել, դե եւ այդ ժամանակ բնակարանից չենք օգտվել:

-Բայց չէ որ բնակարանը ձեզ էր մնացել,- ասաց Վերշինան:

-Դե դա ինչ բան է: Նա պիտի վերանորոգի: Մի՞թե մենք պարտավոր ենք վճարել այն ժամանակի համար. որ դեռ չենք ապրում: Եւ գլխավորը՝ նա սարսափելի լպիրշ է:

-Դե, տանտիրուհին լպիրշ է այն պատճառով, որ ձեր... քույրիկը, դե չափազանց բորբոքուն էակ է,- ասաց Վերշինան «քույր» բառի վրա թեթեւակի հապաղումով:

Պերեդոնովը խոժոռվեց եւ կիսաքնատ աչքերով բութ նայում էր իր առաջ: Վերշինան այլ բանից խոսեց: Պերեդոնովը գրպանից կարամել հանեց, թղթից այն ազատեց ու սկսեց ծամել: Նա պատահաբար նայեց Մարթային ու մտածեց, թե նա նախանձում է եւ որ ինքն էլ է կարամել ուզում:

-«Տալ նրան, թե՞ չտալ»,- մտածում էր Պերեդոնովը:- Նա չարժի: Եւ կամ էլ թե տալ,- թող չմտածեն, թե ես ափսոսում եմ: Ես շատ ունեմ, գրպաններս լիքն են»:

Եւ նա մի բուռ կարամել հանեց:

-Վերցրեք,- ասաց նա ու մեկնեց սառնաշաքարները սկզբում Վերշինային, հետո Մարթային,- լավ պոմպոններ են, թանկ, ֆունտի համար երեսուն կոպեկ եմ վճարել:

Նրանք մի-մի հատ վերցրին: Նա ասաց.

-Դե դուք ավելի շատ վերցրեք: Ես շատ ունեմ, եւ լավ պոմպոններ են,- ես գեշ բան չեմ ուտի:

-Ծնորհակալ եմ ձեզ, ես այլեւս չեմ ուզում,- ասաց Վերշինան արագ ու անարտահայտիչ:

Եւ նրա խոսքերը նրա ետքից կրկնեց Մարթան, բայց ինչ-որ անվճռական:

Պերեդոնովն անվստահ նայեց Մարթային ու ասաց.

-Դե ինչպե՞ս չուզել: Վերցրեք:

Եւ նա կույտից մի կարամել վերցրեց իրեն, իսկ մնացածը դրեց Մարթայի առաջ: Մարթան ժպտաց ու գլուխը հակեց:

«Վնտաշ,- մտածեց Պերեդոնովը,- չի կարողանում կարգին շնորհակալություն հայտնել»:

Նա չգիտեր, թե Մարթայի հետ ինչ խոսեր: Նա նրան հետաքրքիր չէր, ինչպես բոլոր առարկաները, որոնց հետ նրա համար ինչ-որ մեկի կողմից հաճելի կամ անհաճո հարաբերություններ հաստատված չէին:

Մնացած գարեջուրը լցվեց Պերեդոնովի բաժակի մեջ: Վերշինան նայեց Մարթային:

-Ես կբերեմ,- ասաց Մարթան: Նա միշտ անխոս գլխի էր ընկնում, թե Վերշինան ինչ է ուզում:

-Վլադյային ուղարկեք, նա այգում է,- ասաց Վերշինան:

-Վլադիսլավ,- ճչաց Մարթան:

-Այստեղ եմ,- արձագանքեց տղան այնքան մոտիկ եւ այնքան արագ, ասես նա ունկ էր դնում:

-Գարեջուր բեր, երկու շիշ,- ասաց Մարթան,- խոտերի մեջ է , արկղում:

Ծուտով Վլադիսլավը տաղավարին մոտ վազեց, պատուհանից գարեջուրը մատուցեց Մարթային եւ Պերեդոնովին գլուխ տվեց:

-Բարեւ ձեզ,- խոժոռ ասաց Պերեդոնովը,- այսօր քանի՞ շիշ գարեջուր եք կոնծել:

Վլասիսլավը հարկադրաբար ժպտաց ու ասաց.

-Ես գարեջուր չեմ խմում:

Դա տասնչորս տարեկան տղա էր, պեպենոտ, ինչպես Մարթան, դեմքով, քրոջ նման, անհմուտ շարժումների մեջ դանդաղկոտ: նա կոպիտ կտավից բլուզ էր հագել: Մարթան շշուկով եղբոր հետ խոսեց: Նրաք երկուսն էլ ծիծաղում էին, եւ նա չգիտեր, ինչի համար, նա միշտ ենթադրում է, որ իր վրա են ծիծաղում: Վերշինան անհանգստացավ: Նա արդեն ուզում էր Մարթային ձայն տալ: Բայց ինքը Պերեդոնովը չար ձայնով հարցրեց.

-Ինչի՞ վրա եք ծիծաղում:

Մարթան ցնցվեց, շրջվեց նրա կողմն ու չգիտեր, ինչ ասել: Վլադիսլավը ժպտում էր, նայելով Պերեդոնովին, եւ թեթեւակի կարմրում էր:

-Դա անքաղաքավարի է, հյուրերի ներկայությամբ,- ասում էր Պերեդոնովը:- Ինձ վրա՞ եք ծիծաղում,- հարցրեց նա:

Մարթան կարմրեց: Վլադիսլավը վախեցավ:

-Կներեք,- ասաց Մարթան,- մենք բնավ էլ ձեզ վրա չէինք ծիծաղում: Մենք մեր բաների մասին:

-Գաղտնիք,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը:- Հյուրերի ներկայությամբ անքաղաքավարի է գաղտնիքների մասին խոսելը:

-Դե այդ էլ չէ, թե գաղտնիք է,- ասաց Մարթան,- իսկ մենք այն բանի վրա, որ Վլադյան՝ բոբիկ է, եւ չի կարող այստեղ մտնել,- ամաչում է:

Պերեդոնովը հանգստացավ, սկսեց Վլադյայի վրա կատակներ հորինել, հետո նրան էլ կարամել հյուրասիրեց:

-Մարթա, բերեք իմ սեւ գլխաշորը,- ասաց Վերշինան,- դե մեկ էլ ձեռքի հետ խոհանոց էլ անցեք, ինչ եղավ այնտեղ կարկանդակը:

Մարթան հնազանդորեն ելավ: Նա հասկացավ, որ Վերշինան ուզում է Պերեդոնովի հետ խոսել, եւ ուրախ էր ծույլը, որ շտապ չէր:

-Իսկ դու հեռու գնա,- ասաց Վերշինան Վլադյային,- պարապ տեղը ոտքի տակ մի ընկիր:

Վլադյան վազեց, եւ լսելի էր, թե ինչպես է ավազը շրշում նրա ոտքերի տակ: Վերշինան զգույշ ու արագ կողքանց նայեց Պերեդոնովին, իր կողմից անընդհատ բաց թողնվող ծխի միջից: Պերեդոնովը նստած էր լուռ, նայում էր ուղիղ իր առաջ մշուշվող հայացքով եւ կարամել էր ծամում: Նրան հաճելի էր, որ գնացին, թե չէ, թերեւս, նորից կծիծաղեին: Թեպետ եւ հաստատ իմացավ, որ իր վրա չէին ծիծաղում, բայց նրա մեջ սրտնեղություն էր մնացել,- այդպես դաղող եղինջի հպումից հետո երկար մնում եւ աճում է ցավը, թեկուզ եւ եղինջն ավելի հեռու է:

-Դե ինչ է չե՞ք ամուսնանում,- հանկարծ հաճախակի ու արագ խոսեց Վերշինան:- Դե էլ ինչ եք սպասում: Արդալյոն Բորիսիչ, Վարվարան ձեզ լավ զույգ չէ, կներեք, ուղիղ ասեմ:

Պերեդոնովը ձեռքը տարավ փոքր ինչ խճճված շագանակագույն մազերի վրայով եւ խոժոռ կարեւորությամբ ասում էր.

-Դե այստեղ ինձ համար զույգ չկա:

-Մի ասեք,- առարկեց Վերշինան ու ծուռ ժպտաց:- Այստեղ նրանից շատ ավելի լավերը կան, եւ ցանկացածը ձեզ հետ կամուսնանա:

Նա կտրուկ շարժումով ծխախոտի մոխիրը թափ տվեց, ասես ինչ-

որ բանի վրա հաստատական նշան էր դրել:

-Ցանկացածն ինձ պետք չէ,- պատասխանեց Պերեդոնովը:

-Այստեղ ցանկացածի մասին չէ խոսքը,- արագ ասում էր Վերշինան:- Չէ որ դուք օժիտի ետեւից ընկնողը չեք, միայն թե լավ աղջիկ լինի: Դուք ինքներդ բավականաչափ վաստակում եք, փառք Աստծո:

-Ոչ,- առարկեց Պերեդոնովը,- ինձ համար ավելի շահավետ է Վարվարայի հետ ամուսնանալը: Նրան իշխանուհին հովանավորություն է խոստացել: Նա ինձ լավ տեղ է տալիս,- ասում էր Պերեդոնովը խոժոռ խանդավառությամբ:

Վերշինան թեթեւակի ժպտում էր: Ողջ նրա կնճռոտ ու մուգ, ասես թութունով ծխահարված երեսիկը ներողամիտ անվստահություն էր արտահայտում: Նա հարցրեց.

-Դե ձեզ նա այդ ասել է, դե իշխանուհին: Շեշտով «ձեզ» բառի վրա:

-Ոչ թե ինձ, այլ Վարվարային,- խոստովանեց Պերեդոնովը,- դե դա միեւնույնն է:

-Դե դուք չափազանց շատ եք հույս դնում ձեր քույրիկի վրա,- չարախինդ ասում էր Վերշինան:- Դե իսկ ասացեք, իսկ նա ձեզանից շա՞տ մեծ է: Մի տասնհինգ տարի՞: Թե՞ ավելի: Չէ որ նա հիսունի մոտ է:

-Դե ինչ եք ասում,- սրտնեղած ասաց Պերեդոնովը,- դեռ երեսուն չկա:

Վերշինան ծիծաղեց:

-Ասացեք, խնդրեմ,- ձայնի մեջ անթաքույց քմծիծաղով ասաց նա,- իսկ տեսքից նա ձեզանից շատ ավելի մեծ է: Իհարկե, դա իմ գործը չէ, այլ միայն կողքից ափսոս է, որ այդպիսի լավ երիտասարդը պիտի ապրի ոչ այնպես, ինչպես նա արժանի կլիներ իր գեղեցկությամբ եւ հոգեւոր հատկանիշներով:

Պերեդոնովը ինքնագոհ զննում էր իրեն: Բայց նրա շառագույն դեմքի վրա ժպիտ չկար, եւ թվում էր, թե նա նեղացած է այն բանից, որ ոչ բոլորն են իրեն հասկանում, ինչպես Վերշինան: Իսկ Վերշինան շարունակում էր.

-Դուք առանց հովանավորության էլ հեռու կգնաք: Մի՞թե ղեկավարությունը չի գնահատի: Դե էլ ինչո՞ւ Վարվարայից կպչել: Դե հո Ռուտիլովների օրիորդներից դուք կին չեք վերցնի՝ նրանք՝ թեթեւամիտ են, իսկ ձեզ ծանրաբարո կին է պետք: Դե ահա իմ Մարթային վերցնեիք:

Պերեդոնովը նայեց ժամացույցին:

-Տուն գնալու ժամն է,- ասաց նա եւ սկսեց հրաժեշտ տալ:

Վերշինան վստահ էր, որ Պերեդոնովը գնում է այն պատճառով, որ ինքը խորն է նրան խոցել, եւ որ նա լոկ անվճռականությունից չի ուզում խոսել Մարթայի մասին:

II

Վարվարա Դմիտրիեւնա Սալոշինան, Պերեդոնովի բնակակցուհին, սպասում էր նրան, փնթի հագնված, բայց մանրազնին շպարված ու կարմրեցված:

Նախաճաշին մուրաբայով կարկանդակներ էին թխվում՝ Պերեդոնովը դրանք սիրում էր: Վարվարան օրորվելով վազում էր խոհանոցով, բարձր կրունկներով, եւ փութում էր մինչեւ նրա գալն ամեն ինչ պատրաստել: Վարվարան վախենում էր, որ աղախինը՝ չեչոտ, հաստլիկ աղջիկ Նատալյան,- մի կարկանդակ կթռցնի, եւ կամ թե ավելին: Այդ պատճառով Վարվարան խոհանոցից դուրս չէր գալիս եւ, ըստ սովորության, նախատում էր աղախնին: Նրա, նախկին սիրուհության հետքերը պահպանող կնճռոտ դեմքի վրա, անփոփոխ ընկած էր փնթփնթան-ագահ արտահայտությունը:

Ինչպես միշտ տուն դառնալիս, Պերեդոնովին համակեցին դժգոհությունն ու անձկությունը: Նա աղմկոտ մտավ ճաշասենյակ, գլխարկը նետեց պատուհանագոգին, նստեց սեղանի մոտ ու գոռաց.

-Վարյա, մատուցի՛ր:

Վարվարան բերում էր ուտելիքները խոհանոցից, պճնասիրությունից ճարպկորեն քարշ էր գալիս նեղ մաշիկների վրա, եւ Պերեդոնովին ինքն էր սպասավորում: Երբ նա սուրճը բերեց, Պերեդոնովը կռացավ ծխացող բաժակի վրա ու հոտոտեց: Վարվարան տագնապեց եւ վախվորած նրան հարցրեց.

-Դե դու ի՞նչ, Արդալյոն Բորիսիչ: Սուրճից ինչ-որ հո՞տ է գալիս:

Պերեդոնովը խոժոռ նայեց նրա վրա ու բարկացկոտ ասաց.

-Հոտոտում եմ, արդյոք թույն չի գցած:

-Դե դու ի՞նչ, Արդալյոն Բորիսիչ,- վախեցած ասաց Վարվարան:- Աստված քեզ հետ, դե դու դա ի՞նչ հորինեցիր:

-Օմեգա ես հորատել,- փնթփնթում էր նա:

-Դե ես ի՞նչ շահ ունեմ քեզ թունավորելու,- համոզում էր Վարվարան,- բավ է քեզ հիմարություն դուրս տալ:

Պերեդոնովը դեռ երկար հոտոտում էր, վերջապես հանգստացավ ու ասաց.

-Դե եթե թույն կա, ուրեմն ծանր հոտն անպայման կզգաս, միայն թե ավելի մոտ հոտոտես, հենց գոլորշու մոտ:

Նա փոքր ինչ լռեց եւ հանկարծ չարամտորեն ու ծաղրանքով արտաբերեց.

-Իշխանուհին:

Վարվարան հուզվեց:

-Ի՞նչ իշխանուհին: Իշխանուհին ի՞նչ:

-Դե էն իշխանուհին,- ասում էր Պերեդոնովը,- չէ, թող նա սկզբում տեղը տա, դե իսկ հետո եւ ես կամուսնանամ: Դու հենց էդպես էլ նրան գրի:

-Չէ որ դու գիտես, Արդալյոն Բորիսիչ,- խոսեց Վարվարան հորդորիչ ձայնով,- որ իշխանուհին խոստանում է միայն, երբ ես ամուսնանամ: Թե չէ նրան քեզ համար հարմար չի խնդրելը:

-Գրի, որ մենք արդեն պսակվել ենք,- արագ ասաց Պերեդոնովը, ուրախանալով հնարանքի համար:

Վարվարան այն է ապուշ էր կտրում, բայց շուտով խելքի եկավ ու ասաց.

-Դե ինչ խաբեմ,- չէ որ իշխանուհին կարող է տեղեկանալ: Չէ, դու ավելի լավ է ամուսնության օրը նշանակիր: Դե եւ արդեն զգեստը կարելու ժամն է:

-Ի՞նչ զգեստ,- մռայլ հարցրեց Պերեդոնովը:

-Դե մի՞թե էս հնամաշով պսակվեմ,- ճչաց Վարվարան:- Դե փող տուր, Արդալյոն Բորիսիչ, դե զգեստի համար:

-Գերեզմանիդ համա՞ր ես պատրաստում,- չարասրտորեն հարցրեց Պերեդոնովը:

-Անասուն ես դու, Արդալյոն Բորիսիչ,- կշտամբանքով գոչեց Վարվարան:

Հանկարծ Պերեդոնովը կամեցավ Վարվարային ծաղրել: Նա հարցրեց.

-Վարվարա, գիտե՞ս, որտե՞ղ էի ես:

-Դե որտե՞ղ,- անհանգիստ հարցրեց Վարվարան:

-Վերշինայի մոտ,- ասաց նա ու քրքջաց:

-Քեզ ընկերակցություն ես գտել,- չարասրտորեն ճչաց Վարվարան,- ասելու բան չկա:

-Մարթային տեսա,- շարունակում էր Պերեդոնովը:- Ահա կբռնեմ ու կամուսնանամ նրա հետ:

-Միայն թե ամուսնացիր նրա հետ,- ճչաց Վարվարան, կարմիր ու չարությունից դողացող,- ես նրա աչքերը ծծմբաթթվով կվառեմ:

-Թքած ունեմ ես քեզ վրա,- հանգիստ ասաց Պերեդոնովը:

-Չես թքի,- ճչում էր Վարվարան:

-իսկ ահա եւ կթքեմ,- ասաց Պերեդոնովը:

Ելավ ու բութ եւ անտարբեր տեսքով թքեց նրա երեսին:

-Խոզ,- ասաց Վարվարան բավական հանգիստ, ասես թուքը նրան թարմացրեց:

Եւ սկսեց անձեռոցիկով սրբվել: Պերեդոնովը լռում էր: Վերջին ժամանակներս նա Վարվարայի հետ սովորականից ավելի կոպիտ էր: Դե եւ նախկինում էլ նրա հետ վատ էր վարվում:

Քաջալերված նրա լռությամբ, նա ավելի բարձր խոսեց.

-Ճիշտ որ, խոզ ես: Ուղիղ մռութիս կպար:

Նախասենյակում լսվեց մկկացող, ասես ոչխարի ձայն:

-Մի գոռա,- ասաց Պերեդոնովը,- հյուրեր են:

-Դե, դա Պավլուշկան է,- քմծիծաղելով, պատասխանեց Վարվարան:

Բերկրուն բարձր ծիծաղող մտավ Պավել Վասիլեւիչ Վոլոդինը, երիտասարդ մարդ, ամբողջովին եւ դեմքով եւ շարժուձեւով զարմանալիորեն ոչխարի նման՝ մազերը, հանց ոչխարի, խուճուճ, աչքերը դուրս ընկած ու բութ,- ամեն ինչ, ինչպես զվարթ ոչխարի մոտ,- տխմար երիտասարդ: Նա ատաղձագործ էր, նախկինում սովորում էր արհեստավորական դպրոցում, իսկ այժմ արհեստի ուսուցիչ էր ծառայում քաղաքային ուսումնարանում:

-Արդալյոն Բորիսիչ, ընկեր ջան,- ուրախալի գոչեց նա. - դու տանը սուրճ ես ըմպում, եւ ահա ես տեղնուտեղն էստեղ եմ:

-Նատաշկա, երրորդ գդալը բեր,- գոռաց Վարվարան:

Խոհանոցից լսելի էր, թե ինչպես Նատալյան զրնգացնում էր միակ

մնացած թեյի գդալը՝ մյուսները թաքցրած էին:

-Կեր, Պավլուշկա,- ասաց Պերեդոնովը, եւ երեւում էր, որ նա ուզում է կերակրել Վոլոդինին:- Իսկ ես, եղբայր, դե արդեն շուտով տեսուչի կնգեմ,- Վարյային իշխանուհին խոստացել է:

Վոլոդինը հրճվեց ու քրքջաց:

-Իսկ ապագա տեսուչը սուրճ է ըմպում,- գոչեց նա, Պերեդոնովի ուսին թփթփացնելով:

-Իսկ դու կարծում ես, հե՞շտ է տեսուչի ծգելը: Կմատնեն - ու վերջ:

-Դե ի՞նչ մատնեն,- քմծիծաղելով հարցրեց Վարվարան:

-Դե քիչ բան կա: Կասեն, որ ես Պիսարեւ եմ կարդացել,- եւ առ:

-Իսկ դուք, Արդալյոն Բորիսիչ, էդ Պիսարեւին դարակի ետեւը,- քմծիծաղելով խորհուրդ տվեց Վոլոդինը:

Պերեդոնովը վախվխելով նայեց Վոլոդինին ու ասաց.

-Դե ինձ մոտ, գուցե թե, երբեք էլ Պիսարեւ չի եղել: Խմել ուզո՞ւմ ես, Պավլուշկա:

Վոլոդինը ցցեց վարի շուրթը, իր արժեքն իմացող մարդու նշանակալից դեմք ընդունեց եւ, ոչխարավարի գլուխը հակելով, ասաց.

-Եթե ընկերակցության համար, ապա ես միշտ պատրաստ եմ խմել, իսկ էնպես՝ չէ-չէ:

Իսկ Պերեդոնովը նույնպես միշտ պատրաստ էր խմել: Օղի խմեցին, քաղցր կարկանդակներ համտեսեցին:

Հանկարծ Պերեդոնովը սուրճի մնացուկը բաժակից պատի վրա շփեց: Վոլոդինը ծռեց իր ոչխարի աչքերն ու զարմանքով շուրջբոլորը նայեց: Պաստառները կեղտոտված, պատառոտված էին: Վոլոդինը հարցրեց.

-Դե էս ի՞նչ է ձեր պաստառների հետ:

Պերեդոնովն ու Վարվարան քրքջացին:- Մենք շուտով դուրս կգանք: Միայն թե դուք բերանից մի թռցրեք:

-Հիանալի է,- գոչեց Վոլոդինն ու ուրախալի հռհռաց:

Պերեդոնովը մոտեցավ պատին ու սկսեց ներբաններով ծեծել: Վոլոդինը նրա օրինակին հետեւելով նույնպես պատին աքացի էր տալիս: Պերեդոնովն ասաց.

-Մենք միշտ, երբ ուտում ենք, պատերը կեղտոտում ենք,- թող հիշի:

-Ինչ բլիթներ դրեցի,- հիացմունքով բացականչում էր Վոլոդինը:

-Դե Իրկան ոնց կապշի,- ասաց Վարվարան չոր ու չար ծիծաղով:

Եւ երեքն էլ, պատի դեմ կանգնած, թքում էին դրա վրա, պոկում էին պաստառներն ու սապոգներով ծեծում: Հետո, հոգնած ու գոհ, կողմ քաշվեցին:

Պերեդոնովը կռացավ ու կատվին բարձրացրեց: Կատուն գեր էր, սպիտակ, գեշ: Պերեդոնովը թափահարում էր նրան,- ականջներից ու պոչից էր քաշում, վիզն էր թափահարում: Վոլոդինը բերկրալի հռհռում ու հուշում էր Պերեդոնովին, թե էլ ինչ կարելի է անել:

-Արդալյոն Բորիսիչ, փչիր նրա աչքերին: Սորթին հակառակ շոյիր:

Կատուն փնչացնում ու փորձում էր դուրս պրծնել, բայց չէր համարձակվում ճանկերը ցույց տալ,- դրա համար նրան դաժանորեն ծեծում էին: Ի վերջո Պերեդոնովին զվարճանքը ձանձրացրեց, եւ նա կատվին բաց թողեց:

-Լսիր, Արդալյոն Բորիսիչ, ինչ էի ես ուզում քեզ ասել,- խոսեց Վոլոդինը:- Ամբողջ ճանապարհին մտածում էի, թե հանկարծ չմոռանամ, եւ քիչ էր մնում մոռանայի:

-Դե՞,- խոժոռ հարցրեց Պերեդոնովը:

-Այ դու քաղցր սիրում ես,- զվարթ ասում էր Վոլոդինը - իսկ ես էսպիսի կերակուր գիտեմ որ դու մատներդ կլիզես:

-Ես ինքս բոլոր համեղ կերակուրները գիտեմ,- ասաց Պերեդոնովը:

Վոլոդինը նեղացած դեմք ընդունեց:

-Գուցե թե,- ասաց նա,- դուք, Արդալյոն Բորիսիչ, գիտեք բոլոր համեղ ուտելիքները, որոնք պատրաստում են ձեր հայրենիքում, բայց դուք ինչպե՞ս կարող եք իմանալ բոլոր համեղ ուտելիքները, որոնք սարքվում են իմ հայրենիքում, եթե դուք երբեք իմ հայրենիքում չեք եղել:

Եւ, իր առարկության համոզչությամբ գոհ, Վոլոդինը ծիծաղեց, մկկաց:

-Քո հայրենիքում սատկած կատուներ են խժռում,- զայրացած ասաց Պերեդոնովը:

-Թույլ տվեք, Արդալյոն Բորիսիչ,- ճղճղան ու ծիծաղկոտ ձայնով ասում էր Վոլոդինը,- այդ, գուցե թե, ձեր հայրենիքում են բարեհաճում սատկած կատուներ ուտել, դրան մենք չենք դիպչի, այ միայն թե երլի դուք երբեք չեք կերել:

-Չէ, չեմ կերել,- խոստովանեց Պերեդոնովը:

-Դե իսկ այդ ի՞նչ ուտելիք է,- հարցրեց Վարվարան:

-Իսկ դա ահա թե ինչ է,- սկսեց բացատրել Վոլոդինը,- դուք բրնձաձավարով ու մեղրով շիլան գիտե՞ք:

-Դե դա ով չգիտի - քմծիծաղելով, պատասխանեց Վարվարան:

-Ահա ուրեմն, չամիչով, շաքարով, նշով կորեկաձավարակերը՝ դա հենց երլին է:

Եւ Վոլոդինը մանրամասն պատմեց, թե ինչպես են իր հայրենիքում երլի պատրաստում: Պերեդոնովը տաղտկորեն լսում էր:Հոգեհաց,- դե ինչ, նրան ի՞նչ է հանգուցյալների դա՞սն է գցում Պավլուշկան:

Վոլոդինն առաջարկեց:

-Եթե դուք ուզում եք, որ ամեն ինչ լինի, ինչպես հարկն է, դուք ինձ հումքը տվեք, դե ես էլ ձեզ համար կսարքեմ:

-Դե էծին բանջարանոց թող,- մռայլ ասաց Պերեդոնովը:

«Մեկ էլ մի բան կաթացնի»,- մտածեց նա:

Վոլոդինը նորից նեղացավ:

-Եթե դուք մտածում եք, Արդալյոն Բորիսիչ, թե ես ձեզնից շաքար կթռցնեմ, ապա դուք սխալվում եք,- ինձ ձեր շաքարը պետք չի:

-Դե ինչ էստեղ հիմարություններ դուրս տանք,- ընդհատեց Վարվարան:- Չէ որ դուք գիտեք, նրա մոտ անընդհատ քմահաճություններ են: Եկեք ու եփեք:

-Ինքդ էլ կուտես,- ասաց Պերեդոնովը:

-Դե այդ ինչո՞ւ,- նեղացկոտությունից դռդռացող ձայնով հարցրեց Վոլոդինը:

-Որովհետեւ գարշանք է:

-Ինչպես կկամենաք, Արդալյոն Բորիսիչ,- ուսերը թոթվելով ասաց Վոլոդինը,- իսկ ես միայն ուզում էի ձեզ գոհացնել, իսկ եթե դուք չեք ուզում, ապա ինչպես կամենաք:

-Իսկ քեզ այդ ինչպես էր գեներալը շշպռե՞լ,- հարցրեց Պերեդոնովը:

-Ինչ գեներալ,- հարցին հարցով պատասխանեց Վոլոդինն ու կարմրեց եւ նեղացած վարի շուրթը փքեց:

-Դե լսել ենք, լսել,- ասում էր Պերեդոնովը:

Վարվարան քմծիծաղում էր:

-Թույլ տվեք, Արդալյոն Բորիսիչ,- տաք-տաք վրա բերեց Վոլոդինը,-

դուք լսել եք, այո, գուցե թե, ոչ մինչեւ վերջ: Ես ձեզ պատմեմ, թե ինչպես է բանն այդ եղել:

-Դե պատմիր,- ասաց Պերեդոնովը:

-Դա երեկ չէ առաջին օրն էր,- պատմում էր Վոլոդինը,- հենց այս ժամին: Մեզ մոտ ուսումնարանում, ինչպես ձեզ հայտնի է, արհեստանոցում վերանորոգում է : Եւ ահա, բարեհաճեցեք տեսնել, գալիս է «Կապանքը» մեր տեսուչին հետազննելու, իսկ մենք աշխատում ենք ետին սենյակում: Լավ: Ես չեմ ասում, ինչու է «Կապանքը» եկել, ինչ է նրան պետք,- դա իմ գործը չէ Ենթադրենք ես գիտեմ, որ նա՝ ազնվականության պարագլուխ է, իսկ մեր ուսումնարանի հետ ոչ մի կապ չունի,- բայց ես դրան չեմ դիպչում: Գալիս է՝ դե թող, մենք նրանց չենք խանգարում, քիչ-քիչ աշխատում ենք,- հանկարծ նրանք մտնում են մեզ մոտ, եւ Կապանքը, բարեհաճեցեք տեսնել, գլխարկով է:

-Այդ նա քեզ անհարգալիություն է ցուցաբերել,- մռայլ ասաց Պերեդոնովը:

-Հաճեցեք տեսնել,- ուրախացած վրա բերեց Վոլոդինը,- իսկ մեզ մոտ սրբապատկեր է կախված, եւ մենք ինքներս անգլխարկ ենք, իսկ նա մեկ էլ հայտնվում է մամլյուկի պես: Դե ես էլ հաճեցի նրան ասել, մեղմ, վեհանձնորեն՝ ձերդ գերազանցություն, ասում եմ, նեղություն քաշեք ձեր գլխարկը հանել, որովհետեւ, ասում եմ, էստեղ սրբապատկեր է: Արդյոք ես ճիշտ չասա՞ցի,- հարցեց Վոլոդինը եւ հարցական աչքերը չռեց:

-Հիանալի է, Պավլուշկա,- գոչեց Պերեդոնովը,- էդպես էլ նրան պետք է:

-Իհարկե, դե ինչն դրանց թողնես,- նեցուկ կանգնեց եւ Վարվարան:- Ապրես, Պավել Վասիլեւիչ:

Վոլոդինը զուր նեղացված մարդու տեսքով շարունակում էր.

-իսկ նա հանկարծ հաճեց ինձ ասել՝ ամեն մարդ պետք է իր տեղը ճանաչի: Ծրջվեց ու ելավ: Ահա թե ոնց էր բանը եղել, եւ էլ ոչինչ:

Այդուհանդերձ Վոլոդինն իրեն հերոս էր զգում: Պերեդոնովը նրան ի մխիթարություն կարամել տվեց:

Մի հյուր էլ եկավ, Սոֆյա Եֆիմովնա Պրեպոլովենսկայան, անտառապետի կինը, գեր, բարեհամբույր-խորամանկ դեմքով եւ սահուն շարժումներով: Նրան նստեցրին նախաճաշելու: Նա նենգադավ հարց-

րեց Վոլոդինին.

-Այդ ի՞նչ է դուք, Պավել Վասիլեւիչ, այդպես հաճախակի եք սկսել այցելել վարվարա Դմիտրիեւնային:

-Ես Վարվարա Դմիտրիեւնայի մոտ չեմ հաճել գալ,- համեստորեն պատասխանեց Վոլոդինը,- այլ Արդալյոն Բորիսիչի:

-Արդյոք ինչ-որ մեկին չե՞ք սիրահարվել,- քմծիծաղելով, հարցնում էր Պրեպոլովենսկայան:

Բոլորին հայտնի էր, որ Վոլոդինն օժիտով հարսնացու էր փնտրում: Ծատերի ձեռքն էր խնդրում եւ մերժում էր ստանում: Պրեպոլովենսկայայի կատակը նրան անտեղի թվաց: Դողդողացող ձայնով, իր ողջ պահվածքով նեղացած ոչխար հիշեցնելով, նա ասաց.

-Եթե ես սիրահարվել եմ, Սոֆյա Եֆիմովնա, ապա դա ինձնից եւ այդ անձից բացի ոչ մեկին չի վերաբերում, իսկ դուք այդպիսի եղանակով կողմ եք մնում:

Բայց Պրեպոլովենսկայան ոչ մի կերպ չէր սսկվում:

-Նայեք,- ասում էր, կսիրահարեցնեք դուք Վարվարա Դմիտրիեւնային, ով այդ ժամանակ Արդալյոն Բորիսիչի համար քաղցր կարկանդակներ կթխի:

Վոլոդինը շուրթերը փքեց, հոնքերը բարձրացրեց եւ արդեն չգիտեր, ինչ ասել:

-Դե դուք մի ամաչեք, Պավել Վասիլեւիչ,- շարունակում էր Պրեպոլովենսկայան,- ինչով դուք փեսացու չեք: Եւ երիտասարդ եք, եւ գեղեցիկ:

-Գուցե թե, Վարվարա Դմիտրիեւնան եւ չկամենա էլ,- ասաց Վոլոդինը, քմծիծաղելով:

-Դե, ոնց չեն ուզի,- պատասխանեց Պրեպոլովենսկայան,- ինչ որ չափազանց համեստ եք անտեղի:

-Իսկ, գուցե թե, եւ ես էլ չուզեմ,- ասաց Վոլոդինը, կոտրատվելով:- Ես, գուցե թե, չեմ ուզում ուրիշի քույրերի հետ ամուսնանալ: Ինձ մոտ, գուցե թե, հայրենիքում հենց իմ հորեղբոր աղջիկն է մեծանում:

Նա արդեն սկսել էր հավատալ, որ Վարվարան դեմ չէ իր հետ ամուսնանալուն: Վարվարան բարկանում էր: Նա Վոլոդինին հիմար էր համարում. դե եւ նա չորս անգամ ավելի քիչ էր ստանում, քան Պերեդոնովը: Իսկ Պրոպոլովեսկայան ջանում էր Պերեդոնովին ամուսնացնել իր քրոջ հետ, պարարտամարմին տերտերադստրի: Այդ պատճառով նա

ջանում էր Պերեդոնովին Վարվարայի հետ կռվացնել:

-Դե ինչ եք դուք ինձ խնամախոսում,- սրտնեղած ասաց Վարվարան,- այ դուք ավելի լավ է ձեր փոքրիկին Պավել Վասիլեւիչի համար հարսնախոսեք:

-Դե ինչու ես պետք է նրան ձեզանից խլեմ,- կատակով առարկեց Պրեպոլովենսկայան: Պրեպոլովենսկայայի կատակները Պերեդոնովի մտքերին նոր շրջադարձ տվեցին. դե եւ երլին էլ պինդ նստել էր նրա գլխում: Այդ ի՞նչ է Վոլոդինն այդպիսի կերակուր հորինել: Պերեդոնովը չէր սիրում խորհրդածել: Առաջին րոպեին նա միշտ հավատում էր այն բանին, ինչ նրան կասեին: Այդպես նա հավատաց եւ Վոլոդինի սիրահարվածությանը Վարվարային: Նա մտածում էր՝ ահա կպսակվեն Վարվարայի հետ, իսկ հետո, երբ տեսուչ դառնա, ճանապարհին նրան կթունավորեն երլիով եւ կփոխարինեն Վոլոդինով՝ իրեն կթաղեն ինչպես Վոլոդինի, իսկ Վոլոդինը տեսուչ կլինի: Ճարպիկ են մտածել:

Հանկարծ նախասենյակում աղմուկ լսվեց: Պերեդոնովն ու Վարվարան վախեցան՝ Պերեդոնովն անշարժ դռանը սեւեռեց կկոցած աչքերը: Վարվարան գողունի մոտեցավ հյուրասենյակ տանող դռանը, հազիվ կիսաբացեց այն, հետո նույնքան կամացուկ, ետնամատների վրա, ձեռքերով հավասարակշռությունը պահպանելով եւ մոլորված ժպտալով, վերադարձավ սեղանի մոտ: Նախասենյակից ճղճղան ճիչ եւ աղմուկ էր հասնում, ասես այնտեղ մարտնչում էին: Վարվարան շշնջում էր.

-Երշովան է՝ լուլ հարբած, Նատաշկան նրան չի թողնում, իսկ նա հենց հյուրասենյակ է ճղում:

-Դե ի՞նչ անենք,- վախեցած հարցրեց Պերեդոնովը:

-Պետք է հյուրասենյակ անցնել,- որոշեց Վարվարան,- որպեսզի նա այստեղ չխցկվի:

Գնացին հյուրասենյակ, իսկ դռներն իրենց ետքից պինդ փակեցին: Վարվարան նախասենյակ ելավ տանտիրուհուն կասեցնելու կամ խոհանոցում նստեցնելու թույլ հույսով: Բայց լկտի կնիկն այդուհանդերձ մեկ է հյուրասենյակ ներխուժեց: Նա, ձեռքերը կանթելով, շեմի մոտ կանգ առավ եւ համընդհանուր ողջույնի տեսքով հայհոյական բառեր էր շաղ տալիս: Պերեդոնովն ու Վարվարան նրա շուրջ դես ու դեն էին վազում եւ ջանում էի նրան նախասրահին մոտ աթոռի վրա նստեցնել

եւ ճաշասենյակից հնարավորինս հեռու: Վարվարան նրան խոհանոցից սկուտեղի վրա օղի, գարեջուր, կարկանդակներ բերեց: Բայց տանտիրուհին չէր նստում, ոչինչ չէր վերցնում եւ նետվում էր ճաշասենյակ, բայց միայն թե ոչ մի կերպ չէր կարողանում իմանալ, թե որտեղ է դուռը: Նա կարմիր էր, գզգզված, կեղտոտ, եւ նրանից հեռվից օղու հոտ էր փչում: Նա ճչում էր.

-Չէ, դու ինձ քո սեղանի մոտ նստեցրու: Ինչ ես դու ինձ սկուտեղի վրա բերում: Ես սփռոցի վրա եմ ուզում: Ես՝ տանտիրուհի եմ, ուրեմն դու ինձ պատվիր: Դու մի նայիր, որ ես՝ հարբած եմ: Փոխարենը ես՝ ազնիվ եմ, ես՝ իմ մարդու կինն եմ:

Վարվարան, վախլուկ ու լկտի քմծիծաղելով, ասաց.

-Դե այդ մենք գիտենք:

Երշովան աչքով արեց Վարվարային, խռպոտ հռհռաց եւ լոթիաբար մատները չրխկացրեց: Նա ավելի ու ավելի լպիրշ էր դառնում:

-Քույր,- ճչում էր նա,- մենք գիտենք, թե դու ինչ քույր ես: Իսկ ինչո՞ւ քեզ մոտ տնօրենուհին չի գալիս, հը՞, ի՞նչ:

-Դե դու մի գոռա,- ասաց Վարվարան:

Բայց Երշովան էլ ավելի բարձր գոռաց.

-Ինչպես կարող ես դու ինձ հրահանգել: Ես իմ տանն եմ, ինչ ուզում, էն էլ անում եմ: Կուզեմ՝ եւ հենց հիմա ձեզ դուրս կվռնդեմ, եւ որ ձեր իզն ու թոզն էլ չմնա: Բայց միայն թե ես գթասիրտ եմ: Ապրեք, ոչինչ, միայն թե անպատկառություն չանեք:

Այդ ընթացքում Վոլոդինն ու Պրեպոլովենսկայան համեստորեն նստել պատուհանի մոտ ու լռում էին: Պրեպոլովենսկայան թեթեւակի քմծիծաղում էր, խեթ-խեթ աչք էր ածում կռվազանին, իսկ ինքը ձեւացնում էր, թե փողոց է նայում: Վոլոդինը նստել էր դեմքի վրա նեղացածնշանակալից արտահայտությամբ:

Երշովան առժամանակ բարեհամբույր տրամադրության մեջ հայտնվեց եւ բարեսրտորեն Վարվարային, հարբած ու զվարթ ժպտալով եւ նրա ուսին թմբմփացնելով, ասաց.

-Չէ, դե դու ինձ լսիր, թե ես քեզ ինչ կասեմ,- դու ինձ քո սեղանի մոտ նստեցրու, դե մեկ էլ աղայական խոսակցություն ինձ մատուցիր: Դե մեկ էլ ինձ անուշահաց մատուցիր, պատվիր տանտիրուհուդ, այ էդպես, քնքուշ դու իմ աղջիկ:

-Ահա քեզ կարկանդակներ,- ասաց Վարվարան:

-Կարկանդակ չեմ ուզում, աղայական անուշահաց եմ ուզում,- գոչեց Երշովան, ձեռքերը թափահարելով եւ երանելի ժպտալով,- համեղ անուշահաց են պարոններն ուտում, այ թե ինչ համեղ:

-Դե ես քեզ համար ոչ մի անուշահաց էլ չունեմ,- պատասխանում էր Վարվարան, ավելի համարձակ դառնալով այն բանից, որ տանտիրուհին ավելի ու ավելի զվարթ էր դառնում,- այ քեզ կարկանդակ են տալիս, դե ուրեմն լափի:

Հանկարծ Երշովան գլխի ընկավ, թե որն է ճաշասենյակ տանող դուռը: Նա գազազած բղավեց.

-Ձամփա տուր, իժի ծնունդ:

Դեն հրեց Վարվարային ու նետվեց դեպի դուռը: Նրան չհասցրին ետ պահել: Գլուխը կռացնելով, բռունցները սեղմելով, նա ներխուժեց ճաշասենյակ, դուռը շառաչյունով բացելով: Այնտեղ նա շեմի մոտ կանգնելով, տեսավ կեղտոտած պաստառներն ու զիլ ձայնով վժժաց:

Նա ձեռքերը կանթեց, քաջաբար ոտքը կողմ դրեց ու գազազած ճչաց.

-Հա, դե դուք իսկապես ուզում եք գնալ:

-Ինչ ես ասում, Իրինյա Ստեպանովնա,- դողդողացող ձայնով խոսում էր Վարվարան,- մենք միտք էլ չունենք, բավ է հիմարություններ դուրս տաս:

-Մենք ոչ մի տեղ չենք գնա,- հաստատում էր Պերեդոնովը,- մեզ էստեղ էլ լավ է:

Տանտիրուհին չէր լսում, մոտենում էր շվարած Վարվարային եւ նրա դեմքի մոտ բռունցքներն էր թափահարում: Պերեդոնովը Վարվարայի ետեւում էր կենում: Դե նա կփախչեր, միայն թե հետաքրքիր էր նայել, թե ինչպես տանտիրուհին ու Վարվարան կկռվեն:

-Մի ոտքի վրա կանգնեմ, մյուսից կքաշեմ, երկուկես կպատառոտեմ,- գազազած գոռում էր Երշովան:

-Դե ի՞նչ ես ասում, Իրինա Ստեպանովնա,- համոզում էր Վարվարան,- վերջ տուր, մեզ մոտ հյուրեր են:

-Դե հյուրերիդ էստեղ բեր,- ճչաց Երշովան,- հենց քո հյուրերն էլ ինձ պետք են:

Երշովան, օրորվելով նետվեց հյուրասենյակ եւ, հանկարծ բացար-

ձակ փոխելով թե խոսքը եւ թե ողջ իր վարմունքը, խոնարհաբար ասաց Պրեոպոլովենսկայային, ցածր գլուխ տալով նրան, ընդ որում համարյա թե փռվեց հատակին.

-Տիրուհի քնքուշ, Սոֆյա Եֆիմովնա, կներեք դուք ինձ, հարբած կնկան: Բայց միայն, ահա թե ինչ ես ձեզ կասեմ, դե լսեք: Ահա դուք գալիս եք նրանց մոտ, իսկ գիտեք, թե ի՞նչ է նա ձեր քրոջ մասին ասում: Եւ ո՞ւմ: Ինձ, հարբած կոշկակարուհուն: Ինչո՞ւ: Որպեսզի ես բոլորին պատմեմ, ահա թե ինչու:

Վարվարան շառագունեց ու ասաց.

-Ոչինչ էլ ես քեզ չեմ ասել:

-Դու չե՞ս ասել: Դու, պիղծ գարշանք,- գոռաց Երշովան, սեղմած բռունքցներով վրա գալով Վարվարային:

-Դե, լռիր,- շվար քրթմնջաց Վարվարան:

-Չէ, չեմ լռի,- չարախինդ ճչաց Երշովան եւ նորից դիմեց Պրեպոլովենսկայային:- Թե նա, իբր, ձեր ամուսնու հետ է ապրում, ձեր քույրը, ահա թե ինչ էր նա ինձ ասում, գարշելին:

Սոֆյան չար ու խորամանկ աչքերը շողացրեց Վարվարայի վրա, ելավ ու ձեւական ծիծաղով ասաց.

-Հեզորեն շնորհակալ եմ, չէի սպասում:

-Խաբում ես,- բարկացկոտ վժժաց Երշովայի վրա Վարվարան:

Երշովան զայրացկոտ բվվաց, ոտքը գետնով տվեց ու ձեռքը թափ տվեց Վարվարայի վրա եւ տեղնուտեղը կրկին դիմեց Պրեպոլովենսկայային.

-Դե եւ պարոնն էլ ձեր մասին, տիրուհի-խանում, ինչ է ասում: Թե դուք իբր առաջ քարշ եք եկել, իսկ հետո ամուսնացաք: Այ, թե ինչպիսին են նրանք, ամենագարշելի մարդիկ: Թքեք դուք նրանց մռութներին, տիրուհի բարի, չարժե այդպիսի գարշելի մարդուկների հետ գլուխ դնել:

Պրեպոլովենսկայան կարմրեց ու լուռ գնաց նախասենյակ: Պերեդոնովը վազեց նրա ետքից, արդարանալով.

-Նա խաբում է, դուք նրան մի հավատացեք: Ես միայն մի անգամ ասել են նրա ներկայությամբ որ դուք՝ հիմար եք, դե էն էլ չարությունից, իսկ ավելին, Աստծո սիրույն, ոչինչ չեմ ասել,- դա նա ինքն է հորինել:

Պրեպոլովենսկայան հանգիստ պատասխանում էր.

-Դե ինչ եք ասում, Արդալյոն Բորիսիչ, չէ որ ես տեսնում եմ, որ նա հարբած է, ինքն էլ չի հիշում, ինչ է դուրս տալիս: Միայն թե դուք ինչո՞ւ եք թույլ տալիս այդ ամենը ձեր տանը:

-Դե արի ու իմացիր,- պատասխանեց Պերեդոնովը,- ինչ անես նրա հետ:

Պրեպոլովենսկայան շվարած ու բարկացած, կոֆտան էր հագնում: Պերեդոնովը գլխի չընկավ նրան օգնել: Դեռ ինչ-որ բան էր քրթմնջում, բայց նա արդեն նրան չէր լսում: Այդժամ Պերեդոնովը վերադարձավ հյուրասենյակ: Երշովան սկսեց ճղճղան կշտամբել նրան: Վարվարան դուրս վազեց առմուտք եւ Պրեպոլովենսկայային էր մխիթարում:

Դե դուք գիտեք, թե ինչ հիմար է նա,- ինչ է խոսում, ինքն էլ չգիտի:

-Դե բավական է, ինչ եք դուք անհանգստանում,- պատասխանում էր նրան Պրեպոլովենսկայան:- Ինչ ասես հարրբած կնիկը դուրս կտա:

Տան մոտ, բակում, որ առ սանդղամուտքն էր ելնում, եղինջ էր աճում, խիտ, բարձր: Պրեպոլովենսկայան թեթեւակի ժպտաց, եւ դժգոհության վերջին ստվերը փախավ նրա սպիտակ եւ գիրուկ դեմքի վրայից: Նա առաջվա պես բարեհամբույր ու սիրալիր դարձավ Վարվարայի հետ: Վիարավորանքի համար առանց վեճի էլ վրեժ կլուծի: Նրանք միասին գնացին այգի սպասելու տանտիրուհու արշավանքին:

Պրեպոլովենսկայան անընդհատ նայում էր եղինջին, որն այգում, ցանկապատերի կողքին, առատ աճում էր: նա վերջապես ասաց.

-Այ թե ինքան եղինջ ունեք: Ձեզ այն պետք չի՞:

Վարվարան ծիծաղեց ու պատասխանեց.

-Դե ահա, ինչիս է այն պետք:

Եթե ձեզ ափսոս չի, պետք է ձեզ մոտ քաղել, թե չէ մեզ մոտ չկա,- ասաց Պրեպոլովենսկայան:

-Դե ձեր ինչերի՞ն է պետք այն,- զարմանքով հարցրեց Վարվարան:

-Դե պետք է էլի,- ասաց Պրեպոլովենսկայան, քմծիծաղելով:

-Հոգյակս, ասացեք, ինչի՞ համար,- աղերսեց հետաքրքասեր Վարվարան:

Պրեպոլովենսկայան, հակվելով Վարվարայի ականջին, շշնջաց.

-Եղինջով դաղես՝ քաշդ չես քցի: Հենց եղինջից է իմ Գենիչկան էդպես հաստամարմին:

Հայտնի էր, որ Պերեդոնովը գերապատվություն է տալիս գեր կա-

նանց, իսկ վտիտներին պարսավում է: Վարվարային վշտացնում էր, որ ինքը նազուկ է եւ քանի գնում նիհարում է: Դե ինչպե՞ս ավելի շատ ճարպ կուտակի՝ ահա թե ինչն էր նրա գլխավորագույն հոգածություններից մեկը: Նա բոլորին հարցնում էր՝ արդյոք որեւէ միջոց չգիտե՞ք: Այժմ Պրեպոլովենսկայան վստահ էր, որ ըստ իր հրահանգի նա ջանադրաբար իրեն եղինջով կդաղի, եւ այդպես ինքն իրեն կպատժի:

III

Պերեդոնովն ու Երշովան ելան բակ: նա քրթմնջում էր.

Դե արի ու տես:

Նա կոկորդով մեկ ճչում էր եւ ուրախ էր: Նրանք պատրաստվում էի պար գալ: Պրեպոլովենսկայան եւ Վարվարան խոհանոցի միջով ելան վերնասենյակ եւ նստեցին պատուհանի մոտ նայելու, թե ինչ կլինի բակում:

Պերեդոնովն ու Երշովան գրկվեցին ու պար եկան խոտի վրա տանձենու շուրջ: Պերեդոնովի դեմքը նախկինի պես մնում էր բութ եւ ոչինչ չէր արտահայտում: Մեքենայաբար, հանց անկենդան, թռվռում էին նրա քթի վրա ոսկե ակնոցն ու գլխի վրայի կարճ մազերը:

Երշովան ճվճվում, ճչում էր, ձեռքերն էր թափահարում եւ ամբողջովին օրորվում էր:

Նա ճչաց Վարվարային դեպ պատուհանը.

-Էյ դու, ջոջ, ել պարելու: Թե՞ մեր ընկերակցությունից ես խորշում:

Վարվարան շրջվեց:

-Գրողը քեզ տանի: Ուժասպառվեցի,- գոչեց:

Երշովան փռվեց խոտերի վրա եւ իր ետքից քաշեց Պերեդոնովին:

Նրանք նստեցին գրկված, հետո դարձյալ պար եկան: Եւ այդպես մի քանի անգամ կրկնվում էր՝ մեկ պար կգան, մեկ կհանգստանան տանձենու տակ, նստարանիկի կամ հենց խոտի վրա:

Վոլոդինն անկեղծ զվարճանում էր, պատուհանից պար եկողներին նայելով: Նա քրքջում էր, սաստիկ ծիծաղելի ծամածռանքներ անելով, ջղաձգվում, ծնկները վեր էր ծռում ու ճչում:

-Այ թե գլխներին տվել է: Այ քեզ ծիծաղ:

-Անհիծյալ գարշանք,- բարկացկոտ ասաց Վարվարան:

-Գարշանք է ,- համաձայնվեց Վոլոդինը, քրքջալով,- դե կաց, տան-

տիկին սիրալիր, ես քեզ լավություն կանեմ: Եկեք սրահում էլ կեղտոտենք: Էսօր արդեն մեկ է չի վերադառնա, էնտեղ խոտերի վրա կուժասպառվի, կգնա քնելու:

Նա մկկացող ծիծաղով ողողվեց եւ ոչխարի պես թռչկոտաց: Պրեպոլովենսկայան հրահրում էր.

-Իհարկե, կեղտոտեք, Պավել Վասիլեւիչ, թե ինչ դրա հետ մլուլ տաս: Եթե գա էլ, ապա նրան կարելի է ասել, որ դա ինքն է հարբած վիճակում էդպես կեղտոտել:

Վոլոդինը, թռչկոտալով ու քրքջալով, վազեց սրահ ու սկսեց պաստառների վրա ներբաններով շրխկացնել:

-Վարվարա Դմիտրիեւնա, պարան տվեք,- գոչեց նա:

Վարվարան, բադի պես շորորալով, գնաց հյուրասենյակից ննջարան եւ այնտեղից բերեց պարանի ծայրը, քրքրված եւ հանգուցավոր: Վոլոդինը հանգուստ կապեց, հյուրասենյակի մեջտեղում աթոռ դրեց եւ հանգուստը կախեց լամպի կեռիկից:

-Սա տանտիրուհու համար,- գոռում էրն նա,- որ կախվելու բան լինի չարությունից, երբ դուք գնաք:

Երկու տիկնայք էլ քրքջոցից վժժում էին:

-Թղթի կտոր տվեք,- գոռում էր Վոլոդինը,- եւ մատիտ:

Վարվարան տնտղեց ննջարանում եւ այնտեղից թղթի կտոր ու մատիտ բերեց:

Վոլոդինը գրեց՝ «տանտիրուհու համար» եւ թուղթը կեռիկին կպցրեց: Այդ ամենը նա անում էր զավեշտալի ծամածռանքներով: Հետո նա նորից սկսեց խելահեղորեն պատերի շուրջ թռչկոտալ, դրանք ներբաններով կոխոտելով եւ ընդ որում ամբողջովին ցնցվելով: Նրա ճղճղոցով ու մկկացող հռհռոցով էր լեցուն ողջ տունը: Սպիտակ կատուն, վախվորած ականջները սեղմած աչք էր ածում ննջարանից եւ, հավանաբար, չգիտեր, թե ինքն ուր փախչի:

Պերեդոնովը վերջապես պոկ եկավ Երշովայից եւ տուն դարձավ մենակ,- Երշովան իսկապես որ պարտասել էր ու գնացել էր տուն քնելու: Վոլոդինը Պերեդոնովին դիմավորեց ուրախալի հռհռոցով ու ճիչով.

-Հյուրասենյակում էլ կեղտոտել եք: Ուռա:

-Ուռա,- գոչեց Պերեդոնովը, եւ հռհռաց բարձր ու ընդհատ, ասես դուրս մղելով

իր ծիծաղը:

«Ուռա» գոչեցին եւ տիկնայք Սկսվեց ընդհանուր զվարճանքը: Պերեդոնովը բղավեց.

-Պավլուշկա, արի պար գանք:

-Արի, Արդալյոշա,- հիմար քմծիծաղելով, պատասխանեց Վոլոդինը:

Նրանք պարում էին հանգուստի տակ եւ երկուսն էլ անհեթեթ ոտքերը վեր էին նետում: Հատակը դողում էր Պերեդոնովի ծանր ոտնաթաթերի տակ:

Ա՛յ թե պար բռնեց Արդալյոն Բորիսիչը,- նկատեց Պրեպոլովենսկայան թեթեւակի ժպտալով:

-Դե մի ասեք, նրա մոտ անընդհատ քմահաճություններ են,- փնթփնթալով պատասխանեց Վարվարան, հմայվելով, սակայն, Պերեդոնովով:

Նա անկեղծ մտածում էր, թե նա՝ գեղասքանչ է ու կտրիճ: Նրա ամենատխմար արարքները նրան պատշաճ էին թվում: Նա նրա համար ոչ ծիծաղելի էր, ոչ էլ գարշելի:

-Հուղարկավորեք տանտիրուհուն,- գոչեց Վոլոդինը:- Բարձը տվեք:

-Ինչ ասես կհորինեն - ծիծաղելով ասում էր Վարվարան: Նա ննջարանից դուրս նետեց կեղտոտ չթերեսով բարձը: Բարձը տանտիրուհու տեղ դրեցին հատակին, եւ սկսեցին վայրի, ճղճղան ձայներով նրան հուղարկավորել: Հետո կանչեցին Նատալյային, ստիպեցին նրան պտտել արիստոնը, իսկ իրենք, չորսն էլ, կադրիլ էին պարում, անհեթեթ ծամածռվելով ու ոտքերը բարձր վեր նետելով:

Պար գալուց հետո Պերեդոնովն առատաձեռնացավ: Խանդավառությունը, փայլատ ու մռայլ, ճառաքում էր նրա ուռած դեմքի վրա: Նրան, համարյա մեքենայական, վճռականություն համակեց,- գուցե թե, ուժգնացած մկանային գործունեության հետեւանք: նա հանեց դրամապանակը, մի քանի թղթադրամ համրեց եւ, հպարտ ու ինքնապարծ դեմքով, նետեց դրանք Վարվարայի ուղղությամբ:

-Վերցրու, Վարվարա,- բղավեց նա. - քեզ համար պսակազգեստ կարի:

Թղթադրամները ցաքուցրվեցին հատակով մեկ: Վարվարան աշխույժ դրանք վերցրեց: Նա ամենեւին չվիրավորվեց ընծայման այդպիսի եղանակից: Պրեպոլովենսկայան չարախնդորեն մտածում էր. «Դե

մենք դեռ կտեսնենք, ով կհաղթի»,- եւ նենգորեն ժպտում էր: Վոլոդինը, իհարկե գլխի չընկավ օգնել Վարվարային փողերը բարձրացնելիս:

Ծուտով Պրեպոլովենսկայան գնաց: Նախասենյակում նրանք նոր հյուրի հանդիպեցին, Գրուշինային: Մարյա Օսիպովնա Գրուշինան, ջահել այրին, ինչ-որ վաղաժամ սմքած արտաքին ուներ, նա վտիտ էր, եւ նրա չոր մաշկն ամբողջովին կնճիռներով էր պատված, մանրիկ եւ ասես, փոշոտված: Դեմքը հաճելիությունից զուրկ չէր - իսկ ատամները կեղտոտ ու սեւ էին: Ձեռքերը բարալիկ, մատները երկար ու կառչուն, եղունգների տակ կեղտ: Թռուցիկ հայացքից նա թե չէ շատ կեղտոտ էր թվում, այլ այնպիսի տպավորություն էր թողնում, ասես երբեք չի լվացվում, այլ լոկ թոթափվում է իր զգեստների հետ. կարծում էիր, որ եթե նրան մի քանի անգամ եղեգնահավիկով թակես, ապա մինչեւ երկինք փոշեյուն կբարձրանա:

Հագուստը նրա վրա կախված էր տրորված ծալքերով, ասես հենց նոր հանած պինդ հանգուցած կապոցից, որտեղ երկար ընկած էր տրորված: Գրուշինան թոշակով էր ապրում, չնչին առեւտրամիջնորդությամբ եւ անշարժ գույքի գրավադրմանը փող տալով: Գերազանցապես անպատշաճ զրույցներ էր վարում եւ կապվում էր տղամարդկանց հետ կամենալով փեսացու գտնել: Նրա տանը մշտապես սենյակ էր վարձում ամուրի չինովնիկներից ինչ-որ մեկը:

Վարվարան Գրուշինային բերկրալի դիմավորեց՝ նրա հետ գործ ուներ: Գրուշինան եւ Վարվարան տեղնուտեղը սկսեցին խոսել սպասավորների մասին եւ փսփսացին: Հետաքրքրասեր Վոլոդինը նստեց նրանց կողքին ու լսում էր: Պերեդոնովը մռայլ ու միայնակ նստել էր սեղանի մոտ եւ ձեռքերով տրորում էր սփռոցի ծայրը:

Վարվարան Գրուշինային իր Նատալյայից էր բողոքում: Գրուշինան նրան նոր սպասուհի մատնանշեց, Կլավդիային, եւ գովաբանեց նրան: Որոշեցին նրա ետքից հենց տեղնուտեղը գնալ, Սամարոդինա-գետակը, որտեղ նա ապրում էր դեռ ակցիզային չինովնիկի մոտ, որ օրերս այլ քաղաք փոխադրվելու հրահանգ էր ստացել: Վարվարային ետ պահեց միայն անունը: նա տարակուսանքով հարցրեց.

-Կլավդի՞ա: Իսկ նրան ինչպես ես կանչե՞մ: Մի՞թե Կլաշկա:

Գրուշինան խորհուրդ տվեց.

Իսկ դուք նրան Կլավդյուշկա կանչեք:

Վարվարային դա դուր եկավ: Նա կրկնում էր.

-Կլավդյուշկա, դյուշկա:

Եւ ծիծաղում էր ճղճղան ծիծաղով: Հարկ է նկատել, որ դյուշկա մեր քաղաքում կոչում են խոզերին: Վոլոդինը խռնչաց: Բոլորը հռհռացին:

-Դյուշկա, դյուշենկա, թոթովում էր ծիծաղի նոպաների արանքում Վոլոդինը, եւ շուրթերն ուռացնելով հիմար դեմք էր ձամաձռում:

Եւ նա խռնչում եւ տխմարություններ էր անում մինչեւ այն պահը, երբ նրան ասացին, որ նա ձանձրացրել է : Այդժամ նա նեղացած դեմքով կողմ քաշվեց, նստեց Պերեդոնովի կողքին եւ, ոչխարավարի հակելով իր ուղղաբերձ ճակատը, սեւեռվեց բծերով կեղտոտված սփռոցի վրա:

Սամորոդինա-գետակի ճամփին Վարվարան միաժամանակ որոշեց պսակազգեստի համար կտոր գնել: Նա միշտ խանութներ Գրուշինայի հետ էր գնում՝ նա օգնում էր նրան ընտրություն կատարել եւ առեւտուր անել:

Գողունի Պերեդոնովից ընկրկելով, Գրուշինայի խոր գրպանների մեջ նրա երեխաների համար տարատեսակ ուտելիքներ, քաղցր կարկանդակներ, քաղցրավենիք խցկեց: Գրուշինան գլխի ընկավ, որ իր ծառայություններն այսօր ինչ-որ բանի համար Վարվարային շատ պետք կգան:

Նեղլիկ կոշիկներն ու բարձրակրունկները Վարվարային չէին թույլատրում շատ քայլել: Նա շուտ հոգնում էր: Այդ պատճառով նա ավելի հաճախ կառքով էր գնում, թեպետ մեծ հեռավորություններ մեր քաղաքում չկային: Վերջերս նա հաճախակի այցելում էր Գրուշինային: Կառապաններն արդեն նկատել էին դա, դե նրանք էլ մի երկու տասնյակ էին: Վարվարային նստեցնելիս, արդեն չէին էլ հարցնում, ուր տանել:

Նստեցին թեթեւակառքն ու գնացին տանուտերերի մոտ, որտեղ ապրում էր Կլավդիան, տեղեկանալու նրա մասին: Փողոցներում համարյա ամենուր կեղտոտ էր, թեեւ անձրեւն անցել էր դեռ երեկ երեկոյան: Թեթեւակառքը միայն երբեմնակի դռդռում էր քարե փռոցի վրա եւ դարձյալ խրվում էր մածուցիկ կեղտի մեջ՝ չսալարկված փողոցների վրա:

Փոխարենը Վարվարայի ձայնն անդադար դռդռում էր, հաճախ կարեկցաբար Գրուշինայի բլբլոցով ուղեկցվող:

-Իսկ իմ սագը Մարֆուշկայի մոտ է եղել,- ասաց Վարվարան:

Գրուշինան կարեկցական բարկությամբ պատասխանեց.

-Այդ նրանք են նրան որսում: Դե բա ոնց, փառահեղ փեսա է , հատկապես նրա՝ Մարֆուշկայի համար: Դրա նմանը նա երազում էլ չի տեսել:

Դե, ճիշտ որ, չգիտեմ էլ, ինչպես վարվել,- գանգատվում էր Վարվարան,- այնքան հաստակող է դարձել, որ պարզապես վախենալու է: Կհավատաք արդյոք, գլուխս պտտվում է: կամուսնանա, իսկ ես փողոց կընկնեմ:

-Դե ինչ եք ասում, աղավնյակս, Վարվարա Դմիտրիեւնա,- սփոփում էր Գրուշինան,- դա մի մտածեք: Նա երբեք, ձեզանից բացի, ոչ մեկի հետ չի ամուսնանա: Նա ձեզ ընտելացել է:

-Մեկ էլ կգնա գիշերադեմին, իսկ ես չեմ կարողանում քնել,- ասում էր Վարվարան:- Դե ով գիտի նրան, գուցե թե, պսակվում է մի տեղ: Երբեմն ողջ գիշեր կտանջվես: Բոլորը նրան են աչք դնում՝ եւ Ռուտիլովյան երեք զամբիկները,- չէ որ նրանք բոլորի վզովն են ընկնում,- եւ Ժենկան հաստամռութ:

Եւ երկար գանգատվում էր Վարվարան, եւ նրա ողջ խոսակցությունից Գրուշինան տեսնում էր, որ նրա մոտ ինչ-որ բան էլ կա, ինչ-որ խնդրանք, եւ նախօրոք ուրախանում էր վաստակից: Կլավդիան դուր եկավ: Ակցիզայինի կինը նրան գովում էր: Նրան վարձեցին եւ կարգադրեցին հենց այսօր երեկոյան գալ, քանի որ ակցիզայինն այսօր մեկնում էր:

Վերջապես եկան Գրուշինայի մոտ: Գրուշինան ապրում էր սեփական տանը, բավական փնթի, իր երեք մանուկների հետ, զզգզված, կեղտոտ, հիմար ու չար, ինչպես եռջրով խաշած շնիկներ: Անկեղծ խոսակցությունը նոր միայն սկսվում էր:

Դե իսկ մեր տխմար Արդալյոշկան,- խոսեց Վարվարան,- պահանջում է, որպեսզի ես նորից իշխանուհուն գրեմ: Իսկ դե ինչ ես նրան պարապ տեղը գրեմ: Նա չի էլ պատասխանի կամ էլ վատ կպատասխանի: Դե ծանոթությունն այդքան էլ մեծ չի:

Իշխանուհի Վոլչանսկայան, ում մոտ Վարվարան մի ժամանակ ապրում էր որպես հասարակ գործերի համար տմային դերձակուհի, կարող էր եւ Պերեդոնովին հովանավորել՝ նրա աղջիկն ամուսնացած էր գաղտնի խորհրդական Ծչեպկինի, ուսումնական գերատեսչությունում

կարեւոր անձնավորության հետ: Նա արդեն գրել էր Վարվարային ի պատասխան նրա խնդրանքների անցյալ տարի, որ չի սկսի խնդրել Վարվարայի փեսացուի համար, իսկ ամուսնու համար՝ այլ բան է, հարմար առիթի դեպքում կարելի կլինի խնդրել: Այդ նամակը Պերեդոնովին չբավարարեց՝ այնտեղ լոկ անպարզ հույս է տրված, այլ ուղղակի չի ասած, որ իշխանուհին անպայման Վարվարայի ամուսնու համար տեսուչի տեղ կապսպրի: Այդ թյուրիմացությունը պարզաբանելու համար, հիմա Պետերբուրգ էին գնացել: Վարվարան գնաց իշխանուհու մոտ, հետո նրա մոտ տարավ Պերեդոնովին, բայց դիտավորյալ ձգեց այդ այցելությունը, այնպես որ արդեն իշանուհուն չբռնացրին: Վարվարան հասկացավ, որ իշխանուհին լավագույն դեպքում կսահմանափակվի միայն փութանակի ամուսնանալու խնդրանքով եւ մեկ էլ մի քանի անորոշ խոստումներով՝ հարմար առիթի դեպքում խնդրել,- խոստումներով, որոնք լիովն բավարար չէին Պերեդոնովի համար: Եւ Վարվարան որոշեց իշխանուհուն Պերեդոնովին ցույց չտալ:

-Դե ես հույսս ձեզ վրա, հանց քարե լեռան վրա եմ դրել,- ասաց Վարվարան,- օգնեցեք ինձ, աղավնյակ Մարյա Օսիպովնա:

-Դե ինչպե՞ս ես կարող եմ օգնել, հոգյակ Վարվարա Դմիտրիեւնա,- հարցրեց Գրուշինան:

-Դե դուք գիտեք, ես ձեզ համար պատրաստ եմ անելու այն ամենը, ինչ միայն կարելի է: Արդյոք բախտ բացել չե՞ք կամենում:

-Դե ինչ ձեր բախտ բանալը, գիտեմ ես,- ծիծաղելով ասաց Վարվարան,- ոչ, դուք ինձ այլ կերպ պիտի օգնեք:

Դե ինչպե՞ս,- տագնապաբերկրալի սպասումով հարցրեց Գրուշինան:

-Շատ պարզ,- ասաց, քմծիծաղելով, Վարվարան,- դուք նամակ կգրեք, կարծես թե իշխանուհուց, նրա ձեռքով, իսկ ես ցույց կտամ Արդալյոն Բորիսիչին:

-Օ՛յ, աղավնյակս, ինչ եք ասում, ինչպես կարելի է,- ասաց Գրուշինան, վախեցած ձեւանալով,- հենց որ այդ բանն իմացան, դե այդ ժամանակ ի՞նչ կլինի:

Վարվարան ամենեւին չշվարեց նրա պատասխանից, գրպանից հանեց ճմռթած նամակն ու ասաց.

-Ահա եւ իշխանուհու նամակը վերցրի ձեզ նմուշօրինակի համար:

Գրուշինան երկար չեմուչում էր անում: Վարվարան պարզ տեսնում էր, որ Գրուշինան կհամաձայնվի, բայց որ նա ուզում է դրա համար ավելի շատ ստանալ: իսկ Վարվարան ուզում էր ավելի քիչ տալ: Եւ նա զգուշորեն շատացնում էր խոստմնակաշառքները, զանազան փոքրիկ նվերներ խոստացավ, մետաքսե հին զգեստ, եւ վերջապես Գրուշինան տեսավ, որ Վարվարան դե ավելի շատ ոչ մի կերպ չի տա: Սրտաճմլիկ խոսքերն այդպես էլ թափվում էին Վարվարայի լեզվից: Գրուշինան ձեւացրեց, որ համաձայնվում է միայն կարեկցանքից, եւ նամակը վերցրեց:

IV

Բիլիարդանոցը ծխապատ էր: Պերեդոնովը, Ռուտիլովը, Ֆալաստովը, Վոլոդինը եւ Սուրինը,- հիմար արտաքինով վիթխարահասակ կալվածատերը, փոքրիկ կալվածքի տերը, ճարպիկ եւ փողատեր,- բոլոր հինգն էլ, խաղն ավարտելով, պատրաստվում էին հեռանալ:

Սթնում էր: Կեղտոտ տախտակավոր սեղանի վրա գարեջրի բազում պարպած շշեր էին ցցված: Խաղացողները, խաղի ընթացքում խմած, կարմրել ու հարբած աղմկում էին: Միայն Ռուտիլովն էր պահպանում սովորական նվաղկոտ դալկութունը: Դե նա մյուսներից քիչ էր խմում, դե եւ առատ հարբեցողութունից հետո միայն էլ ավելի էր դժգունում:

Հիմար խոսքերը հածում էին օդում: Ոչ մեկը դրանից չէր նեղանում՝ ընկերականութունից: Պերեդոնովը, ինչպես համարյա միշտ, պարտվեց: Նա վատ էր բիլիարդ խաղում: Բայց նա իր դեմքի վրա պահպանում էր անվրդով մռայլությունն ու դժկամությամբ էր վճարում: Սուրինը բարձրաձայ ճչաց.

-Պլի:

Եւ կիով Պերեդոնովի վրա նշան բռնեց: Պերեդոնովը վախից ճչաց ու պպզեց: Նրա գլխում հիմար միտք առկայծեց, թե Սուրինն ուզում է իրեն գնդակահարել: Բոլորը հռհռացին: Պերեդոնովը սրտմտոտ քրթմնջաց.

-Տանել չեմ կարողանում այդպիսի կատակներ:

Սուրինն արդեն զղջում էր, որ Պերեդոնովին վախեցրել էր՝ նրա որդին գիմնազիայում էր սովորում, եւ այդ պատճառով նա իր պարտականությունն էր համարում ամեն կերպ գիմնազիստական ուսուցիչներին

սիրաշահելը: Հիմա նա սկսեց Պերեդոնովից ներողություն խնդրել եւ նրան գինի ու զելտերյան ջուր էր հյուրասիրում: Պերեդոնովը մռայլ ասաց.

-Նյարդերս փոքր ինչ խախտված են: Ես մեր տնօրենից դժգոհ եմ:

-Տարվել է ապագա տեսուչը,- մկկացող ձայնով գոչեց Վոլոդինը,- փողերն է ափսոսում:

Նա գոռաց.

-Ամուսնանում եմ, իսկ Վարկային հեռու:

Ընկերները հռհռում ու ծաղրում էին.

-Իսկ ահա եւ չես համարձակվի:

-Դե, ահա եւ կհամարձակվեմ: Վաղն իսկ կգնամ նշանվելու:

-Գրազ, եղա՞վ,- առաջարկեց Ֆալաստովը,- տասը ռուբլու վրա:

Բայց Պերեդոնովն ափսոսաց փողերը,- տարվես, թերեւս, ստիպված կլինես վճարել: Նա շրջվեց ու մռայլ լռում էր:

Այգու դարպասների մոտ բաժանվեցին ու տարբեր կողմեր ցրվեցին: Պերեդոնովն ու Ռուտիլովը միասին գնացին: Ռուտիլովն սկսեց Պերեդնովին համոզել տեղնուտեղը պսակվել իր քույրերից մեկի հետ:

-Ես ամեն ինչ կարգավորել եմ, մի անհանգստացիր,- պնդում էր նա:

-Հրապարակում չի եղել,- պատրվակելով հրաժարվում էր Պերեդոնովը:

-Ես ամեն բան կարգավորել եմ,- համոզում էր Ռուտիլովը:- Էնպիսի տերտեր եմ գտել՝ նա գիտի, որ դուք բարեկամ չեք:

-Խաչեղբայրներ չկան,- ասաց Պերեդոնովը:

-Դե, ահ, չկան: Խաչեղբայրներ հենց իմա կճարենք, կուղարկեմ դրանց ետքից, եւ նրանք ուղիղ եկեղեցի կգան: Կամ ես ինքս դրանց ետեւից կգնամ: Իսկ ավելի վաղ հնարավոր չէր, քույրիկդ կիմանար ու կխանգարեր:

Պերեդոնոը լռեց ու տրտում շուրջբոլորն էր նայում, ուր մթնում էին հազվագյուտ, լռին տները նիրհուն այգիների ու երերուն ցանկապատերի ետեւում:

-Դու միայն դարպասների մոտ կաց,- համոզիչ ասում էր Ռուտիլովը,- ես քեզ ուղածիդ կբերեմ, ում ուզում ես: Դե, լսիր, ես քեզ հիմա կապացուցեմ: Չէ որ երկուսին գումարած երկու՝ չորս է, այդպես է թե՞ ոչ:

-Այդպես է,- պատասխանում է Պերեդոնովը:

-Դե ահա, երկուսին գումարած երկու՝ չորս է, եւ քեզ հարկ է քրոջս հետ ամուսնանալ:

Պերեդոնովը ապշել էր:

«Բայց չէ որ ճիշտ է,- մտածեց նա,- իհարկե, երկուսին գումարած երկու՝ չորս է»: Եւ նա հարգալից նայեց կշռադատող Ռուտիլովին: «Ստիպված եմ ամուսնանալ: Նրա հետ չես պայմանավորվի»: Ընկերներն այդ ժամանակ մոտեցան Ռուտիլովների տանը եւ դարպասների մոտ կանգ առան:

-Դե հո չի կարելի զոռով,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը:

-Փախուկ, աչքները ջուր է կտրում,- բացականչեց Ռուտիլովը:

-Դե ես, գուցե թե, չեմ ուզում:

-Դե ահա, չես ուզում, խենթուխելառ: Դե ինչ, մի ողջ դար անընտանի՞ք ես ապրելու,- վստահ առարկեց Ռուտիլովը:- Թե՞ եկեղեցի ես պատրաստվում: Թե՞ դեռ Վարյան չի զզվացրել: Չէ դու միայն մտածիր, թե նա ինչ մռութ կսարքի, եթե դու ջահել կին բերես:

Պերեդոնովն ընդհատ ու կարճ հռհռաց, բայց տեղնոտեղը նոթոտեց ու ասաց.

-Դե եւ նրանք էլ, գուցե թե, չեն ուզում:

-Դե ոնց թե չեն ուզում, փախուկ,- պատասխանում էր Ռուտիլովը:- Դե ես քեզ խոսք եմ տալիս:

-Նրանք հպարտ են,- հորինում էր Պերեդոնովը:

-Դե քեզ ինչ: Ավելի լավ:

-Ծանակող են:

-Դե հո քեզ չեն ծաղրում,- համոզում էր Ռուտիլովը:

-Դե ես ինչ գիտեմ:

-Դե դու ինչ հավատա, ես քեզ չեմ խաբի: Նրանք քեզ հարգում են: Դե դու հո ինչ-որ Պավլուշկա չես, որ քեզ վրա ծիծաղեն:

-Հա, հավատա քեզ,- անվստահ ասաց Պերեդոնովը:- Ոչ, ես ուզում եմ ինքս համոզվել, որ նրանք ինձ վրա չեն ծիծաղում:

-Այ քեզ փախուկ,- զարմանքով ասաց Ռուտիլովը,- դե ինչպե՞ս նրանք կհամարձակվեն ծիծաղել: Դե, ինչպե՞ս դու, սակայն ուզում ես համոզվե՞լ:

Պերեդոնովը մտածեց ու ասաց.

-Թող հենց հիմա փողոց ելնեն:

-Դե լավ, այդ կարելի է,- համաձայնվեց Ռուտիլովը:

-Երեքն էլ,- շարունակում էր Պերեդոնովը:

-Դե, լավ:

-Եւ թող յուրաքանչյուրն ասի, ինչով նա ինձ կսիրաշահի:

-Իսկ այդ ինչո՞ւ,- զարմանքով հարցրեց Ռուտիլովը:

-Դե ես տեսնում եմ չէ, թե ինչ են նրանք ուզում, թե չէ դուք ինձ քթիցս բռնած կտանեք,- բացատրեց Պերեդոնովը:

-Ոչ մեկն էլ քթիցդ քարշ չի տա:

-Նրանք ինձ վրա, գուցե թե, ծիծաղել են ուզում,- խոհաձում էր Պերեդոնովը,- իսկ ահա թող ելնեն, իսկ հետո նրանք եթե կուզեն ծիծաղել, այդպես ես էլ նրանց վրա կծիծաղեմ:

Ռուտիլովը մտածեց, գլխարկը ծոծրակի կողմը քաշեց եւ դարձյալ ճակատին ու վերջապես ասաց.

-Դե, սպասիր, գնամ նրանց ասեմ: Այ քեզ հրաշագործ: Միայն թե դու բակ մտիր դեռ, թե չէ ինչ-որ մեկը փողոցով կանցնի, կտեսնի:

-Թքած,- ասաց Պերեդոնովը, բայց այդուհանդերձ Ռուտիլովի ետքից դռնակից ներս մտավ:

Ռուտիլովն ուղեւորվեց տուն քույրերի մոտ, իսկ Պերեդոնովը մնաց սպասելու բակում:

Հյուրասենյակում, անկյունում առ վերնասենյակի դարպասները, նստած էին բոլոր չորս քույրերը, բոլորը միադեմ, բոլորը եղբոր նման, բոլորը սիրունատես, կարմրաթուշ, զվարթ՝ ամուսնացած Լարիսան, հանգիստ, հաճելի, գիրուկ. վետվետուն ու արագաշարժ: Դարյան, քույրերից ամնաբարձրահասակն ու վտիտը. ծիծաղկոտ Լյուդմիլան ու Վալերիան, փոքրիկ, քնքուշ, արտաքնապես փխրուն: Նրանք ընկույզ ու թուզ էին անուշ անում եւ, հավանաբար, ինչ-որ բանի էին սպասում, իսկ հետո հուզվում եւ ծիծաղում էին սովորականից ավելի, հիշում էին վերջին քաղաքային բամբասանքներն ու ծանակում էին ծանոթներին ու անծանոթներին:

Արդեն առավոտից նրանք պատրաստ էին պսակադրության գնալու: Մնում էր լոկ պսակադրությանը պատշաճող զգեստ հագնել եւ մեկ էլ հարսնաքող ու ծաղիկներ կպցնել: Վարվարային իրենց խոսակցություններում քույրերը չէին հիշում, կարծես թե նա աշխարհի երեսին չկա էլ: Բայց մեն միայն այն, որ նրանք, անողոք ծանակողները, , բոլո-

րից բամբասելով, ողջ օրը խոսք անգամ չասացին Վարվարայի մասին, լոկ դա արդեն ապացուցում էր, որ անհարմար միտքը նրա մասին մեխի պես նստած է քույրերից յուրաքանչյուրի գլխում:

-Բերել եմ,- հայտարարեց Ռուտիլովը, հյուրասենյակ մտնելով,- դարպասների մոտ կանգնած է:

Քույրերը հուզված վեր ելան եւ բոլորը մեկտեղ խոսեցին ու ծիծաղեցին:

-Միայն թե մի խոչընդոտ կա,- ասաց Ռուտիլովը, ծիծաղելով:

-Դե ի՞նչ, ի՞նչ է,- հարցրեց Դարյան: Վալերիան սրտմտոտ խոժոռեց իր գեղեցիկ, թխավուն հոնքերը:

-Դե չգիտեմ էլ, ասե՞մ արդյոք,- հարցրեց Ռուտիլովը:

-Դե շուտ, շուտ,- փութացնում էր Դարյան:

Փոքր ինչ շվարմունքով Ռուտիլովը պատմեց այն մասին, թե ինչ է ցանկանում Պերեդոնովը: Օրիորդներն աղմուկ բարձացրին եւ առաջկտրուկի սկսեցին հանդիմանել Պերեդոնովին: Բայց քիչ-քիչ նրանց վրդովված ճիչերը փոխարինվեցին կատակներով ու ծիծաղով: Դարյան խոժոռասպասող դեմք ընդունեց ու ասաց.

-Ահա նա էսպես է կանգնել դարպասների մոտ:

Նման ու զվարճալի ստացվեց:

Օրիորդները սկսեցին պատուհանից դուրս նայել դարպասին: Դարյան փոքր ինչ բացեց պատուհանն ու ճչաց.

-Արդալյոն Բորիսիչ, իսկ պատուհանից կարելի՞ է ասել:

Լսվեց նոթոթ ձայնը.

-Չի կարելի:

Դարյան փութկոտ փակեց պատուհանը: Քույրերը հռհռացին հնչեղ եւ անզուսպ եւ հյուրասենյակից ճաշասենյակ վազեցին, որպեսզի Պերեդոնովը չլսեր: Այդ զվարթ ընտանիքում կարողանում էին ամենաբարկացկոտ տրամադրությունից անցնել ծիծաղին ու կատակներին, եւ զվարթ խոսքը հաճախ լուծում էր գործը:

Պերեդոնովը կանգնել ու սպասում էր: Նա տրտմություն ու սարսափ էր զգում: նա մտածում էր փախչել, բայց եւ դա էլ չէր կարողանում որոշել: Ինչ-որ տեղ շատ հեռվից երաժշտություն էր հասնում՝ երեւի թե, խմբապետի աղջիկը դաշնամուր էր նվագում: Թույլ, քնքուշ ձայները սփռվում էին լռին, մթին օդում, տրտմություն էին բերում, քաղցր երազներ

էին ծնում:

Սկզբում Պերեդոնովի երազանքները էրոտիկ ուղղություն ընդունեցին: Նա պատկերացնում էր Ռուտիլովների օրիորդներին ամենագաղթակղիչ դիրքերում: Բայց որքան ավելի էր ծգվում սպասումը, այնքան Պերեդոնովն ավելի շատ էր գրգռանք ապրում,- ինչու են իրեն ստիպում սպասել: Եւ երաժշտությունը, հազիվ դիպչելով նրա կոպտամեռյալ զգացմունքներին, մահացավ նրա համար:

Իսկ շուրջբոլորը իջավ գիշերը, լռիկ, չարագույժ մոտեցումներով եւ շշուկներով շրշացող: Եւ ավելի մութ էր թվում ամենուր այն բանից, որ Պերեդոնովը կանգնել էր տարածության մեջ, լուսավորված հյուրասենյակի լամպով, որի ետեւում երեւում էին գերանակապ պատերը: Բակի խորքում կասկածելի մթնում ու ինչ-որ բանի մասին էին շշնջում Ռուտիլովյան այգու ծառերը: Փողոցներում կամրջակների վրա ինչ-որ տեղ հեռվում լսվում էին ինչ-որ մեկի հապաղած, ծանր քայլերը: Պերեդոնովն արդեն սկսեց վախենալ, որ քանի դեռ նա այստեղ կանգնած է, նրա վրա կհարձակվեն ու կկողոպտեն, կամ էլ հենց էնպես կսպանեն: Նա սեղմվեց հենց պատին, ստվերի մեջ, որպեսզի իրեն չտեսնեն, եւ երկչոտաբար սպասում էր:

Բայց ահա բակի լուսավորված ժապավենների վրա երկար ստվերներ վազեցին, դռները շրխկացին, դռան ետեւում առմուտքի մոտ ձայներ լսվեցին: Պերեդոնովն աշխուժացավ: «Գալիս են,- բերկրալի մտածեց նա, եւ հաճելի երազանքները գեղեցկուհի-քույրերի մասին դարձյալ ծուլորեն շարժվեցին նրա գլխում,- նրա խղճուկ երեւակայության նողկալի ծնունդները: Քույրերը կանգնած էին նախասենյակում: Ռուտիլովը ելավ բակ առ դարպասներն ու շուրջբոլորը նայեց, արդյոք փողոցով մարդ չի անցնում:

Ոչ ոք չէր երեւում, չէր լսվում:

-Ոչ մեկը չկա - բարձր շշուկով ասաց նա քույրերին բռունցքված ձեռքերի մեջ:

Նա մնաց փողոցում հսկելու: Նրա հետ բակ ելավ եւ Պերեդոնովը:

-Դե ահա, հիմա նրանք քեզ կասեն,- ասաց Ռուտիլովը:

Պերեդոնովը կանգնելէ ր հենց դռնակի մոտ եւ նայում էր դռնակի եւ դռնամերձ սյան միջեւ եղած անցքին: Նրա դեմքը խոժոռ էր եւ համարյա վախեցած, եւ ամենայն երազանքներն ու մտքերը հանգչեցին նրա

գլխում ե փոխարինվեցին ծանր, անբովանդակ տարփանքով:

Դարյան առաջինը մոտեցավ կիսաբաց դռնակին:

-Դե ինչո՞վ ձեզ գոհացնել,- հարցրեց նա:

Պերեդոնովը խոժոռ լռում էր: Դարյան ասաց.

-Ես ձեզ համար գերհամեղ նրբաբլիթներ կթխեմ, միայն թե չխեղդվեք:

Լյուդմիլան նրա ուսի ետեւից գոռաց.

-Իսկ ես ամեն առավոտ քաղաքով կքայլեմ, բոլոր բամբասանքները կհավաքեմ, իսկ հետո ձեզ կպատմեմ: Զվարթ:

Երկու քույրերի զվարթ դեմքերի միջեւ մի ակնթարթ երեւաց Վալերիայի քմահաճ, նրբին դեմքը, լսվեց նրա փխրուն ձայնիկը.

-Իսկ ես ոչ մի դեպքում չեմ ասի, ինչով ձեզ կգոհացնեմ,- ինքներդ գլխի ընկեք:

Քույրերը, բարձր ծիծաղելով, վազեցին: Նրանց ձայներն ու ծիծաղը դռների ետեւում սկսվեցին: Պերեդոնովը շրջվեց դռնակից: Նա այնքան էլ գոհ չէր: Նա մտածում էր՝ ինչ-որ բաներ դուրս տվեցին ու գնացին: Ավելի լավ էր գրություն թողնեին: Բայց այստեղ կանգնել ու սպասելու համար ուշ է:

-Դե, տեսա՞ր,- հարցրեց Ռուտիլովը:- Դե ո՞ւմ ես ուզում:

Պերեդոնովը թաղվեց մտորմունքի մեջ: Իհարկե, կշռադատեց նա վերջապես, պետք է ամենաերիտասարդին ընտրել: Դե ինչ նա պիտի պառվուկի հետ ամուսնանա:

Վալերիային բեր,- վճռականորեն ասաց նա:

Ռուտիլովն ուղեւորվեց տուն, իսկ Պերեդոնովը նորից բակ ելավ:

Լյուդմիլան գաղտուկ նայում էր պատուհանից, ջանալով լսել, ինչ են խոսում, բայց ոչինչ չլսեց: Ահա հնչեցին քայլերը բակում կամրջակների վրա: Քույրերը սկսվեցին եւ նստել էին հուզված ու շվարած: Մտավ Ռուտիլովն ու հայտարարեց.

-Վալերիային է ընտրել: Սպասում է,- կանգնած է դարպասի մոտ:

Քույրերն աղմկեցին ծիծաղեցին: Վալերիան փոքր ինչ դժգունեց:

-Ահա, ահա,- կրկնում էր նա,- շատ եմ ես ուզում, շատ պետք է ինձ:

Նրա ձեռքերը դողում էին: Նրան սկսեցին զուգել,- երեք քույրերն է նրա շուրջ դես ու դեն էին ընկնում: Նա, ինչպես միշտ, կոտրատվում ու հապաղում էր: Քույրերը նրան փութացնում էին: Ռուտիլովն անդադար

դուրս էր տալիս, ուրախալի ու հուզված: Նրան դուր էր գալիս, որ ողջ աս գործը այդքան ճարպիկ գլուխ էր բերել:

-Իսկ դու կառապաններին պատրաստե՞լ ես,- մտահոգ ասաց Դարյան:

Ռուտիլովը սրտնեղությամբ պատասխանեց.

-Դե մի՞թե կարելի է: Ողջ քաղաքը կթափվեր: Վարվարան նրա մազերից բռնած քարշ կտար իր մոտ:

-Դե ուրեմն ինչպե՞ս մենք:

-Դե այդպես, մինչեւ հրապարակ զույգ-զույգ հասնենք, իսկ էնտեղ էլ կվարձենք: Ծատ հասարակ: Սկզբում դու հարսնացուի հետ, մեկ էլ Լարիսան ամուսնու հետ,- դե այն էլ ոչ միանգամից, թե չէ մեկ էլ տեսար քաղաքում մեկնումեկը տեսավ: Իսկ ես Լյուդմիլայի հետ Ֆալաստովի ետքից կգնամ, նրանք երկուսով կգնան, իսկ ես Վոլոդինին էլ հետս կվերցնեմ:

Պերեդոնովը մնալով մենակ, թաղվեց քաղցր երազանքների մեջ: Նրան անրջվում էր վալերիան ամուսնական գիշերվա թովչանքի մեջ, հանված, ամաչկոտ, բայց խնդուն: Ամբողջովին նիհարիկ, նազուկ:

Երազում էր, բայց եւ գրպանից հանում էր այնտեղ մնացած կարամելներն ու ծծում էր դրանք: Հետո նրա միտն եկավ, որ Վալերիան՝ կոկետուհի է: Չէ որ նա, մտածեց նա հանդերձանքներ, պայմաններ կպահանջի: Այդժամ արդեն, թերեւս, փողը ստիպված լինես ամեն ամիս ետ չգցել, եւ կուտակածը ծախսել: Իսկ կնիկն էլ կսկսի չմահավանություն անել, իսկ խոհանոցն էլ բարձիթողի կմնա: Եւ մեկ էլ խոհանոցում նրան թույն շաղ կտան,- Վարյան չարությունից կկաշառի խոհարարուհուն: «Դե եւ ընդհանրապես,- մտածում էր Պերեդոնովը,- չափազանց նրբին բան է՝ Վալերիան: Դրա նմանին չգիտես էլ ինչպես մոտենաս: Նրան ինչպե՞ս հայհոյես: Ինչպե՞ս նրան կիրես: Ինչպե՞ս նրա վրա կթքես: Արցունք կթափի, քաղաքով մեկ խայտառակ կանի: Չէ, սարսափելի է նրա հետ կապվելը: Ա՛յ Լյուդմիլան, էդպես ավելի պարզ է: Արդյոք նրան չվերցնե՞մ:

Պերեդոնովը մոտեցավ պատուհանին եւ փայտով խփեց շրջանակին: Կես րոպեից Ռուտիլովը պատուհանից ցցվեց:

-Ի՞նչ ես ուզում,- անհանգստությամբ հարցրեց նա:

-Մտափոխվեցի,- մռլտաց Պերեդոնովը:

Ռուտիլովը պատուհանից հեռացավ:

-Ակնոցավոր սատանա,- փնթփնթաց նա եւ գնաց քույրերի մոտ:

Վալերիան ուրախացավ:

-Քո երջանկությունն է Լյուդմիլա,- զվարթ ասաց նա:

Լյուդմիլան սկսեց քրքջալ,- ընկավ բազկաթոռի վրա, հենվեց թիկնակին ու քրքջում, քրքջում էր:

-Դե ի՞նչ ասեմ ես նրան,- հարցնում էր Ռուտիլովը, համաձա՞յն ես, ի՞նչ է:

Լյուդմիլան ծիծաղից խոսք անգամ չէր կարողանում ասել եւ միայն ձեռքերն էր թափահարում:

-Այո, համաձայն է, իհարկե - նրա փոխարեն ասաց Դարյան:- Ծուտ ասա նրան, թե չէ մեկ էլ տեսար տխմարաբար գնաց, չի սպասի:

Ռուտիլովը ելավ հյուրասենյակ եւ շշուկով պատուհանից ասաց.

-Սպասիր, հիմա պատրաստ կլինի:

-Դե աշխույժ, ինչ են էնտեղ դնդնում:

Լյուդմիլային փութով զուգում էին: Մի հինգ րոպեից նա լրիվ պատրաստ էր:

Պերեդոնովը նրա մասին էր մտածում: Նա՝ զվարթ է, կաթնահունց: Միայն թե շատ է սիրում հռհռալ:

Խաղք ու խայտառակ կանի, թերեւս: Սարսափելի է: Դարյան, թեկուզ եւ կայտառ է, բայց այդուհանդերձ ավելի ծանրակշիռ ու սուսիկ է: Բայց եւ նույնպես գեղեցիկ է: Ավելի լավ է նրան վերցնեմ: նա դարձյալ թակեց պատուհանը:

-Նորից թակում է,- ասաց Լարիսան, դե արդյոք քո ետքի՞ց չէ. Դարյա:

-Ա՛յ քեզ սատանա,- հայհոյեց Ռուտիլովն ու վազեց պատուհանի մոտ:

-Ի՞նչ էլի,- բարկացկոտ շշուկով հարցրեց նա,- նորից մտափոխվեցի՞ր, ի՞նչ է:

-Դարյային բեր - պատասխանեց Պերեդոնովը:

-Դե, սպասիր,- կատաղած շշնջած Ռուտիլովը:

Պերեդոնովը կանգնել ու մտածում էր Դարյայի մասին,- եւ կրկին կարճատեւ սքանչանքը նրանով երեւակայության մեջ փոխվեց վախի: Դե նա չափազանց արագաշարժ ու անպատկառ է: Կքաշքշի: Դե եւ ի՞նչ

էստեղ կանգնես ու սպասես,- մտածեց նա՝ մեկ էլ տեսար մրսեցիր: Փողոցի խանդակում, խոտերի մեջ, ցանկապատի տակ, գուցե թե, ինչ-որ մեկը թաքնվում է, հանկարծ դուրս կթռչի ու կսատկացնի: Եւ տրտմեց Պերեդոնովը: Չէ որ նրանք անօժիտ են,- մտածում էր նա: Ուսումնական գերատեսչությունում հովանավորություններ նրանք չունեն: Վարվարան կբողոքի իշխանուհուն: Իսկ Պերեդոնովի վրա առանց այդ էլ տնօրենը ատամներն է սրում:

Պերեդոնովը սրտնեղեց ինքն իրենից: Ինչ է նա էստեղ Ռուտիլովի հետ թրեւ գալիս: Ասես Ռուտիլովը դյութել է նրան: Այո, գուցե թե, եւ իսկապես դյութել է նրան: Հարկ է հնարավորինս շուտ հմայաթափվել:

Պերեդոնովը տեղում պտտվեց, չորս կողմը թքոտում ու մռթմռթում էր.

-Չուռ, չդիպչես, չկպչես, կաց: հեռու ինձնից, հեռու: Չուռ, չուռ, չուռ: Չուռ-չդիպչես, չկպչես:

Նրա դեմքի վրա խիստ ուշադրություն էր պատկերվում, ինչպես կարեւոր ծիսակարգ կատարելիս: Եւ այդ անհրաժեշտ գործողությունից հետո նա իրեն անվտանգության մեջ զգաց Ռուտիլովյան կախարդանքից: Վճռականորեն նա փայտով թակեց պատուհանը, բարկացած մռթմռթալով.

-Դիմանամ միայն - հրապուրում են:

-Ոչ, չեմ ուզում այսօր ամուսնանալ,- հայտարարեց նա պատուհանից ցցված Ռուտիլովին:

-Դե, ի՞նչ ես ասում, Արդալյոն Բորիսիչ, չէ որ արդեն ամեն ինչ պատրաստ է,- փորձում էր համոզել Ռուտիլովը:

-Չեմ ուզում,- վճռականորեն ասաց Պերեդոնովը,- գնանք ինձ մոտ թղթախաղի:

-Ա՛յ քեզ սատանա,- հայհոյեց Ռուտիլովը:- Չի ուզում նշանվել, վախեցավ,- հայտարարեց նա քույրերին:- Բայց ես դեռ տխմարին կհամոզեմ: Իր մոտ թղթախաղի է կանչում:

Քույրերը բոլորը միասին գոռացին, Պերեդոնովին նախատելով:

-Եւ դու կգնաս այդ անպիտանի մո՞տ,- սրտնեղած հարցրեց Վալերիան:

-Դե հա, կգնամ ու նրանից տուգանք կվերցնեմ: Եւ նա դեռ մեզանից չի փախչի,- ասում էր Ռուտիլովը, ջանալով պահպանել վստահ տոնը,

բայց իրեն շատ անհարմար զգալով:

Սրտնեղությունը Պերեդոնովից օրիորդների մոտ արագ վերածվեց ծիծաղի: Քույրերը վազեցին պատուհանների մոտ:

-Արդալյոն Բորիսիչ,- բղավեց Դարյան,- դե ինչո՞ւ եք դուք այդքան անվստահ: Այդպես չի կարելի:

-Թոնթորիկ Թոնթորիկի,- հռհռոցով գոռաց Լյուդմիլան:

Պերեդոնովը սրտմտեց: Ըստ նրա կարծիքի, քույրերը պիտի որ վշտից արտասվեին, որ նա նրանց մերժել է: «Ձեւացնում են»,- մտածեց նա, լռիկ բակից հեռանալով: Օրիորդները վազեցին փողոց դուրս եկող պատուհանների մոտ եւ Պերեդոնովի ետքից ծաղրական խոսքեր էին գոռում մինչեւ որ նա անհետեց մթության մեջ:

V

Պերեդոնովին տոչորում էր տաղտուկը: Դե, արդեն կարամելներ էր չուներ գրպանում, եւ դա նրան վշտացրեց ու բարկացրեց: Ռուտիլովն ամբողջ ճանապարհին խոսում էր մենակ,- շարունակում էր քույրերին գովաբանել: Պերեդոնովը միայն մեկ անգամ խոսակցության մեջ մտավ: Նա բարկացկոտ հարցրեց.

-Ցուլը կոտոշներ ունի՞:

-Դե ունի, դե եւ ի՞նչ դրանից,- ասաց զարմացած Ռուտիլովը:

-Դե, իսկ ես չեմ ուզում ցուլ դառնալ,- բացատրեց Պերեդոնովը:

Բարկացած Ռուտիլովն ասաց.

-Դու, Արդալյոն Բորիսիչ, երբեք ցուլ չես էլ լինի, որովհետեւ դու՝ տեղը տեղին խոզ ես:

-Խաբում ես,- մռայլ ասաց Պերեդոնովը:

-Ոչ, չեմ խաբում, եւ կարող եմ ապացուցել,- չարախնդորեն ասաց Ռուտիլովը:

-Ապացուցիր,- պահանջեց Պերեդոնովը:

-Սպասիր, կապացուցեմ,- ձայնի մեջ միեւնույն չարախնդությամբ պատասխանեց Ռուտիլովը:

Երկուսն էլ լռեցին: Պերեդոնովը երկչոտ սպասում էր, եւ նրան տոչորում էր չարությունն առ Ռուտիլովը: Հանկարծ Ռուտիլովը հարցրեց.

-Արդալյոն Բորիսիչ, իսկ դու հինգ կոպեկանոց ունե՞ս:

-Ունեմ, բայց քեզ չեմ տա,- բարկացկոտ պատասխանեց Պերեդոնո-

վը:

Ռուտիլովը հռհռաց.

-Քանի որ դու հինգ կոպեկանոց ունես, ուրեմն ինչպես դու խոզի մռութ չես - ճչաց նա բերկրալի:

Պերեդոնովը սարսափած քթից բռնվեց:

-Խաբում ես, ինչ խոզի մռութ, ես մարդկային ռեխ ունեմ,- քրթմնջում էր նա:

Ռուտիլովը հռհռում էր: Պերեդոնովը, զայրացկոտ ու երկչոտ նայելով Ռուտիլովին, ասաց.

-Դու ինձ այսօր դիտմամբ թմբրախոտի վրայով էիր տանում եւ թմրեցրիր, որպեսզի քույրերիդ հետ պսակես: Մի վիուկն ինձ քիչ էր, արի ու երեքի հետ մեկից պսակվի:

-Փախուկ, դե ինչպես է. որ ես չեմ թմրել,- հարցրեց Ռուտիլովը:

-Դու միջոցը գիտես,- ասում էր Պերեդոնովը:- Դու, գուցե թե, բերանով էիր շնչում, իսկ քթիդ մոտ չէիր թողնում, կամ ինչ-որ բառեր էիր ասում, իսկ ես ոչինչ չգիտեմ, ինչպես պետք է կախարդության դեմ: Ես գրբաց չեմ: Քանի դեռ չէի հմայաթափվել, ամբողջովին թմբիրի մեջ կանգնած էի:

Ռուտիլովը հռհռում էր:

-Դե ինչպե՞ս էիր դու հմայաթափվում:

Բայց Պերեդոնովն արդեն լռում էր:

-Դե ի՞նչ ես դու Վարվարայից կպել,- ասում էր Ռուտիլովը:- Դու կարծում ես, քեզ լավ կլինի՞, եթե դու նրա միջոցով տեղ ստանաս: Նա քեզ կթամբի:

Դա Պերեդոնովի համար անհասկանալի էր:

Չէ որ նա իր համար է ջանում,- մտածում էր նա:- Նրա համար ավելի լավ կլինի, եթե նա պետ լինի եւ շատ փող ստանա: Կնշանակի, ոչ թե ինքը նրան, այլ նա իրեն պիտի երախտապարտ լինի: Դե եւ համենայն դեպս նրա հետ նրան ավելի հարմար է, քան որեւէ այլ մեկի հետ:

Պերեդոնովը ընտելացել էր Վարվարային: նրան ձգում էր առ նա,- գուցե թե, ի հետեւանս նրան ծանակելու իր համար հաճելի սովորության: Այդպիսի այլ մեկին պատվերով էլ չես գտնի:

Արդեն ուշ էր: Պերեդոնովի բնակարանում վառվում էին լամպերը, պատուհանները վառ առանձնանում էին փողոցային մթության մեջ:

Թեյասեղանի մոտ նստած էին հյուրերը՝ Գրուշինան,- նա հիմա արդեն ամեն օր Վարվարայի մոտ էր,- Վոլոդինը, Պրեպոլովենսկայան, նրա ամուսինը, սեւահեր ու արտասովոր լռակյաց: Վարվարան զուգվել էր,- սպիտակ զգեստ էր հագել: Թեյ էր խմում, զրուցում էին: Վարվարային, ինչպես միշտ անհանգստացնում էր, որ Պերեդոնովը երկար չի վերադառնում: Վոլոդինը զվարթ մկկացող քրքիջով պատմեց, որ Պերեդոնովը Ռուտիլովի հետ ինչ-որ տեղ է գնացել: Դա Վարվարայի անհանգստությունը շատացրեց:

Վերջապես հայտնվեց Պերեդոնովը Ռուտիլովի հետ: Նրանց դիմավորեցին ճիչով, ծիծաղով, հիմար, անհամեստ կատակներով:

-Վարվարա, իսկ ո՞ւր է օղին,- բարկացկոտ գոչեց Պերեդոնովը:

Վարվարան սեղանի մոտից դեն նետվեց մեղավոր քմծիծաղելով, եւ արագ բերեց օղին մեծ, կոպիտ նստակերտ գրաֆինով:

-Խմենք,- մռայլ հրավիրեց Պերեդոնովը:

-Սպասիր,- ասաց Վարվարան,- Կլավդյուշկան խորտիկ բերի: Կոպա, շարժվիր, դեպ խոհանոց,- գոռաց նա:

Բայց Պերեդոնովն արդեն օղին լցնում էր ըմպանակներն ու քրթմնջում էր.

-Ինչ սպասես, ժամանակը չի սպասում:

Խմեցին ու խորտկեցին սեւ հաղարջից մուրաբայի կարկանդակներով: Պերեդոնովի մոտ, հյուրերին զբաղեցնելու համար, պահուստում միմիայն թղթախաղն էր ու օղին: Քանի որ թղթախաղի նստել դեռ չէր կարելի,- թեյ էր պետք խմել,- ապա մնում էր օղին:

Այդ ընթացքում բերեցին եւ խորտկեղենը, այնպես որ կարել էր եւ խմել: Կլավդիան, գնալիս դուռը չփակեց, եւ Պերեդոնովն անհանգստացավ:

-Միշտ դռները կիսաբաց են,- մռթմռթում էր նա:

Նա վախենում էր միջանցահովից,- կարելի է մրսել: Այդ պատճառով բնակարանում միշտ հեղձուկ է եւ գարշահոտ:

Պրեպոլովենսկայան հավկիթ վերցրեց:

-Լավ ձվեր են,- ասաց նա,- որտե՞ղ եք դուք դրանք ճարում:

Պերեդոնովն ասաց.

-Դե այդ ինչ ձվեր են որ, ա՛յ ահա հորս մոտ մեր կալվածքում հավը կլոր տարին ամեն օր երկու մեծ ձու էր ածում:

-Դե ի՞նչ է որ,- պատասխանեց Պրեպոլովենսկայան,- ի՞նչ մի չտեսնված բան է որ: Մեր գյուղում մի հավ կար, օրեկան երկու ձու էր ածում եւ մի գդալ յուղ:

-Հա, հա, մեզ մոտ էլ,- ասաց Պերեդոնովը, քմծիծաղը չնկատելով: Եթե մյուսներն ածում են, ապա նա էլ էր ածում: Մերը երեւելի էր:

Վարվարան ծիծաղեց:

-Հիմարություններ եք դուրս տալիս,- ասաց նա:

-Ականջները թոշնում են, այնպիսի անհեթեթություններ եք դուրս տալիս,- ասաց Գրուշինան:

Պերեդոնովը կատաղի նայեց նրան եւ գազազած ասաց.

-Իսկ եթե թոշնում են, դրանք կտրել է պետք:

Գրուշինան շփոթվեց:

-Դե, դուք արդեն, Արդալյոն Բորիսիչ, միշտ էնպիսի բաներ կասեք,- խղճալի ասաց նա:

Մյուսները կարեկցաբար ծիծաղում էին: Վոլոդինն, աչքերը կկոցելով ու ճակատը թափահարելով, ծիծաղկոտ բացատրում էր.

-Եթե ձեր ականջները թառամում են, ապա ձեզ պետք է դրանք կտրել, թե չէ լավ չի, եթե դրանք թառամեն եւ տարուբերվեն, այս ու այն կողմ. այս ու այն կողմ:

Վոլոդինը մատներով ցույց տվեց, թե ինչպես կտարուբերվեն թոշնած ականջները: Գրուշինան բղավեց նրա վրա.

-Դե դուք արդեն, ահա նույնը, ինքներդ ոչ մի բան չեք կարողանում հորինել, պատրաստի բաների վրայով եք անցնում:

Վոլոդինը նեղացավ ու արժանապատվությամբ ասաց.

Ես ինքս էլ կարող եմ, Մարյա Օսիպովնա, բայց քանի որ մենք ընկերակցությամբ հաճելի ժամանակ ենք անցկացնում, ապա ինչու ուրիշի կատակին չաջակցել: եթե դա ձեզ դուր չի գալիս, ապա ինչպես կհաճեք, այդպես էլ մենք ձեզ կհաճենք:

-Խելացի է, Պավել Վասիլեւիչ,- ծիծաղով քաջալերեց նրան Ռուտիլովը:

-Դե, Պավել Վասիլեւիչն իրեն տեր կկանգնի,- նենգադավ քմծիծաղով ասաց Պրեպոլովենսկայան:

Վարվարան մի կտոր բուկի պոկեց եւ, Վոլոդինի զարմանազան խոսքերին ունկ դնելով, դանակը բռնել էր ձեռքին: Սայրը շողում էր:

Պերեդոնովը սարսափեց,- դե, մեկ էլ տեսար մորթեց: Նա բղավեց.

-Վարվարա, դանակը տեղը դիր:

Վարվարան ցնցվեց.

-Ինչ ես գոռում, վախեցրիր,- ասաց նա ու դանակը դրեց:- Չէ որ դուք գիտեք, նրա մոտ անընդհատ քմահաճություններ են,- բացատրում էր նա լռակյաց Պրեպոլովենսկուն, տեսնելով, որ նա մորուքն է շոյում եւ պատրաստվում էր ինչ-որ բան ասել:

-Դա պատահում է - քաղցրալի ու տրտում ձայնով խոսեց Պրեպոլովենսկին,- ես մի ծանոթ ունեի, դե նա ասեղներից էր վախենում, անընդհատ վախենում էր, թե իրեն կծակեն եւ ասեղը ներքին օրգանների մեջ կհայտնվի: Եւ սարսափելի վախենում էր, պատկերացրեք, հենց ասեղ էր տեսնում...

Եվ մեկ էլ սկսելով խոսել, նա արդեն չէր կարողանում կանգ առնել եւ տարատեսակ եղանակներով վերապատմում էր միեւնույն բանը, մինչեւ որ նրան ինչ-որ մեկն ընդհատեց, այլ բանի մասին խոսելով: Այնժամ նա նորից թաղվեց լռության մեջ:

Գրուշինան խոսակցությունը փոխադրեց էրոտիկ թեմաների: Նա պատմեց, թե ինչպես էր իրեն խանդում հանգուցյալ-ամուսինը ու թե ինչպես ինքը նրան դավաճանեց: Հետո պատմեց մայրաքաղաքային ծանոթից լսած պատմությունն ինչ-որ բարձաստիճան անձի սիրուհու մասին, ինչպես էր նա փողոցով անցնում եւ հանդիպեց իր հովանավորին:

-Նա էլ դե գոռում է, թե՝ բարեւ, Ժանչիկ: Դե դա փողոցում,- պատմում էր Գրուշինան:

-Իսկ ես հա, ձեզ կմատնեմ,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը. - մի՞թե կարելի է այդպիսի հայտնի անձանց մասին այդպիսի հիմարություններ դուրս տալ:

Գրուշինան վախեցած թոթովեց.

-Դե ես ինչ,- ինձ էդպես պատմել են: Ինչքանով առել, էդքանով էլ ծախում եմ:

Պերեդոնովը բարկացկոտ լռում ու պնակիկից թեյ էր ըմպում, արմունկներով սեղանին հենվելով: Նա մտածում էր, որ ապագա տեսուչի տանը պատշաճ չէ անպարկեշտ բաներ խոսել մեծամեծների մասին: Նա զայրանում էր Գրուշինայի վրա: Նաեւ սրտնեղում էր եւ իր համար

կասկածելի էր Վոլոդինը՝ ինչ-որ չափազանց հաճախ էր նա Պերեդոնովին ապագա տեսուչ կոչում: Մի անգամ նույնիսկ Պերեդոնովը Վոլոդինին ասաց.

-Ինչ է, ախպերս, իհարկե, նախանձում ես: Դե, ահա դու տեսուչ չես լինի, իսկ ես կլինեմ:

Դրան, Վոլոդինն իր դեմքին ազդեցիկ արտահայտություն տալով, առարկեց.

-Ամեն մեկին իրենը, Արդալյոն Բորիսիչ,- դուք ձեր գործում եք մասնագետ, իսկ ես իմ:

-Իսկ ահա ձեր Նատաշան,- հաղորդեց Վարվարան,- մեզնից ուղիղ ժանդարմայինի մոտ ընդունվեց:

Պերեդոնովը ցնցվեց, եւ նրա դեմքը սարսափ արտահայտեց.

-Խաբո՞ւմ ես,- հարցական ասաց նա:

-Դե ահա, ինչ պիտի խաբեմ,- պատասխանեց Վարվարան,- թեկուզ ինքդ գնա նրա մոտ, հարցրու:

Այդ տհաճ լուրը հաստատեց եւ Գրուշինան: Պերեդոնովը ապշահար էր: Դե կպատմի այն, ինչ չի էլ եղել, իսկ ժանդարմայինը ականջին օղ կանի եւ, թերեւս, մինիստրություն կգրի: Դա վատ է:

Հենց այդ ժամանակ Պերեդոնովի աչքերը կանգ առան կոմոդի վրայի գրադարակի վրա: Այնտեղ մի քանի կազմած գրքեր էին դրված՝ բարակները՝ Պիսարյեւինը եւ ավելի հաստերը՝ «Հայրենական գրառումները»: Պերեդոնովը դժգունեց ու ասաց.

-Դե այս գրքերը պետք է թաքցնել, թե չէ կմատնեն:

Նախկինում Պերեդոնովն այդ գրքերը դնում էր ի տես ամենքի, որպեսզի ցույց տար, թե ազատամիտ է,- թեպետ իրականում նա ոչ կարծիք ուներ, եւ ոչ էլ նույնիսկ խոհածելու տրամադրություն: Եւ այդ գրքերը նա միայն պահում էր, այլ ոչ թե կարդում: Նա վաղուց արդեն ոչ մի գիրք չէր կարդացել,- ասում էր , որ ժամանակ չկա,- թերթերի չէր գրվում, նորությունները խոսակցություններից էր իմանում: Սակայն, նա իմանալու բան էլ չուներ,- դրսի աշխարհում նրան ոչինչ չէր գրավում: Թերթ գրողներին նա նույնիսկ ծանակում էր որպես ժամանակ շռայլողների: Թանկ է, իբր , նրա համար իր ժամանակը:

Նա գնաց գրադարակի մոտ, մռթմռթալով.

-Դե էսպիսի քաղաք է մեզ մոտ, տեղնուտեղը կմատնեն: Դե օգնիր,

Պավել Վասիլեւիչ,- ասաց նա Վոլոդինին:

Վոլոդինը լուրջ եւ հասկացող դեմքով մոտեցավ նրան եւ զգույշ ընդունում էր գրքերը, որոնք նրան էր փոխանցում Պերեդոնովը: Պերեդոնովն ինքն ավելի փոքր մի տուփ վերցրեց, Վոլոդինին ավելի շատ տվեց ու գնաց հյուրասենյակ: Վոլոդինը նրա ետքից:

-Դե որտե՞ղ եք դուք դրանք թաքցնելու,- սովորական մռայլությամբ պատասխանեց Պերեդոնովը:

-Դե այդ ի՞նչ դուք քարշ տվել, Արդալյոն Բորիսիչ,- հարցրեց Պրեպոլովենսկայան:

-Խստագույնս արգելված գրքեր,- հընթացս պատասխանեց Պերեդոնովը:- Կմատնեն, եթե տեսնեն:

Հյուրասենյակում նա ծնկածալ նստեց վառարանի առաջ, գրքերը լցրեց երկաթի թերթի վրա, եւ Վոլոդինը նույնն արեց, եւ սկսեց ճիգով գիրքը գրքի ետքից խոթել լայն անցքի մեջ: Վոլոդինը ծնկածալ նստել էր նրա կողքին, փոքր ինչ ետ, եւ գրքերը փոխանցում էր նրան, պահպանելով խորիմաստ եւ հասկացող արտահայտությունն իր ոչխարային դեմքի վրա, կարեւորությունից ցցած շուրթերով եւ ըմբռնման լիառատությունից հակած ուղղածիգ ճակատով: Վարվարան դռան արանքից նայում էր նրանց: Նա ծիծաղով ասաց.

-Գնաց հիմարութուններ անելու:

Բայց Գրուշինան նրան ընդհատեց.

-Օ՛յ, աղավնյակս, Վարվարա Դմիտրիեւնա, դուք այդպես մի ասեք,- այդ պատճառով կարող են մեծ անախորժություններ լինել, եթե իմանան: Հատկապես, եթե ուսուցիչը: Ղեկավարությունը սարսափելի վախենում է , որ ուսուցիչները տղաներին կսովորեցնեն ապստամբել:

Թեյ խմեցին ու նստեցին ստուկոլկա խաղալու, բոլոր յոթն էլ թղթախաղի սեղանի շուրջ հյուրասրահում: Պերեդոնովը խաղում էր մոլեգնությամբ, բայց վատ: Ամեն քսան թիվը մեկ նա ստիպված էր լինում խաղի իր մասնակիցներին տուրք վճարել, հատկապես Պրեպոլովենսկուն, որ խաղում էր կնոջ հետ: Հաղթող ամենից հաճախ լինում էին Պրեպոլովենսկիները: Նրանք պայմանավորված նշաններ ունեին՝ շրխկոց, հազ,- որոնց միջոցով նրանք լուրերով էին փոխանակվում իրենց թղթերի մասին: Այսօր Պերեդոնովի բախտը մեկեն չբանեց: Նա փութում էր խաղը ետ բերել, իսկ Վոլոդինը հապաղում էր բաժանել եւ

մանրակրիտ հավասարեցնում էր թղթերը:

-Պավլուշկա, բաժանիր,- անհամբեր բղավեց Պերեդոնովը:

Վոլոդինը, խաղում իրեն բոլոր մյուսներին հավասար զգալով, նշանակալից դեմք ընդունեց ու հարցրեց.

-Դե այդ ինչպե՞ս Արդաշա: Ընկերավարի թե՞ ոնց:

-Ընկերավարի, ընկերավարի,- անփույթ պատասխանեց Պերեդոնովը,- միայն թե շուտ բաժանիր:

-Դե, եթե ընկերավարի, ապա ես ուրախ եմ, ես շատ ուրախ եմ,- ասում է Վոլոդինը բերկրալի ու հիմար ծիծաղով, թղթերը բաժանելով,- դու լավ մարդ ես, Արդաշա, եւ ես քեզ շատ էլ սիրում եմ: Իսկ եթե ոչ ընկերավարի, ապա արդեն ուրիշ խոսակցություն կլիներ: Իսկ եթե ընկերավարի է, ապա ես ուրախ եմ: Ես դրա համար քեզ մեկանոց տվեցի,- ասաց Վոլոդինն ու հաղթաթուղթը բացեց:

Մեկանոցը իսկապես Պերեդոնովի մոտ հայտնվեց, բայց ոչ հաղթաղթային, եւ նրան խաղատուգանքի տակ գցեց:

-Բաժանեց,- բարկացկոտ մռթմռթում էր Պերեդոնովը, մեկանոցն է, բայց էն չի: Ձեռքի տակ է ասում ես: Հարկ էր մեկանոց, իսկ դու ի՞նչ բաժանեցիր: Իմ ինչի՞ն է պետք ագռավի մեկանոցը:

-Քո ինչին է պետք ագռավի մեկանոցը, դու քո փորն ես աճեցնում,- ծիծաղով վրա բերեց Ռուտիլովը:

-Ապագա տեսուչի լեզուն փաթ է ընկնում,- փոր, փոր, հաստափորիկ:

Ռուտիլովն անդադար ճամարտակում, բամբասում, անեկդոտներ էր պատմում, երբեմն բավական խտղտող բովանդակության: Պերեդոնովին ծաղրելու համար, նա սկսեց վստահեցնել, որ գիմնազիստներն իրենց վատ են պահում, հատկապես նրանք, որոնք բնակարաններում են ապրում՝ ծխում են, օղի են խմում, օհորդներին են սիրատածում: Պերեդոնովը հավատում էր: Եւ Գրուշինան էլ սատարում էր: Նրան այդ պատմություններն առանձնակի հաճույք էին պատճառում՝ նա ինքն այն է ուզում էր, ամուսնու մահից հետո, իր բնակարանում երեք-չորս գիմնազիստ պահել, բայց տնօրենը նրան չթույլատրեց, չնայած Պերեդոնովի միջնորդությանը,- Գրուշինան քաղաքում գեշ համբավ ուներ: Հիմա նա սկսեց հայհոյել այն բնակարանների տանտիրուհիներին, որտեղ ապրում էին գիմնազիստները:

-Նրանք տնօրենին կաշառք են տալիս,- հայտարարեց նա:

-Տանտիրուհիները բոլորն էլ գարշանք են,- համոզված ասաց Վոլոդինը,- դե թեկուզ իմը: Մենք նրա հետ այսպիսի պայման էինք կապել, երբ ես բնակարանն էի վարձում, որ նա ինձ երեկոյան երեք բաժակ կաթ է տալու: Լավ, մի երկու ամիս էդպես էլ ինձ մատուցում էին:

-Եւ դու չվնասվեցի՞ր,- ծիծաղով հարցրեց Ռուտիլովը:

-Դե ինչու վնասվել,- նեղացած առարկեց Վոլոդինը:- Կաթը՝ օգակար մթերք է: Դե ես էլ սովորել էի գիշերվա դեմ խմել: Մեկ էլ տեսնուն եմ, ինձ երկու բաժակ են բերում: Դե, հարցնում եմ, էդ ինչո՞ւ: Սպասավորն ասում է՝ Աննա Միխայլովնան, ասում է, խնդրում է ներել, որ իրենց կովը, ասում է, հիմա քիչ կաթ է տալիս: Դե իմ ինչ գործն է: Պայմանը փողից թանկ է: Դե իրենց կովիկն ընդհանրապես կաթ չի տալիս, էդպես ինձ ուտելի՞ք էլ չեն տա: Դե ես էլ ասում եմ, եթե կաթ չկա, ապա ասեք Աննա Միխայլովնային, որ ես խնդրում եմ ինձ մի բաժակ էլ ջուր տալ: Ես սովոր եմ երեք բաժակ խմել, ինձ երկուսը քիչ է:

-Մեր Պավլուշկան հերոս է,- ասաց Պերեդոնովը:- Դե դու պատմիր ախպերս, թե դու ոնց գեներալի հետ վիճեցիր:

Վոլոդինը հոժարությաբ կրկնեց պատմությունը: Բայց հիմա նրան ծաղրուծանակեցին: Նա նեղացած վարի շուրթը ցցեց:

Ընթրիքի շուրջ բոլորը հարբեցին, նույնիսկ կանայք: Վոլոդինն առաջարկեց նորից պատերն աղտոտել: Բոլորն ուրախացան՝ անմիջապես, դեռ ուտելը չվերջացրած, գործի անցան եւ անզուսպ զվարճանում էին: Թքում էին պաստառների վրա, դրանց վրա գարեջուր էին լցնում, պատերի ու առաստաղի վրա, ծայրերը յուղով կեղտոտած, թղթե նետեր էին բաց թողնում, ծամած հացից սատանաներ էին առաստաղի վրա ծեփում: Հետո հորինեցին ազարտի համար պաստառներից շերտեր պոկել,- ով ավելի երկար կպոկի: Այս խաղի վա Պրեպոլովենսկիները մեկուկես ռուբլի էլ տարան:

Վոլոդինը տարվեց: Այդ պարտությունից ու արբեցությունից հանկարծ տրտմեց եւ սկսեց իր մորից բողոքել: Նա կշտամբական դեմք ընդունեց եւ, չգիտես ինչու, ձեռքը վար հրելով, ասում էր.

-Եւ ինչո՞ւ նա ինձ ծնեց: Եւ ի՞նչ էր նա այն ժամանակ մտածում: Ինչպիսին է հիմա իմ կյանքը: Նա ինձ մայր չէ, այլ միայն ծնող: Քանի որ իսկական մայրը հոգ է տանում իր երեխայի մասին, իսկ իմը միայն

ծնել ինձ ու ամենամանուկ հասակից պետական դաստիարակության է տվել:

-Փոխարենը դուք սովորեցիք, մարդամեջ ելաք,- ասաց Պրեոլոբենսկայան:

Վոլոդինը ճակատով վար սեւեռվեց, գլուխը տարուբերելով, եւ ասում էր.

-Դե չէ, ի՞նչ է իմ կյանքը,- ամենավերջին կյանքն է: Եւ ինչո՞ւ նա ինձ ծնեց, նա մտածո՞ւմ էր այն ժամանակ:

Պերեդոնովը նորից հիշեց երեկվա երլին: «Ահա՝,- մտածում էր նա Վոլոդինի մասին,- մորից է բողոքում, թե ինչու է իրեն ծնել,- չի ուզում Պավլուշկա լինել: Երեւում է, իսկապես նախանձում է: Գուցե թե, արդեն եւ մտածում է Վարվարայի հետ ամուսնանալ եւ իմ մորթի մեջ մտնել»,- մտածում էր Պերեդոնովն ու տաղտկալի նայում Վոլոդինին:

Դե գոնե սրան մեկի հետ ամուսնացնեին:

Գիշերը, ննջարանում, Վարվարան Պերեդոնովին ասում էր.

-Դու կարծում ես, որ բոլոր էդ աղջիկները, որ քեզնից կպչում են, ջահել են, ուրեմն եւ լա՞վն են: Դրանք բոլորը խոտան են, ես նրանց բոլորից էլ ավելի սիրուն եմ:

Նա փութանակի հանվեց եւ, լկտիաբար քմծիծաղելով, Պերեդոնովին ցույց տվեց իր թեթեւակի գունազարդած, բարեկազմ, գեղեցիկ ու ճկուն մարմինը:

Թեպետ Վարվարան հարբացությունից օրորվում էր եւ նրա դեմքն ամեմ մի թարմ մարդու մեջ զզվանք կհարուցեր իր տրփաթառամ արտահայտությամբ, բայց նրա մարմինը հիասքանչ էր, ինչպես քնքուշ հավերժահարսի մարմին, դրան, ինչ-որ քամահրելի հմայքներով կցած թառամող պոռնիկի գլխով: Եւ այդ հիասքանչ մարմինն այս երկու հարբած ու կեղտոտ մարդուկների համար լոկ ստորին գայթակղության աղբյուր էր: Այդպես եւ հաճախ էլ լինում է,- եւ հիրավի մեր դարում գեղեցկությանը հարկ է լինել ոտնահարված ու անարգված:

Պերեդոնովը մռայլ քրքջում էր, նայելով իր մերկ ընկերուհուն:

Ողջ այդ գիշեր նրան տարատեսակ մերկ ու զազրելի տիկնայք էին երազվում:

Վարվարան հավատացել էր, որ եղինջով դաղվելը, ինչը նա արեց Պրեպոլովենսկայայի խորհրդով, իրեն օգնել էր: Նրան թվում էր, որ նա

մեկեն սկսեց գիրանալ: Նա բոլոր ծանոթներին հարցնում էր.

-Ճիշտ է չէ՞, ես գիրացել եմ:

Եւ նա մտածում էր, որ հիմա արդեն Պերեդոնովը, տեսնելով, ինչպես է նա գիրանում, եւ բացի այդ կեղծ նամակը ստանալով, կամուսնանա իր հետ:

Ամենեւին էլ այնքան հաճելի չէին Պերեդոնովի սպասումները: Նա արդեն վաղուց համոզվել էր, որ տնօրենը իր դեմ թշնամական է,- եւ իսկապես գիմնազիայի տնօրենը Պերեդոնովին համարում էր ծույլ, անընդունակ ուսուցիչ: Պերեդոնովը կարծում էր, որ տնօրենը հրամայում է աշակերտներին նրան չհարգել,- ինչը, հասկանալի է, հենց Պերեդոնովի անհեթեթ հերյուրանքն էր: Բայց դա Պերեդոնովին վստահություն էր ներշնչում, որ պետք է տնօրենից պաշտպանվել: Տնօրենի վրա բարկությունից նա ավագ դասարաններում բազմիցս սկսում էր անարգել տնօրենին: Շատ գիմնազիստների այդպիսի խոսակցությունները դուր էին գալիս:

Հիմա, երբ Պերեդոնովը ցանկացավ տեսուչ դառնալ, տնօրենի անբարյացակամ հարաբերությունները նրա հանդեպ հատկապես անդուր էին: Ենթադրենք, եթե իշխանուհին կամենա, ապա նրա հովանավորությունը կհաղթահարի տնօրենի դավերը: Բայց այդուհանդերձ դրանք անվտանգ չեն: Եւ այլ մարդիկ էլ կային քաղաքում,- ինչպես նկատել էր վերջին օրերս Պերեդոնովը,- որոնք թշնմական են իր հանդեպ եւ կուզենային խանգարել տեսուչի տպաշտոնին նրա նշանակմանը: Ահա Վոլոդինը՝ զուր չէ նա անընդհատ կրկնում «ապագա տեսուչ» խոսքը: Չէ որ եղել են դեպքեր, որ մարդիկ յուրացրել են ուրիշի անունը եւ ապրել են իրենց հաճույքի համար: Իհարկե, փոխարինել հենց Պերեդոնովին Վոլոդինի համար դժվար կլինի,- բայց չէ որ անպիսի հիմարի մոտ, ինչպիսին Վոլոդինն է, կարող են ամենաանհեթեթ ձեռնարկումները լինել: Եւ մեկ էլ Ռուտիլովները, Վերշինան իր Մարթայի հետ, գործընկերները, նրանց նախանձները՝ բոլորն ուրախ են նրան վնասելու: Իսկ ինչպե՞ս վնասել: Պարզ բան է, կվարկաբակեն նրան ղեկավարության մոտ, անհուսալի մարդ կներկայացնեն:

Այսպիսով, Պերեդոնովի մեջ երկու հոգս հայտնվեցին՝ ապացուցել իր բարեհուսությունը եւ վնասազերծել իրեն Վոլոդինից,- ամուսնացնել նրան հարստի հետ:

Եւ ահա մի անգամ Պերեդոնովը Վոլոդինին հարցրեց.

-Կուզե՞ս, Ադամենկոյենց օրիորդին քեզ հարս ուզեմ: Թե՞ դեռ Մարթայի կարոտն ես քաշում: Մի ողջ ամիս չե՞ս կարողանում մխիթարվել:

-Դե ի՞նչ պիտի ես Մարթայի կարոտը քաշեմ,- պատասխանեց Վոլոդինը:- ես նրան տեղը տեղին առաջարկություն արեցի, իսկ եթե նա չի ուզում, ասա ես ինչ անեմ: Ես էլ ուրիշին կգտնեմ,- մի՞թե ինձ համար հարսնացու չի գտնվի: Դե էդ բարիքից ամեն տեղ որքան ուզես կա:

-Հա, իսկ Մարթան ահա քիթդ լավ քաշեց,- ծաղրեց Պերեդոնովը:

-Դե էլ չգիտեմ, թե ինչ փեսացուի են նրանք սպասում,- նեղացկոտ ասաց Վոլոդինը,- դե գոնե օժիտը մեծ լիներ, թե չէ գրոշներ են տալու: Նա էդ քեզ է սիրահարվել, Արդլայոն Բորիսիչ:

Պերեդոնովը խորհուրդ տվեց.

-ես քո տեղը, նրա դարպասի վրա ձյութ կքսեի:

Վոլոդինը քրքջաց, բայց տեղնուտեղը հանգստացավ ու ասաց.

-Եթե բռնացնեն, կարող է տհաճ բան դուրս գալ:

-Մեկին վարձիր, ինչու դու այդ անես,- ասաց Պերեդոնովը:

Եւ արժի, Աստված վկա, արժի,- ոգեւորությամբ ասաց Վոլոդինը:- Քանի որ, եթե նա օրինական ամուսնության չի գնում, իսկ իմիջիայլոց պատուհանից իր մոտ երիտասարդների է թողնում: Դե դա նշանակում է՝ մարդը ոչ ամոթ ունի, ոչ խիղճ:

VI

Հաջորդ օրը Պերեդոնովն ու Վոլոդինն ուղեւորվեցին օրիորդ Ադամենկոյի մոտ: Վոլոդինը զուգվել էր,- հագել էր իր նոր նեղլիկ սերթուկը, մաքուր օսլայած վերնաշապիկը, բազմաբղետ վզնոցը, մազերին քսուկ էր դրել, անուշահոտվել էր,- հոգով խայտում էր:

Նադեժդա Վասիլեւնա Ադամենկոն եղբոր հետ ապրում էր քաղաքում սեփական աղյուսե կարմիր տնակում. քաղաքից ոչ հեռու նա կալվածք ուներ, որ վարձով էր տվել, Նախանցած տարի նա ավարտեց ուսումը տեղի գիմնազիայում, իսկ այժմ զբաղվում էր այն բանով, որ պառկում էր թախտի վրա, բազմապիսի բովանդակությամբ գրքույկներ էր ընթերցում եւ մեկ էլ խստավարժում էր իր եղբորը, տասնմեկամյա գիմնազիստին, ով փրկվում էր նրա խստություններից լոկ բարկացկոտ հայտարարությամբ.

-Մայրիկի օրոք ավելի լավ էր: Մայրիկը միայն անկյուն էր կանգնեցնում:

Նադեժդա Վասիլեւնայի հետ ապրում էր նրա մորաքույրը, անդեմ ու զառամ մի էակ, որ տնային գործերում ոչ մի ձայն չուներ: Ծանոթությունը Նադեժդա Վասիլեւնան խիստ ընտրությամբ էր կատարում: Պերեդոնովը նրա մոտ հազվադեպ էր լինում, եւ միայն իր սակավ ծանոթությունը նրա հետ կարող էր այն ենթադրության պատճառը լինել, թե այդ օրիորդը կարող է ամուսնանալ Վոլոդինի հետ:

Հիմա նա զարմացել էր անսպասելի այցելությունից, բայց անկոչ հյուրերին սիրալիր ընդունեց: Հյուրերին պետք էր զբաղեցնել,- եւ Նադեժդա Վասիլեւնային թվում էր, որ ամենահաճելի եւ հարմար խոսակցությունը ռուսաց լեզվի ուսուցչի համար՝ խոսակցությունն է ուսումնական գործի, գիմնազիաների ռեֆորմի, երեխաների դաստիարակության, գրականության, սիմվոլիզմի, ռուսական ամսագրերի մասին: Բոլոր այդ թեմաները նա շոշափեց, բայց ի պատասխան, ոչինչ չստացավ իրեն սրտնեղող շշպռանքներից զատ, որ բացահայտում էին, որ իր հյուրերի համար այդ հարցերը հետաքրքրական չեն: Նա տեսավ, որ միայն մի զրույց է հնարավոր՝ քաղաքային բամբասանքները: Բայց Նադեժդա Վասիլեւնան այդուհանդերձ մի փորձ էլ արեց:

-Իսկ դուք կարդացե՞ք Չեխովի «Պատենավոր մարդը»,- հարցրեց նա:- Արդյոք ճիշտ է չէ՞, ինչ դիպուկ է:

Քանի որ նա այդ հարցով դիմեց Վոլոդինին, ապա նա հաճելի լայնաբաց ժպտաց եւ հարցրեց.

-Դե այդ ի՞նչ է, հոդված թե՞ վեպ:

-Պատմվածք,- բացատրեց Նադեժդա Վասիլեւնան:

-Պարոն Չեխովի՞նը, դուք հաճեցիք ասել,- տեղեկացավ Վոլոդինը:

-Այո, Չեխովինը,- ասաց Նադեժդա Վասիլեւնան եւ քմծիծաղեց:

-Իսկ դա որտե՞ղ է տեղադրված,- շարունակում էր հետաքրքրվել Վոլոդինը:

-Ռուսաց մտքում»,- սիրալիր պատասխանեց օրիորդը:

-Ո՞ր համարում,- հարցաքննում էր Վոլոդինը:

-Լավ չեմ հիշում, ինչ- որ ամառայիններից մեկում,- նույնքան սիրալիր, բայց որոշակի զարմանքով պատասխանեց Նադեժդա Վասիլեւնան:

Փոքրիկ գիմնազիստը դռնից գլուխը ցցեց:

-Դա մայիսյան գրքույկում էր տպագրվել,- ասաց նա, ձեռքով դռնից բռնվելով եւ հյուրերի ու քրոջ վրա զվարթ կապույտ աչքերը պտտածելով:

-Ձեզ դեռ վեպեր կարդալը վաղ է,- զայրացկոտ ասաց Պերեդոնովը,-սովորել է պետք, այլ ոչ թե անպարկեշտ պատմություններ կարդալ:

Նադեժդա Վասիլեւնան խիստ նայեց եղբորը:

-Այդ ինչ սիրալիր է,- դռան ետեւում կանգնելն ո ւ լսելը,- ասաց նա, եւ երկու ձեռքերը բարձրացնելով, ճկույթների ծայրերը դրեց ուղիղ անկյան տակ:

Գիմնազիստը խոժոռվեց ու անհետեց: Նա գնաց իր սենյակ այնտեղ անկյուն կանգնեց ե սկսեց նայել ժամացույցին՝ երկու ճկույթն անկյան տակ՝ դա տասը րոպե անկյուն կանգնելու նշանն էր:

«Չէ,- նեղսրտած մտածում էր նա,- մայրիկի օրոք ավելի լավ էր՝ մայրիկը միայն հովանոցն էր անկյուն կանգնեցնում»:

Վոլոդինն այնինչ հյուրասենյակում մխիթարում էր տանտիրուհուն «Ռուսաց մտքի» մայիսյան համարն անպայման հայթայթելու եւ պարոն Չեխովի պատմվածքը կարդալու խոստումով: Պերեդոնովը լսում էր դեմքի վրա ակնհայտ տաղտուկի արտահայտությամբ: Վերջապես նա ասաց.

-Ես էլ չեմ կարդացել: Ես պարապ բաներ չեմ կարդում: Վիպակներում ու վեպերում անընդհատ հիմարություններ են գրում:

Նադեժդա Վասիլեւնան սիրալիր ժպտաց ու ասաց.

-Դուք շատ խիստ եք վերեբերվում ժամանակակից գրականությանը: Բայց չէ որ հիմա լավ գրքեր գրվում են:

-Ես բոլոր լավ գրքերը նախկինում կարդացել եմ,- հայտատարեց Պերեդոնովը: Ես հո չեմ կարդա այն, ինչ հիմա հորինում են:

Վոլոդինը հարգանքով նայում էր Պերեդոնովին: Նադեժդա Վասիլեւնան թեթեւակի հոգոց հանեց եւ՝ ինչ արած՝ սկսեց դատարկախոսել ու բամբասել, ինչպես կարող էր: Թեպետ եւ այդպիսի խոսակցությունը նրան հաճելի չէր, բայց նա աշխույժ ու զուսպ օրիորդի հմտությամբ ու զսպվածությամբ աջակցում էր դրան:

Հյուրերն աշխուժացան: Նրա համար անտանելի տաղտկալի էր, իսկ նրանք մտածում էին, որ նա իրենց հետ բացառիկ սիրալիր է, եւ այդ

վերագրում էին Վոլոդինի հիասքանչ արտաքինի հմայքին:

Երբ նրանք գնացին, Պերեդոնովը շնորհավորում էր Վոլոդինին հաջողության համար: Վոլոդինը ուրախալի ծիծաղում ու ցատկոտում էր: Նա արդեն մոռացել էր իրեն մերժած բոլոր օրիորդներին:

-Մի աքացի տուր,- ասում էր նրան Պերեդոնովը,- ոչխարի պես թռչկոտում ես: Դեռ կաց, քիթդ կքաշեն:

Բայց նա այդ կատակով էր ասում, իսկ ինքն հավատում էր մտածված հասարնախոսության հաջողությանը:

Գրուշինան համարյա թե ամեն օր վազում էր Վարվարայի մոտ, Վարվարան ավելի հաճախ էր լինում նրա մոտ, այնպես որ նրանք համարյա չէին էլ բաժանվում: Վարվարան հուզվում էր, իսկ Գրուշինան հապաղում էր՝ վստահեցնում էր, որ շատ դժվար է տառերն ընդօրինակելը, որպեսզի լրիվ նման լինեն: Պերեդոնովը դեռեւս չէր ուզում հարսանիքի օր նշանակել: Նա կրկին պահանջում էր, որպեսզի նրան սկզբում տեսուչի տեղը տան: Հիշելով, թե որքան պատրաստի հարսնացուներ ունի, նա մեկ անգամ չէ, ինչպես եւ անցած ձմեռ, որ սպառնում էր Վարվարային.

-Այ հիմա կգնամ պսակվելու: Առավոտյան կնկաս հետ կգամ, իսկ քեզ՝ դուրս: Վերջին անգամ ես գիշերում:

Եւ այդ խոսքերով հեռանում էր՝ բիլիարդ խաղալու: Այնտեղից երբեմն գալիս էր տուն, իսկ ավելի հաճախ Ռուտիլովի եւ Վոլոդինի հետ քեֆ էր քաշում: Այդպիսի գիշերները Վարվարան չէր կարողանում քնել: Այդ պատճառով նա անագրով էր տառապում: Դեռ լավ է, եթե նա վերադառնա գիշերվա մեկին, երկուսին,- այնժամ նա ազատ շունչ կքաշի: Իսկ եթե նա հայտնվում է միայն առավոտյան, ապա Վարվարան օրը լրիվ հիվանդ էր դիմավորում:

Վերջապես Գրուշինան պատրաստեց նամակն ու այն ցույց տվեց Վարվարային: Երկար զննում էին, համեմատում էին իշխանուհու նախանցած տարվա նամակի հետ: Թեպետ եւ իրականում նմանությունը քիչ էր, բայց Վարվարան հավատաց: Դե նա նաեւ հասկանում էր որ Պերեդոնովը չէր կարող այնքան ճշգրիտ հիշել իրեն քիչ ծանոթ ձեռագիրը, որպեսզի կեղծիքը նկատեր:

-Դե ահա,- բերկրալի ասաց նա,- վերջապես: Թե չէ ես արդեն սպասում, սպասում էի, դե ու սպասումս կորցրի: Դե միայն թե ծրարն ինչ-

պե՞ս,- եթե նա հարցնի, ես ի՞նչ պիտի ասեմ:

-Դե ծրարն արդեն անկարելի է կեղծել,- կնիքները,- ասաց Գրուշինան, քմծիծաղելով, նենգադավ, տարակերպ աչքերով նայելով Վարվարային՝ աջն՝ ավելի մեծ, ձախն՝ ավելի փոքր:

-Դե ուրեմն ինչպե՞ս:

-Հոգյակս Վարվարա Դմիտրիեւնա դե դուք նրան ասեք, որ ծրարը վառարանն եք նետել: Դե ծրարը ձեր ինչի՞ն է պետք:

Վարվարայի հույսերն աշխուժացան: Նա Գրուշինային ասում էր.

-Միայն թե ամուսնանա, այդ ժամանակ ես նրա համար չեմ վազվզի: Չէ, ես կնստեմ, իսկ նա թող ինձ համար վազվզի:

Շաբաթ օրը ճաշից հետո Պերեդոնովը գնաց բիլիարդ խաղալու: Նրա մտքերը ծանր ու տրտում էին: Նա մտածում էր.

«Գեշ է, նախանձոտ ու թշնամական մարդկանց մեջ ապրելը: Բայց դե ինչ արած,- հո բոլորը չեն կարող տեսուչ լինել: Գոյության պայքար»:

Երկու փողոցների անկյունում նա հանդիպեց ժանդարմային շտաբսպային: Տհաճ հանդիպում: Փոխգնդապետ Նիկոլայ Վադիմովիչ Ռուբովսկին, ոչ բարձրահասակ պնդակազմ մի մարդ՝ հոծ հոնքերով, զվարթ մոխրագույն աչքերով եւ կաղացող քայլքով, ինչից էլ որ նրա կոշկախթանները անհավասար ու զիլ զնգզնգում էին, բավական սիրալիր էր եւ այդու հասարակության մեջ սիրելի: Նա գիտեր քաղաքի բոլոր մարդկանց, նրանց բոլոր գործերն ու հարաբերությունները, սիրում էր բամբասանքներ լսել, բայց ինքը համեստ ու լռակյաց էր, ինպես գերեզման, եւ ոչ մեկին անպետք տհաճություններ չէր պատճառում:

Կանգ առան, բարեւեցին, զրուցեցին: Պերեդոնովը նոթոտեց, շուրջբոլորն աչք ածեց ու վախվխելով ասաց.

-Ձեզ մոտ, ես լսել եմ, մեր Նատաշան է ապրում, դե դուք նրան մի հավատացեք, ինչ է նա իմ մասին ասում, նա այդ ստում է:

-Ես սպասավորներից բամբասանքներ չեմ հավաքում,- արժանապատվությամբ ասաց Ռուբովսկին:

-Նա՝ ինքը գարշելի է,- շարունակում էր Պերեդոնովը, ուշք չդարձնելով Ռուբովսկու առարկությանը,- նա սիրեկան ունի, լեհ.նա, գուցե թե, դիտավորյալ էլ ձեզ մոտ է ընդունվել, որպեսզի ձեր մոտից ինչ-որ գաղտնի բան թռցնի:

-Խնդրում եմ, այդ մասին մի անհանգսացեք, չորուկ առարկեց փոխգնդապետը,- ինձ մոտ բերդերի նախագծեր չեն պահվում:

Բերդերի մասին հիշատակումը Պերեդոնովին տարակուսեցրեց: Նրան թվում էր, թե Ռուբովսկին այն է ակնարկում, թե կարող է Պերեդոնովին բերդ նստեցնել:

-Դե, բերդն ինչ,- քրթմնջաց նա,- դա ինձնից հեռու է, այ միայն ընդհանրապես իմ մասին տարատեսակ հիմարություններ են դուրս տալիս, դե այդ ավելի շատ նախանձից է: Դուք էդպիսի ոչ մի բանի մի հավատացեք: Դա նրանք մատնում են, որպեսզի իրենց վրայից կասկածը սրբեն, իսկ ես ինքս կարող եմ մատնել:

Ռուբովսկին շվարում էր:

-Վստահեցնում եմ ձեզ ,- ասաց նա, ուսերը թոթվելով եւ կոշկախթանները զնգացնելով,- ես ոչ մեկից ձեզ վրա մատնություն չեմ ստացել: Ձեզ, երեի թե, ինչ-որ մեկը կատակով սպառնացել է,- դե քիչ բան է երբեմն ասվում:

Պերեդոնովը չէր հավատում: նա կարծում էր, թե ժանդարմայինը գաղտնամտում է,- եւ նրան կալեց սարսափը:

Ամեն անգամ, երբ Պերեդոնովն անցնում էր Վերշինյան այգու մոտով, Վերշինան կանգնեցնում էր նրան եւ իր դյութող շարժումներով ու խոսքերով նրան այգի էր գրավում: Եւ նա մտնում էր, ակամա ենթակվելով նա լռին դյութանքին: Գուցե թե, նա Ռուտիլովներից էլ շուտ հաջողեր իր նպատակին հասնել,- չէ որ Պերեդոնովը միատեսակ հեռու էր բոլոր մարդկանցից, եւ ինչո՞ւ պիտի նա օրինական ամուսնությամբ չկապվեր Մարթայի հետ: Բայց, հավանաբար, կպչուն էր այն ճահիճը, որ մտել էր Պերեդոնովը, եւ ոչ մի դյութանքով չէր հաջողվում նրան շրըմփացնել այլ մի ճահիճ:

Ահա հիմա էլ, երբ, Ռուտիլովից բաժանվելով, Պերեդոնովն անցնում էր կողքնանց, Վերշինան, հագնված, ինչպես միշտ ամբողջովին սեւազգեստ, հմայականչեց նրան:

-Մարթան ու Վլադյան մի օրով տուն են գնում,- ասաց նա, քնքշորեն նայելով Պերեդոնովին ծխախոտի ծխի միջով իր դարչնագույն աչքերով,- ա՛յ գուցե դուք էլ նրանց հետ գյուղում հյուրընկալվելու գնաք: Նրանց ետքից սայլակով աշխատավոր է եկել:

-Նեղվածք է,- մռայլորեն ասաց Պերեդոնովը:

-Դե ահա նեղվածք է,- առարկեց Վերշինան,- հիանալի կտեղավորվեք: Դե եթե նեղվեք էլ, հոգ չէ, հեռու չէ, վեց վերստ եք գնալու:

Այդ ժամանակ տնից դուրս թռավ Մարթան՝ Վերշինային ինչ-որ բան հարցնելու: Մեկնելուց առաջ իրարանցումները նրան փոքր ինչ ծուլությունից հանել էին, եւ նրա դեմքը սովորականից ավելի աշխույժ ու զվարթ էր: Դարձյալ, արդեն երկուսն էլ սկսեցին Պերեդոնովին գյուղ կանչել:

-Հարմարավետ կտեղավորվեք,- համոզում էր Վերշինան,- դուք Մարթայի հետ ետնաթոռակին, իսկ Վլադյան Իգնատիի հետ առջեւինի վրա: Ահա նայեք, եւ սայլակն էլ բակում է:

Պերեդոնովը Վերշինայի ու Մարթայի ետքից բակ ելավ, որտեղ կանգնած էր սայլակը, իսկ դրա կողքին, ինչ-որ բան տեղավորելով, տնտնդում էր Վլադյան: Սայլակը տարողունակ էր: Բայց Պերեդոնովը, մռայլ զննելով այն, հայտարարեց.

-Չեմ գա: Նեղվածք է: Չորս հոգի, դեռ նաեւ իրերը:

-Դե, եթե դուք մտածում եք, որ նեղվածք է,- ասաց Վերշինան,- ապա Վլադյան կարող է ոտքով էլ գնալ:

-Իհարկե,- ասաց Վլադյան, զուսպ եւ քնքուշ ժպտալով,- մեկուկես ժամում լավ էլ կհասնեմ: Ա՛յ հիմա կքայլեմ, եւ ձեզանից էլ շուտ կհասնեմ:

Այդժամ Պերեդոնովը հայտարարեց, թե սայլակը կճոճվի, իսկ ինքը ճոճք չի սիրում: Վերադարձան տաղավար: Ամեն ինչ արդեն դասավորած էր, բայց աշխատավոր Իգնատյին դեռ ուտում էր խոհանոցում, անփութկոտ եւ հիմնավոր հագենալով:

-Վլադյան ինչպե՞ս է սովորում,- հարցրեց Մարթան:

Պերեդոնովի հետ այլ խոսակցություն նա չէր կարողանում հորինել, դե իսկ Վերշինան բազմիցս կշտամբում էր նրան, որ նա չի կարողանում Պերեդոնովին զբաղեցնել:

-Վատ,- ասաց Պերեդոնովը,- ծուլանում է, ոչինչ չի լսում:

Վերշինան սիրում էր փնթփնթալ: նա սկսեց Վլադյային հանդիմանել, Վլադյան կարմրում ու ժպտում էր, ուսերն էր թոթվում, ինչպես ցրտից, եւ բարձրացնում էր, ըստ իր սովորության, մի ուսը մյուսից վեր:

-Դե ինչ, տարին նոր է սկսվել,- ասաց նա,- ես դեռ կհասցնեմ:

-Հենց սկզբից է պետք սովորել,- ավագի տոնով, բայց թեթեւակի

դրանից կարմրելով, ասաց Մարթան:

-Դե եւ չարաճճիություն է անում,- բողոքում էր Պերեդոնովը,- երեկ էնպես իրար անցան, ինչպես փողոցային տղեկներ: Դե եւ կոպիտ է, հինշաբթի ինձ հանդուգն խոսքեր ասաց:

Վլադյան հանկարծ շիկնեց եւ կրքոտ սկսեց խոսել, բայց չդադարելով ժպտալ.

-Ոչ մի հանդուգն բան, այլ ես միայն ճշմարտությունն ասացի, որ դուք այլ տետրակներում հինգի հասնող սխալները չնկատեցիք, իսկ ինձ մոտ բոլորը նշեցիք եւ երկուս դրեցիք, իսկ ես ավելի լավ էի գրել, քան նրանք, ում դուք երեք էիք դրել:

-Դե դուք էլի ինձ հանդուգն խսքեր ասացիք,- պնդում էր Պերեդոնովը:

-Ոչ մի հանդուգն խոսք, այլ ես միայն ասացի, որ տեսուչին կասեմ,- զայրագին ասում էր Վլադյան,- դե ինչու որ երկուս ստանամ...

-Վլադյա, քեզ մի կորցրու,- բարկացկոտ ասաց Վերշինան - փոխանակ ներողություն խնդրես, իսկ դու նորից կրկնում ես:

Վլադյան հանկարծ հիշեց, որ Պերեդոնովին չի կարելի ջղայնացնել, որ նա կարող է Մարթային փեսացու դառնալ: Նա ավելի ուժգին կարմեց, շվարմունքի մեջ իր բլուզը գետին ձգեց եւ երկչոտ ասաց.

-Կներեք: Ես միայն ուզում էի խնդրել, որ դուք ուղղեիք:

-Լռիր, լռիր, խնդրում եմ,- ընհատեց նրան Վերշինան,- տանել չեմ կարողանում այդպիսի դատողություններ, տանել չեմ կարողանում,- կրկնեց նա եւ հազիվ նկատելի ցնցվեց իր ողջ չորուկ մարմնով:- Քեզ դիտողություն են անում, դու լռիր:

Եւ Վերշինան Վլադյայի վրա քիչ կշտամբական խոսքեր շաղ չտվեց, ծխախոտի ծուխն արտամղելով եւ ծուռ ժպտալով, ինչպես նա միշտ ժպտում էր , ինչի մասին էլ որ խոսք գնար:

-Հարկ է հորդ ասել, որ քեզ պատժի,- ավարտեց նա:

-Քոթակել է պետք,- որոշեց Պերեդոնովը եւ զայրացկոտ նայեց իրեն նեղացրած Վլադյային:

-Իհարկե,- հաստատեց Վերշինան,- քոթակել է պետք:

-Քոթակել է պետք,- ասաց եւ Մարթան ու կարմրեց:

-Ահա կգնամ ձեր հոր մոտ,- ասաաց Պերեդոնովը,- եւ կասեմ, որ ձեզ իմ ներկայությամբ քոթակեն, դե ու լավ:

Վլադյան լռում էր, նայում էր իր չարչարողներին, ուսերով կուչ էր գալիս եւ արցունքների միջից ժպտում էր: Նրա հայրը խիստ էր: Վլադյան ջանում էր մխիթարել իրեն, մտածելով, որ դա՝ լոկ սպառնալիքներ են: Մի՞թե, մտածում էր նա, իսկապես կուզենան իր տոնը փչացնել:

Չէ որ տոնը՝ առանձնահատուկ օր է, նշված եւ բերկրալի, եւ ողջ տոնականը ընդհանրապես անհամատեղելի է ողջ դպրոցականի, առօրեականի հետ:

Իսկ Պերեդոնովին դուր էր գալիս, երբ տղաները լալիս էին,- հատկապես, եթե այդ նա էր այնպես արել, որ նրանք արտասվում եւ մեղավոր են դուրս գալիս: Վլադյայի շվարմունքն ու զուսպ արցունքները նրա աչքերի վրա, եւ երկչոտ, մեղավոր ժպիտը նրա՝ այդ ամենը ուրախացնում էր Պերեդոնովին: Նա որոշեց Սրաթայի ու Վլադյայի հետ գնալ:

-Դե լավ, ես կգամ ձեզ հետ,- ասաց նա Սարթային:

Սարթան ուրախացավ, բայց ինչ-որ վախեցած: Վերշինան ուզում էր այդ նրա համար եւ նրան դյութեց իր արագ հմայախոսություններով այդ ցանկությունը: Բայց այժմ, երբ Պերեդոնովն ասաց, որ գալիս է. Սարթան անհարմար զգաց Վլադյայի համար,-մեղք է նա:

Սահմռկելի դարձավ եւ Վլադյայի համար: Մի՞թե այդ նրա համար է Պերեդոնովը գալիս: Նա կամեցավ Պերեդոնովին սիրաշահել: Նա ասաց.

-Եթե դուք մտածում եք, Արդալյոն Բորիսիչ, որ նեղվածք կլինի, ապա ես կարող եմ ոտքով գալ:

Պերեդոնովը կասկածանքով նայեց նրան ու ասաց.

-Դե հա, եթե ձեզ մենակ թողնենք, ապա դուք մի տեղ կփախչեք: Դե ոչ, մենք ավելի լավ է ձեզ ձեր հոր մոտ տանենք, թող նա ձեզ ցույց տա:

Վլադյան կարմրեց ու հոգոց հանեց: Նա իրեն այնքան անհարմար ու տաղտկալի զգաց, եւ սրտնեղիչ էր այդ տանջալից եւ մռայլ մարդու պատճառով: Որպեսզի ինչ-ոչ կերպ մեղմացնի Պերեդոնովին, նա որոշեց նրա համար ավելի հարմար նստատեղ սարքել:

-Դե, ես արդեն էնպես կանեմ,- ասաց նա,- որ ձեզ հիանալի լինի նստելը:

Եւ նա փութանակի ուղեւորվեց սայլակի մոտ: Վերշինան նայեց նրա ետքից, ծուռ ժպտալով ու ծխելով, եւ Պերեդոնովին կամացուկ ասաց.

-Նրանք բոլորը հորից վախենում են: Նա շատ խիստ է:

Մարթան կարմրեց:

Վլադյան այն է ուզում էր հետը գյուղ կարթ վերցնել, նոր, անգլիական, խնայված փողերով գնված, ուզում էր եւս ինչ-որ բաներ վերցնել, դե բայց այդ ամենը սայլակի մեջ քիչ տեղ չէր գրավի: Եւ Վլադյան իր ողջ եղած-չեղածը ետ տուն տարավ:

Ծոգ չէր: Արեւը թեքվում էր: Առավոտյան անձրեւով թրջված փողոցը չէր փոշոտվում: Սայլակը համաչափ ընթանում էր մանրախճի վրայով, քաղաքից չորս նստվորի տանելով. կուշտ գորշ ձիուկը վազում էր, ասես նրանց ծանրությունը չնկատելով, եւ ծույլ, մունջ աշխատավոր Իգնատյին վարում էր նրա վազքը միայն փորձառու հայացքին նկատելի երասանների շարժումներով:

Պերեդոնովը նստել էր Մարթայի կողքին: Նրա համար այնքան տեղ էին ազատել, որ Մարթայի համար նստելը լրիվ անհարմար էր: Բայց նա դա չէր նկատում: Դե իսկ եթե նույնիսկ նկատեր, ապա կմտածեր, որ այդպես էլ պիտի լինի՝ չէ որ ինքը՝ հյուր է:

Պերեդոնովն իրեն շատ հաճելի էր զգում: Նա որոշեց Մարթայի հետ սիրալիր խոսել, կատակել, զվարճացնել նրան: Նա այսպես սկսեց.

-Դե ի՞նչ. շուտո՞վ եք սկսելու ապստամբել:

-Ինչո՞ւ ապստամբել,- հարցրեց Մարթան:

-Դուք լեհերդ, չէ որ բոլորդ պատրաստվում եք ապստամբել, դե միայն թե զուր:

ես այդ մասին չեմ էլ մտածում,- ասաց Մարթան,- դե եւ ոչ մեկն էլ մեզ մոտ չի ուզում ապստամբել:

-Դե հա, դուք միայն այդպես խոսում եք, իսկ ռուսներին ատում եք:

-Չենք էլ մտածում,- ասաց Վլադյան, առջեւի նստատեղից շրջվելով Պերեդոնովի կողմը, ուր նստած էր Իգնատյիի կողքին:

Մենք գիտեք, ինչպես դուք չեք մտածում: Միայն թե մենք մեր Լեհաստանը ձեզ չենք տա: Մենք ձեզ նվաճել ենք: Մենք ձեզ այնքան բարօրություններ ենք արել. դե, հավանաբար, գայլին ինչքան էլ կերակրես, նա միշտ անտառի կողմն է նայում:

Մարթան չէր առարկում: Պերեդոնովը փոքր ինչ լռեց ու հանկարծ ասաց.

-Լեհերը՝ անուղեղ են:

Մարթան կարմրեց:

-Դե ամեն տեսակի էլ լինում են եւ ռուսները եւ լեհերը,- ասաց նա:

-Դե չէ, դա այդպես է, դա ճիշտ է,- պնդում էր Պերեդոնովը:- Լեհերը՝ հիմար են: Միայն ցուցամոլություն են անում: Այ ջհուդները՝ դրանք խելոք են:

-Ջհուդները՝ խաբեբաներ են, եւ բնավ էլ խելոք չեն,- ասաց Վլադյան:

-Չէ, ջհուդները՝ շատ խելոք ժողովուրդ են: Ջհուդը ռուսին միշտ կխաբի, իսկ ռուսը ջհուդին երբեք չի խաբի:

-Դե եւ պետք էլ չի խաբել,- ասաց Վլադյան,- մի՞թե խելքը հենց էն է, որպեսզի խաբես ու խարդախե՞ս:

Պերեդոնովը բարկացած նայեց Վլադյային:

Իսկ խելքն այն է, որպեսզի սովորես,- ասաց նա,- իսկ դուք չեք սովորում:

Վլադյան հոգոց հանեց եւ նորից շրջվեց եւ սկսեց նայել ձիու համաչափ վարգին: Իսկ Պերեդոնովն ասում էր.

-Ջհուդներն ամեն ինչում են խելոք, եւ ուսման մեջ, եւ ամեն ինչում: Եթե ջհուդներին թողնեին պրոֆեսոր դառնալ, ապա բոլոր պրոֆեսորները ջհուդներից կլինեին: Իսկ լեհուհիները՝ բոլորը փնթի են:

Նա նայեց Մարթային եւ, հաճույքով նկատելով, որ նա սաստիկ կարմրել է, սիրալիրությունից ասաց.

-Դե դուք մի մտածեք, ես ձեր մասին չեմ խոսում: Ես գիտեմ, որ դուք լավ տանտիրուհի կլինեք:

-Բոլոր լեհուհիները՝ լավ տանտիրուհիներ են,- պատասխանեց Մարթան:

-Դե հա,- առարկեց Պերեդոնովը,- տանտիրուհիներ, դրսանց մաքուր են, իսկ շրջազգեստները կեղտոտ: Բայց, դե ինչու է ձեզ մոտ Միցկեւիչ եղել: Նա մեր Պուշկինից բարձր է: Նա ինձ մոտ պատից է կախված: Նախկինում այնտեղ Պուշկինն էր կախված, դե եւ ես նրան արտաքնոց տարա,- նա պալատական լակեյ է եղել:

-Բայց չէ որ դուք ռուս եք,- ասաց Վլադյան,- դե ի՞նչ ձեզ մեր Միցկեւիչը: Պուշկինը՝ լավն է, եւ Միցկեւիչն էլ՝ լավն է:

-Միցկեւիչը՝ ավելի բարձր է,- կրկնեց Պերեդոնովը:- Ռուսները՝ տխմարացու են: Մի հատ ինքնաեռ են հորինել, եւ էլ ոչինչ:

Պերեդոնովը նայեց Մարթային, աչքերը կկոցեց ու ասաց.

-Դուք շատ պեպեններ ունեք: Դա գեղեցիկ չէ:

-Դե ինչ արած,- ժպտալով, արտաբերեց Մարթան:

-Ես էլ պեպեններ ունեմ,- ասաց Վլադյան, շրջվելով իր նեղլիկ նստատեղի վրա եւ դիպչելով մունջ Իգնատյիին:

-Դուք տղա եք,- ասաց Պերեդոնովը,- այդ ոչինչ, տղամարդուն գեղեցկությունը պետք չի, իսկ նրան,- շարունակում էր նա, շրջվելով Մարթայի կողմը: Էդպես ձեզ ոչ մեկը կնության չի առնի: Հարկ է վարունգի աղաջրով դեմքը լվալ:

Մարթան խորհրդի համար շնորհակալություն հայտնեց:

Վլադյան ժպտալով նայում էր Պերեդոնովին:

-Դուք ի՞նչ եք ժպտում,- ասաց Պերեդոնովը,- այ սպասեք, կգանք, եւ լավ քոթակ կուտեք:

Վլադյան, շրջվելով իր տեղում, ուշադիր նայում էր Պերեդոնովին, ջանալով կռահել, արդյոք նա կատակում է, թե ճիշտ է ասում: իսկ Պերեդոնովը տանել չէր կարողանում, երբ իր վրա սեւեռուն նայում էին:

-Ի՞նչ եք աչքներդ վրաս պլշել,- կոպիտ հարցրեց նա: Ինձ վրա նախշեր չկան: Դե դուք ուզում եք ինձ աչքով տալ:

Վլադյան վախեցավ ու աչքերը կողմ տարավ:

-Կներեք,- երկչոտ ասաց նա,- ես էնպես, ոչ դիտավորյալ:

-Իսկ դուք մի՞թե հավատում եք չար աչքին,- հարցրեց Մարթան:

-Չարակնել չի կարելի, դա սնապաշտություն է,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը,- միայն թե սարսափելի անպատշաճ է սեւեռվելն ու զննելը:

Մի քանի րոպե շարունակվում էր անհարմար լռությունը:

-Չէ որ դուք աղքատ եք,- հանկարծ ասաց Պերեդոնովը:

-Այո, հարուստ չենք,- պատասխանեց Մարթան,- բայց այդուհանդերձ եւ աղքատ էլ չենք: Բոլորիս մոտ էլ ետ գցած ինչ-որ բան կա:

Պերեդոնովն անվստահ նայեց նրան ու ասաց.

-Դե, հա, ես գիտեմ, որ դուք՝ աղքատ եք: Ամեն օր տանը բոբիկ եք ման գալիս:

-Մենք դա աղքատությունից չենք անում,- աշխուժորեն ասաց Վլադյան:

-Իսկ ի՞նչ հարստությունից, ի՞նչ է,- հարցրեց Պերեդոնովը եւ ընդ-

հատ քրքջաց:

-Բնավ էլ ոչ աղքատությունից,- ասաց Վլադյան, կարմրելով,- դա առողջության համար շատ օգտակար է, կոփում ենք առողջությունը եւ ամռանը հաճելի է:

-Դե դուք այդ խաբում եք,- կոպիտ առարկեց Պերեդոնովը:- Հարուստները բոբիկ ման չեն գալիս: Ձեր հայրը շատ երեխաներ ունի, եւ գրոշներ է ստանում: Էդքան սապոգ չես առնի:

VII

Վարվարան ոչինչ չգիտեր այն մասին, թե ուր է գնացել Պերեդոնովը: Նա դաժանորեն անհանգիստ գիշեր անցկացրեց:

Բայց եւ առավոտյան քաղաք վերադառնալով, Պերեդոնովը տուն չգնաց, այլ կարգադրեց իրեն եկեղեցի տանել,- այդ ժամին սկսվում էր պատարագը: Հիմա նրան վտանգավոր էր թվում հաճախ եկեղեցում չլինելը,- մեկ էլ տեսար մատնեցին, թերեւս:

Ցանկապարսպի մուտքի մոտ հանդիպելով շառագույն, պարզամիտ դեմքով եւ անարատ կապույտ աչքերով փոքրիկ գիմազիստին, Պերեդոնովն ասաց.

-Այ, Մաշենկա, բարեւ, փափկասուն:

Միշա Կուդրյավցեւը տանջալիորեն կարմրեց: Պերեդոնովն արդեն մի քանի անգամ, Մաշենկա կոչելով, ծաղրում էր նրան, Կուդրյավցեւը չէր հասկանում, ինչի համար, եւ չէր համարձակվում բողոքել: Մի քանի ընկերներ, հիմար տղեկներ, հենց այդտեղ խմբված, ծիծաղեցին Պերեդոնովի խոսքերի վրա: Նրանց համար էլ ուրախ էր Միշային ծաղրելը:

Եղիա մարգարեի պատվին եկեղեցին, հին, կառուցված դեռեւս Միխայիլ արքայի օրոք, կեցած էր հրապարակում գիմնազիայի դիմաց: Այդ պատճառով տոն օրերին առ պատարագն ու երեկոյան ժամասացությունը պարտ էին այստեղ ժողովվելու եւ ծախ կողմից կանգնելու, մեծ նահատակ սուրբ Եկատերինայի ընթերասեղանի մոտ, շարքերով,- իսկ ետեւում տեղավորվում էր դասարանային դաստիարակների օգնականներից մեկը, հսկողության համար: Հենց այդտեղ, կողքին, տաճարի կենտրոնին մոտ, կանգնում էին գիմնազիայի ուսուցիչները, տեսուչն ու տնօրենը, իրենց ընտանիքներով: Սովորաբար հավաքվում էին բոլոր ուղղափառ գիմնազիստները, մի քանիսից զատ, որոնց թույ-

լատրվել էր ծնողների հետ այցելել իրենց ծխական եկեղեցիները: Գիմնազիստների երգչախումբը լավ էր երգում, եւ այդ պատճառով եկեղեցի այցելում էին առաջին գիլդիայի վաճառականները, աստիճանավորները եւ կալվածատերերի ընտանիքները: Հասարակ ժողովուրդը շատ չէր լինում, առավել եւս, որ պատարագն այստեղ կատարում էին, տնօրենի ցանկությանը համապատասխան, ավելի ուշ, քան մյուս եկեղեցիներում:

Պերեդոնովը կանգեց իր համար ընտել տեղում: Այստեղից ոչ բոլոր երգիչներն էին նրան երեւում: Աչքերը կկոցելով, նա նայում էր նրանց ու մտածում էր, որ նրանք կանգնած են անկարգ եւ որ ինքը նրանց կկարգավորեր, եթե նա լիներ գիմնազիայի տեսուչը: Ահա թուխ Կրամարենկոն, փոքրիկ, վտիտ, անդադրուն, հար այս ու այն կողմ է շրջվում, ինչ-որ բան է շշնջում, ժպտում է,- եւ ոչ մեկը նրան չի սսկվեցնում: Ասես ոչ մեկի գործն էլ չի:

«Այլանդակություն,- մտածում էր Պերեդոնովը. - այս երգիչները միշտ սրիկաներ են. խեւուկ տղեկը հնչեղ, մաքուր դիսկանտ ունի,- դե նա էլ արդեն մտածում է, որ եկեղեցում կարելի է շշնջալ ու ժպտալ»:

Եւ Պերեդոնովը խոժոռվում էր:

Նրա կողքին կանգնեց ավելի ուշ եկած ժողովրդական ուսումնարանների տեսուչը, Սերգեյ Պոտապովիչ Բոգդանովը, մի ծերուկ՝ դարչնագույն հիմար դեմքով, որի վրա մշտապես այնպիսի արտահայտություն էր, կարծես թե նա ինչ-որ մեկին ուզում էր մի այնպիսի բան բացատրել, ինչը որ ոչ մի կերպ ինքն էլ չէր կարողանում հասկանալ: Ոչ մեկին այդքան հեշտ չէր կարելի զարմացնել կամ վախեցնել, ինչպես Բոգդանովին՝ հենց որ ինչ-որ նոր կամ տագնապալից բան լսի, եւ արդեն ճակատը նրա կնճռոտում էր ներքին հիվանդագին ջանքից, եւ բերանից անկարգ, խռովահույզ բացականչություններ էին դուրս թռչում:

Պերեդոնովը հակվեց նրա կողմն ու շշուկով ասաց.

-Ձեզ մոտ մի ուսուցչուհի կարմիր վերնաշապիկով է:

Բոգդանովը վախեցավ: Սպիտակ ժապավենակապը վախլուկ թրթռաց կզակի վրա:

-Ի՞նչ. ի՞նչ եք դուք ասում,- խռպոտ շշնջաց նա,- ո՞վ է, ո՞վ է նա:

-Դե ահա էն ճղճղանը, դե էն գիրուկը, դե ոնց էի նրան կոչում, չգիտեմ,- շշնջում էր Պերեդոնովը:

-Ճղճղանը, ճղճղանը,- շվարած մտաբերում էր Բոգդանովը,- դա Սկոբոչկինան է, այո:

-Դե, այո,- հաստատեց Պերեդոնովը:

-Դե դա ինչպես, դե ինչպես այդպես,- շշուկով բացականչում էր Բոգդանովը,- Սկոբոչկինան կարմիր վերնաշապիկով, հը: Դե դուք ինքներդ տեսե՞լ եք:

-Տեսել եմ, դե նա, ասում են, դպրոցում էլ էդպես պճնված է ման գալիս: Դե ավելի վատ էլ է լինում՝ սարաֆան է հագնում, լրիվ հասարակ աղջկա պես է պտտվում:

-Հա, ասացեք: Հարկ է, հարկ է իմանալ: Այդպես չի կարելի չի կարելի: Դրա համար հեռացնել է պետք, հեռացնել,- թոթովում էր Բոգդանովը:- Նա միշտ այդպիսինն է եղել:

Պատարագն ավարտվեց: Եկեղեցուց ելնում էին: Պերեդոնովը Կամարենկոյին ասաց.

-Դու, Սեւուկ-թերայրուկ, ինչո՞ւ էիր եկեղեցում ժպտում: Դե սպասիր, ես հորդ կասեմ:

Պերեդոնովը երբեմն «դու» էր ասում ոչ ազնավական գիմնազիստներին, իսկ ազնվականներին նա միշտ «դուք» էր ասում: Նա գրասենյակում իմանում էր, թե ով ինչ դասից է, եւ նրա հիշողությունը կառչում էր էր այդ տարբերություններից:

Կրամարենկոն զարմանքով նայեց Պերեդոնովին եւ լուռ կողմ վազեց: Նա պատկանում էր այն գիմնազիստների թվին, որոնք Պերեդոնովին համարում էին կոպիտ, հիմար եւ անարդարացի եւ դրա համար ատում եւ արհամարհում էին նրան: Այսպիսիք մեծամասնություն էին: Պերեդոնովը մտածում էր, որ դրանք՝ նրանք են, որոնց տնօրենը իր դեմ է տրամադրում, եթե ոչ ինքը, ապա որդիների միջոցով:

Պերեդոնովին մոտեցավ՝ արդեն ցանակապատի ետեւում՝ Վոլոդինը ուրախալի քմծիծաղով,- դեմքը, հանց անվանակոչիկի, երանելի, թասակը ծոծրակին, ձեռնափայտը ուղղագիծ:

-Գիտես, ես քեզ ինչ կասեմ, Արդալյոն Բորիսիչ,- փսփսաց նա բերկրալի,- ես Չերեպնինին համոզեցի եւ նա օրերս Մարթայի դարպասները կձթապատի:

Պերեդոնովը լռեց, ինչ-որ բան կշռադատելով, եւ հանկարծ նոթոտ հռհռաց: Վոլոդինը նույնպես արագ դադարեց լայնաբաց ժպտալ, հա-

մեստ տեսք ընդունեց, թասակն ուղղեց եւ, երկնքին նայելով ու ձեռնափայտը թափահարելով, ասաց.

-Լավ եղանակ է, իսկ երեկոյան կողմ, թերեւս, անձրեւ կկուտակվի: Դե, թող եւ անձրեւ, մենք ապագա տեսուչի տանը կնստենք:

-Դե ինձ այնքան էլ չի կարելի տանը նստել,- ասաց Պերեդոնովը,- ես հիմա գործեր ունեմ, հարկ է քաղաք գնալ:

Վոլոդինը հասկացող դեմք ընդունեց, թեպետ, իհարկե, չգիտեր, թե Պերեդոնովի մոտ այդ ինչ գործեր հայտնվեցին: Իսկ Պերեդոնովը մտածում էր, որ իրեն անհրաժեշտ է մի քանի այցելություն կատարել: Երեկվա պատահական հանդիպումը ժանդարմային սպայի հետ նրան միտք տվեց, որը նրան բավական օգտավետ թվաց՝ այցելել քաղաքում բոլոր նշանաակալից անձանց եւ նրանց վստահեցնել իր բարեհուսության մեջ: Եթե դա հաջողվի, այդժամ, մի բան պատահելիս, Պերեդոնովի համար քաղաքում հովանավորներ կգտնվեն, որոնք էլ կվկայեն նրա մտաց ճիշտ ընթացքը:

-Դե դուք ո՞ւր, Արդալյոն Բորիսիչ,- հարցրեց Վոլոդինը, տեսնելով, որ Պերեդոնովը թեքվում է այն ուղուց, որով միշտ վերադառնում էր,- միի՞թե դուք տուն չեք գնում:

-Ոչ, ես տուն,- պատասխանեց Պերեդոնովը,- միայն թե ես այժմ վախենում եմ այն փողոցով քայլել:

-Իսկ ինչո՞ւ:

-Այնտեղ թմբրախոտ շատ է աճում եւ ծանր հոտ է, դա ինձ վրա ուժեղ ազդում է, թմրեցնում է: Հիմա իմ նյարդերը թույլ են: Անընդհատ տհաճություններ են:

Վոլոդինը նորեն իր դեմքին հասկացող եւ կարեկից արտահայտություն հաղորդեց:

Ճանապարհին Պերեդոնովը տատասկափշից մի քանի կոն պոկեց եւ դրանք գրպանը խոթեց:

-Այդ դուք ինչի համար եք հավաքում,- լայնաբաց ժպտալով հարցրեց Վոլոդինը:

-Կատվի համար,- խոժոռադեմ պատասխանեց Պերեդոնովը:

-Մորթի մե՞ջ եք ծեփելու,- գործնական տեղեկացավ Վոլոդինը:

-Հա:

Վոլոդինը քմծիծաղեց:

-Դուք առանց ինձ մի սկսեք,- ասաց նա - հեռաքրքրական է:

Պերեդոնովը հրավիրեց նրան հիմա անցնել, բայց Վոլոդինն ասաց, որ ինքը գործ ունի՝ նա հանկարծ զգաց, որ ինչ-որ անպատշաճ է անընդհատ գործ չունենալը. Պերեդոնովի խոսքերն իր գործերի մասին սադրում էին նրան եւ նա մտմտաց, որ լավ կլիներ հիմա ինքնուրույն մտնել օրիորդ Ադաամենկոյի մոտ եւ ասել նրան, որ ինքը նոր եւ շատ նրբին գծանկարներ ունի շրջանակների համար, այնպես որ արդյոք նա չի ուզում նայել: Ի դեպ, մտածում էր Վոլոդինը, Նադեժդա Վասիլեւնան նրան սուրճ կհյուրասիրի:

Վոլոդինն այդպես էլ արեց: Եւ նաեւ մի խրթին կատակ հորինեց՝ Նադեժդա Վասիլեւնային առաջարկեց նրա եղբոր հետ ձեռքի աշխատանքով պարապել: Նադեժդա վասիլեւնան մտածեց, թե Վոլոդինը աշխատավարձի կարիք ունի, եւ անմիջապես համաձայնվեց:

Պայմանավորվեցին պարապել շաբաթը երեք անգամ, օրը երկու ժամ, ամիսը երեսուն ռուբլով: Վոլոդինը հիացմունքի մեջ էր՝ եւ փող, եւ Նադեժդա վասիլեւնային հաճախակի տեսնելու հնարավորություն:

Պերեդոնովը տուն դարձավ, ինչպես միշտ, մռայլ: Վարվարան, անքուն գիշերից դժգունած, փնթփնթաց.

-Կարող էիր երեկ ասել, որ չես գալու:

Պերեդոնովը, նրան ծաղրելով, պատմեց, որ Մարթայի մոտ էր Գնացել: Վարվարան լռում էր: Նրա ձեռքին իշխանուհու նամակն էր: Թեկուզ եւ կեղծած, բայց այդուհանդերձ...

Նախաճաշի ժամանակ նա ասաց, քմծիծաղելով.

-Մինչեւ դու էնտեղ տնտնում էիր Մարֆուշայի հետ, ես էստեղ առանց քեզ իշխանուհուց նամակ ստացա:

-Իսկ դու մի՞թե նրան գրել էիր,- հարցրեց Պերեդոնովը:

Նրա դեմքն աշխուժացավ խամրած սպասման արտացոլքով:

-Դե ահա, հիմարություններ է դուրս տալիս,- պատասխանեց Վարվարան ծիծաղելով,- չէ որ ինքդ էիր կարգադրել գրել:

-Դե, եւ ի՞նչ է նա գրում,- տագնապալից հարցրեց Պերեդոնովը:

-Ահա նամակը, ինքդ կարդա:

Վարվարան գրպանները քրքրեց, ասես փնտրում էր ինչ-որ տեղ խցկած նամակը, հետո այն հանեց ու տվեց Պերեդոնովին: Նա ուտելիքը թողեց եւ ագահությամբ վրա պրծավ նամակի վրա: Կարդաց եւ ու-

ռախացավ: Ահա, վերջապես, պարզ ու դրական խոստում: Նրա մեջ ոչ միայն կասկած չառաջացավ: նա հապշտապ նախաճաշն ավարտեց եւ գնաց ծանոթներին ու մտերիմներին նամակը ցույց տալու:

Խոժոռախանդավառ, նա արագ մտավ Վերշինայի այգին: Վերշինան, ինչպես համարյա միշտ կանգնած էր դռնակի մոտ ու ծխում էր: Նա ուրախացավ՝ առաջ նրան պետք էր հմայաբերել, հիմա ինքը եկավ: Վերշինան մտածեց.

«Այ թե ինչ է նշանակում, դե ճեմեց օրիորդի հետ, նրա հետ մնաց,- ահա եւ վազեց: Արդյոք չի՞ ուզում պսակվել»,- տագնապալի եւ բերկրալի մտածում էր նա:

Պերեդոնովը տեղնուտեղը նրան հիասթափեցրեց,- նամակը ցույց տվեց:

-Այ դուք անընդհատ կասկածում էիք,- ասաց նա,- իսկ ահա ինքն իշխանուհին է գրում: Ահա կարդացեք, ինքներդ կտեսնեք:

Վերշինան անվստահ նայեց նամակին, արագ մի քանի անգամ դրա վրա ծխախոտի ծուխ փչեց, կեռ ժպտաց եւ կամացուկ ու արագ հարցրեց.

-Իսկ ծրարն ո՞ւր է:

Պերեդոնովը հանկարծ վախեցավ: Նա մտածեց, որ Վարվարան կարող էր եւ խաբել իրեն նամակով,- դե վերցրել ու ինքն է գրել: Պետք է նրանից ծրարը պահանջել, որքան հնարավոր է շուտ:

-Ես չգիտեմ, ,- ասաց նա,- պետք է հարցնել:

Նա հապճեպ հրաժեշտ տվեց Վերշինային եւ արագ ետ գնաց դեպ իր տունը:

Անհրաժեշտ էր որքան հնարավոր է շուտ հավաստիանալ այս նամակի ծագման մասին՝ հանկարծահաս կասկածն այնքան տանջալից է:

Վերշինան, դռնակի մոտ կանգնած, նայում էր նրա ետքից, եւ արագորեն ծխախոտից ծուխ էր հանում, ասես փութալով ավարտել այս ժամկետին հանձնարարված դասը: Վախեցած եւ հուսահատ դեմքով Պերեդոնովը տուն վազեց եւ դեռ նախասենյակում հուզմունքից խռպոտ ձայնով գոռաց.

-Վարվարա իսկ ո՞ւր է ծրարը:

-Ի՞նչ ծրար,- հարցրեց Վարվարան դողացող ձանով:

Նա նայում էր Պերեդոնովին լկտիաբար, բայց կկարմրեր, եթե ներկված չլիներ:

-Ծրարը, իշխանուհուց, որով այսօր նամակը բերեցին,- բացատրեց Պերեդոնովը, վախեցած ու բարկացկոտ Վարվարային նայելով:

Վարվարան լարված ծիծաղեց:

-Դե ես կարծեցի, ինչի՞ն է պետք որ,- ասաց նա:- Ի՞նչ է դե, ծրարներ հավաքենք, դե ի՞նչ, հավաքածու կազմե՞նք: Չէ որ ծրարների համար փող չեն տալիս: Էդ միայն պանդոկում շշերի համար են փողը ետ տալիս:

Պերեդոնովը, մռայլ, քայլում է նախասենյակներում ու փնթփնթում.

-Իշխանուհիներն էլ ինչ տեսակի ասես լինում են: Մենք գիտենք: Գուցե թե, էստեղ է ապրում իշխանուհին:

Վարվարան ծեւացրեց, թե գխի չի ընկնում նրա կասկածներից, բայց դաժանորեն վախենում էր:

Երբ երեկոյան կողմ Պերեդոնովն անցնում էր Վերշինայի այգու կողքով, Վերշինան նրան կանգնեցրեց:

-Ծրարը գտա՞ք,- հարցրեց նա:

-Դե Վարյան ասում է, թե այրել է այն,- պատասխանեց Պերեդոնովը:

Վերշինան ծիծաղեց, եւ ծխախոտի ծխի սպիտակ բարալիկ ամպերը տատանվեցին նրա առաջ հանդարտ եւ ոչ շոգ օդում:

-Տարօրինակ է,- ասաց նա,- այդ ինչ անզգույշ է ձեր քույրիկը,- գործնական նամակ է, եւ հանկարծ առանց ծրարի: Դե ամեն դեպքում կնիքից կերեւար, թե երբ են նամակն ուղարկել եւ որտեղից:

Պերեդոնովը սաստիկ սրտնեղում էր: Ջուր էր Վերշինան նրան կանչում այգի, զուր էր խոստանում թղթերով բախտը գուշակել,- Պերեդոնովը գնաց:

Բայց այդուհանդերձ մտերիմներին ցույց էր տալիս նամակն այդ ու գլուխ էր գովում: Եւ մտերիմները հավատում էին: Իսկ Պերեդոնովը չգիտեր, հավատա, թե չհավատա: Համենայն դեպս նա վճռեց երեքշաբթի օրվանից սկսել իր արդարացուցիչ այցելությունները քաղաքի նշանակալից անձանց մոտ:

Երկուշաբթի օրվանից չի կարելի,- ծանր օր է:

VIII

Հենց որ Պերեդոնովը գնաց բիլիարդ խաղալու, Վարվարան գնաց Գրուշինայի մոտ: Նրանք երկար քննարկում էին եւ, վերջապես, որոշեցին գործը երկրորդ նամակով շտկել: Վարվարան գիտեր, որ Գրուշինան Պետերբուրգում ծանոթներ ունի: Նրանց միջոցով դժվար չէ այնտեղ ուղարկել եւ ետ ստանալ նամակը, որը հիմա կսարքեն:

Գրուշինան, ինչպես առաջին անգամ երկար ու ծեւական հրաժարվում էր:

-Օ՛յ, աղավնյակս, Վարվարա Դմիտրիեւնա,- ասում էր նա,- դե ես մի նամակից իսկ դողում, անընդհատ վախենում եմ: Տան մոտ հենց պրիստավին տեսնում եմ, էդպես ամբողջովին նվաղում եմ,- մտածում եմ՝ իմ ետեւից են գալիս, ուզում են բանտ նստեցնել:

Մի ամբողջ ժամ Վարվարան նրան համոզում էր, նվերներ էր խոստանում, նախօրոք մի քիչ փող տվեց: Վերջապես Գրուշինան համաձայնվեց: Որոշեցին այսպես անել՝ սկզբում Վարվարան կասի, որ իշխանուհուն պատասխան է գրել, շնորհակալագիր: Հետո մի քանի օրից նամակը կգա, իբր թե իշխանուհուց: Այդ նամակում ավելի հստակ կգրվի, որ ազատ տեղեր կան, որ եթե շուտով նշանվի, ապա դրանցից մեկնումեկը կարելի է Պերեդոնովի համար ապսպրել: Այդ նամակն այստեղ Գրուշինան կգրի, ինչպես եւ առաջինը,- կդրոշմեն այն, յոթ կոպեկանոց դրոշմանիշ կփակցնեն, Գրուշինան այն կդնի իր ընկերուհուն հղած նամակի հետ, իսկ նա Պետերբուրգում այն փոստարկղի մեջ կգցի:

Եւ, ահա, Վարվարան ու Գրուշինան գնացին կրպակ քաղաքի ամենաածայրամասը եւ այնտեղ մի տուփ ծրար գնեցին, նեղլիկ, գունավոր շրջոնքով, եւ գունավոր թուղթ: Ընտրեցին եւ թուղթը եւ ծրարներն այպիսիները, որոնցից ալեւս կրպակում չմնաց,- նախազգուշություն, որ հորինել էր Գրուշինան կեղծիքի թաքուցման համար: Նեղլիկ ծրարները ընտրեցին այն բանի համար, որպսզի կեղծված նամակը հեշտ մտնի մյուսի մեջ:

Տուն վերադառնալով, Գրուշինայի մոտ, հորինեցին եւ իշխանուհու նամակը: Երբ, երկու օր անց, նամակը պատրաստ էր, այն շիպրով անուշահոտեցին: Մնացած ծրարներն ո թուղթն այրեցին, որպեսզի հանցանշաններ չմնան:

Գրուշինան գրեց իր ընկերուհուն, թե հատկապես որ օրը նամակն

ուղարկի,- հաշվարկեցին, որպեսզի այն հասնի կիրակի օրը այդժամ փոստատարն այն կբերի Պերեդոնովի ներկայությամբ, եւ դա նամակի չկեղծման հավելյալ ապացույց կլինի: Երեքշաբթի Պերեդոնովը ջանաց ավելի վաղ վերադառնալ գիմնազիայից: Դիպվածը նրան օգնեց՝ նրա վերջին դասն այն դասարանում էր, որի դուռը դուրս էր գալիս դեպի միջանցք, այն տեղի մոտ, որտեղ կախված էր ժամացույցը եւ արթուն է սահմանված ժամին զանգը տվող պահակը, քաջարի պահուստային ուսուցիչ-սպան: Պերեդոնովը պահակին ուղարկեց ուսուցչանոց դասարանի մատյանի ետեւից, իսկ ինքը ժամացույցը մի կես ժամ առաջ գցեց՝ ոչ մեկն այդ չնկատեց:

Տանը Պերեդոնովը նախաճաշից հրաժարվեց եւ ասաց, որպեսզի ճաշն ավելի ուշ անեն,- իբր ինքը պետք է գործերով գնա:

-Խճճում, խճճում են, իսկ ես պիտի բանամ,- բարկացկոտ ասաց նա, մտածելով խարդավանքների մասին, որ իր դեմ լարում են թշնամիները:

Հագավ քիչ գործածվող ֆրակը, որի մեջ իրեն անհարմար ու նեղված էր զգում՝ մարմինը տարիների հետ լցվել էր, ֆրակը նեղում էր: Նեղսրտում էր, որ շքանշան չկա: Այուսներն ունեն,- նույնիսկ Ֆալաստովի մոտ քաղաքային ուսումնարանից կա,- իսկ ինքը չունի: Այս ամենը տնօրենի բաներն էին՝ ոչ մի անգամ չէր ուզում ներկայացնել: Աստիճանները գալիս են, այդ տնօրենը չի կարող հասկանալ,- դե ինչ դրանցից, եթե ոչ մեկը չի տեսնում: Դե, ահա նոր համազգեստով կերեւա: Լավ է, որ այնտեղ ուսադիրները աստիճանով կլինեն, այլ ոչ թե պաշտոնի դասով: Դա կարեւոր կլինի,- ուսադիրները, ինչպես գեներալի մոտ, եւ մի մեծաստղ: Մեկից ամեն մեկը կտեսնի, որ փողոցով պետական խորհրդական է քայլում:

«Հարկ է փութով նոր համազգեստ պատվիրել»,- մտածում էր Պերեդոնովը:

Նա ելավ փողոց եւ միայն այդժամ սկսեց մտածել, թե ումից սկսի:

Ոնց որ թե, իր վիճակում ամենաանհրաժեշտ մարդիկ՝ գավառական ոստիկանապետն ու շրջանային դատարանի դատախազն է: Դե նրանցից էլ հարկ էր սկսել: Կամ ազնվականության պարագլխից: Բայց նրանցից սկսելը Պերեդոնովի համար սարսափելի դարձավ: Պարագլուխ Վերիգան՝ գեներալ է, ձգտում է նահանգապետ դառնալ: Գավա-

ական ոստիկանապետը, դատախազը՝ դրանք ոստիկանության եւ դատարանի սարսափելի ներկայացուցիչներն են:

«Սկզբի համար,- մտածում էր Պերեդոնովը,- պետք է ավելի հասարակ ղեկավարություն ընտրել եւ այնտեղ աչք ածել, շոշափել,- պարզ կլինի, ինչպես են իրեն վերաբերվում, ինչ են իր մասին խոսում»: Այդ պատճառով, որոշեց Պերեդոնովը, ամենաճիշտը քաղաքագլխից սկսելն է: Թեպետ նա՝ վաճառական է եւ սովորել է լոկ շրջանային ուսումնարանում, բայց այդուհանդերձ նա ամենուր լինում է, եւ իր մոտ բոլորը լինում են, եւ նա քաղաքում հարգանք է վայելում, իսկ այլ քաղաքներում եւ նույնիսկ մայրաքաղաքում նա, բավական ծանրակշիռ ծանոթներ ունի:

Եւ Պերեդոնովը վճռականորեն ուղեւորվեց դեպի քաղաքագլխի տուն:

Թիպոտ եղանակ էր: Տերեւները ծառերից ընկնում էին հլու, խոնջացած: Պերեդոնովի համար փոքր ինչ սարսափելի էր:

Քաղաքագլխի տանը վերջերս փայլեցրած մանրահատակի եւ էլի ինչ-որ բանի հոտ էր փչում, հաճելի՝ ուտելու: Լուռ եւ տաղտկալի էր: Տանտիրոջ երեխաները, գիմնազիստ որդին եւ դեռահաս աղջիկը,- «նա ինձ մոտ տնային դաստիարակչուհու տեղ է անցնում»,- ասում էր հայրը՝ պատշաճաբար կենում էին իրենց ննջարանում: Այնտեղ հարմարավետ էր հանգիստ եւ զվարթ, պատուհանները նայում էին այգուն, հարմար կահույք էր դրված, վերնահարկերում եւ այգում զանազան խաղեր, երեխաների ձայներ էին զրնգում:

Իսկ դեպի դուրս նայող վերին կացարանի հարկաբաժնում, այնտեղ, ուր հյուրեր էին ընդունվում, ամեն ինչ ձգված ու կարծր էր: Կարմիր փայտից կահույքն ասես մի քանի անգամ մեծացված էր խաղալիքայինի նմուշօրինակով: Սովորական մարդկանց համար դրա վրա նստելը շատ անհարմար էր,- նստում, ասես քարի վրա ես փլվում: Իսկ հաստամարմին տանտերը՝ ոչինչ կնստի, փոքր ինչ տեղը կտրորի եւ հարմարավետ նստում է: Քաղաքագլխի մոտ հյուրընկալվող քաղաքատակի վանքի վարդապետը այդ բազկաթոռներն ու թախտերը հոգեփրկիչ էր կոչում, ինչին քաղաքագլուխը պատասխանում էր.

-Դե ես էդ կնիկային անտաշությունները չեմ սիրում, ինչպես որոշ տներում՝ նստում ես զսպանակների վրա ու տարուբերվում՝ ինքդ ցնց-

վում ես եւ կահույքն է ցնցվում,- էդտեղ ի՞նչ լավ բան կա: Եւ սակայն, եւ բժիշկներն էլ փափուկ կահույքին հավանություն չեն տալիս:

Քաղաքագլուխը, Յակով Անիկիեւիչ Սկուչաեւը, Պերեդոնովին դիմավորեց իր հյուրասենյակի շեմին: Դա գեր, բարձրահասակ, սեւահեր, մազերը կարճ կտրած մի տղամարդ էր. նա իրեն արժանապատիվ եւ սիրալիր էր պահում, ոչ խորթ որոշակի քամահրանքից առ քիչ հուսալի մարդիկ:

Դիք-դիք նստելով լայն բազկաթոռի վրա եւ պատասխանելով տանտիրոջ առաջին սիրալիրություններին, Պերեդոնովն ասաց.

-իսկ ես ձեզ մոտ գործով եմ:

-Հաճույքով: Ինչո՞վ կարող եմ ծառայել,- սիրալիր տեղակացավ տանտերը:

Նրա սեւ խորամանկ աչքերում քամահրական կրակ պեծկլտաց: Նա կարծում էր, թե Պերեդոնովը եկել էր պարտքով փող ուզելու, եւ որոշեց, որ հարյուր հիսուն ռուբլուց ավելի չի տա: Քաղաքում շատ աստիճանավորներ Սկուչաեւին ավելի կամ պակաս նշանակալից գումար էին պարտք: Սկուչաեւը երբեք չէր հիշեցնում պարտքը վերադարձնելու մասին, բայց փոխարենը անճշտակատար պարտատուներին փոխառության իրավունքից զրկում էր: Իսկ առաջին անգամ նա հոժարությամբ տալիս էր, ըստ իր ազատ կանխիկ գումարի եւ խնդրարկուի վճարունակության:

-Դուք, Յակով Անիկիեւիչ, որպես քաղաքագլուխ՝ առաջին դեմքն եք քաղաքում - ասաց Պերեդոնովը,- ուրեմն ինձ պետքէ ձեզ հետ խոսել:

Սկուչաեւը նշանակալից տեսք ընդունեց եւ բազկաթոռին նստած թեթեւակի գլուխ տվեց:

-Իմ մասին քաղաքում ամեն տեսակի անհեթեթություններ են դուրս տալիս,- մռայլ ասում էր Պերեդոնովը,- ինչ որ չի եղել, դուրս կտան:

-Ուրիշի բերանին թաշկինակ չես գցի,- ասաց տանտերը,- եւ սակայն, մեր պաղեստիններում, հայտնի է, մեր սանամերներն ինչ անեն, եթե ոչ լեզու թափ տան:

-Ասում են, թե ես եկեղեցի չեմ գնում, իսկ դա սուտ է,- շարունակում էր Պերեդոնովը,- ես գնում եմ: Իսկ որ Եղիայի օրը չեմ եղել, դե այդ ժամանակ փորս ցավում էր, թե չէ ես միշտ էլ գնում եմ:

-Դա ճիշտ է,- հաստատեց տանտերը,- այդ կարող եք ասել, պատա-

հել է ձեզ տեսնել: Եւ սակայն, չէ որ, միշտ չէ, որ ձեր եկեղեցի եմ հաճախում: Ես ավելի շատ վանք եմ գնում: Դե մեր տոհմում ադպես է ստացվել:

-Ամեն տեսակի անհեթեթություններ են դուրս տալիս,- ասում էր Պերեդոնովը:- Ասում են, թե իբր ես գիմնազիստներին նողկալի բաներ եմ պատմում: Իսկ դա անհեթեթություն է: Իհարկե, երբեմն դասի ժամանակ ինչ-որ ծիծաղելի բան պատմում ես, որպեսզի աշխուժացնես: Դուք ինքներդ էլ գիմանազիստ որդի ունեք: Չէ՞ որ նա իմ մասին ոչ մի այդպիսի բան չի պատմել:

-Դա ճիշտ է,- համաձայնվեց Սկուչաեւը,- ոչ մի այդպիսի բան չի եղել: Եւ սակայն, չէ որ նրանք, տղեկները, խորամանկ ժողովուրդ է՝ ինչ-որ պետք չի, այն չեն ասի: Դե, իհարկե, իմը դեռ փոքր է, հիմարաբար դուրս կտար, սակայն ոչ մի նման բան չէին ասել:

-Դե, իսկ բարձր դասարաններում նրանք իրենք ամեն ինչ գիտեն,- ասաց Պերեդոնովը,- դե ես էնտեղ էլ գեշ բառեր չեմ ասում:

-Դե դա էդպիսի գործ է,- պատասխանում էր Սկուչաեւը,- հայտնի է, գիմնազիան՝ շուկայի հրապարակ չէ:

-Դե իսկ մեզ մոտ էդպիսի ժողովուրդ է,- բողոքում էր Պերեդոնովը,- էնպիսի բաներ դուրս կտան, ինչը որ չի էլ եղել: Դե ես էլ ձեզ մոտ՝ դուք՝ քաղաքագլուխ եք:

Սկուչաեւը միանգամայն շոյված էր այն բանից, որ եկել էին իր մոտ: Նա լիովին չէր հասկանում, թե ինչու համար է այդ եւ ինչն է բանը, բայց քաղաքականությունից ելնելով ամենեւին ցույց չէր տալիս, թէ չի հասկանում:

-Եւ մեկ էլ իմ մասին վատ են խոսում,- շարունակում էր Պերեդոնովը,- թե ես Վարվարայի հետ եմ ապրում: Ասում են, որ նա ոչ թե իմ քույրն է, այլ սիրուհին: Իսկ նա ինձ, Աստվա՛ծ վկա, քույր է, միայն թե հեռավոր, չորս պորտի, այդպիսիների հետ կարելի է պսակվել: Ես էլ նրա հետ էլ կպսակվեմ:

-Այդպես, այդպես, իհարկե,- ասաց Սկուչաեւը,- եւ այնուամենայնիվ՝ պսակն է վերջը գործի:

-Իսկ ավելի շուտ չէր կարելի,- ասում էր Պերեդոնովը,- ես կարեւոր պատճառներ ունեի: Ոչ մի կերպ չէր կարելի: Թե չէ ես վաղուց կպսակվեի: Դե դուք ինձ հավատացեք:

Սկուչաեւը ծգվեց, նոթոտեց եւ, փափլիկ ու սպիտակ մատներով թմբկահարելով սեղանի մուգ սփռոցին, ասաց.

-Ես ձեզ հավատում եմ: Եթե այդպես է, ապա այդ, իրոք, այլ խոսակցություն է: Հիմա ես ձեզ հավատում եմ: Թե չէ, խոստովանելով ասեմ, կասկածելի էր, թե ինչպես այդ դուք ձեր, թույլ տվեք ասել, ընկերուհու հետ առանց պսակվելու ապրում եք: Դա կասկածելի է, գիտեք, որովհետեւ, տղաները՝ սուր ժողովուրդ են. նրանք, թե մի գեշ բան են տեսնում՝ ընդօրինակում եմ: Բարի բաներին դժվար է նրանց սովորեցնել, իսկ գեշ բաները ինքնաբերաբար են գալիս: Էդպես է այդ, ճիշտ, կասկածելի էր: Եւ սակայն, ում ինչ գործն է՝ ես էդպես եմ այդ մասին դատում: Իսկ որ դուք այցելեցիք, ապա այդ ինձ համար շոյիչ է, որովհետեւ մենք թեեւ շնորհքից զուրկ չենք, շրջանային ուսումնարանից ավելի հեռու աշխարհ չենք տեսել, դե, այդուհանդերձ պատվված եմ հասարակության վստահությամբ, երրորդ ժամկետն է քաղաքագլուխ եմ, էնպես որ իմ խոսքը քաղաքացիների շրջանում մի բան արժի:

Սկուչաեւը խոսում եւ ավելի ու ավելի էր խճճվում իր մտքերում, եւ նրան թվում էր, որ երբեք չի վերջանա նրա լեզվից սողացող ժամավաճառությունը: Եւ նա ընդհատեց իր խոսքը եւ տաղտկալիորեն մտածեց.

«Եւ սակայն, կարծես ջուր ենք ծեծում: Դժբախտություն է էս գիտունների հետ,- մտածում էր նա՝ չես հասկանում, թե ինչ է նա ուզում: Դե գրքերում նրան ամեն ինչ պարզ է, գիտուն մարդուն, բայց ահա հենց էդ գրքից քիթը վեր քաշեց, էդպես էլ կխրվի եւ մյուսներին էլ կխրի»:

Նա տաղտկալի շվարմունքով սեւեռվեց Պերեդոնովի վրա, նրա սուր աչքերը խամրեցին, պարարտ մարմինը սմքել էր, նա արդեն աշխույժ գործիչ չէր երեւում, ինչպես քիչ առաջ, այլ պարզապես հիմարավուն ծերուկ:

Պերեդոնովը նույնպես փոքր ինչ լռեց, ասես տանտիրոջ խոսքերից դյութված, հետո ասաց, անորոշ-խոժոռ արտահայտությամբ աչքերը կկոցելով.

-Դուք քաղաքի գլուխն եք, անպես որ դուք կարող եք ասել, որ այդ ամենը անհեթեթություն է:

-Այսինքն ինչի՞ մասին,- զգույշ տեղակացավ Սկուչաեւը:

-Դե ահա,- բացատրեց Պերեդոնովը,- եթե նահանգ հասցնեն, որ ես

եկեղեցի չեմ գնում կամ ինչ-որ այլ բան, դե ահա, եթե գան ու հարցնեն:

-Այդ մենք կարող ենք,- ասաց գլուխը, այդ հարցում, համենայն դեպս, բարեհույս եղեք: եթե ինչ-որ բան լինի, ապա մենք ձեր մեջքին կկանգնենք,- դե ինչու լավ մարդու մասին մի խոսք չասես: Թեկուզ ձեզ հասցե դումայից կտանք, եթե հարկ լինի: Այդ ամենը մենք կարող ենք: Կամ, օրինակելիորեն, պատվավոր քաղաքացու կոչում,- դե ինչու ոչ, կարիք լինի, ամեն ինչ կարելի է:

-Դե ես ձեզ վրա հույս կդնեմ,- ասաց Պերեդոնովը մռայլ, ասես պատասխանելով իր համար ոչ լրիվ հաճելի մի բանի,- թե չէ տնօրենը անընդհատ ինձ նեղում է:

-Ասացեք,- բացականչեց Սկուչաեւը, կարեկցանքով գլուխը տարուբերելով,- ոչ այլ կերպ, քանի որ պետք է ենթադրել, որ զրպարտություններով: Նիկոլայ Վասիլեւիչը, ոնց որ թե, հիմնավոր պարոն է, ոչ մեկին չի նեղացնի: Դե իհարկե, որդուցս եմ տեսնում: Լուրջ պարոն է, խիստ, ավելորդ ներողամտություն չի ցուցաբերում եւ տարբերություններ չի դնում, մի խոսքով՝ հիմնավոր մարդ է: Այլ բան չէ, եթե ոչ զրպարտությամբ: դե դուք ինչո՞ւ եք նրա հետ թարսվել:

-Մեր հայացքները չեն համընկնում,- բացատրեց Պերեդոնովը:- Գիմնազիայում էլ ես ինձ նախանձողներն ունեմ: Բոլորը ուզում են տեսուչ դառնալ: Իսկ ինձ իշխանուհի Վոլչանսկայան է խոստացել տեսուչի տեղ ապսպրել: Դե ահա նրանք էլ նախանձից չարանում են:

-Այդպես, այդպես,- զգուշորեն ասաց Սկուչաեը:- դե բայց այդ ինչու ենք մենք չոր ու ցամաք խոսակցություն վարում: Պետք է ակռատել ու մեկ էլ խմել:

Սկուչաեւը սեղմեց կախովի լամպի կողքի էլեկտրական զանգի կոճակը:

-Հարմար բան է,- ասաց նա Պերեդոնովին:- Իսկ ձեզ հարկ էր այլ գերատեսչություն անցնել: Դուք մեզ, Դաշենկա, ժողվեք,- ասաց նա զանգի վրա եկած ատլետիկ կազմվածքով բարետես աղջկան,- դե ինչ-որ խորտիկներ եւ մեկ է տաք-տաք սուրճ, հասկանո՞ւմ եք:

-Լսում եմ,- պատասխանեց Դաշենկան, ժպտալով, եւ գնաց, քայլելով զարմանալի, ըստ իր կառուցվածքի, թեթեւ:

-Այլ գերատեսչություն,- նորից դիմեց Սկուչաեւը Պերեդոնովին:- Դե թեկուզ հոգեւոր, օրինակ: Եթե հոգեւոր աստիճան ստանաք, ապա ձե-

զանից լուրջ, խելամիտ քահանա դուրս կգար: Ես կարող եմ աջակցել: Ես շատ լավ սրբազան ծանոթներ ունեմ:

Սկուչաեւը մի քանի թեմական եւ տեղապահ եպիսկոպոսների անուն տվեց:

-Ոչ, ես տերտեր չեմ ուզում,- պատասխանում էր Պերեդոնովը,- ես խունկից վախենում եմ: Խունկից սիրտս խառնում եւ գլուխս պտտվում է:

-Այդ դեպքում ոստիկանությունում էլ լավ է,- խորհուրդ էր տալիս Սկուչաեւը:- Ընդունվեք, օրինակ, գավառամասային բաժին: Ձեր վրա, թույլ տվեք իմանալ, ի՞նչ աստիճան է:

-Ես՝ պետական խորհրդական եմ,- հանդիսավոր ասաց Պերեդոնովը:

-Այ թե ինչ,- բացականչեց Սկուչաեւը,- ասացեք խնդրեմ, թե ձեզ մեծ աստիճաններ են տալիս: Եւ այդ այն բանի համար, որ երեխաների՞ն եք ուսուցանում: Ասացեք, ինչ է գիտությունը: Եւ սակայն, թեպետ ներկա ժամանակներում որոշ պարոններ հարձակվում են գիտության վրա, իսկ առանց գիտության չես ապրի: Ահա ես ինքս թեեւ շրջանայինում եմ սովորել, իսկ որդուս համալսարան եմ ուղարկում: Գիմնազիայի միջոցով, հայտնի է, համարյա զոռով նոսրացնել, վարոցով, իսկ հետո արդեն իքնը կգնա: Ես նրան, գիտեք, քոթակելը երբեք չեմ քոթակում, բայց հենց որ ծուլանում կամ ինչ-որ բանում թերանում է, բռնում եմ ուսերից, տանում եմ պատուհանի մոտ՝ այնտեղ մեր այգում կեչիներ են կեցած: Ցույց եմ տալիս նրան կեչին,- սա, ասում եմ, տեսնո՞ւմ ես: Տեսնում եմ, հայրիկ, տեսնում եմ, ասում է, էլ չեմ անի: Եւ ճիշտ որ, օգնում է, կշտկվի տղեկը, ասես նրան իսկապես էլ քոթակել են: Ա՛խ, երեխաներ, երեխաներ,- հոգոց հանելով ավարտեց Սկուչաեւը:

Սկուչաեւի մոտ Պերեդոնովը երկու ժամ նստեց: Գործնական խոսակցությանը հաջորդեց առատ հյուրասիրությունը:

Սկուչաեւը հյուրասիրում էր,- ինչպես ամեն ինչ, որ անում էր,- բավական ծանրաբարո, ասես կարեւոր գործով էր զբաղված: Ընդ որում նա ջանում էր այդ անել ինչ-որ խորամանկ տարօրինակություններով: Գլիտվեյնը մատուցում էին մեծ բաժակներով, ինչպես սուրճը, եւ տանտերն այն սուրճիկ էր կոչում: Օղու ըմպանակները մատուցեցին խեղված ու կոկած հատակներով, որպեսզի այն հնարավոր չլինե սեղանի

վրա դնել:

-Դա ինձ մոտ կոչվում է՝ լցրու ու խմիր,- բացատրեց տանտերը:

Եկավ նաեւ վաճառական Տիշկովը, ճերմակահեր, ցածրիկ, զվարթ ու կորովի, երկար սերթուկով եւ շշածեւ սապոգներով: Նա շատ օղի էր խմում, հանգավոր ամեն տեսակի անհեթեթություններ էր ասում, շատ զվարթ ու արագ եւ, հավանաբար, բավական գոհ էր ինքն իրենից:

Պերեդոնովը վերջապես հասկացավ, որ տուն գնալու ժամն է, եւ սկսեց հաջողություն ասել:

-Մի շտապեք,- ասում էր տանտերը,- նստեք:

-Նստեք, ընկերակցեք,- ասաց Տիշկովը:

-Ոչ, ժամն է արդեն,- պատասխանում էր մտահոգ Պերեդոնովը:

-Ժամն է արդեն, քույրն է սպասում,- ասաց Տիշկովն ու Սկուչաեւին աչքով արեց:

-Ես գործեր ունեմ,- ասաց Պերեդոնովը:

-Ով ունի գործք, նրան մեզնից գովք,- անմիջապես պատասխանեց Տիշկովը:

Սկուչաեւը ուղեկցեց Պերեդոնովին մինչեւ նախասենյակը... Հրաժեշտ տալիս գրկվեցին եւ համբուրվեցին: Պերեդոնովն այդ այցելությունից գոհ մնաց:

«Գլուխն իմ կողմից է»,- վստահ մտածում էր նա:

Վերադառնալով Տիշկովի մոտ, Սկուչաեւն ասաց.

-Զուր են մարդուց բամբասում:

-Զուր են բամբասում, ճիշտը չեն իմանում,- մեկեն վրա բերեց Տիշկովը, կտրիճավարի իրեն դառն անգլիկանից մի ըմպանակ լցնելով:

Երեւում էր, որ նա չի մտածում այն մասին, ինչ են իրեն ասում, այլ լոկ որսում է բառերը հանգավորման համար:

-նա ոչինչ, սրտոտ տղա է, եւ խմելու հարգն էլ գիտե,- շարունակում էր Սկուչաեւը, իրեն էլ լցնելով եւ Տիշկովի հանգավորումներին ուշք չդարձնելով:

-Եթե խմելու հարգը գիտի, կնշանակի տղա է հարգի,- ժիր գոչեց Տիշկովը եւ ըմպանակը քաշեց գլուխը:

-իսկ որ մամզելի հետ է կապվում, դե դա ինչ է,- ասում է Սկուչաեւը:

-Մամզելից մլակներ են անկողնում - պատասխանեց Տիշկովը:

-Ով Աստծո առաջ մեղսավոր չէ, արքայի առաջ մեղավոր չէ:

-Բոլորս էլ մեղք ենք գործում, բոլորս էլ սիրել ենք ուզում:

-Իսկ նա ուզում է մեղքը պսակով ծածկել:

-Մեղքը պսակով կծածկեն կկռվեն ու կոռնան:

Այդպես էր խոսում Տիշկովը միշտ, եթե խոսքն իր սեփական գործի մասին էր, նա մահացու կծանծրացներ բոլորին, բայց նրան ընտելացել էին եւ արդեն չէին նկատում նրա ժիր ասված շուտասելուկները. միայն երբեմն նրան թարմ մարդու վրա էին բաց թողնում: Բայց Տիշկովի համար միեւնույնն էր, լսում են իրեն թե ոչ, նա չէր կարողանում չորսալ մեկի խոսքը հանգավորման համար եւ գործում էր խորամանկ հորինված ծանծրացուցիչ մեքենայի անհողդողդությամբ: Երկար նայելով նրա ճարպիկ, հստակ շարժումներին, կարելի էր կարծել, որ դա ողջ մարդ չէ, որ նա արդեն մեռել է, կամ երբեք չի էլ ապրել, եւ ոչինչ չի տեսնում կենդանի աշխարհում եւ, մեռյալ զրնգացող բառերից զատ, ոչինչ չի լսում:

IX

Հաջորդ օրը Պերեդոնովը գնաց դատախազ Ավինովիցկիի մոտ:

Դարձյալ թխպոտ եղանակ էր: Քամին վրա էր տալիս պոռթկումներով եւ փողոցներով փոշեմրրիկներ էր տանում: Մոտենում էր երեկոն, եւ ամեն բան լուսավորված էր ամպամշուշի միջով մաղված, տրտում, կարծես ոչ արեւային լույսով: Անձկությունն էր քամիարում անդորրությունը փողոցներում, եւ թվում էր, թե ոչ մի բանի համար էին հայտնվել այս խղճուկ շինություններն, անհուսալի-խարխլված, երկչոտ առ դրանց պատերում թաքչած աղքատ ու տաղտկալի կյանքն ակնարկող: Մարդիկ էին պատահում,- եւ քայլում էին նրանք դանդաղ, ասես ոչինչ ոչնչի նրանց չէր դրդում, ասես հազիվ էին նրանք հաղթահարում իրենց առ անխռովությունը ձգող նինջը: Լոկ երեխաները, աստվածային բերկրանքի հավերժական, անխոնջ անոթներն երկրի վրա, ողջ էին եւ վազում ու խաղում էին,- բայց արդեն նրանց վրա էլ ընկել է քարացածությունը, եւ ինչ-որ անդեմ ու անտեսանելի ճիվաղ, բնավորվելով նրանց ուսերի ետեւում, երբեմն նայում էր սպառնալի աչքերով նրանց հանկարծ բթացող դեմքերին:

Ընդմեջ այդ անձկության փողոցներում ու տներում, երկնքից այդ օտարման տակ, անմաքուր եւ անուժ երկրի վրայով, քայլում էր Պերե-

դոնովը եւ տոչորվում էր անորոշ վախերով,- չկար նրա համար մխիթարանք վսեմում եւ սփոփանք երկրայինում - որովհետեւ այժմ էլ, ինչպես միշտ, նա նայում էր աշխարհին մեռյալ աչքերով, ինչպես ինչ-որ դեւ, ահով եւ տաղտուկով տոչորվող մռայլ մենության մեջ:

Նրա զգացմունքները բութ էին, եւ նրա գիտակցությունն ապականող եւ մահացնող ապարատ էր: Նրա գիտակցությանն հասնող ամենայն ինչ վերածվում էր գարշանքի ու կեղտի: Առարկաների մեջ նրան աչք էին զարնում անսարքությունները եւ ուրախացնում էին նրան: Երբ նա անցնում էր ուղղածիգ եւ մաքուր սյան մոտով, նա կամենում էր ծռել կամ աղտոտել այն: Նա ուրախությունից ծիծաղում էր, երբ իր ներկայությամբ ինչ-որ բան աղտոտում էին: Մաքուր լվացված գիմազիստներին նա քամահրում եւ հետապնդում էր Նա նրանց ընքշալվացատեղ էր կոչում: Փնթիները նրա համար ավելի հասկանալի էին: Նա չուներ սիրած առարկաներ, ինչպես եւ չուներ սիրած մարդիկ,- եւ այդու բնությունը կարող է մի կողմի ուղղությամբ գործել նրա զգացմունքերի վրա, լոկ ճնշել դրանք: նույնպես մարդկանց հետ հանդիպումները: Հատկապես օտարների եւ անծանոթների, որոնց չի կարելի կոպտություն ասել, երջանիկ լինելը նրա համար նշանակում էր ոչինչ չանել եւ, փակվելով աշխարհից, բավարարել իր որովայնը:

Իսկ այժմ ստիպված ես ակամա,- մտածում էր նա,- գնալ եւ բացատրվել: Ինչ դժնդակություն: Ինչ ծանծրույթ: Եւ նաւ, եթե կարելի լիներ աղտոտել այնտեղ, ուր նա գնում է, թե չէ այդ մխիթարանքն էլ չկա նրա համար:

Դատախազական տունն ուժգնացրեց ու որոշակիացրեց Պերեդոնովի մեջ տհաճ տրամադրությունները տաղտկալի վախի զգացմունքում: եվ ճիշտ որ տունն այդ բարկացկոտ, չար տեսք ուներ: Բաարձրադիր կտուրը խոժոռ իջնում էր, դեպի հողը ճնշված, պատուհանների վրա: Եւ տախտակե պատվածքը, եւ կտուրը մի ժամանակ ներկված էին վառ ու զվարթ բայց ժամանակից ու անձրեւներից երանգավորումը դարձել էր խոժոռ ու գորշ: Դարպասները վիթխարի ու ծանր, տնից էլ բարձր, ասես թե հարմարեցված թշնամական հարձակումները վանելու համար, մշտապես փակի տակ էին: Դրանց ետեւում աղմկում էր շղթան եւ ամեն անցորդի վրա խուլ բասով հաչում էր շունը:

Ծուրջբոլորը պարապուտներ, բանջարանոցներ էին ձգվում, ինչ-որ

հյուղակներ էին ծռվում: Դատախազական տան դիմաց լապտերասյուն էր ցցված՝ միակը ողջ հրապարակում:

Պերեդոնովը դանդաղ, դժկամորեն չորս զառիկող աստիճաններով ելավ, տախտակե երկթեք ծածկով առմուտք, եւ քաշեց զանգի սեւացած բռնակից: Զանգը ինչ-որ տեղ մոտիկ հնչեց, կտրուկ եւ տեւական զնգզնգոցով: Մոտիկ գաղտուկ քայլեր լսվեցին ինչ-որ մեկը մատնաձայրերի վրա մոտեցավ դռանն ու այնտեղ լուռ ու մունջ կանգ առավ: Երեւի թե, նայում էր ինչ-որ աննշմար անցքից: Հետո դղրդաց երկաթյա կեռը, դուռը բացվեց,- շեմին կանգնած էր սեւահեր, նոթոթ, չեչոտ մի աղջիկ, ամեն ինչ կասկածելի-զննող աչքերով:

-Ո՞ւմ եք ուզում,- հարցրեց նա:

Պերեդոնովն ասաց, որ եկել է Ալեքսանդր Ալեքսեւիչի մոտ գործով: Աղջիկը նրան ներս թողեց: Շեմն անցնելով, Պերեդոնովն ինքն իր ներսում հմայաթափվեց: Եւ լավ է, որ փութաց: Նա չէր հասցրել վերարկուն հանել, երբ արդեն հյուրասենակում լսվեց Ավինովիցկիի կտրուկ, զայրացկոտ ձայնը: դատախազի ձայնը միշտ սարսափեցնող էր՝ այլ կերպ նա չէր էլ խոսում: Այնպես որ հիմա էլ, բարկացկոտ եւ կռվարար ձայնով նա դեռ հյուրասենյակից ճչում էր ողջույնն ու բերկրանքի արտհայտությունը այն բանի առթիվ, որ դե վերջապես Պերեդոնովը եկավ իր մոտ:

Ալեքսանդր Ալեքսեւիչ Ավինովիցկին մռայլ արտաքինով տղամարդ էր, կարծես թե բնությունից հարմարեցված այն բանի համար, որպեսզի հանդիմանի եւ ավերի: Անխորտակելի առողջության տեր՝ նա լողում էր սառույցից սառույց,- թվում էր նա սակայն, նիհարավուն, այնքան որ շատ էր աճել նրա սեւ կապտերանգ մորուքը: Նա բոլորին ազդում էր, եթե ոչ սարսափ, ապա անհարմարության զգացում, որովհետեւ, առանց հոգնելու որեւէ մեկին սպառնում էր Սիբիրով եւ մեկ էլ տաժանավայրով:

-Ես գործով եմ,- ասաց Պերեդոնովը շփոթված:

-Մեղա գալո՞ւ, մա՞րդ եք սպանել, հրդե՞հ եք սարքել, փո՞ստն եք թալանել. - զայրացկոտ գոչեց Ավինովիցկին, Պերեդոնովի սրահ ներս թողնելով:- Կան ինքնե՞րդ եք դարձել հանցագործության զոհ, ինչը առավել քան հնարավոր է մեր քաղաքում: Մեր քաղաքը վատն է, իսկ ոստիկանությունն այստեղ ավելի վատն է: Եւ մեկ էլ ես զարմանում եմ,

թե ինչու ահա այս հրապարակում ամեն առավոտ մեռած մարմիններ չեն ընկած: Դե, խնդրում եմ նստել: Դե ուրեմն ի՞նչ գործ է, հանցագործ եք դուք թե՞ զոհ:

-Ոչ,- ասաց Պերեդոնովը,- ես ոչ մի էդպիսի բան չեմ արել: Այդ տնօրենը ուրախ կլիներ ինձ նստեցնել, իսկ ես ոչ մի էդպիսի բան:

-Ուրեմն դուք մեղա չե՞ք գալիս,- հարցրեց Ավիհնովիցկին:

-Ոչ, ես ոչ մի էդպիսի բան,- վախվորած քրթմնջում էր Պերեդոնովը:

-Դե, եթե դուք ոչ մի էդպիսի բան,- բառերի վրա կատաղի շեշտերով ասաց դատախազը,- ուրեմն ես ձեզ կառաջարկեմ մի էսպիսի բան:

Նա սեղանի վրայից վերցրեց զանգուլակն ո զրնգացրեց: Ոչ մեկը չէր գալիս: Ավինովիցին երկու ձեռքով ճանկեց զանգուլակը, անասելի աղմուկ բարձրացրեց, հետո նետեց զանգուլակը հատակին, ոտքերը գետին զարկեց ու վայրի ձայնով ճչաց.

-Մալանյա, Մալանյա: Գրողի տարածներ, սատանաներ, սատանի ծնունդներ:

Փութկոտ քայլեր լսվեցին, մի գիմնազիստ ներս մտավ, Ավինովիցկիի որդին, մի տասներեք տարեկան սեւահեր ամրակազմ տղա, բավական վստահ եւ ինքնուրույն շարժուձեւով: Նա գլուխ տվեց Պերեդոնովին, բարձրացրեց զանգուլակը, դրեց այն սեղանի վրա եւ հետո արդեն ասաց.

-Մալանյան բանջարանոց է գնացել:

Ավինովիցկին ակնթարթաբար հանգստացավ եւ, տղային քնքշությամբ նայելով, որ այնքան չէր համընկնում նրա զայրացկոտ ու մազակալած դեմքին, ասաց.

-Դե դու տղաս, վազիր նրա ետքից, ասա, որպեսզի նա մեզ խմիչք ու խորտիկ ապսպրի:

Տղան դանդաղկոտ ելավ վերնասենյակից: Հայրը նայում էր նրա ետեւից հպարտ եւ բերկրալի ժպիտով: Բայց երբ արդեն տղան դռան արանքում էր: Ավինովիցկին հանկարծ կատաղի նոթոտեց եւ սարսափելի ձայնով գոռաց այնպես, որ Պերեդոնովը ցնցվեց.

-Արագ:

Գիմնազիստը վազեց, եւ լսելի եղավ, ինչպես թրխկացին սրընթաց բացվող եւ շրխկոցով փակվող դռները: Հայրը լսեց, հաստ, կարմիր շուրթերով ժպտաց, հետո նորից խոսեց զայրացկոտ ձայնով.

-Ժառանգս: Լավն է, հը՞: Ի՞նչ դրանից դուրս կգա: Դուք ի՞նչ եք կարծում: Հիմար կարող է լինել, բայց սրիկա, վախկոտ, փալաս՝ երբեք:

-Դե, ինչ որ,- քրթմնջաց Պերեդոնովը:

-Հիմա մարդիկ են առաջացել՝ մարդկային տեսակի ծաղրապատկեր,- թնդում էր Ավինոցվիցկին:- Առողջությունը գռեհկություն են համարում: Գերմանացին ֆուֆայկան հորինեց: Դե ես ադ գերմանացուն տաժանակիր աշխատանքների կուղարկեի: Դե հանկարծ որ իմ Վլադիմիրի վրա ֆուֆայկա: դե նա ինձ մոտ գյուղում ողջ ամառ մի անգամ սապոգ չի հագել, իսկ նրան՝ ֆուֆայկա: Դե նա ինձ մոտ բաղնիքից տկլոր սառնամանիքին դուրս կթռչի, դե ու ձյան վրա կթավալվի, իսկ նրան՝ ֆուֆայկա: Հարյուր մտրակ անիծյալ գերմանացուն: Ֆուֆայկա հորինած գերմանացուց, Ավինովիցկին անցավ մյուս հանցագործներին:

-Սահապատիժը, ողորմած պարոն, բարբարոսություն չէ,- գոռում էր նա:- Գիտությունը ճանաչել է, որ կան բնածին հանցագործներ: Դրանով, սիրելիս, ամեն ինչ ասված է: Դրանց կոտորել է պետք, այլ չ թե պետական միջոցներով կերակրել: Նա՝ չարագործ է, իսկ նրա ողջ կյանքում տաժանավայրում տաքուկ անկյուն է ապահովված: Նա սպանել , վառել, բռնաբարել է, իսկ հարկատուն իր գրպանից նրան պահելու համար վարձահատույց է լինում: Ոչ, կախելը շատ ավելի արդարացի ու էժան է:

Ճաշասենյակում կարմիր եզրանախշով սպիտակ սփռոցով կլոր սեղանը փռված էր եւ դրա վրա դրված էին յուղոտ երշիկներով , աղ ու թթու դրած, ծխահարած այլ ուտեստներով ափսեները եւ տարատեսակ օղիներով, թրմօղիներով, մրգողիներով տարբեր չափերի ու ձեւերի սկահակներ ու շշեր: Ամեն ինչ Պերեդոնովի ճաշակով էր եւ նույնիսկ կահավորանքի որոշակի փնթիությունը նրա համար հաճելի էր:

Տանտերը շարունակում էր մերկացնել: Ուտելիքի կապակցությամբ նետվեց կրպակատերերի վրա, իսկ հետո չգիտես ինչու սկսեց ժառանգականության մասին խոսել:

-Ժառանգականությունը՝ մեծ բան է,- կատաղի գոռում էր նա:- Սուժիկից բարին սարքելը՝ հիմարություն է, ծիծաղելի, անհաշվենկատ եւ անբարոյական: Երկիրը նվազում է, քաղաքները թափառաշրջիկներով են լցվում, անբերքատվություն, անգրագիտություն, ինքնասպանու-

թյուններ՝ դա ձեզ դո՞ւր է գալիս: Սովորեցրեք մուժիկին որքան կուզեք, բայց դրա համար նրան պաշտոն մի տվեք: Թե չէ գյուղացիությունը կորցնում է իր լավագույն անդամներին եւ հավերժորեն կմնա խաժամուժ, անասուն, իսկ ազնվականությունը նույնպես անկուլտուրական տարրերի հոսքից վնաս է կրում: Իր գյուղում նա բոլորից լավն էր, իսկ ազնվականական դասի մեջ նա ինչ-որ կոպիտ, ոչ ասպետական, անազնիվ բան է ներմուծում: Առաջին պլանում նրա համար շահն է, փորային հետաքրքրությունները: Չէ, սիրելիս, կաստան իմաստուն կառուցվածք էր:

-Դե ահա մեզ մոտ գիմնազիայում էլ տնօրենն ամեն տեսակի տականք է ներս թողնում,- զայրացկոտ ասաց Պերեդոնովը,- նույնիսկ գյուղացի երեխաներ կան, իսկ քաղքենիները նույնիսկ շատ են:

-Լավ գործ է, բան չկա ասելու,- գոռաց տանտերը:

-Շրջաբերական կա, որպեսզի ամեն տեսակի տականք չթողնեն, իսկ նա իր ձեւով,- բողոքում էր Պերեդոնովը,- համարյա ոչ մեկին չի մերժում: Մեզ մոտ, ասում է, էժան կյանք է քաղաքում, իսկ գիմնազիստները, ասում է, առանց այդ էլ քիչ են: Դե ի՞նչ ոչ քիչ են: Դե թող որ ավելի քիչ լինեին: Թե չէ միայն տետրակները չես հասցնի ուղղել: Գրքեր կարդալու ժամանակ չկա: Իսկ նրանք դիտավորյալ շարադրություններում կասկածելի բառեր են գրում,- անընդհատ ստիպված ես լինում Գրոտով ստուգել:

-Երոֆեիչ /ռուս. դառը թրմօղի/ խմեք,- առջարկեց Ավինովիցկին:- Դե ի՞նչ գործ դուք ինձ հետ ունեք:

-Ես թշնամիներ ունեմ,- քրթմնջաց Պերեդոնովը մինչեւ խմելը մռայլ զննելով դեղին օղիով ըմպանակը:

-Անթշնամի խոզն էր ապրում,- պատասխանում էր Ավինովիցկին,- դե այն էլ մորթեցին: Կերեք լավ խոզ էր:

Պերեդոնովը մի կտոր խոզապուխտ վերցրեց ու ասաց.

-Իմ մասին ամեն տեսակի հիմարություններ են տարածում:

-Այո, դե կարող եմ ասել, բամբասանքների գծով ավելի վատ քաղաք չկա,- կատաղի գոչեց տանտերը:

-Ա՛յ քեզ քաղաք: Ինչ զզվելի բան էլ չանես, տեղնուտեղը բոլոր խոզերը դրա մասին կխռնչան:

-Ինձ իշխանուհի Վոլչանսկայան խոստացել էր տեսուչի տեղ ապսպ-

րել, իսկ էստեղ հանկարծ դուրս են տալիս: Դա ինձ կարող է վնասել: Իսկ այդ ամենը նախանձից: Դե եւ տնօրենն էլ գիմնազիան է բարձիթողի վիճակի գցել՝ գիմնազիստները, որոնք բնակարաններում են ապրում, ծխում, խմում են, գիմնազիստուհիներին են սիրահետում: Դե եւ տեղացիների մեջ է էդպիսիները կան: Ինքս եմ ազատ արձակել,ի սկ ահա ինձ նեղում է: Նրան, երեի թե, ինձանից բամբասել են: Դե եւ հետո էլ կբամբասեն: Իշխանուհուն կհասնի:

Պերեդոնովը երկար ու կցկտուր պատմում է իր կասկածների մասին: Ավինովիցկին լսում էր զայրացկոտ եւ ժամանակ առ ժամանակ ցասկոտ բացականչում էր.

-Սրիկաներ: Ստահակներ: Հերովդեսի ծնունդներ:

-Դե ես նիհիլիստ եմ,- ասում էր Պերեդոնովը,- նույնիսկ ծիծաղելի է: Ես աստղանշանով գդակ ունեմ, բայց միայն միշտ չէ, որ հագնում եմ,- դե ահա նա էլ է գդակ կրում: Իսկ այն, որ ինձ մոտ Միցկեւիչն է կախված, դե ես նրան բանաստեղծությունների համար եմ կախել, եւ ոչ թե այն բան համար, որ նա ապստամբել է: Իսկ ես նրա «Զանգը» չեմ էլ կարդացել:

-Դե դուք արդեն որ օպերայից բռնեցիք,- աննրբանկատ ասաց Ավինովիցկին:- «Զանգը» Գերցենն էր հրատարակում, այլ ոչ էթե Միցկեւիչը:

-Դա այլ «Զանգ է»,- ասաց Պերեդոնովը,- Միցկեւիչը նույնպես հրատարակում էր «Զանգը»:

-Չգիտեմ: Դուք այդ տպագրեք: Գիտական հայտնագործություն է: Հայտնի կդառնաք:

-Դա չի կարելի տպագրել - զայրացկոտ ասաց Պերեդոնովը:- Ինձ չի կարելի արգելված գրքեր կարդալ: Ես էլ երբեք չեմ կարդում: Ես՝ հայրենասեր եմ:

Երկար տրտնջոցներից հետո, որոնցով զեղվում էր Պերեդոնովը, Ավինովիցկին գլխի նկավ, որ ինչ-որ մեկը փորձում է Պերեդոնովին շանտաժի ենթարկել եւ այդ նպատակով նրա մասին լուրեր է տարածում այնպիսի հաշվարկով, որպեսզի վախեցնի նրան եւ դրանով հող նախապատրաստի անակնկալ փող պահանջելու համար: Որ այդ լուրերն Ավինովիցկուն չեն հասել, նա իրեն բացատրեց ան բանով որ շանտաժիստը հմուտ է գործում Պերեդոնովին ամենամոտ շրջապատում,- չէ որ նրան պետք է ներգործել լոկ Պերեդոնովի վրա: Ավինովից-

կին հարցրեց.

-Ո՞ւմ եք կասկածում:

Պերեդոնովը մտորմունքի մեջ ընկավ: Հանկարծ հիշողության մեջ առկայծեց Գրուշինան, աղոտ մտաբերվեց վերջերս նրա հետ տեղի ունեցած խոսակցությունը, երբ նա ընդհատեց նրա պատմությունը մատնելու սպառնալիքով: Այն որ նա ինքն էր սպառնացել Գրուշինային մատնությամբ, նրա գլխում խճճվել էր ընդհանրապես մատնության մասին աղոտ պատկերացման: Արդյոք նա է մատնելու, թե իրեն են մատնելու՝ պարզ չէր, եւ Պերեդոնովը ստույգ հիշելու ջանք չէր ուզում գործադրել,- մի բան պարզ էր, որ Գրուշինան՝ թշնամի է: Եւ, որ ամենից վատն է, նա տեսել էր, թե նա ուր էր թաքցնում Պիսարեւի գրքերը: Հարկ է վերաթաքցնել: Պերեդոնովն ասաց.

-Ահա մի Գրուշինա կա էստեղ:

-Գիտեմ, առաջին կարգի ստահակ է,- կարճ որոշեց Ավինովիցկին:

-Նա անընդհատ մեզ մոտ է գալիս,- բողոքում էր Պերեդոնովը,- եւ ամեն ինչ հոտոտում է: Նա ագահ է, նրան ամեն ինչ տուր: Գուցե թե, նա ուզում է, որ ես նրան փող վճարեմ, որպեսզի նա չմատնի, որ ինձ մոտ Պիսարեւ է եղել: Իսկ գուցե թե, ուզում է ինձ հետ ամուսնանալ: Բայց ես չեմ ոզում նշանվել, եւ ես ուրիշ հարսնացու ունեմ,- թող մատնի, ես մեղավոր չեմ: Միայն թե ինձ համար տհաճ է, որ պատմություն դուրս կգա, եւ դա կարող է խանգարել իմ նշանակմանը:

-Նա՝ հայտնի խարդախ է,- ասաց դատախազը:- նա էստեղ այն է գուշակություններով էր զբաղվում, հիմարներին էր թյուրիմացության մեջ գցում, դե ես էլ ոստիկանությանն ասացի, որ այդ պետք է դադարեցնել: Այս անգամ ճիշտ դուրս եկան, լսեցին:

-Նա հիմա էլ է գուշակում,- ասաց Պերեդոնովը,- թղթերով ինձ գուշակում էր, անընդհատ երկար ճանապարհ էր դուրս գալիս եւ մեկ էլ պաշտոնական նամակ:

-Նա գիտի, ում ինչ ասի: Դե, սպասեք, նա կասկածանքով կլցնի, իսկ հետո էլ գնա փող մուրալու: Այդժամ դուք մեկից ինձ մոտ: Ես նրան մի հարյուր տաք-տաք- հարված կհասցնեմ,- ասաց Ավինովիցկին իր սիրած ասացվածքը:

Հարկ չկար այդ տառացի հասկանալ,- դա պարզապես բավական մեծ շշպռանք էր նշանակում:

Այդպես Ավինովիցկին Պերեդոնովին խոստացավ իր պաշտպանությունը: Բայց Պերեդոնովը գնաց նրա մոտից անորոշ վախերով հուզված, դրանք իր մեջ ամրացնում էին Ավինովիցկիի բարձր, սպառնալի խոսքերը:

Ամեն օր այդպես Պերեդոնովը ճաշից առաջ մի այցելություն էր կատարում,- մեկից ավելի չէր հասցնում, որովհետեւ ամենուր հարկ էր հանգամանալից բացատրություններ վարել: Երեկոյան սովորության համաձայն ուղեւորվում էր բիլիարդ խաղալու:

Առաջվա պես դյութիչ կանչերով նրան իր մոտ էր քաշում Վերշինան, առաջվա պես Ռուտիլովը գովերգում էր քույրերին: Տանը Վարվարան նրան համոզում էր շուտափույթ պսակվել՝ բայց նա ոչ մի որոշում չէր ընդունում: «Իհարկե,- նտածում էր նա երբեմն,- Վարվարայի հետ ամուսանանալն ամենից ձեռնտուն է,- իսկ եթե հանկարծ իշխանուհին խաբի՞: Քաղաքում կսկսեն ծիծաղել»,- մտածում էր նա, եւ դա նրան ետ էր պահում:

Հարսնացուների հետապնդումները, ընկերների նախանձը, ավելի շատ իր հորինած, քան իրական, ոմանց նրան տարակուսած խարդավանքները՝ այդ ամենը նրա կյանքը տրտում եւ տաղտկալի էր դարձնում, ինչպես այս եղանակը, որը մի քանի օր շարունակ կեցած էր նոթոտ եւ հաճախ վերջանում էր դանդաղ, տաղտկալի, բայց երկար ու պաղ անձրեւներով: Կյանքը գեշ էր դասավորվում, զգում էր Պերեդոնովը,- բայց նա մտածում էր, որ ահա շուտով ինքը տեսուչ կդառնա, եւ այդժամ ամեն ինչ դեպ լավը կփոխվի:

X

Հինգշաբթի Պերեդոնովն ուղեւորվեց ազնվականության պարագլխի մոտ:

Պարագլխի տունն հիշեցնում էր ընդարձակ ամառանոց ինչ-որ տեղ Պավլովսկում կամ Ցարսկոյե Սելոյում, ամառանոց, լիովին պիտանի եւ ձմռանը կենալու համար: Ճոխությունը աչք չէր զարնում, բայց շատ իրերի նորությունը չափազանցված ավելորդ էր թվում: Ակեքսանդր Միխայլովիչ Վերիգան Պերեդոնովին սպասում էր գրասենյակում: Նա այնպես արեց, իբր թե փութում է ընդառաջ գալ հյուրին եւ միայն պատահաբար չհասցրեց նրան ավելի վաղ դիմավորել: Վերիգան անսովոր

ուղիղ էր կենում, նույնիսկ եւ պաշտոնաթող հեծելազորայինի համար: Ասում էին, թե նա սեղմիրան է կրում: Դեմքը, հարթ սափրած, միատեսակ շառագույն էր, ասես ներկած էր: Գլուխը խուզած էր ամենաակարճ կտրող մեքենայով,- հնարք, հարմար ճաղատը մեղմելու համար: Աչքերը գորշ, սիրալիր ու պաղ: Վարքի մեջ նա ամենքի հետ սիրալիր էր, հայացքների մեջ վճռական ու խիստ: Բոլոր շարժումներում զգացվում էր լավ զինվորական կեցվածքն ու ապագա նահանգապետի վարվելաձեւը երբեմն նկատելի էր դառնում:

Պերեդոնովը բացատրում էր նրան, կաղնեփայտե փորագրովի սեղանի մոտ նրա դիմաց նստած.

-Ահա իմ մասին զանազան լուրեր են շրջում, ուրեմն ես, որպես ազնվական, ձեզ եմ դիմում: Իմ մասին ամեն տեսակի հիմարություններ են ասում, ձերդ գերազանցություն, ինչ որ չի էլ եղել:

-Ես ոչինչ չեմ լսել,- պատասխանում էր Վերիգան եւ, սպասողական եւ սիրալիր ժպտալով, Պերեդոնովի վրա էր սեւեռում մոխրագույն ուշադիր աչքերը:

Պերեդոնովը համառորեն անկյուն էր նայում ու ասում.

-Սոցիալիստ ես երբեք չեմ եղել, իսկ այն որ երբեմն, եղել է, ավելորդ մի բան կասես, չէ որ երիտասարդ տարիներին ով չի բորբոքվում: Իս հիմա ես ոչ մի էդպիսի բան չեմ մտածում:

-Ուրեմն դուք այդուհանդերձ մեծ լիբերա՞լ եք եղել,- սիրալիր ժպիտով հարցրեց Վերիգան:- Սահմանադրություն էիք ուզում, այնպես չէ՞: Մենք բոլորս էլ եիտասարդ տարիքում սահմանադրություն էինք ուզում: Չէի՞ք հաճի:

Վերիգան մոտեցրեց Պերեդոնովին սիգարներով արկղիկը: Պերեդոնովը վախեցավ վերցնել եւ հրաժարվեց. Վերիգան ծխեց:

-Իհարկե, ձերդ գերազանցություն,- խոստովանեց Պերեդոնովը,- համալսարանում ես էլ, բայց միայն ես այն ժամանակ այդպիսի սահմանադրություն չէի ուզում, ինչպես մյուսները:

-Եւ հատկապես,- ձայնի մեջ վրա եկող դժգոհության երանգով հարցրեց Վերիգան:

-Այլ որ լինի սահմնադրություն, բայց միայն առանց պառլամենտի,- բացատրեց Պերեդոնովը, թե չէ պառլամենտում միայն կռվում են:

Վերիգինի մոխրագույն աչքերը փայլեցին լռիկ հիացմունքով:

-Սահմանադրություն առանց պառլամենտի,- երազկոտ ասաց նա:- Դա, գիտեք արդյոք, պրակտիկ է:

-Դե դա էլ վաղուց էր,- ասաց Պերեդոնովը,- իսկ հիմա ես ոչինչ: Եւ նա հույսով նայեց Վերիգային: Վերիգան բերանից ծխի մի բարալիկ շիթ թողեց, լռեց եւ դանդաղ ասաց.

-Ահա դուք՝ մանկավարժ եք, իսկ ես ստիպված եմ լինում, գավառում իմ դիրքից ելնելով, գործ ունենալ եւ դպրոցների հետ: Ձեր տեսանկյունից դուք ո՞ր դպրոցներին եք հաճում գերապատվություն տալ՝ եկեղեցա ծխականներին թե՞ այն, այսպես կոչված տեղական ինքնավարականներին:

Վերիգան սիգարի ծուխը թափ տվեց եւ ուղիղ սեւեռվեց Պերեդոնովի վրա սիրալիր, բայց չափազանց ուշադիր հայացքով: Պերեդոնովը նոթոտեց, անկյունները նայեց ու ասաց.

-Ինքնավարական դպրոցները հարկ է կարգավորել:

-Կարգավորել, անորոշ տոնով կրկնեց Վերիգան,- այդպես:

Եւ նա աչքերը վար բերեց իր մարմրող ծխախոտի վրա, ասես պատրաստվելով երկար բացատրություններ լսել:

-Այնտեղ ուսուցիչները նիհիլիստներ են,- ասում էր Պերեդոնովը,- իսկ ուսուցչուհիները Աստծուն չեն հավատում: Նրանք եկեղեցում կանգնում ու քթերն են սրբում:

Վերիգան արագ նայեց Պերեդոնովին, ժպտաց ու ասաց.

-Դե, դա, գիտեք, երբեմն անհրաժեշտ է:

Այո, բայց նա ասես խողովակի մեջ, այնպես որ երգողները ծիծաղում են,- բարկացկոտ ասում էր Պերեդոնովը:- Այդ նա դիտմամբ է անում: Դե մի էդպիսի Սկոբոչկինա կա:

-Այո, այդ վատ է - ասաց Վերիգան,- բայց Սկոբոչկինայի մոտ դա ավելի շուտ անդաստիարակությունից է: Նա ընդհանրապես առանց վարքագծերի աղջիկ է, բայց ջանադիր ուսուցչուհի է: Բայց, համենայն դեպս, դա լավ չի: Հարկ է նրան ասել:

Նա կարմիր շապիկով է գալիս: Նրանց դպրոցներում շատ ազատ է,- շարունակում էր Պերեդոնովը՝ ոչ մի կարգուկանոն: Նրանք ընդհանրապես չեն ուզում պատժել: Իսկ մուժիկների երեխաների հետ այդպես չի կարելի, ինչպես ազնվականների հետ: Դրանց քոթակել է պետք:

Վերիգան հանգիստ նայեց Պերեդոնովին, հետո, ասես անհարմա-

ություն զգալով իր լսած անտակտությունից, աչքերն իջեցրեց եւ պաղ, համարյա նահանգապետային տոնով ասաց.

-Պիտի ասեմ, որ գյուղական դպրոցների աշակերտների մեջ ես շատ լավ հատկություններ եմ նկատել: Անտարակուսելի է, որ դեպքերի վիթխարի մեծամասնության պարագայում նրանք միանգամայն բարեխիղճ են վերաբերվում իրենց աշխատանքին: Իհարկե, ինչպես միշտ երեխաների մոտ, լինում են զանցանքներ: Ճրջակա միջավայրի անբարեկրթության հետեւանքով այդ զանցանքներն այնտեղ կարող են բավական կոպիտ ձեւեր ստանալ առավել եւս, որ Ռուսաստանի գյուղական բնակչության մեջ ընդհանրապես քիչ են զարգացած պարտքի եւ պատվի զգացումները եւ հարգանքն առ ուրիշի սեփականությունը: Դպրոցը պարտավոր է այդպիսի զանցանքներին վերաբերվել խիստ եւ ուշադիր:

եթե ազդելու բոլոր միջոցները սպառված են կամ եթե զանցանքը մեծ է, ապա, իհարկե, հարկ էր, որպեսզի տղային չհեռացնեն, դիմել ծայրահեղ միջոցների: Սակայն, այդ վերաբերում է բոլոր երեխաներին, նույնիսկ եւ ազնվականներին: Բաց ես ընդհանուր առմամբ համաձայն եմ ձեզ հետ այն բանում, որ այդ տիպի դպրոցներում դաստիրակությունը լրիվ բավարար վիճակում չէ: Տիկին Ճտեվեն իր բավական, ի դեպ, հետաքրքիր գրքում... դուք հաճե՞լ եք կարդալ:

-Ոչ, ձերդ գերազանցություն,- շփոթված ասաց Պերեդոնովը,- ես, անընդհատ ժամանակ չեմ գտնում, գիմնազիայում աշխատանքը շատ է: Բայց ես կկարդամ:

-Դե, դա այդքան էլ անհրաժեշտ չէ,- սիրալիր ժպիտով ասաց Վերիգան, ասես թույլատրելով, որ Պերեդոնովն այդ գիրքը չկարդա:- Այո, ահա ուրեմն տիկին Ճտեվեն պատմում է մեծ վրդովմունքով, թե ինչպես իր երկու աշակերտներին, մի տասնյոթ տարեկան տղաների, գավառական դատարանը դատապարտել էր ճիպոտահարման: Նրանք, դե տեսնում եք, հպարտ են, այդ տղաները,- դե մենք, հաճում եք արդյոք տեսնել, բոլորս տանջահար եղանք, քանի դեռ մեր բոլորի վրա ծանրացած էր անհարգալի դատավճիռը,- այն հետո վերացրին: Իսկ ես ձեզ կասեմ, որ տիկին Ճտեվենի փոխարեն ես կամաչեի ողջ Ռուսաստանով մեկ պատմել այդ իրադարձության մասին՝ չէ որ նրանց դատել էին, ակարող եք պատկերացնել, խնձոր գողանալու համար: Խնդրում եմ

նկատեք, գողության համար: Իսկ նա դեռ գրում է, թե դրանք՝ որ ամենալավ աշակերտներն են: Իսկ խնձորները, սակայն, գողացել են: Լավ դաստիարակություն է: Մնում է միայն անկեղծորեն խոստովանել, որ սեփականության իրավունքը մենք ժխտում ենք: Վերիգան հուզված ելավ տեղից, երկու քայլ արեց, բայց տեղնուտեղը տիրապետեց իրեն եւ նորից նստեց:

-Ահա եթե ես ժողովրդական ուսումնարանների տեսուչ դառնամ, ես գործն այլ կերպ կվարեմ,- ասաց Պերեդոնովը:

-Հա, դուք նկատի ունե՞ք,- հարցրեց Վերիգան:

-Այո, իշխանուհի Վոլչանսկայան ինձ խոստացել է:

Վերիգանն հաճելի դեմք ընդունեց:

-Ինձ հաճելի կլինի ձեզ շնորհավորել: Չեմ կասկածում, որ ձեր ձեռքերում գործը կշահի:

-Իսկ ահա այստեղ, ձերդ գերազանցություն, քաղաքում զանազան տարբեր դատարկաբանություններ են դուրս տալիս,- մեկ էլ, գուցե թե, որեւէ մեկը մատնի շրջանում, կխանգարեն իմ նշանակմանը, իսկ ես ոչ մի բան:

-Ո՞ւմ եք դուք կասկածում սուտ լուրերի տարածման մեջ,- հարցրեց Վերիգան:

Պերեդոնովը շվարեց ու քրթմնջաց.

-Դե ո՞ւմ կասկածեմ: Ես չգիտեմ: Ասում են: Իսկ ես, ըստ էության, այն պատճառով, որ դա կարող է վնասել ծառայության մեջ:

Վերիգան մտածեց, որ իրեն պետք էլ չի իմանալ, թե հատկապես ով է խոսում՝ չէ որ նա դեռ նահանգապետ չի: Նա նորից մտավ պարագլխի դերի մեջ եւ խոսք արտասանեց, որը Պերեդոնովը լսեց, վախենալով եւ տրտմելով:

-ես շնորհակալ եմ ձեզ վստահության համար, որ դուք ցուցաբերեցիք իմ հանդեպ, դիմելով իմ /Վերիգան կամենում էր ասել «հովանավորությանը», բայց զսպեց իրեն/ միջնորդությանը ձեր եւ հասարակության միջեւ, որում, ըստ ձեր տեղեկությունների, ձեզ համար անաբարենպաստ լուրեր են շրջում: Ինձ այդ լուրերը չեն հասել, եւ դուք կարող եք ձեզ մխիթարել այն բանով, որ ձեր հաշվին տարածվող բամբասանքները չեն համարձակվում բարձրանալ քաղաքային հասարակության ցածրամածություններից եւ, այսպես ասաց, սողում են խավարի

եւ գաղտնիքի մեջ: Բաց ինձ շատ հաճելի է, որ դուք, ըստ նշանակման, ծառայության մեջ գտնվելով, սակայն այդչափ բարձր եք գնահատում միաժամանակ եւ հասարակական կարիքի նշանակությունը եւ ձեր գրաված դիրքի արժանապատվությունը որպես պատանեկության դաստիարակի, մեկի նրանցից, որոնց լուսավորյալ խնամատարությանը մենք, ծնողներս, վստահում ենք մեր ամենաթանկագին ստացվածքը, մեր երեխաներին: Որպես չինովնիկ դուք ունեք ձեր ղեկավարը ի դեմս ձեր արժանահարգ տնօրենի, բաց որպես հասարակության անդամ եւ ազնվական դուք միշտ իրավասու եք հույս դնելու... ազնվականության պարագլխի միջնորդությանը ձեր պատվին, ձեր մարդկային եւ ազնվականական արժանապատվությաննն առնչվող հարցերում:

Ծարունակելով խոսել, Վերիգան ելավ եւ, աջ եռքի մատներով առաձիգ հենվելով սեղանի ծայրին, նայում էր Պերեդոնովին այն անտարբեր-սիրալիր եւ ուշադիր արտահայտությամբ, որով նայում են ամբոխիին, բարեհաճ-հրամանատաական խոսքեր արտասանելիս: Ելավ եւ Պերեդոնովը եւ, ձեռքերը փորի վրա ծալելով, մռայլ նայում էր տանտիրոջ ոտքերի տակի գորգին: Վերիգան ասում էր.

-Ես ուրախ եմ, որ դուք դիմեցիք ինձ եւ այն բանի համար, որ մեր ժամանակներում հատկապես օգտակար է գլխավորող դասի անդամներին միշտ եւ ամենուր ամենից առաջ հիշել, որ իրենք՝ ազնվականներ են, պետք է թանկ գնահատեն պատկանելությունն այդ դասին,- ոչ միայն իրավունքներով, այլ նաեւ պարտավորություններով եւ ազնվականի պատվով: Ազնվակաները Ռուսաստանում, ինչպես ձեզ, իհարկե, հայտնի է, գերազանցապես ծառայաշնորհյալ դաս է:

Խիստ ասած, բոլոր պետական պաշտոնները, բացի ամենացածրերից, անշուշտ, պիտի լինեն ազնվականների ձեռքում: Տարատոհմիկների գտնվելը պետական ծառայության մեջ կազմում է, իհարկե, այդպիսի անցանկալի երեւույթների պատճառներից մեկը, ինչպես այն, որ խռովել է ձեր հանգիստը: Բամբասանքն ու բանսարկութունը՝ ցածր տեսակի մարդկանց զենքն է, որ դաստիարակված չեն բարի ազնվականական ավանդույթներով: Բայց ես հուսով եմ, որ հասարակական կարծիքը պարզ եւ բարձրաձայն կարտահայտվի ձեր օգտին, եւ այդ առումով դուք կարող եք լիովին հույս դնել իմ աջակցությանը:

-Խոնարհաբար շնորհակալ եմ, ձերդ գերազանցություն,- ասաց

Պերեդոնովը,- դե ես արդեն կհուսամ:

Վերիգան սիրալիր ժպտաց եւ չէր նստում, հասկացնելով, որ խոսակցությունն ավարտված է: Ասելով իր խոսքը, նա հանկարծ զգաց, որ դա ամենեւին տեղին չէր եւ որ Պերեդոնովը ոչ այլ ոք է, քան լավ ղեղի վախլուկ որոնող, որ հովանավորության փնտրտուքներում շեմերն է ծեծում: Նա Պերեդոնովին հրաժեշտ տվեց սառը քամահրանքով, որ ընտել էր զգալու նրա հանդեպ իր անկարգ կյանքի համար:

Լակեյի օգնությամբ հագնվելով նախասենյակում եւ լսելով հեռվից եկող դաշնամուրի ձայները, Պերեդոնովը մտածում էր, որ այդ տանը բարինի պես են ապրում, հպարտ մարդիկ են, իրենց բարձր են դասում: «Նահանգագլխի է ձգտում»,- հարգալից եւ նախանձոտ զարմանքով մտածում էր Պերեդոնովը:

Աստիճանների վրա նրան պատահեցին զբոսանքից դարձող պարագլխի երկու որդիներն իրենց դաստիարակի հետ: Պերեդոնովը նայեց նրանց վրա խոժոռ հետաքրքրասիրությամբ:

«Ինչ մաքուր են,- մտածում էր նա,- նույնիսկ ականջներում բնավ կեղտ չկա: Եւ ինչ աշխույժ են, իսկ իրենք, հավանաբար, վարժեցված են, լիովին հնազանդ են: Թերեւս,- մտածում էր Պերեդոնովը,- նրանց երբեք չեն էլ ճիպոտահարում»:

Եւ Պերեդոնովը զայրացկոտ նայեց նրանց ետքից, իսկ նրանք արագ բարձրանում էին եւ զվարթ զրուցում: Եւ Պերեդոնովի զարմացնում էր, որ դաստիարակը նրանց հետ հավասարի պես էր, չէր նոթոտում եւ նրանց վրա, չէր գոռում:

Երբ Պերեդոնովը վերադարձավ տուն, նա գտավ Վարվարային հյուրասենյակում գիրքը ձեռքին, որ հազվադեպ էր պատահում: Վարվարան խոհարարական գիրք էր կարդում,- միակը, որը նա երբեմն բացում էր: Գիրքը հին էր, քրքրված սեւ կազմով: Սեւ կազմը Պերեդոնովի աչքին ընկավ եւ նրան վիատության մեջ նետեց:

-Այդ ի՞նչ ես կարդում, Վարվարա,- բարկացկոտ հարցրեց նա:

-Ի՞նչ: Հայտնի է ինչ, խոհարարական գիրք,- պատասխանում էր Վարվարան:- ես պարապ բաներ կարդալու ժամանակ չունեմ:

-Ինչո՞ւ խոհարարական գիրք,- սարսափած հարցրեց Պերեդոնովը:

-Ինչպե՞ս ինչու: Հենց քեզ ուտելիք կպատրաստեմ, դու միշտ քմաճաշակություն ես անում,- բացատրում էր Վարվարան հպարտորեն ու

ինքնագոհ ժպտալով:

-Էս գրքով ես չեմ ուտի,- վճռականորեն հայտարարեց Պերեդոնովը, արագ Վարվարայի ձեռքից խլեց գիրքն ու այն ննջարան տարավ:

«Սեւ գիրք: Մեկ էլ դրանով ճաշ պատրաստել,- վախով մտածում էր նա:- Միայն էդ էր պակաս, որ նրան բացահայտ գրբացությամբ հոգեհան անեն: Հարկ է ադ սարսափելի գիրքը վերացնել»,- մտածում էր նա, ուշք չդարձնելով Վարվարայի դռդռացող փնթփնթոցին:

Ուրբաթ օրը Պերեդոնովը շրջանի ինքնավարական ղեկավարման նախագահի մոտ էր:

Այդտեղ ամեն ինչ ասում էր, որ այստեղ ուզում են ապրել հասարակ, լավ եւ ախատել համընդհանուր օգտի համար: Աչք էին զարնում շատ իրեր, որ հիշեցնում էին գյուղականի եւ հասարակի մասին՝ աղեղնավոր մեջքով եւ կացնիկ-թիկնակներով բազկաթոռը, պայտի տեսքով գրչամանները, մոխրաման-տրեխը: Սրահում շատ չափիկներ էին՝ պատուհանների վրա, սեղանների վրա, հատակին՝ տարատեսակ հացահատիկի նմուշներով, իսկ որոշ տեղերում «սովյալ» հացի կտորներ,- տորֆ հիշեցնող գեշ գուղձեր: Հյուրասենյակում՝ գյուղատնտեսական մեքենաների նկարներ եւ մոդելներ: Գրասենյակը լցրել էին գյուղատնտեսության եւ դպրոցական գործի մասին գրքերով պահարանները: Սեղանի վրա՝ թղթեր, տպված հաշվետվություններ, տարատեսակ մեծության բացիկներով կարտոնատուփեր: Շատ փոշի եւ ոչ մի նկար:

Տանուտեր, Իվան Ստեպանովիչ Կիրիլովը, շատ անհանգստանում էր, մի կողմից, սիրալիր լինել, եվրոպավարի սիրալիր, բայց, մյուս կողմից, շրջանում տիրոջ իր արժանապատվությունը չնվազեցնել: Նա ամբողջովին տարօրինակ եւ հակասական էր, ասես երկո կեսերից սերտ միացած: Նրա ողջ իրադրությունից երեւում էր, որ նա շատ եւ ինչպես հարկն է աշխատում է: Իսկ թե նրան նայես, եւ թվում է, թե ողջ այդ ինքնավարական գործունեությունը նրա համար լոկ զվարճանք է եւ դրանքով նա դեռեւս զբաղված է, իսկ նրա իսկական հոգսերը ինչ-որ տեղ առջեւում են, ուր երբեմն ուղղվում էին նրա աշխույժ, բայց ասես անկենդան, անագե փայլով աչքերը: Ասես ինչ-որ մեկի կողմից հանված էր նրա ողջ հոգին եւ դրված երկար ժամանակով ինչ-որ տեղ, իսկ դրա փոխարեն ներդրված է ոչ թե կենդանի, այլ ճարտար իրարանցումը:

Նա կարճահասակ էր, վտիտ, ջահելավուն,- այնքան ջահելավուն եւ

շառագույն, որ երբեմն, մորուք փակցրած տղեկ էր թվում, որ մեծերից բավական հաջող փոխառել էր նրանց վարքագծերը: Նրա շարժումները հստակ եւ արագ էին: Ողջունելով, նա ճարպկորեն խոնարհվում էր եւ ոտքերը շրխկացնում եւ սահում էր պճնապաճույճ մաշիկների ներբանների վրա: Նրա հագուստը կամենում էիր կոչել փոքրիկ կոստյում՝ մոխրագույն կուրտիկ, ծալովի օձիքով բատիստե օսլայած վերնաշապիկ, թոկի կապոյտ փողկապ, նեղլիկ անդրավարտիք, գորշ գուլպաներ: Եւ նրա խոսակցությունը, միշտ շեշտված-սիրալիր, նույնպես ինչ-որ երկակի էր՝ խոսում է իր համար ծանրաբարո - եւ հանկարծ մանկորեն-պարզամիտ ժպիտ, ինչ-որ տղայական շարժուձեւ, իսկ մի րոպեից, տեսնես՝ դարձյալ դադար առնում ու համեստանում է: Կինը նրա, լռիկ ու լրջմիտ, ամուսնուց ատարեց թվացող, Պերեդոնովի ներկայությամբ մի քանի անգամ մտնում էր գրասենյակ եւ ամեն անգամ ամուսնուց շրջանային գործերի մասին ինչ-որ ճշգրիտ տեղեկություններ էր հարցնում:

Տնտեսությունը նրանց քաղաքում խառնիխուռն էր ընթանում՝ մշտապես գալիս էին գործով եւ միշտ թեյ էին ըմպում: Եւ Պերեդոնովին, հազիվ էր նա նսել, ոչ այնքան տաք թեյ եւ ափսեի վրա բուլկիներ բերեցին:

Մինչեւ Պերեդոնովն արդեն հյուր էր նստած: Պերեդոնովը նրան ճանաչում էր,- դե եւ ո՞վ մեր քաղաքում ո՞ւմ չի ճանաչում: Բոլորն իրար ճանաչում են,- միայն ոմանք հեռացել են, վիճելով: Դա տեղական բժիշկ Գեորգի Սեմյոնովիչ Տրեպետովն էր, փոքրիկ՝ Կիրիլովից էլ փոքր մի մարդ, բշտիկավոր դեմքով, սուր եւ աննշան: Նա կապույտ ակնոց էր կրում, ե միշտ նայում էր ցած կամ կողք, ասես նեղվում էր զրուցակցին նայելիս: Նա արտասովոր անկեղծ էր ե երբեք եւ իր ոչ մի կոպեկը չէր զոհաբերել ուրիշի օգտին: Բոլորին, որ գտնվում էին պետական ծառայության մեջ, նա խորապես արհամարհում էր՝ դեռ հանդիպելիս ձեռքն էլ կմեկնի, բայց խոսակցություններից հմտորեն խուսափում էր: Այդ պատճառով նա լուսավոր մարդու համբավ ուներ, ինչպես եւ Կիրիլովը, թեպետ քիչ բան գիտեր ու վատ էր բուժում: հար պատրաստվում էր հասարականալ եւ այդ նպատակով աչք էր ածում, թե ինչպես են մուժիկները խնչում, ծոծրակները քորում, ափով շուրթերն են մաքրում, եւ ինքը մենակ մնալիս երբեմն ընդօրինակում էր նրանց,-

բայց անընդհատ հասարակացումը հետածգում էր մինչեւ գալիք ամառը:

Պերեդոնովն այստեղ էլ կրկնեց բոլոր վերջին օրերս իրեն ընտել գանգատները քաղաքային բամբասանքների վրա, նախանձորդների, որոնք ուզում են խանգարել նրան հասնել տեսուչի տեղին: Կիրիլովը սկզբում այդ իրեն դիմելուց շոյված զգաց: Նա բացականչում էր.

-Դե, հիմա դուք տեսնո՞ւմ եք, ինչպիսին է գավառական միջավայրը: Ես միշտ ասել եմ, որ միակ փրկությունը մտածող մարդկանց համար՝ միավորվելն է, եւ ես ուրախանում եմ, որ դուք նույն համոզման եք եկել:

Տրեպետովը բարկացկոտ ու նեղացած փնչացրեց: Կիրիլովը վախվորած նայեց նրան: Տրեպետովը քամահրաբար ասաց.

-Մտածող մարդիկ,- եւ նորից փնչացրեց: Հետո, փոքր ինչ լռելով, բարալիկ, նեղացած ձայնոց խոսեց.

-Չգիտեմ, արդյոք մտածող մարդիկ կարող են ծառայել նեխած կլասիցիզմին:

Կիրիլովն անվստահ ասաց.

-Բայց դուք, Գեորգի Սեմյոնովիչ, հաշվի չեք առնում, որ միշտ չէ մարդուց կախված իր գործունեությունն ընտրելը:

Տրեպետովը քամահրաբար փնչացրեց, ինչով վերջնականապես շշմեցրեց սիրալիր Կիրիլովին, եւ թաղվեց խորունկ լռության մեջ:

Կիրիլովը դիմեց Պերեդոնովին: Լսելով, որ խոսում է տեսուչական տեղի մասին, Կիրիլովն անհանգստացավ: Նրան թվաց, որ Պերեդոնով ուզում է տեսուչ լինել մեր գավառում Իս գավառական ինքնավարությունում ենթադրություն էր հղանում հաստատել ուսումնարանների իր տեսուչի պաշտոնը, որն ընտրում էր ինքնավարությունն ու հաստատում էր ուսումնական ղեկավարությունը:

Այդժամ տեսուչ Բոգդանովը, որ իր ենթակայությա նտա ոներ երեք գավառերի դպրոցները, կտեղափոխվեր հարեւան քաղաքներից մեկը, եւ մեր գավառի դպրոցները կանցնեին նոր տեսուչին: Այդ պաշտոնի ամար ինքնավարների մոտ աչքի աաջ մարդ ակր, ուսումնական սեմինարիայի դաստիարակը մոտակա Սաֆատ քաղաքում:

-Ես այնտեղ հովանավորություն ոնեմ,- ասում էր Պերեդոնովը,- միայն թե էստեղ տնօրենը վնասում է, դե ե մյուսները նույնպես: տարատեսակ հիմարություններ են տարածում: Այնպես որ, իմ մասին ինչ որ

տեղեկությունների դեպքում, ես ահա ձեզ նախազգուշացնում եմ, որ այդ, ինչ իմ մասի խոսում են՝ պարապ բաներ են: Դուք այդ պարոններին մի հավատացեք:

Կիրիլովը պատասխանում էր փութկոտ եւ աշխույժ:

-Ես, Արդալյոն Բորիսիչ, քաղաքային հարաբերությունների եւ ասեկոսեների մեջ խորանալու առանձնակի ժամանակ չունեմ, ես մինչե կոկորդս գործերի մեջ թաղված եմ: Եթե կինս չօգներ, ապա ես չգիտեմ, ինչպես տակից դուրս կգայի: Ես ոչ մի տեղ չեմ լինում, ոչ մեկին չեմ տեսնում, ոչինչ չեմ լսում: Բայց ես լիովին համոզված եմ, որ այն ամենը, ինչ ձեր մասին խոսում են,- ես ոչինչ չեմ լսել, ազնվորեն հավըտացեք,- այդ ամենը հիմարություն է, լիովին հավատում եմ: Բայց այդ տեղը միայն ինձանից չի կախված:

-Ձեզ կարող են հարցնել,- ասաց Պերեդոնովը:

Կիրիլովը զարմացած նայեց նրան ու ասաց.

-Դե մեկ էլ չհարցնեին, իհարկե, կհարցնեն: Բայց բանն այն է, որ մենք նկատի ունենք...

Այդ ժամանակ շեմին հայտնվեց տիկին Կիրիլովան ու ասաց.

-Իվան Ստեպանիչ, մի րոպե:

Ամուսինը ելավ նրա մոտ: Նա սրտնեղած շշնջաց.

-Ես կարծում ե, որ այդ սուբյեկտին ավելի լավ է չասել, որ մենք նկատի ունենք Կրասիլնիկովին: Այդ սուբյեկտն ինձ կասկածելի է,- նա ինչոր բանով Կրասիլնիկովին կվնասի:

Դու կարծո՞ւմ ես,- ճարպկորեն շշնջաց Կիրիլովը:- Այո, այո, թերեւս: Այնքան տհաճ է: Նա գլուխը բռնեց: կինը նայեց նրան գործնական կարեկցանքով ու ասաց.

-Ավելի լավ է այդ մասին նրան բնավ ոչինչ չասել, իբրեւ թե տեղն էլ չկա:

-Այո այո, դու ճիշտ ես,- շշնջում էր Կիրիլովը:- Բայց ես վազեմ: Անհարմար է:

Նա վազեց գրասենյակ, եւ այնտեղ սկսեց ջանադրաբար կրունկներն իրար տալ ու Պերեդոնովին սիրալիր խոսքեր շաղ տալ:

-Դե դուք, եթե մի բան լինի... - սկսեց Պերեդոնովը:

-Հանգիստ եղեք, հանգիստ եղեք, նկատի կունենամ,- արագ ասում էր Կիրիլովը:

-Մենք այդ դեռ լիովին չենք լուծել, այդ հարցը:

Պերեդոնովը չէր հասկանում, այդ ինչ հարցի մասին է խոսում Կիրիլովը, եւ տաղտուկ ու վախ էր զգում: Իսկ Կիրիլովն ասում էր.

-Մենք կազմում ենք դպրոցական ցանցը: Պետերբուրգից մասնագետ են դուրս գրել: Ողջ ամառ աշխատել ենք: Դա մեզ վրա իննսուն ռուբլի նստեց: Զարմանալիորեն մանրակրկիտ աշխատանք է՝ հաշվարկված են բոլոր տարածությունները, նշված են բոլոր դպրոցական կետերը:

Եւ Կիրիլովը երկար ու մանրամասն պատմում էր դպրոցական ցանցի մասին, այսինքն գավառի փոքր մասերի բաժանման մասին, ամեն մեկում մի դպրոցով, որպեսզի յուրաքանչյուր գյուղակից դպրոցը հեռու չլինի: Պերեդոնովը ոչինչ չէր հասկանում եւ բութ մտքերով խճճվում էր հանգույցներում բառացանցի, որ աշխույժ եւ հմուտ իր առաջ հյուսում էր Կիրիլովը:

Վերջապես նա հաջողություն ասաց ու գնաց, անհուսալի տրտմելով: Այդ տանը,- մտածում էր նա,- նրան չկամեցան ոչ հասկանալ, ոչ նույնիսկ լսել: Տատները ինչ-որ անհասկանալի բան էր դուրս տալիս: Տրեպետովը չգիտես ինչու փնչացնում էր, տանտիրուհին գալիս էր, սիրալիրություններ չէր անում ու գնում էր,- տարօրինակ մարդիկ են ապրում այդ տանը,- մտածում էր Պերեդոնովը,- կորած օր:

XI

Շաբաթ օրը Պերեդոնովը պատրաստվեց գավառական ոստիկանապետի մոտ: Դա թեկուզ եւ այդքան էլ երեւելի անձ չէր, ինչպես ազնվականության պարագլուխը,- մտածում էր Պերեդոնովը,- սակայն կարող է ամենքից շատ վնասել. իսկ թե կամենա, ապա նա կարող է օգնել ղեկավարության առաջ իր արձագանքով:

Ոստիկանությունը՝ կարեւոր բան է:

Պերեդոնովը կարտոնատուփից հանեց աստղանշանով գդակը: Նա որոշեց, որ այսուհետ միայն դա է կրելու: Լավ է տնօրենին գլխարկ կրելը՝ նա ղեկավարության մոտ հարգի է, սկ Պերեդոնովը դեռ պիտի հասնի տեսուչական տեղին. Պետք է հովանավորության վրա հույս դնել, պետք է ինքդ էլ քեզ ամեն ինչում լավ կողմից դրսեւորես: Դեռ մի քանի օր առաջ, մինչեւ առ ղեկավարությունն իր արշավները, նա մտա-

ծում էր այդ, միայն թե ձեռքի տա գլխարկն էր ընկնում: Իսկ այժմ Պերեդոնովն այլ կերպ դասավորեց՝ նա գլխարկը նետեց վառարանի վրա,- այդպես ավելի լավ է՝ ձեռքի տակ չի ընկնի:

Վարվարան տանը չէր, Կլավդիան վերնահարկում հատակն էր լվանում: Պերեդոնովը մտավ խոհանոց ձեռքերը լվալու: Սեղանի վրա նա կապույտ թղթով մի կապոց տեսավ, եւ դրանից մի քանի չամիչ էր դուրս թափվել: Դա մի գրվանքա չամիչ էր, գնված թեյի համար բուլկիի համար,- այն տանն էին թխում: Պերեդոնովը սկսեց չամիչն ուտել, ինչպես այն կար, չլվացած եւ չմաքրած, եւ ողջ գրվանքան կերավ արագ ու ագահաբար, սեղանի մոտ կանգնած նայելով դռանը, որպեսզի պատահաբար Կլավդիան չմտներ: Հետո մանրակրկիտ ծալեց կապույտ հաստ փաթաթանը, սերթուկի տակ այն դուրս բերեց նախասենյակ եւ այնտեղ դրեց վերարկուի գրպանը, որպեսզի փողոցում նետի եւ այդպիսով հետքերը վերացնի:

Նա գնաց, իսկ Կլավդիան շուտով հայտնաբերեց չամչի կորուստը, վախեցավ, սկսեց փնտրել,- բայց չգտավ: Վարվարան վերադարձավ, իմացավ չամչի կորստի մասին եւ հայհոյանքով հարձակվեց Կլավդիայի վրա՝ նա համոզված էր, որ Կլավդիան էր չամիչը կերել:

Փողոցում քամոտ եւ լուռ էր: Լոկ երբեմն ամպեր էին վրա գալիս: Ֆրափոսերը չորանում էին: Երկինքը դալուկ բերկրում էր: Բայց Պերեդոնովի հոգում անձկալի էր:

Ճանապարհին նա մտավ դերձակի մոտ, նրան փութացնելու,- դե, որ արագ կարեր երեք օր առաջ պատվիրած նոր համազգեստը:

Եկեղեցու մոտով անցնելիս, Պերեդոնովը հանեց գլխարկն ու երեք անգամ խաչակնքվեց, ջերոռեռանդորեն եւ անկաշկանդ, որպեսզի բոլորը տեսնեն եկեղեցու կողքով անցնող ապագա տեսուչին: Նախկինում նա այդ չէր անում, բայց հիմա պետք է ականջները սրել: Գուցե թե, ետքից իր համար լռիկ ինչ-որ լրտես է գալիս կամ ծառի ետեւում թաքնված է դրձվորյակն ու զննում է:

Ոստիկանապետն ապրում էր քաղաքի հեռավոր փողոցներից մեկում: Կիսաբաց դարպասի արանքում, Պերեդոնովին պատահեց քաղաքագլուխը,- հանդիպում, որ վերջին օրերս Պերեդոնովի մեջ հուսալքություն էր ծնում: Բակում մի քանի մուժիկներ էին երեւում, բայց ոչ այնպիսիները, ինչպիսիք ամենուր են,- դրանք ինչ-որ առանձնահա-

տուկ էն, արտասովոր հեզ եւ լռակյաց: Բակում կեղտոտ էր: կանգնած էին խսիրապատ սայլերը: Մթին սրահում Պերեդոնովը դեմ առավ եւս մի քաղաքապահ ոստիկանի, ցածրիկ, վտիտ մի մարդ ճշտակատար տեսքով, բայց այդուհանդերձ տրտում: Նա կանգնած էր անշարժ եւ թեւատակին կաշեպատ սեւ կազմով գիրք էր բռնել: Գզգզված բոկոտն մ աղջիկ դուրս թռավ կողքի դռնից, ճանկեց Պերեդոնովի վերարկուն եւ նրան ուղեկցեց հյուրասենյակ, ասելով.

-Համեցեք, Սեմյոն Գրիգորեւիչը հիմա կգա:

Հյուրասենյակում ասառաստաղը ցածր էր: Այն ճնշում էր Պերեդոնովին: Կահույքը կիպ կպած էր պատին: Հատակին պարանի խսիրներ էին: Պատից աջ ու ձախ շշուկներ ու շրյուններ էին լսվում: Դռների ետնքից նայում էին դալուկ կանայք եւ գեղձախտավոր տղաներ, բոլորը ագահ, շողշողուն աչքերով: Ծշուկներից երբեմն առանձնանում էին ավելի բարձր հարցեր եւ պատասխաններ:

-Բերեցի:

-Ո՞ւր տանեմ:

-Ո՞ւր կհրամայեք դնել:

-Երմոշկինից է, Սիդոր Պետրովիչից:

Ծուտով ելավ գավառաոստիկանապետը: Նա կոճկում էր համազգեստային սերթուկն ու քաղցր ժպտում էր:

-Կներեք, որ սպասեցրի,- ասաց նա, իր երկու մեծ եւ թիանման ձեռքերով սեղմելով Պերեդոնովի ձեռքը,- այնտեղ զանազան այցելուներ են գործերով: Մեր ծառայությունն է այդպիսինը, հետաձգման ենթակա չէ:

Սեմյոն Գրիգորեւիչ Սինչուկովը, երկայնահասակ, ամրապինդ, սեւահեր մի մարդ, գլխի մեջտեղում հերաթափ, կենում էր փոքր ինչ կորվելով, ձեռքերը վար, մատները փոցխանման: Նա հաճախ ժպտում էր անպիսի տեսքով, ասես նոր ինչ-որ արգելված, բայց հաճելի, բան էր կերել եւ հիմա շուրթերն էր լիզում: Ծորերը նրա վառ կարմիր էին, հաստ, քիթը մսոտ, դեմքը տռփասեր, ջանադիր ու հիմար:

Պերեդոնովին շփոթեցնում էր այն ամենը, ինչ նա այստեղ տեսնում ու լսում էր: Նա անկապ բառեր էր քրթմնջում եւ բազկաթոռին նստած, ջանում էր գդակն այնպես պահել, որպեսզի գավառաոստիկանը տեսներ աստղանշանը: Սինչուկովը նստել էր նրա դիմաց, սեղանի մյուս

կողմում, իսկ թիանման ձեռքերը նրա կամացուկ շարժվում ծնկների վրա, սեղմվում ու բացվում էին:

-Ինչ ասես դուրս են տալիս - ասում էր Պերեդոնովը,- ինչը որ չի էլ եղել: Իսկ ես ինքս կարող եմ մատնել: Ես ոչ մի նմանատիպ բան, իսկ նրանց մասին գիտեմ: Միայն թե ես չեմ ուզում: Նրանք աչքառաջ ամեն տեսակի հիմարություն են ասում, իսկ աչքերիդ ծիծաղում են: Ինքներդ համաձայվեք, իմ վիճակում դա փափկանկատ է: Ես հովանավորություն ունեմ. իսկ նրանք աղտոտում են: Նրանք միանգամայն զուր ինձ հետապնդում են, միայն ժամանակ են կորցնում, իսկ ինձ նեղում են: Ուր էլ գնաս, արդեն ողջ քաղաքում հայտնի է: Դե ուրեմն ես հուսով եմ, որ տեղն եկած տեղը դուք ինձ նեցուկ կկանգնեք:

-Դե իհարկե, դե իհարկե, հաճեցեք, մեծագույն բավականությամբ,- ասաց Մինչուկովը, իր լայն ափերը առաջ տարածելով,- իհարկե, մենք, ոստիկանությունը, պիտի իմանանք, թե որեւէ մեկի տակ անհուսալի բան կա, թե ոչ:

-Ես իհարկե, թքած ունեմ,- զայրացկոտ ասաց Պերեդոնովը,- թող որ դուրս տային, բայց վախենում եմ, որ նրանք իմ ծառայությանը վնասեն: Նրանք խորամանկ են: Դուք մի նայեք, որ նրանք անընդհատ դուրս են տալիս, թեկուզ, օրինակ, Ռուտիլովը: Իսկ դուք ինչ գիտեք, գուցե, նա գանձատան տակ ակն է փորում: Էդպես հիվանդ գլխից առողջի վրա:

Մինչուկովին սկզբում թվում էր, թե Պերեդոնովը խմել ու հիմարություն է դուրս տալիս: Հետո, ունկ դնելով, նա գլխի ընկավ, որ Պերեդոնովը ինչ-որ մեկից բողոքում է, ով իրենից բամբասում է, եւ խնդրում է ինչ-որ միջոցներ ձեռնարկել:

-Ջահել մարդիկ են,- շարունակում էր Պերեդոնովը, մտածելով Վոլոդինի մասին,- իսկ իրենց մասին շատ մեծ կարծիքի են: Ուրիշների դեմ դավեր են նյութում, իսկ իրենք մաքուր չեն: Ջահել մարդիկ են, պարզ է, տարվում են: Ոմանք ոստիկանությունում են աշխատում, բայց եւ միեւնույն տեղերն են խցկվում:

Եվ նա երկար խոսում էր ջահելների մասի, բայց չգիտես ինչու չէր ուզում Վոլոդինի անունը տալ: Իսկ ոստիկան ջահելների մասին նա ասաց իմիջիայլոց, որպեսզի Մինչուկովը հասկանա, որ իր մոտ ոստիկանությունում ծառայողների վերաբերյալ էլ ինչ-որ անբարեհույս տե-

ղեկություններ կան: Մինչուկովը որոշեց, որ Պերեդոնովն ակնարկում է ոստիկանական վարչության երկու երիտասարդ չինովնիկներին՝ ջահել, ծիծաղկոտ, օրիորդներին են սիրատածում: Պերեդոնովի շվարմունքն ու անհայտ վախն ակամա վարակում էր եւ Մինչուկովին:

-Ես կհետեւեմ,- ասաց նա սրտնեղած, մի որպե խոհածեց եւ դարձյալ սկսեց քաղցր ժպտալ:- Ինձ մոտ երկու ջահել չինովնիկներ կան, դեռ լրիվ դեղնակտուց են: Նանցից մեկին մայրը, արդյոք կհավատաք, անկյուն է կանգնեցնում, Աստված վկա:

Պերեդոնովն ընդհատ քրքջաց:

Այդ ընթացքում վարվարան եղավ Գրուշինայի մոտ, որտեղ իմացավ իրեն ապշեցրած նորությունը:

-Հոգյակս, Վարվարա Դմիտրիեւնա,- հապճեպորեն խոսեց Գրուշինան, հազիվ էր միայն Վարվարան նրա տան շեմն անցել,- ես էնպիսի նորություն ձեզ կասեմ, որ պարզապես ախ կքաշեք:

-դե ի՞նչ էնտեղ նորություն,- քմծիծաղելով, հարցրեց Վարվարան:

-Չէ, դուք միայն մտածեք, թե աշխարհի երեսին ինչ ստոր մարդիկ կան: Ինչ բաների են գնում, որպեսզի հասնեն իրենց նպատակին:

-Դե բանն ի՞նչ է:

-Դե սպասեք, ես ձեզ կպատմեմ:

Բայց խորամանկ Գրուշինան նախ սկսեց Վարվարային սուրճ հյուրասիրել, հետո տնից դուրս քշեց իր երեխաներին, ընդ որում մեծ աղջիկը համառեց եւ չէր ուզում գնալ:

-Ախ դու անպետքի մեկը,- գոռաց նրա վրա Գրուշինան:

-Ինքդ ես անպետք,- պատասխանում էր հանդուգն աղջիկն ու ոտքերը մոր վրա գետնով տվեց:

Գրուշինան ճանկեց աղջկան մազերից, տնից բակ շպրտեց ու դուռը կողպեց:

-Քմահաճ անասուն,- բողոքում էր նա Վարվարային,- էս երեխեքի հետ պարզապես դժբախտություն է: Ես մենակ եմ, վարվելու ճար չկա: Դե նրանց հայր էր պետք:

-Դե ամուսնացեք, եւ նրանց հայր կլինի,- ասաց Վարվարան:

-Դե էնպիսի մեկը կպատահի, աղավնյակս Վարվարա Դմիտրիեւնա,- մեկ ուրիշը կսկսի նրանց չարչարել:

Այդ ժամանակ աղջիկը վազեց փողոցից, պատուհանից մի բուռ

ավազ նետեց եւ դրանով շաղեց մոր գլուխն ու շորը: Գրուշինան պատուհանից դուսր ցցվեց ու ճչաց.

-Ես քեզ, անպետքի մեկը, կքոթակեմ,- մենակ թե տուն արի, ես քեզ ցույց կտամ, անպիտան կեղտոտի մեկը:

-Ինքդ ես անպետք, չար հիմար,- գոռում էր փողոցում աղջնակը, թչկոտում էր մեկ ոտքի վրա եւ մորը ցույց էր տալիս կեղտոտ բռունցքները:

Գրուշինան ճչաց աղջկան.

-Դե դու սպասիր:

Եւ պատուհանը փակեց: Հետո նա հանգիստ նստեց, ասես ոչինչ էլ չի պատահել, խոսեց.

-Դե ես ձեզ նորություն էի ուզում պատմել, դե արդեն չգիտեմ: Դուք, աղավնյակս Վարվարա Դմիտրիեւնա, մի տագնապեք, նրանք ոչինչ չեն հասցնի:

-Դե ի՞նչ բան է,- վախեցած հարցրեց Վարվարան, եւ սուրճով պնակը նրա ձեռքերում դողաց:

-Գիտեք, հիմա գիմնազիա է ընդունվել, հենց հինգերորդ դասարան, մի գիմնազիստ, Պիլնիկովը, իբր թե Ռուբանից, որովհետեւ նրա մորաքույրը հենց մեր գավառում կալվածք է առել:

-Դե, գիտեմ,- ասաց Վարվարան,- տեսել եմ, ոնց չէ, դե նրանք դեռ մորաքրոջ հետ եկել էին, էնպես սիրունիկ, աղջկա է նման եւ անընդհատ կարմրում է:

-Աղավնյակս Վարվարա Դմիտրեիեւնա, դե ինչպես նա աղջկա նման չլինի,- չէ որ նա հագուստափոխված օրիորդ է:

-Դե ինչ եք ասում,- բացականչեց Վարվարան:

-Դիտմամբ են նրանք այդպես մտածել, որպեսզի Արդալյոն Բորիսիչին որսան,- ասում էր Գրուշինան, փութալով ձեռքերը տարուբերելով եւ բերկրալի հուզվելով այն բանից, որ այդպիսի կարեւոր տեղեկություն է հաղորդում:- Դե տեսնում եք, այդ օրիորդը մի որբ զարմիկ ունի, նա է սովորել է Ռուբանում, դե մայրն օրիորդի նրան գիմնազիայից վերցրել է, եւ նրա թղթերով օրիորդն էստեղ է ընդունվել: Եւ դուք նկատեք, նրանք նրան բնակարանում են տեղավորել, որտեղ ուրիշ գիմնազիստներ չկան, նա այնտեղ մենակ է, էնպես որ ամեն ինչ, մտածում էին, ծածուկ կմնա:

-Իս դուք ո՞նց իմացաք - տարակուսած ասաց Վարվարան:

-Աղավնյակս, Վարվարա Դմիտրիեւնա, լուրով է երկիրը լցվում: Եւ էդպես մեկից կասկածելի դարձավ՝ բոլոր տղաները՝ ինչպես տղաներ, իսկ սա՝ սուսիկ-փուսիկ, քայլում է, ասես ջրի մեջ իջեցրած: Իսկ մռութին նայես՝ կարգին տղա պիտի լինի, շառագույն, կրծքեղ: Եւ անքան համեստ, ընկերները նկատում են՝ նրան մի խոսք են ասում, իսկ նա էլ կարմրում է: Դե նրան աղջիկ ասելով ծանակում են: Միայն թե նրանք մտածում են, թե դա այդպես է, որ ծիծաղեն, չգիտեն, որ դա՝ ճիշտ է: Եւ պատկերացրեք, թե ինչ խորամանկ են նրանք՝ չէ որ տանտիրուհին էլ ոչինչ չգիտի:

-Իսկ դուք ինչպե՞ս իմացաք,- կրկնում էր Վարվարան:

-Աղավնյակս, ՎարվարաԴմիտրիեւնա, ես ի՞նչ չեմ իմանա: Ես գավառում բոլորին գիտեմ: ինչպես չէ, չէ որ բոլորին հայտնի է, որ նրանց մոտ տանը մի տղա էլ է ապրում նույն տարիքի, ինչ սա: Դե ինչո՞ւ նրանք նրանց միասին գիմնազիա չտվեցին: Բայց էդ ամենը հիմարություն է,- դա էլ հենց գիմնազիստն է: Եւ նույնպես եւ հայտնի է, որ նրանց մոտ մի օրիորդ կար, իսկ նրանք ասում են, որ նա ամուսնացել ու Կովկաս է գնացել, իսկ էստեղ ապրում է՝ տղայի տեսքով:

-Դե ի՞նչ շահ նրանց,- հարցրեց Վարվարան:

-Ինչպե՞ս ինչ շահ - աշխույժ ասում էր Գրուշինան:- Ուսուցիչներից մեկնումեկին կկպցնի, դե արդյոք քիչ են մեզ մոտ ամուրիները, դե կամ եւ այլ ինչ-որ մեկին: Դե տղայի տեսքով նա կարող է եւ բնակարան գալ, ե դե ինչ ասես կարող է:

Վարվարան վախեցած ասաց.

-Սիրունիկ աղջիկ է հա:

-Դե էլ մի ասա, քաշած պատկեր,- համաձայնվեց Գրուշինան, դա նա դեռ ամաչում է, իսկ սպասեք, կընտելանա, կբացվի, դե նա արդեն քաղաքում բոլորին կպտտացնի: Եւ պատկերացրեք, թե ինչ խորամանկ են նրանք՝ ես, հենց իմացա էդ գործերի մասին, տեղնուտեղը փորձեցի հանդիպել տղայի տանտիրուհուն,- կամ աղջկա տանտիրուհուն,- դե արդեն չգիտես էլ ինչ ասես:

-Իսկական դարձվորյակ, թու, ներիր Տեր,- ասաց Վարվարան:

-Գնացի ես երեկոյան ժամասացության նրանց ծխական համայնք, Պանտելեյմոնի մոտ, իսկ նա՝ աստվածապաշտ է: Օլգա Վասիլեւնա,

ասում եմ, այդ ինչո՞ւ է ձեզ մոտ հիմա միայն մի գիմնազիստ ապրում: Չէ որ ձեզ, ասում եմ, մեկի հետ ձեռնտու չէ: Նա ասում է՝ դե ավելին, ասում է, ի՞նչ եմ անում, իրարանցում է նրանց հետ: Դե ես էլ ասում եմ՝ չէ որ դուք, ասում եմ, նախորդ տարիներին երկու-երեք հոգի էիք պահում: Դե նա էլ ասում է,- պատկերացրեք աղավնյակս, Վարվարա Դմիտրիեւնա,- դե նրանք, ասում է, էդպես են պայմանավորվել, որպեսզի Սաշենկան ինձ մոտ մենակ ապրի: Նրանք, ասում է, աղքատ մարդիկ չեն, ավելի շատ վճարեցին, թե չէ, ասում է, վախենում են, որ նա այլ տղաների հետ երես կառնի: Դե ո՞նց:

-Այ քեզ խաբեբաներ,- բարկացկոտ ասաց Վարվարան:- Դե ի՞նչ դուք նրան ասացիք, որ դա՝ աղջի՞կ է:

-ես նրան ասում եմ՝ նայեք, ասում եմ, Օլգա Վասիլեւնա, արդյոք ձեզ տղայի փոխարեն աղջիկ չեն խցկել:

-Դե, իսկ նա ի՞նչ:

-Դե, նա մտածում էր, ես կատակում եմ, ծիծաղում է: Այդ ժամանակ ես ավելի լուրջ ասացի՝ աղավնյակս, Օլգա Վասիլեւնա, ասում եմ, գիտեք, արդյոք, ասում են, որ դա՝ աղջիկ է: Միայն թե նա չի հավատում, դե ինչ աղջիկ է նա, չէ որ ես կույր չեմ...

Այդ պատմությունը ապշեցրեց Վարվարային: Նա լրիվ հավատաց, որ այդ ամենը այդպես էլ կա եւ որ իր փեսացուի վրա եւս մի հարձակում է պատրաստվում եւս մեկ կողմից: Պետք էր ինչ-որ կերպ հնարավորինս արագ հագուստափոխված օրիորդի դիմակը պատռել: Երկար խորհրդակցում էին նրանք, ինչպես այդ անել, բայց դեռեւս ոչինչ չմտածեցին:

Տանը Վարվարային ավելի վշտացրեց չամիչի կորուստը:

Երբ Պերեդոնովը տուն վերադարձավ, Վարվարան փութկոտ ու հուզված պատմեց նրան, որ Կլավդիան ինչ-որ տեղ է կորցրել մի գրվանքա չամիչն ու չի խոստովանում:

-Դե մեկ էլ ինչ է հորինել,- գրգռված ասում էր Վարվարան,- դա, ասում է, գուցե թե, բարինն է կերել: Նա, ասում է ինչոր բանի ետեւից խոհանոց էր ելել, երբ ես հատակն էի մաքրում, եւ երկար, ասում է, այնտեղ մնաց:

-Եւ ամենեւին էլ ոչ երկար,- մռայլ ասաց Պերեդոնովը,- ես միայն ձեռքերս լվացի, իսկ չամիչ ես էնտեղ չեմ էլ տեսել:

-Կլավդյուշկա, Կլավդյուշկա,- ճչաց Վարվարան. - ահա բարինն ասում է, որ նա չամիչը չի էլ տեսել,- կնշանակի, դու արդեն այն ժամանակ ինչ-որ տեղ պահել ես:

Կլավդիան խոհանոցից ցույց տվեց իր կարմրած, արցունքներից ուռած դեմքը:

-Ես ձեր չամիչը չեմ վերցրել,- ճչաց նա հեծկլտացող ձայնով,- ես այն ձեզ համար ետ կգնեմ, միայն թե ես ձեր չամիչը չեմ վերցրել:

-Եւ ետ կառնես, ետ կառնես,- զայրացկոտ գոչեց Վարվարան,- ես պարտավոր չեմ քեզ չամիչով կերակրել:

Պերեդոնովը քրքջաց ու գոռաց.

Դյուշկան մի գրվանքա չամիչ է կլլել:

-Վիրավորողներ,- գոչեց Կլավդիան եւ դուռը շրխկացրեց:

Ճաշի շուրջ Վարվարան չկարողացավ դիմանալ, որպեսզի այն ամենը, ինչ լսել էր Պիլնիկովի մասին չասեր: Նա չէր մտածում, դա իր համար օգտակար կլինի թե վնասակար, ինչպես դրան կվերաբերի Պերեդոնովը,- պարզապես չարությունից խոսում էր:

Պերեդոնովը ջանում էր մտաբերել Պիլնիկովին, բայց դե չէր կարողանում հստակ պատկերացնել նրան: Մինչեւ այժմ նա քիչ ուշադրություն էր դարձնում այդ նոր աշակերտի վրա եւ արհամարհում էր նրան սիրունիկության ու մաքրության համար, այն բանի համար, որ նա իրեն համեստ էր պահում, լավ էր սովորում եւ հինգերորդ դասարանի աշակերտներից ամենակրտսերն էր: Իսկ հիմա Վարվարայի պատմածը նրա մեջ վավաշոտ հետաքրքրություն բռնկեցրեց: Անհամեստ մտքերը դանդաղ շարժվեցին նրա մթին գլխում...

«Հարկ է գնալ երեկոյան ժամասացության,- մտածեց նա,- նայել այդ հագուստափոխված աղջնակին»:

Հանկարծ ներս վազեց Կլավդիան, սեղանի վրա նետեց գնդած կապույտ փաթաթելու թուղթն ու բղավեց.

-Ահա ինձ վրա շառ էիք անում, թե ես եմ չամիչը կերել, իսկ սա ի՞նչ է Ծատ պետք է ինձ ձեր չամիչը, դե ոնց չէ:

Պերեդոնովը գլխի ընկավ, թե բանն ինչ է. նա մոռացել էր փողոցում նետել փաթաթանը, եւ հիմա Կլավդիան գտել էր այն վերարկուի գրպանում:

-Ախ, գրողը տանի,- գոչեց նա:

-Այս ի՞նչ է, որտեղի՞ց,- գոչեց Վարվարան:

-Արդալյոն Բորիսիչի գրպանում գտա,- չարախնդորեն պատասխանում էր Կլավդիան,- իրենք կերել են, իսկ ինձ վրա զրպարտություն են սարքում: Հայտնի է, որ Արդալյոն Բորիսիչը մեծ քաղցրակեր է, բայց դե ինչու ուրիշների վրա գցել, եթե իրենք են...

-Դե, գնա,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը,- եվ ամեն ինչը խաբում ես: Դու ես գրպանս գցել, ես ոչինչ չեմ վերցրել:

-Դե ինչ պիտի խցկեմ, ինչ եք ասում, Աստված ձեզ հետ,- շվարած ասաց Կլավդիան:

-Ինչպե՞ս ես համարձակվել գրպանները տնտղել,- գոռաց Վարվարան:- Դու էնտեղ փո՞ղ ես փնտրում:

-Ոչ մեկի գրպաններն էլ ես չեմ քրքրում,- կոպիտ պատասխանում էր Կլավդիան:- Ես վերցրել էի վերարկուն մաքրելու, ամբողջովին կեղտի մեջ էր:

-Իսկ գրպանն ինչո՞ւ ես մտել:

-Դե այն գրպանից վայր ընկավ, ինչու պիտի ես գրպանները քրքրեմ,- արդարանում էր Կլավդիան:

-Խաբում ես, դյուշկա,- ասաց Պերեդոնովը:

-Դե ինչ դյուշկա եմ ես ձեզ, դե էս ինչ բան է, ծաղրաբաններ,- ճչաց Կլավդիան:- Գրողը ձեզ տանի, ես ձեր չամիչը ետ կգնեմ, խեղդվեք դուք ձեր չամիչով,- իրենք կերել են, իսկ ես տակից դուրս գամ: Դե եւ ետ կգնեմ,- երեւում է , դուք խիղճ չունեք, եւ դեռ պարոններ եք կոչվում: Կլավդիան գնաց խոհանոց, արտասվելով եւ հայհոյելով: Պերեդոնովն ընդհատ հռհռաց ու ասաց.

-Տես ոնց է ընդդիմացել:

-Եւ թող ետ գնի,- ասում էր Վարվարան,- դրանց որ թողնես, ապա դրանք ամեն ինչ պատրաստ են խժռել, գրողի տարած սովյալները:

Եւ հետո երկար ծանակում էին Կլավդիային այն բանով, որ նա մի գրվանքա չամիչ է կերել: Այդ չամիչի փողը նրա աշախտավարձից դուրս գրեցին եւ բոլոր հյուրերին պատմում էին այդ չամիչի մասին: Կատուն, ասես ճիչերից գրավված, ելավ խոհանոցից, անցնելով պատերի կողքով, եւ նստեց Պերեդոնովի կողքին, գաղջ ու չար աչքերով նայելով նրան: Պերեդոնովը կռացավ, որպեսզի նրան բռնի: Կատուն կատաղի ֆշշացրեց, ճանկռեց Պերեդոնովի ձեռքը, փախավ ու խցկվեց պահա-

ռանի տակ: Նա այնտեղից դուրս էր նայում, ե նրա նեղլիկ կանաչ բիբերը շողշողում էին:

«Իսկական դարձվորյակ»,- վախեցած մտածեց Պերեդոնովը:

Այնինչ Վարվարան, անընդհատ մտածելով Պիլնիկովի մասին, խոսեց.

-Ամեն երեկո բիլիարդ խաղալու փոխարեն, երբեմն էլ գիմնազիստների բնակարանները գնա: Նրանք գիտեն, որ ուսուցիչները հազվադեպ են նրանց մոտ գալիս,իսկ տեսուչի տարին մեկ էլ չես տեսնի, դե նրանց մոտ էլ ամեն տեսակի այլանդակություն է տեղի ունենում, եւ թղթախաղ, եւ հարբեցողություն: Դե գնայիր գուցե էդ զգեստափոխված աղջնակի մոտ: Ավելի ուշ գնա, հենց որ պատրաստվեն քնելու. դե այնժամ երեւի կարելի կլինի նրան մերկացնել:

Պերեդոնովը մտածեց ու քրքջաց:

«Վարվարան՝ խորամանկ ստահակ է,- մտածեց նա,- նա կսովորեցնի»:

XII

Պերեդոնովն ուղեւորվեց գիմնազիայի եկեղեցի երեկոյան ժամերգության: Այնտեղ նա կանգնեց աշակերտների ետեւում եւ ուշադիր նայում էր այն բանին, թե ինչպես են նրանք իրենց պահում: Նրան թվաց, որ ոմանք չարություն էին անում, փսփսում էին, ծիծաղում: նա նկատեց նրանց եւ ջանաց մտապահել: Նրանք շատ էին, եւ նա սկսեց սրտնեղել ինքն իրենից, ինչպես նա գլխի չընկավ գրանցելու համար տնից թղթի կտոր ու մատիտ վերցնել: Նա տխրեց, որ գիմնազիստներն այդքան վատ են իրենց պահում, եւ ոչ մեկը դրա վրա ուշադրություն չէր դարձնում, թեպետ հենց այդտեղ եկեղեցում կանգնած էին տնօրենն ու տեսուչը՝ իրենց կանանցով եւ երեխաներով:

Իսկ իրականում գիմնազիստները կանգնած էին պատշաճաբար ու համեստ,- ոմանք խաչակնքվում էին անգիտակցաբար, տաճարին խորթ ինչ-որ բան մտմտալով, մյուսները ջանադրաբար աղոթում էին: Հազվադեպ ինչ-որ մեկը հարեւանի ականջին ինչ-որ բան էր շշնջում,- երկու-երեք խոսք, համարյա գլուխը չթեքելով,- եւ մյուսը պատասխանում էր նույնքան կարճ ու լռիկ, կամ նույնիսկ մեկ արագ շարժումով, հայացքով, ուսերը թոթվելով, ժպիտով: Բայց այդ փոքրիկ շարժումնե-

ը, որ չէր նկատում դասարանային դաստիարակների հերթապահող օգնականը, Պերեդոնովի տագնապած, բայց բութ զգացողություններին մեծ անկարգության պատրանք էին հարուցում: Նույնիսկ եւ հանգիստ վիճակում Պերեդոնովը, ինչպես եւ բոլոր կոպիտ մարդիկ, չէր կարողանում ճիշտ գնահատել փոքրիկ երեւույթները՝ նա կամ դրանք չէր նկատում, կամ չափազանցնում էր դրանց նշանակությունը: Իսկ այժմ, երբ նա սպասումներով եւ վախերով հուզված էր, նրա զգացմունքները նրան ավելի վատ էին ծառայում. հետզհետե ողջ իրականությունն իր առջեւ պարուրվում էր զազրելի ու չար պատրանքների մշուշով:

Այո, սակայն, եւ նախկինում էլ ի՞նչ էին գիմնազիստները Պերեդոնովի համար: Միթե ոչ ապարատներ գրիչով թանաքը թղթի վրա տարուբերելու եւ ճապաղ լեզվով վերապատմելու համար այն, ինչը որ մի ժամանակ ասվել էր մարդկային լեզվով: Պերեդոնովը ողջ իր ուսուցչական գործունեության ընթացքում բացարձակապես անկեղծ չէր հասկանում եւ չէր մտածում այն մասին, որ գիմնազիստները՝ նույնպիսի մարդիկ են, ինչպես մեծահասակները: Միայն մորուքավոր գիմնազիստներն առ կանայք իրենց հակումով հանկարծ դառնում էին նրա աչքին իրեն հավասար:

Ետեւում կանգնելով եւ բավականաչափ տխուր տպավորություններ ժողվելով, Պերեդոնովն առաջ անցավ, դեպի մեջտեղի շարքերը: Այնտեղ շարքի ամենավերջում կանգնած էր Սաշա Պիլնիկովը. նա համեստ աղոթում էր եւ հաճախ ծնկի էր գալիս: Պերեդոնովը նայում էր նրան, եւ առանձնապես հաճելի էր նրա համար նայել, երբ Սաշան կեցած էր ծնկի իջած, ինչպես պատժված, եւ նայում էր առաջ, զոհարանի շողացող դռներին, դեմքի վրա մտահոգ եւ խնդրողական արտահայտությամբ, աղերսանքով եւ տրտմությամբ սեւ աչքերում, պատված երկար, մինչե կապտություն սեւ թարթիչներով: թուխ, սլացիկ, ինչը հատկապես նկատելի էր, երբ նա կենում էր ծնկաձալ հանդարտ եւ ուղիղ, ասես ինչ-որ մեկի խիստ զննող հայացքի ներքո,- բարձր ու ընդարձակ կրծքով, Նա Պերեդոնովին լրիվ աղջկա նման էր թվում:

Այժմ Պերեդոնովը վերջնականապես որոշեց երեկոյան ժամասացությունից հետո գնալ նրա բնակարան:

Սկսեցին եկեղեցուց ելնել: Նկատեցին, որ Պերեդոնովի գլխին գլխարկ չէ, ինչպես միշտ, այլ աստղանշանով գդակ: Ռուտիլովը ծիծաղե-

լով հարցրեց.

-Այս ի՞նչ է, Արդալյոն Բորիսիչ, հիմա է աստղանշանո՞վ ես պճնազարդվում: Այ թե ինչ է նշանակում, երբ մարդ տեսուչ դառնալու միտք ունի:

-Հիմա ձեր առաջ զինվորները պատի՞վ են բռնելու,- ծեւական պարզամտությամբ հարցրեց Վալերիան:

-Դե ահա, ինչ հիմարութուններ,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը:

-Դու ոչինչ չես հասկանում, Վալերոչկա,- ասաց Դարյան,- դե ինչ զինվորներ: Հիմա գիմնազիստների հարգանքն առ Արդալյոն Բորիսիչը ավելի շատ կլինի, քան նախկինում:

Լյուդմիլան քրքջում էր: Պերեդոնովը փութաց հաջողություն ասել նրանց, որպեսզի ազատվի նրանց ծաղրուծանակից:

Պիլնիկովի մոտ գնալու համար դեռ վաղ էր, իսկ տուն չէր ուզում: Պերեդոնովը գնաց հին փողոցներով, մտմտալով, թե որտեղ մի ժամ անցկացնի: Շատ տներ կային, շատ պատուհաններում լույսեր էին վառվում, երբեմն բացված պատուհաններից ձայներ էին լսվում: փողոցներով քայլում էին եկեղեցուց ցրվածները, եւ լսելի էր, թե ինչպես էին բացվում եւ փակվում դռնակներն ու դռները: Ամենուր ապրում էին Պերեդոնովին օտար, թշնամական մարդիկ, եւ նրանցից ոմանք, գուցե թե, եւ հիմա էլ չարամտում էին նրա դեմ: Գուցե թե, արդեն ինչ-որ մեկը զարմանում էր, թե ինչու է Պերեդոնովը այսքան ուշ ժամին եւ թե նա ուր է գնում: Պերեդոնովին թվում էր, որ ինչ-որ մեկը հետեւում է իրեն եւ գաղտագողի քայլում է իր ետքից: Նա տրտմեց: Նա գնաց փութանակի, աննպատակ:

Նա մտածում էր, որ յուրաքանչյուրի մոտ տանը կան իրենց հանգուցյալները: Եւ ամենքը, որոնք ապրել էին այս հի տներում մի հիսուն տարի առաջ, բոլորը մահացել են: Որոշ հանգուցյալների նա դեռ հիշում էր:

«Մարդը մեռնում է, հանց տունը վառես,- տրտմալի մտածում էր Պերեդոնովը,- եւ մեկ էլ շատ սարսափելի է»:

Օլգա Վասիլեւնա Կոկովկինան, ում մոտ ապրում էր Սաշա Պիլնիկովը, գանձապահի այրի էր: Ամուսինը նրան թոշակ եւ մի փոքրիկ տուն էր թողել, որում նրա համար այնքան լայնարձակ էր, որ նա դեռ կարող էր երկու-երեք սենյակ կենվորների համար առանձնացնել:

Բայց նա գերադասեց գիմնազիստներին: Այնպես եղավ, որ նրա մոտ տեղավորում էին ամենահամեստ տղաներին, որոնք սովորում էին կանոնավոր եւ գիմազան ավարտում էին: Իսկ այլ աշակերտական բնակարաններում, նշանակալից մասն անպիսիք էին, որ մի ուսումնական հաստատությունից մյուսն են քոչում, եւ այդպես էլ անուսում են դուրս գալիս:

Օլգա Վասիլեւնան, նիհարավուն պառավը, բարձրահասակ եւ ծիգ, բարեհամբույր դեմքով, որին նա, սակայն ջանում էր խիստ արտահայտություն հաղորդել, եւ Սաշա Պիլնիկովը, լավ պարարտացած եւ մորաքրոջ խիստ խնամքի տակ, նստած էին թեյի սեղանի շուրջ: Այսօր Սաշայի հերթն էր մուրաբա դնելու գյուղից, եւ այդ պատճառով նա իրեն տանտեր էր զգում, , հանդիսավոր հյուրասիրում էր Օլգա Վասիլեւնային, եւ նրա սեւ աչքերը փայլում էին:

Զանգը հնչեց, եւ դրանից հետո ճաշասենյակում հայտնվեց Պերեդոնովը: Կոկովկինան զարմացել է այսչափ ուշ ժամի այցելությունից:

-Ահա ես եկա տեսնելու մեր գիմնազիստին,- ասաց նա,- ինչպես է նա այստեղ ապրում:

Կոկովկինան հյուրասիրում էր Պերեդոնովին, բայց նա հրաժարվեց: Նա ուզում էր, որպեսզի նրանք հնարավորինս շուտ ավարտեն թեյախմությունը եւ որպեսզի նա գիմնազիստի հետ մենակ մնա: Թեյը խմեցին, անցան Սաշայի սենյակ, եւ Կոկովկինան չէր լքում նրանց եւ ավելորջ խոսում էր: Պերեդոնովը մռայլ նայում էր Սաշային, իսկ նա ամաչկոտ լռում էր:

«Էս այցելությունից ոչինչ դուրս չի գա»,- նեղսրտած մտածում էր Պերեդոնովը:

Սպասուհին ինչ-որ բանի համար ձայն տվեց Կոկովկինային: Նա ելավ: Սաշան տրտմալի նայեց նրա ետքից: Նա աչքերը խամրեցին, թարթիչներով ծածկվեցին, եւ թվում էր, որ այդ թարթիչները, չափազանց երկար, ստվեր են նետում նրա ողջ դեմքի վրա, թուխ եւ հանկած գունատված: Նա ադ մռայլ մարդու մոտ իրեն անհարմար էր զգում: Պերեդոնովը նստեց նրա կողքին, անշնորհք կերպով ձեռքով նրան գրկեց, եւ դեմքի վրա անշարժ արտահայտությունը չփոխելով, հարցրեց.

Դե ի՞նչ Սաշենկա, լա՞վ ես աղոթել Աստծուն:

Սաշան ամոթխած եւ վախեցած նայեց Պերեդոնովին, կարմրեց ու

լռեց:

-Հը,ի՞նչ, լա՞վ,- հարցնում էր Պերեդոնովը:

-Լավ,- ասաց, վերջապես, Սաշան:

-Այ քեզ, ինչ շառագույն է այտերիդ վրա,- ասաց Պերեդոնովը,- դե խոստովանեք, չէ որ դուք՝ աղջի՞կ եք: Ստահակ, աղջիկ:

-Ոչ, աղջիկ չեմ,- ասաց Սաշան եւ հանկարծ, բարկանալով իր ամաչկոտության համար, զրնգացող ձայնով հարցրեց. - դե այդ ինչո՞վ եմ ես աղջկա նման: Այդ ձեզ մոտ գիմնազիստներն են այդպիսինը, հորինել են ծաղրել այն բանի համար, որ ես վատ խոսքերից վախենում եմ, ես ընտել չեմ դրանք ասելու, ես ոչ մի կերպ չեմ կարող ասել, դե եւ ինչո՞ւ կեղտոտ բաներ ասել:

-Մայրի՞կը կպատժի,- հարցրեց Պերեդոնովը:

-Ես մայր չունեմ,- ասաց Սաշան,- մայրիկս վաղուց մահացել է. ես մորաքույր ունեմ:

-Դե ինչ, մորաքո՞ւյրը կպատժի:

-Իհարկե կպատժի, եթե ես սկսեմ նողկալի բաներ ասել: Մի՞թե լավ է:

-Իսկ մորաքույրը որտեղի՞ց կիմանա:

-Դե ես ինքս էլ չեմ ուզում,- հանգիստ ասաց Սաշան:- Իսկ մորաքույրը հազիվ թե իմանա: Գուցե թե, ես ինքս ասեմ:

-Իսկ ո՞վ է ձեր ընկերներից գեշ խոսքեր ասում,- հարցրեց Պերեդոնովը:

Սաշան նորից կարմրեց ու լռում էր:

-Դե ինչ, ասեք,- պնդում էր Պերեդոնովը,- դուք պարտավոր եք ասել, չի կարելի թաքցնել:

-Ոչ մեկը չի ասում,- շփոթված ասաց Սաշան:

-Չէ որ դուք ինքներդ էիք հիմա բողոքում:

-Ես չէի բողոքում:

-Դե ինչ եք դուք ժխտում,- բարկացած ասաց Պերեդոնովը:

Սաշան իրեն ինչ-որ վատշվեր ծուղակի մեջ բռնված էր զգում: Նա ասաց.

-Ես միայն բացատրեցի ձեզ, թե ինչու որոշ ընկերներ ինձ աղջիկ կոչելով ծանակում են: Իսկ ես չեմ ուզում նրանց զրպարտել:

-Ահա թե ինչ, իսկ դե ինչո՞ւ,- զայրացկոտությամբ հարցրեց Պերեդո-

նովը:

-Դե լավ չէ,- ասաց Սաշան նեղսրտած քմծիծաղով:

-Դե ահա ես տնօրենին կասեմ, եւ ձեզ կստիպեն,- չարախնդորեն ասաց Պերեդոնովը:

Սաշան նայում էր Պերեդոնովին զայրագին կրակված աչքերով:

-Ոչ, դուք, խնդրում եմ, մի ասեք, Արդալյոն Բորիսիչ,- պաղատում էր նա:

Եւ նրա ձայնի խախտված հնչյուններում լսելի էր, որ նա ջանք է գործադրում խնդրելու, որ նա ուզում է հանդուգն, սպառնալից խոսքեր ճչալ:

-Ոչ, կասեմ: Եք դուք այդժամ կտեսնեք, թե ինչպես եք նողկանքները ծածկում: Դուք պարտավոր էիք ինքներդ մեկից բողոքել: Դե սպասեք, ձեզ դեռ կհասնի:

Սաշան ելավ եւ շվարմունքի մեջ գոտին էր քաշքշում: Եկավ Կոկովկինան:

-Դե ձեր սուսիկը լավն է, բան չունեմ ասելու,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը:

Կոկովկինան վախեցավ: Նա փութկոտ մոտեցավ Սաշային, նստեց նրա կողքին,- հուզմունքից նրա ոտքերը միշտ ծալվում էին,- եւ վախվորած հարցրեց.

-Իսկ ի՞նչ որ, Արդալյոն Բորիսիչ: Նա ի՞նչ է արել:

-Ահա նրանից հարցրեք,- մռայլ զայրացկոտությամբ պատասխանեց Պերեդոնովը:

-Ի՞նչ է եղել, Սաշենկա, ի՞նչ մեղք ես գործել,- հարցրեց Կոկովկինան, Սաշայի արմունկին դիպչելով:

-Ես չգիտեմ,- ասաց Սաշան ու արտասվեց:

-Դե սա ի՞նչ բան է, ինչո՞ւ ես լալիս,- հարցնում էր Կոկովկինան:

Նա ձեռքերը դրեց տղայի ուսին, կռացնում էր նրան դեպ իրեն եւ չէր նկատում, որ նա անհարմար է զգում: Եւ նա կանգնած էր, հակվելով, եւ թաշկինակով աչքերն էր ծածկում: Պերեդոնովը բացատրեց.

-Նրան այնտեղ, գիմնազիայում, վատ բաներ են սովորեցնում, իսկ նա չի ուզում ասել, թե ով: Նա չպիտի թաքցնի: Դե եւ ինքն էլ կեղտոտ բաներ է սովորում, եւ մյուսներին պաշտպանում է:

-Ախ, Սաշենկա, Սաշենկա, դե ոնց թե այդպես: Միթե կարելի է: Ինչ-

պես չես ամաչում,- շվարած ասում էր Կոկովկինան, Սաշային բաց թողնելով:

-Ես ոչինչ,- հեծկլտալով, պատասխանեց Սաշան,- ես ոչ մի վատ բան չեմ արել: Նրանք հենց դրա համար էլ ինձ ծաղրում են, որ ես չեմ կարողանում վատ խոսքեր ասել:

-Ո՞վ է վատ խոսքեր ասում,- կրկին հարցրեց Պերեդոնովը:

-Ոչ մեկը չի ասում,- հուսահատությամբ գոչեց Սաշան:

-Տեսնում եք, ինչպես է նա ստում,- ասաց Պերեդոնովը,- նրան պետք է լավ պատժել: Պետք է, որպեսզի նա ասի, թե ով է վատ բաներ խոսում, թե չէ մեր գիմնազիայի վրա մեղադրանքներ կգան, իսկ մենք ոչինչ չենք կարող անել:

-Դե դուք նրան ներեք, Արդալյոն Բորիսիչ,- ասաց Կոկովկինան,- դե ինչպե՞ս նա ընկերների մասին բան կասի: Չէ որ հետո նրան հանգիստ չեն թողնի:

-Նա պարտավոր է ասել,- բարկացած ասաց Պերեդոնովը,- դրանից միայն օգուտ կլինի: Մենք նրանց շտկելու միջոցներ կձեռնարկենք:

-Բայց չէ՞ որ նրանք նրան կծեծեն,- անվստահ ասաց Կոկովկինան:

-Չեն համարձակվի: Եթե նա վախենում է, թող գաղտնի ասի:

-Դե, Սաշենկա, ասա գաղտնաբար: Ոչ մեկը չի իմանա, դու ինչ ես ասել:

Սաշան լուռ լալիս էր: Կոկովկինան նրան դեպ իրեն ձգեց, գրկեց եւ երկար ինչ-որ բան էր շշնջում նրա ականջին: Նա ժխտողաբար գլուխն էր տարուբերում:

-Չի ուզում,- ասաց Կոկովկինան:

-Այ եթե ճիպոտով մի հատ դաղես, լավ էլ կխոսի,- կատաղած ասաց Պերեդոնովը:

-Ինձ ճիպոտ բերեք, ես նրան կստիպեմ խոսել:

-Օլգա Վասիլեւնա, բայց ինչի համար,- գոչեց Սաշան:

Կոկովկինան ելավ ու գրկեց նրան:

-Դե բավ է տգզաս,- ասաց նա քնքուշ ու խիստ,- ոչ մեկը քեզ ձեռք չի տա:

-Ինչպես կուզեք,- ասաց Պերեդոնովը,- բայց միայն թե ես պետք է տնօրենին ասեմ: Ես մտածում էի ընտանեվարի, նրան ավելի լավ կլիներ: Գուցե թե, ձեր Սաշան էլ քոքված է: Դեռ մենք չգիտենք, թե ինչու

են նրան որպես աղջկա ծանակում,- գուցե թե, միանգամայն այլ բանի համար: Գուցե թե, ոչ թե նրան են սովորեցնում, այլ նա է մյուսներին այլասերում:

Պերեդոնովը զայրացկոտ սենյակից դուրս եկավ: Նրա ետքից ելավ եւ Կոկովկինան: Նա կշտամբանքով ասաց.

-Արդալյոն Բորիսիչ, դե այդ ինչու եք դուք տղային, չգիտես թե ինչու համար, ամաչեցնում: Լավ է, որ նա դեռ ձեր խոսքերը չի էլ հասկանում:

-Դե, հաջողություն,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը,- բայց միայն թե ես տնօրենին կասեմ: Դա պետք է քննել:

Նա գնաց: Կոկովկինան գնաց Սաշային մխիթարելու: Սաշան տխուր նստել էր պատուհանի մոտ եւ նայում էր աստղալից երկնքին: Արդեն հանգիստ եւ վշտալի էին նրա սեւ աչքերը: Կոկովկինան լուռ շոյեց նրա գլուխը:

-Ես ինքս եմ մեղավոր,- ասաց նա,- դուրս տվեցի, թե ինչու են ինձ ծաղրում, դե նա էլ կպավ: Նա՝ ամենակոպիտն է: Նրան գիմնազիստներից ոչ մեկը չի սիրում:

Հաջորդ օրը Պերեդոնովն ու Վարվարան տեղափոխվում էին նոր բնակարան: Երշովան կանգնել էր դարպասի արանքում եւ կատաղի վիճում էր Վարվարայի հետ: Պերեդոնովը թաքնվում էր նրանից բեռնասայլերի ետեւում:

Նոր բնակարանում տեղնուտեղը մաղթանք կատարեցին: Ըստ Պերեդոնովի հաշվարկների, անհրաժեշտ էր ցույց տալ, որ ինքը՝ հավատացյալ մարդ է: Մաղթանքի ժամանակ խնկի հոտը, նրա գլուխը պտտեցնելով, նրա մեջ աղոտ տրամադրություն հարուցեց, որ նման էր աղոթելու տրամադրությանը: Մի տարօրինակ հանգամանք շփոթեցրեց նրան: Ինչ-որ տեղից վազ էր տվել անորոշ ուրվագծերով մի փոքրիկ էակ՝ փոքրիկ, գորշ, ժրաշարժ դարձվորյակը: Նա քմծիծաղում եւ դողում եւ պտտվում էր Պերեդոնովի շուրջ: Իսկ երբ նա դեռ դարձվորյակին էր մեկնում ձեռքը, նա արագ խուսանավում, փախչում էր դռնից դուրս, կամ պահարանի տակ, իսկ մի րոպեից նորից էր հայտնվում, եւ դողում, եւ ծաղրում էր՝ գորշ, անդեմ, ժրաշարժ: Վերջապես, երբ արդեն մաղթանքն ավարտվում է, Պերեդոնովը գլխի ընկավ եւ շշուկով հմայաթափվեց: Դարձվորյակը կամաց-կամաց ֆշշացրեց, կուչուկծիկ եղավ եւ գլորվեց դռնից դուրս: Պերեդոնովը թեթեւացած շունչ քաշեց:

«Հա, լավ է, եթե նա լրիվ չքացավ: Իսկ գուցե էթե, նա ապրում է այս բնակարանում, ինչ-որ տեղ հատակի տակ, եւ նորից կսկսի գալ ու ծաղրել»:

Խառն ու տրտում զգաց իրեն Պերեդոնովը: «Ինչի՞ համար է էս ողջ կեղտոտությունը երկրի երեսին»,- մտածեց նա:

Երբ մաղթանքն ավարտվեց, երբ հյուրերը ցրվեցին, Պերեդոնովը երկար մտածում էր այն մասին, թե ուր կարող էր թաքնվել դարձվորյակը: Վարվարան գնաց Գրուշինայի մոտ, իսկ Պերեդոնովը ուղեւորվեց որոնոումների եւ սսկեց տնտղել նրա իրերը:

«Արդյոք գրպանի մեջ չտարա՞վ նրան Վարվարան,- մտածում էր Պերեդոնովը: Արդյոք շա՞տ տեղ է նրան պետք: Կթաքնվի գրպանում եւ կնստի, մինչեւ ժամը գա»:

Վարվարայի զգեստներից մեկը գրավեց Պերեդոնովի ուշադրությունը: Այն բոլորածալերով, ժապավենակապերով, ժապավեններով էր, ասես դիտավորյալ կարված էր, որպեսզի ինչ-որ մեկին թաքցնի:

Պերեդոնովը երկար զննում էր այն, հետո ճիգով, դանակի օգնությամբ, հանեց, մասամբ կտրեց գրպանը, նետեց այն վառարանը, իսկ այնուհետեւ սկսեց պատռել ու մանր կտորների կտրատել ողջ զգեստը: Նրա գլխում աղոտ, տարօրինակ մտքեր էին հածում, իսկ հոգին անհուսալի տրտում էր:

Վարվարան շուտով վերադարձավ,- Պերեդոնովը դեռ բզկտում էր զգեստի մնացուկները: Նա մտածեց, թե նա հարբած է, ե սկսեց վիճել: Պերեդոնովը երկար լսում էր եւ վերջապես ասաց.

-Ի՞նչ ես հաչում, հիմար: Դու, գուցե թե, գրպանում գրող ես կրում: Չէ որ ես պիտի հոգ անեմ, թե ինչ է էստեղ կատարվում:

Վարվարան ապշեց: Թողած տպավորությունից գոհ, նա փութաց գտնել գդակն ու գնաց բիլիադ խաղալու: Վարվարան դուրս թռավ նախասենյակ եւ, քանի դեռ Պերեդոնովը վերարկուն էր հագնում, ճչում էր:

-Այդ դու ես, միգուցե, գրող գրպանումդ կրում, ես ոչ մի գրող էլ չունեմ: Ես քեզ որտեղի՞ց գրող գտնեմ: Միթե պատվերով Հոլանդիայից դուրս գրեմ:

***

Երիտասարդ չինովնիկ Չերեպնինը, հենց նա, ում մասին պատմում էր Վերշինան, թե նա ծիկրակում էր պատուհանից, սկսել էր, երբ Վերշինան այրիացել էր, սիրահետել նրան: Վերշինան դեմ չէր երկրորդ անգամ ամուսնանալուն, բայց Չերեպնինը նրան չափազանց չնչին էր թվում: Չերեպնինը չարացել էր: Նա ուրախությամբ տրվեց Վերշինայի դարպասները ծյութով ներկելու Վոլոդինի հորդորներին:

Համաձայնվեց, իսկ հետո մտորմունքի մեջ ընկավ: Իսկ եթե բռնե՞ն: Անհարմար է, ամեն դեպքում չինովնիկ է: Նա որոշեց այդ գործը ուրիշների վրա գցել: Քսանհինգ կոպեկով նա կաշառեց դեռահաս-թոքից փախածների, նա նրանց եւս հինգ կոպեկ խոստացավ,եթե նրանք անեն այդ,- եւ մի մթին գիշեր գործն արվեց:

Եթե ինչ-որ մեկը Վերշինայի տանը կեսգիշերից հետո բացեր պատուհանը, ապա նա կլսեր կամրջակների վրա բոբիկ ոտքերի շրշյուն, կամացուկ փսփսոց, եւ նաեւ ինչ-որ մեղմ ձայներ, համանման այն բանին, ասես թե ծածկել էին ցանկապատը: Հետո թեթեւ զրնգոց, միեւնույն ոտքերի թփթփոցը, ավելի արագ ու արագ, հեռավոր քրքիջ, շների տագնապալից հաչոցը:

Բայց ոչ մեկը պատուհանը չբացեց: Իսկ առավոտյան: Դռնակը, այգու եւ բակի մոտի ցանկապատը բծոտած էին ծյութի դեղնադարչնագույն հետքերով: Դարպասի վրա ծյութով կոպիտ բառեր էին գրված: Անցորդները ախ քաշում ու ծիծաղում էին, լուրը տարածվեց, գալիս էին հետաքքրասերները:

Վերշինան արագ քայլում էր այգում, ծխում էր, սովորականից ավելի ծուռ էր ժպտում, զայրագին բառեր էր քրթմնջում: Մարթան տնից դուրս չէր գալիս եւ դառը լալիս էր: Աղախին Մարյան ջանում էր մաքրել ծյութը եւ բարկացկոտ վիճում էր հետաքրքրասեր նայողների, աղմկողների եւ քրքջացողների հետ:

***

Չերեպնինը նույն օրը պատմեց Վոլոդինին, թե ով է այդ արել: Վոլոդինը տեղնուտեղն անհապաղ հաղորդեց այդ Պերեդոնովին: Նրանք երկուսն էլ գիտեին այդ տղեկներին, ովքեր հայտնի էին իրենց հանդուգն չարաճճիություններով:

Պերեդոնովը, բիլիարդ խաղալու ուղեւորվելիս, մտավ Վերշինայի մոտ: Թխպոտ օր էր: Վերշինան եւ Մարթան նստած էին հյուրասենյակում

-Ձեր դարպասներին ծյութ են քսել,- ասաց Պերեդոնովը:

Մարթան կարմրեց: Վերշինան փութկոտ պատմեց, թե ինչպես իրենք ելան եւ տեսան, որ իրենց ցանկապատի վրա ծիծաղում են, եւ թե ինչպես էր Մարյան լվանում ցանկապատը: Պերեդոնովն ասաց.

-Ես գիտեմ, ով է այդ արել:

Վերշինան տարակուսած նայում էր Պերեդոնովին:

-Դե իսկ ինչպե՞ս դուք իմացաք:

-Դե իմացա:

-Դե ով է, ասեք,- բարկացկոտ հարցրեց Մարթան:

նա լիովին գեշացավ, որովհետե հիմա նա կարմրած ուռած կոպերով չար արցունքոտ աչքեր ուներ: Պերեդոնովը պատասխանում էր.

-Ես կասեմ, իհարկե, հենց դրա համար էլ եկել եմ: Այդ սրիկաներին պետք է դաս տալ: Միայն թե դուք պետք է խոստանաք, որ ոչ մեկին չեք ասի, թե ումից եք իմացել:

-Դե իսկ ինչո՞ւ էդպես, Արդալյոն Բորիսիչ,- զարմացած հարցրեց Վերշինան:

Պերեդոնովը նշանակալից լռեց, հետո ի բացատրություն ասաց.

-Դրանք էնպիսի կռվազաններ են, որ գլուխ կջարդեն, թե իմանան ով է իրենց մատնել:

Վերշինան խոստացավ լռել:

-Դուք էլ մի ասեք, որ այդ ես եմ ասել,- դիմեց Պերեդոնովը Մարթային:

-Լավ, ես չեմ ասի,- փութկոտ համաձայնվեց Մարթան, որովհետեւ կամենում էր շուտ իմանալ մեղավորների անունները:

Նրան թվում էր, որ նրանց հարկ էր ենթարկել տանջալից եւ անարգալից պատժի:

-Ոչ դուք ավելի լավ է երդվեք,- վախվորած ասաց Պերեդոնովը:

-Դե ահա Աստված վկա, ոչ մեկին չեմ ասի,- վստահեցնում էր Մարթան - միայն թե դուք շուտ ասեք:

Իսկ դռան ետեւում ականջ էր դնում Վլադյան: Նա ուրախ էր, որ գիտի ընկավ հյուրասենյակ չմտնել՝ նրան չեն ստիպի խոստում տալ, եւ նա

կարող է ում ասես ասել: Եւ նա ժպտում էր ուրախութունից, որ ադպես Պերեդոնովից վրեժ կլուծի:

-Ես երեկ ժամը մեկին եր փողոցով տուն էի վերադառնում,- պատմում էր Պերեդոնովը,- հանկարծ լսում եմ, ձեր դարպասների մոտ ինչ-որ մեկը տնտնում է: Ես սկզբում մտածեցի, թե գողեր են: Մտածում եմ, թե ինչ անեմ: Հանկարծ լսում եմ, վազեցին, եւ ուղիղ ինձ վրա: Ես պատին սեղմվեցի, նրանք ինձ չէին տեսնում եւ ես նրանց ճանաչեցի: Մեկի ձեռքին վրձին է, մյուսի մոտ՝ դույլ: Հայտնի սրիկաներ են, փականագործ Ավդեեւի տղաները: Վազում են, եւ մեկը մյուսին ասում է՝ գիշերը զուր չանցկացրինք, հիսունհինգ կոպեկ աշխատեցինք: Ես այն է ուզում էի մեկին պահել եւ մեկ էլ վախեցա, թե մռութս կներկեն, դե նաեւ նոր վերարկուով էի:

***

Հազիվ էր Պերեդոնովը գնացել, Վերշինան բողոքով ուղեւորվեց ոստիկանապետի մոտ: Ոստիկանապետ Մինչուկովը քաղաքապահ ոստիկանին ուղարկեց Ավդեւեի եւ նրա տղաների ետեւից: Տղաները համարձակ եկան, նրանք մտածում էին, որ իրենց կասկածում են նախկին չարաճճիություններում: Ավդեեւը մռայլ, երկայնահասակ ծերունին, ընդհակառակը, լիովին վստահ էր, որ իր տղաները ինչ-որ մի ստորություն արել են: Ոստիկանապետը պատմեց Ավդեեւին, թե ինչում են մեղադրվում իր տղաները: Ավդեեւն ասաց.

-Ես նրանցից գլուխ չեմ հանում: Ինչ ուզում եք, էն էլ նրանց հետ արեք, իսկ ես արդեն ձեռքերս նրանց վրա ջարդել եմ:

-Դա մեր գործը չի,- վճռականորեն հայտարարեց ավագը, գզուզ, շիկահեր մի տղա, Նիլը:

-Ով ինչ անի, ամեն ինչ մեր վրա են գցում,- լացակումած ասաց փոքրը, նույնքան գզուզ, բայց ճերմակագլուխ, Իլյան:- Դե ինչ, քանի որ չարճիություն են արել, դե ուրեմն, արի ու ամեն ինչի համար պատասխան տուր:

Մինչուկովը քաղցր ժպտաց, գլուխը տարուբերեց ու ասաց.

-Իսկ դուք ավելի լավ է անկեղծորեն խոստովանեք:

-Բան չունենք,- կոպիտ ասաց Նիլը:

-Բան չունե՞ք: Իսկ հիսունհինգ կոպեկ ո՞վ է տվել ձեզ աշխատանքի

համար, հը՞:

Եւ, տեսնելով տղաների բոպեական իրարանցումից, որ նրանք մեղավոր են, Մինչուկովը Վերշինային ասաց.

-Դե արդեն երեւում է, որ նրանք են:

Տղաները նորից սկսեցին հերքել: Նրանց տարան խորդանոց՝ ծեծելու: Ցավին չդիմանալով, նրանք մեղքն ընդունեցին: Բայց եւ խոստովանելով, չէին ուզում ասել, թե ումից էին դրա համար փող ստացել:

-Ինքներս ենք սարքել:

Նրանց հերթով քոթակեցին, չփութալով, մինչեւ որ նրանք ասացին, որ իրենց Չերեպնինն է կաշառել: Տղաներին հանձնեցին հորը: Ոստիկանապետը Վերշինային ասաց.

-Դե ահա, մենք նրանց պատժեցինք, այսինքն հայրը նրանց պատժեց, դուք գիտեք, թե ով է այդ արել:

-Ես չեմ թողնի, որ Չերեպնինն այդ մարսի,- ասում էր Վերշինան,- ես նրան դատի կտամ:

-Խորհուրդ չեմ տա, Նատալյա Աֆանասեւնա,- հեգաբարո ասաց Մինչուկովը - ավելի լավ է ձեռք քաշեք:

-Ինչպե՞ս թե ներեմ էդպիսի սրիկաներին, դե ոչ մի կերպ,- գոչեց Վերշինան:

-Կարեւորը, ոչ մի հանցանշան չկա,- հանգիստ ասաց գավառաոստիկանապետը:

-Ինչպես թե՞ ոչ մի, եթե իրենք տղաները խոստովանեցին:

-Շատ էլ խոստովանեցին, իսկ դատավորի առաջ կսկվեն,- չէ որ էնտեղ նրանց չեն սկսի քոթակել:

-Ինչպես թե կսկվեն: Քաղաքապահ ոստիկանները՝ վկա՝ ասաց Վերշինան արդեն ոչ այնքան վստահ:

-Դե ի՞նչ վկաներ: Եթե մարդու կաշին քերթեն, ապա նա ամեն ինչ կխոստովանի, ինչը որ չի էլ եղել: Նանք, իհարկե, սրիկաներ են, դե նրանց էլ հասավ, իսկ դրանով նրանց հախից չես գա:

Մինչուկովը քաղցր ժպտում եւ հանգիստ նայում էր Վերշինային:

Վերշինան գնաց ոստիկանապետի մոտից շատ դժգոհ, բայց, մտածելով, համաձայնվեց, որ Չերեպնինին մեղադրելը շատ դժվար էր եւ որ դրանից կարող է միայն ավելորդ հռչակում եւ խայտառակություն լինել:

XIII

Երեկոյան կողմ Պերեդոնովը հայտնվեց տնօրենի մոտ,- գործով խոսելու:

Տնօրենը, Նիկոլայ Վասիլեւիչ Խրիպաչը, կանոնների որոշակի թիվ ուներ, որոնք այնքան հարմար էին կցվում կյանքին, որ դրանցով առաջնորդվելն ամենեւին էլ ծանրացուցիչ չէր: Ծառայության մեջ նա հանգիստ կատարում էր այն ամենը, ինչ պահանջվում էր ղեկավարության օրենքներով կամ կարգադրություններով, ինչպես նաեւ ընդունված չափավոր լիբերալիզմի կանոններով: Այդու ղեկավարությունը, ծնողներն ու աշակերտները տնօրենից հավասարապես գոհ էին: Կասկածելի դեպքեր, անվստահություն, տատանումներ նա չէր ճանաչում, դե եւ ինչի՞ են պետք դրանք, միշտ կարելի է հենվել կամ մանկավարժական խորհրդի վճռի կամ ղեկավարության կարգադրագրերի վրա: Նույնքան է ճիշտ եւ հանգիստ էր նաեւ անձնական հարաբերություններում:: Հենց արտաքինը նրա բարեհոգության եւ տոկունության տեսք ուներ՝ոչ բարձրահասակ ամրակազմ, շարժուն, աշխույժ աչքերով ու վստահ խոսքով մի մարդ, ոը վատ չէր դասավորվել եւ մտադիր է ավելի լավ դասավորվել: Նրա գրասենյակում՝ գրադարակներում շատ գրքեր կային. որոշներից նա քաղվածքներ էր անում: Երբ այդ քաղվածքները բավականաչափ կուտակվում էին, նա կարգով դասդասում էր դրանք ու իր խոսքերով վերապատմում էր,- եւ ահա կազմվում էր դասագիրքը, տպվում եւ տարածվում էր, ոչ այնպես, ինչպես տարածվում էին Ուշինսկու կամ Եւտուշեւսկիի գրքույկները, բայց այդուհանդերձ լավ: Երբեմն նա կազմում էր, գերազանցապես արտասահմանյան գրքույկներով, բանաքաղություն, պատկառելի եւ նույնպես ոչ մեկին պիտանի, եւ ադ տպագրում էր ամսագրում, նույնպես պատկառելի եւ ոչ մեկին պիտանի: Նա շատ երեխաներ ուներ, եւ նրանք բոլորը, արդեն տարատեսակ տաղանդների սաղմեր էին դրսեւորում՝ ով բանաստեղծություն էր գրում, ով նկարում էր, ով արագ հաջողությունների էր հասնում երաժշտության մեջ: Պերեդոնովը մռայլ ասում էր.

-Ահա դուք բոլորդ հարձակվում եք ինձ վրա, Նիկոլայ Վասիլեւիչ: Ձեզ ինձանից, գուցե թե, բամբասում են, իսկ ես ոչ մի էդպիսի բան չեմ անում:

-Կներեք,- ընդհատեց տնօրենը,- ես չեմ կարողանում հասկանալ,

թե ինչ բամբասանքների մասին եք դուք հաճում հիշատակել: Ինձ վստաված գիմնազիայի ղեկավարման գործում ես ղեկավարվում եմ իմ սեփական զննումներով եւ համարձակվում եմ հուսալ, որ իմ ծառայողական փորձառությունը բավ է այն բանի համար, որպիսի ատշաճ ճշտությամբգ գնահատեմ այն, ինչ ես տեսնում եւ լսում եմ առավել եւս, գործի այն ուշադիր վերաբերմունքի դեպքում, ինչը ես ինձ համար պարտադիր կանոն եմ համարում,- ասում էր Խրիպաչը արագ եւ հստակ, եւ ձայնը նրա հնչում էր չոր եւ պարզ, համանման ցինկե ձողերի ճարճատյունին, երբ դրանք ծռում են:- Իսկ ինչ վերաբերում է ձեր մասին իմ անձնական կարծիքին, ապա ես այժմ էլ շարունակում եմ կարծել, որ ձեր ծառայողական գործունեության մեջ տհաճ բացեր են դրսեւորվում:

-Այո - մռայլ ասաց Պերեդոնովը,- դուք գուխներդ մտցրել եք, թե ես բանի պետք չեմ, իսկ ես մշտապես գիմնազայի մասին եմ հոգ տանում:

Խրիպաչը զարմանքով հոնքերը բարձրացրեց ե հարցական նայեց Պերեդոնովին:

-Դուք չեք նկատում,- շարունակում էր Պերեդոնովը,- որ մեզ մոտ գիմնազիայում կարող է խայտառակություն լինել,- եւ ոչ մեկը չի նկատում, միայն ես եմ նկատել:

-Ի՞նչ խայտառակություն,- չորուկ ծիծաղով հարցրեց Խրիպաչը եւ ճարպկորեն քայլեց գրասենյակով մեկ:- Դուք քսություն եք անում, թեպետ, անկեղծ ասեմ, ես քիչ եմ հավատում մեր գիմանազիայում խայտառակության հնարավորությանը:

-Այո, իսկ ահա դուք չգիտեք, դե հիմա ում եք ընդունել,- ասաց Պերեդոնովը այնպիսի չարախնդությամբ, որ Խրիպաչը կանգ առավ եւ ուշադիր նայեց նրան:

-Բոլոր կրկին ընդունվածները՝ հաշվառման մեջ են,- չորուկ ասաց նա:- Ընդ որում առաջին դասարան ընդունվածները, հավանաբար, դեռ հանված չէին այլ գիմնազայից, իսկ միակը, որ հինգերորդ դասարան է ընդունվել, մեզ մոտ ժամանեց այնպիսի հանձնարարականներով, որոնք բացառում են անշահեկան ենթադրությունների հնարավորությունը:

-Այո, միայն թե նրան ոչ թե մեզ է պետք հանձնել, այլ ուրիշ հաստատություն,- մռայլ, ասես չուզենալով, քրթմնջաց Պերեդոնովը:

-Բացատրեք, Արդալյոն Բորիսիչ, խնդրում եմ ձեզ,- ասաց Խրիպաչը:- Հուսով եմ, որ դուք չեք կամենում ասել, որ Պիլնիկովին հարկ է ուղարկել անչափահաս հանցագործների գաղութ:

-Ոչ, այդ անասունին պետք է ուղարկել առանց հին լեզուների գիշերօթիկ դպրոց,- զայրացկոտ ասաց Պերեդոնովը, եւ նրա աչքերը չարությամբ փայլեցին:

Խրիպաչը ձեռքը տնային կարճլիկ կոստյումի գրպանը խոթելով, արտասովոր զարմանքով նայում էր Պերեդոնովին:

-Ի՞նչ գիշերօթիկ,- հարցրեց նա:- Արդյոք ձեզ հայտնի՞ է, թե որ հաստատություններն են այդպես կոչվում: Եւ եթե հայտնի է, ապա ինչպե՞ս դուք վճռեցիք այդպիսի անպատշաճ համեմատություն անել:

Խրիպաչը սաստիկ կարմրեց, եւ ձայնը նրա հնչում ր էլ ավելի չոր ու հստակ: Այլ ժամանակներում տնօրենի զայրույթի նշանները նրան շփոթության մեջ էին նետում: Բայց հիմա նա չէր շփոթվում:

-Դուք բոլորդ կարծում եք, որ դա՝ տղա է,- ասաց նա, քմծիծաղոտ աչքերը կկոցելով,- դե ահա եւ տղա չի, այլ աղջնակ, դե էն էլ ինչպիսի:

Խրիպաչը կարճատեւ եւ չոր ծիծաղեց, ասես սարքովի ծիծաղով, զրնգուն եւ հստակ,- նա միշտ էլ այդպես էր ծիծաղում:

-Հա, հա, հա,- հստակ անում էր նա, նստեց բազկաթոռին ե գլուխը ետ տարավ, ասես ծիծաղից ընկնելով:- Այ թե զարմացրիք դուք ինձ, պատվարժան Արդալյոն Բորիսիչ, հա-հա-հա: Ասացեք ինձ, բարի եղեք, դուք ինչով եք հիմնավորում ձեր ենթադրությունը, եթե կանխադրույթները, որոնք ձեզ այդ եզրակացության հանգեցրին, գաղտնիք չէ, հա-հա-հա:

Պերեդոնովը պատմեց այն ամենը, ինչ լսել էր Վարվարայից, եւ ձեռքի հետ ծավալվեց Կոկովկինայի վատ հատկանիշների մասին: Խրիպաչը լսում էր, ժամանակ առ ժամանակ պայթելով չոր, հստակ ծիծաղով:

-Ձեզ մոտ, սիրելի Արդալյոն Բորիսիչ, երեւակայությունը սկսել է տարուբերվել,- ասաց նա, ելավ եւ թփթփացրեց Պերեդոնովի թեւքին: Իմ հարգելի ընկերներից շատերը, ինչպես եւ ես, ունեն իրենց երեխաները, մենք առաջին տարին չէ, որ ապրում ենք, եւ մի՞թե դուք կարծում եք, թե կարող էինք տղայի տեղ ընդունել զգեստափոխված աղջկա:

-Ահա դուք էդպես եք դրան վերաբերվում, իսկ եթե մի բան դուրս

գա, ապա ո՞վ մեղավոր կլինի,- հարցրեց Պերեդոնովը:

-Հա-հա-հա,- ծիծաղեց Խրիպաչը,- իսկ դուք ի՞նչ հետեւանքներից եք զգուշանում:

-Գիմնազիայում անառակություն կսկսվի:

-Դուք չափազանց հեռուն եք գնում: Այն ամենը, ինչ-որ դուք մինչեւ այժմ ինձ ասել եք, դույզն ինչ առիթ չի տալիս կիսելու ձեր կասկածները:

***

Հենց նույն երեկո Պերեդոնովը փութանակի անցավ բոլոր ծառայակիցների մոտ, տեսուչից մինչեւ դասարանային դաստիրարակների օգնականները, եւ բոլորին պատմում էր, որ Պիլնիկովը՝ զգեստափոխված օրիորդ է: Բոլորը ծիծաղում եւ չէին հավատում, բայց շատերը, երբ նա գնում էր, տարակուսանքի մեջ էին հայտնվում: Ուսուցիչների կանայք, դե նրանք համարյա թե մեկեն հավատացին:

Հաջորդ առավոտ արդեն շատերը եկան դասի այն մտքով, որ Պերեդոնովը, գուցե թե, եւ ճիշտ է: Բացահայտ այդ չէին ասում, բայց արդեն եւ Պերեդոնովի հետ չէին վիճում եւ սահմանափակվում էին անվճռական եւ երկիմաստ պատասխաններով՝ յուրաքանչյուրը վախենում էր, որ իրեն հիմար կհամարեն, եթե նա սկսի վիճել, իսկ հանկարծ ու պարզվի, որ դա՝ ճիշտ է: Ծատերը կուզենային լսել, թե ինչ է այդ մասին ասում տնօրենը, բայց տնօրենը, սովորականի նման, իր սենյակից բնավ չէր ելնում, միայն եկավ, շատ ուշացած, այդ օրն իր միակ դասին վեցերորդ դասարանում, նստեց այնտեղ ավելորդ մի հինգ րոպե եւ գնաց ուղիղ իր մոտ, ոչ մեկի աչքին չերեւալով:

Վերջապես, չորրորդ դասից առաջ ճերմակահեր կրոնուսույցը եւ եւս երկու ուսուցիչ գնացին տնօրենի գրասենյակ ինչ-որ գործի պատրվակով, եւ տեր հայրը խոսակցություն բացեց Պիլնիկովի մասին: Բայց տնօրենը այնքան վստահ եւ պարզասիրտ ծիծաղեց, որ երեքն էլ մեկեն համոզվեցին, որ այդ ամենը՝ անհեթեթություն է: Իսկ տնօրենն արագ անցավ այլ թեմաների, պատմեց թարմ քաղաքային նորությունը, բողոքեց սաստկագույն գլխացավից եւ ասաց, որ, երեւի թե, ստիպված կլինի հրավիրելու հարգարժան Եւգենի Իվանովիչին, գիմնազիայի բժշկին: Այնուհետեւ շատ բարեհամբույր տոնով պատմեց, որ այսօր

դասն ավելի սաստկացրեց իր գլխացավը, քանի որ անպես պատահեց, որ կողքի դասարանում Պերեդոնովն էր, եւ գիմնազիստներն այնտեղ չգիտես ինչու հաճախ եւ անսովոր բարձր ծիծաղում էին: Իր չոր ծիծաղով Խրիպաչն ասաց.

-Այս տարի ճակատագիրն իմ հանդեպ ողորմած չէ, շաբաթը երեք անգամ ստիպված եմ լինում նստել այն դասարանի կողքին, որտեղ պարապում է Արդալյոն Բորիսիչը, եւ, պատկերացրեք, մշտապես քրքջոց է, դե այն էլ ինչպիսին: Դե թվում էր, Արդալյոն Բորիսիչը ծիծաղկոտ մարդ չէ, բայց միշտ ինչ-որ զվարթություն է հարուցում:

Եւ չթողնելով, որ որեւէ մեկը դրան ինչ-որ բան պաասխանի, Խրիպաչը դարձյալ անցավ այլ թեմայի:

Իսկ Պերեդոնովի դասերին վերջերս իրոք շատ էին ծիծաղում,- եւ ոչ այն պատճառով, որ դա նրան դուր էր գալիս: Ընդհակառակը, մանկական ծիծաղը գրգռում էր Պերեդոնովին: Բայց նա չէր կարողանում իրեն զսպել, որպեսզի ինչ-որ ավելորդ, անպատշաճ բան չասեր՝ մեկ հիմար անեկդոտ կպատմի, մեկ կսկսի ծանակել ինչ-որ ավելի համեստ մեկին: Դասարանում միշտ գտնվում էին մի քանիսը, որոնք ուրախ էին անկարգություն անելու համար,- եւ ամեն մի այդպիսի դեպքում Պերեդոնովի վրա անգուսպ ծիծաղ էին բարձրացնում:

Դասերի ավարտին Խրիպաչը ուղարկեց բժշկի ետեւից, իսկ ինքը վերցրեց գլխարկն ոուղեւորվեց այգի, որ ընկած էր գիմնազիայի եւ գետի միջեւ: Այգին ընդարձակ ու նեղլիկ էր: Փոքրիկ գիմնազիստները սիրում էին այն: Նրանք այնտեղ դասամիջոցների ժամանակ ազատ վազվզում էին: Այդ պատճառով դասարանային դաստիարակների օգնականներն այդ այգին չէին սիրում: Նրանք վախենում էին, որ երեխաների հետ ինչ-որ բան կպատահի: Իսկ Խրիպաչը պահանջում էր, որպեսզի դասամիջոցների ժամանակ երեխաներն այնտեղ լինեին: Դա նրան պետք էր հաշվետվություններում գեղեցկության համար:

Անցնելով միջանցքով, Խրիպաչը կանգ առավ գիմնազիայի սրահ տանող բաց դռան մոտ, կանգնեց, գլուխը հակելով, եւ մտավ: Նրա անուրախ դեմքից եւ դանդաղ քայլքից բոլորն արդեն գիտեին, որ նրա գլուխը ցավում է:

Հինգերորդ դասարանը հավաքվում էր մարմնամարզության: Մի շարքով կանգնեցին, եւ տեղի պահեստային գումարտակի մարմնա-

մարզության ուսուցիչը, պատրաստվում էր ինչ-որ բան կարգադրել, բայց, տեսնելով տնօրենին գնաց նրան ընդառաջ: Տնօրենը սեղմեց նրա ձեռքը, մտացիր նայեց գիմնազիստներին ու հարցրեց.

-Դուք նրանցից գո՞հ եք: Ինչպե՞ս են նրանք, ջանո՞ւմ են Չե՞ն խոնջանում:

Պորուչիկը հոգու խորքում խորապես քամահրում էր գիմնազիստներին, որոնց մոտ, ըստ իր կարծիքի, զինվորական կեցվածք չկար ու չէր կարող լինել: Եթե նրանք կադետներ լինեին, ապա նա ուղղակի կասեր, թե ինչ էր նրանց մասին մտածում: Բայց այս դանդաղկոտների մասին չարժեր տհաճ ճշմարտությունն ասել մի մարդու, որից կախված էին իր դասերը:

Եւ նա, հաճելի ժպտալով նրբին շուրթերով եւ նայելով տնօրենին սիրալիր եւ զվարթ, ասաց.

Օ, այո, փառավոր երեխեք են:

Տնօրենը ճակատի կողմով մի քանի քայլ արեց, շրջվեց դեպի ելքն ու հանկարծ կանգ առավ, ասես ինչ-որ բան հիշելով:

-Իսկ մեր նոր աշակերտից դուք գո՞հ եք: Ինչպե՞ս է նա, ջանո՞ւմ է: Չի ուժասպառվում,- հարցրեց նա ծույլ եւ խոժոռադեմ ձեռքը տարավ ճակատին:

Պորուչիկը բազմազանության համար եւ մտածելով որ չէ որ դա՝ օտար է, կողքից ինչ-որ գիմնազիստ, ասաց.

-փոքր ինչ ալարկոտ է, մեկ էլ, շուտ է հոգնում:

Բայց տնօրենն արդեն նրան չէր լսում ու դահլիճից դուրս էր գալիս:

Դրսի օդը, հավանաբար, Խրիպաչին քիչ թարմացրեց: Մի կես ժամից նա վերադարձավ եւ նորից, մի կես րոպե կանգնելով դռան մոտ, մտավ դասի: Պիտույքների վրա վարժություններ էին անում: Երկու-երեք դեռեւս չզբաղված գիմնազիստ, տնօրենին չնկատելով, կանգնել էին, հենվելով պատին, օգտվելով այն բանից, որ պորուչիկն իրենց չէր նայում: Խրիպաչը մոտեցավ նրանց:

-Հա, Պիլնիկով,- ասաց նա - դե ինչո՞ւ եք դուք պառկել պատին:

Սաշան վառ կարմրեց, ձգվեց ու լռում էր:

-Եթե դուք այդպես ուժասպառվում եք, գուցե թե, մարմնամարզությունը ձեզ վնա՞ս է,- խիստ հարցրեց Խրիպաչը:

-Մեղավոր եմ, ես չեմ հոգնել,- վախեցած ասաց Սաշան:

-երկուսից մեկը,- շարունակում էր Խրիպաչը,- կամ չմասնակցել մարմնամարզության դասերին, կամ... Սակայն, դասերից հետո անցեք ինձ մոտ:

Նա փութանակի գնաց, իսկ Սաշան կանգնել էր, շփոթված, վախեցած:

-Պատժվեցիր,- ասում էին նրան ընկերները,- նա քեզ մինչեւ երեկո շշպռելու է:

Խրիպաչը սիրում էր երկարատեւ նկատողություններ անել, եւ գիմնազիստներն ամենից շատ վախենում էին նրա հրավերներից:

Դասերից հետո Սաշան երկչոտ ուղեւորվեց տնօրենի մոտ: Խրիպաչը նրան անհապաղ ընդունեց: Նա արագ մոտեցավ, ասես կարճլիկ ոտքերի վրա սահեց Սաշայի մոտ, կիպ մոտեցավ նրան եւ ուշադիր աչքերի մեջ նայելով, հարցրեց.

-Ձեզ, Պիլնիկով, իրո՞ք հոգնեցնում են մարմնամարզության դասերը: Դուք արտաքնապես բավական առողջ տղա եք, բայց «արտաքինը երբեմն խաբուսիկ է լինում»: Դուք ինչ-որ հիվանդություն ունե՞ք: Գուցե թե, ձեզ վնաս է մարմնամարզությամբ զբաղվելը:

-Ոչ, Նիկոլայ Վասիլեւիչ, ես առողջ եմ,- պատասխանում էր Սաշան, շվարմունքից ամբողջովին կարմիր:

-Սակայն,- առարկեց Խրիպաչը,- Ալեքսեյ Ալեքսեւիչն էլ է բողոքում ձեր ալարկոտությունից եւ այն բանից, որ դուք շուտ եք հոգնում, եւ ես էլ այսօր դասին նկատեցի, որ դուք հոգնած տեսք ունեք: Կամ ես, գուցե թե, սխալվեցի՞:

Սաշան չգիտեր, որ թաքցնի իր աչքերը Խրիպաչի թափանցող հայացքից: Նա մոլորված քրթմնջում էր.

-Կներեք, ես չեմ անի, ես էնպես, պարզապես ծուլացա կանգնել Ես, ճիշտ որ, առողջ եմ: Ես ջանադրաբար մարմամարզությամբ զբաղվեմ:

Հանկարծ, իր համար էլ լրիվ անսպասելի, նա արտասվեց:

-Ահա տեսնում եք,- ասաց Խրիպաչը,- դուք, ակնհայտորեն, հոգնած եք՝ դուք լալիս եք, կարծես թե ես ձեզ խիստ նկատողություն եմ արել: Հանգստացեք:

Նա ձեռքը դրեց Սաշայի ուսին ու ասաց.

-Ես ձեզ հանդիմանելու համար չեմ կանչել, այլ որպեսզի բացատրեմ... Դե դուք նստեք, Պիլնիկով, ես տեսնում եք, դուք հոգնել եք:

Սաշան փութանակի թաշկինակով թաց աչքերը սրբեց ու ասաց.

-Ես բոլորովին չեմ հոգնել:

-Նստեք, նստեք,- կրկնեց Խրիպաչը եւ աթոռը Սաշայի մոտ բերեց:

-Ճիշտ որ, ես չեմ հոգնել, Նիկոլայ Վասիլեւիչ,- հավատացնում էր Սաշան:

Խրիպաչը բռնեց նրա ուսերից, նստեցրեց, ինքն էլ նստեց նրա դիմաց ու ասաց.

-Հանգիստ խոսենք, Պիլնիկով: Դուք ինքներդ էլ չեք կարող իմանալ ձեր առողջության իրական վիճակը՝ դուք - բոլոր առումներով ջանադիր ու լավ տղա եք, այդ պատճառով ինձ համար լիովին հասկանալի է, որ դուք չէիք ուզում մարնամարզության դասերից ազատվել: Ի դեպ, ես այսօր խնդրեցի Եւգենի Իվանովիչին գալ ինձ մոտ, քանի որ ինքս էլ վատ եմ զգում: Դե ահա նա ձեզ էլ կնայի: Հուսով եմ, դուք դրա դեմ ոչինչ չունեք:

Խրիպաչը նայեց ժամացույցին եւ, պատասխանի չսպասելով, Սաշայի հետ խոսեց այն մասին, թե ինչես է ինքն ամառն անցկացրել:

Շուտով հայտնվեց Եւգենի Իվանովիչ Սուրովցեւը, գիմնազիայի բժիշկը, փոքրամարմին, սեւուկ, ժրաշարժ մի մարդ, քաղաքականության եւ նորությունների մասին խոսակցությունների սիրահար: Նա մեծ գիտելիքներ չուներ, բայց նա հիվանդներին ուշադիր էր վերաբերվում, դիետան եւ հիգիենան նախընտրում էր դեղերից եւ այդու հաջող էր բուժում:

Սաշային կարգադրեցին հանվել: Սուրովցեւը ուշադիր զննեց նրան եւ ոչ մի արատ չգտավ, իսկ Խրիպաչը համոզվեց, որ Սաշան ոչ մի օրիորդ էլ չի: Թեպետ եւ նախկինում էլ համոզված էր դրանում, բաց օգտակար էր համարում, որպեսզի հետագայում, եթե հարկ լինի պատասխանել շրջանի հարցումներին, գիմնազիայի բժիշկը կարողանար առանց ավելորդ տեղեկանքների հաստատել այդ:

Սաշային բաց թողնելով, Խրիպաչը նրան սիրալիր ասաց.

- Հիմա, երբ մենք գիտենք, որ դուք առողջ եք, ես Ալեքսեյ Ալեքսեւիչին կասեմ, որ ձեզ ամենեւին չխնայի:

***

Պերեդոնովը չէր կասկածում, որ գիմնազիստներից մեկի մեջ աղջկա բացահայտումը ղեկավարության ուշադրությունը կգրավի եւ որ, բացի պաշտոնի բարձրացումից, նրան շքանշան էլ կտան: Դա քաջալերում էր նրան զգոն նայել գիմնազիստների վարքին: եւ այն էլ որ եղանակը մի քանի օր շարունակ մռայլ ու պաղ էր, բիլիարդի վատ էին հավաքվում,- մնում էր քայլել քաղաքով մեկ եւ այցելել աշակերտների բնակարանները եւ նույնիսկ այն գիմնազիստներին, ովքեր ապրում էին ծնողների հետ:

Պերեդոնովն ընտրում էր փոքր ինչ հասարակ ծնողներին՝ կգա, տղայից կբողոքի, նրան կքոթակեն,- եւ Պերեդոնովը գոհ է: Այդպես նա ամենից առաջ բողոքեց Իոսիֆ Կրամարենկոյից նրա հորը, որ քաղաքում գարեջրի գործարան էր պահում,- ասաց, որ Իոսիֆը եկեղեցում չարաճճիություններ է անում: Հայրը հավատաց ու պատժեց որդուն: Հետո նույն բախտին արժանացան եւս մի քանիսը: Նրանց մոտ, ովքեր, ըստ Պերեդոնովի կարծիքի, կսկսեին իրենց որդիների պաշտպանել, նա չէր էլ գնում՝ մեկ էլ տեսար շրջան բողոք գրեն:

Ամեն օր նա այցելում էր դե թեկուզ մի աշակերտական բնակարան: Այնտեղ նա իրեն ղեկավարի նման էր պահում՝ շշպռում, կարգադրում, սպառնում էր: Բայց այնտեղ գիմնազիստներ իրենց ավելի ինքնորույն էին զգում եւ երբեմն ծաղրում էին Պերեդոնովին: Սակայն Ֆլավցկայան, եռանդուն,բարձրահասակ եւ ժիր ռնգածայն մի տիկին, ըստ Պերեդոնովի ցանկության, ցավոտ քոթակեց իր փոքրիկ կենվորին, Վլադիմիր Բուլտյակովին:

Հաջորդ օրը դասարաններում Պերեդոնովը պատմեց իր սխրանքների մասին: Ազգանուններ չէր տալիս, բայց նրա զոհերը իրենք էին մատնում իրենց՝ շփոթվածությամբ:

XIV

Լուրերն այն մասին, որ Պիլնիկովը օրիորդ է, արագ տարածվեցին քաղաքով մեկ: Առաջիններից իմացան Ռուտիլովները: Լյուդմիլան, հետաքրքրքասեր, միշտ ջանում էր ամենայն նորն իր աչքերով տեսնել: նա առ Պիլնիկովը կրքոտ հետաքրքասիրությամբ բռնկվեց: Իհարկե հարկ է տեսնել զուգված խաբեբային: Նա նաեւ ծանոթ է Կոկովկինա-

յի հետ: Եւ ահա երեկոյան կողմ Լյուդմիլան քույրերին ասաց.

-Կգնամ նայելու այդ օրիորդին:

-Աչքապլշիչ, բարկացկոտ ճչաց Դարյան:

-Զուգվել է,- նկատեց Վալերիան, զուսպ քմծիծաղելով:

Նրանք սրտնեղում էին, որ իրենք չէին հորինել՝ երեքով գնալն անհարմար է: Լյուդմիլան սովորականից ավելի շատ էր զուգված,- ինչու, ինքն էլ չգիտեր: Սակայն, նա սիրում էր զուգվել եւ քույրերից ավելի բաց էր հագնվում՝ ձեռքերը եւ ուսերը ավելի մերկ, շրջազգեստն ավելի կարճ, մաշիկներն ավելի թեթեւ, գուլպաներն ավելի բարակ, թափանցիկ, մարմնագույն: Տանը նրան դուր էր գալիս մնալ միայն շրջազգեստով եւ բոկոտն եւ կոշիկները հագնել բոբիկ ոտքերի վրա,- ընդ որում վերնաշապիկն ու շրջազգեստը միշտ չափազանց շքեղ էին:

Պաղ եղանակ էր, քամոտ, թափված տեր–ները լողում էին խայտաբղետ ջրափոսերում: Լյուդմիլան արագ էր քայլում եւ իր բարալիկ թիկնոցի տակ ցուրտ չէր զգում: Կոկովկինան ու Սաշան թեյ էին խմում: Սրատես աչքերով զննեց նրանց Լյուդմիլան, համբուրվեց տանտիրուհու հետ ու ասաց.

-Ես ձեզ մոտ գործով եմ, սիրելի Օլգա Վասիլեւնա: Բայց դա հետո, իսկ մինչ այդ դուք ինձ թեյով տաքացրեք: Ա՛յ, այս ինչ պատանի է ձեզ մոտ նստած:

Սաշան կարմրեց, անհմուտ գլուխ տվեց: Կոկովկինան նրա անունն ասեց հյուրին: Լյուդմիլան նստեց սեղանի մոտ ու աշխույժ սկսեց պատմել նորությունները: Քաղաքացիները սիրում էին ընդունել նրան այնպես, թե նա ամեն ինչ գիտի եւ կարողանում էր պատմել համեստ եւ հաճելի: Կոկովկինան, որ տնակյաց էր, անկեղծ ուրախ էր նրա համար եւ սրտաբաց հյուրասիրում էր: Լյուդմիլան զվարթ խոսում էր, ծիծաղում էր, տեղից վեր էր թռչում ինչ-որ մեկին ծաղրելու, կպչում էր Սաշային: Նա ասաց.

-Ձեզ ձանձրալի է, հոգյակս,- ինչ եք դուք տանն այս թթված գիմնազիստի հետ նստում, դե դուք գոնե մի անգամ մեզ մոտ գայիք:

-Դե, էլ ուր,- պատասխանում էր Կոկովկինան,- ես արդեն ծերացել եմ հյուր գնալու համար:

-Դե ինչ հյուր,- քնքուշ աառարկում էր Լյուդմիլան,- եկեք ու նստեք, ինչպես ձեր տանը, ահա եւ վերջ: Էս երեխային խանձարուրելու կարիք

չկա:

Սաշան նեղացած դեմք ընդունեց ու կարմրեց:

-Անտաշի մեկը,- կրակոտ ասաց Լյուդմիլան ու սկսեց Սաշային հրել:- Իսկ դուք գրուցեք հյուրի մոտ:

-նա դեռ փոքր է,- ասաց Կոկովկինան,- նա ինձ մոտ համեստ է:

Լյուդմիլան քմծիծաղով նայեց նրան ու ասաց.

-Ես էլ եմ համեստ:

Լյուդմիլան քրքջաց: Ծիծաղը նրա, ինչպես միշտ, ասես հյուսված էր քացրագին ու կրքոտ ուրախություններից: Ծիծաղելուց, նա ուժեղ կարմրում էր, նրա աչքերը կայտառ ու մեղավոր էին դառնում, եւ հայացքը նրա փախչում էր զրուցակիցներից: Սաշան շփոթվեց, ուշքի եկավ, սկսեց արդարանալ.

-Դե ոչ, չէ որ ես ուզում էի ասել, որ դուք կայտառ եք, այլ ոչ թե համեստ, այլ ոչ թե այն, որ դուք համեստ չեք:

Բայց, զգալով, որ ասելով դա այնքան էլ պարզ չի ստացվում, ինչպես կստացվեր գրելով, նա խառնվեց ու կարմրեց:

-Ի՜նչ հանդուգն բաներ է նա ասում,- քրքջալով ու կարմրելով, գոռում էր Լյուդմիլան,- դա պարզապես հիասքանչ է:

-Դուք լրիվ իմ Սաշային ամաչացրիք,- ասաց Կոկովկինան, միակերպ քնքուշ նայելով եւ Լյուդմիլային եւ Սաշային:

Լյուդմիլան ծռվելով կատվի շարժումով, շոյեց Սաշայի գլուխը: Նա ամաչկոտ ու հնչեղ ծիծաղեց, ձեռքից խուսափեց ու փախավ իր սենյակը:

-Հոգյակս, ինձ փեսացու ճարեք,- մեկեն առանց որեւէ անցումի, ասաց Լյուդմիլան:

-Դե ահա, ինձանից ինչ հարսնախոս - ժպիտով պատասխանում էր Կոկովկինան, բայց նրա դեմքից երեւում էր, որ նա հաճույքով կանցներ խնամախոսության:

-Դե ինչո՞վ դուք խնամախոս չեք, իրոք,- առարկեց Լյուդմիլան,- դե եւ ես ինչով հարսնացու չե՞մ: ձեզ ամո՞թ է ինձ խնամախոսելը:

Լյուդմիլան թեւերը կանթեց եւ տանտիրուհու առաջ պար էր գալիս:

-Դե դուք էլ,- ասաց Կոկովկինան,- թեթեւսոլիկի մեկը:

Լյուդմիլան խոսեց ծիծաղելով.

-Դե թեկուզ պարապությունից զբաղվեք դրանով:

-Դե ի՞նչ փեսացու է ձեզ պետք,- ժպտալով հարցրեց Կոկովկինան:

-Թող նա լինի,- լինի թխահեր,- հոգյակս, անպայման թխահեր,- արագ խոսեց Լյուդմիլան:- Խորունկ թխահեր: Խորունկ, ինչպես փոսը: Եւ ահա ձեզ նմուշօրինակ՝ ինչպես ձեր գիմնազիստը,- որպեսզի նույնպիսի սեւ հոնքեր ունենա եւ աչքերը խումար, եւ մազերը սեւ կապույտին տվող, թարթիչները խիտ-խիտ, կապտասեւ թարթիչներ: Նա ձեզ մոտ գեղասքանչ է,- իրոք, գեղասքանչ է: Այ դուք ինձ նրա նմանին գտեք:

Ծուտով Լյուդմիլան պատրաստվեց գնալու: Արդեն սկսեց մթնել: Սաշան գնաց ուղեկցելու:

-Միայն մինչեւ կառապանը,- նուրբ ձայնով խնդրում էր Լյուդմիլան եւ նայում էր Սաշային, մեղավոր կարմրելով, քնքուշ աչքերով:

Փողոցում Լյուդմիլան նորից ժրաշարժ դարձավ եւ սկսեց Սաշային հարցաքննել.

-Դե ի՞նչ դուք, անընդհատ դասե՞ր եք սովորում: Իսկ ինչ-որ գրքեր կարդո՞ւմ եք:

-Գրքեր էլ եմ կարդում,- պատասխանում էր Սաշան,- ես կարդալ սիրում եմ:

-Անդերսենի հեքիաթնե՞րը:

-Ոչ էլ հեքիաթներ, այլ ամեն տեսակի գրքեր: Ես պատմություն եմ սիրում, մեկ էլ բանաստեղծություններ:

-Դե այո, բանաստեղծություններ: Իսկ ո՞վ է ձեր սիրած բանաստեղծը,- խիստ հարցրեց Լյուդմիլան:

-Նադսոնը, իհարկե,- պատասխանեց Սաշան, այլ պատասխանի անհնարինության խորունկ համոզմունքով:

-Դե այո,- քաջալերիչ ասաց Լյուդմիլան:- Ես էլ եմ Նադսոն սիրում, բայց միայն առավոտյան, իսկ երեկոյան, ես, սիրելիս, սիրում եմ զուգվել: Իսկ դուք ի՞նչ եք սիրում անել:

Սաշան նայեց նրան քնքուշ սեւ աչքերով,- եւ դրանք հանկարծ տամկացան,- եւ կամացուկ ասաց.

-Ես սիրում եմ գգվել:

-Այ քեզ, ինչ քնքուշն է,- ասաց Լյուդմիլան եւ գրկեց նրա ուսերը,- գգվել է սիրում: Իսկ լողանալ սիրո՞ւմ եք:

Սաշան ծիծաղեց: Լյուդմիլան հարցաքննում էր.

-Տաք ջրո՞ւմ:

-Տաք, եւ պաղ,- ամաչկոտ ասաց տղան:

-Իսկ ի՞նչ օճառ եք սիրում:

-Գլիցիրինի:

-Իսկ խաղող սիրո՞ւմ եք:

Սաշան ծիծաղեց:

-Ա՜խ, ինչպիսին եք դուք: Չէ որ դա՝ տարբեր է, իսկ դուք միեւնույն բառերն եք ասում: Միայն թե դուք ինձ չեք խայթի:

-Ա՜յ քեզ, շատ պետք է ինձ ձեզ խայթել,- քմծիծաղելով, ասաց Լյուդմիլան:

-Դե ես գիտեմ, որ դուք կատակաբան եք:

-Դե որտեղի՞ց դուք դա վերցրիք:

-Դե բոլորն են ասում,- ասաց Սաշան:

-Ասացեք խնդրեմ, ինչ բամբասկոտն է,- ձեւական խիստ ասաց Լյուդմիլան:

Սաշան կարմրեց:

-Դե, ահա եւ կառապանը: Կառապան,- գոչեց Լյուդմիլան:

-Կառապան,- բղավեց եւ Սաշան:

Կառապանը, թեթեւակառքը անճոռնի կերպով ճռճռացնելով, մոտ եկավ: Լյուդմիլան նրան ասաց, թե ուր գնա: Նա մտածեց եւ քառասուն կոպեկ պահանջեց: Լյուդմիլան ասաց.

-Դե ինչ, հոգյակս, արդյոք հեռո՞ւ է: Դե դու ճանապարհը չգիտես:

-Դե ինչքա՞ն կտաք:

-Դե վերցրու ցանկացած կեսը:

Սաշան ծիծաղեց:

-Ուրախ օրիորդ է,- սեպերը բացելով ասաց կառապանը,- դե գոնե հինգ կոպեկ էլ ավելացրեք:

-Շնորհակալություն, որ ուղեկցեցիր, սիրելիս,- ասաց Լյուդմիլան, ուժեղ սեղմեց Սաշայի ձեռքն ու նստեց թեթեւակառքը:

Սաշան վազեց տուն, ուրախ մտածելով զվարթ աղջկա մասին:

***

Լյուդմիլան զվարթ վերադարձավ տուն, ժպտալով եւ ինչ-որ զվարճալի բանի մասին երազելով: Քույրերը սպասում էին նրան: Նրանք նս-

տած էին ճաշասենյակում կլոր սեղանի շուրջ, կախովի լամպով լուսավորված: Սպիտակ սփռոցի վրա զվարթ էր թվում կոպենհագեննյան-բրենդիով շիշը, եւ պայծառ շողշողում էին դրա բկի մոտ կպած ծալքերը: Այն շրջապատված էր խնձորներով, ընկույզներով եւ հալվայով:

Դարյան գինովցած էր. կարմիր, զզգզված, կիսամերկ, նա բարձր երգում էր: Լյուդմիլան լսեց ծանոթ երգի արդեն նախավերջին տունը.

Ուր է կորել զգեստը, ուր է շվին:

Մերկը մերկին քաշում է դեպ ծանծաղուտ:

Վախը քշում է ամոթը, ամոթը քշում է վախը:

Հովվուհին ճչում է արցունքոտ՝

Սոռացիր, ինչ տեսել ես դու:

Լարիսան էլ էր այդտեղ,- զուգված հանդարտազվարթ, նա խնձոր էր ուտում, փոքրիկ դանակով պատառիկների բաժանելով, եւ քմծիծաղելով:

-Դե ի՞նչ,- հարցրեց նա,- տեսա՞ր:

Դարյան սսկվեց եւ նայում էր Լյուդմիլային: Վալերիան հենվել էր արմնկիկին, ճկույթը թողել եւ գլուխը հակել էր, ընդօրինակելով Լարիսայի ժպիտը: Բայց նա բարալիկ է, փխրուն եւ ժպիտը նրա անհանգիստ է: Լյուդմիլան ըմպանակի մեջ բալա-կարմիր լիկյոր լցրեց ու ասաց.

Հիմարություններ: Ամենահսկական տղա է, եւ շատ համակրելի: Սաստիկ թխահեր, աչքերը շողում են, իսկ ինքը՝ փոքրիկ ու անմեղ:

Եւ հանկարծ նա զրնգուն ծիծաղեց: Նրան նայելով, քույրերն էլ ծիծաղեցին:

-Է՛հ, դե ինչ ասես, այդ ամենը՝ Պերեդոնովյան դատարկաբանություն է,- ասաց Դարյան, ձեռքը թափ տալով, եւ մի պահ խոհածեց, արմունկներով հենվելով սեղանին եւ գլուխը հակելով:- Ավելի լավ է երգել,- ասաց նա ու զիլ ձայնով ու բարձր երգեց:

Նրա ճչոցներում հնչում էր մռայլալարված խանդավառությունը: Եթե մեռյալին բաց թողնեին գերեզմանոցից այն բանի համար, որպեսզի նա անընդհատ երգեր, այդպես կերգեր այն ուրուն: Իսկ քույրերն արդեն ընտել էին Դարյայի գինովցած ճղճղոցին եւ երբեմն շեշտված ճղճղան ձայներով ձայնակցում էին նրան:

-Ա՛յ թե ոռնոց է կապել,- ասաց Լյուդմիլան, քմծիծաղելով:

Ոչ թե նրան դուր չէր եկել, այլ ավելի շուտ նա ուզում էր պատմել, եւ որ քույրերը լսեին: Դարյան բարկացկոտ գոռաց, երգը կիսատ թողնելով.

-Դե քեզ ինչ, չէ որ ես քեզ չեմ խանգարում:

Եւ անհապաղ նորից երգեց հենց նույն տեղից: Լարիսան քնքշորեն ասաց.

-Թող երգի:

-Ինձ թաց է՝ ջահելիս,
Եւ ես տեղս չեմ գտնում,-

Ճղճղան երգում էր Դարյան, խաթարելով հնչյունները եւ հանգեր դնելով, ինչպես անում են ռամիկ երգիչները առավել հուզականության համար: Մոտավորապես այսպես էր դուրս գալիս.

Ի՛հինձ թաաց է՝ ջաահե՛ելիս, է՛խ:

Ընդ որում հատկապես անդուր ձգվում էին այն հնչյունները, որոնցից շեշտը չի իջնում: Տպավորությունը ստացվում էր գերադրական աստիճանով՝ թարմ լսողին այդ երգեցողությունը տաղտուկ կբերեր:

Օ՛, մահացու անձկություն, լեռներն ու գյուղերը ողողող, ընդարձակ հարազատ հեռաստանները: Անձկություն, մարմնավորված վայրի գոռգոռոցում, անձկություն, նողկալի հրով կենդանի խոսքը խժռող, մի ժամանակ կենդանի երգն առ խելագար ոռնոցը վարընկեց անող: Օ՛, մահացու անձկություն: Օ՛, քնքուշ, հին ռուսական երգ, թե դո իրո՞ք մահանում ես:

Հանկարծ Դարյան վեր ցատկեց, կանթեց եւ սկսեց զվարթ չաստուշկա ասել, պարելով ու մատները շրխկացնելով.

Դե գնա դու, տղա, հեռու,-
Ես աղջիկ եմ ավազակի:
Թքած, թե դու սիրունատես ես,-
Ես քո փորը դանակ կխրեմ:
Ինձ ոչ մի մուժիկ էլ պետք չի,-

Կսիրեմ ես տնանկի:

Դարյան երգում ու պարում էր, եւ նրա աչքերը, անշարժ դեմքի վրա, պտտվում էին նրա պտույտի ետքից, հանց մեռյալ լուսնի շրջանները: Լյուդմիլան բարձր քրքջում էր, եւ սիրտը նրա թեթեւակի քարանում ու սեղմվում էր, ոչ այն է զվարթ բերկրանքից, ոչ այն է բալա-քաղցր, սարսափելի շերի-բրենդիից: Վալերին կամացուկ ծիծաղում էր, ապակե զրնգուն ծիծաղով նախանձոտ նայում էր քույրերին՝ նա ինքն էլ կուզենար այդպիսի ուրախություն, բայց չգիտես ինչու ուրախ չէր՝ նա մտածում էր, որ ինքը՝ վերջինն է, «քերանք». եւ այդ պատճառով թույլ եւ դժբախտ : Եւ նա ծիծաղում էր, ասես հիմա պիտի լար:

Լարիսան նայեց նրան, աչքով արեց, եւ Վալերիան հանկարծ իրեն զվարթ ու զվարճալի զգաց: Լարիսան ելավ, ուսերը շարժեց,- եւ մի ակնթարթում բոլոր չորս քույրերն էլ պտտվեցին խելահեղ եռանդով, հանկարծ համակված խենթ տեսիլքով, Դարյայի ետքից բղավելով նորանոր չաստուշկաների խոսքերը, մեկը մեկից անհեթեթ ու ժրաշարժ: Քույրերը երիտասարդ էին, գեղեցիկ, նրանց ձայները հնչում էին զրնգուն եւ վայրի՝ լերկ լեռան կախարդուհիները կնախանձեին այդ շուրջպարին:

Ողջ գիշեր Լյուդիմայի երազվում էին տապոտ, աֆրիկյան երազներ: Մեկ անրջվում էր նրան, թե նա պառկած է հեղձուցիչ-ջերմացած վերնասրահում եւ վերմակը սահում է նրա վրայից, եւ մերկացնում է նրա տաք մարմինը,- եւ ահա թեփուկավոր, օղակավոր օձը սողոսկել էր նրա ննջարան եւ սողում է ծառի վրայով, նրա մերկ, հիասքանչ ոտքերի վրայով...

Հետո նրան երազվեց կղզի եւ շոգ ամառային երեկո, ծանր վրա եկող ամպրոպային ամպերի տակ,- եւ նա պառկած է ափին, մերկ, ճակատին ոսկյա ողորկ պսակով: Տիղմի եւ կեցած ջրի, եւ տապից տոչորվող խոտի հոտ էչ փչում,- իսկ ջրի վրայով, մթին եւ չարագույժ հանգիստ, լողում էր սպիտակ կարապը, ուժեղ, արքայավսեմ: Նա թեւերով աղմկոտ խփում էր ջրին եւ, բարձր ֆշշալով, մոտեցավ, գրկեց նրան,- եւ մութ ու սահմռկելի եղավ...

Օձն էլ, կարապն էլ հակվեցին Լյուդմիլայի վրա Սաշայի դեմքով, կապտության աստիճանի դալուկ, մթին առեղծվածային-տրտում աչքե-

րով,- եւ կապտասեւ թարթիչները, խանդաբորբ ծածկելով դրանց դյութող հայացքը, իջնում էին ծանր, սարսափելի:

Հետո Լյուդմիլային երազվեց ցածրիկ, մեծղի սյոներով մի հիասքանչ պալատ,- եւ այնտեղ ժողվվում էին մերկ, ուժեղ, հիանալի պարմանիները,- եւ նրանցից ամենագեղեցիկը Սաշան էր: Նա նստած էր բարձր, եւ մերկ պարմանիներն իր աջեւ հերթով մտրակում էին միմյանց: Եւ երբ հատակին դրեցին Սաշային, գլուխը դրեցին Լյուդմիլայի կողմը, եւ մտրակում էի նրան, նա զրնգուն ծիծաղում եւ լալիս էր,- նա քրքջում էր, ինչպես երբեմն քրքջում են երազում, երբ հանկարծ սիրտն ուժգնորեն խփում `է,- ծիծաղում են երկար, անզուսպ, ինքնամոռացման եւ մահվան ծիծաղով...

Առավոտյան բոլոր այդ երազներից հետո Լյուդմիլան զգաց, որ կրքոտ սիրահարված է Սաշային: Նրան տեսնելու անհամբեր ցանկությունը համակեց Լյուդմիլային,- բայց նա համար սրտնեղիչ էր մտածելը, որ նա նրան կտեսնի հագնված: Ինչ հիմար բան է, որ տղաները մերկ չեն քայլում: Կամ թեկուզ բոկոտն, ինչպես ամառային փողոցային տղաները, որոնց Լյուդմիլան սիրում էր նայել այն բանի համար, որ նրանք բոբիկ են քայլում, երբեմն ոտքերը բարձր մերկացնելով: Ասես ամոթ է մարմին ունենալը,- մտածում էր Լյուդմիլան,- որ նույնիսկ տղաներն են թաքցնում այն»:

XV

Վոլոդինը կանոնավոր գնում էր Ադամենկոների մոտ դասերի: Նրա երազանքներն առ այն, որ օրիորդը կսկսի իրեն սուրճ հյուրասիրել, չիրականացան: Նրան ամեն անգամ ուղեկցում էին ուղիղ, ձեռքի աշխատանքի համար նշանակված հարկաբաժնում: Միշան սովորաբար մոխրագույն քաթանե գոգնոցով արդեն կանգնած էր լինում դազգահի մոտ, պատրաստելով դասի համար անհրաժեշտը: Այն ամենը, ինչ Վոլոդինը կարգադրում էր, նա կատարում էր սիրալիր, բայց տհաճությամբ: Որպեսզի ավելի քիչ աշխատի, Միշան ջանում էր Վոլոդինին ներքաշել խոսակցության մեջ: Վոլոդինը կամենում էր բարեխիղճ լինել եւ դրան չէր տրվում: Նա ասում էր.

-Դուք, Միշենկա, հաճեցեք նախ մի երկու ժամ գործով զբաղվել, իսկ հետո արդեն, եթե ուզում եք, կխոսենք: Այդ ժամանակ՝ որքան կու-

զեք, իսկ հիմա՝ ոչ, ոչ, քանի որ ամենից առաջ գործը:

Միշան թեթեւակի հոգոց էր հանում եւ գործի էր անցնում, բայց դասն ավարտելուն մոտ նրա մոտ այլեւս խոսելու ցանկություն չէր լինում՝ նա ասում էր, որ ժամանակ չկա, շատ բան է հանձնարարված: Երբեմն դասի գալիս էր եւ Նադեժդան, նայելու, թե Միշան ինչպես է պարապում: Միշան նկատեց,- եւ դրանից օգտվում էր,- որ նրա ներկայությամբ Վոլոդինն ավելի հեշտ է խոսակցությունների տրվում: Սակայն Նադեժդան, հենց որ տեսնում էր, որ Միշան չի աշխատում անհապաղ նրան դիտողություն էր անում.

-Միշա, ծույլ մի ձեւացիր:

Իսկ ինքը գնում էր, Վոլոդինին ասելով.

-Կներեք, ես ձեզ խանգարեցի: Նա ինձ մոտ այնպիսինն է, որ կծուլանա, թե նրան ազատություն տաս:

Վոլոդինը սկզբում շփոթված էր Նադեժդայի այդպիսի վարքից: Հետո մտածեց, թե նա ամաչում է իրեն սուրճ հյուրասիրել,- վախենում է, թե հանկարծ բամբասանքներ չլինեն: Հետո գլխի ընկավ, որ նա կարող էր ընդանրապես չգալ դասերի, սակայն գալիս է,- արդյոք ո՞չ այն պատճառով, որ իրեն հաճելի է Վոլոդինին տեսնելը: Եւ այդ Վոլոդինն իր օգտին էր մեկնաբանում, որ Նադեժդան այդպես առաջին խոսքից հաճույքով համաձայնվեց, որպեսզի Վոլոդինը դասեր տա, եւ չէր սակարկում: Այդ մտքերում նրան հաստատում էին նաեւ Պերեդոնովն ու Վարվարան:

-Պարզ է, որ նա սիրահարված է քեզ,- ասում էր Պերեդոնովը:

-Եւ դե էլ ինչ փեսա է նրան պետք,- հավելում էր Վարվարան:

Վոլոդինը համեստ դեմք էր ընդունում եւ ուրախանում էր իր հաջողությունների համար:

Մի անգամ Պերեդոնովը նրան ասաց.

-Փեսացու ես, բայց քրքված փողկապ ես կրում:

-Ես դեռ փեսացու չեմ,- խելամտորեն պատասխանում էր Վոլոդինը, ամբողջովին, սակայն, որախությունից դողալով,- իսկ փողկապը կարող եմ եւ նորը գնել:

-Դու քեզ նախշավորը առ,- խորհուրդ էր տալիս Պերեդոնովը,- որպեսզի տեսնեն, որ քո մեջ սերն է կայտռում:

-Կարմիր փողկապ,- ասաց Վարվարան,- դե եւ ավելի շքեղ, ու գնդա-

սեղ: Կարելի է եւ քարով գնդասեղը էժան գնել,- շքեղություն կլինի:

Պերեդոնովը մտածեց, որ Վոլոդինը, թերեւս, այդքան փող չուներ էլ: Կամ էլ ժլատություն կանի, կառնի սովորականը, սեւը: Եւ դա վատ կլինի, մտածում էր Պերեդոնովը՝ Ադամենկոն՝ բարձրաշխարհիկ օրիորդ է. եթե գնաս նրա հետ պսակվելու ինչ-որ փողկապով, ապա նա կարող է նեղանալ եւ կհրաժարվի: Պերեդոնովն ասաց.

-Ինչո՞ւ էժան գնել: Դու, Պավլուշա, փողկապի փողը տարել ես: Ինչքա՞ն եմ ես քեզ պարտք, մի ռուբլի քառասուն կոպե՞կ:

-Քառասուն կոպեկը, դա ճիշտ է,- ասաց Վոլոդինը, սեպերը ցույց տալով ու ծամածռվելով, միայն թե ոչ թե մի, այլ երկու ռուբլի:

-Ահա Վարվարա Դմիտրիեւնան վկա է,- հավատացնում էր Վոլոդինը:

Վարվարան, քմծիծաղելով, ասաց.

-Դե վճարի, Արդալյոն Բորիսիչ, քանի որ պարտվել ես,- ես էլ հիշում եմ, որ երկու ռուբլի քառասուն կոպեկ էր:

Պերեդոնովը մտածեց, որ Վարվարան պաշտպանում է Վոլոդինին, կնշանակի, նրա կողմն է անցնում: Նա նոթոտեց, դրամապանակից փողը հանեց ու ասաց.

-Դե լավ, թող երկուս ու քառասուն, ես չեմ սնանկանա: Դու՝ չունեւոր մարդ ես, Պավլուշկա, դե առ քեզ, վերցրու:

Վոլոդինը վերցրեց փողը, հաշվեց, հետո նեղացած դեմք ընդունեց, հակեց շեշտակի ճակատը, վարի շուրթն ուռցրեց եւ մկկացող ու դռդռացող ձայնով ասաց.

-Դուք, Արդալյոն Բորիսիչ, հաճել եք ինձ պարտք լինել, դե ուրեմն հարկ է վճարել, իսկ այն որ ես հաճում եմ չքավոր լինել, դե դա արդեն սրա հետ ոչ մի կապ չունի: Եւ ես դեռ ոչ մեկից հաց չեմ խնդրում, իսկ դուք գիտեք, որ աղքատ է միայն դեւը, որ հաց չի ուտում, իսկ քանի դեռ ես հաց եմ ուտում, եւ նույնիսկ կարագով, ես աղքատ չեմ:

-Եւ լրիվ մխիթարվեց, ուրախությունից կարմրեց, որ այդքան հաջող պատասխանեց, եւ սկսեց, շորթերը պտտացնելով, ծիծաղել:

Վերջապես Պերեդոնովն ու Վոլոդինը որոշեցին գնալ խմամախոսության: Երկուսն էլ մեծ հանդերձանքով էին եւ հանդիսավոր եւ սովորականից ավելի հիմար տեսք ունեին: Պերեդոնովը սպիտակ վզնոց էր կապել: Վոլոդինը՝ խայտաբղետ, կարմիր՝ կանաչ շերտագծերով:

Պերեդոնովն այսպես էր խորհրդածում.

-Ես խնամախոսության եմ գնում, իմ դերը ծանրակշիռ է եւ դեպքն էլ երեւելի է, ես պիտի սպիտակ փողկապով լինեմ, իսկ դու՝ փեսացու ես, քեզ հարկ է բոցավառ զգացմունքներ ցուցաբերել:

Լարված հանդիսավոր տեղավորվեցին՝ Պերեդոնովը թախտի վրա, իսկ Վոլոդինը բազկաթոռի: Նադեժդան զարմանքով նայում էր հյուրերին: Հյուրերը խոսում էին եղանակից եւ լուրերից, այն մարդկանց տեսքով, որ եկել էին փափկանկատ գործով եւ չգիտեին, թե ինչպես անցնեին դրան: Վերջապես Պերեդոնովը հազաց ու ասաց.

-Նադեժդա Վասիլեւնա, մենք գործով ենք:

-Գործով,- ասաց եւ Վոլոդինը, նշանակալից դեմք ընդունեց ու շուրթերը փքեց:

-Ահա նրա մասին,- ասաց Պերեդոնովը եւ ցուցամատով մատնացույց արեց Վոլոդինին:

-Ահա իմ մասին - հաստատեց եւ Վոլոդինը եւ նույնպես ցուցամատով մատնացույց արեց իրեն, կրծքին:

Նադեժդան ժպտաց:

-Խնդրում եմ ձեզ,- ասաց նա:

-ես նրա փոխարեն կխոսեմ,- ասաց Պերեդոնովը,- նա համեստ է, ինքը չի կարողանում վճռել: Բայց արժանավոր մարդ է, չխմող, բարի: Նա քիչ է ստանում, բայց դա թքած: Նայած ում ինչ է պետք է, մեկին փող, մյուսին մարդ: Դե, ինչ ես դու լռում,- դիմեց նա Վոլոդինին,- մի բան ասա:

Վոլոդինը գլուխը հակեց եւ դողդողացող ձայնով, ոչխարի պես մկկաց.

-Իհարկե, ես քիչ աշխատավարձ եմ ստանում, բայց ինձ մոտ միշտ կտոր հաց կլինի: Իհարկե, ես համալսարանում չեմ եղել, բայց ապրում եմ, ինչպես Աստված յուրաքանչյուրին տա, եւ ոչ մի վատ բան իմ մասին չգիտեմ, դե սակայն, նայած ով ոնց դատի: Իսկ ես, դե ինչ, ինձանից գոհ եմ:

Նա ձեռքերը տարուբերեց, ճակատը հակեց, ասես պատրաստվում էր աքացի տալ, եւ սկսվեց:

-Ահա ուրեմն,- ասաց Պերեդոնովը,- նա երիտասարդ մարդ է, նրան այսպես հարկ չէ ապրել: Նրան պետք է ամուսնանալ: Ամեն դեպքում

ամուսնացածի համար ավելի լավ է:

-Եթե կինը համապատասխանում է, դե դրանից լավ ինչ,- հաստատեց Վոլոդինը:

-Իսկ դուք,- շարունակում էր Պերեդոնովը,- օրիորդ եք: Ձեզ էլ է պետք ամուսնանալ:

Դռան ետեւում թեթե շրշյուն լսվեց, խլացված, հատու ձայներ, ասես ինչ-որ մեկը հոգոց էր հանում կամ ծիծաղում էր, բերանը փակելով: Նադեժդան խիստ նայեց դռանը եւ սառն ասաց.

-Դուք չափազանց հոգատար եք իմ հանդեպ,- «չափազանց» բառի վրա սրտնեղիչ շեշտով:

-Ձեզ հարուստ ամուսին պետք չի,- ասում էր Պերեդոնովը,- դուք ինքներդ հարուստ եք: Ձեզ պետք է այնպիսինը, որ ձեզ սիրի եւ ամեն ինչում գոհացնի: Եւ դուք նրան գիտեք, կարող էիք հասկանալ: Նա ձեր հանդեպ անտարբեր չի, դուք նրա հանդեպ, գուցե թե, նույնպես: Ահա ուրեմն, ինձ մոտ վաճառականն է, ձեզ մոտ՝ ապրանքը: Այսինքն, դուք ինքներդ՝ ապրանք եք:

Նադեժդան կարմրում ու շուրթերն էր կծոտում, որպեսզի ծիծաղը պահի: Դռան ետեւում շարունակվում էին հնչել նույն ձայները: Վոլոդինը համեստորեն աչքերը վար բերեց: Նրան թվում էր, թե գործը գլուխ է գալիս:

-Ի՞նչ ապրանք,- զգուշորեն հարցրեց Նադեժդան:- Կներեք, ես չեմ հասկանում:

-Դե, ինչպես չեք հասկանում,- անվստահ ասաց Պերեդոնովը:- Դե, ես ուղիղ կասեմ՝ Պավել Վասիլեւիչը խնդրում է ձեր ձեռքն ու սիրտը: Եւ ես էլ խնդրում եմ նրա համար:

Դռան ետեւում ինչ-որ բան հատակին ընկավ ու գլորվում էր, փնչացնելով ու հոգոց հանելով: Նադեժդան, զսպված ծիծաղից կարմրելով, նայում էր հյուրերին: Վոլոդինի առաջարկը նրան ծիաղելի հանդգնություն էր թվում:

-Այո,- ասաց Վոլոդինը,- Նադեժդա Վասիլեւնա, ես խնդրում եմ ձեր ձեռքն ու սիրտը:

Նա կարմրեց, ելավ, ոտքն ուժեղ շրխփացրեց գորգին, գլուխ տվեց եւ արագ նստեց: Հետո դարձյալ ելավ, ձեռքը դրեց սրտին, եւ խանդագորով նայելով օրիորդին, ասաց.

-Նադեժդա վասիլեւնա, թույլ տվեք բացատրվել: Քանի որ ես նույնիսկ շատ եմ ձեզ սիրում, ապա մի՞թե դուք չեք կամենա համապատասխանել:

Նա նետվեց առաջ, Նադեժդայի առաջ ծնկի եկավ եւ համբուրեց նրա ձեռքը:

-Նադեժդա Վասիլեւնա, հավատացեք: Երդվում եմ,- բացականչեց նա, ձեռքը վեր բարձրացրեց, ե ողջ թափով դրանով խփեց կրծքին, այնպես որ թնդածայն արձագանքվեց ավելի հեռվում:

-Դե այդ ինչ եք դուք, խնդրում եմ, ելեք,- շփոթահար ասաց Նադեժդան,- ինչո՞ւ այս ամենը:

Վոլոդինը ելավ եւ նեղացած տեսքով վերադարձավ իր տեղը: Այնտեղ նա երկու ձեռքն էլ սեղմեց կրծքին եւ կրկին բացականչեց.

-Նադեժդա Վասիլեւնա, դուք ինձ հավատացեք: Մինչեւ մահ-գերեզման, ի սրտե:

-Կներեք,- ասաց Նադեժդան,- ես, իրոք, չեմ կարող: Ես պիտի եղբորս դաստիարակեմ,- ահա նա էլ լալիս է այնտեղ, դռան ետեւում:

-Դե ինչ, եղբորը դաստիարակել,- նեղացած շուրթերը փքելով, ասաց Վոլոդինը,- դա, ոնց որ թե, չի խանգարում:

-Ոչ, համենայն դեպս, դա նրան վերաբերում է,- ասաց Նադեժդան, փութկոտ ելնելով,- հարկ է նրան հարցնել: Սպասեք:

Նա ճարպկորեն հյուրասենյակից դուրս վազեց, շրշալով բաց-դեղին զգեստով, դռան ետեւում ճանկեց Միշայի ուսից, նրա հետ վազեց մինչեւ վերնասենյակը եւ այնտեղ, դռան մոտ կեցած, վազքից եւ զսպած ծիծաղից շնչահատվելով, ընդհատ ձայնով ասաց.

-Լրիվ, լրիվ անօգուտ է խնդրելը, որ ականջ չդնես: Մի՞թե հարկ է դիմել ամենախիստ միջոցների:

Միշան, գրկելով նրան գոտկատեղի մոտ եւ գլխով սեղմվելով նրան, քրքջում էր, հռհռոցից եւ այն խլացնելու ջանքից ցնցվելով: Քույրը նրան հրեց իր վերնահարկը, նստեց դռան մոտի աթոռի վրա եւ ծիծաղեց:

-Լսեցի՞ր, թե ինչ է հորինել, քո Պավել Վասիլեւիչը,- հարցրեց նա:- Ինձ հետ արի հյուրասենյակ, եւ չհամարձակվես ծիծաղել: Ես նրանց ներկայությամբ քեզ կհարցնեմ, իսկ դու չհամարձակվես համաձայնվել: Հասկացա՞ր:

-Ըհը,- մոլևգաց Միշան եւ թաշկինակի ծայրը բերանը խոթեց, որպեսզի չծիծաղի, ինչը, սակայն, քիչ էր օգնում:

-Երբ ծիծաղել ուզենաս, աչքերդ թաշկինակով ծածկիր,- խորհուրդ տվեց քույրը եւ նորից ուսից բռնած հյուրասենյակ տարավ:

Այնտեղ նա նրան նստեցրեց բազկաթոռին, իսկ ինքը տեղավորվեց կողքի աթոռին: Վոլոդինը նայում էր նեղացած, գլուխը ծռած, ոչխարի պես:

-Ահա,- ասաց Նադեժդան, մատնացույց անելով եղբորը,- հազիվ արցունքները զսպեցի, խեղճ տղա: Ես նրան մոր տեղ եմ, իսկ հանկարծ նա մտածում է, թե ես նրան կլքեմ:

Միշան թաշկինակով դեմքը ծածկեց: Նրա ողջ մարմինը ցնցվում էր: Որպեսզի ծիծաղը թաքցնի, նա ձիգ մղկտաց.

-Ու-ու-ու:

Նադեժդան գրկեց նրան, աննկատ կճմտեց ձեռքերն ու ասաց.

-Դե, մի լար, քնքուշս, մի լար:

Միշան հանկարծ այնպիսի ցավ զգաց, որ աչքերին ացունքներ երեւացին: Նա թաշկինակն իջեցրեց եւ բարկացկոտ նայեց քրոջը:

«Իսկ հանկարծ,- մտածեց Պերեդոնովը,- տղան զայրանա եւ սկսի կծել. մարդկային փսլինքն ասում են, թունավոր է»:

Նա շարժվեց Վոլոդինի կողմը, որպեսզի վտանգի դեպքում թաքնվի նրա ետեւում: Նադեժդան եղբորն ասաց.

-Պավել Վասիլեւիչն իմ ձեռքն է խնդրում:

-Ձեռքն ու սիրտը,- հավելեց Պերեդոնովը:

-Եւ սիրտը,- համեստ, բայց արժանապատվությամբ ասաց Վոլոդինը:

Միշան ծածկվեց թաշկինակով եւ, զսպած ծիծաղից հեկեկալով, ասաց.

-Չէ, դու նրա հետ մի ամուսնացիր, թե չէ ես ի՞նչ եմ անելու:

Վոլոդինը վիրավորանքից ու հուզմունքից դողդողացող ձայնով խոսեց.

-Ինձ զարմացնում է, Նադեժդա Վասիլեւնա, որ դուք ձեր եղբորից թույլտվություն եք խնդրում, ով, ի դեպ, դետ տղեկ է: Եթե նա նույնիսկ հաճեր հասուն պատանի լինել, ապա եւ այդ դեպքում էլ դուք կարող էիք ինքներդ: Իսկ հիմա, ոնց եք դուք նրան հարցնում, Նադեժդա Վա-

սիլեւնա, դա ինձ շատ է զարմացնում եւ նույնիսկ ապշեցնում է:

-Տղաներից է հարցնում - դա ինձ համար նույնիսկ ծիծաղելի է,- մռայլ ասաց Պերեդոնովը:

-Դե իսկ ումի՞ց հարցնեմ: Սորաքրոջս համար՝ միենույն է, իսկ չէ որ նրան ես պիտի դաստիարակեմ, դե ուրեմն ինչպե՞ս ես ձեզ հետ կամուսնանամ: Ճիշտ չէ՞, Միշկա, չէ որ դու վախենո՞ւմ ես նրա դաժանություններից:

-Ոչ, Նադյա,- ասաց Միշան, մի աչքով նայելով թաշկինակի տակից,- ես նրա դաժանություններից չեմ վախենում, դե ինչ նա, այլ ես վախենում եմ, որ Պավել Վասիլեւիչն ինձ երես կտա եւ չի թողնի, որ դու ինձ անկյուն կանգնեցնես:

-Հավատացեք, Նադեժդա Վասիլեւնա,- ասաց Վոլոդինը, ձեռքերը սրտին սեղմելով,- ես Միշենկային երես չեմ տա: Ես այսպես եմ մտածում, թե ինչու երեխային երես տաս: Կուշտ է, հագնված է, կոշկավորված, իսկ երես տալ՝ ոչ, ոչ: Ես էլ կարող եմ նրան անկյուն կանգնեցնել, այլ ամենեւին էլ ոչ այն, որպեսզի երես տամ: Ես նույնիսկ ավելի շատ կարող եմ: Քանի որ դուք աղջիկ եք, այսինքն օրիորդ, ապա ձեզ, իհարկե, անհարմար է, իսկ ես ճիպոտով էլ կարող եմ:

-Երկուսդ էլ անկյուն կկանգնեցնեք,- լացակումած ասաց Միշան, դարձյալ թաշկինակով ծածկվելով,- այ թե ինչպիսինն ենք դուք, դե այն էլ ճիպոտով, չէ, դա ինձ ձեռնտու չի: Չէ, դու Նադյա, չհամարձակվես նրա հետ ամուսնանալ:

-Դե ահա, դուք լսում եք, ես կտրականապես չեմ կարող,- ասաց Նադեժդան:

-Ինձ համար շատ տարօրինակ է, Նադեժդա Վասիլեւնա, որ դուք այդպես եք վարվում,- ասաց Վոլոդինը:

-Ես ձեզ ողջ տրամադրվածությամբ եւ, կարելի ասես, բոցավառ, իսկ դուք, իմիջիայլոց, եղբոր պատճառով: Եթե դուք հիմա եղբոր պատճառով, մեկն էլ կհաճի քրոջ պատճառով, երրորդն էլ՝ զարմիկի, դե ինչ-որ մեկն էլ բարեկամների պատճառով, եւ բոլորն այդպես չեն ամուսնանա,- այդպես մարդկային ցեղն իսպառ կդադարի:

-Այդ մասին մի անհանգստացեք, Պավել Վասիլեւիչ,- ասաց Նադեժդան,- դեռեւս մարդկությանն այդպիսի վտանգ չի սպառնում: Ես առանց Միշայի համաձայնության չեմ ուզում ամուսնանալ, իսկ նա, չէ

որ դուք լսեցիք, համաձայն չէ: Դե եւ հասկանալի է, դուք նրան առաջին իսկ խոսքից խոստանում եք քոթակել: Այդպես դուք ինձ էլ կծեծեք:

-Քավ լիցի, Նադեժդա Վասիլեւնա, դե միթե դուք մտածում եք, որ ես ինձ այդպիսի անտաշություն թույլ կտամ,- հուսահատ բացականչեց Վոլոդինը:

Նադեժդան ժպտաց:

-Ես ինքս էլ ամուսնանալու ցանկություն չեմ զգում,- ասաց նա:

-Դուք, գուցե թե, ուզում եք միանձնո՞ւհի դառնալ,- նեղացած ձայնով հարցրեց Վոլոդինը:

-Տոլստոյականների մոտ, նրանց աղանդը,- շտկեց Պերեդոնովը,- հող բերելու:

-Դե ինչո՞ւ ես պիտի ինչ-որ տեղ գնամ,- խիստ հարցրեց Նադեժդան, իր տեղից ելնելով,- ինձ այստեղ էլ լավ է:

Վոլոդինը նույնպես ելավ, նեղացած շուրթերը փքեց ու ասաց.

-Սրանից հետո, եթե Միշենկան իմ հանդեպ այդպիսի զգացմունքներ է ցուցաբերում, իսկ դուք նրան, պարզվում է, որ հարցնում եք, ուրեմն դուրս է գալիս, որ ես պիտի դասերից էլ հրաժարվեմ, որովհետեւ դե ինչպե՞ս ես հիմա կգամ, եթե Միշենկան ինձ այդպես է ընդունում:

-Ոչ, դե ինչո՞ւ,- առարկեց Նադեժդան,- դա լրիվ առանձնահատուկ բան է:

Պերեդոնովը մտածեց, որ հարկ է դեռ փորձել օրիորդին համոզել՝ գուցե թե, եւ համաձայնվի: Նա նրան մռայլ ասաց.

-Դուք, Նադեժդա Վասիլեւնա լավ մտածեք: Դե ի՞նչ եք դուք մեկենիմեկ: Նա՝ լավ մարդ է: Նա՝ իմ ընկերն է:

-Ոչ,- ասաց Նադեժդան,- դե ի՞նչ այստեղ մտածես: Շատ երախտապարտ եմ Պավել Վասիլեւիչին պատվի համար, բայց չեմ կարող:

Պերեդոնովը զայրացկոտ նայեց Վոլոդինին ու ելավ: Նա մտածեց, որ Վոլոդինը՝ հիմար է՝ չկարողացավ օրիորդին իրեն սիրահարեցնել:

Վոլոդինը, գլուխը հակած, կանգնել էր իր բազկաթոռի մոտ: Նա կշտամբանքով հարցրեց.

-Ուրեմն, կնշանակի, վերջնակա՞ն, Նադեժդա Վասիլեւնա: Ա՜խ: Եթե այդպես է,- ասաց նա, ձեռքը թափ տալով,- դե, ուրեմն թող Աստված ձեզ ամենայն բարիք պարգեւի, Նադեժդա Վասիլեւնա: Կնշանակի, դե այդպիսինն է իմ չարաբախտ ճակատագիրը: Ա՜խ: Սիրում էր տղան

աղջկան, իսկ նա չէր սիրում: Աստված վկա: Դե ինչ, կարտասվեմ, դե ու վերջ:

-Լավ մարդուն արհամարհում եք, դե մեկ էլ ով կպատահի,- խրատական ասաց Պերեդոնովը:

-Ա՛խ,- մի անգամ էլ բացականչեց Վոլոդինը եւ այն է դեպի դուռն էր գնում: Բայց հանկարծ որոշեց մեծահոգի լինել եւ վերադարձավ,- ձեռքով օրիորդին հրաժեշտ տալու եւ նույնիսկ նեղացնող Միշային:

***

Փողոցում Պերեդոնովը զայրացկոտ փնթփնթում էր Վոլոդինը ողջ ճանապահին նեղացած, ճղճղան ձայնով խորհրդածում էր, ասես մկկում էր:

-Ինչո՞ւ էիր դասերից հրաժարվում,- փնթփնթում էր Պերեդոնովը:- Ա՛յ քեզ հարուստ:

Ես, Արդալյոն Բորիսիչ, միայն ասացի, որ եթե այդպես է, ապա ես պետք է հրաժարվեմ, իսկ նա հաճեց ինձ ասել, որ պետք չէ հրաժարվել, իսկ քանի որ ես ոչինչ չհաճեցի պատասխանել, ապա ստացվեց, որ նա ինձ համոզեց: Իսկ դե արդեն հիմա ինձնից է կախված՝ կուզեմ՝ կհրաժարվեմ, կուզեմ՝ կգնամ:

-Ինչո՞ւ հրաժարվել,- ասաց Պերեդոնովը:- Գնա, ասես ոչինչ էլ չի եղել:

«Թող գոնե էստեղ օգտվի,- մտածում էր Պերեդոնովը,- ավելի քիչ կնախանձի»:

Տրտմալի էր Պերեդոնովի սրտում: Վոլոդինը հար չի դասավորվում, աչքերդ չորս արած նրան նայիր, հանկարծ Վարվարայի հետ քիթ քթի չգա: Նաեւ, գուցե թե, Ադամենկոն էլ սկսի իր վրա զայրանալ, թե ինչու է Վոլոդինին խնամախոսել: Նա Պետերբուրգում բարեկամություն ունի՝ կգրի եւ, թերեւս վնաս տա:

Եւ եղանակը նույնպես անդուր էր: Երկինքը նոթոտում էր, անցնում էին ագռավներն ու կռավում: Հենց Պերեդոնովի գլխի վրայով էին նրանք անցնում, ասես ծաղրում եւ ավետում էին նոր, դեռ ավելի վատ անախորժություններ: Պերեդոնովը վիզը շարֆով փաթաթել ու մտածում էր, որ այդպիսի եղանակին մրսելը դժվար չէ:

-Այս ի՞նչ ծաղիկներ են, Պավլուշա,- հարցրեց նա, Վոլոդինին ցույց

տալով այգում ցանկապատի մոտի դեղին ծաղիկները:

-Դրանք՝ գորտնուկներ են, Արդաշա,- վշտալի պատասխանեց Վոլոդինը:

Այդպիսի ծաղիկներ, հիշեց Պերեդոնովը, իրենց այգում շատ են: Եւ ինչ սարսափելի անուն ունեն դրանք:

Գուցե թե, դրանք թունավոր են: Ահա, կվերցնի դրանք Վարվարան, մի փունջ կհավաքի, թեյի տեղ կպատրաստի, դե եւ իրեն կթունավորի,- հետո, դե արդեն երբ թուղթը գա,- կթունավորի, որպեսզի իրեն Վոլոդինով փոխարինի: Գուցե թե, նրանք արդեն պայմանավորվել են: Զուր չէ, որ նա գիտի, թե ինչպես է կոչվում այդ ծաղիկը: Իսկ Վոլոդինն ասում էր.

-Աստված նրան դատավոր: Ինչո՞ւ նա ինձ վիրավորեց: Նա ազնվականի է սպասում, եւ նա չի էլ մտածում, որ ազնվականներն էլ տարակերպ են լինում,- ոմն մեկի հետ արտասուք կթափի, իսկ հասարակ լավ մարդը նրան կարող էր երջանիկ դարձնել: Իսկ ես ահա կգնամ եկեղեցի, նրա առողջության համար մոմ կվառեմ, կաղոթեմ՝ Աստված տա, որ նրան հարբեցող ամուսին հասնի, որպեսզի նա նրան դնգստի, որպեսզի նա սնանկանա, եւ նրան աշխարհով մեկ թրեւ տա: Ահա այդ-ժամ իմ մասին կհիշի, բայց արդեն ուշ կլինի: Կսկսի բռունցքով արցունքները սրբել, կասի՝ հիմար էի ես, որ Պավել վասիլեիչին մերժեցի, ինձ թակող չկար, լավ մարդ էր:

Իր խոսքերից հուզված, Վոլոդինը արցունքոտեց ե ձեռքերով արցունքներն էր սրբում իր ոչխարային, ուռած աչքերի վրայից:

-Իսկ դու գիշերով նրա պատուհանները ջարդիր,- խորհուրդ տվեց Պերեդոնովը:

-Դե, Աստված նրա հետ,- վշտալի ասաց Վոլոդինը,- մեկ էլ տեսար բռնեցին: Ոչ, իսկ այդ լակոտը, տես թե ինչպիսինն է: Տեր իմ Աստված, ես ի՞նչ եմ նրան արել, որ նա որոշել է ինձ վնասել: Արդյոք ես չէի՞ ջանում նրա համար, իսկ նա, հաճեցիք տեսնել, թե ինչ քսություներ է անում: Դե այդ ի՞նչ երեխա է, դրանից ի՞նչ դուրս կգա, դե ասեք:

-Այո,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը,- լակոտի հետ չկարողացավ մրցել: Ա՛խ, դու, փեսացու:

-Դե ինչ է որ,- առարկեց Վոլոդինը,- իհարկե, փեսացու եմ: ես ուշիշ-ի էլ կգտնեմ: Թող որ նա չմտածի, որ ես իր համար արցունք են թափե-

լու:

-Ախ, դու, փեսացու,- ծաղրում էր նրան Պերեդոնովը:- Դեռ փողկապ է կապել: Դե ուր է քեզ մահուդե մռութով վերին արտը մտնել: Փեսացու:

-Դե, ես փեսացու եմ, իսկ դու, Արդաշա, հարսնախոս,- լրջմտորեն ասաց Վոլոդինը: Դու ինքդ հուսադրեցիր ինձ, դե եւ չկարողացար պսակել: Էխ, դու, խնամախոս:

Եւ նրանք ջանադրաբար սկսեցին ծաղրել միմյանց, երկար իրար կշտամբելով այնպիսի տեսքով, ասես գործի մասին էին խորհրդակցում:

***

Հյուրերին ճամփելով՝ Նադեժդան վերադարձավ հյուրասենյակ: Միշան պառկել էր թախտի վրա եւ քրքջում էր: Քույրը ուսից նրան թախտից պոկեց ուսասց.

-Իսկ դու մոռացել ես, որ պետք չէ ականջ դնել:

Նա բարձրացրեց ձեռքերը եւ ուզում էր ճկույթները խաչել, եւ ճկույթները չէին հատվում: Միշան նետվեց դեպի նա,- նրանք գրկախառնվեցին եւ երկար ծիծաղում էին:

-Բայց այդուհանդերձ,- ասաց նա,- ականջ դնելու համար անկյուն:

-Դե, պետք չի,- ասաց Միշան,- ես քեզ փեսացուից ազատեցի, դու դեռ ինձ պետք է երախտապարտ լինես:

-Դե այդ ով ում ազատեց: Լսեցիր, թե ոնց էին պատրաստվում քեզ ճիպոտով թակել: Գնա անկյուն:

-Դե, ավելի լավ է ես էստեղ կանգնեմ եւ գլուխը դրեց նրա ծնկնեերին: Նա փաղաքշում եւ խտուտ էր տալիս նրան: Միշան ծիծաղում էր, ծնկներով սողալով հատակի վրայով: Հանկարծ քույրը ետ հրեց նրան եւ նստեց թախտին: Միշան մենակ մնաց: Նա փոքր ինչ մնաց ծնկների վրա, հարցական նայելով քրոջը: Նա ավելի հարմար նստեց, վերցրեց գիրքը, ասես կարդալու, իսկ նա աչք էր ածում եղբորը:

-Դե, ես արդեն հոգնեցի,- խղճալի ասաց նա:

-Ես չեմ պահում, դու ինքդ ծնկի եկար,- գրքի ետեւից ժպտալով, պատասխանեց քույրը:

-Բայց, չէ որ ես պատժված եմ, բաց թող,- խնդրում էր Միշան:

-Մի՞թե ես եմ քեզ ծնկի բերել,- կեղծ անտարբեր ձայնով հարցրեց

Նադեժդան,- դե ինչ ես դու ինչ կպչում:

-Ես չեմ ելնի, մինչեւ չներես:

Նադեժդան ծիծաղեց, գիրքը կողմ դրեց եւ ուսից Միշային դեպ իրեն քաշեց: Նա ճչաց ու նետվեց նրան գրկելու, բացականչելով.

-Պավլուշայի հարսնացու:

XVI

Սեւաչյա տղան գրավել էր Լյուդմիլայի բոլոր մտքերը: Նա հաճախ էր նրա մասին խոսում յուրայինների եւ ծանոթների հետ, երբեմն միանգամայն անտեղի: Համարյա ամեն գիշեր նա երազում տեսնում էր նրան, երբեմն համեստ ու սովորական, բայց ավելի հաճախ վայրի կամ կախարդական իրադրությունում: Պատմություններն այդ երազների մասին նրա մոտ այնքան սովորական դարձան, որ շուտով արդեն քույրերն իրենք սկսեցին հարցնել նրան, ամեն առավոտ, ինչպես նրան այժմ երազվեց Սաշան: Երազները նրա մասին զբաղեցնում էին նրան բոլոր ազատ ժամերը:

Կիրակի օրը Լյուդմիլան համոզեց քույրերին Կոկովկինային պատարագից կանչել եւ հնարավորինս երկար պահել: նա ուզում էր Սաշային մենակ գտնել: Իսկ ինքը եկեղեցի չգնաց:

Քույրերին սովորեցնում էր.

-Նրան իմ մասին ասեք՝ քնով է անցել:

Քույրերը ծիծաղում էին նրա մտադրության վրա, բայց, իհարկե, համաձայնվեցին: Նրանք շատ համերաշխ էին ապրում: Դե եւ նրանց ձեռք էր տալիս՝ Լյուդմիլան տղայով կզբաղվի, իսկ իրենց կթողնի իսկական փեսացուներին: Եւ նրանք արեցին, ինչպես խոստացել էին, Կոկովկինային պատարագից հետո կանչեցին:

Այդ միջոցին Լյուդմիլան հավաքվեց գնալու, զուգվեց զվարթ, գեղեցիկ, օծվեց մեղմ, հուշիկ Ատկինսոնյան սերինգայով, սպիտակ, հուլունքներով կարված պայուսակի մեջ դրեց օծանելիքով սրվակիկը եւ փոքրիկ ցրցնիչը եւ թաքչեց պատուհանի մոտ վարագույրի ետեւում, հյուրասենյակում, որպեսզի այդ դարանից ժամանակին տեսներ, արդյոք Կոկովկինան գալիս է: Օծանելիքն իր հետ վերցնելը նա հորինեց դեռ ավելի վաղ,- օծել գիմնազիստին, որպեսզի նա հոտեր ոչ թե իր զզվելի լատիներենով, թանաքով եւ տղայականությամբ: Լյուդմիլան օծա-

նելիք սիրում էր, դրանք Պետերբուրգից էր դուրս գրում եւ շատ էր օգտագործում: Սիրում էր բուրավետ ծաղիկներ: Նրա վերնասենյակը միշտ անուշաբուրում էր ինչ-որ բանով՝ ծաղիկներով, օծանելիքով, սոճիով, ցարասիի գարնանային թարմ ճյուղերով:

Ահա եւ քույրերը, եւ Կոկովկինան նրանց հետ: Լյուդմիլան բերկրալի վազեց խոհանոցի միջով, բանջարանոցի միջով դեպի դռնակը, նրբանցքիկով, որպեսզի Կոկովկինայի աչքին չընկնի, արագ քայլում էր դեպի Կոկովկինայի տունը եւ կայտառորեն տարուբերում էր սպիտակ պայուսակն ու սպիտակ հովանոցը: Տաք աշնանային օրը ուրախացնում էր նրան, եւ թվում էր, թե նա իր հետ տանում է եւ շուրջը տարածում է իրեն բնորոշ զվարթության ոգին:

Կոկովկինայի մոտ սպասուհին նրան ասաց, որ տանտիրուհին տանը չէ: Լյուդմիլան աղմկոտ ծիծաղում ու կատակում էր դուռը բացող կարմրայտ աղջկա հետ:

-Իսկ դու, գուցե թե, խաբում ես ինձ,- ասում էր նա,- գուցե թե քո տիրուհին ինձնից թաքնվում է:

-Հի, հի, ինչո՞ւ պտի նա թաքնվի,- ծիծաղով պատասխանում էր սպասուհին,- ինքներդ գնացեք վերնասենյակները, նայեք, եթե չեք հավատում:

Լյուդմիլան աչք ածեց հյուրասենակը եւ աշխույժ գոչեց,

-Իսկ էստեղ շունչ կենդանի կա՞: Հե՛յ, գիմնազիստ:

Սաշան նայեց հյուրասենակից, տեսավ Լյուդմիլային, ուրախացավ, եւ նրա բերկրալի աչքերից Լյուդմիլան էլ ավելի զվարթացավ: Նա հարցրեց.

-Իսկ ո՞ւր է Օլգա Վասիլեւնան:

-Տանը չէ,- պատասխանեց Սաշան:- Դեռ չի եկել: Եկեղեցուց ինչ-որ տեղ է գնացել: Ահա ես վերադարձել եմ, իսկ նա դեռ չկա:

Լյուդմիլան ձեւացրեց, թե զարմացել է: Նա շարժում էր ովանոցն եւ նեղսրտած ասում էր.

-Դե ինչպես թե էդպես, բոլորն արդեն եկեղեցուց վերադարձել են: Բոլորը տանը նստած են, իսկ էստեղ արի ու տես, եւ չկա: Այդ դուք պատանի դասական, էնպես եք աղմկում, որ տատկը տանը չի՞ նստում:

Սաշան լուռ ժպտում էր: Նրան ուրախացնում էր Լյուդմիլայի ձայնը: Լյուդմիլայի հնչեղ ծիծաղը: Նա հորինում էր, ինպես ավելի ճարպկորեն

առաջարկի ուղեկցել նրան,- նրա հետ հետ փոքր ինչ ել կենա, թեկուզ մի քանի րոպե, նայի, եւ լսի:

Բայց Լյուդմիլան չէր էլ մտածում գնալ: Նա խորամանկ քմծիաղով նայեց Սաշային ու ասաց.-Դե ի՞նչ է, որ դուք չեք խնդրում ինձ նստել, սիրալիր երիտասարդ: Գուցե թե ես հոգնել եմ: Դե թողեք փոքր ինչ հանգստանամ...

Եւ նա մտավ հյուրասենյակ ծիծաղելով, ապա, քնքուշ աչքերով Սաշային գուրգուրելով:

Սաշան շփոթվեց, կարմրեց, ուրախացավ,- որ մնաց նրա հետ:

-Կուզեք ես ձեզ անուշաօծե՞մ,- կայտառ հարցրեց Լյուդմիլան,- կուզե՞ք:

-Այ թե դուք ինչպիսինն եք,- ասաց Սաշան,- դե մեկեն ու խեղդեք: Ինչո՞ւ էդպիսի դաժանություն:

Լյուդմիլան հնչեղ քրքջաց ու հենվեց բազկաթոռի թիկնակին:

-Խեղդել,- բացականչում էր նա,- հիմար, ամենեւին էնպես չհասկացար: Ես ոչ թե ձեռքերով եմ ձեզ ուզում խեղդել, այլ օծանելիքով:

Սաշան ծիծաղկոտ ասաց.

-Հա, օծանելիքով: Դե դա դեռ ոչինչ:

Լյուդմիլան պայուակից հանեց ցնցղնիչը, պտեցրեց Սաշայի աչքերի առաջ ոսկեգույն նախշերով մգակարմիր գեղեցիկ սրվակիկը ապակու մգակարմիր ոսկե նախշերով, գուտապերչե գնդիկով եւ բրոնզե լրակազմով, եւ ասաց.

-Տեսնում եք, երեկ նոր հեղուկացիր եմ առել, եւ այդպես էլ մոռացել եմ այն պայուսակիս մեջ:

Հետո հանեց օծանելիքով մեծ սրվակը, մուգ. խայտաբղետ պիտակով՝ փարիզյան Գերլե նովա Pao-Rosa: Սաշան ասաց.

-Ձեր պայուսակն այս ինչ խորն է:

Լյուդմիլան զվարթ պատասխանեց.

-Դե, այլեւս բան մի սպասեք, ձեզ քաղցրաբլիթ ձեզ չեմ բերել:

-Քաղցրաբլիթ,- ծիծաղկոտ կրկնեց Սաշան: Նա հետաքրքրությամբ նայում էր, ինչպես էր Լյուդմիլան բացում օծանելիքը, եւ հարցրեց.

-Իսկ դուք ինչպես կլցնեք առանց ծագարի:

Լյուդմիլան ուրախ ասաց.

-Դե իսկ ծագարը դուք ինձ կտաք:

-Բայց ես չունեմ,- շփոթված ասաց Սաշան:

-Դե ինչպես կուզեք, իսկ ծագարն ինձ մատուցեք,- ծիծաղելով, պնդում էր Լյուդմիլան:

-Դե ես Սալանյայից կվերցնեի, բայց այն թորած նավթի մեջ է,- ասաց Սաշան:

Լյուդմիլան ուրախ քրքջաց:

-Ախ, դուք, անխելամիտ երիտասարդ: թուղթ դե տվեք, եթե ափսոս չէ,- ահա եւ ծագարը:

-Ախ, իրոք որ,- ուրախալի բացականչեց Սաշան. - չէ որ կարելի է թղթից սարքել: Հիմա կբերեմ:

Սաշան վազեց իր վենասենյակը:

-Տետրակից կարելի՞ է,- գոչեց ան այնտեղից:

-Դե միեւնույն է,- զվարթ արձագանքեց Լյուդմիլան,- դե թեկուզ գրքույկից պոկեք, լատիներենի քերականությունից,- ինձ ափսոս չէ:

Սաշան ծիծաղեց ու գոչեց.

-Դե չէ, ես ավելի լավ է տետրակից:

Նա մաքուր տետր գտավ, պոկց մեջտեղի թերթը եւ ուզում էր հյուրասենյակ վազել, բայց Լյուդմիլան և արդեն կանգնած էր շեմին:

-Քեզ մոտ, տանտեր, կարելի՞ է,- հարցրեց նա կայտառորեն:

-Խնդրեմ, շատ ուրախ եմ,- խնդագին գոչեց Սաշան:

Լյուդմիլան նստեց նրա սեղանի մոտ, թղթից ծագար սարքեց եւ գործնական- մտահոգ դեմքով սկսեց օծանելիքը սրվակից լցնել ցնցղնիչի մեջ: Թղթե ծագարը ներքեւից եւ կողքից, որտեղից հոսում էր շիթը, թացացել ու մգացել էր: Անուշահոտ հեղուկը կենում էր ծագարի մեջ եւ դանդաղ վար էր հոսում: Փչեց, սուր սպիրտի հոտին խառնած, վարդի քաղցր անուշահոտը:

Լյուդմիլան ցնցղնիչի մեջ լցրեց սրվակի օծանելիքի կեսն ու ասաց.

-Դե, ահա եւ բավական է:

Եւ սկսեց պտուտակել ցրցղնիչը: Հետո կխկեց թաց թղթիկն ու այն տրորեց ափերի արանքում:

-Հոտոտիր,- ասաց նա Սաշային եւ ափը մոտ բերեց դեմքին:

Սաշան կռացավ, աչքերը գոցեց եւ հոտոտեց: Լյուդմիլան ծիծաղեց, ափով թեթեւ խփեց նրա շուրթերին եւ ձեռքը պահեց նրա բերանի վրա: Սաշան շիկնեց եւ համբուրեց նրա տաք, անուշահոտող ափը դողդողա-

ցող շուրթերի նուրբ հպումով: Լյուդմիլան հոգոց հանեց, քնքշագին արտհայտություն անցավ նրա սիրունատես դեմքի վրայով եւ դարձյալ փոխվեց ընտել երջանիկ խնդունության արտահայտության: Նա ասաց.

-Դե հիմա միայն տես, թե ես ինչպես քեզ կցողեմ:

Եւ սեղմեց գուտաչերչե գնդիկը: Անուշաբոյր փոշին ցայտեց, կոտորակվելով եւ տարածվելով օդում, Սաշայի բլուզի վրա: Սաշան ծիծաղում եւ հնազանդորեն շրջվում էր, երբ Լյուդմիլան նրան հրում էր:

-Լավ է բուրում, չէ՞,- հարցրեց նա:

-Շատ հաճելի,- խնդուն պատասխանեց Սաշան:- Իսկ ինչպե՞ս է դա կոչվում:

-Այ քեզ, մանուկ: Կարդա սրվակի վրա եւ կիմանաս,- ծաղրող ձայնով ասաց նա:

Սաշան կարդաց ու ասաց.

-Դե, ահա թե ինչու է վարդագույն յողի հոտ փչում:

-Յուղի - կշտամբական ասաց Լյուդմիլան եւ թեթեւակի խփեց Սաշայի մեջքին:

Սաշան ծիծաղեց, ճղճղալով եւ դուրս հանելով խողովակիկի պես ոլորած լեզվի ծայրը:

Լյուդմիլան ելավ ու դարսդարսում էր Սաշայի դասագրքերն ու տետրերը:

-Կարելի՞ է նայել,- ասաց նա:

-Շնորհ արեք,- ասաց Սաշան:

-Դե ո՞ւր են էստեղ քո զրոներն ու մեկերը, ցույց տուր:

-Ես էդպիսի հիասքանչություններ չունեմ դեռ,- նեղացած առարկեց Սաշան:

-Դե, դու այդ ստում ես,- վճռականորեն ասաց Լյուդմիլան,- դե ծեր վիճակն այդպիսին է՝ մեկեր ստանալ: Թաքցրել ես, երեւի:

Սաշան լուռ ժպտում էր:

-Լատիներենը եւ մեկ էլ հույները,- ասաց Լյուդմիլան,- այ թե դրանք ձանձրացրել են ձեզ:

-Ոչ, ինչու,- պատասխանում էր Սաշան, բայց երեւում էր, որ միայն խոսակցությունը դասագրքերի մասին նրա վրա ընտել տաղտուկ էր բերում:- Ձանձրալի է անգիր անելը՝ դե ոչինչ, իմ հիշողությունը լավն է: Այ

միայն թե խնդիրնր լուծել՝ դա ես սիրում եմ:

-Վաղը եկ ինձ մոտ ճաշից հետո,- ասաց Լյուդմիլան:

-Շնորհակալ եմ, կգամ,- կարմրելով, ասաց Սաշան:

-Նրան հաճելի էր, որ Լյուդմիլան իրեն հրավիրեց:

Լյուդմիլան հարցնում էր.

-Գիտե՞ս. ես որտեղ եմ ապրում: Կգա՞ս:

-Գիտեմ: Լավ, կգամ,- բերկրալի ասում էր Սաշան:

-Այո, անպայման արի,- խիստ կրկնեց Լյուդմիլան՝ կսպասեմ, լսո՞ւմ ես:

-Իսկ եթե դասերը շա՞տ լինեն,- ասաց Սաշան, ավելի շատ բարեխղճությունից, քան թե իրականում դասերի պատճառով չգալու մասին մտածելով:

-Դե այ քեզ պարապ բաներ, այդուհանդերձ արի,- պնդում էր Լյուդմիլան,- թերեւս, ցցի վրա չեն նստացնի:

-Իսկ ինչո՞ւ,- քմծիծաղելով, հարցրեց Սաշան:

-Դե այդպես է պետք: Արի, ինչ-որ բան քեզ կասեմ, ինչ-որ բան ցույց կտամ,- ասում էր Լյուդմիլան, թռչկոտելուլ եւ երգելով, շրջազգեստը ծգելով, թողնելով վարդագույն մատները,- արի, քնքուշ, արծաթե, ոսկեզօծված:

Սաշան ծիծաղեց:

-Իսկ դուք այսօր ասեք,- ծնրադրեց նա:

-Այսօր չի կարելի: դե եւ ինչպե՞ս քեզ ասեմ այսօր: Դե դու վաղն արդեն չես գա, կասես՝ չարժե:

-Դե, լավ, անպայման կգամ, եթե թողնեն:

-Դե ահա, հարկե, կթողնեն: Մի՞թե ձեզ շղթայված են պահում:

Հրաժեշտ տալիս, Լյուդմիլան համբուրեց Սաշայի ճակատը եւ ձեռքը բարձրացրեց դեպ Սաշայի շուրթերը,- ստիպված եղավ համբուրել: եւ Սաշային հաճելի էր մեկ անգամ եւս համբուրել սպիտակ, քնքուշ ձեռքը,- եւ ասես ամոթ էր, ինչպես չկարմրես: Իսկ Լյուդմիլան, գնալիս, ժպտում էր խորամանկ ու քնքուշ: Եւ մի քանի անգամ շրջվեց:

«Ինչ քնքուշն է նա»,- մտածում էր Սաշան: Մենակ մնաց:

«Ինչ շուտ գնաց նա,- մտածում էր:- Հանկարծ հավաքվեց եւ չթողեց ուշքի գալ, եւ արդեն նա չկա: Դե փոքր ինչ էլ մնար»,- մտածում էր Սաշան, եւ նա ամաչեց, դե ինչպես նա մոռացավ առաջարկել ուղեկցել

նրան:

«Դե փոքր ինչ էլ նրա հետ քայլեր,- երազում էր Սաշան:- Սի՞թե կհասնեմ: Արդյոք հեռո՞ւ է նա գնացել: Որ արագ վազես, շուտ կհասնես»:

«Կծիծաղի, թերեւս,- մտածում էր Սաշան:- Իսկ գուցե թե, մեկ է կխանգարեմ նրան»:

Այդպես էլ չվճռեց նրա ետքից վազել: Ինչ-որ տաղտկալի ու անհարմար ստացվեց: Ծուրթերի վրա դեռ համբոյրի քնքուշ զգացողությունն էր մարմրում եւ ճակատի վրա այրվում էր նրա համբույրը:

«Ի՜նչ քնքուշ է նա համբուրում,- երազկոտ հիշում էր Սաշան:- Ասես քնքուշ քույրիկ»:

Սաշայի այտերն այրվում էին: Քաղցրալի ու ամոթալի էր: Անպարզ երազներ էին ծնվում:

««Եթե նա քույրս լիներ»,- գորովագին երազում էր Սաշան:- եւ կարելի էր գալ նրա մոտ, գրկել, քնքուշ խոսք ասել: Կանչել նրան՝ Լյուդմիլոչկա, քնքուշս: Կամ էլ էլի ինչ-որ, լրիվ յուրահատուկ անունով,- Բուբա կամ Մորեխ: Եւ որպեսզի նա արձագանքի: Այ թե ուրախություն կլիներ»:

«Դե ահա,- տրտում մտածում էր Սաշան,- նա օտար է. քնքուշ, բայց օտար: Եկավ ու գնաց, եւ արդեն իմ մասին, երեւի թե, չի էլ մտածում: Միայն թողեց քաղցր անուշահոտությունը եղրեւանիով եւ վարդով եւ զգացողությունը երկու քնքուշ համբույրներից,- եւ անպարզ հուզմունքը հոգում, քաղցր երազ ծնող, ինչպես ալիքը՝ Աֆրոդիտե»:

Ծուտով եկավ Կոկովկինան:

-Թու, այս ինչ ուժեղ է բուրում,- ասաց նա:

Սաշան կարմրեց:

-Լյուդմիլան էր եկել,- ասաց նա,- դե ձեզ չհասցրեց տեսնի, նստեց, ինձ անուշաօծեց ու գնաց:

-Այ քեզ անտաշություններ,- զարմացած ասաց պառավը,- այ քեզ Լյուդմիլոչկա:

Սաշան ամաչկոտ ծիծաղեց եւ վազեց իր մոտ: Իսկ Կոովկինան մտածում էր, որ ինչ-որ շատ զվարթ ու սիրալիր օրիորդներ են այդ Ռուտիլով քույրերը,- թե մեծին եւ թե փոքրին իրենց գորովանքով կդյութեն:

***

Հաջորդ օրն առավոտից Սաշայի համար ուրախալի էր մտածելը, որ իրեն հյուրասիրել են: Տանն անհամբեր նա սպասում էր ճաշին: Ճաշից հետո, շփոթմունքից ամբողջովին կարմիր, Կոկովկինայից մինչեւ յոթը Ռուտիլովների մոտ գնալու թույլտվություն խնդրեց: Կոկովկինան զարմացավ, բաց թուլ տվեց: Սաշան վազեց ուրախ, մանրակրկիտ սանրվելով եւ նույնիսկ մազերը յուղելով: Նա ուրախանում եւ փոքր ինչ հուզվում էր, ինչպես ինչ-որ հաճելի եւ նշանակալից բանի առաջ: Եւ նրան հաճելի էր մտածելը, թե ահա ինքը կգա, կհամբուրի Լյուդմիլայի ձեռքը եւ նա էլ կհամբուրի իր ճակատը,- եւ հետո, երբ նա գնա, կրկին այդպիսի համբույրներ: Քաղցրալի նրան երազվում էր Լյուդմիլայի սպիտակ, քնքուշ ձեռքը: Դեռ նախասրահում Սաշային դիմավորեցին բոլոր երեք քույրերը: Իսկ նրանք սիրում էին նստել պատուհանի մոտ, նայելով փողոցին, իսկ հետո հեռվից տեսան նրան: Խնդուն, զուգված, զրնգունծլվլացող, նրանք նրան շրջապատեցին զվարճանքի մոլեգին մրրիկով,- եւ նա իրեն մեկեն նանց հետ թեթեւ ու հաճելի զգաց:

-Ահա նա երիտասարդ խորհրդավոր մարդը,- բերկրալի բացականչեց Լյուդմիլան: Սաշան համբուրեց նրա ձեռքը եւ դա արեց հմուտ եւ մեծ հաճույքով: Միաժամանակ համբուրեց եւ Դարյայի ու Վալերիայի ձեռքերը,- դե հո չես կարող նրանց շրջանցել,- եւ գտավ, որ դա էլ բավական հաճելի է: Առավել եւս, որ նրանք բոլոր երեքն էլ համբուրեցին նրա այտը՝ Դարյան զրնգուն, բայց անտարբեր, հանց տախտակի, Վալերիան քնքուշ, աչքերը վար բերեց,- խորամանկ աչուկները,- թեթեւակի քրքջաց եւ կամացուկ հպվեց իր թեթեւ, բերկրուն շուրթերով,- ինչպես խնձորենու նրբին ծաղիկը, անուշաբույր, ընկավ այտի վրա,- եւ Լյուդմիլան համբուրեց բերկրալի, զվարթ ու պինդ:

-Սա՝ իմ հյուրն է,- վճռականորեն հայտարարեց նա, բռնեց Սաշայի ուսերից ու տարավ իր մոտ:

Իսկ Դարյան տեղնուտեղը բարկացավ:

-Հա քոնն է, դե ուրեմն համբուրվիր նրա հետ,- բարկացկոտ գոչեց նա:- Գանձ է գտել: ոչ մեկը չի խլի:

Վալերիան ոչինչ չասաց, միայն քմծիծաղեց,- շատ հետաքրքիր է տղեկի հետ զրուցելը: Ի՞նչ է նա հասկանում:

Լյուդմիլայի վերնասենյակում ընդարձակ, ուրախ եւ լուսավոր էր

դեպ այգին նայող երկու մեծ պատոհաններից, փոքր ինչ ծածկված թեթեւ, դեղնավուն շղարշագործվածքով: Քաղցր էր բուրում: Բոլոր իրերը կեցած էին շքեղազարդ ու լուսավոր: Բազկաթոռներն ու աթոռները պատված էին ոսկեդեղին գործվածքով, սպիտակ, հազիվ նկատելի նախշով: Երեւում էին տարատեսակ օծանելիքներով սրվակները, անուշահոտ ջրերով,նկաներ, տուփիկներ, հովհարներ եւ մի քանի ռուսերեն եւ ֆրանսերեն գրքույկներ:

-Իսկ ես քեզ ասօր գիշեր երազում եմ տեսել - քրքջալով պատմում էր Լյուդմիլան,- դու իբր թե քաղաքային կարմրջի մոտ էիր լողում, իսկ ես նստած էի կամրջի վրա եւ քեզ կարթով որսացի:

-Եւ բանկայի մե՞ջ դրեցիք,- ծիծաղկոտ ասաց Սաշան:

-Ինչո՞ւ բանկայի մեջ:

-Իսկ բա ո՞ւր:

-Ո՞ւր: Ականջներդ պոկեցի, եւ ետ վտակը գցեցի:

Եւ Լյուդմիլան զրնգուն ու երկար քրքջում էր:

-Այ թե դուք ինչպիսինն եք,- ասաց Սաշան:- Դուք ի՞նչ էիք ուզում ինձ այսօր ասել:

Լյուդմիլան ծիծաղում եւ չէր պատասխանում:

-Խաբել եք, երեւի թե,- գլխի ընկավ Սաշան:- Եւ մեկ էլ խոստացել էիք ինչ-որ բան ցույց տալ,- կշտամբական ասաց նա:

-Ես քեզ ցույց կտամ, ուտել ուզո՞ւմ ես,- հարցրեց Լյուդմիլան:

-Ես ճաշել եմ,- ասաց Սաշան:- Ինչ սուտասանն եք դուք:

-Ծատ պետք է ինձ քեզ խաբել: Այս ի՞նչ պոմադայի հոտ է քեզանից փչում,- հանկարծ հարցրեց Լյուդմիլան:

Սաշան կարմրեց:

-Տանել չեմ կարողանում պոմադան,- նեղսրտած ասում էր Լյուդմիլան:- Պոմադա քսած օրիորդ:

Նա ձեռքերը տարավ նրա մազերի վրայով, ձեռքը յուղոտեց եւ ափով շրխկացրեց այտին:

-Խնդրում եմ, չամարձակվես յուղոտվել,- ասաց նա:

Սաշան շփոթվեց:

-Դե, լավ, չեմ անի,- ասաց նա:- Դե ինչ խիստն եք: Չէ որ դուք օծանելիքով անուշաօծվում եք:

-Դե այն օծանելիք է, իսկ սա պոմադա, հիմար, համեմատելու բան

գտավ,- համոզիչ տոնով ասաց Լյուդմիլան:- Ես երբեք պոմադա չեմ քսի: Ինչո՞ւ մազերս սոսնձեմ: Օծանելիքը լրիվ այլ բան է: Արի ես քեզ անուշաօծեմ: Ոգո՞ւմ ես: Եղրեւանիով օծեմ,- կամենո՞ւմ ես:

-Ուզում եմ,- ասաց Սաշան, ժպտալով: Նրա համար հաճելի էր մտածելը, որ նա տուն կբերի բուրմունքը եւ նորից Կոկովկինային կզարմացնի:

-Ո՞վ է ցանկանում,- վերահարցրեց Լյուդմիլան, ձեռքը վերցրեց եղրեւանիով սրվակիկը եւ հարցական ու խորամանկ նայում էր Սաշային:

-ես ուզում եմ,- կրկնեց Սաշան:

-Չէ որ դո հաչում ես, հաչո՞ւմ ես, ահա թե ինչ, հաչո՞ւմ ես,- զվարթ ծանակում էր Լյուդմիլան:

Սաշան եւ Լյուդմիլան ուրախ քրքջում էին:

Հո չե՞ս վախենում, թե քեզ կխեղդեմ,- հարցրեց Լյուդմիլան. - հիշո՞ւմ ես, թե երեկ ինչպես վախեցար:

-Եւ ոչ էլ վախեցա,- շիկնելով, կրքոտ պատասխանում էր Սաշան:

Լյուդմիլան, քմծիծաղելով եւ տղային ծանակելով սկսեց նրան եղրեւանիով օծել: Սաշան շնորհակալություն հայտնեց ե նորից նրա ձեռքը համբուրեց:

-Եւ խնդրում եմ, մազերը կտրեք,- խիստ ասաց Լյուդմիլան,- ինչ լավ բան է խոպոպներ կրելը, ծիերին սանրվածքով վախեցնելը:

-Դե, լավ, կկտրեմ,- հմածայնվեց Սաշան,- սարսափելի խստություններ: Դե իմ մազերը դեռ կարճ են, մի կես մատնաչափ, դեռ տեսուչն ինձ մազերի համար բան չի ասել:

-Ես սիրում եմ մազերը կտրած երիտասարդներին, նկատիր դա,- հանդիսավոր ասաց Լյուդմիլան եւ նրա վրա մատ թափ տվեց:- Եւ ես քեզ տեսուչ եմ, ինձ պետք է լսել:

***

Այդ ժամանակվանից Լյուդմիլան սկսեց ավելի հաճախ Կոկովկինայի մոտ գնալ, Սաշայի համար: Նա ջանում էր, հատկապես սկզբում, գալ, երբ կոկովկինան տանը չէր լինում: երբեմն նոյնիսկ խորամանկությունների էր գնում, պառավին տնից դուրս էր անում: Դարյան նրան մի անգամ ասաց.

-Ախ, դու վախլուկ: Պառավից ես վախենում: Իսկ դու նրա ներկայու-

թյամբ արի, դե եւ նրան էլ տար,- զբոսնելու:

Լյուդմիլան լսեց,- եւ արդեն սկսեց գալ երբ պատահի: Եթե Կոկովկինային տանն էր գտնում, ապա, նրա հետ փոքր ինչ նստելով, Սաշային տանում էր զբոսնելու, բայց ընդ որում նրան կարճ ժամանակ էր պահում:

Լյուդմիլան եւ Սաշան ընկերացան քնքուշ, բայց անհանգիստ ընկերությամբ: Ինքն էլ այդ չնկատելով Լյուդմիլան Սաշայի մեջ արթնացնում էր վաղաժամ դեռեւս անպարզ, ձգտումներ եւ ցանկություններ: Սաշան հաճախ էր համբուրում Լյուդմիլայի ձեռքերը,- նրբին, ճկուն դաստակները, քնքուշ, առաձիգ մաշկով ծածկված,- դրա դեղնավարդագույն հյուսվածքի միջից նշմարվում էին գալարուն կապույտ երակները: Եւ ավելի վեր՝ երկար, սլացիկ՝ մինչեւ արմունկը հեշտ էր համբուրելը, կողմ տանելով լայն թեւքերը:

Սաշան երբեմն Կոկովկինայից թաքցնում էր, որ Լյուդմիլան էր եկել: Չէր խաբում, այլ միայն լռում էր: Դե եւ ինչպես խաբեր,- դե աղախինն էլ կարող էր ասել: Եւ Լյուդմիլայի այցելությունների մասին լռելը հեշտ չէր Սաշայի համար՝ Լյուդմիլայի ծիծաղն այդպես ու ծածանվում էր ականջներում, ուզում էր նրա մասին խսել: Իսկ խոսելը՝ ինչ-որ ամիարմար է:

Սաշան ապագ ընկեցավ եւ մյուս քույերի հետ: Բոլորի ձեռքերն էլ-համբուրում էր եւ նույնիսկ շուտով օրիորդներին սկսեց կոչել Դաշենկա, Լյուդմիլոչկա եւ մեկ էլ Վալերոչկա:

XVII

Լյուդմիլան կեսօրին Սաշային հանդիպելով փողոցում, նրան ասաց.

-Վաղը տնօրինուհու մոտ մեծ աղջիկն անվանակոչիկ է՝ քո պառվուկը գնալո՞ւ է:

-Չգիտեմ,- ասաց Սաշան:

Եւ նույնիսկ բերկրալի հույս շարժվեց նրա հոգում եւ նույնիսկ ոչ այնքան հույս, որքան ցանկություն՝ Կոկովկինան կգնա, իսկ Լյուդմիլան հենց այդ ժամանկ կգա եւ կմնա իր հետ: Երեկյան նա Կոկովկինային հիշեցրեց վաղվա տոնակատարության մասին:

-Քիչ էր մնում մոռանայի,- ասաց Կոկովկինան:- Կգնամ: Դե նա այնքան քնքուշ աղջիկ է: վ իրոք, երբ Սաշան վերադարձավ գիմնազիա-

յից, Կոկովկինան գնաց խրիպաչների մոտ: Սաշային ուրախացնում էր այն միտքը, որ այս անգամ նա Կոկովկինային տնից հեռացչեց: Նա արդեն համոզված էր, որ Լյուդմիլան գալու ժամանակ կգտնի:

Այդպես էլ եղավ,- Լյուդմիլան եկավ: Նա համբուրեց Սաշայի այտը, թույլ տվեց, որ նա իր ձեռքը համբուրի եւ խնդագին ծիծաղեց, իսկ նա շառագունեց: Լյուդմիլայի զգեստներից տամուկ, քաղցր, ծաղկային բուրմունք էր գալիս,- վարդահիրիկ, զգայական եւ ցանկագրգիռ հիրիկը, լուծված քաղցրաերազուն վարդերում: Լյուդմիլան բարալիկ թղթի մեջ փոքրիկ տուփիկ էր բեել, ընդմեջ որի լուսաշողում էր դեղնավուն մի գծանկար: Նստեց, տուփիկը դրեց իր ծնկներին եւ խորամանկ նայեց Սաշային:

-Խուրմա սիրո՞ւմ ես,- հարցրեց նա:

-Հարգում եմ,- ասաց Սաշան ծիծաղկոտ ծամածռանքով:

Նա բացեց տուփն ու ասաց.

-Կեր:

Ինքը հանում էր հատով պտուղները, դնում էր դրանք Սաշայի բերանն ու ամեն մեկից հետո ստիպում էր համբուրել իր ձեռքը: Սաշան ասաց.

-Դե իմ շուրթերը քաղցրացել են:

-Դե ինչ դժբախտություն է, որ քաղցր են, համբուրիր քեզ համար,- զվարթ ասաց Լյուդմիլան,- ես չեմ նեղանա:

-Ավելի լավ է ես ձեզ մեկեն համբուրեմ,- ասաց Սաշան ծիծաղկոտ: Եւ այն է ինքը ձգվեց պտղի ետեւից:

-Կխաբես, կխաբես,- գոչեց Լյուդմիլան, ճարպկորեն տուփը փակեց եւ խփեց Սաշայի մատներին:

-Դե, այ քեզ բան, ես՝ ազնիվ եմ, դե ես չեմ խաբի,- հավատացնում էր Սաշան:

-Ոչ, ոչ, չեմ հավատա,- պնդում էր Լյուդմիլան:

-Դե, կուզեք, նախօրոք համբուրեմ,- առաջարկեց Սաշան:

-Այ դա բան է,- բերկրալի ասաց Լյուդմիլան,- համբուրիր:

Նա ձեռքը մեկնեց Սաշային: Սաշան վերցրեց նրա նրբին, երկար մատները, մեկ անգամ համբուրեց եւ խորամանկ ժպիտով հարցրեց, նրա ձեռքը բաց չթողնելով.

-Իսկ դուք չե՞ք խաբի, Լյուդմիլոչկա:

-Իսկ մի՞թե ես ազնիվ չեմ,- խնդագին պատասխանեց Լյուդմիլան,- իհարկե, չեմ խաբի, համբուրիր անվարան:

Սաշան հակվեց նրա ձեռքի վրա եւ սկսեց արագ համբորել այն. ձեռքը հավասար ծածկեց համբույրներով եւ հնչեղ չպպացնում էր լայնաբաց շուրթերով, եւ նրա հաճելի էր, որ այդքան շատ կարելի է համբուրել: Լյուդմիլան ուշադիր համրում էր համբույրները: Մինչեւ տասը հաշվեց ու ասաց.

-Քեզ անհարմար է ոտքի վրա կանգնած, կռանալ է պետք:

-Դե, ուրեմն ես ավելի հարմար կտեղավորվեմ,- ասաց Սաշան:

Ծնկի իջավ եւ ջանադրաբար շարունակում էր համբուրել:

Սաշան ուտել սիրում էր: Նրան դուր էր գալիս, որ Լյուդմիլան իրեն քաղցրով է հյուրասիրում: Դրա համար նա ավելի քնքուշ էր նրան սիրում:

***

Լյուդմիլան Սաշային ցողեց քաղցրաձոր-բուրավետ օծանելիքով: Եւ Սաշային զարմացրեց դրա բույրը, քաղցր, բայց տարօրինակ, պտտեցնող, մշուշա-լուսավոր, ինչպես ոսկեզօծ վաղաժամ արշալոյսը ճերմակ մեգի ետքում: Սաշան ասաց.

-Ինչ տարօրինակ օծանելիք է:

-Իսկ դու ձեռքով փորձիր - խորհուրդ տվեց Լյուդմիլան:

Եւ նրան տվեց քառանկյունի կլորավուն կողքերով տգեղ բանկան: Սաշան նայեց լույսին,- վառ-դեղին, զվարթ հեղուկ է: Խոշոր, բազմաբղետ պիտակ, ֆրանսերեն մակագրություն,- ալպյան մանուշակ Պիվերից: Սաշան բռնեց ապակյա ողորկ խցանը, հանեց այն, հոտոտեց օծանելիքը: Հետո արեց այնպես, ինչպես սիրում էր Լյուդմիլան. ափը դրեց սրվակի բկին, արագ շրջեց եւ նորից ետ տարավ, տրորեց ափերի վրա ալպյան մանուշակի կաթլները եւ ուշադիր հոտոտեց ափը,- սպիրտը ցնդեց, մնաց մաքուր բույրը: Լյուդմիլան նայում էր նրան իրեն հուզող սպասումով: Սաշան անվստահ ասաց.

-Փոքր ինչ շաքար դրած փայտոջիլի հոտ է փչում:

-Դե, դե, մի խաբիր, խնդրում եմ,- նեղսրտած ասաց Լյուդմիլան:

Նա նույնպես օծանելիքը ձեռքն առավ ու հոտոտեց: Սաշան կրկնեց.

-Ճիշտ որ, փայտոջիլի:

Լյուդմիլան հանկարծ շիկնեց, եւ այնպես, որ արցունքները շողացին աչքերին, խփեց Սաշայի այտին ու ճչաց.

-Ա՛խ, դու, չար տղա, առ քեզ փայտոջիլի համար:

-Լավ ծեծեցիր,- ասաց Սաշան, ծիծաղեց ու համբուրեց Լյուդմիլայի ձեռքը:

-Դե ինչ եք դուք այդպես բարկանում, աղավնյակ Լյուդմիլոչկա: Դե, ըստ ձեզ ի՞նչ է այն հոտում:

Նա չէր բարկացել հարվածից,- լիովին դյութված էր Լյուդմիլայով:

-Ի՞նչ,- հարցրեց Լյուդմիլան եւ բռնեց Սաշայի ականջը,- այ թե ինչ, ես հիմա քեզ կասեմ, միայն թե սկզբում ականջդ քաշեմ:

-Օյ, օյ, օյ, Լյուդմիլոչկա, սիրելիս, չեմ անի,- ցավից կնճռոտելով եւ կռանալով, ասում էր Սաշան:

Լյուդմիլան բաց թողեց կարմրած ականջը, քնքուշ Սաշային դեպ իրեն ձգեց, նստեցրեց ծնկներին ու ասաց.

-Լսիր՝ երեք ոգի է ապրում ալպյան մանուշակի մեջ,- քաղցր ամրոս է բուրում խեղճ ծաղիկը,- դա աշխատավոր մեղուների համար է: Չէ որ դու գիտես, ռուսերեն այն դրյակվա է կոչվում:

-Դրյակվա,- ծիծաղելով, կրկնեց Սաշան,- ծիծաղելի անունիկ է:

-Սի ծիծաղիր, չարաճճի,- ասաց Լյուդմիլան, բռնեց նրա մյուս ականջից եւ շարունակում էր. - քաղցր ամրոս, եւ դրա վրա բզզում են մեղուները, դա՝ նրա բերկրանքն է: Եւ մեկ էլ քնքուշ վանիլ է բուրում, եւ դա արդեն մեղուների համար չի, այլ նրա համար, ում մասին երազում են, եւ դա՝ նրա ցանկությունն է,- ծաղիկը եւ ոսկե արեւը նրա վրա: Եւ նրա երրորդ ոգին, այն քնքուշ, քաղցր մարմին է բուրում, նրա համար, ով սիրում է, եւ դա՝ նրա սերն է,- խեղճ ծաղիկը ե միջօրյա ծանր տապը: Մեղուն, արեւը, տապը,- հասկանո՞ւմ ես, իմ լույսիկ:

Սաշան լուռ գլխով արեց: Նրա թուխ դեմքը այրվում էր եւ երկար մոգ թարթիչները թրթռում էին: Լյուդմիլան երազկոտ նայում էր հեռու՝ շիկնած, եւ ասում էր.

-Նա ուրախացնում է, քնքուշ եւ արեւային ալպյան մանուշակը, այն ձգում է առ ցանկությունները, որոնցից քաղցր եւ ամոթ է, այն հուզում է արյունը: Հասկանում ես, իմ արեւ, երբ քաղցր է, եւ բերկրալի, եւ ցավոտ, ե ուզում ես լալ: Հասկանո՞ւմ ես, թե ինչպիսին է այն: Երկար համբույրով նա հպվեց Սաշայի շուրթերին:

***

Լյուդմիլան մտախոհ նայում էր իր առջեւ: Հանկարծ խորամանկ քմծիծաղ սահեց նրա շուրթերի վրայով: Նա թեթեւակի հրեց Սաշային ու հարցրեց.

-Դու վարդեր սիրո՞ւմ ես:

Սաշան հոգոց հանեց, քաղցր ժպտաց եւ կամացուկ շշնջաց.

-Սիրում եմ:

-Մեծե՞րը,- հարցրեց Լյուդմիլան:

-Դե ամեն տեսակի, եւ մեծերը, եւ փոքրերը,- ժիր ասաց Սաշան եւ ճարպիկ տղայական շարժումով ելավ նրա ծնկներից:

-Վարդիկնե՞ր էլ ես սիրում,- քնքշորեն հարցրեց Լյուդմիլան, եւ նրա զրնգուն ձայնը դողդողում էր թաքուն ծիծաղից:

Սիրում եմ,- արագ պատասխանեց Սաշան:

Լյուդմիլան քրքջաց ու կարմրեց:

-Հիմար, վարդիկներ սիրում ես, բայց քոթակող չկա,- գոչեց նա: Երկուսն էլ քրքջում եւ կարմրում էին:

Ըստ հուզմունքի անհրաժեշտության անմեղ բաները Լյուդմիլայի համար կազմում էին նրանց կապի հիմնական թովչանքը: Դրանք հուզում էին,- եւ հեռու էին կոպիտ, նողկալի նվաճումներից:

***

Վիճեցին, թե ով է ավելի ուժեղ: Լյուդմիլան ասաց.

-Դե, թող որ դու ավելի ուժեղ ես, դե ի՞նչ: Բանը ճարպկության մեջ է:

-Ես ճարպիկ էլ եմ,- պարծենում էր Սաշան:

-Իրենն է քշում, ճարպիկը,- ծաղրական ձայնով բացականեց Լյուդմիլան:

Դեռ երկար վիճում էին: Վերջապես Լյուդմիլան առաջարկեց.

-Դե, արի մրցենք:

Սաշան ծիծաղեց եւ աշխույժ ասաց.

-Դե ուր է, թե դուք իմ հախից գաք:

Լյուդիլան սկսեց խուտուտ տալ նրան:

-Ախ, դուք այդպես,- քրքիջով գոչեց նա, շրջվեց ու գրկեց նրա իրանը: Իրարանցում սկսվեց: Լյուդմիլան միանգամից տեսավ, որ Սաշան ավելի ուժեղ է, ուժով չես հաղթի, ուրեմն նա, հարմար պահ գտավ,

խփեց նրա ոտնատակին,- նա ընկավ, դե եւ Լյուդմիլային էլ քաշեց իր հետ: Լյուդմիլան ճարպկորեն պտտվեց եւ նրան հատակին դեմ տվեց: Սաշան հուսահատ գոչում էր.

-Այդպես անազնիվ է:

Լյուդմիլան ծնկներով կանգնեց նրա փորի վրա եւ ձեռքերով նրան սեղմեց հատակին: Սաշան հուսահատ դուրս էր պրծնում: Լյուդմիլան նորից սկսեց խուտուտ տալ նրան: Սաշայի գրնգուն քրքիջը խառնվեց նրա քրքիջին: Քրքիջը նրան ստիպեց Սաշային բաց թողնել: Նա հռհռալով ընկավ հատակին: Սաշան վեր թռավ: Նա շառագունած ու սրտնեղած էր:

-Ցրահարս,- գոչեց նա:

Իսկ ջրահարսը պառկել էր հատակին ու քրքջում էր:

Լյուդմիլան Սաշային նստեցրել էր իր ծնկներին: Պայքարից հետո հոգնած, նրանք խնդագին ու մոտ նայում էին միմյանց աչքերին ու ժպտում էին:

-Ես ձեզ համար ծանր եմ,- ասաց Սաշան,- ձեր ծնկները կտրորեմ, դուք ավելի լավ է ինձ իջեցրեք:

-Ոչինչ, տեղդ նստիր,- քնքշորեն պատասխանեց Լյուդմիլան:- Չէ որ դու ինքդ էիր ասում, որ գրգվել սիրում ես:

Նա շոյեց նրա գլուխը: Նա քնքշորեն սեղմվեց նրան: Լյուդմիլան ասաց.

-Բայց ինչ գեղեցիկ ես դու, Սաշա:

Սաշան կարմրեց, ծիծաղեց:

Դուք էլ հո չեք հորինի,- ասաց նա:

Գեղեցկության մասին մտքերն ո խոսակցությունները իր վերաբերյալ ինչ-որ շփոթեցրին նրան. նա դեռ երբեք չէր հետաքրքրվել իմանալ գեղեցիկ թե այլանդակ է նա թվում մարդկանց:

Լյուդմիլան կճմտեց Սաշայի այտը: Սաշան ժպտաց: Այտը կարմրեց բծով: Դա գեղեցիկ էր: Լյուդմիլան կճմտեց եւ մյուս այտը: Սաշան չէր դիմադրում: Նա միայն վերցրեց նրա ձեռքը, համբուրեց ու ասաց.

Դե բավական է կճմտեք, չէ որ ինձ էլ ցավոտ է, դե եւ դուք էլ ձեր մատներին էլ կոշտուկներ կառաջացնեք:

-Իրենն է քշում,- ձգեց Լյուդմիլան,- ցավոտ է, իսկ ինքը ինչ հաճոյախոսն է դարձել:

-Ես ժամանակ չունեմ, դասերը շատ են: Ինձ փոքր ինչ էլ փաղաքշեք, ի երջանկություն, որպեսզի հույնիին հինգի պատասխանեմ:

-Ձանփու ես դնում,- ասաց Լյուդմիլան: Ձանկեց նրա ձեռքը եւ թեւքը մինչեւ արմունկը բարձրացրեց:

-Խփե՞լ եք ուզում,- հարցրեց Սաշան, շփոթված ու մեղավոր կարմրելով:

Բայց Լյուդմիլան հմայվել էր նրա ձեռքով, այս ու այն կողմ էր շրջում այն եւ հանկարծ համբուրեց արմունկի մոտ:

Սաշան շառագունեց, ձեռքը ետ տարավ, բայց Լյուդմիլան պահեց այն եւ ես մի քանի անգամ համբուրեց: Սաշան սսկվեց, աչքերը վար բերեց եւ տարօրինակ արտահայտություն իջավ նրա վառ, կիսաժպտացող շուրթերի վրա,- եւ խիտ թարթիչների ծածկի տակ նրա կիզիչ այտերը սկսեցին դժգունել:

***

Հրաժեշտ տվեցին: Սաշան Լյուդմիլային ուղեկցեց մինչեւ դռնակն ու ասաց.

-Արի, քնքուշս, ավելի հաճախ, բեր ավելի քաղցր անուշահաց:

Առաջին անգամ ասված «դուն» Լյուդմիլային հնչեց որպես նրբին փաղաքշանք: Նա թափով համբուրեց Սաշային ու փախավ: Սաշան կանգնել էր ասես խլացած:

***

Սաշան խոստացավ գալ: Նշանակված ժամն անցավ՝ Սաշան չկար: Լյուդմիլան անհամբեր սպասում էր՝ դեսուդեն էր նետվում, տոչորվում, պատուհանից դուրս էր նայում: Փողոցում քայլեր կլսի՝ դուրս կնայի: Քույրերը քմծիծաղում էին: Նա բարկացկոտ ու հուզված ասում էր.

-Դե դուք էլ: Հանգիստ թողեք:

Հետո մոլեգին վրա էր պրծնում կշտամբանքներով, թե ինչու են ծիծաղում: Եւ արդեն երեւում էր, որ Սաշան չէր գալու: Լյուդմիլան սրտնեղությունից ո վրդովմունքից արտասվեցԼ

-Օյ-այ-այ: Ախ ու վախ,- ծաղրում էր Դարյան:

Լյուդմիլան, հեծկլտալով, կամացուկ խոսում էր - վշտի մղման մեջ մոռանալով բարկանալ այն բանի վրա, որ իրեն ծաղրում են.

-Ծեր զզվելի ագռավը չի թողել նրան, զգեստի տակ է պահում, որպեսզի նա հույներին սերտի:

Դարյան կոպտավուն կարեկցանքով ասաց.

-Դե նա էլ մի անտաշն է, չի կարողանում գնալ:

-Փոքրիկի հետ է կապվել,- արհամարհական քրթմնջում էր Վալերիան:

Երկու քույրերը, թեկուզ եւ քմծիծաղում էին, կարեկցում էին Լյուդմիլային: Նրանք բոլորն էլ սիրում էին միմյանց, սիրում էին քնքուշ, բայց ոչ ուժեղ՝ մակերեսային քնքուշ սեր: Դարյան ասաց.

-Ի՞նչ էլ հավես ունես, փսլնքոտի համար աչքերդ տրորես: Այ թե կարելի է ասել, որ սատանան մանկիկի հետ է կապվել:

-Այդ ո՞վ է սատանան,- զայրացագին գոչեց Լյուդմիլան եւ ամբողջովին ալ կարմրեց:

-Դե դու, նանի,- հանգիստ պատասխանեց Դարյան,- զուր որ ջահել ես, այլ միայն...

Դարյան թերասեց եւ սուր սուլեց:

-Հիմարություններ,- ասաց Լյուդմիլան տարօրինակ զրնգացող ձայնով:

Տարօրինակ, անագորույն ժպիտը արցունքների միջից լուսավորեց նրա դեմքը, ինչպես վառ այրվող շողը արեւմարին պարտասած անձրեւի անկման միջից:

Դարյան սրտմտոտ ասաց.

-Դե նրա մեջ ի՞նչ հետաքրքիր բան կա, ասա, խնդրեմ:

Լյուդմիլան միեւնույն զարմանալի ժպիտով մտախոհ եւ դանդաղ ատասխանեց.

-Դե ինչ գեղասքանչ է նա: Եւ որքան նրա մեջ չվատնված հնարավորություններ կան:

-Բայց դա էժան արժի,- վճռական ասաց Դարյան:- Դա բոլոր տղաներն էլ ունեն:

-Ոչ, էժան չի,- սրտնեղությամբ պատասխանեց Լյուդմիլան:- Կան ապականվածները:

-Իսկ նա մաքո՞ւր է,- հարցրեց Վալերիան. այնպես քամահրական ձգեց «մաքուրը»:

-Շատ ես դու հասկանում,- գոչեց Լյուդմիլան, բայց տեղնուտեղը նո-

րից խոսեց կամացուկ ե երազկոտ. - նա անմեղ է:

-Անշուշտ,- քմծիծաղոտ ասաց Դարյան:

-Տղաների համար ամենալավ տարիքն է,- ասում էր Լյուդմիլան,- տասնչորս-տասնհինգ արեկանը: Նա դեռ ոչինչ չի կարողանում եւ իրապես չի հասկանում, բայց արդեն ամեն ինչ կանխազգում է, վճռականապես ամեն ինչ: Եւ զզվելի մորուքը չկա:

-Մեծ հաճույք,- քամահրական ծամածռությամբ ասաց Վալերիան:

Նա տխուր էր: Նրան թվում էր, թե ինքը՝ փոքր է, թույլ, փխրուն, եւ նա նախանձում էր քույրերին,- Դարյայի զվարթ ծիծաղին եւ նոյնիսկ Լյուդմիլայի լացին: Լյուդմիլան կրկին ասաց.

-Դուք ոչինչ չեք հասկանում: Ես բնավ էլ այնպես չեմ սիրում, ինչպես դուք եք մտածում: Տղային սիրելն ավելի լավ է, քան բեղիկներով գռեհիկ ֆիզիոնոմիայի սիրահարվելը: Ես նրան անմեղ եմ սիրում: Ինձ նրանից ոչինչ պետք չի:

-Պետք չի, դե էլ ի՞նչ ես նրան քաշքշում,- առարկեց Դարյան:

Լյուդմիլան կարմրեց, եւ մեղավոր արտահայտությունը ծանր նստեց նրա դեմքին: Դարյան խղճաց նրան, մոտեցավ Լյուդմիլային, գրկեց նրան ու ասաց.

-Դե,մի փքվիր, չէ որ մենք չարությունից չէ, որ խոսում ենք:

Լյուդմիլան նորից արտասվեց, կպավ Դարյայի ուսին եւ վշտոտ ասաց.

-Ես գիտեմ, որ այստեղ ես որեւէ բանի վրա չեմ կարող հույս դնել, բայց դե թեկուզ փոքր ինչ նա ինձ փաղաքշեր, դե թեկուզ ինչ-որ կերպ:

-Դե ինչ, տաղտուկ - սրտնեղած ասաց Դարյան, հեռացավ Լյուդմիլայի մոտից, թեւերը կանթեց եւ զրնգուն երգեց.

Ես իրիկունն իմ քնքուշին
Թողել էի գիշերելու:

Վալերիան զրնգուն, փխրուն ծիծաղով էր բռնվել: Եւ Լյուդմիլայի աչքերն էլ խնդագին ու վավաշոտ դարձան: Նա շնչահատ անցավ իր սենյակ, իրեն կորիլոպսիսով ցողեց,- եւ բույրը, թունդ, քաղցր, տռփոտ, համակեց նրան մեղուշ գայթակղությամբ: Նա զուգված, հուզված ելավ փողոց, եւ գայթակղության անհամեստ հիաքանչություն էր ծորում

նրանից:

-Գուցե թե, եւ հանդիպեմ:,- մտածեց նա:

Եւ հանդիպեց:

-Լավն ես,- կշտամբական ու բերկրալի ճչաց նա:

Սաշան շփոթվեց եւ ուրախացավ:

-Ժամանակ չկար,- շփոթված ասաց նա,- դե դասեր են, անընդհատ պիտի սովորել, ճիշտ որ, ժամանկ չկար:

-Խաբում ես, սիրելիս, դե հիմա գնանք:

Նա ծիծաղելով չեմուչում էր անում, բայց երեւում էր, որ եւ ուրախ է այն բանից, որ Լյուդմիլան իրեն տանում է: Եւ Լյուդմիլան նրան տուն բերեց:

-Բերեցի,- հաղթական գոչեց նա քոյրերին ե ուսից բռնած Սաշային իր մոտ տարավ:

-Սպասիր, հիմա ես քո հարցերը լուծեմ,- սպառնաց նա եւ դուռը կողպեքով փակեց,- այ հիմա ոչ մեկը քեզ պաշտպան չի կանգնի:

Սաշան, ձեռքերը գոտկատեղի ետեւը դրած կանգնած էր նրա վերնասենյակի մեջտեղում - նրա համար սահմռկելի եւ հաճելի էր: Ինչ-որ նոր օծանելիք բույր էր գալիս, ցնորական, քաղցր, բայց ինչ-որ բան այդ բույրի մեջ դիպչում, քրքրում էր նյարդերը, ինչպես բերկրալի, ժրաշարժ, անողորկ օձիկների հպումը:

XVIII

Պերեդոնովը վերադառնում էր աշակերտական բնակարաններից մեկից: Հանկարծ նա մանրամաղ անձրեւի տակ ընկավ: Սկսեց մտմտալ, թե ուր մտնի, որպեսզի անձրեւի տակ չփտացնի նոր մետաքսե հովանոցը: Ճանապարհից այն կողմ, երկհարկանի քարե առանձնատան վրա նա տեսավ «Նոտար Գուդաեւսկու գրասենյակը» ցուցանակը: Նոտարի տղան սովորում էր գիմնազիայի երկորդ դասարանում: Պերեդոնովը որոշեց մտնել: Զուգընթացաբար գիմնազիստից կբողոքի: Եւ հորը եւ մորը նա տանը գտավ: Նրան ձեռ ու ոտ ընկնելով ընդունեցին: Այստեղ ամեն ինչ այդպես էր արվում Նիկոլայ Վասիլեւիչ Գուդաեւսկին ոչ բարձրահասակ, պնդակազմ, սեւահեր, ճաղատ, երկար մորուքով մարդ էր: Նրա շարժումները միշտ սրընթաց ու անսպասելի էին:. նա ասես չէր քայլում, այլ անցնում էր, կարճլիկ ինչպես ճնճղուկ,

եւ նրա դեմքից ու դիրքից երբեք չէիր կարող իմանալ, թե նա ինչ կանի հաջորդ րոպեին: Գործնական խոսակցության ժամանակ նա հանկարծ տարօրինակ մի բան կանի, որը ոչ այնքան կծիծաղեցնի, որքան շվարմունքի մեջ կգցի իր անառիթությամբ: Տանը կամ հյուրընկալվելիս նա կնստի-կնստի եւ հանկարծ վեր կթռչի եւ առանց որեւէ տեսանելի անհրաժեշտության արագ կքայլի վերնասենյակով, կճչա, կհարվածի: Փողոցում կգնա-կգնա եւ մեկ էլ կանգ կառնի, կկքանստի կամ հարձակուրդ կանի, կամ մեկ այլ մարմնամարզական վարժություն, եւ հետո կգնա առաջ: Իր կատարած կամ իր մոտ վկայվող վավերագրերում Գուդաեւսկին սիրում էր ծիծաղելի նշումներ անել, օրինակ, Մոսկովյան հրապարակի վրա, Երմիլովի տանն ապրող Իվան Իվանիչ Իվանովի փոխարեն, նա գրում էր Իվան իվանիչ Իվանովի մասին, որ ապրում է շուկայի հրապարակում, այն թաղամասում, որտեղ գարշահոտությունից անհնար է շնչել եւ այդպես շարունակ. երբեմն հիշատակում էր նույնիսկ այդ մարդու, ում ստորագրությունը նա վկայում էր , մոտ եղած հավերի եւ սագերի քանակի մասին:

Յուլիա Գուդաեւսկայան՝ կրքոտ, դաժանորեն- սենտիմենտալ երկար, վտիտ, չորուկ, տարօրինակ է՝ կազմվածքների անհամապատասխանությամբ՝ նմանվում էր ամուսնուն շարժուձեւերով՝ նույնպիսի կտրուկ շարժումներ, նույնպիսի բացարձակ անհամաչափություն այլոց շարժումների հետ: Նա հագնվում էր բազմաբղետ ու ջահելավարի եւ իր արագ շարժումների ընթացքում երկար բազմագույն ժապավենենով, որոնցով սիրում էր զարդարել առատությամբ եւ իր զգեստը, եւ իր սանրվածքը, ծածանվում էր բոլոր կողմերի վրա:

Անտոշան, նիհարավուն, ճարպիկ տղեկը, սիրալիր ոտքերը շրխկացրեց: Պերեդոնովին նստեցրին հյուրասենյակում, եւ նա անհապաղ սկսեց Անտոշայից բողոքել՝ ծույլ է, անուշադիր, դասարանում չի լսում, խոսում ու ծիծաղում է, դասամիջոցներին չարություն է անում: Անտոշան զարմացավ՝ նա չգիտեր, որ այդպիսի վատը դուրս կգա,- սկսեց կրքոտ արդարանալ:

Ծնողները երկուսն էլ հուզվեցին:

-Թույլ տվեք,- գոռում էր հայրը,- ասացեք ինձ, հատկապես որո՞նք են նրա չարաճճիությունները:

-Նիկա, մի պաշտպանիր նրան,- գոռում էր մայրը,- նա չպետք է չա-

բաճճիություն անի:

-Դե ի՞նչ չարաճճիություն է նա արել,- հարցաքննում էր հայրը, վազելով, ասես գլորվելով, կարճլիկ ոտքերի վրա:

-Ընդհանրապես չարաճճիություն է անում, դես ու դեն է ընկնում, կռվում է,- մռայլ ասում էր Պերեդոնովը,- մշտապես չարություն է անում:

-ես չեմ կռվում,- խղճուկ բացականչում էր Անտոշան,- ում ուզում եք հարցրեք, ես ոչ մեկի հետ երբեք չեմ կռվել:

-Ոչ մեկին հանգիստ չի տալիս,- ասաց Պերեդոնովը:

-Լավ, ես ինքս կգնամ գիմնազիա, ես տեսուչից կիմանամ,- կտրականապես ասաց Գուդաեւսկին:

-Նիկա, Նիկա, ինչո՞ւ դու չես հավատում,- գոչում էր Յուլիան. - դու ուզում ես, որպեսզի Անտոշան սրիկա դուրս գա: Նրան պետք է քոթակել:

-Հիմարություն: Հիմարություն,- գոչում էր հայրը:

-Կքոթակեմ, անպայման կքոթակեմ,- ճչում էր մայրը, ճանկեց որդու ուսն ու քարշ տվեց խոհանոց:- Անտոշա,- բղավում էր նա,- գնանք, քնքուշս, ես քեզ կքոթակեմ:

-Չեմ թողնի,- գոչեց հայրը, որդուն ազատելով:

Մայրը չէր զիջում, Անտոշան հուսահատ ճչում էր, ծնողներն իրար էին հրմշտում:

-Օգնեք ինձ, Արդալյոն Բորիսիչ,- գոչեց Յուլիան,- պահեք այդ գազանին, մինչեւ ես Անտոշայի հարցերը լուծեմ:

Պերեդոնովը օգնության հասավ: Բայց Գուդաեւսկին որդուն պոկեց, կնոջն ուժեղ հրեց, թռավ Պերեդոնովի մոտ ու ճչաց.

-Մի խցկվեք: Երկու շուն գզվում են, երրորդը թող մեջ չընկնի: Դե ես ձեզ:

Կարմրած, գզգզված, քրտնած, նա օդում բռունցքն էր թափահարում: Պերեդոնովը, անհստակ բառեր քրթմնջալով, ընկրկեց: Յուլիան վազում էր ամուսնու շուրջ, ջանալով ճանկել Անտոշային. հայրը նրան թաքցրել էր իր ետեւում, նրան ձեռքից մեկ աջ մեկ ձախ քարշ տալով: Յուլիայի աչքերը շողշողում էին, եւ նա ճչում էր.

-Ավազակ կաճի: Բանտ կնստի: Տաժանավայր կընկնի:

-Լեզուդ չորանա,- գոչում էր Գուդաեւսկին:- Լռիր, չար տիմար:

-Ախ, բռնակալ,- ճվճվաց Յուլիան, ցատկեց ամուսնու մոտ, բռունց-

քով հարվածեց նրա մեջքին եւ թափընդհատ հյուրասենյակից դուրս նետվեց: Գուդաեւսկին սեղմեց բռունցքներն ու նետվեց Պերեդոնովի մոտ:

-Դուք եկել եք խառնակություն անելու,- գոչեց նա:- Անտոշան չարաճճիություն է անում: Դուք խաբում եք, ոչ մի չարաճճիություն էլ նա չի անում: Եթե նա չարաճճիություն աներ, ես առանց ձեզ էլ այդ կիմանայի, իսկ ձեզ հետ ես խոսել չեմ ուզում: Դուք քաղաքով մեկ քայլում եք, խաբում եք, տղաներին եք ծեծում, խարազանման գործոց վարպետի դիպլոմ եք ուզում ստանալ: Իսկ այստեղ էնպիսինին չեք պաատահել: Ողորմած պարոն, խնդրում եմ ձեզ հեռանալ:

Այդ ասելով, նա Պերեդոնովի մոտ էր գնում եւ նրան դեպ անկյունն էր նեղում: Պերեդոնովը վախեցավ եւ ուրախ կլիներ փախչել, բայց Գուդաեւսկին անբավականության մոլուցքի մեջ չնկատեց, որ ելքը փակել էր: Անտոշան ետեւից բռնեց հոր սերթուկի ետնափեշից եւ նրան իր կողմն էր քաշում: Հայրը բարկացկոտ բղավեց եւ աքացի տվեց: Անտոշան ճարպկորեն մի կողմ թռավ, բայց հոր սերթուկը բաց չթողեց:

-Սուս,- գոչեց Գուդաեւսկին,- Անտոշա, քեզ մի կորցրու:

-Հայրիկ,- գոչեց Անտոշան, շարունակելով հորը ետ քաշել,- դու խանգարում ես Արդալյոն Բորիսիչին անցնել:

Գուդաեւսկին արագ ետ թռավ,- Անտոշան հազիվ հասցրեց պրծնել:

-Կներեք,- ասաց Գուդաեւսկին եւ ցուցանեց դուռը,- ելքն այստեղ է, իսկ ձեզ հապաղեցնել չեմ համարձակվում:

Պերեդոնովը փութով ելավ հյուրասենյակից: Գուդաեւսկին նրան իր երկար մատներից երկար քիթ արեց, իսկ հետո օդում ծնկով հրեց, ասես հյուրին դուրս քշելով: Անտոշան քրքջաց: Գուդաեւսկին բարկացկոտ գոռաց նրա վրա:

-Անտոշա, քեզ մի կորցրու: Տես, վաղը կգնամ գիմնազիա, եւ եթե սա ճիշտ դուրս գա, քեզ մորդ շտկելու կտամ:

-Ես չարաճճիություն չեմ արել, նա խաբում է,- խղճալի ու ծղրտան ասաց Անտոշան:

-Անտոշա, քեզ մի կորցրու,- գոչեց հայրը:- պետք է ասել ոչ թե խաբում է,- սխալվում է: Միայն փոքրերն են խաբում, մեծահասակները հաճում են սխալվել:

Այդ ընթացքում Պերեդոնովը ելավ կիսամութ նախասենյակ, մի

կերպ գտավ վերարկուն եւ սկսեց այն հագնել: Վախից եւ հուզմունքից նա թեւքի տեղը չէր գտնում: Ոչ մեկը եկավ նրան օգնելու: Հանկարծ ինչ-որ տեղ կողքի դռնից դուրս վազեց Յուլիան, շրշալով ծածանվող ժապավեններով, եւ ջերմագին ինչ-ր բան շշնջաց, ձեռքերը թափահարելով եւ ոտնամատների վրա թռչկոտալով: Պերեդոնովը նրան մեկեն չհասկացավ:

-Ես այնքան երախտապարտ եմ ձեզ,- վերջապես լսեց նա,- այդ այնքան ազնիվ է ձեր կողմից, այնքան ազնիվ, այդպիսի կարեկցություն: Բոլոր մարդիկ այնքան անտարբեր են, իսկ դուք մտաք խեղճ մոր վիճակի մեջ: Այնքան դժվար է երեխաներին դաստիարակելը, այնքան դժվար, դուք չեք կարող պատկերացնել: Ես երկուսն ունեմ, եւ արդեն գլուխս պտտվում է: Իմ ամուսինը՝ բռնակալ է, նա՝ սարսափելի, սարսափելի մարդ է, ճիշտ չէ՞: Դուք ինքներդ տեսաք:

-Այո,- քրթմնջաց Պերեդոնովը,- ձեր ամուսինը, դե ինչպես նա այդպես, ես հոգ եմ տանում, իսկ նա...

-Ախ, մի ասեք,- շշնջում էր Յուլիան,- սարսափելի մարդ է: Նա ինձ գերեզման կհասցնի եւ ուրախ կլինի, եւ կայլասերի իմ երեխաներին, իմ փոքրիկ Անտոշային: Բայց ես՝ մայր եմ, ես չեմ թողնի, ես ադուհանդերձ կքոթակեմ:

-Չի թողնի,- ասաց Պերեդոնովը եւ գլուխը գցեց վերնասենյակների կողմը:

-Երբ նա ակումբ գնա: Հո Անտոշայի հետը չի վերցնի: Նա կգնա, իսկ ես մինչ այդ կլռեմ, իբր թե համաձայնվել եմ նրա հետ, իսկ հենց որ նա գնա, ես նրան կծեծեմ, իսկ դուք ինձ կօգնեք: Չէ որ դուք ինձ կօգնեք, արդյոք ճիշտ չէ՞:

Պերեդոնովը մտածեց ու ասաց.

-Լավ, միայն թե ես ինչպե՞ս կիմանամ:

-Ես ձեր ետեւից կուղարկեմ,- բերկրալի շշնջաց Յուլիան:- Դուք սպասեք՝ հենց որ նա գնա ակումբ, ես ուրեմն կուղարկեմ ձեր ետքից:

Երեկոյան Պերեդոնովին Գուդաեւսկայայից գրություն բերեցին.

«Արժանահարգ Արդալյոն Բորիսիչ:

Ամուսինս գնացել է ակումբ, եւ հիմա ես մինչեւ գիշերվա մեկն ազատ են նրա բարբարոսությունից: Հաճեցեք ձեր լավությունն անել, հնարավորինս շուտ համեցեք ինձ մոտ ոճրավոր որդուս պատժին

աջակցելու համար: Ես գիտակցում եմ, որ նրանից արատները հարկ է քշել, քանի փոքր է, իսկ հետո ուշ կլինի: Անկեղծորեն ձեզ հարգող Յուլիա Գուդաեւսկայա:

P. S. Խնդրում եմ, հնարավորինս շուտ եկեք, թե չէ Անտոշան կպառկի քնելու, այդպես ստիպված կլինենք նրան արթնացնել»:

Պերեդոնովը հապճեպ հագնվեց, կոկորդը վզնոցով փաթաթեց եւ ուղեւորվեց:

-Էդ ո՞ւր ես, Արդալյոն Բորիսիչ, գիշերով պատրաստվում,- հարցրեց Վարվարան:

-Գործով,- մռայլ պատասխանեց Պերեդոնովը, փութանակի գնալով:

Վարվարան անձկությամբ մտածեց, որ դարձյալ պիտի երկար չքնի: Դե գոնե շուտ նրան համոզեր պսակվել: Այ թե կարելի կլինի քնել եւ գիշերը, եւ ցերեկը,- այ քեզ երանություն կլինի:

***

Փողոցում կասկածները կալեցին Պերեդոնովին: Իսկ ի՞նչ, եթե դա ծուղակ է: Իսկ թե հանկարծ պարզվի, որ Գուդաեւսկին տանն է, եւ նրան բռնեն ու ծեծեն: Ավելի լավ չէ՞ ետ դառնա:

«Ոչ, պետք է հասնել նրանց տուն, իսկ էնտեղ կերեւա»:

Գիշերը, լռին, զով, մթին, շրջապատել էր բոլոր կողմերից եւ ստիպում էր դանդաղեցնել քայլերը: Հեռավոր դաշտերից թարմ հովեր էին հասնում: Ցանկապատերի մոտ խոտերի մեջ թեթեւ շրշյուններ ու աղմուկներ էին բարձրանում, եւ ամեն բան շուրջը թվում էր կասկածելի ու տարօրինակ,- գուցե թե, ինչ-որ մեկը գողունի գալիս էր իր ետեւից ու հետեւում էր: Բոլոր առարկաները մթության ետեւում տարօրինակ ու անսպասելի թաքնվում էին, ասես դրանց մեջ արթնանում էր այլ, գիշերային կյանքը, մարդու համար անհասկանալի եւ թշնամական նրան: Պերեդոնովը կամացուկ քայլում էր փողոցներով ու քրթմնջում էր.

«Ոչինչ, չես հետեւի: Վատ բանի չեմ գնում: Ես, եղբայր, ծառայության օգտի մասին եմ մտածում: Այ էդպես»:

Վերջապես նա հասավ Գուդաեւսկիների կացարանին: Լույսը երեւում էր միայն փողոց նայող մի պատուհանում, մնացած չորսը խավար էին: Պերեդոնովը կամացուկ ելավ առմուտք, կանգնեց. ականջը դռանը դրեց եւ լսեց,- ամեն ինչ լուռ էր: Նա թեթեւակի ձգեց զանգի մետաղ-

յա բռնակը,- հեռավոր, թույլ, դռդռացող ձայն հնչեց: Բայց որքան էլ այն թույլ էր, վախեցրեց Պերեդոնովին, կարծես թե այդ ձայնի ետքից պիտի արթևանային եւ դեպ այդ դռներն ողողվեին բոլոր թշնամական ուժերը: Պերեդոնովն արագ փախավ առմուտքից եւ սեղմվեց պատին, թաքնվելով սյան ետեւում:

կարճ ակնթարթներ անցան: Պերեդոնովի սիրտը նվաղում եւ ծանր խփում էր: Թեթեւակի քայլեր լսվեցին, բացված դռան բախոցը,- Յուլիան փողոց նայեց, խավարի մեջ սեւ, կրքոտ աչքերը շողացնելով:

-Ո՞վ է այստեղ,- բարձր շշուկով հարցրեց նա:

Ժերեդոնովը փոքր ինչ զատվեց պատից եւ, ներքեւից նայելով դռան նեղ անցքին, որտեղ մութ եւ լուռ էր, հարցրեց, նույնպես շշուկով,- եւ նրա ձայնը դողում էր.

-Նիկոլայ Միխայլովիչը գնացե՞լ է:

-Գնացել է, գնացել,- բերկրալի շշնջաց ու գլխով արեց Յուլիան:

Երկչոտ շուրջբոլորը նայելով Պերեդոնովը նրա ետքից մտավ մթին նախասենյակ:

-Կներեք,- շշնջում էր Յուլիան,- ես առաց կրակի եմ, թե չէ մեկը կտեսնի, դուսր կտան:

Նա գնում էր պերեդոնովի առջեւից աստիճանների վրայով, միջանցք, ուր փոքրիկ մի լամպ էր կախված, աղոտ լույս նետելով վերին աստիճանների վրա: Յուլիան ուրախալի եւ կամացուկ ծիծաղում էր, եւ ժապավենները նրա երերուն դողում էին նրա ծիծաղից:

-Գնաց,- բերկրալի շշնջաց նա, շուրջբոլորը նայեց եւ Պերեդոնովին աչք ածեց կրքոտ-վառվող աչքերով:- Ես արդեն վախենում էի որ այսօր տանը կմնա, այն քան կռվեց: Բայց առանց վինռի չդիմացավ: Ես սպասյակներին էլ եմ տուն ուղարկել,- միայն Լիզայի դայակն է մնացել,- թե էչ մեկլ մեզ խանգարեցին: Չէ որ այսօր մարդիկ, գիտեք, ինչպիսին են:

Յուլիայից ջերմություն էր փչում, եւ նա ամբողջովին տոթակեզ էր, չոր, հանց շողիկ: Նա երեբմն բռնում էր Պերեդոնովի թեւքից, եւ այդ արագ չոր հպումներից ասես արագահոս չոր կրակներ էին անցնում նրա ողջ մարմնով: կամացուկ, ոնամատների վրա նրանք անցան միջանցքով՝ մի քանի փակ դռների մոտով եւ կանգնեցին վերջինի մոտ,- մանկասենյակի դռան մոտ...

***

Պերեդոնովը կեսգիշերին լքեց Յուլիային, երբ նա արդեն սպասում էր, որ շուտով ամուսինը կվերադառնա: Նա գնում էր մթին փողոցներով, մռայլ ու նոթոթ: Նրան թվում էր, թե ինչ-որ մեկն անընդհատ կանգնած էր տան մոտ եւ հիմա հետեւում էր իրեն: Նա քրթմնջում էր.

-Ես ծառայության գործերով էի գնացել: Ես մեղավոր չեմ: Նա ինքն ուզեց: Դու ինձ չես դիպչի, էնպիսին չես պատահել:

Երբ նա վերադարձավ Վարվարան դեռ չէր քնել: Թղթերը փռված էին նրա առջեւ:

Պերեդոնովի թվում էր, որ ինչ-որ մեկը կարող էր ներս գալ, երբ նա մտնում էր: Գուցե թե, ինքը Վարվարան է թշնամուն ներս թողել: Պերեդոնովն ասաց.

-Ես պիտի քնեմ, իսկ դու թղթերով կախարդելու ես: Տուր էստեղ թղթերը, թե չէ ինձ կկախարդես:

Նա վերցրեց խաղաթղթերն ու իր բարձի տակ պահեց: Վարվարան քմծիծաղում ու ասում էր.

-Հիմարություն ես դուրս տալիս: Ես կախարդել չգիտեմ էլ, շատ պետք է ինձ:

Նրան վշտացնում եւ սարսափեցնում էր, որ նա քմծիծաղում է՝ կնշանակի, մտածում էր նա, նա առանց թղթերի էլ կարող է: Ահա մահճակալի տակ կատուն է սեղմվում եւ կանաչ աչքերն է շողացնում,- նրա մորթի վրա կարելի է կախարդել, կատվին մթության մեջ շոյելով, որպեսզի կայծեր թռչեն: Ահա կոմոդի տակ առկայծում է նորից գորշ դարձվորյակը՝ արդյոք Վարվարան չի՞ նրան շվշվացնում գիշերները խռմփոցի նմանվող կամացուկ սուլոցով:

Պերեդոնովը նողկալի ու սարսափելի երազ տեսավ՝ եկավ Պիլնիկովը, նստեց շեմին, հմայում եւ ժպտում էր: Ասես ինչ-որ մեկը Պերեդոնովին քարշ տվեց նրա մոտ, եւ Պիլնիկովը տարավ նրան մթին, կեղտոտ փողոցներով, իսկ կատուն վազում էր կողքից եւ փայլեցնում էր իր կանաչ աչքերը...

XIX

Տարօրինակությունները Պերեդոնովի վարքում օրըստօրե ավելի ու ավելի էին անհանգստացնում Խրիպաչին: Նա խորհրդակցեց գիմնա-

զիայի բժշկի հետ, արդյոք Պերեդոնովը խելքը չի թոցրել: Բժիշկը ծիծաղելով պատասխանեց, որ Պերեդոնովը գժվելու բան չունի, այլ պարզապես հիմարությունից խելառություններ է անում:

Գալիս էին նաեւ բողոքներ: Սկսեց Ադամենկոն, նա տնօրենին ուղարկեց իր եղբոր տետրը լավ աշխատանքի համար դրված մեկով:

Տնօրենը ընդմիջումներից մեկի ժամանակ իր մոտ հրավիրեց Պերեդոնովին:

«Եւ, ճիշտ որ, խելագարի նման է»,- մտածեց Խրիպաչը, Պերեդոնովի մռայլամած դեմքի վրա տեսնելով խուճապի ու սարսափի հետքերը:

-Ես ձեր նկատմամբ բողոք ունեմ,- չոր արագախոսությամբ ասաց Խրիպաչը:- Ամեն անգամ, երբ ես ստիպված եմ լինում ձեր կողքին դաս տալ, գլուխս տառացիորեն պայթում է,- այնպիսի քրքջոց է բարձրանում ձեր դասարանում: Արդյոք կարո՞ղ եմ ես ձեզ խնդրել ոչ այդքան զվարթ բովանդակության դասեր տալ: «Կատակել եւ անընդհատ կատակել,- դե ինչպե՞ս եք դուք կարողանում»:

-Ես մեղավոր չեմ,- զայրացկոտ ասաց Պերեդոնովը,- նրանք իրենք են ծիծաղում: Դե եւ չի էլ կարելի անընդհատ՝ տառի եւ Կանտեմիրի երգիծանքների մասին խոսել, երբեմն ինչ-որ բան ես ասում, իսկ նրանք էլ տեղնուտեղը բերաններն բացում են: Շատ սանձարձակ են: Նրանց կարգի է պետք հրավիրել:

-Ցանկալի է, եւ նույնիսկ անհրաժեշտ, որպեսզի աշխատանքը դասարանում լուրջ բնույթ կրի,- չոր ասաց Խրիպաչը:- Եւ մի բան էլ:

Խրիպաչը Պերեդոնովին երկու տետրակ ցույց տվեց ու ասաց.

-Ահա երկու տետր ձեր առարկայից, երկու աշակերտն էլ նույն դասարանից են, Ադամենկոյինը եւ իմ տղայինը: Ես ստիպված եղա դրանք համեմատել, եւ ես ստիպված եմ եզրակացություն անել գործի հանդեպ ձեր ոչ լիովին ուշադիր լինելու մասին: Ադամենկոյի վերջին աշխատանքը, բավական բավարար արված, մեկ է գնահատված, այնինչ իմ որդու աշխատանքը, որ ավելի վատ է գրված, չորսի է արժանացել: Ակնհայտ է, որ դուք սխալվել եք՝ մի աշակերտի գնահատականը դրել եք մյոսին, եւ հակառակը: Թեպետ մարդուն բնորոշ է սխալվելը, բայց այդուհանդերձ խնդրում եմ խուսափել համանման սխալներից: Դրանք հարուցում են ծնողների ե հենց սովորողների հիմնավոր դժգոհությունը:

Պերեդոնովը ինչ-որ անհստակ բան քրթմնջաց:

Դասարաններում նա ջղայնությունից ուժեղ թափով սկսեց ծաղրել փոքրերին, որ օրերս իր բողոքներով պատժվել էին: հատկապես նա վրա պրծավ Կրամարենկոյի վրա Նա լռում էր, դժգունում էր իր մթին արեւայրուկի տակ, եւ աչքերը շողշողում էին:

Ելնելով գիմնազիայից Կրամարենկոն այդ օրը շտապում էր տուն: նա կանգնեց դարպասի մոտ, նայելով գնացքին: Երբ Պերեդոնովը դուրս եկավ, Կրամարենկոն գնաց նրա ետքից, որոշ հեռավորության վրա սպասելով, հատուկենտ անցորդների անցնելուն:

Պերեդոնովը դանդաղ էր քայլում: Նոթոթ եղանակը նրան տաղտուկի մեջ էր գցում: Նրա դեմքը վերջին օրերս ավելի ու ավելի բութ ռատահայտություն էր ստանում: Հայացքը կամ կանգ առած էր ինչ-որ հեռավոր բանի վրա, կամ տարօրինակ հածում էր: Թվում էր, թե նա մշտապես աչք է ածում առարկայի ետեւում եղածին: Դրանից առարկաները նրա աչքերում երկատվում, թալկտում, մարմրում էին: Բայց ո՞ւմ էր նա աչք ածում: Մատնիչներին: Նրանք թաքնվում էին բոլոր առարկաների ետեւում, փսփսում, ծիծաղում էին: Թշնամիները Պերեդոնովի վրա մի ողջ բանակ մատնիչներ էին ուղարկել: Երբեմն Պերեդոնովը ջանում էր արագ նրանց բռնել: Բայց նրանք միշտ հասցնում էին ժամանակին փախչել,- ասես գետնի տակն անցնել...

Պերեդոնովն իր ետքից լսեց արագ, համարձակ քայլեր կամրջակի վրա, վախեցած ետ նայեց,- Կրամարենկոն հավասարվեց նրան եւ վառվռուն աչքերով նայում էր նրան վճռական ո չարացած, դժգույն, վտիտ, հանց փոքրիկ վայրենի, որ պատրաստ է նետվելու թշնամու վրա: Այդ հայացքը Պերեդոնովին վախեցնում էր:

«Հանկարծ ու կծի»,- մտածեց նա:

-Շուտ գնա,- Կրամարենկոն չեր հեռանում. Ժերեդոնովը կաննեց ո բարկացկոտ ասաց.

-Ինչ ես հրմրում, գջլոտած սեուկ: Այ հիմա հորդ մոտ կտանեմ:

Կրամարենկոն նոյնպես կանգ առավ, հար շարոնակում էր Պերեդոնովին նայել: Հիմա նրանք կանգնեցին դեմ դիմաց ամայի փողոցի երերուն կամրջակի վրա, մոխրավուն, ամենայն կենդանի բանին անհաղորդ ցանկապատի մոտ: Կրամարենկոն, ամբողջովին դողալով, ֆշշացող ձայնով ասաց.

-Սրիկա:

Քմծիծաղեց, շրջվեց որպեսզի գնա Մի երեք քայլ արեց, կանգ առավ, շուրջբոլորը նայեց, ավելի բարձր կրկնեց.

-Ինչպիսի սրիկա: Սողուն:

Թքեց ու գնաց: Պերեդոնովը մռայլ նայեց նրա ետքից եւ նույնպես տուն դարձավ:

Աղոտ, վախլուկ մքերը հաջորդում էին իրար նրա գլխում:

Վերշինան ձայն վեց նրան: Նա կանգնած էր իր այգու ցանկապատի ետեւում, դռնակի մոտ, մեծ սեւ գլխաշորով փաթաթված եւ ծխում էր, Պերեդոնովը Վերշինային մեկեն չճանաչեց: Նրա կերպարանքում նրան ինչ-որ չարագույժ բան անրջվեց՝ սեւ կախարդ էր կեցած, դյութող ծուխ էր թողնում, հմայախեսում էր: Նա թքեց, հմայաթափվեց: Վերշինան ծիծաղեց ու հարցրեց.

-Դուք այդ ի՞նչ, Արդալյոն Բորիսիչ:

Պերեդոնովը բութ նայեց նրան ու վերջապես ասաց.

-Ախ, այդ՝ դուք եք: Իսկ ես ձեզ չճանաչեցի էլ:

-Դա՝ լավ նշան է: Ուրեմն ես շուտով կհարստանամ,- ասաց Վերշինան:

Պերեդոնովին դա դուր չեկավ՝ դե հարստանալ նա ինքն էլ կուզեր:

-Դե հա,- բարկացած ասաց նա, դուք ինչ հարստանաք: Բավ է ձեզ եւ այն, ինչ ունեք:

-Ես ահա երկու հազար կտանեմ,- ծուռ ժպտալով, ասաց Վերշինան:

-Ոչ, այդ ես երկու հազարը կտանեմ - վիճում էր Պերեդոնովը:

-Ես՝ մի խաղարկությանը, դուք՝ մյուս,- ասաց Վերշինան:

-Դե դուք այդ խաբում եք,- կոպիտ ասաց Պերեդոնովը:- Դա չի լինում, մի քաղաքում երկու շահում: Ձեզ ասում են, ես կշահեմ:

Վերշինան նկատեց, որ նա բարկանում է: Դադարեց վիճել: Բացեց դռնակն ու, Պերեդոնովին գերելով ասաց.

-Դե նչ ենք մենք այստեղ կանգնել: Մտեք, խնդրեմ, մեզ մոտ Սուրինն է:

Սուրինի անունը Պերեդոնովին իր համար հաճելի բան հիշեցրեց,- խմիչք, խորտկեղեն: Նա մտավ.

Ծառերի պատճառով մթավուն հյորասենյակում մստած էին Մարթան, կարմիր ժապավենակապով, վզնոցով եւ զվարթացած աչքերով, Սուրինը, սովորականից շատ զզզված, եւ ինչ-որ բանով ասես ուրա-

խացած, եւ տարիքն առած գիմնազիստ Վիտկեւիչը՝ նա սիրահետում էր Վերշինային, մտածում էր, որ նա սրահարված է իրեն, եւ երազում էր գիմնազիան թողնել, ամուսնանալ Վերշինայի հետ եւ նրա կալվածքում տնտեսությամբ զբաղվել: Մուրինը ելավ Պերեդոնովին դիմավորելու չափազանցված բերկրալի բացականչություններով, նրա դեմքն ավելի քաղրումեղցր էր դարձել, աչքերը յուղոտել էին,- եւ այդ ամենը չէր բռնում նրա ամրակազմ կազմվածքին եւ գզգզված մազերին, որոնց մեջ նույնիսկ տեղ-տեղ խոտի ծիղեր էին երեւում:

-Գործեր եմ դրստում - բարձր ու խռպոտ խոսեց նա,- ես ամենուր գործեր ունեմ, եւ ահա ի դեպ քնքուշ տանտիրուհիները թեյ հրամցրին:

-Դե հա, գործեր,- բարկացկոտ պատասխանում էր Պերեդոնովը,- դե ձեզ մոտ ինչ գործեր: Դուք չեք ծառայում, այլ էնպես փող եք դիզում: Այ գործերն ինձ մոտ են:

-Դե ինչ, գործերը՝ դա էլ հենց ուրիշի փողերն են,- բարձր հռհռոցով առարկեց Մուրինը:

Վերշինան ծուռ ժպտում էր եւ Պերեդոնովին սեղանի մոտ էր նստեցնում: փթախտի առաջի կլոր սեղանի վրա դրված էին թեյով բաժակները, ռոմ, մոշի մուրաբա, արծաթե միջաթափանց, գործած անձեռոցիկով ծածկած քաղցր բուլկիներով ու տնական նշի քաղցրաբլիթով կողովը:

Մուրինի բաժակից ռոմի ուժեղ հոտ էր փչում, իսկ Վիտկեւիչն իր ապակյա խեցենման պնակիկի վրա շատ մորաբա էր լցրել: Մարթան տեսանելի հաճույքով փոքրիկ կտորներով քաղցր բուլկի էր ուտում: Վերշինան հյուրասիրում էր եւ Պերեդոնովին,- նա թեյից հրաժարվեց:

«Մեկ էլ ու թունավորեցին,- մտածեց նա:- Դե թունավորելն ամենից հեշտն է՝ ինքդ կխմես ու չես նկատի, իսկ ահ տուն կգաս՝ եւ ոտքերդ կնգես»:

Եւ նա սրտնեղում էր, թե ինչու Մուրինի համար մուրաբա էին դրել, իսկ երբ ինքն եկավ, ապա իր համար չեն ուզում ավելի լավ մուրաբայով նոր բանկա բերել: Նրանց մոտ միայն մոշ չի՝ շատ տարատեսակ մուրաբաներ են եփել:

Իսկ Վերշինան, ճիշտ, շողոքորթում էր Մուրինին Տեսնելով, որ Պերեդոնովից քիչ հույս կա, նա Մարթայի համար այլ փեսացուներ էր փնտրում: Հիմա նա գրավում էր Մուրինին: Դժվար տրվող շահույթների

ետքից վազքում կիսավայրենացած կալվածատերը սիրահոժար գնում էր խայծի վրա: Մարթան նրան դուր էր գալիս:

Մարթան ուրախ էր՝ չէ որ դա նրա մշտական երազանքն էր, որ ահա իր համար փեսացու կգտնվի, ե նա կամուսնանա, եւ նա լավ տնտեսություն կունենա, եւ տունը՝ լի գավաթ: Եւ նայում էր Մուրինին սիրահարված աչքերով: Քառասնամյա վիթխարի տղամարդը կոպիտ ձայնով եւ դեմքի պարզավուն արտահայտությամբ, իր ամեն մի շարժման մեջ նրան տղամարդկային ուժի, արիության, գեղեցկության եւ բարության նմուշօրինակ էր թվում:

Պերեդոնովը նկատեց սիրահարված հայացքները, որոնցով փոխանակվում էին Մուրինն ու Մարթան,- նկատեց այն պատճառով, որ Մարթայից սպասում էր երկրպագում հենց իր առջեւ: Նա բարկացկոտ Մուրինին ասաց.

-Ճիշտ փեսայի պես ես նստել, ողջ ֆիզինոմիադ շողշողում է:

-Դա ես ուրախությունից,- հուզված, զվարթ ձայնով ասաց Մուրինը,- որ ահա գործն իմ լավ եմ դրստել:

Նա տանտիրուհիներին աչքով արեց: Նրանք երկուսն էլ զվարթ ժպտում էին: Պերեդոնովը զայրացկոտ հարցրեց, քամահրաբար աչքերը կկոցելով.

-Ինչ է հա՞րս ես գտել: Լավ օժի՞տ են տալիս:

Մուրինը խոսում էր, կարծես թե այդ հարցերը չէր էլ լսել.

-Ահա Նատալյա Աֆանասեւնան, Աստված նրան ամենայն բարիք պարգեւի, իմ Վանյուշկայի համաձայնվեց իր մոտ տեղավորել: Նա այստեղ կապրի, ինչպես Տիրոջ ծոցում, եւ իմ սիրտն էլ հանգիստ կլինի, որ երես չի առնի:

-Վլադյայի հետ չարաճճիություններ կանի,- մռայլ ասաց Պերեդոնովը՝ մեկ էլ տեսար տունը վառեցին:

-Չի համարձակվի,- վճռականորեն գոչեց Մուրինը:- Դուք, տիրուհի Նատալյա Աֆանասեւնա, այդ մասին մի անահանգստացեք՝ նա ձեզ մոտ լարի պես ձիգ կքայլի:

Վերշինան, որպեսզի այդ խոսակցությունը դադարեցնի, ծուռ ժպտալով, ասաց.

-Ինչ-որ թթվաշ բան ուզեցի:

-Արդյոք խնձորներով հապալաս չե՞ք ուզի: Ես կբերեմ,- ասաց Մար-

թան, արագ տեղից ելնելով:

-Թերեւս, բերեք:

Մարթան սենյակից դուսր վազեց: Վերշինան նույնիսկ չնայեց նրա ետքից՝ նա սովորել էր ընդունել Մարթայի սիրաշահումները, որպես ինչ-որ պատշաճ բան: Նա հանգիստ եւ խորը նստել էր թախտի վրա, կապույտ ծխաքուլաներ էր թողնում եւ համեմատում էր տղամարդկանց, որոնք զրուցակցում էին՝ Պերեդոնովը՝ բարկացկոտ եւ ծույլ, Սորինը՝ զվարթ եւ աշխույժ: Սուրինը նրան շատ ավելի էր դուր գալիս: Նա բարեհամբույր դեմք ունի, իսկ Պերեդոնովն անգամ ժպտալ չգիտի: Սուրինը նրան դուր էր գալիս ամեն ինչով՝ մեծ, գեր, գրավիչ, խոսում է հաճելի ցածր ձայնով եւ իր հանդեպ էլ շատ հարգալից է: Վեշինան նույնիս երբեմն մտմտում էր, արդյոք գործն այնպես շուռ չտա, որպեսզի Սուրինը իր ձեռքը խնդրի, այլ ոչ թե Մարթայի: Բայց նա միշտ իր խորհրդածություններն ավարտում էր այն բանով, որ մեծահոգաբար նրան զիջում էր Մարթային:

«Իմ ձեռքը,- մտածում էր նա - ով ասես կխնդրի, քանի որ ես փողատեր եմ, ես ինքս կարող եմ ում ուզես ընտրել: Դե թեկուզ էս պատանուն կվերցնեմ»,- մտածում էր նա եւ ոչ առանց հաճույքի իր հայացքը կանգնեցրեց Վիտկեւիչի կանաչավուն, լկտի, բայց այդուհանդերձ գեղեցիկ դեմքի վրա, ով քիչ էր խոսում, շատ ուտում, աչք էր ածում Վերշինային եւ ընդ որում լկտի ժպտում էր:

Մարթան կավե գավաթով խնձորներով հապալաս բերեց եւ սկսեց պատմել, որ այս գիշեր երազում տեսել էր, թե ինչպես ինքը հարսանիքի ընկերուհիներից էր եւ անանաս ու մեղրով կարկանդակ էր ուտում, եւ որ մի կարկանդակի մեջ հարյուր ռուբլիանոց թղթադրամ գտավ, եւ թե ինչպես իրենից դրամը խլել էին, եւ թե ինչպես էր նա լալիս: Այդպես արտասվաթոր էլ արթնացավ:

-Հարկ էր կամացոկ թաքցնել, որպեսզի ոչ մեկը չտեսներ,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը,- թե չէ դուք երազում էլ չկարողացաք փողը պահել, դե էլ ինչ տանտիրուհի եք:

-Դե այդ փողերը պետք չէ ափսոսալ,- ասաց Վերշինան,- երազում ինչ ասես կտեսնես:

-Իսկ ես սարսափելի ափսոսում եմ այդ փողերը,- պարզասիրտ ասաց Մարթան,- մի ամբողջ հարյուր ռուբլիանոց:

Նրա աչքերին արցունքներ հայտնվեցին, եւ նա ստիպողաբար ծիծաղեց, որպեսզի չարտասվի: Մուրինը իրար անցնելով գրպանը մտավ, բացականչելով.

-Տիրուհի, Մարթա Ստանիսլավովնա, դե դուք մի ափսոսացեք, մենք հիմա այդ կշտկենք:

Նա դրամապանակից մի հարյուրանոց հանեց, դրեց այն Մարթայի առաջ սեղանին, ափով խփեց դրան եւ գոչեց.

-Հաճեցեք: Դե սա արդեն ոչ մեկը չի խլի:

Մարթան այն է ուրախացավ, բայց հետո վառ կարմրեց եւ ամաչկոտ ասաց.

-Ախ, այդ ինչ եք դուք Վլադիմիր Իվանովիչ, միթե ես դա նկատի ունեի: Ես չեմ վերցնի, դե այդ ինչ դուք, իսկապես:

-Ոչ, մի հաճեցեք նեղացնել,- ասաց Մուրինը, քմծիծաղելով եւ փողը չվերցնելով,- դե թող, ուրեմն, երազը ճիշտ դուրս գա:

-Դե ոչ, դե ինչպես, ես ամաչում եմ ես ոչ մի կերպ չեմ վերցնի,- չեմուչում էր անում Մարթան, ագահ աչք նետելով հարյուրանոցի վրա:

-Ինչ եք համառում, եթե տալիս են,- ասաց Վիտկեւիչը,- դե ահա երջանկությունը ինքն է մարդու ձեռքն ընկնում,- ասաց նա նախանձոտ հոգոցով:

Մուրինը կանգնեց Մարթայի առաջ եւ համոզիչ ձայնով բացականչեց.

-Տիրուհի, Մարթա Ստանիսլավովնա, հավատացեք խոսքիս, ես մաքուր սրտով,- վերցրեք, խնդրում եմ: Իսկ եթե ձրիաբար չեք ուզում, դե սա ուրեմն այն բանի համար, որպեսզի դուք ի Վանյային նայեք: Այն, ինչ մենք Նատալյա Աֆանասեւնայի հետ պայմանավորվեցինք, ապա այդպես էլ կլինի, իսկ սա, ուրեմն, ձեզ,- նայելու համար, ուրեմն:

-Դե ոնց այդպես, սա շատ է,- անվստահ ասաց Մարթան:

-Առաջին կես տարվա համար,- ասաց Մուրինն ու մինչեւ գոգտկատեղը Մարթային գլուխ տվեց,- դե չնեղացնեք, վերցրեք, եւ եղեք դուք իմ Վանյային ավագ քույրիկի տեղ:

-Դե, էլ ինչ, Մարթա, վերցրու,- ասաց Վերշինան,- Վլադիմիր Իվանիչին շնորհակալություն հայտնիր:

Մարթան ամաչկոտ եւ բերկրալի կարմելով, վերցրեց փողը: Մուրինը կրքոտ սկսեց նրան շնորհակալություն ասել:

-Դե շուտ պսակվիր, ավելի էժան կլինի,- կատաղությամբ ասաց Պերեդոնովը,- այ թե ինչպես փսլիքները բաց թողեց:

Վիտկեւիչը հռհռաց, իսկ մյոսները ձեւացրին, թե չեն լսել: Վերշինան այն է սկսեց իր երազը պատմել,- Պերեդոնովը չլսեց եւ սկսեց հաջողություն ասել: Մուրինը նրան երեկոյան իր մոտ կանչեց:

-Երեկյան ժամերգության պիտի գնամ,- ասաց Պերեդոնովը:

-Այս ինչ է, Արդալյոն Բորիսիչը առ եկեղեցին այսպիսի ջանադրություն է ցուցաբերում,- չոր ու արագ ծիծաղով ասաց Վերշինան:

-Ես միշտ,- պատասխանեց նա,- ես Աստծուն հավատում եմ, այնպես չեմ, ինչպես մյուսները: Գուցե թե, գիմնազիայում միայն ես եմ ադպիսինը: Դրա համար էլ ինձ հետապնդում են: Տնօրենը՝ անաստված է:

-Երբ ազատ կլինեք, ինչքներդ ժամ նշանակեք,- ասաց Մուրինը:

Պերեդոնովը, զայրացկոտ գդակը տրորելով, ասաց.

-Ես հյուր գնալու ժամանկ չունեմ: Բայց տեղնոտեղը հիշեց, որ Մուրինը համեղ է կերակրում, լավ խմեցնում է, եւ ասաց.

-Դե, իսկ երկուշաբթի ես կարող եմ գալ:

Մուրինը հիացավ եւ այն է սկսեց Վերշինային եւ Մարթային կանչել: Բայց Պերեդոնովն ասաց.

-Ո՛չ, տիկնայք պետք չեն: Թե չէ մեկ էլ խմես ու առանց նախնական քննության ինչ-որ բան դուրս տվեցիր, դե տիկնանց մոտ անհարմար է:

Երբ Պերեդոնովը գնաց, Վերշինան, քմծիծաղելով, ասաց.

-Փախուկություններ է անում Արդալյոն Բորիսիչը: Դե ինչ-որ շատ է ուզում տեսուչ դառնալ, իսկ Վարվարան նրան, երեւի թե, քթից բռնած տանում է: Դե նա էլ անկարգություններ է անում:

Վլադյան,- նա Պերեդոնովի ներկայությամբ թաքնվել էր,- ելավ ու չարագույժ քմծիծաղով ասաց.

-Իսկ փականագործներն ինչ-որ մեկից իմացել են, որ այդ Պերեդոնովն է իրենց մատնել:

-Նրանք նրա ապակիները կջարդեն,- ուրախալի քրքջոցով գոչեց Վիտկեւիչը:

***

Փողոցում ամեն ինչ Պերեդոնովին թվում էր թշնամական ու չարագույժ: խաչմերուկի վրա մի ոչխար էր կանգնած եւ բութ նայում էր Պե-

րեդոնովին: Այդ ոչխարն այնքան նման էր Վոլոդինին, որ Պերեդոնովը վախեցավ: Նա մտածում էր, որ, միգուցե, Վոլոդինը փոխակերպվում է ոչխարի, որպեսզի հետեւի:

«Մենք ինչ գիտենք,- մտածում էր նա,- միգուցե, դա եւ կարելի է, գիտությունը դեռ չի հասել իսկ գուցե թե, ինչ-որ մեկը եւ գիտի: Չէ որ ահա ֆրանսիացիները՝ գիտուն ժողովուրդ են, իսկ նրանց մոտ Փարիզում մոգեր ու կախարդներ են հայտնվել»,- մտածում էր Պերեդոնովը: Եւ նա սկսեց սարսափել:

«Մեկ աքացի կտա էդ ոչխարը»,- մտածում էր նա:

Ոչխարը մկկաց, եւ դա նման էր Վոլոդինի ծիծաղին՝ սուր, միջաթափանց, անդուր:

Դարձյալ ժանդարմային սպան պատահեց: Պերեդոնովը մոտեցավ նրան ու շշուկով ասաց.

-Դուք հետեւեք Ադամենկոյին: Նա սոցիալիստների հետ նամակագրության մեջ է, դե եւ ինքն էլ էդպիսինն է:

Լուբովսկին լուռ ե զարմացած նայեց նրան: Պերեդոնովը շարունակեց քայլել եւ տրտմալի մտածում էր:

«Դե ի՞նչ է նա անընդհատ պատահում: Անընդհատ հետեւում է ինձ եւ ամեն տեղ քաղաքապահ ոստիկաններ է կանգնեցրել»:

Աղտոտ փողոցներ, ամպամած երկինք, խղճուկ տնակներ, ցնցոտիավոր երեխաներ՝ ամեն ինչից անձկություն, վայրենացածություն, անսպառ տրտմություն էր փչում:

«Սա վատ քաղաք է,- մտածում էր Պերեդոնովը,- եւ մարդիկ էլ էստեղ չար են, գեշ, այ շուտով գնայի այլ մի քաղաք, ուր բոլոր ուսուցիչները ցածրամած կխոնարհվեն, իսկ բոլոր աշակերտները ահակալած կերկնչեն ու կշշնջան՝ տեսուչն է գալիս: Այո, վարիչները լիովին այլ կերպ են ապրում երկրի երեսին»:

Ռուբանյան նահանգի երկրորդ շրջանի պարոն տեսուչ - քրթմնջում էր նա քթի տակ,- ծերդ գերազնվություն, պետական խորհրդական Պերեդոնով: Ահա թե ինչ: Գիտցիր մերոնց: Ձերդ գերազանցություն Ռուբանյան նահանգի ժողովրդական ուսումնարանների պարոն տնօրեն: Պաշտոնաթող եղեք: ես ձեզ կարգի կհրավիրեմ:

Պերեդոնովի դեմքը գոռոզ էր դառնում, նա իր նվազ երեւակայության մեջ արդեն իշխանության բաժին էր ստացել:

***

Երբ Պերեդոնովը եկավ տուն, նա, վերարկուն հանելով, լսեց, ճաշասենյակից եկող սուր ձայները,- դա Վոլոդինն էր ծիծաղում: Պերեդոնովի սիրտը նվաղեց:

«Հասցրել է էստեղ էլ վազել,- մտածեց նա. - գուցե թե, Վարվարայի հետ պայմանավորվում են, թե ինչպես ինձ հիմարացնեն: Դրա համար էլ ծիծաղում է,- ուրախ է, որ Վարվարան իր հետ միաբան է»:

Տրտում, չար նա մտավ ճաշասենյակ: Արդեն ճաշի սեղանը գցված էր: Վարվարան մտահոգ դեմքով դիմավորեց Պերեդոնովին:

-Արդալյոն Բորիսիչ,- գոչեց նա,- դե մեզ մոտ էլ էսպիսի արկած է: Կատուն է փախել:

-Դե,- գոռաց Պերեդոնովը դեմքի վրա սարսափի արտահայտությամբ:- Դե իսկ ինչո՞ւ եք նրան բաց թողել:

-Դե ի՞նչ նրա պոչը շրջազգեստիս կարեմ,- սրտնեղած հարցրեց Վարվարան:

Վոլոդինը քմծիծաղեց: Պերեդոնովը մտածում էր, որ կատուն ուղեւորվել էր, գուցե թե, ժանդարմայինի մոտ եւ այնտեղ կմլավի այն ամենը, ինչ գիտի Պերեդոնովի մասին, եւ այն մասին, ուր եւ ինչու է Պերեդոնովը գիշերները գնացել,- ամեն ինչ կբացահայտի եւ այն էլ կմլավի, ինչը չի էլ եղել: Դժբախտություններ: Պերեդոնովը նստեց սեղանի մոտի աթոռին, գլուխը հակեց եւ, սփռոցի ծայրը տրորելով, խորասուզվեց տխուր մտորմունքների մեջ:

-Դե դա միշտ էլ կատուները հաճում են հին բնակարան փախչել,- ասաց Վոլոդինը,- քանի որ կատուները տեղին են վարժվում, այլ ոչ թե տիրոջը: Կատվին, հենց նոր բնակարան ես բերում, պետք է պտտես, եւ ճանապարհը նրան ցույց չտաս, թե չէ անպայման կփախչի:

Պերեդոնովը մխիթարանքով լսում էր:

-Ուրեմն դու կարծում ես, Պավլուշա, որ նա հին բնակարա՞ն է փախչել,- հարցրեց նա:

Անշուշտ էդպես է, Արդաշա,- պատասխանում էր Վոլոդինը:

Պերեդոնովը ելավ ու գոչեց.

-Դե արի խմենք, Պավլուշկա:

Վոլոդինը քմծիծաղեց:

-Դա կարելի է, Արդաշա,- ասաց նա,- խմել միշտ էլ նույնիսկ շատ է

կարելի:

-Իսկ կատվին էնտեղից պետք է ճարել,- որոշեց Պերեդոնովը:

-Գանձ է,- քմծիծաղելով, պատասխանում էր Վարվարան,- ահա ճաշից հետո Կլավդյուշկային կուղարկեմ:

Նստեցին ճաշելու, Վոլոդինը զվարթ էր, բլբլում ու ծիծաղում էր: Նրա ծիծաղը Պերեդոնովի համար հնչում էր ինչպես փողոցում այն ոչ-խարի մկկոցը:

«Եւ ի՞նչ է նա չարամտում,- մտածում էր Պերեդոնովը,- արդյոք շա՞տ բան է նրան պետք»:

Եւ Պերեդոնովը մտածեց, թե,, միգուցե, հաջողվի Վոլոդինին սի-րաշահել:

-Լսի՛ր, Պավլուշա - ասաց նա,- եթե դու չսկսես նձ վնասել, ապա ես քեզ համարշաբաթը մեկ մի գրվանքա սառնաշաքար կառնեմ, ամեա-նառաջնակարգ տեսակը,- ծծիր քեզ համար հանուն իմ առողջության:

Վոլոդինը ծիծաղեց բայց տեղզնուտեղը նեղացած դեմք ընդունեց ու ասաց.

-Ես, Արդալյոն Բորիսիչ, համաձայն չեմ ձեզ վնասել, բայց միայն թե ինձ սառնաշաքար պետք չէ, քանի որ ես այն չեմ սիրում:

Պերեդոնովը վիատվեց: Վարվարան, քմծիծաղելով, ասաց.

-Բավ է քեզ հիմարություն դուսր տալ, Արդալյոն Բորիսիչ: Ինչո՞վ նա կարող է քեզ վնասել:

-Վնասել՝ ուզածդ հիմարն էլ կարող է,- վիատ ասաց Պերեդոնովը:

Վոլոդինը նեղացած շուրթերը տնկեց, գլուխը տարուբերեց ու ասաց.

-Եթե դուք, Արդալյոն Բորիսիչ, էդպես եք ինձ հասկանում, ապա մի-այն մի բան կարող եմ ասել՝ խոնարհաբար շնորհակալ եմ: Եթե դուք ի մասին այդպես, ապա դրանից հետո ես ի՞նչ պիտի անեմ: Ինչպե՞ս ես պետք է հասկանամ, ո՞ր իմաստով:

-Օղի խմիր, Պավլուշա, եւ ինձ էլ լցրու,- ասաց Պերեդոնովը:

-Դուք նրան նայեք, Պավել Վասիլեւիչ,- մխիթարում էր Վոլոդինին Վարվարան,- չէ որ նա այդ հենց էնպես է ասում, հոգին չգիտի, թե լե-զու ինչ է բլբլում:

Վոլոդինը լռեց եւ, նեղացած տեսք պահպանելով, սկսեց օղին գրա-ֆինից ըմպանակների մեջ լցնել: Վարվարան քմծիծաղելով ասաց.

-Դե ինչպե՞ս թե Արդալյոն Բորիսիչ, դու չես վախենո՞ւմ նրա ձեռքից օդի խմել: Չէ որ նա, գուցե թե, հմայել է,- ահա նա շուրթերով ինչ-որ բան է բերում:

Պերեդոնովի դեմքին սարսափ պատկերվեց: Նա ճանկեց Վոլոդինի լցրած ըմպանակը, օդին դրանից դուրս թափեց հատակին ու ճչաց.

Չկպչես ինձ, չկպչես, չկպչես, չկպչես: Դավ դավադրողի վրա չար լեզուն չորանա, չար աչքը պայթի: Նրան մահ, իսկ ինձ չկպչես ու չկպչես:

Հետո չարացած դեմքով շրջվեց Վոլոդինի կողմը, կուկիշ ցույց տվեց ու ասաց.

-Առ դե, կծի: Դու խորամանկ ես, իսկ ես ավելի:

Վարվարան քրքջում էր: Վոլոդինը նեղացած դողացող ձայնով ասում, ասես մկկում էր.

-Ահա էդ դուք, Արդալյոն Բորիսիչ, տարատեսակ կախարդական խոսքեր գիտեք, իսկ ես երբեք չեմ հաճել մոգությամբ զբաղվել: Ես ձեզ ոչ օդին, եւ ոչ էլ այլ բան համաձայն չեմ հմայել, իսկ այդ, գուցե թե, դուք եք իմ հարսնացուներին կախարդում:

-Տարար,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը,- ինձ քո հարսնացուները պետք չեն, ես կարող եմ եւ ավելի մաքուրներին գտնել:

-Դուք իմ աչքը պայթել հմայախոսեցիք,- շարունակում էր Վոլոդինը,- միայն թե տեսեք, որ ավելի վաղ ձեր ակնոցը չպայթի:

Պերեդոնովը վախեցած ակնոցը բռնեց:

Վարվարան վախվխելով նայեց Վոլոդինին եւ զայրացկոտ ասաց.

-Օձություն մի արեք, Պավել Վասիլեւիչ, ձեր ապուրը կերեք, թե չէ կսառչի: Այ քեզ, օձի կծած:

Նա մտածեց, որ, թերեւս, տեղին հմայաթափվեց Արդալյոն Բորիսիչը: Վոլոդինը սկսեց ապուրն ուտել Բոլորը փոքր ինչ լռեցին, իսկ հետո Վոլոդինը նեղացած ձայնով ասաց.

-Զուր չէ, որ ես այսօր երազում տեսա, որ ինձ մեղրով էին պատում: Պատեցիք դուք ինձ, Արդալյոն Բորիսիչ:

-Դեռ էդպես չէր պետք պատել,- բարկացկոտ ասաց Վարվարան:

-Դե ինչի՞ համար, թույլ տվեք իմանալ: Ոնց որ թե ես ոչ մի էնպիսի բան,- ասում էր Վոլոդինը:

-Էն բանի հա,ար, որ լեզուն ձեր վատն է,- բացատրեց Վարվարան:- Չի կարելի ամեն ինչ դուրս տալ, ինչ մտքին փչի,- այն ժամին, որ խոսվում է:

XX

Երեկոյան Պերեդոնովը գնաց ակումբ. կանչեցին թուղթ խաղալու: Այնտեղ էր նաեւ նոտարիուս Գուդաեւսկին: Պերեդոնովը վախեցավ, երբ տեսավ նրան: Բայց Գուդաեւսկին իրեն խաղաղ էր պահում, եւ Պերեդոնովը հանգստացավ:

Խաղում էին երկար, խմում էին շատ: Ուշ գիշերով բուֆետում Գուդաեւսկին հանկարծ թռավ Պերեդոնովի կողմը, առանց որեւէ բացատրության մի քանի անգամ խփեց նրա դեմքին, ջարդեց նրա ակնոցն ու ճարպկորեն ակումբից հեռացավ: Պերեդոնովը ոչ մի դիմադրություն չցուցաբերեց, հարբած ձեւացավ, փռվեց հատակին ո խռմփացրեց: Նրան հրիրեցին ո ճամփեցին տուն:

Հաջորդ օրն այդ ծեծկռտոցի մասին խոսում էին ողջ քաղաքում:

Այդ երեկո Վարվարան Պերեդոնովից առաջին կեղծ նամաը գողանալու հնար գտավ: Դա նրան անհրաժեշտ էր, ըստ Գրուշինայի պահանջի, որպեսզի հետագայում, երկու կեղծ նամակները համեմատելիս, տարբերություն չլիներ: Պերեդոնովը այդ նամակն իր հետ էր կրում, բայց այսօր ինչ-որ պատահաբար այն տանն էր թողել՝ վիցմունդիրի փոխարեն սերթուկը հագնելով, նա այն գրպանից հանեց, խցկեց կոմոդի վրայի դասագրքի մեջ, դե եւ այնտեղ էլ մոռացավ: Վարվարան այն Գրուշինայի մոտ մոմի վրա այրեց:

Երբ, ուշ գիշերով, Պերեդոնովը վերադարձավ եւ Վարվարան տեսավ նրա ջարդված ակնոցը, նա նրան ասաց, որ դրանք իրենք են պայթել: Նա հավատաց եւ որոշեց, որ դրա մեղավորը Վոլոդինի չար լեզուն է: Չար լեզվին ինքը Պերեդոնովն էլ հավատաց: Սակայն, հաջորդ օրը Գրուշինան մանրամասն պատմեց ակումբի ծեծկռտուքի մասին:

Առավոտյան, հագնվելով, Պերեդոնովը սկսեց նամակը որոնել, ոչ մի տեղ չգավ ու սարսափեց: Նա վայրենի ձայնով գոռաց.

-Վարվարա, նամակն ո՞ւր է:

Վարվարան խառնվեց:

-Ի՞նչ նամակ,- հարցրեց նա, վախեցած, չար աչքերով նայելով Պերեդոնովին:

-Իշխանուհունը,- ճչում էր Պերեդոնովը:

Վարվարան մի կերպ շունչը տեղը բերեց: Լկտիաբար քմծիծաղելով, նա ասաց.

-Իսկ ես ինչ գիտեմ, որտեղ է այն: Նետել ես, երեի թե, անպետք թղթերի մեջ, դե Կլավդյուշան էլ այրել է: Քեզ մոտ փնտրի, եթե այն դեռ կա:

Պերեդոնովը մռայլ տրամադրությամբ գնաց գիմնազիա: Երեկվա անախորժությունները մտաբերվեցին: Նա մտածում էր Կրամարենկոյի մասին՝ ինչպե՞ս այդ վատշվեր տղան համաձակվեց իրեն սրիկա կոչել: Նշանակում է, նա Պերեդոնովից չի վախենում: Արդյոք նա Պերեդոնովի մասին ինչ-որ բան գիտի: Գիտի եւ ուզում է մատնել:

Դասարանում Կրամարենկոն շեշտակի նայում նրան եւ ժպտում էր, եւ դա Պերեդոնովին ավելի էր սարսափեցնում:

Երրորդ դասամիջոցին Պերեդոնովին նորից հրավիրեցին տնօրենի մոտ: Նա գնաց, աղոտ ինչ-որ տհաճ բան կանխազգալով:

Բոլոր կողմերից Խրիպաչին էին հասնում լուրերը Պերեդոնովի սխրագործությունների մասին: Այսօր առավոտյան նրան պատմել էին ակումբի երեկվա իրադարձության մասին: Իսկ երեկ դասերից հետո նրա մոտ հայտնվեց Վոլոդյա Բուլտյակովը, որ օրերս պատժվել էր իր տանտիրուհու կողմից Պերեդոնովի բողոքի պատճառով: Զգուշանալով նրա երկրորդ այցելությունից միեւնույն հետեւանքներով, տղան բողոքեց տնօրենին:

Չոր, կտրուկ ձայնով Խրիպաչը Պերեդոնովին հաղորդեց իրեն հասած լուրերը,- արժանահավատ աղբյուրներից, հավելեց նա,- այն մասին, որ Պերեդոնովը գնում է աշակերտների բնակարաններ, նրանց ծնողներին կամ դաստիարակներին անճիշտ տեղեկություններ է հաղորդում նրանց երեխաների հաջողությունների եւ վարքի մասին եւ պահանջում է, որպեսզի տղաներին քոթակեն, ինչի հետեւանքով երբեմն մեծ անախորժություններ են պատահում ծնողների հետ, ինչպես, օրինակ, երեկ ակումբում նոտարիուս Գուդաեւսկու հետ:

Պերեդոնովը լսում էր չարացած, վախլուկ: Խրիպաչը լռեց:

-Այդ ի՞նչ բան է,- զայրացկոտ ասաց Պերեդոնովը,- նա ծեծկռտվում է, իսկ մի՞թե դա թույլատրվում է: Նա մռութիս հասցնելու ոչ մի իրավունք չուներ: Նա եկեղեցի չի գնում, կապիկին է հավատում եւ որդուն նույն աղանդով է մոլորեցրել: Նրան պետք է մատնել, նա՝ սոցիալիստ է:

Խրիպաչն ուշադիր նայեց Պերեդոնովին եւ ազդու ասաց.

-Այդ ամենը ձեր գործը չէ եւ ես բացարձակապես չեմ հասկանում,

թե դուք ինչ նկատի ունեք «կապիկին է հավատում» յորօրինակ արտահայտության տակ: Ըստ իս, հարկ չկա կրոնների պատմությունը հարստացնել նոր հորինած պաշտամունքներով: Ինչ վերաբերում է ձեզ հասցրած վիրավորանքին, ձեզ հարկ է նրան դատի կանչել: Իսկ ամենալավը կլիներ ձեզ համար՝ լքել մեր գիմնազիան: Դա լավագույն ելքը կլիներ եւ անձնապես ձեզ համար, եւ գիմնազիայի համար:

-Ես տեսուչ կլինեմ,- զայրացկոտ առարկեց Պերեդոնովը:

-Մինչ այդ,- շարունակում էր Խրիպաչը,- ձեզ հարկ է ետ կենալ այդ տարօրինակ զբոսանքներից: Ինքներդ համաձայնեք, որ այպիսի վարմունքը պատշաճ չէ մանկավարժին եւ աշակերտների աչքին նվազեցնում է ուսուցչի արժանապատվությունը: Գնալ տները տղաներին քոթակելու՝ դա ինքներդ հմածայնեք:

Խրիպաչը չավարտեց եւ ուսերը թոթվեց:

-Դե ի՞նչ բան է,- դարձյալ առարկեց Պերեդոնովը,- ես նրանց օգուտի համար եմ անում:

-խնդրում եմ, չվիճենք,- կտրուկ ընդհատեց Խրիպաչը,- ես ամենակտրուկ կերպով ձեզանից պահանջում եմ, որպեսզի դա այլեւս չկրկնվի:

Պերեդոնովը բարկացկոտ նայում էր տնօրենին:

***

Այսօր երեկոյան որոշեցին նորաբնակության խնջույքն անել: Կանչեցին իրենց բոլոր ծանոթներին: Պերեդոնովը քայլում էր սենյակներով եւ զննում էր, արդյոք ամեն ինչ կարգին է, արդյոք մի տեղ այնպիսի մի բան չկա, ինչի մասին կարող են մատնել: Նա մտածում էր.

«Դե ինչ, ոնց որ թե, ամեն ինչ լավ է՝ արգելված գրքույկներ չեն երեւում, լամպերը նշուլվում են, արքայական դիմանկարները կախված են պատից, պատվավոր տեղում»:

Հանկարծ Միցկեւիչը պատից Պերեդոնովին աչքով արեց:

«Փորձանքի մեջ կգցի»,- վախեցած մտածեց Պերեդոնովը, արագ հանեց դիմանկարն ու քարշ տվեց արտաքնոց, որպեսզի այն Պուշկինով փոխարինի, եւ Պուշկինի դիմանկարն այստեղ կախի:

«Ամեն դեպքում Պուշկինը պալատական մարդ է»,- մտածում էր նա, կախելով այն հյուրասենյակի պատից: Հետո նա մտաբերեց, որ երեկ-

յան խաղալու են, եւ որոշեց թղթերը ստուգել: Նա վերցրեց բացած կապուկը, որը մեկ անգամ էր միայն գործածվել, եւ սկսեց թղթերը տնտղել, ասես դրանց մեջ ինչ-որ բան փնտրելով: Ֆիգուրների դեմքերը նրան դուր չէին գալիս՝ խոշորակն էին ինչ-որ:

Վերջին ժամանակներս խաղի ժամանակ նրան հար թվում էր, թե թղթերը քմծիծաղում են, ինչպես Վարվարան: Նույնիսկ ինչ-որ ագռավի վեց լկտի տեսք էր առնում եւ անպատշաճ լիկլիկում էր:

Պերեդոնովը հավաքեց բոլոր թղթերը, որ կային, եւ մկատի սայրերով ֆիգուրների աչքերը ծակեց, որպեսզի նրանք աչք չածեն: Սկզբում նա այդ արեց խաղացած թղթերի հետ, իսկ հետո բացեց նաեւ նոր կապուկները: Այդ ամենը նա անում էր շուրջբոլորը նայելով, ասես վախենում էր, որ իրեն կբռնացնեն: ի բարեբախտություն նրա»: Վարվարան զբաղված էր խոհանոցում եւ վերնասենյակներ չէր մտնում,- դե եւ ինչպես կարող էր նա հեռանալ կերակրապաշարների այդպիսի առատությունից՝ մեկ էլ տեսար Կլավդիան ինչ-որ բանից օգտվեց: Երբ նրան ինչ-որ բան էր պետք լինում վերնասենյակներում, նա այնտեղ էր ուղարկում Կլավդային: Ամեն անգամ, երբ Կլավդիան մտնում էր, Պերեդոնովը ցնցվում էր, մկրատը թաքցնում էր գրպանը եւ ձեւացնում էր, թե իբր պասյանս է բացում: Այնինչ Պերեդոնովը այդպիսով թագավորներին ու աղջիկներին զրկում էր իրեն հետեւելով սրտնեղելով հնարավորությունից, տհաճությունը վրա գալիս նաեւ այլ կողմից: Այն գլխարկը, որը նախորդ բնակարանում Պերեդոնովը նետել էր վառարանի վրա, որպեսզի այն ձեռքի տակ չընկնի, գտել էր Երշովան: Նա գլխի էր ընկել, որ գլխարկը հենց էնպես չի թողնված՝ ատողները՝ նրանից գնացած կենվորները,- եւ շատ հնարավոր է - մտածում էր Երշովան,- որ նրանք չարությունից գլխարկի մեջ ինչ-որ բան էի կախարդել, որի պատճառով ոչ մեկը բնակարան չի վարձի: Վախի եւ սրտնեղության մեջ նա այդ գլխարկը տարավ հեքիմի մոտ: Նա զննեց գլխարկը, խորհրդավոր եւ խստաշունչ շշնջաց դրա վրա, թքոտեց չորս ծագերի կողմը եւ Երշովային ասաց.

Նրանք քեզ վնասել են, դու էլ նրանց կեղտոտություն արա: Ուժեղ կախարդ է հմայախոսել, բայց ես ավելի խորամանկ եմ՝ ես նրա դեմ էնպես կհմայախոսեմ, որ նա հենց ինքը կծռմռվի:

Եւ նա դեռ երկար հմայախոսում էր գլխարկի վրա եւ, Երշովայից

ճոխ ընծաներ ստանալով, կարգադրեց նրան գլխարկը տալ շիկահեր տղային, որպեսզի նա այն տանի Պերեդոնովին, տա այն առաջինն պատահածին, ում կհանդիպի, իսկ ինքը առանց ետ նայելու փախչի:

Այնպես պատահեց, որ առաջին շիկահեր տղան, որ պատահեց Երշովային, փականագործներից մեկն էր, որ չարացած էր Պերեդոնովի վրա գիշերային չարաճճիության բացահայտման համար: Նա հաճույքով հինգ կոպեկի համար հանձն առավ կատարել հանձնարարությունը եւ ճանապարհին ինքն իրենից ջանադրաբար թքոտեց գլխարկի վրա: Պերեդոնովի բնակարանում, մթին սրահիկում պատահեց հենց Վարվարային, նա գլարկը խցկեց նրան եւ այնքան ճարպիկ փախավ, որ Վարվարան չհասցրեց նրա տեսնել:

Եւ ահա, հազիվ էր Պերեդոնովը հասցրել կուրացնել վերջին վալետին, որ վերնահարկ մտավ Վարվարան, զարմացած եւ նույնիսկ վախեցած, եւ հուզմունքից դողացող ձայնով ասաց.

-Արդալյոն Բորիսիչ, տես, էս ինչ է:

Պերեդոնովը նայեց եւ սարսափից քարացավ: Հենց այն գլխարկը, որից նա հազիվ պրծել էր, հիմա Վարվարայի ձեռքերում էր, տրորված, փոշոտված, նախկին հիասքանչության հետքերը հազիվ պահած: Սարսափից շնչահատվելով նա ասաց.

-Որտեղի՞ց, որտեղի՞ց է սա:

Վարվարան վախեցած ձայնով պատմեց, թե ինչպես ստացավ այս գլխարկը մի ժրաշարժ տղայից, րն ասես գետնի տակից ծլեց նրա առաջ եւ կրկին ասես գետնի տակն անցավ: Նա ասաց.

-Դա այլ ոք չէ, քան Երշիխան: Դա նա է քեզ գլխարկի վրա հմայախոսել, դե դա արդեն հաստատ:

Պերեդոնովը ինչ-որ անպարզահունչ բան էր քրթմնջում եւ ատամները նրա վախից կրճտում էին: Մռայլ կասկածներն ու կանխազգացումները տոչորում էին նրան: Նա քայլում էր նոթոտելով, իսկ գորշ դարձվորյակը վազում էր աթոռների տակով եւ քմծիծաղում էր:

Հյուրերը վաղ հավաքվեցին: Նորամուտին շատ կարկանդակ, տանձ ու խնձոր բերեցին: Վարվարան այդ ամենն ընդունում էր ուրախությամբ, միայն թե պատշաճությունից վրա էր բերում.

-Դե ինչո՞ւ այս ամենը: Ձուր եք անհանգստացել:

Բայց եթե նրան թվում էր, թե ինչ-որ էժանագին կամ վատ բան են

բերել, ապա նա զայրանում էր: Նրան նաեւ դուր չէր գալիս, եթե երկու հյուր միանման բան էին բերում:

Ժամանակ չվատնելով, նստեցին թղթախաղի: Ստուկալկա էին խաղում, երկու սեղանների վրա:

-Ախ, տեր իմ,- բացականչեց Գրուշինան,- էս ինչ է, դե թագավորս կույր է:

-Դե ինձ մոտ էլ աղջիկն է անաչք,- զննելով իր թղթերը, ասաց Պրեպոլովենսկայան,- դե եւ վալետն էլ:

Հյուրերը ծիծաղով սկսեցին զննել թղթերը:

Պրեպոլովենսկին խոսեց.

-Ինչ-որ ես տեսնում եմ, էս ինչ բան է, խորդուբորդ թղթեր են,- իսկ դա ինչից է: Իսկ ես անընդհատ շշափում եմ,- էս ինչ է, մտածում եմ, խորդուբորդ ինչ-որ վերնաշապիկ է, իսկ դա, պարզվում է, այդ ծակերից է: Դրա համար էլ շապիկը եւ խորդուբորդ է:

Բոլորը ծիծաղում էին, մեն միայն Պերեդոնովն էր մռայլ: Վարվարան, քմծիծաղելով, ասում էր.

-Դե դուք գիտեք, իմ Արդալյոն Բորիսիչը անընդհատ փախուկություններ է անում, անընդհատ տարբեր բաներ է հորինում:

-Դե ինչո՞ւ դու այդ,- բարձր ծիծաղով հարցնում էր Ռուտիլովը:

-Աչքերը նրանց ինչի՞ն են պետք,- մռայլ ասաց Պերեդոնովը,- նրանց պետք չէ նայել:

Բոլորը քրքջում էին, իսկ Պերեդոնովը մնում էր մռայլ ու լռակյաց: Նրան թվում էր, թե կուրացած ֆիգուրները ծամածռվում, քմծիծաղում եւ խորաբաց անցքերով իրեն աչքով են անում:

-«Գուցե թե,- մտածում էր Պերեդոնովը,- նրանք հիմա քթով նայելու հնարն են գտել»:

Ինչպես համարյա միշտ նրա բախտը չէր բանում, եւ թագավորների, աղջիկների, վալետների դեմքերին նրան պատկերանում էր քմծիծաղի եւ չարության արտահայտությունը. ագռավի աղջիկը նույնիսկ ատամներն է կրճտացնում, հավանաբար, չարանալով այն բանից, որ իրեն կուրացրել են: Վերջապես, մի խոշոր խաղատուգանքից հետո, Պերեդոնովը ճանկեց խաղաթղթերի կապուկը եւ կատաղությամբ սկսեց այն կտոր-կտոր անել: Հյուրերը քրքջում էին:

Վարվարան, քմծիծաղելով, ասում էր.

-Դե նա ինձ մոտ միշտ էդպիսինն է - կխմի դե ու կսկսի փախուկություն անել:

-Գինովցա՞ծ, ուրեմն,- թունոտ ասաց Պրեպոլովենսկայան:- Լսում եք, Արդալյոն Բորիսիչ, թե ինչպես է ձեր քույրը ձեզ հասկանում:

Վարվարան կարմրեց ու բարկացկոտ ասաց.

-Դե ի՞նչ եք բառերից կպչում:

Պրեպոլովենսակայան ժպտում ու լռում էր:

Ճղվածի փոխարեն նոր կապուկ վերցրին եւ խաղը շարունակեցին:

Հանկարծ շրխկոց լսվեց՝ ջարդվել էր լուսամուտի ապակին, քարն ընկավ հատակին, սեղանի մոտ, ուր նստած էր Պերեդոնովը: Պատուհանի տակ կամացուկ խոսակցություն, ծիծաղ էր լսվում, հետո արագ, հեռացող թմբմփոց: Բոլորն իրար անցած տեղերից վեր թռան. կանայք, ինչպես ընդունված է, ճղճղացին: Բարձրացրին քարը, վախեցած զննում էին այն, պատուհանին ոչ մեկը չէր ուզում մոտենալ,- սկզբում բակ ուղարկեցին Կլավդիային, եւ միայն այնժամ, երբ նա հայտնեց, որ դրսում դատարկ է, սկսեցին զննել ջարդված պատուհանը:

Վոլոդինը գլխի նկավ որ այդ քարը գմնազիստներն են նետել: Կռահումը ճշմարտանման թվաց, եւ բոլորը նշանակալից նայեցին Պերեդոնովին: Պերեդոնովը նոթոտում եւ ինչ-որ նապարզահոնչ բան էր քրթմնջում: Հյուրերը խոսեցին այն մասին, թե ինչ հանդուգն եւ շփացած են լակոտները:

Դա, իհարկե, գիմնազիստները չէին, այլ փականագործները:

-Այդ տնօրենն է գիմնազիստներին համոզել,- հանկարծ հայտարարեց Պերեդոնովը,- նա ինձ անընդհատ բզբզում է, չգիտի, թե ինչով հասնի, ահա եւ հորինել է:

-Այ թե բան է հորինել,- քրքիջով գոչեց Ռուտիլովը:

Բոլորը հռհռացին, միայն Գրուշինա ասաց.

-Իսկ դուք ի՞նչ եք մտածում, նա՝ անքան թունոտ մարդ է, նրանից ամեն ինչ կարելի է սպասել: Նա ինքը չէ, այլ կողքանց, որդիների միջոցով կշշնջա:

-Դա ոչինչ, որ ազնվականներ են,- նեղացած ձայնով մկկաց Վոլոդինը,- ազնվականներից ամեն ինչ կարելի է սպասել:

Հյուրերից շատերը մտածեցին, որ, թերեւս, եւ ճիշտ է ու դադարեցին ծիծաղել:

-Ապակիների գծով բախտդ չի բանում Արդալյոն Բորիսիչ,- ասաց Ռուտիլովը,- մեկ ակնոցդ ջարդեցին, մեկ պատուհանդ փշրեցին:

Դա ծիծաղի նոր ալիք հարուցեց:

-Ապակիները ջադում են՝ երկար կապրեք,- զսպված ժպիտով ասաց Պրեպոլովենսկայան:

***

Երբ Պերեդոնովն ու Վարվարան պատրաստվում էին քնելու, Պերեդոնովին թվում էր, թե Վարվարայի մտքին մի չար բան կա. նա նրա մոտից վերցրել էր բոլոր դանակներն ու պատառաքաղներն ու թաքցրել էր դրանք տեղաշորի տակ: Նա կարկամած լեզվով թոթովում էր.

-ես քեզ գիտեմ՝ դու, հենց որ ինձ հետ ամոսնանաս, ապա հենց ինձ էլ կմատնես, որպեսզի ինձանից պրծնես: Թոշակ կստանաս, իսկ ինձ Պետրոպավլովկում ջրաղացով կաղան:

Գիշերը Պերեդոնովը զառանցում էր: Քայլում էին անհունչ անպարզ, սարսափելի ֆիգուրները, թագավորները, վալետները, իրենց գավազանները թափ տալով: Նրանք փսփսում էին, ջանում էին Պերեդոնովից թաքնվել եւ կամացուկ սողոսկում էին նրա բարձի տակ: Բայց շուտով նրանք ավելի համարձակ դարձան ու քայլեցին, վազեցին, վխտացին Պերեդոնովի շուրջ ամենուր, հատակին, մահճակալի վրա, բարձերի վրա: Նրանք փսփսում էին, ծաղրում էին Պերեդոնովին, նրան լեզու էին ցույց տալիս, նրա առաջ սարսափելի ծամածռություններ էին անում, այլանդակ ձգում էին բերանները: Պերեդոնովը տեսնում էր, որ նրանք բոլորը՝ փոքրիկ ու խենթուխելառ էին, որ նրանք իրեն չէին սպանի, այլ միայն իր հոգու հետ են խաղում, ինչ-որ գեշ բան կանխատեսելով: Բաց նա սարսափ էր ապրում,- նա մեկ ինչ-որ հմայիլներ էր քրթմնջում, մանկուց լսած ինչ-որ դավերի հատվածներ, մեկ սկսում ր հայհոյել նրանց ու իրենից հեռու քշել, ձեռքերն էր թափահարում եւ խռպոտ ձայնով ճչում էր:

Վարվարան զարթնեց ու զայրացկոտ հարցրեց.

-Ի՞նչ ես դու գոռում Արդալյոն Բորիսիչ, քնել չես թողնում:

-Ագռավի աղջիկն է անընդհատ մոտս խցկվում, խտակտավե ծածկոցով,- քրթմնջաց Պերեդոնովը:

Վարվարան ելավ եւ, մռթմռթալով ու հայհոյելով, սկսեց Պերեդոնովին ինչ-որ կաթիլներ խմացնել:

***

Տեղի նահանգային թերթիկում մի փոքրիկ հոդված հայտնվեց առ այն, թե իբր մեր քաղաքում ոմն տիկին Կ քոթակում է իր մոտ ապրող փոքրիկ գիմնազիստներին, տեղի լավագույն ազնվականական ընտանիքների որդիներին: Նոտարիուս Գուդաեւսկին այդ լուրը պտացնում էր ողջ քաղաքով մեկ եւ վրդովվում էր:

Եվ զանազան այլ անհեթեթ լուրեր էին պտտվում քաղաքով մեկ այս-տեղի գիմնազիայի մասին՝ խոսում էին գիմնազիստ վերազգեստա-վորված օրիորդի մասին, հետո Պիլնիկովի անունը հետզհետե սկսեցին միավորել Լյուդմիլայի անվան հետ: Ընկերները սկսեցին ծաղրել Սաշային առ Լյուդմիլա սիրո համար: Սկզբում նա թեթեւ էր վերաբեր-վում այդ կատակներին, հետո սկսեց ժամանակ առ ժամանակ կարմ-րատակել եւ Լյուդմիլային պաշտպան կանգնել, հավատացնելով, որ ոչ մի այդպիսի բան չի եղել եւ չկա:

Եվ դրանից նա սկսեց ամաչել գնալ Լյուդմիլայի մոտ, բայց նրան ավելի շատ էր ձգում գնալ՝ ամոթի եւ հակվածության խառնաշփոթ, այ-րող զգացմունքները հուզում էին նրան եւ մշուշակրքոտ տեսիլքներով լցնում էին նրա երեւակայությունը:

XXI

Կիրակի օրը, երբ Պերեդոնովն ու Վարվարան նախաճաշում էին ինչ-որ մեկը մտավ նախասենյակ: Վարվարան, սովորության համա-ձայն գողունի, մոտեցավ դռանն ու նայեց: Նույնքան կամացուկ սեղա-նի մոտ վերադառնալիս, նա շշնջաց.

-Փոստատարն է: Պետք է նրան օղի տալ,- նորից նամակ է բերել:

Պերեդոնովը լուռ գլխով արեց,- դե ինչ, նա մի ըմպանակ օղին չի ափսոսում: Վարվարան գոչեց.

-Փոստատար, արի էստեղ:

Նամակաբերը մտավ վերնասենյակ: Նա տնտղում էր պայուսակը եւ ձեւացնում էր, թե նամակն է փնտրում: Վարվարան մի մեծ բաժակ օղի լցրեց եւ մի կտոր կարկանդակ կտրեց: նամակաբերը բաղձանքով նա-յում էր նրա գործողություններին: Այդ միջոցին Պերեդոնովն անընդ-հատ մտածում էր, թե փոստատարն ում է նման: Վերջապես նա հիշեց՝ չէ որ դա այն շիկահերն է, պզուկոտ տղամարդ, որ վերջերս իրեն խոշ-

որ խաղատուգանքի տակ էր գցել:

«Նորից, թերւես, փորձանքի մեջ գցի««,- տրտմալի մտածեց Պերեդոնովը եւ գրպանում նամակաբերին ուկիշ ցույց տվեց:

Ծիկահեր տղամարդը նամակը Վարվարային տվեց:

-Ձեզ,- հարգալից ասաց նա, օղու համար շնորհակալությունն հայտնեց, խմեց, կռնչաց, ճանկեց կարկանդակն ու ելավ:

Վարվարան ձեռքերի մեջ նամակը պտտեցրեց եւ, առանց բացելու, այն մեկնեց Պերեդոնովին:

-Առ, կարդա. ոնց որ թե նորից իշխանուհուց է,- ասաց նա, քմծիծաղելով,- իրեն գրելուն է տվել, բայց հաշիվ չկա: Գրելու փոխարեն, թող տեղ տար:

Պերեդոնովի ձեռքերը դողդողացին: Նա պատռեց ծրարն ու արագ կարդաց նամակը: Հետո տեղից վեր թռավ, նամակը թափահարեց ու բղավեց.

-Ուրա, տեսուչի երեք տեղ, ցանկացածը կարելի է ընտրել: Ուրա, Վարվարա, մերն անցավ: Նա պար եկավ ու պտտվեց վերնահարկով մեկ: Անշարժ-կարմիր դեմքով եւ բութ աչքերով նա թվում էր տարօրինակ-մեծ, պարի վրա լարած տիկնիկ: Վարվարան քմծիծաղում եւ ուրախալի նայում էր նրան: Նա գոռաց.

-Դե, հիմա որոշված է,- պսակվում ենք:

Նա բռնեց Վարվարայի ուսերից եւ սկսեց նրան սեղանի շուրջ պտտացնել, ոտքերը դոփելով:

-Ռուսական, Վարվարա,- գոչեց նա:

Վարվարան ձեռքերը կանթեց ու լողաց, Պերեդնովը նրա առաջ պզած պար էր գալիս:

Ելավ Վոլոդինը եւ ուրախալի մկկաց.

-Ապագա տեսուչը տրեպակ է պար գալիս:

-Պարիր, Պավլուշկա,- գոչեց Պերեդոնովը:

Կլավդիան նայում էր դռան ետեւից: Վոլոդինը կանչեց նրան, քրքջալով ու կոտրատվելով.

-Պար եկ, Կլավդյուշա, դու էլ: Բոլորս միասին: Ձվարճաչնենք գալիք տեսուչին:

Կլավդիան ճղճղաց եւ, ուսերը շարժելով, լող տվեց: Վոլոդինը ճարպկորեն պտտվեց նրա առաջ,- ծնկածալվում, պտտվում, վեր թռ-

չում, ծափ էր զարկում: Հատկապես ճարպիկ էր ստացվում նրա մոտ, երբ նա ծունկն էր բարձրացնում եւ ծնկի տակ ծափ էր զարկում: Հատակը գնում-գալիս էր կրունկների տակ Կլավդիան ուրախանում էր այն բանից, որ այդպիս ճարպիկ կտրիճ ունի:

Հոգնեցին, սեղան նստեցին, իսկ Կլավդիան ուրախ քրքիջով խոհանոց փախավ: Օղի եւ գարեջուր խմեցին, ջարդեցին շշերն ու բաժակները, ճչում, քրքջում, ձեռքերն էին թափահարում, գրկախառնվում ու համբուրվում էին: Հետո Պերեդոնովն ու Վոլոդինը վազեցին Ամառային Այգի,- Պերեդոնովը փութում էր նամակով պարծենալ:

Բիլիարդանոցում գտան սովորական ընկերախումբը: Պերեդոնովը ընկերեներին ցույց տվեց նամակը: Այն մեծ տպավորություն թողեց: Բոլորը վստահորեն զննում էին այն: Ռուտիլովը դժգունում, եւ ինչ-որ բան քրթմնջալով, թուք ցայտեցնելով:

-Իմ ներկայությամբ փոստատարը բերեց,- բացականչում էր Պերեդոնովը:- Ինքս էլ բացել եմ: Դե այստեղ, կնշանակի, առանց ստի է:

Եւ ընկերները հարգանքով նայում էին նրան: Նամակ իշխանուհուց:

Ամառային այգուց Պերեդոնովը սրընթաց գնաց Վերշինայի մոտ: Նա գնում էր արագ ու հավասար, միապաղաղ ձեռքերն էր թափահարում, ինչ-որ բան էր քրթմնջում. նրա դեմքի վրա, թվում էր, ոչ մի արտահայտություն չկար,- ինչպես լարած տիկնիկի մոտ, ան անշարժ էր,- եւ լոկ ինչ-որ ագահ հուր մեռյալ առկայծում էր աչքերում:

***

Պարզկա, շոգ օր էր: Մարթան նստած էր տաղավարում: Նա գուլպա էր գործում: Նրա մտքերն աղոտ ու բարեպաշտ էին: Սկզբում նա մտածում էր մեղքերի մասին, հետո մտքերն իր ուղղեց առավել հաճելի բաների վրա եւ սկսեց խորհրդածել առաքինությունների մասին: Մտքերը նրա սկսեցին մշուշով պատվել եւ պատկերավոր դարձան, եւ համեմատ այն բանի, թե ինչպես էր դրանց բառերով արտահայտվող պարզորոշությունը, շատանում էր դրանց երազկուն ուրվագծերի պարզությունը: Առաքինությունները հառնեցին նրա առաջ, ինչպես ճերմակազգեստ, լուսաշող, անուշաբույր մեծ, գեղեցիկ տիկնիկներ: Դրանք նրան պարգեւներ էին խոստանում, նրանց ձեռքերում զնգզնգգում էին բանալիները, գլխների վրա ծածանվում էին պսակադրման ծածկոցները:

Դրանց մեջ մեկը տարօրինակ ու այլոց նման չէր: Նա ոչինչ չէր խոստանում, բայց նայում էր կշտամբական, եւ շուրթերը նրա շարժվում էին անհունչ սպառնալիքով. թվում էր, թե եթե նա խոսք ասի, ապա սարսափելի կլինի: Մարթան գլխի ընկավ, որ դա՝ խիցճն է: Նա ամբողջովին սեւազգեստ էր, այդ տարօրինակ, սահմռկելի այցելուն, սեւաչ, սեւահեր,- եւ ահա նա սկսեց ինչ-որ բանից խոսել, արագ, հաճախակի, հստակ: Նա սկսեց լրիվ նմանվել Վերշինային: Մարթան ցնցվեց, ինչ-որ բան պատասխանեց նրա հարցին, պատասխանեց համարյա անգիտակից,- եւ դարձյալ նինջը հաղթահարեց Մարթային:

Արդյոք խիղճը, թե Վերշինան նստած էր նրա դիմաց եւ արագ ու հստակ ինչ-որ բան էր ասում, եւ ինչ-որ օտարահոտ բան էր ծխում, վճռական, հանդարտ, պահանջող, որպեսզի ամեն ինչ լինի այնպես, ինչպես ինքն է ուզում: Մարթան ուզում էր նայել այդ ձանձրալի այցելուի ուղիղ աչքերին, բայց չգիտես ինչու չէր կարողանում,- նա տարօրինակ ժպտում, փնթփնթում էր, եւ նրա աչքերն ինչ-որ տեղ էին փախչում եւ կանգ էին առնում հեռավոր, անհայտ առարկաների վրա, որոնց վրա Մարթան սարսափում էր նայել...

Բարձր խոսակցությունն արթնացրեց Մարթային եւ նրա մտքերը խճճվում էին: Դե ո՞ւր է խիղճը: Թե այն չկա՞ր էլ: Եւ հարկ էլ չէ՞ր, որ նա այստեղ լիներ:

-Իսկ դուք այստեղ շնթռել էիք,- ասաց նրան Պերեդոնովը,- խռմփացնում էիք բոլոր քթածալքերից: Հիմա դուք դեռ քնատ եք:

Մարան նրա բառախաղը չհասկացավ, բայց ժպտում էր, Վերշինայի շուրթերի վրայի ժպիտից գլխի ընկնելով, որ ինչ-որ բան է ասվում, որը պետք է որպես ծիծաղելի մի բան ընդունել:

-Ձեզ հարկ է Սոֆյա կոչվել,- շարունակում էր Պերեդոնովը:

-Այդ ինչո՞ւ,- հարցրեց Մարթան:

-Դե այն բանի համար, որ դուք՝ քնկոտ եք, այլ ոչ թե Մարթա:

Պերեդոնովը նստեց նստարանին Մարթայի կողքին ու ասաց.

-Իսկ ես լուր ունեմ. շատ կարեւոր:

-Դե այդ ինչ լուր է ձեզ մոտ, մեզ մասնակից դարձրեք,- ասաց Վերշինան, եւ Մարթան տեղնուտեղը նախանձեց նրան, որ նա այդպիսի բառաքանակով կարողացավ արտահայտել պարզ հարցը՝ ի՞նչ նորություն:

-Կռահեք,- հանդիսամռայլ ասաց Պերեդոնովը:

-Դե ես որտեղի՞ց կռահեմ, թե ի՞նչ լուր է ձեզ մոտ,- ատասխանեց Վերշինան - դե դուք ասեք, ահա եւ մենք էլ ձեր լուրը կիմանանանք:

Պերեդոնովի համար տհաճ էր, որ չեն ուզում կռահել իր լուրը: Նա լռեց եւ նստել էր, անհմուտ կորացած, բութ ու ծանր, եւ անշարժ նայում էր իր առջեւ:

Վերշինան ծխում եւ ծուռ ժպտում էր, ցուցադրելով իր դեղնամուգ ատամները:

Ձեր լուրերն այդես կռահելու փոխարեն,- ասաց նա, փոքր ինչ լռելով,- եկեք ես թղթերով ձեր բախտը բանամ: Մարթա, սենյակից խաղաթղթերը բեր:

Մարթան ելավ, բայց Պերեդոնովը բարկացկոտ կանգնեցրեց նրան.

-Նստեք, պետք չի, ես չեմ ուզում: Ինքներդ ձեր բախտը բանեք, իսկ ինձ թողեք: Դե ինձ արդեն ձեր թափքափայտը չեք գուշակի: Ահա ես ձեզ մի բան ցույց կտամ, որ ձտր բերանները բաց կմնան:

Պերեդոնովը ճարպկորեն գրպանից հանեց դրամապանակը, հանեց այնտեղից ծրարով նամակը եւ ցույց տվեց Վերշինային, ձեռքից բաց չթողնելով:

-Տեսնո՞ւմ եք,- ասաց նա,- ծրարը: Իսկ ահա եւ նամակը:

Նա հանեց նամակն ու դանդաղ կարդաց այն, աչքերի մեջ բավարարված չարության բութ արտահայտությամբ: Վերշինան ապշեց: Նա մինչեւ վերջին րոպեն իշխանուհուն չէր հավատում, բայց հիմա նա հասկացավ, որ Մարթայի հետ կապված գործը վերջնականապես տանուլ է տրված: Սրտնեղած, ծուռ քմծիծաղեց նա ու ասաց.

-Դե, ինչ, ձեր երջանկությունն է:

Մարթան նստել էր զարմացած եւ վախեցած դեմքով եւ շվարած ժպտում էր:

-Դե ինչ, կերա՞ք,- ասաց Պերեդոնովը չարախնդրեն:- Դուք ինձ հիմար էիք համարում, իսկ ես ձեզնից խելոք եմ դուրս գալիս: Ահա ծրարից էիք խոսում,- ահա ձեզ եւ ծրարը: Ոչ, դե իմ գործը հաստատ է:

Նա բռունցքով խփեց սեղանին, ոչ ուժեղ եւ ոչ բարձր,- եւ նրա շարժումն ու նրա բռերի ձայնը մնացին ինչ-որ տարօրինակ անտարբեր, ասես նա օտար եւ հեռու էր իր գործերից:

Վերշինան եւ Մարթան զզված-տարակուսած դեմքով միմյանց նա-

յեցին:

-Ի՞նչ եք իրար նայում,- կոպիտ ասաց Պերեդոնովը,- իրար նայելու կարիք չկա. հիմա արդեն վերջ, ամուսնանում եմ Վարվարայի հետ: Այստեղ շատ օրիորդիկներ էին ինձ որսում:

Վերշինան Մարթային ուղարկեց ծխախոտի ետեւից, եւ Մարթան ուրախալի տաղավարից դուսր թռավ: Թորշոմած տերեւներով վառվռուն ավազե ճամփիկներին, նա իրեն ավելի թեթեւ ու ազատ զգաց: Տան մոտ նա հանդիպեց բոբիկ Վլադյային, եւ իրեն ավելի զվարթ ու բերկրալի զգաց:

-Վարվարայի հետ ամոսնանում, որոշված է,- աշխուժացած ասաց նա, ձայնն իջեցնելով ե եղբորը դեպի տուն տանելով:

Այդ ընթացքում Պերեդոնովը, Մարթային չսպասելով, հանկարծ սկսեց հրաժեշտ տալ

-Ես ժամանակ չունեմ,- ասաց նա,- ամուսնանալը,- տրեխ քչփորել չէ:

Վերշինան նրան չէր պահում եւ նրան սառը հրաժեշտ տվեց: Նա սաստիկ սրտնեղած էր՝ մինչ այդ դեռ Մարթային Պերեդոնովի հետ դրստելու փոքր հույս կար, իսկ իրեն Մուրինին վերցնել,- եւ ահա այժմ վերջին հույսն անհետեց: Եւ դրա համար Մարթային այսօր լավ հասավ: Ստպված եղավ արտասվել:

***

Պերեդոնովը ելավ Վերշինայի մոտից եւ մտադրվեց ծխել: Նա հանկարծ տեսավ քաղաքապահ ոստիկանին,- նա իր համար կագնած էր ակնյունում եւ մաքրում էր արեւածաղկի հատիկները: Պերեդոնովն անձկություն զգաց «Նորից լրտես»,- մտածեց նա,- էդպես նայում են, թե ինչին կպչեն»:

Նա չհամարձակվեց ծխել հանած ծխախոտը, մոտեցավ ոստիկանին եւ երկչոտ հարցրեց.

-Պարոն ոստիկան, այստեղ կարելի՞ է ծխել:

Ոստիկանը պատիվ բռնեց ու հարգալից տեղեկացավ.

-Այսինքն, ձերդ գերազանցություն, այդ ի՞նչ հաշվով:

-Ծխախոտ,- բացատրեց Պերեդոնովը,- ահա մի գլանակ կարելի՞ է ծխել:

-Այդ հաշվով ոչ մի հրաման չի եղել,- խուսափողական պատասխանում էր ոստիկանը:

-Չի՞ եղել,- վերահարցրեց Պերեդոնովը վշտոտ ձայնով:

-Ոչ մի կերպ, չի եղել: Այնպես որ պարոնայք, որոնք ծխում են, դա հրահանգված չէ արգելել, իսկ որ թույլտվություն լինի, այդ մասին չեմ կարող իմանալ:

-Եթե չի եղել, դե ուրեմն ես չեմ էլ անի,- ասաց հեգորեն Պերեդոնովը:- Ես - բարեհույս եմ: Ես նույնիսկ կնետեմ գլանակը: Չէ որ ես՝ պետական խորհրդական եմ:

Պերեդոնովը տրորեց ծխախոտը, նետեց այն գետնին եւ, արդեն զգուշանալով, թե արդյոք ինքը ինչ-որ ավելորդ բան չի ասել, փութկոտ գնաց տուն: Ոստիկանը տարակուսանքով նայեց նրա ետքից, վերջապես որոշեց, որ բարինի մոտ «գինովությունը դեռ չի անցել»,- եւ դրանից հանգստացած, դարձյալ անցավ արեւածաղկի հատիկների կլպելուն:

-Փողոցը ծառս է եղել,- քրթմնջաց Պերեդոնովը:

Փողոցը բարձրանում էր ոչ բարձր բլրի վրա, իսկ դրա ետեւում նորից վայրէջք էր, եւ փողոցի ծալատեղը երկու հյուղակների միջեւ որվագծվում էր կապույտ, իրիկնացող, տրտմալի երկնքում: Աղքատիկ կյանքի հանդարտ տիրույթը ներփավել էր իր մեջ եւ ծանրորեն վշտանում ու տոչորվում էր: Ծառերը ցանկապատի վրայից կախում էին իրենց ճյուղերը եւ աչք ածում ու խանգարում էին գնալ, դրանց շրշյունը ծաղրական ու սպառնալի էր: Ոչխարը կանգնել էր խաչմերուկին եւ բութ նայում էր Պերեդոնովին:

Հանկարծ անկյունից մկկացող ծիծաղ լսվեց, առաջ եկավ Վոլոդինն ու մոտեցավ ողջունելու: Պերեդոնովը նայում էր նրա վրա մռայլ եւ մտածում էր ոչխարի մասին, որը նոր կանգնած էր, հանկարծ այն չկա:

-Դա,- մտածեց նա,- իհարկե, Վոլոդինն է փոխակերպվում ոչխարի: Զուր չէ, որ նա այդչափ նման է ոչխարի, եւ գլուխ չես հանի, ծիծաղում է նա, թե մկկում:

Այդ մտքերն այնքան գրավեցին նրան, որ նա բացարձակապես չէր լսում, թե ողջունելիս ինչ էր խոսում Վոլոդինը:

-Ինչ ես աքացի տալիս, Պավլուշկա,- տխրագին ասաց նա:

Վոլոդինը ատամները ցցեց, մկկաց ու առարկեց.

-Ես աքացի չեմ տալիս, Արդալյոն Բորիսիչ, ես ողջունում եմ ձեզ ձեռքով Դա, երեւի թե, ձեզ մոտ հայրենիքում են ձեռքով աքացի տալիս, իսկ իմ հայրենիքում ոտքերով են աքացի տալիս, դե այն էլ ոչ թե մարդիկ, այլ թույլ տվեք ասել, ձիուկները:

-Մեկ էլ հարու տվեցիրմ թերեւս - մռթմռթաց Պերեդոնովը:

Վոլոդինը նեղացավ եւ դռդռացող ձայնով ասաց.

-Ինձ մոտ, Արդալյոն Բորիսիչ, դեռ պոզեր չեն աճել, իսկ դա, գուցե թե, ձեզ մոտ պոզեր աճեն ավելի շուտ, քան ինձ մոտ:

-Լեզոդ երկար է, ինչ պետք չէ դուրս է տալիս,- զայրացկոտ ասաց Պերեդոնովը:

-Եթե դուք այդպես, Արդալյոն Բորիսիչ,- անհապաղ առարկեց Վոլոդինը,- ապա ես կարող եմ եւ լռել:

Եւ նրա դեմքը դարձավ լրիվ վշտալի, եւ շուրթերը նրա լրիվ փքվեցին. սակայն նա քայլում էր Պերեդոնովի կողքից,- նա դեռ չէր ճաշել եւ ծրագրել էր այսօր Պերեդոնովի մոտ ճաշել՝ առավոտյան, արախության առիթով կանչում էին:

Տանը Պերեդոնովին կարեւոր նորություն էր սպասում: Դեռ նախասրահում կարելի էր գլխի ընկնել, որ արտասավոր բան է տեղի ունեցել,- վերնահարկերում իրարանցում էր լսվում, վախեցած բացականչություններ: Պերեդոնովը մտածեց՝ ամեն ինչ չէ պատրաստ ճաշին. տեսան՝ նա գալիս է, վախեցան, փութում են: Նրան հաճելի եղավ՝ ինչպես են իրենից վախենում: Բայց պարզվեց, որ այլ բան էր կատարվել: Վարվարան դուրս թռավ նախասենյակ եւ ճչաց.

-Կատվին վերադարձրել են:

Վախեցած, նա մեկեն Վքոլոդինին չնկատեց: Նրա հագուստը, ըստ սովորության, փնթի էր՝ յուղոտած բլուզ, մոխրագույն, կեղտոտ շրջազգեստի վրայից, տրորված կոշիկներ: Մազերը չսանրած, գզգզված: Հուզված նա Պերեդոնովին ասում էր.

-Դե Իրիշկան, չարությունից նոր խաղ է խաղացել: Նորից լակոտը վազ եկավ, բերեց կատվին ու նետեց, իսկ կատվի պոչին չխչկանները հո չեն չխչխկում: Կատուն մեկ էլ թախտի տակ ու դուրս չի գալիս:

Պերեդոնովը սկսեց սարսափել:

Դե հիմա ի՞նչ անենք,- հարցրեց նա:

-Պավել Վասիլեւիչ,- խնդրեց Վարվարան,- դուք ավելի ջահել եք,

նրան թախտի տակից դուրս քշեք:

Կքշեմ, կքշեմ,- քմծիծաղելով ասաց Վոլոդինը ե գնաց սրահ:

Կատվին ինչ-որ կերպ դուրս քշեցին եւ պոչից հանեցին չխչխկանները: Պերեդոնովը գտավ ուղտափշի կոները եւ դարձյալ սկսեց դրանք ծեփել կատվի վրա: Կատուն կատաղի փնչացրեց եւ վազեց խոհանոց: Պերեդոնովը, կատվի հետ քաշկռտուքից հոգնած նստեց իր սովորական դիրքում՝ արմունկները բազկաթոռի բռնակներին, մատները խաչած, ոտքը ոտքին, դեմքը անշարժ, մռայլ:

Իշխանուհու երկրորդ նամակը Պերեդոնովը ավելի ջանադիր էր պահպանում, քան առաջինը՝ անընդհատ իր հետ էր կրում դրամապանակի մեջ, բայց բոլորին ցույց էր տալիս եւ ընդ որում խոհրդավոր տեսք էր ընդունում: Նա սրատես նայում էր, արդյոք որեւէ մեկը չի ոգում թռցնել այդ նամակը, ոչ մեկի ձեռքն այն չէր տալիս եւ ամեն ցույց տալուց հետո թաքցնում էր դրամապանակի մեջ, դրամապանակը խոթում էր սերթուկի մեջ, կողքի գրպանը, սերթուկը կոճկում էր եւ խիստ, նշանակալից նայում էր զուգակիցներին:

-Ի՞նչ ես դրա վա էդպես դողդողում,- երբեմն ծիծաղով հարցնում էր Ռուտիլովը:

-Համենայն դեպս,- մռայլ բացատրում էր Պերեդոնովը,- դե ով ձեզ գիտի: Այն կթռցնեք:

-Դե մաքուր Սիբիր է քեզ մոտ ադ գործը,- ասում էր Ռուտիլովը, քրքջում ու թփթփացնում էր Պերեդոնովի ուսին:

Բայց Պերեդոնովը անվրդով նշանակալիություն էր պահպանում: Ընդհանրապես նա վերջին ժամանակներս սովորականից շատ էր մեծամտում: Նա հաճախ պարծենում էր.

-Ահա ես տեսուչ կլինեմ Դուք էստեղ կթթվեք, իսկ իմ ղեկավարությա տակ երկու նահանգ կլինի: Օհո-հո:

Նա լրիվ համոզվեց, որ շատ շուտով տեսուչի տեղ կստանա: Ուսուցիչ Ֆալասովին նա բազմիցս ասում էր.

-Ես, եղբայր, քեզ էլ դուրս կբերեմ:

Եւ ուսուցիչ Ֆալաստովը Պերեդոնովի հետ շփվելիս շատ հարգալից էր դարձել:

XXII

Պերեդոնովը սկսեց հաճախ եկեղեցի գնալ: Նա կանգնում էր երեւացող տեղում եւ մեկ խաչակնքվում էր ավելի հաճախ, քան հարկ է, եւ հանկարծ քարանում էր եւ բութ նայում էր իր առաջ: Նրան թվում էր,սյուներում ետեւում ինչ-որ լրտեսներ էին թաքնվում, նայում էին այնտեղից, ջանում էին նրան ծիծաղեցնել: Բայց նա չէր տրվում:

Ծիծաղը,- կամացուկ ծիծաղը, քմծիծաղը եւ շշնջոցը Ռուտիլովների աղջիկների հնչում էին Պերեդոնովի ականջներում, երբեմն արտասովոր չափերի հասնելով,- ասես ուղիղ նրա ականջների մեջ ծիծաղում էին նենգադավ օրիորդները, որպեսզի ծանակեն ու կործանե նրան: Բայց Պերեդոնովը չէր տրվում դրան:

Երբեմն խնկի ծխաքուլաների միջեւ հայտնվում էր դարձվորյակը, ծխոտ, կապտավուն, աչուկները փայլում էին կրակներով, նա թեթեւ զրնգոցով անցնում էր երբեմնակի օդով, բայց կարճատեւ, իսկ ավելի շատ թավալվում էր ծխականների ոտքերի մոտ, ծանակում էր Պերեդոնովին եւ ամերեսաբար տանջում էր: Նա, իհարկե, ուզում էր Պերեդոնովին վախեցնել, որպեսզի Պերեդոնովը մինչեւ պատարագի վերջը գնա: Բայց նա հասկանում էր նրա խարդավական մտահղացումը եւ չէր տրվում: Եկեղեցական ծառայությունը՝ ոչ թե խոսքերում եւ ծեսերում, այլ հենց իր ներքին շարժման մեջ այնքան մերձ մարդկանց այդպիսի բազմությանը,- Պերեդոնովի համար անհասկանալի էր, այդու սարսափեցնում էր: Բորվառումները սասափեցնում էին նրան, ինչպես անհայտ կախարդանքներ:

«Ի՞նչ ես թափի ընկել»,- մտածում էր նա:

Հոգեւորականների հանդերձանքները նրա կոպիտ, սրտնեղիչ-խայտաբղետ փալասներ էին թվում,- եւ երբ նա նայում էր հանդերձավորված քահանային, նա չարանում էր, եւ նա կամենում էր պատառոտել շուրջառները, ջարդել անոթները: Եկեղեցական ծեսեր ու խորհուրդները նրան չար կախարդանք էին թվում, միտված առ հասարակ ժողովրդի ստրկացումը:

«Նշխարքը գինու մեջ է փշրել,- մտածում էր նա բարկացկոտ քահանայի մասին,- գինին էժանագին է, ժողովրդին հիմարացնում են, որպեսզի իրենց զոհաբերության համար ավելի շատ փող բերեն»:

Սահվան կապանքները խափանող անկար նյութի հավերժական

վերափոխման ուժի խորհուրդը նրա առաջ ընդմիշտ սքողված էր: Քայլող դիակ: Կենդանի Աստծուն եւ Քրիստոսին չհավատալու համակցումը նրա հավատին առ կախարդանքը:

Սկսեցին եկեղեցուց դուրս գալ: Գյուղական ուսուցիչ Մաչիգինը, պարզավուն մի երիտասարդ, մոտեցել օրիորդներին, ժպտում եւ աշխույժ զրուցում էր: Պերեդոնովը մտածեց, որ պատշաճ չէ ապագա տեսուչի ներկայությաբ այդպես ազատ իրեն պահելը: Մաչիգինը ծղոտե գլխարկով էր: Բայց Պերեդոնովը հիշեց, որ մի անգամ ամռանը քաղաքից դուրս նա տեսել էր նրան համազգեստային աստղագդակով: Պերեդոնովը որոշեց բողոքել: Ի դեպ, տեսուչ Բոգդանովնը հենց այդտեղ էր: Պերեդոնովը մոտեցավ նրան ու ասաց.

-Իսկ դե ձեր Մաչիգինը աստղով գդակ է կրում: Աղայի տեղ է իրեն դրել:

Բոգդանովը վախեցավ, դողդողաց, թափահարեց իր մոխրագույն երեսիցան:

-Իրավունք չունի, ոչ մի իրավունք չունի,- մտահոգված ասում էր նա, կարմրած աչուկները թարթելով:

-Իրավունք չունի, բայց կրում է,- բողոքում էր Պերեդոնովը:- Նրանց կարգի է պետք հրավիրել, ես ձեզ վաղուց եմ ասել: Թե չէ ուզածդ անտաշ մուժիկ աստղանշան կկրի, դե ադ արդեն ինչ կլինի:

Բոգդանովը, արդեն նախկինում էլ Պերեդոնվի կողմից վախեցած, ավելի խիստ տագնապեց:

-Դե նա ինչպե՞ս է համարձակվում, հը՞,- լացակումած ասում էր նա:- Ես նրան տեղնուտեղը կկանչեմ, հենց հիմա, եւ խստագույնս կարգելեմ:

Նա Պերեդոնովին հրաժեշտ վեց եւ փութանակի մանրաքայլեց դեպի իր տուն:

Վոլոդինը քայլում էր Պերեդոնովի կողքից եւ կշտամբական-մկկացող ձայնով ասում էր.

-Աստղանշան է կրում: Ասացեք, խնդրեմ: Միթե նա աստիճաններ է ստանում: Դե ինչպես կարելի է:

-Քեզ էլ չի կարելի աստղանշան կրել,- ասաց Պերեդոնովը:

-Չի կարելի, եւ պետք էլ չի,- առարեց Վոլոդինը:- բայց միայն թե ես էլ երբեմն աստղանշան եմ դնում,- բայց չէ որ միայն ես գիտեմ, որտեղ

կարելի է եւ երբ: Ինձ համար քաղաքից դուրս կգնամ, դե էնտեղ էլ կհագնեմ: Եւ ինձ է հաճույք, եւ ոչ մեկը չի արգելի: Իսկ մուժիչոկ կպատահի հարգանքն ավելի շատ կլինի:

-Քեզ, Պավլուշկա, աստղանշանը մռութիթ հարիր չի,- ասաց Պերեդոնովը:- Եւ դու ինձնից ձեռք քաշիր՝ դու ինձ քո սմբակներով փոշոտեցիր:

Վոլոդինը նեղացած լռեց, բայց կողքից քայլում էր: Պերեդոնովը մտահոգ ասաց.

-Դե մեկ է Ռուտիլով օրիորդներին է պետք մատնել: Նրանք եկեղեցի միայն բլբլալու, մեկ էլ ծիծաղելու են գնում: Քսվում, զուգվում, դե եւ գնում են, իսկ իրենք խունկը գողանում ու դրանից օծանելիք են սարքում,- նրանցից միշտ գարշահոտ է գալիս:

-Ասացեք, խնդրեմ,- գլուխը տարուբերելով ե բութ աչքերը չռելով ասում էր Վոլոդինը:

Երկրի վրայով արագ սողում էր ամպի ստվերը եւ Պերեդոնովին սարսափ էր ազդում: Ծխի քուլաներում երբեմն առկայծում էր դարձվորյակը: Ահա շարժվում էր խոտը քամու տակ, եւ Պերեդոնովին արդեն թվում էր, թե գորշ դարձվորյակը վազում էր դրա վրայով եւ կծում էր իրեն, հագենալով:

«Ինչո՞ւ է քաղաքում խոտ»,- մտածում էր նա:- Անկարգություն է: քաղհանել է պետք»:

Ճյուղը ծառի վրա տատանվեց, կծկվեց, սեւացավ, կռավեց եւ թռավ հեռու: Պերեդոնովը ցնցվեց, վայրի ճչաց ու փախավ տուն: Վոլոդինը մտահոգ մանրավարգում էր նրա ետքից,չռած աչքերի մեջ վրդովված արտահայտությամբ, գդակը գլխին պահելով եւ ձեռնափայտը տարուբերելով:

***

Բոգդանովը հենց նույն օրը կանչեց Մաչիգինին: տեսուչի բնակարանի մուտքի առաջ Մաչիգինը մեջքով արեւին կանգնեց, գլխարկը հանեց եւ ստվերի տակ ձեռքի հինգ մատներով սանրվեց:

-Դե դուք այդ ինչպե՞ս, պատանի, հը՞, այդ ի՞նչ եք դուք հորինել, հը՞,- վրա պրծավ Բոգդանովը Մաչիգինի վրա:

-Բանն ի՞նչ է,- անպարկեշտորեն հարցրեց Մաչիգինը, ծղոտե գլար-

կը խաղացնելով եւ ձախ ոտքը տարուբերելով:

Բոգդանովը նրան չնստեցրեց, քանզի մտադիր էր շշպռել:

-Դե այդ ինչպե՞ս, այդ ինչպե՞ս դուք, պատանյակ, աստղանշան կրում, հը՞: Այդ ինչպե՞ս դուք վճռեցիք ոտնձգություն անել, հը՞,- հարցնում էր նա, իրեն խստություն ն հաղորդելով եւ ուժգին իր գորշավու երեսիցան թափահարելով:

Մաչիգինը կարմրեց, բայց ժիր պատասխանեց.

-Դե ի՞նչ է, մի՞թե ես իրավունք չունեմ:

-Դե մի՞թե դուք չինովնիկ եք, հը՞, չինովնի՞կ եք,- հուզվեց Բոգդանովը,- դե ինչ չինովնիկ եք դուք, այբենարանային մատենավար, հը՞:

-Ուսուցչական կչման նշանն է,- ժիր ասաց Մաչիգինը եւ հանկարծ քաղցր ժպտաց, հիշելով իր ոսուցչական կոչումի կարեւորության մասին:

-Ձեռքնեիդ փայտիկ բռնեք, փայտիկ, ահա եւ ձեզ ուսուցչական կոչումի նշանը:,- խորհուրդ տվեց Բոգդանովը, գլուխը տարուբերելով:

-Քավ լիցի, Սերգեյ Պոտապիչ,- ձայնի մեջ սրտմտությամբ ասաց Մաչիգինը,- դե փայտիկն ինչ: Փայտիկն ամեն ոք կարող է, իսկ աստղանշանը հեղինակության համար է:

-Ի՞նչ հեղինակության, հը՞, ի՞նչ, ի՞նչ հեղինակության,- պատանու վրա հարձակվեց Բոգդանովը,- ձեզ ի՞նչ հեղինակություն է պետք, հը՞: Մի՞թե դուք ղեկավար եք:

-Ինչ եք ասում, Սերգեյ Պոտապիչ,- խելամիտ ապացուցում էր Մաչիգինը,- գեղջկական սակավակուլտորական դասում դա մեկեն ակնածանքի հորդում է հարուցում,- ըստ այդմ ավելի ցածր են խոնարհվում:

Մաչիգինն ինքնագոհ շոյեց շիկահեր բեղերը:

-Դե չի կարելի, պատանյակ, ոչ մի կերպ չի կարելի,- վշտալի գլուխը տարուբերելով, ասաց Բոգդանովը:

-Ինչ եք ասում, Սերգեյ Պոտապիչ, ուսուցիչն առանց աստղանշանի՝ նույնն է թե բրիտանական առյուծն առանց պոչի,- հավատացնում էր Մաչիգինը,- միայն ծաղրանկար է:

-Պոչն էստեղ ի՞նչ կապ ունի, էստեղ ի՞նչ պոչ, հը՞,- հուզմունքով խոսեց Բոգդանովը:- Ո՞ւր եք դուք քաղաքականության մեջ խրվում, հը՞: Մի՞թե դա ձեր գործն է քաղաքականության մասին խորհրդածելը, հը՞: Դե ոչ, դուք, պատանյակ, աստղանշանը հանեք, աստվածային շնորհ

արեք: Չի կարելի, դե ինչպես կարելի է, Աստված պահապան, դե ով ասես կարող է իմանալ:

Մաչիգինն ուսերը թոթվեց, ուզում էր դարձյալ ինչ-որ բան առարկել, բայց Բոգդանովն ընդհատեց նրան,- նրա գլխում ըստ իր հասողության փայլուն միտք առկայծեց:

-Ահա դուք ինչ մոտ առանց աստղանշանի եկաք, հը՞, առաց աստղանշանի: Ինքներդ զգում եք, որ չի կարելի:

Մաչիգինն այն է տատամսեց, բայց այս անգամ էլ առարկություն գտավ.

-Դե քանի որ մենք գյուղական ոսուցիչներ ենք, ապա եւ մեզ գյուղական արտոնություն է պետք, իսկ քաղաքում մենք սովորական ինտելիգենտներ ենք:

-Դե ոչ, դուք արդեն, պատնի, գիտեք,- բարկացկոտ ասաց Բոգդանովը,- որ դա չի կարելի, եւ եթե ես մեկ է լսեմ, ապա մեկեն ձեզ կհեռացնենք:

***

Գրուշինան ժամանակ առ ժամանակ երիտասարդների համար ամուսին որսալու հոյսով երեկույթներ էր կազմակերպում: Աչքից հեռու մնալու համար հրավիրում էր նաեւ ընտանիքի տեր ծանոթների:

Ահա եւ այդպիսի երեկույթ էր: Հյուրերը վաղ էին հավաքվել:

Գրուշինայի հյուրասենյակի պատերին, կիպ շղարշող պատված, նկարներ էին կախված: Սակայն, դրանց մեջ ոչ մի անպատշաճ բան չկար: Երբ Գրուշինան բարձրացնում էր, նենգադավ եւ անհամեստ քմծիծաղով, շղարշե վարագույրները, հյուրերը զմայլվում էին վատ նկարված մերկ կանանցով:

-Դե էս ի՞նչ է, կնիկը ծուռտի՞կ է»,- մռայլ ասաց Պերեդոնովը:

-Ոչ էլ ծուռտիկ է,- կրքոտ նկարը պաշտպանեց Գրուշինան,- նա այդպես կեռացել է:

-Ծուռտիկ է,- կրկնեց Պերեդոնովը:- Եւ աչքերն էլ տարբեր են, ինչպես ձեզ մոտ:

-Դե, շատ եք դուք հասկանում,- նեղացած ասաց Գրուշինան,- այս նկարները շատ լավն ու թանկ են: Նկարիչներին առանց դրանց չի կարելի:

Պերեդոնովը հանկարծ քրքջաց՝ նա հիշեց իր, օրերես Վլադյայի տված, խորհուրդը:

Դուք էդ ի՞նչ խրխնջացիք,- հարցրեց Գրուշինան:

-Նարտանովիչը, գիմանազիստը, իր քույր Մարֆայի զգեստը կրակի կտա,- բացատրեց նա,- ես ե նրան խորհուրդ տվել այդ անել:

-Հա դուք էլ, կրակի կտա, հիմար եք գտել,- առարկեց Գրուշինան:

-Իհարկե, կտա,- վստահորեն ասաց Պերեդոնովը,- քույր ու եղբայրները միշտ էլ վիճում են: Երբ ես փոքր էի, ապա միշտ էլ իմ քույրերի հանդեպ կեղտոտություններ էի անում՝ փոքրերին ծեծում էի, իսկ մեծերի հագուստն էի փչացնում:

-Դե հո բոլորը չեն վիճում,- ասաց Ռուտիլովը,- ահա ես քույրերիս հետ չեմ վիճում:

-Իսկ ի՞նչ դու նրանց հետ համբուրվո՞ւմ ես, ի՞նչ է,- հարցրեց Պերեդոնովը:

-Դու, Արդալյոն Բորիսիչ, խոզ ու սրիկա ես, եւ ես քեզ կապտակեմ,- շատ հանգիստ ասաց Ռուտիլովը:

-Դե, ես էդպիսի կատակներ չեմ սիրում,- պատասխանեց Պերեդոնովը եւ Ռուտիլովից կողմ քաշվեց:

«Թե չէ մեկ լէ տեսար,- մտածում էր նա,- իրոք որ ապտակեց, ինչ-որ չարագույժ է դեմքը նրա»:

-Նա,- շարունակում էր նա Մարթայի մասին,- միայն մի սեւ զգեստ ունի:

-Վերշինան նրա համար նորը կկարի,- նախանձոտ չարությամբ ասաց Վարվարան:- Մինչեւ հարսանիքը ողջ օժիտը կսարքի: Գեղեցկուհի է, էնպես որ ձիերն են սեր անում,- քրթմնջաց նա կամացուկ եւ չարախնդորեն նայեց Մուրինին:

-Ժամն է, որ դուք էլ նշանվեք,- ասաց Պրեպոլովենսկայան:- Ի՞նչ եք սպասում, Արդալյոն Բորիսիչ:

Պրեպոլովենսկիներն արդեն տեսնում էին, որ երկրորդ նամակից հետո Պերեդոնովը հաստատ որոշել է Վարվարայի հետ ամուսնանալ: Նրանք էլ էին նամակին հավատացել: Սկսեցին ասել, որ իրնքք միշտ էլ Վարվարայի կողմից էին: Պերեդոնովի հետ վիճելու հաշվարկ չունեին՝ նրա հետ թղթախաղով զբաղվելը ձեռնտու է: Իսկ Գենան, դե ինչ արած, թող սպասի,- ստիպված կլինի ուրիշ փեսացու գտնել: Պրեպո-

լովենսկին ասաց.

-Իհարկե, ձեզ պսակվել պետք է՝ եւ բարի գործ կանեք, դե եւ իշխանոհուն կհաճոյանաք, այնպես որ դուք իշխանուհուն կհաճոյանաք, իշխանուհուն հաճելի կլինի, որ դուք ամուսնանում եք, այնպես որ դուք եւ նրան կսիրաշահեք եւ բարի գործ կանեք, դե եւ լավ կլինի, թե չէ էսպես ինչ է, իսկ այստեղ ամեն դեպքում բարի գործ կանեք դե եւ իշխանուհուն էլ հաճելի կլինի:

-Ահա ես էլ նույնն եմ ասում,- ասաց Պրեպոլովենսկայան:

Իսկ Պրեպոլովենսկին չէր կարողանում կանգ առնել եւ, տեսնելով որ բոլորն արդեն իրենից հեռանում են, նստեց եիտասարդ չինովնիկի կողքին եւ սկսեց նրան նույն բանը բացատրել:

-Ես վճռել եմ նշանվել,- ասաց Պերեդոնովը,- միայն թե մենք Վարվարայի հետ չգիտենք, ինչպես է պետք պսակվել: Ինչ-որ բան պետք է անել, իսկ ես չգիտեմ ինչ:

-Ահա, բարդ բան չէ,- ասաց Պրեպոլովենսկայան,- դե, եթե ուզում եք, ես ու ամուսինս ամեն ինչ կանենք, դուք միայն նստեք, եւ ոչ մի բանի մասին մի մտածեք:

-Լավ,- ասաց Պերեդոնովը,- ես համաձայն եմ: Միայն, որ ամեն ինչ լինի լավ եւ պատշաճ: Ես փող չեմ խնայի:

-Դե ամեն ինչ լավ կլինի, մի անհանգստացեք,- վսահեցնում էր Պրեպոլովենսկայան:

Պերեդոնովը շարունակում էր դնել իր պայմանները.

-Ուրիշները ժլատությունից բարալիկ նշանի մատանիներ են գնում, արծաթե, ոսկեջրած, իսկ ես էդպես չեմ ուզում, այլ որպեսզի լինեն իրոք ոսկյա: Եւ ես նույնիսկ ուզում եմ նշանի մատանիների փոխարեն նշանի ապարանջաններ,- դա եւ ավելի թանկ է, եւ ավելի կարեւոր:

Բոլորը ծիծաղեցին:

-Ապարանջան չի կարելի,- ասաց Պրեպոլովենսկայան, թեթեւակի քմծիծաղելով,- մատանիներ են պետք:

-Ինչո՞ւ չի կարելի,- սրտնեղությամբ հարցրեց Պերեդոնովը:

-Դե այդպես է, չեն անում:

-Իսկ գուցե թե, եւ անում են,- անվստահրեն ասաց Պերեդոնովը:- Դա դեռ ես տերտերից կհարցնեմ: Նա ավելի լավ գիտի:

Ռուտիլովը, քմծիծաղելով, խորհորդ էր տալիս.

-Դե ավելի լավ է դու, Արդալյոն Բորիսից, նշանի գոտիներ պատվիրիր:

-Դե, դրա համար փողս չի բավի,- պատասխանեց Պերեդոնովը, քմծիծաղը չնկատելով,- ես բանկիր չեմ: Սայն թե օրերս ես երազում տեսել էի, որ պսակվում եմ, իսկ վրաս ատլաս է ֆրակ է, եւ ես ու Վարվարան ոսկե ապարանջաններ ունենք: Իսկ մեր ետեւում երկու տնօրեն են կանգնած, մեր գլխավերեւում պսակներ են պահել, եւ ալելոյա են երգում:

-Ես նույնպես այսօր հետաքրքիր երազ տեսա,- ազդարարեց Վոլոդինը,- բայց ինր էր այդ, չգիտեմ: Նստած եմ իբր ես գահի վրա, ոսկե թագով, իսկ իմ առեւ խոտ է, բոլոր ոչխաչնեչը մեժմե-մե: Դե ահա բոլոր ոչխարները քայլում, եւ գլխով այսպես են անում, եւ բոլորն էդպես բե-բե-բե:

Վոլոդինը քայլում էր սենյակներով, ճակատն էր թափահարում, շուրթերը փքում ու մկկում էր: Հյուրերը ծիծաղում էին: Վոլոդինը նստեց տեղը երանությամբ նայելով ամենքին, հաճույքից աչքերը կոցելով, եւ նույնպես ծիծաղում էր ոչխարային, մկկացող ծիծաղով:

-Դե, իսկ ի՞նչ հտո,- հարցրեց Գրուշինան, հյուրերին աչքով անելով:

-Դե, եւ ամենուր ոչխարներ, ամենուր ոչխարներ, եւ այդժամ ես արթնացա,- ավարտեց Վոլոդինը:

-Ոչխարին՝ ոչխարային երազներ,- քրթմնջում էր Պերեդոնովը,- կարեւոր ուտելիք է՝ ոչխարների թագավոր:

-Իսկ ես երազ եմ տեսել,- լկտի քմծիծաղով ասաց Վարվարան,- բայց այն տղամարդկանց նեկայությամբ չի կարելի պատմել, միայն ձեզ կպատմեմ:

-Ախ, աղավնյակ Վարվարա Դմիտրիեւնա, խոսքներս մեկ ենք ասել, ես էլ եմ ասել,- քմծիծաղելով ու բոլորին աչքի անելով, պատասխանում էր Գրուշինան:

-Պատմեք, մենք՝ տղամարդիկ համեստ ենք կանանց ցեղում,- ասաց Ռուտիլովը:

Եւ մյուս տղամարդիկ էլ խնդրում էի Վարվարային եւ Գրուշինային պատմել երազները: Բաց նրանք միմյանց նայում, աղտեղի ժպտում ու չէին պատմում:

Նստցին թղթախաղի: Ռոտիլովը վստահեցնում էր, թե Պերեդոնովը

հիանալի է խաղում: Պերեդոնովը հավատում էր: Բայց այսօր, ինչպես եւ միշտ, նա տարվում էր: Ռուտիլովը հաղթել էր: Դրանից նա մեծ որա-խություն ապրեց եւ սովորականից ավելի աշխույժ էր խոսում:

Պերդոնովին ծաղրում էր դարձվորյակը: Նա ինչ-որ տեղ մոտիկ թաքնվում էր,- երբեմն կերեւա, սեղանի տակից կամ ինչ-որ մեկի մեջ-քի ետեւից կցցվի ու կթաքնվի: Թվում էր, նա ինչ-որ բանի էր սպասում: Սարսափելի էր: Հենց խաղաթղթերի տեսքը սարսափեցնում էր Պերե-դոնովին: Աղջիկները՝ միասին երկուսը:

«Իսկ ո՞ւր է երրորդը,- մտածում էր Պերեդոնովը:

Նա բութ զննում էր ագռավի աղջկան, հետո շրջեց մյուս կողմը՝ եր-րորդը, գուցե թե, թաքնվել է վերնաշապկի ետեւում:

Ռուտիլովն ասաց.

-Արդալյոն Բորիսիչը իր աղջկան վերնաշապկի ետեւում է նայում:

Այդ միջոցին, կողքը երկու ոստիկանական աստիճանավոր նստել էին դուրաչկի խաղալու: Նրանց խաղն աշխույժ էր ընթանում: Հաղթո-ղը ուրախությունից քրքջում եւ մյուսին երկար քիթ էր ցույց տալիս: Տարվողը բարկանում էր:

Ուտելիքի հոտ փչեց: Գրուշինան հյուրերին ճաշասենյակ կանչեց: Բոլորը գնացին, հրմրելով ու կոտրատվելով: Մի կերպ տեղավորվեցին:

-Կերեք պարոնայք,- հյորասիրում էր Գրուշինան:- Կերեք, ընկեր-ներ, լցրեք փորներդ մինչեւ ականջներդ:

-Կուտապ կեր, տանտիրուհուն հաճույք պատճառիր,- գոչում էր որախալի Մուրինը: Նր համար ուրախալի էր օղուն նայելնո ւ մտածելը, որ ինքը հաղթել է:

Ամենքից ջանադրաբար հյուրասիրվում էին Վոլոդինն ու երկու չնովնիկ,- նրանք ընտրում էն լավագույն եւ ավելի թանկ կտորներն ու ագահությամբ խավիար էին խժռում: Գրուշինան ասաց, ստիպողաբար ծիծաղելով.

-Դե Պավել Վասիլեւիչը խմած է, բայց հեռատես է, հացից անցնում է կուտապին:

Միթե նա նրանց համար է խավիար գնել: Եւ տիկնանց հյուրասիրե-լու պատրվակով նա նրա մոտից տեղափոխեց այն ամենը, ինչը ավելի լավն էր: Բայց Վոլոդինը չէր տրտնջում եւ գոհանում էր այն ամենով, ինչ մնացել էր՝ նա հասցրեց հենց ամենասկզբից շատ լավ բաներ ու-

տել, եւ հիմա իր համար միեւնույնն էր:

Պերեդոնովը նայում էր ծամողներին, եւ նրան թվում էր, թե բոլորն իր վրա ծիծաղում են: Ինչո՞ւ, ինչի՞ վրա: Նա կատաղությամբ ուտում էր այն ամենը, ինչ պատահում էր ուտում էր փնթի ու ագահ:

Ընթրիքից հետո նորից խաղում էին: Բայց շուտով Պերեդոնովը ձանձրացավ: Նա խաղաթղթերը դեն նետեց ու ասաց.

-Դե գնացեք գրողի ծոցը: Զզվեցինք: Վարվարա, գնանք տուն:

Եւ մյուս հյուրերը ելան նրա ետքից:

Նախասենյակում Վոլոդինը տեսավ, որ Պերեդոնովը նոր ձեռնափայտ ունի, բերանը բացած, նա պտտեցնում էր այն իր առաջ եւ հարցնում էր.

Արդաշա, իսկ ինչո՞ւ են մատները գունդուկծիկ արած: Դե դա ի՞նչ է նշանակում:

Պերեդոնովը զայրացած նրա ձեռքից վերցրեց ձեռնափայտը, մոտեցրեց այն գլխիկի կողմով, սեւ փայտի կուկիշով, Վոլոդինի քթին ու ասաց.

-Առ քեզ կարագով: Վոլոդինը նեղացած դեմք ընդունեց:

-Թույլ տվեք, Արդալյոն Բորիսիչ,- ասաց նա,- ես կարագով հաց եմ հաճում ուտել, իսկ առ քեզ կարագով ես չեմ ուզում ուտել:

Պերեդոնովը չլսելով նրան, հոգածորեն շարֆով վիզն էր փաթաթում եւ կոճկում էր վերարկուի բոլոր կոճակները: Ռուտիլովը ծիծաղելով ասում էր.

-Ի՞նչ ես փաթաթվում, Արդալյոն Բորիսիչ: Տաք է:

-Առողջությունն ամենից թանկ է,- պատասխանեց Պերեդոնովը:

Փողոցում լուռ էր,- փողոցը պառկել էր խավարում եւ կամացուկ խռմփացնում էր: Սութ էր, տաղտկալի ու խոնավ: Երկնքում ծանր ամպեր էին թափառում: Պերեդոնովը փնթփնթում էր.

-Խավիար են բերել, իսկ ինչո՞ւ:

Նա հիմա չէր վախենում,- քայլում էր Վարվարայի հետ, այլ ոչ թե մենակ:

Շուտով անձրեւ եկավ, մանրամաղ, արագ, երկարատեւ: Ամեն ինչ լռեց, եւ միայն անձրեւն էր շնչահատ ու արագ, խեղդվելով ինչ-որ բան բլբլում՝ անպարզ, տաղտկալի, տրտմալի բաներ:

Պերեդոնովը բնության մեջ զգում էր իր ձանձրույթի, իր վախի ար-

տացոլքն առ նա թշնամության դիմակի ներքո,- միեւնույն ներքին եւ կենաց արտաքին ձեւակերպումներին անհասանելի բանը ողջ բնության մեջ, կյանքի, որն էլ հենց ստեղծում է ճշմարիտ հարաբերությունները, խորունկ եւ անտարակուսելի, մարդու եւ բնության միջեւ, այդ կյանքը նա չէր զգում: Որովհետեւ ողջ բնությունը նրան թվում էր չնչին մարդկային զգացմունքներով ներթաքփանցված: Կուրացած անհատի եւ առանձին գոյության գայթակղություններով, նա չէր հասկանում դիոնիսոսական, տարերային հիացքները, բնության մեջ ցնծացող եւ ճչացող: Նա կույր եւ խղճուկ էր, ինչպես մեզանից շատերը:

XXIII

Պրեպոլովենսկիները իրենց վրա վերցրին պակադրության կազմակերպումը: Որոշեցին պսակվել գյուղում, քաղաքից մի վերստի վրա: Վարվարայի համար անհարմար էր քաղաքում պսակի տակ կանգնելն այն բանից հետո, որ այդքան տարի ապրել էին, իրենց բարեկամ ցուցանելով: Պսակադրության նշանակման օրը, թաքցրին՝ Պրեպոլովենսկիները լուր տարածեցին, որ ուրբաթ են պսակվելու, իսկ իրականում հարսանիքը չորեքշաբթի կեսօրին էր: Դա արել էին, որպեսզի քաղաքի հետաքրքասերները չգային: Վարվարան բազմիցս Պերեդոնովին կրկնում էր.

-Դու, Արդալյոն Բորիսիչ, բերանիցդ չթցնես, թե երբ է պսակադրությունը լինելու, թե չէ մեկ էլ տեսար խանգարեն:

Հարսանիքի ծախսերի փողերը Պերեդոնովը դժկամությամբ էր տալիս, Վարվարային ծանակելով: Երբեմն նա բերում էր իր գավազանագլխիկ-կուկիշով ձեռնափայտը եւ Վարվարային ասում էր.

-Համբուրիր իմ կուկիշը՝ փող կտամ, չես համբուրի՝ չեմ տա:

Վարվարան համբուրում է կուկիշը:

-Դե ինչ է որ. շուրթերս չեն ճաքի,- ասում էր նա:

Հարսանիքի օրը թաքուն էի պահել մինչեւ նշանակված օրը նույնիսկ խաչեղբայրներից, որպեսզի բերաններից չթռցնեին: Սկզբից խաչեղբայրներ կանչեցին Ռուտիլովին ու Վոլոդինին,- երկուսն էլ հոժարությամբ համաձայնվեցին՝ Ռուտիլովը զվարճալի անեկդոտ էր սպասում, իսկ Վոլոդինի համար շոյիչ էր այդպիսի նշանակալից դեր խաղալը այդպիսի երեւելի իրադարձության մեջ, այդպիսի պատվար-

ժան անձի ներկայությամբ: Հետո Պերեդոնովը գլխի ընկավ, որ իրեն մեկ խաչեղբայրը քիչ է: Նա ասաց.

-Քեզ, Վարվարա, մեկը կլինի. իսկ ինձ երկուսն են պետք՝ ինձ վրա դժվար է պսակ բռնելը, ես՝ մեծ մարդ եմ:

Եւ Պերեդոնովը երկրորդ խաչեղբայր հրավիրեց Ֆալաստովին: Վարվարան փնթփնթում էր.

-Դե ուր նրան գրողի տարածին, երկուսը կան, էլ ինչ:

-Նրա ակնոցը ոսկյա է, նրա հետ ավելի պատվարժան է,- ասաց Պերեդոնովը:

Հարսանիք օրն առավոտյան Պերեդոնովը տաք ջրով լվացվեց, ինչպես միշտ, որպեսզի իրեն չմրսեցնի, եւ այնուհետեւ կարմրաներկ պահանջեց, բացատրելով.

-Ես հիմա պիտի ամեն օր ներկվեմ, թե չէ կմտածեն՝ զառամյալ է, եւ տեսուչ չեն նշանակի:

Վարվարան ափսոսում էր իր կարմրաներկորը, բայց ստիպված եղավ զիջել,- եւ Պերեդոնովն իր այտերը կարմրացրեց: Նա քրթմնջում էր.

«Ինքը Վերիգան է ներկվում, որպսզի երիտասարդ լինի: Դե ես հո չեմ կարող սպիտակ այտերով պսակվել»:

Այնուհետեւ, ննջարանում փակվելով, նա որոշեց վրան նշան անել, որպեսզի Վոլոդինը չկարողանար իրենով նրան փոխել: Կրծքի, փորի, արմունկների վրա, եւ էլի տարբեր տեղերում նա թանաքով քսեց Պ տառը:

«Հարկ էր Վոլոդինի վրա էլ նշաններ անել, դե բայց ինչպե՞ս կանես: Կտեսնի, կջնջի»,- անձկալի մտածում էր Պերեդոնովը:

Հետո գլխին միտք փչեց, որ վատ չէր լինի սեղմիրան հագնել, թե չէ ծերուկի տեղ կդնեն, եթե հանկարծ կռանաս: Նա Վարվարայից սեղմիրանը պահանջեց: Բայց Վարվարայի սեղմիրանները նրան նեղ էին, ոչ մեկը չէր բռնում:

-Հարկ էր ավելի վաղ գնել,- բարկացկոտ մռթմռթում էր նա:- Ոչինչ չեն մտածի:

-Դե ղամարդկանցից ո՞վ է սեղմիրան հագնում,- առարկում էր Վարվարան,- ոչ մեկը չի հագնում:

-Վերիգան է հագնում,- ասաց Պերեդոնովը:

-Դե Վերիգան՝ ծերուկ է, իսկ դու Արդալյոն Բորիսիչ, փառք Աստծու, փարթամ տղամարդ ես:

Պերեդոնովն ինքնագոհ ժպտաց, նայեց հայելուն ու ասաց.

-Իհարկե, ես դեռ մի հիսուն տարի էլ կապրեմ:

Կատուն մահճակալի տակ փռշտաց: Վարվարան քմծիծաղելով ասաց.

-Ահա կատուն էլ է փռշտում, կնշանակի՝ ճիշտ է:

Բայց Պերեդոնովը հանկարծ նոթոտեց: Կատուն նրա համար սարսափելի էր դարձել, եւ նրա փռշտոցը նրան չար խորամանկություն թվաց:

«Հանկարծ եւ ինչ-որ պետք չի փռշտա»,- մտածեց նա, մահճակալի տակ սողոսկեց եւ սկսեց կատվին քշել: Կատուն վայրի մլավում, կպչում էր պատին եւ հանկարծ, բարձր ո կտրուկ մռլտոցով, ցատկեց Պեեդոնովի ձեռքերի արանքով ե վերնասենյակից դուրս թռավ:

-Հոլանդական սատանա,- զայրացկոտ հայհոյեց նրան Պերեդոնովը:

-Հենց սատանա է, որ կա,- հարում էր Վավարան,- լրիվ վայրենացել է կատուն, շոյել էլ չի թողնում, ասես մեջը սատանա է բուն դրել:

Պրեպոլոենսկիները վաղ առավոտից ուղարկեցին խաչեղբայրների ետքից: Տասի կողմերը բոլորը հավաքվեցին Պերեդոնովի մոտ: Եկան Գրուշինան եւ Սոֆյան ամուսնու հետ: Օղի եւ խորտիկներ մատուցեցին: Պերեդոնովը քիչ էր ուտում եւ տաղտկալի մտածում էր, թե ինչով նա ինքն իրեն առավել տարբերի Վոլոդինից:

«Ոչխարի պես գանգուրներ է արել»,- բարկացկոտ մտածում էր նա եւ հանկարծ գլխի ընկավ, որ չէ որ ինքն էլ կարող է յուրակերպ սանրվել: Նա ելավ սեղանի մոտից ու ասաց.

-Դուք էստեղ կերեք ու խմեք, ինձ ափսոս չէ, իսկ ես գնամ վարսավիրի մոտ, սանրվեմ իսպանավարի:

-Դե էդ ինչպե՞ս իսպանավարրի,- հարցրեց Ռուտիլովը:

-դե այ կտեսնես:

Երբ Պերեդնովը գնաց մազերը սարքելու, Վարվարան ասաց.

-Անընդհատ զանազան բաներ է մոգոնում: Աչքի անընդհատ սատանաներ են երեւում: Դե ավելի քիչ հացօղի լակեր, անիծյալ հարբեցողը:

Պրեպոլովենսակայն խորամանկ քմծիծաղով ասաց.

-Ահա կնշանվեք, Արդալյոն Բորիսիչը տեղը կստանա եւ կհանգստանա:

Գրուշինան քմծիծաղեց: Նրան զվարթացնում էր այդ պսակադրման խորհրդավորությունը եւ հրահրում էր ինչ-որ խայտառակ մի բան սարքելու ծարավը, դե բայց այնպես, որպեսզի ինքը անմասն մնար: Նա ձեռքի տակ երեկ երեկոյան շշնջաց իր ընկերներից ոմանց պսակադրման ժամի ու տեղի մասին:

Այսօր առավոտյան նա իր մոտ կանչեց փոքրիկ փականագործին, նրան հինգ կոպեկանոց տվեց եւ համոզեց երեկոյան կողմ քաղաքից դուրս սպասել նորապսակների անցնելուն ե նրանց սայլակի մեջ աղբ ու թուղթ լցնել: Փականագործը ուրախալի համաձայնվեց եւ երդվեց չմատնել: Գրուշինան նրան հիշեցրց.

-Իսկ Չերեպնինին մատնեցիք, այ թե ոնց ձեզ քոթակեցին:

-Հիմար էնք մենք,- ասաց փականագործը,- իսկ հիմա թող նույնիսկ

կախեն, մեկ է: եւ փականագործը, ի հաստատումն իր երդման, մի բուռ հող կերավ: Դրա հմար Գրոշինան նրա երեք կոպեկ էլ ավելացրեց:

Վարսավիրանոցում Պերեդոնովը պահանջեց հենց տիրոջը: Տերը, մի երիտասարդ, որ վերջերս է ավարտել քաղաքային ուսումնարանը եւ գրքեր էր կարդում նահանագային գրադարանից, վերջացրեց, ինչ-որ Պերեդոնովին անծանոթ կալվածատիրոջ մազեր կտրելը եւ մոտեցավ Պերեդոնովին:

-Սկզբում նրան բաց թող,- բարկացկոտ ասաց Պերեդոնովը:

Կալվածատերը վճարեց ու գնաց: Պերեդոնովը նստեց հայելու առաջ:

-Ես ուզում եմ մազերս կտրել եւ սանրվածք անել,- ասաց նա:- Ես այսօր կարեւոր գրծ ունեմ, լրիվ առանձնահատուկ,- ուրեմն դու ինձ իսպանավարի սանրվածք արա:

Դռան մոտ կանգնած տղեկ-աշկերտը ծիծաղկոտ փնչացրեց: Տերը խիստ նայեց նրա վրա: Իսպանավարի կտրել նրան չէր վիճակվել, եւ նա չգիտեր, թե ա ինչ իսպանական սանրվածք է, եւ արդյոք ա այդպիսի սանրվածք: Բայց եթե պարոնը ահանջում է, ապա, հարկ է ենթադրել, նա գիտ, թե ինչ է ուզում: Երիտասարդ վարցավիրը չոզեց ցույց տալ իր անգրագիտությունը: Նա հարգալից ասաց.

-Ձեր մազերից, պարոն, չ մի կերպ չի կարելի:

-Ղե այդ ինչո՞ւ չի կարելի,- նեղացած հարցրեց Պերեդոնովը:

Ձեր մազերը լավ չեն սնուցվում,- բացատրեց վարսավիրը:

-Ղե ի՞ն, ես դրանք գարոջրով ցողե՞մ, ինչ է,- փնթփնթաց Պերեդոնովը:

-Քավ լիցի, դե ինչու գարեջրով,- սիրալիր ժպտալով, ժպտալով, պատասխանում էր վարսավիրը,- այլ միայն թե տեսեք, որ եթե փոքր ինչ կտենք եւ ընդ որոմ քանի որ ձեր գլխի վրա ծանրաբաոյություն է ուրվագծվում, աա ոչ մի կերպ չի բավում իսպանական սանրվածքին:

Ժերեդոնովը իրեն ջախջախված էր զգում իսպանավարի մազերը սարքելու անհանարինությունից: Նա մռայլամած ասաց.

-Ղե կտրիր ոնց ուզում ես:

«Արդյոք այդ վարսավիրին համոզել են,- մտածում էր նա որպեսզի գերազանց չկտրի: Պետք չէր տանն ասել»: Հավանաբար, քանի դեռ Պերեդոնովը բարեպատշաճ եւ ծանրաբարո քայլում էր փողոցներով, Վոլոդինը ոչխարակերպ վազել էր ետնաբակերով եւ վարսավիրի հետ խոսքը մեկ էր արել:

-Կհրամայե՞ք ցողել,- հարցրեց վարսավիրը, իր գործն ավարտելով:

-Ցողիր ինձ հափրուկով, դե եւ շատ,- պահանջեց Պերեդոնովը,- թե չէ մի կերպ կնդել ես, գոնե հափրուկով դրստիր:

-Հափրուկ, կներեք, չենք պահում,- շփոթված ասաց վարսավիրը,- արդյոք չե՞ք հաճի օպոպոնակսով:

-Ղե ոչինչ դու, ինչպես հարկն է, չես կարողանում անել,- վշտալի ասաց Պերեդոնովը,- դե ցողիր ինչ կա:

Նա սրտնեղած վերադառնում էր տուն: Քամոտ օր էր: Դարպասները քամուց շրմփում, հորանջում ու ծիծաղում էին: Պերեդոնովը տրտմությամբ նայում էր դրանց: Էստեղ ո՞նց գնա: Բայց արդեն ամեն ինչ ինքնաբերաբար էր արվում:

Երեք սայլակառք ժամանեց,- հարկ էր նստել ու գնալ, թե չէ սայլեը ուշադրություն կգրավեն, կհավաքվեն հետաքրքրասերները, կգան ու վազ կտան հարսանիք նայելու:

Տեղավորվեցին ու գնացին՝ Պերեդոնովը Վարվարայի հետ, Պրեպոլովենսկիները Ռուտիլովի հետ, Գրուշինան մնացած խաչեղբայրների հետ:

Հրապարակում փոշի բարձրացավ: Խփում էին, Պերեդոնովին լսվում էր, կացինները: Փոշու միջից հազիվ նշմարվող, բարձրանում, աճում էր փայտե պատը: Առկայծում էին կարմրաշապիկ մուժիկները, կատաղի ու լուռ:

Քառասայլերը կողքանց անցան,- սարսափելի տեսիլքն առկայծեց ու թաքնվեց: Պերեդոնովը սարսափած շուրջբոլորն էր նայում, բայց արդեն ոչինչ չէր երեւում,- եւ ոչ մեկին նա չհամարձակվեց պատմել իր տեսիլքի մասին:

Ողջ ճանապարհին տրտմությունը տոչորում էր Պերեդոնովին: Ամեն ինչ թշնամաբար նրան էր նայում, ամեն ինչից սպառնալի նշաններ էին գալիս: Երկինքը մթնդում էր: Քամին հանդիպակաց փչում էր եւ ինչ-որ բանի մասին հոգոց էր հանում: Ծառերը չէին կամենում ստվեր նետել,- ողջն իրեն էին վերցրել: փոխարենը բարձրանում էր փոշին երկար կիսաթափանց-գորշ օձի պես: Արեւը չգիտես ինչու թաքչում էր ամպերի ետեւում,- աչք էր ածում, ի՞նչ է:

Ճամփով սայլեր էին ընթանում,- ցածրիկ բլուրների ետեւից հանկարծ ելնում էին թփեր, ծորեր, բացատներ, եւ խուլ փայտյա կամրջախողովակների տակից վտակներ:

Ակնաթռչունը անցավ,- մռայլ ասաց Պերեդոնովը, նայելով երկնքի սպիտակավուն-մշուշոտ հեռուներին:- Մի աչք եւ երկու թեւ, եւ ուրիշ ոչինչ չկա:

Վարվարան քմծիծաղեց: Նա մտածում էր, թե Պերեդոնովը առավոտից խմած է: Բայց նա նրա հետ չէր վիճում,- մտածում էր,- կբարկանա եւ պսակվելու չի գնա:

Եկեղեցում արդեն կանգնած էին անկյունում Ռուիտիլով բոլոր չորս քույրերը: Պերեդոնովը սկզբում նրանց չէր տեսնում, բայց հետո, արդեն պսակադրության ժամանակ, երբ նրանք ելան իրենց թաքստոցից եւ առաջ եկան, նա տեսավ նրանց ու վախեցավ: Սակայն, նրանք ոչ մի վատ բան չարեցին, չպահանջեցին,- ինչից որ նա սկզբում վախենում էր,- որպեսզի նա Վարվարային քշեր, եւ վերցներ նրանցից մեկին, այլ միայն անընդհատ ծիծաղում էին: Եւ նրանց ծիծաղը, սկզբում կամացուկ, ավելի ու աբվելի բարձր ու չար էր արձագանքում նրա ականջներում, ինչպես անսանձելի ֆուրիաների ծիծաղը:

Օտարներ եկեղեցում համարյա չկային, միայն երկու-երեք պառավ

էին ինչ-որ տեղից եկել: Եւ լավ՝ Պերեդոնովն իրեն հիմար ու տարօրինակ էր պահում: Նա հորանջում, քրթմնջում, հրում Վարվարային, բողոքում էր, որ խնկի հոտ, մոմի ու ռամկահոտ է փչում:

-Քո քույրերն անընդհատ ծիծաղում են,- քրթմնջում էր նա, շրջվելով Ռուտիլովի կողմը,- թոքը ծիծաղով կծակեն:

Բացի դրանից, նրան տագնապեցնում էր դարձվորյակը: Նա կեղտոտ ու փոշոտ էր եւ հար թաքնվում էր քահանայի վեղարի տակ:

Եւ Վարվարային, եւ Գրուշինային եկեղեցական ծեսերը ծիծաղելի էին թվում: Նրանք անդադար քմծիաղում էին: Խոսքն առ այն որ կինը պիտի կապվի իր ամուսնուն, նրանց մեջ առանձնահատուկ զվարթություն հարուցեցին: Ռուտիլովն էլ էր քմծիծաղում,- նա իր պարտավորություն էր համարում միշտ եւ ամենուր տիկնանց ծիծաղեցնելը:

Իսկ Վոլոդինը իրեն պատշաճ էր պահում եւ խաչակնքվում էր, դեմքի վրա պահպանելով խորիմաստ արտահայտությունը: Նա եկեղեցական ծեսերի հետ այլ որեւէ պատկերացում չէր կապում, բացի այն, որ այդ ամենը հաստատված է, ենթակա է կատարման եւ որ բոլոր այս ծեսերի կատարումը բերում է ինչ-որ ներքին հարմարավետության՝ գնացիր եկեղեցի, աղոթեցիր՝ եւ ճիշտ ես, մեղք գործեցիր, ապաշխարեցիր՝ եւ դարձյալ ճիշտ ես: Լավ ու հարմար է, այն բանով է հարմար, որ եկեղեցուց դուրս ամենայն եկեղեցականի մասին պետք էլ չէր մտածել, այլ հարկ էր ղեկավարվել միանգամայն այլ կենցաղային կանոններով:

Հենց նոր էր սկսվել պսակադրությունը, դեռ չէին հասցրել եկեղեցուց դուրս գալ, հանկարծ՝ անսպասելիություն: Եկեղեցի աղմկոտ հարբած մի խումբ ներխուժեց՝ Մուրինն իր ընկերների հետ:

Մուրինը գզգզված ու գորշ ինչպես միշտ, թաթերի մեջ առավ Պերեդոնովին ու գոռաց.

-Մեզանից, ախպերս, չես թաքցնի: Էսպիսի ընկերներին, քեզնից չես բաժանի, իսկ նա, աճպարարը, թաքցրել է:

Բացականչություններ էին լսվում.

-Չարագործը չի կանչել:

-իսկ մենք տեղում ենք:

-Հա, մենք իմացանք:

Նոր եկածները գրկում ու շնորհավորում էին Պերեդոնովին: Մուրինն ասում էր.

-Խմելով ընկնելով փոքր ինչ մոլորվեցինք, թե չէ մենք հենց սկզբում կգոհացնեինք:

Պերեդոնովը նոթոտ նայում ու շնորհավորանքներին չէր պատասխանում: Չարությունն ու վախը տոչորում էին նրան:

«Ամենուր կգտնեն»- տրտմալի մտածում էր նա:

-Դե դուք ճակատներդ խաչակնքեիք,- չարախնդորեն ասաց նա, դուք չարամտում եք:

Հյուրերը խաչակնքվում, քրքջում, սրբապղծություն էին անում: Հատկապես առանձնանում էին երիտասարդ չինովնիկները: Սարկավագը հանդիմանաբար սաստում էր նրանց:

Հյուրերի մեջ կար մեկը, շիկահեր բեղերով, երիտասարդ, որին Պերեդոնովը նույնիսկ չէր էլ ճանաչում: Անսովորաբար նման է կատվի: Արդյոք իրենց կատո՞ւն չի վերածվել մարդու: Զուր չէ, որ այդ երիտասարդը անընդհատ փնչացնում է,- կատվային շարժուձեւը չէր մոռացել:

-Ձեզ ո՞վ է ասել,- բարկացկոտ հարցնում էր նոր հյուրերին Վարվարան:

-Բարի մարդիկ, ջահել կնիկ,- պատասխանում էր Սուրինը,- իսկ ով, դե մենք արդեն մոռացել ենք:

Գրուշինան պտտվում ու աչքով էր անում: Նոր հյուրերը քմծիծաղում էին, բայց նրան չմատնեցին:

-Դե ոնց ուզում ես, Արդալյոն Բորիսիչ, իսկ մենք քեզ մոտ, իսկ դու մեզ շամպայն մատուցիր, ժլատ մի եղիր: դե ոնց արելի է, այսպիսի ընկերներին ջրով չես բաժանի, իսկ դու սուսիկ-փուսիկ մտադրվեցիր:

Երբ Պերեդոնովները վերադառնում էին պսակադրությունից, արեւը ելել էր, ամեն բան կրակի եւ ոսկու մեջ էր: Բայց դա Պերեդոնովին դուր չէր գալիս: Նա քրթմնջում էր.

Կտոր-կըտոր ոսկի են շաղ տվել, արդեն թափվում է: Որտեղ է տեսնված, որ այդքան ծախսեն:

Փականագործները նրանց հանդիպեցին քաղաքի ետեւում այլ փոդոցային տղեկների հետ, վազում ու բվվում էին: Պերեդոնովը վախից դողում էր: Վարվարան հայհոյում էր, թքում էր տղեկների վրա, նրանց կուկիշ էր ցույց տալիս: Հյուրերն ու խաչեղբայրները քրքջում էին:

Եկան: Ողջ խումբը ներխուժեց Պերեդոնովների մոտ, հետո սկսեցին օղի խմել ու նստեցին թղթախաղի: ողջ գիշեր հարբում էին: Վար-

վարան հարբել, պարում ու ցնծում էր: Ցնծում էր եւ Պերեդոնովը՝ նրան համենայն դեպս չփոխեցին: Վարվարայի հետ հյուրերը վարվում էին գռեհկորեն անհարգալից. նրան թվում էր դա իրաց կարգում էր:

***

Հարսանիքից հետո Պերեդոնովների վարքուբարքում քիչ բան փոխվեց: Միայն Վարվարայի վարմունքը ամուսնու հետ ավելի վստահ ու անկախ դարձավ: Նա կարծես թե ավելի քիչ էր ամուսնու առաջ վազվզում, բայց դեռեւս, ըստ արմատացած սովորության, վախվխում էր նրանից: Պերեդոնովն էլ, նույնպես ըստ սովորության, առաջվա պես գոռգոռում էր նրա վրա, նույնիսկ երբեմն քոթակում էր: Բայց արդեն ինքն էլ զգում էր նրա դիրքում առավել վստահությունը: Եւ դա նրան տաղտուկ էր բերում: Նրան թվում էր, որ եթե նա առաջվա պես իրենից չի վախենում, ապա դա այն պատճառով, որ նա հաստատվել է իրենից ազատվելու եւ իրեն Վոլոդինով փոխարինելու իր հանցավոր մահղացման մեջ:

«Հարկ է զգոն լինել»,- մտածում էր նա:

Իսկ Վարվարան ցնծում էր: Նա ամուսնու հետ այցելում էր քաղաքային տիկնանց, նույնիսկ քիչ ծանոթներին: Ընդ որում նա ծիծաղելի գոռոզություն եւ անհմտություն էր դրսեւորում: Ամենուր նրան ընդունում էին, թեպետ շատ տներում զարմանքով: Այցելությունների համար Վարվարա վաղօրոք տեղի լավագույն մոդիստկայից գլխարկ էր պատվիրել: Վառ ծաղիկները, խոշոր, առատությամբ դրված, հասցնում էին Վարվարային:

Իրենց այցելությունները Պերեդոնովները սկսեցին տնօրենուհուց: Հետո գնացին ազնվականության պարագլխի կնոջ մոտ:

Այն օրը, երբ Պերեդոնովները պատրաստվում էին այցլություններ կատարել,- ինչը Ռուտիլովների մոտ, իհակե, նախօրոք հայտնի էր,- քույրերը ուղեւորվեցին Վարվարա Նիկոլաեւնա Խրիպաչի մոտ, հետաքրքասիրությունից նայելու, թե Վարվարան ադտեղ իրեն ոնց կպահի: Շուտով եկան եւ Պերեդոնովները: Վարվարան ռեւերանս արեց տնօրենոհուն եւ սովորականից ավելի դռդռացող ձայնով ասաց.

-Ահա եւ մենք ձեզ մոտ: Խնդրում ենք սիրել եւ շնորհ անել:

-Շատ ուրախ եմ,- ստիպողաբար պատսխանեց տնօրենուհին եւ

Վարվարային թախտի վրա նստեցրեց: Վարվարան տեսանելի բավականությամբ նստեց հատկացված տեղը, լայն տարածեց իր աղմկալից կանաչ զգեստն ու խոսեց ջանալով անբռնազբոսիկությամբ թաքցնել իր շփոթմունքը.

-Միշտ օրիորդ եմ եղել, իսկ ահա եւ մադամ դարձա: Մենք ձեզ հետ անվանակից ենք: Ես՝ Վարվարա, եւ դուք՝ Վարվարա, իսկ տներով ծանոթ չէինք: Երբ օրիորդ էի, ավելի շատ տանն էի նստում,- դե ինչ անընդհատ վառարանի մոտ նստել: Հիմա մենք Արդալյոն Բորիսիչի հետ բաց կապրենք: Համեցեք՝ մենք ձեզ մոտ, դուք մեզ մոտ, պարոնը պարոնի մոտ, տիկինը տիկնոջ մոտ:

-Միայնթե դուք այստեղ, ոնց որ, երկար չեք մնալու,- ասաց տնօրենուհին,- ձեր ամուսինը, ես լսել եմ, տեղափոխվում է:

-Այո, ահա շուտով թուղթը կգա, եւ մենք կգնանք,- պատասխանեց Վարվարան:- Իսկ քանի դեռ թուղթը չի եկել, հարկ է դեռ այստեղ էլ ապրել, աչքի ընկնել:

Վարվարան ինքն էլ հուսով էր տեսուչի տեղ ստանալ: Հարսանիքից հետո նա իշխանուհուն նամակներ գրեց: Պատասխան դեռ չէր ստացել: Որոշել էր մի անգամ էլ գրել նոր տարվա նախօրեին:

Լյուդմիլան ասաց.

Իսկ մենք արդեն մտածում էինք, թե դուք, Արդալյոն Բորիսիչ, օրիորդ Պիլնիկովայի հետ կամուսնանաք:

-Դե հա,- զայրացկոտ ասաց Պերեդոնովը,- դե ինչ ես պիտի ուզածի հետ ամուսնանամ,- ինձ հովանավորություն է պետք:

-Բայց համենայն դեպս, դե այդ ինչպե՞ս m-lle Պիլնիկովայի հետ լեզու չգտաք,- ծաղրում էր Լյուդմիլան:- Չէ որ դուք նրան սիրահետում էիք: Նա ձեզ մերժե՞ց:

-Ես դեռ նրան ջրի երես դուրս կբերեմ,- մռայլ փնթփնթում էր Պերեդոնովը:

-Սա՝ Արդալյոն Բորիսիչի idee fixe-ն է,- չոր քմծիծաղով ասաց տնօրենը:

XXIV

Պերեդոնովի կատուն վայրենանում, փնչացնում էր, կանչին չէր արձագանքում,- լրիվ ձեռքից գնացել էր: Նա սարսափելի էր Պերեդոնովի

համար: Երբեմն Պերեդոնովը խորշում էր կատվից:

«Դե արդյոք այդ կօգնի՞,- մտածում էր նա:- Ուժեղ էլեկտրականություն կա էս կատվի մորթի մեջ, այ թե ինչն է դժբախտություն»:

Մի անգամ նա հորինեց՝ պետք է էս կատվին խուզել: Մտածված է՝ արված է: Վարվարան տանը չէր՝ նա գնացել էր Գրուշինայի մոտ, բալի թրմօղի գրպանը դնելով,- խանգարող չկար: Պերեդոնովը կատվին պարանով կապեց,- վզնոցը թաշկինակից սարքեց,- եւ տարավ վարսավիրանոց: Կատուն վայրենավարի մռլտում էր, դես ու դեն ընկնում, դիմադրում էր: Երբեմն հուսահատ նետվում էր Պերեդոնովի վրա, բայց Պերեդոնովը նրան փայտով քշում էր: Տղաներն ամբոխված վազում էին ետքից, բվվում, քրքջում էին: Անցորդները կանգ էին առնում: Աղմուկի վրա պատուհաններից դուրս էին նայում: Պերեդոնովը պարանով մռայլ քաշում էր կատվին, ոչնչից չշվարելով: Վերջապես բերեց,- եւ վարսավիրին ասաց.

-Տանուտեր, կատվին սափրի, բայց դե հարթ:

Տղաները կուտակվում էին դրսից դռների մոտ, հռհռում էին, ծամածռվում: Վարսավիրը նեղացավ, կարմրեց: Փոքր ինչ դողդողացող ձայնով նա ասաց.

-Կներեք, պարոն, մենք էդպիսի գործերով չենք զբաղվում: Եւ նույնիսկ բախտ չի վիճակվել սափրած կատուներ տեսնել: Դա, երեւի թե, ամենավերջին մոդան է, մեզ դեռ չի հասել:

Պերեդոնովը բութ տարակուսանքի մեջ լսում էր նրան: Նա բղավեց.

-Ասա՝ չեմ կարող, խաբեբա:

Եւ գնաց, քարշ տալով մլավող կատվին: Ճանապարհին նա մտածում էր անձկալի, որ ամենուր, միշտ, բոլորն իր վրա միայն ծիծաղում են, ոչ մեկը չի ուզում իրեն օգնել: Տաղտուկը սեղմում էր նրա կուրծքը:

***

Պերեդոնովը Վոլոդինի եւ Ռուտիլովի հետ եկան այգի բիլիարդ խաղալու:

Ծփոթված մարկյորը նրանց հայտարարեց.

-Այսօր չի կարելի խաղալ, պարոններ:

-Այդ ինչո՞ւ,- բարկացկոտ հարցրեց Պերեդոնովը՝ մեզ, ու մեկ էլ չի կարելի:

-Քանի որ, կներեք, գնդերը չկան,- ասաց մարկյորը:

-Ձեռքից բաց է թողել, ագռավը,- լսվեց միջնորմի ետեւից բուֆետապանի սպառնալից բղավոցը:

Մարկյորը ցնցվեց, հանկարծ շարժեց կարմրած ականջները,- ինչոր, ասես նապաստակային շարժում,- եւ շշնջաց.

-Գողացել են:

Պերեդոնովը վախեցած ճչաց.

-Դե, ո՞վ է գողացել:

-Անհայտ է,- զեկուցեց մարկյորը:- Ոնց որ թե ոչ մեկը չկար, մեկ էլ հանկարծ, տես, եւ գնդերը չկան:

Ռուտիլովը քմծիծաղում ու բացականչում էր.

-Այ քեզ անեկդոտ:

Վոլոդինը նեղացած դեմք ընդունեց եւ մարկյորին կշտամբում էր.

-Եթե ձեզ մոտ հաճում են գնդերը գողանալ, իսկ դուք հաճում եք այդ ժամանակ այլ տեղում լինել, իսկ գնդիկներն անտեր են, ապա ձեզ հարկ էր նախօրոք այլ գնդիկներ ճարել, որպեսզի մենք խաղալու բան ունենայինք, իսկ եթե գնդիկները չկան, ապա մենք ո՞նց կարող ենք խաղալ:

-Պավլուշա, մի վնգստա,- ասաց Պերեդոնովը,- առանց քեզ էլ նողկալի է: Փնտրիր, մարկյոր, գնդերը, մեզ անպայման պետք է խաղալ, իսկ դեռեւս մի երկու շիշ գարեջուր բեր:

Սկսեցին գարեջուր խմել: Բայց տաղտկալի էր: Գնդերն այդպես էլ չէին գտնվում: Վիճում էին իրար հետ, մարկյորին էին հայհոյում: Նա էլ իրեն մեղավոր էր զգում ու ծպտուն չէր հանում:

Այդ գողության մեջ Պերեդոնովը թշնամական բանսարկություն տեսավ:

«Ինչո՞ւ»,- մտածում էր նա անձկալի ու չէր հասկանում:

Նա գնաց այգի, նստեց լճակի կողքի նստարանիկի վրա,- այստեղ նա դեռ երբեք չէր նստել,- բութ սեւեռվել էր ձգված կանաչ ջրի վրա: Վոլոդինը նստեց նրա կողքին, կիսում էր նրա տրտմությունը եւ ոչխարի աչքերով նայում էր նույն լճակին:

-Ինչո՞ւ է էստեղ կեղտոտ հայելին, Պավլուշկա,- հարցրեց Պերեդոնովը եւ փայտը բոթեց լճակի կողմը:

Վոլոդինը լայնաբաց ժպտաց ու պատասխանեց.

-Դա հայելի չի, Արդաշա, դա՝ լճակ է: Եւ քանի որ հիմա հովիկ չկա, ապա եւ ծառերն արտացոլվում են այնտեղ, ահա այդ էլ ցույց է տալիս, իբր թե հայելի է:

Պերեդոնովը աչքերը բարձրացրեց: Լճակից անդին ցանկապատն այգին բաժանում էր փողոցից: Պերեդոնովը հարցրեց.

-Իսկ կատուն ինչո՞ւ է ցանկապատի վրա: Վոլոդինը նայեց նույն տեղն ու ասաց, քմծիծաղելով.

-Կար, բայց եւ լիովին չքացավ:

Կատուն չկար էլ,- նա Պերեդոնովի աչքին էր երեւացել,- լայնաբացկանաչ աչքերով կատուն, խորամանկ, անխոնջ թշնամին:

Պերեդոնովը դարձյալ սկսեց գնդերի մասի մտածել: Ո՞ւմ են դրանք պետք: Դարձվորյա՞կն է, ի՞նչ է, դրանք խժռել: Դրա համար էլ էսօր չի երեւում,- մտածում էր Պերեդոնովը:- Լափալրվել ու մի տեղ վեր է ընել, երեի թե, մի տեղ քնել է:

Պերեդոնովը վիատորեն քարշ եկավ տուն:

Արեմուտը մարում էր: Ամպիկը դեգերում էր երկնքով, թափառում է, սողեսող մոտենում,- ամպերի ոտնամանները թեթեւ են,- աչք էր ածում: Դրա մթին ծայրերի վրա ատեղծվածորեն ժպտում էր մթին արտացոլքը: Գետակի վրա, որ հոսում էր այգու եւ քաղաքի միջեւ, տների եւ մեկ էլ թփերի ստվերներն էին օրորվում, փսփսում, ինչ-որ մեկին էին փնտրում:

Իսկ երկրի վրա, այս մթին եւ հավերժորեն թշնամական քաղաքում, հար պատահում էին չար, ծաղրասեր մարդիկ: Ամեն ինչ խառնվել էր առ Պերեդոնովը ընդհանուր անբարեհաճության մեջ, շները քրքջում էին նրա վրա, մարդիկ հաչում էին նրա վրա:

***

Քաղաքի տիկնայք սկսեցին այցելել Վարվարային: Ոմանք բերկրալի հետաքրքրությամբ փութացին արդեն երկրորդ, երրորդ օրը տեսնել, թե ինչպիսին է Վարվարան տանը: Այուսները մեկ շաբաթ ե նույնիսկ ավելի հապաղեցին: Իսկ ոմանք ընդհանրապես չեկան,- չէր եղել, օրինակ, Վերշինան:

Պերեդոնովներն ամեն օր սրտատրոփ անհանգստությամբ սպասում էին պատասխան այցելությունների, հաշվում էին, թե ով դեռ չի

եղել: Հատկապես անհամբեր սպասում էին տնօրենին կնոջ հետ: Անասելի սպասում եւ հուզվում էին - մեկ էլ տեսար խիպաչները չեկան:

Մի շաբաթ անցավ: Խրիպաչները դեռ չկային: Վարվարան սկսեց բարկանալ ո հայհոյել: Իսկ Պերեդոնովին այդ սպասումը շինճու-ճնշված վիճակի մեջ գցեց: Պերեդոնովը աչքերը լրիվ անիմաստ դարձան, ասես դրանք մարում էին, եւ երբեմն թվում էր, որ դա՝ մեռած մարդու աչքեր են: Անհեթեթ վախերը տանջում էին նրան: Առանց որեւէ տեսանելի պատճառի նա սկսում էր հանկարծ վախենալ այս կամ այն առարկաներից: Չգիտես ինչից նրա գլուխն էր մտել եւ մի քանի օր տանջում էր այն միտքը, որ իրեն մորթելու են. նա վախենում էր ամենայն սուր բաներից եւ դանակներն ու պատառաքաղները թաքցրել էր:

«Գուցե թե,- մտածում էր նա,- դրանք հմայախոսված ու հմայաշնչած են: Հենց դու էլ դանակի վրա կգաս»:

-Ինչո՞ւ դանակները,- ասաց նա Վարվարայիին,- չէ որ չինացիները փայտիկներով էլ են ուտում:

Այդ պատճառով մի ամբողջ շաբաթ միս չէին տապակում, բավարարվում էին կաղամբապուրով ու շիլայով: Վարվարան, Պերեդոնովից մինչ հարսանիքը կրած վախերի համար վրեժ լուծելով, երբեմն հավանություն էր տալիս նրան եւ դրանով հաստատում էր նրան այն բանում, որ իր քմայքները զուր չեն: Նա նրան ասում էր, որ նրա թշնամիները շատ են, դե եւ ինչպե՞ս նրան չնախանձեն: Բազմիցս ասում էր նա, ծաղրելով Պերեդոնովին, որ երեւի թե արդեն մատնել են նրան, զրպարտել են ղեկավարության եւ իշխանուհու առաջ: Եւ ուրախանում էր, որ նա, հավանաբար, վախենում էր:

Պերեդոնովի համար պարզ էր, որ իշխանուհին նրանից դժգոհ է: Մի՞թե նա չէր կարող նրա հարսանիքին սրբապատկեր կամ ցորնահաց ողարկել: Նա մտածում էր՝ պետք է նրա բարեհաճությանն արժանանալ, բայց ինչո՞վ: Ստո՞վ, ինչ է: Ինչ-որ մեկին զրպարտել, բամբասել, մատնել: Բոլոր տիկնայք էլ բամբասանք սիրում են,- դե ուրեմն կարելի էր Վարվարայի վրա մի զվարթ եւ անհամեստ բան հյուսել եւ գրել իշխանուհուն: Նա կծիծաղի, իսկ նրան տեղ կտա:

Բայց Պերեդոնովը չկարողացավ այդպիսի նամակ գրել, դե եւ սարսափը կալեց նրան՝ գրել հենց իշխանուհուն: Իսկ հետո նա մոռացավ այդ մտադրության մասին:

Իր սովորական հյուրերին երեդոնովը օղի եւ մեկ էլ էժանագին պորտվեյն էր հյուրասիրում: Իսկ տնօրենի ամար երեք ռուբլով մադերա էր գնել: Այդ գինին Պերեդոնովը չափազանց թանկ էր համարում, այն պահում էր ննջարանում: Իսկ հյուրերին միայն ցույց էր տալիս եւ ասում էր.

-Տնօրենի համար է:

Նստել էին մի անգամ Պերեդոնովի մոտ Ռուտիլովը եւ մեկ էլ Վոլոդինը: Պերեդոնովը նրանց ցույց տվեց մադերան:

-Դե ինչ դրսից նայես, համով չէ,- ասաց Ռուտիլովը, քմծիծաղում էր:- Դու մեզ հյուրասիրի դե այդ թանկ մադերան:

-Այ քեզ, թե ինչ ուզեց,- բարկացկոտ պատասխանում էր Պերեդոնովը:- Դե իսկ տնօրենին ես ի՞նչ պիտի մատուցեմ:

Տնօրենը մի ըմպանակ օղի կխմի,- ասաց Ռուտիլովը:

-Տնօրենին չի կարելի օղի խմել, տնօրենին մադերան է պատշաճում,- լրջմտորեն ասում էր Պերեդոնովը:

-Իսկ եթե նա օղի է սիրո՞ւմ,- պնդում էր Ռուտիլովը:

-Դե, առ քեզ, գեներալը օղի չի սկսի սիրել,- վստահորեն ասաց Պերեդոնովը:

-Իսկ դու մեզ համենայն դեպս հյուրասիրի,- կպչում էր Ռուտիլովը:

Բայց Պերեդոնովը փութկոտ շիշը տարավ, եւ լսելի էր, ինչպես էր զրնգում կողպեքը պահարանիկի, որի մեջ նա պահեց գինին: Վերադառնալով հյուրերի մոտ, որպեսզի խոսակցությունը փոխի, սկսեց խոսել իշխանուհու մասին: Նա մռայլորեն ասաց.

-Իշխանուհին, շուկայում փտած խնձորներ էր ծախում, դե եւ իշխանին գայթակղեց:

Ռուտիլովը քրքջաց ու բղավեց.

-Դե մի՞թե իշխանները շուկաներում երեւում են:

-Դե նա կարողացավ գրավել,- ասաց Պերեդոնովը:

-Հորինում ես դու, Արդալյոն Բորիսիչ, չեղած բաներ,- վիճում էր Ռուտիլովը,- իշխանուհին՝ նշանավոր տիկին է:

Պերեդոնովը չարացած նայում էր նրան ու մտածում. «Պաշտպանում է,- իշխանուհու հետ, երեւի, միաբան է: Իշխանուհին նրան, հավանաբար, կախարդել է, շատ էլ որ հեռու է ապրում»: Իսկ դարձվորյակը պտույտ էր գալիս շուրջը, անհունչ ծիծաղում էր ե ամբողջովին ցնցվում

էր ծիծաղից: Այն Պերեդոնովին հիշեցնում էր զանազան սարսափելի հանգամանքների մասին: Նա վախվորած շուրջբոլորը նայում ու շշնջում էր.

-Յուրաքանչյուր քաղաքում կա գաղտնի ժանդարմային ունտեր-սպա: Նա քաղաքացիական հագուստով է, երբեմն ծառայում է, կամ առետուր է անում, կամ էլ ինչ-որ այլ բան է անում, իսկ գիշերը, երբ բոլորը քնած են, կհագնի կապույտ համազգեստը եւ կթրեւի ժանդարմային սպայի մոտ:

-Իսկ համազգեստն ինչի՞ է պետք,- գործնականորեն տեղեկացավ Վոլոդինը:

-Ղեկավարությանը առանց համազգեստի ներկայանա, կքոթակեն,- բացատրեց Պերեդոնովը:

Վոլոդինը քթի տակ ծիծաղեց: Պերեդոնովը ավելի մոտ կցառավ դեպի նա ու շշնջաց.

-Երբեմն նա նույնիսկ որպես դարձվորյակ է ապրում: Դու կարծում ես, դա պարզապես կատու է, դե խաբում ես, դա ժանդարմն է վազվզում: Կատվից ոչ մեկը չի թաքնվի, դե նա էլ ամեն ինչի ունկ է դնում:

Վերջապես, մի մեկուկես ամսից, տնօրենուհին Վարվարային այցելեց: Եկավ ամուսնու հետ, աշխատանքային օրը, ժամը չորսին, զուգված, սիրալիր, քաղցր մանուշակ բուրող,- եւ Պերեդոնովների համար միանգամայն անսպասելի՝ նրանք սպասում էն Խրիպաչներին չգիտես ինչո տօներին, եւ ավելի վաղ: Իրար անցան: Վարվարան խոհանոցում էր, կիսահագնված, կեղտոտ: Նա նետվեց հագնվելու, իսկ Պերեդոնովը հյուրերին էր ընդունում եւ նոր արթնացած էր թվում:

-Վարվարան հիմա,- քրթմնջում էր նա,- նա հագնվում է: Նա եփումթափում էր: Մեզ մոտ նոր աղախին է, չի կարողանում մեր ուզածով, լրիվ հիմար է:

Ծուտով ելավ եւ Վարվարան, կարմիր, վախեցած դեմքով, մի կերպ հագնված: Նա հյուրերին խոթեց իր քրտնած, կեղտավուն ձեռքը եւ հոգմունքից դողացող ձայնով ասաց.

-Դե կներեք, որ ստիպեցի սպասել,- չգիտեի, որ դուք աշխաանքային օր կգաք:

-Ես հազվադեպ եմ տոն օրերին դուրս գալիս,- ասաց տիկին Խրիպաչը,- փողոցներում հարբածներ են: Թող սպասավորներն այդ օրն ու-

նեևան:

Խոսակցությունը մի կերպ էր ստացվում, եւ տնօրենուհու սիրալիրությունը փոքր ինչ քաջալերեց Վարվարային:

Տնօրինուհին Վարվարային փոքր ինչ քամահրաբար վերաբերվեց, բայց քնքշորեն, ինչպես զղջացող մեղավորի, ում պետք է փաղաքշել, բայց ում հետ հարաբերվելով կարող ես եւ կեղտոտվել: նա Վարվարային մի քանի խրատներ տվեց, կարծես թե անցողակի,- հագուստի, կահավորանքի մասին:

Վարվարան ջանում էր հաճոյանալ տնօրենուհուն, եւ վախի դողը հանգիստ չէր տալիս նրա կարմիր ձեռքերին ու ճաքած շուրթերին: Տնօրենուհուն դա նեղում էր: Նա ջանում էր ավելի սիրալիր լինել, բայց ակամա նողկանքը հաղթահարում էր նրան: Իր ողջ վարմոնքով նա հասկացնել էր տալիս Վարվարային, որ մոտ ծանոթություն իրենց միջեւ չի հաստատվի: Բայց քանի որ այդ արվում էր լրիվ սիրալիր, ապա Վարվարան հասկացավ եւ մտածեց, թե իրենք տնօրենուհու հետ լավ ընկերուհիներ կլինեն:

Խրիպաչը, իր տեղը չընկած մարդու տեսք ուներ, որ ճարպկորեն եւ արիաբար թաքցնում է այդ: Մադերայից նա հրաժարվեց՝ նա սովոր չէ այս ժամին գինի խմել:

Քաղաքային լուրերի մասին էին խոսում, շրջանային դատարանի կազմում գալիք փոփոխությունների մասին: Բայց չափազանց նկատելի էր, որ նա եւ Պերեդոնովը շփվում են տեղի հասարակության զանազան շրջաններում:

Երկար չնստեցին: Վարվարան ուրախացավ, երբ նրանք գնացին՝ եւ կային, եւ շուտ գնացին: Նա ուրախալի խոսում էր, նորից հանվելով.

-Դե, փառք Աստծո, գնացին: Թե չէ ես չգիտեի էլ, թե էլ ինչ խոսեմ նրանց հետ: Ինչ է նշանակում, թե ինչ քիչ ծանոթ մարդիկ են՝ չգիտես էլ, թե որ կողմից նրանց մոտենաս:

Նա հանկարծ հիշեց, ր Խիպաչները, հրաժեշտ տալիս, չկանչեցին իրենց մոտ լինել: Դա սգբում նրան շփոթեցրց, բայց հետո նա գլխի ընկավ.

-Այցեքարտ կուղարկեն, կարգացուցակով, թե երբ գնալ: Այդ պարոնների մոտ ամեն ինչ իր ժամանակն ունի: Այ հիմա ինձ պետք է ֆրանսերենի մեջ հմտանալ, դե իսկ ես ֆրանսերեն ոչ բե, ոչ մե:

***

Տուն վերադառնալիս, տնօրենուհին ամուսնուն ասաց.

-Նա՝ խղճուկ է եւ անհուսալի-չնչին. նրա հետ ոչ մի կերպ հնարավոր չէ հավասար հարաբերությունների մեջ լինել: Նրա մեջ ոչինչ չի համապատասխանում նրա դիրքին:

Խրիպաչը պատասխանեց.

-Նա լիովին համապատասխանում է ամուսնուն: Անհամբեր սպասում եմ, թե երբ նրան մեզ մոտից կտանեն:

***

Հարսանիքից հետո Վարվարան, ուրախությունից սկսեց խմել, հատկապես հաճախ Գրուշինայի հետ: Մի անգամ գինովցած, երբ նրա մոտ նստած էր Պրեպոլովենսկայան, Վարվարան բերանից դուրս թռցրեց նամակի մասին: Ամեն ինչ չպատմեց, այլ բավական պարզ ակնարկեց: Սոֆյայի համար դա էլ էր բավական՝ նա հանկարծ ասես գլխի ընկավ: Եւ ինչպես մեկեն չէր հասկացել,- մտովի հանդիմանեց ինքն իրեն: Գաղտնաբար նա պատմեց Վերշինայի կեղծած նամակների մասին, եւ նրանից լուրը տարածվց քաղաքով մեկ:

Պրեպոլովենսկայան Պերեդոնովին հանդիպելիս չէր կարողանում չծիծաղել նրա դյուրահավատության վրա: Նա ասում էր.

-Դե դուք շատ պարզամիտ եք, Արդալյոն Բորիսիչ:

-Բնավ էլ արգամիտ չեմ,- պատասխանում էր նա,- ես համալսարանի թեկնածու եմ:

-Ահա եւ թեկնածու եք, բայց դե ով ուզենա կկաողանա ձեզ խաբել:

-Ես ինքս ում ասես կխաբեմ,- վիճում էր Պերեդոնովը:

Պրեպոլովենսկայան խորամանկ ժպտում եւ կողմ էր գնում: Պերեդոնովը բութ վրդովվում էր՝ դե ի՞նչ է նա: Չարությունից,- մտածում էր նա. - դե բոլորն էլ իր թշնամիներն են:

Եւ նա նրան կուկիշ էր ցույց տալիս:

«Բան չես անի»,- մտածում էր, մխիթարելով իրեն: Բայց վախը տոչորում էր:

Այդ ակնարկները Պրեպոլովենսկայային քիչ էին թվում: Իսկ պարզ խոսքերով ողջ ճշմարտությունն ասել չէր ուզում: Ինչո՞ւ Վարվարայի հետ վիճեր: Ժամանակ առ ժամանակ նա Պերեդոնովին անանուն նա-

մակներ էր ուղարկում, որոնցում ակնարկներն ավելի պարզ էին: Բայց Պերեդոնովը դրանք թյուր կերպով հասկացավ:

Սոֆյան մի անգամ նրան գրում էր.

«Այն իշխանուհին, որ ձեզ նամակներ էր գրում, փնտրեք, արդյոք այստեղ չէ մնա ապրում»:

Պերեդոնովը մտածեց, որ, հաստատ, իշխանուհին ինքն է եկել այստեղ իրեն հետեւելու: Երեւի, մտածում էր նա, սիրահարվել ինձ, ուզում է Վարվարայից խլել:

Եւ այդ նամակները սարսափեցնում, բարկացնում էին Պերեդոնովին: Նա կպչում էր Վարվարային.

-Ո՞ւր է իշխանուհին: Ասում են, նա էստեղ է եկել:

Վարվարան, վրեժ լուծելով նախկին բաների համար, տանջում էր նրան թերասումներով, ծաղրանքներով, վախլուկ, չար խուսափանքներով: Լկտի քմծիծաղելով, նա խոսում էր անհաստատ ձայնով, ինչպես անում են, երբ հայտնապես ստում են, առանց վստահության հույսի.

-Դե ես ինչ գիտեմ, թե իշխանուհին հիմա որտեղ է ապրում:

-Ստում ես, գիտես,- սարսափած ասում էր Պերեդոնովը:

Նա չէր հասկանում, ինչին է պետք հավատալ՝ արդյոք նրա խոսքերի իմաստին, թե սուտը հայտնող նրա ձայնի հնչյունին,- եւ դա, ինչպես ամեն մի անհասկանալի բան իր համար, նրան սարսափով էր համակում: Վարվարան առարկում էր.

-Դե , ահա քեզ, գուցե թե, եւ Պիտերից ինչ-որ տեղ է գնացել,- չէ որ նա ինձնից չի հարցնում:

-Իսկ գուցե թե, իրո՞ք էստեղ է եկել,- երկչոտ հարցնում էր Պերեդոնովը:

-Գուցե եւ էստեղ է եկել,- ծաղրական ձայնով ասում էր Վարվարան:- Քեզ է սիրահարվել, եկել է հիանալու:

Պերեդոնովը բացականչում էր.

-Խաբում ես, դե մի՞թե սիրահարվել է:

Վարվարան չարախնդորեն ծիծաղում էր:

Այդ ժամանակվանից Պերեդոնովը սկսեց ուշադիր նայել, արդյոք որեւէ տեղ իշխանուհուն չի տեսնի: Երբեմն նրան թվում էր, որ նա պատուհանից նայում է, դռան ետեւում ականջ է դնում, Վարվարայի հետ փսփսում է:

***

Ժամանակը գնում էր, իսկ տեսուչի տեղ ստանալու մասին թղթի սպասման օրը հար չէր գալիս: Եւ տեղի մասին մասնավոր եւ ոչ մի տեղեկություն չկար: Հենց իշխանուհուց տեղեկանալ Պերեդոնովը չէր համարձակվում՝ Վարվաան միշտ նրան վախեցնում էր այն բանով, որ նա՝ նշանավոր է: Եւ նրան թվում էր, որ եթե ինքը մտադրվեր նրան գրել, ապա շատ մեծ անախորժություններ կլինեին: Նա չգիտեր, թե հատկապես ինչ կարող էին իր հետ անել իշխանուհու բողոքագրով, բայց հենց այդ էլ առանձնակի սասափելի էր: Վարվարան ասում էր.

-Մի՞թե ազնվականներին չգիտես: Սպասիր, իրենք ինչ հարկն է կանեն: Իսկ թե հիշեցնես՝ կնեղանան, ավելի վատ կլինի: Դե նրանք էնքան սնապարծություն ունեն, նրանք հպարտ են, նրանք սիրում են, որ իրենց հավատան:

Եւ Պերեդոնովը դեռ հավատում էր: Եւ բարկանում էր իշխանուհու վրա: Նա երբեմն նույնիսկ մտածում էր, որ իշխանոհին էլ հենց մատնում է իրեն, որպեսզի ազատվի իր խոստումներից: Կամ մատնում է այն պատճառով, որ բարկանում է՝նա պսակվեց Վարվարայի հետ, իսկ իշխանուհին ինքն է նրան սիրահարված: Այդ պատճառով, մտածում էր նա, նա իրեն լրտեսներով է շրջապատել, որոնք անընդհատ հետեւում են նրան, նրան այնպես է շրջապատել, որ արդեն ոչ օդ կա, ոչ լույս: Զուր չէ, որ նա՝ նշանավոր է: Ինչ ուզենա, կանի: Չարությունից նա իշխանուհու մասին աներեւակայելի բաներ էր ստում: Պատմում էր Ռուտիլովին եւ մեկ էլ Վոլոդինին, որ նախկինում նրա սիրեկանն է եղել, եւ նա նրան մեծ փողեր էր տալիս:

-Միայն թե ես դրանք քամուն տվեցի: Դե ինչիս էին պետք. գրողը տանի: Նա նա նաեւ ինձ խոստացել էր մինչեւ մահ գերեզման թոշակ տալ, դե եւ խաբեց:

-Իսկ դու կվերցնե՞իր,- քմծիծաղելով հարցրեց Ռուտիլովը:

Պերեդոնովը լռեց, հարցը չհասկացավ, իսկ Վոլոդինը պատասխանեց նրա փոխարեն ծանրակշիռ եւ կշռադատված.

-Իսկ ինչու չվերցնել, եթե նա՝ հարուստ է: Նա հաճել է օգտվել հաճույքներից, դե ուրեմն պիտի վճարի դրա համար:

-Դե գոնե գեղեցկուհի լիներ,- տրտմալի ասում էր Պերեդոնովը,- պեպենոտ, կճատ քթով: Դե միայն թե լավ էր վճարում, թե չէ կարե ի էր

թքել էլ նրա վրա, գրողի տարածի, չէիր ուզի: Նա պիտի իմ խնդրանքը կատարի:

-Դե դու ստում ես, Արդալյոն Բորիսիչ,- ասաց Ռուտիլովը:

-Դե ահա, ստում եմ: Իսկ ի՞նչ է նա զո՞ւր էր ինձ վճարում: Նա խանդում է Վարվարային, դրա համար էլ այդքան երկար ինձ տեղ չի տալիս:

Պերեդոնովն ամոթ չէր զգում, երբ պատմում էր, թե իբր իշխանուհին վճարում էր իրեն: Վոլոդինը վստահելի ունկնդիր էր եւ նրա պատմածներում անհեթեթություններ ու հակասություններ չէր նկատում: Ռուտիլովն առարկում էր, բայց մտածում էր, որ առանց կրակի ծուխ չի լինում՝ ինչ-ր բան, մտածում էր նա, նրա ու Պերեդոնովի միջեւ եղել է:

-Նա տերտերի շնից էլ ծեր է,- ասում էր Պերեդոնովը վստահաբար, որպես էական մի բան:- Միայն թե դուք, տեսեք, ոչ մեկին դուրս մի տվեք՝ նրան որ հասավ, վատ կլինի: Նա քսմսվում ու խոզի ջահելությունը երակների մեջ է ներարկում: Եւ չես իմանա, թե ծեր է: Իսկ նա արդեն հարյուր տարեկան է:

Վոլոդինը գլուխը տարուբերում ու չպպացնում էր: Նա ամեն ինչի հավատում էր:

Այնպես պատահեց, որ հաջորդ օրը այդպիսի խոսակցությունից հետո Պերեդոնովը ստիպված եղավ մի դասարանում կարդալ Կրիլովի «Սուտասանը» առակը: Եւ մի քանի օր շարունակ նա վախենում էր կամրջով անցնել,- նավակ էր վերցնում ու անցնում,- իսկ կամուրջը, թերեւս, մեկ էլ տեսար շուռ եկավ: Նա Վոլոդինին բացատրում էր.

-Իշխանոհու մասին ես ճիշտ էի ասում, բայց մեկ էլ տեսար սա չհասկացավ ու փուլ եկավ:

XXV

Լուրերը կեղծ նամակների մասին տարածվում էին քաղաքով մեկ: Խոսակցություններն այդ մասին քաղաքացիներին զբաղեցնում եւ զվարճացնում էին: Համարյա բոլորը գովում էին Վարվարային եւ ուրախանում էին այն բանի վրա, որ Պերեդոնովը հիմարացված է: Եվ այդուհանդերձ, ով տեսել էր նամակները, միաձայն վստահեցնում էին, որ մեկեն գլխի էին ընկել:

Հատկապես մեծ էր չարախնդությունը Վերշինայի տանը՝ Մարթան, թեպետ եւ ամուսնանում էր Սուրինի հետ, այդուհանդերձ մերժվեց Պե-

րեդոնովի կողմից. Վերշինան կկամենար Սուրինին իրեն վերցնել, բայց պիտի նրան գիջեր Մարթային. Վլադյան ուներ Պերեդոնովին ատելու, նրա անահջողությունից ուրախանալու իր զգալի պատճառները: Թեպետ նա սրտնեղում էր, որ Պերեդոնովը դեռ մնում է գիմնազիայում, բայց այդ սրտնեղությանը գերազանցում էր ուրախությունը, որ Պերեդոնովից երես են թեքել: Բացի այդ վերջին օրերս գիմնազիստների մեջ հաստատուն մի լուր էր շրջում, թե իբր տնօրենը հայտնել է ուսումնական շրջանի խանամակալին, թե Պերեդոնովը խելքը թռցրել է, եւ շուտով, նրան ուղարկելու են վկայելու եւ այնուհետեւ գիմնազիայից կվտարեն:

Վարվարային հանդիպելիս ծանոթները, կոպիտ կատակներով, լկտի աչքով անելով, խոսում էին ավելի կամ նվազ ուղիղ նրա արարքի մասին: Նա լկտիորեն քմծիծաղում էր, չէր հաստատում, բայց եւ չէր վիճում:

Ոմանք էլ ակնարկում էին Գրուշինային, որ գիտեն կեղծիքի մեջ նրա մասնակցության մասին: նա վախեցավ եւ եկավ Վարվարայի մոտ կշտամբանքներով, թե ինչու է բերանից դուրս թռցրել: Վարվարան քմծիծաղելով նրան ասաց.

-Ի՞նչ եք դուք հիմարություն դուրս տալիս, ես չէմ էլ մտածել որեւէ մեկին ասել:

-Դե իսկ ումի՞ց են բոլորն իմացել,- զայրացագին հարցրեց Գրուշինան:- Դե ես ոչ մեկին չեմ ասել, էդպիսի հիմար չեմ:

-Ես էլ ոչ մեկին չեմ ասել,- լկտիորեն պնդում էր Վարվարան:

-Դուք ինձ նամակը վերադարձրեք,- պահանջեց Գրուշինան,- թե չէ կսկսի քննել, էդպես եւ ձեռագրից էլ կհասկանա, որ կեղծ է:

-Դե թող եւ իմանա,- ասաց նեղսրտած Վարվարան,- դե ես էլ հենց հիմարին եմ նայելու:

Գրուշինան շողացնում էր իր տարբեր աչքերով ու ճչում էր.

-Ձեզ լավ է ասել, դուք ձերը ստացել եք, իսկ ինձ ձեր պատճառով բանտ կնստեցնեն: Չէ, դե ինչպես ուզում եք, իսկ նամակն ինձ ետ տվեք: Թե չէ եւ կարելի է եւ պսակը ետ տալ:

-Դե դուք էդ՝ ախ թողեք,- լկտիաբար ձեռքերը կանթելով պատասխանում էր Վարվարան,- դե հիմա թեկուզ հրապարակում հրապրակիր, պսակը չի քանդվի:

-Ոչինչ մի թողեք,- գոռում էր Գրուշինան - էդպիսի օրենք չկա՝ խաբեությամբ պսակել:

Եթե Արդալյոն Բորսիչը ողջ գործը նախագահությանը հասցնի, մինչեւ սենատ, էդպես եւ կբաժանեն:

Վարվարան վախեցավ ու ասաց.

-Դե ինչ եք բարկանում՝ նամակը ձեզ կհասցնեմ: Վախենալու բան չկա, ես ձեզ չեմ մատնի: Մի՞թե ես էդպիսի անասուն եմ: Հոգի դե ես էլ ունեմ:

-Դե ինչ էնտեղ հոգի,- կոպիտ ասաց Գրուշինան,- ինչ-որ շան մոտ է, էն էլ մարդու, միայն գոլորշի, իսկ հոգի չկա: Քանի ապրում էիր քտինքն էլ կար:

Վարվարան որոշեց նամակը գողանալ, թեպետ եւ դա դժվար էր: Գրուշինան փութացնում էր: Մի հույս կար՝ թռցնել նամակը Պերեդոնովի մոտից, երբ նա հարբած կլինի: Իսկ նա շատ էր խմում: Հաճախե գիմնազիայում էլ էր հայնվում քեֆը լավ եւ անամոթ խոսակցություններ էր վարում, որ նողկանք էին հարուցում նույնիսկ ամենաչար տղեկների մեջ:

***

Մի անգամ Պերեդոնովը բիլիարդանոցից վերադարձավ սովորականից ավելի հարբած՝ նոր գնդեր էին ջրցանել: Բայց թղթապանակից հար չէր բաժանվում՝ մի կերպ հանվելով, խոթում էր այն իր բարձի տակ:

Նա անհանգիստ էր քնում, բայց պինդ, եւ զառանցում էր, եւ խոսքերը նրա զառանցանքի մեջ ինչ-որ սարսափելի եւ այլանդակ բանի մասին էին: Դրանք Վարվարայի մեջ սահմռկելի վախ էին հարուցում:

«Դե լավ ոչինչ,- քաջալերում էր նա ինքն իրեն,- միայն թե չզարթնի»:

Նա փորձում էր նրան արթնացնել, հրեց,- նա ինչ-որ բան մռթմռթաց, բարձր բարձր հայհոյեց, բայց չզարթնեց: Վարվարան մոմը վառեց, նա ելավ անկողմնու վրայից եւ զգուշորեն խցկվեց Պերեդոնովի բարձի տակ: Թղթապանակը մոտ էր դրած, բայց երկար ժամանակ մատներից դուսր էր սողում: Սոմն աղոտ էր վառվում: Դրա լույսը երերում էր: Պատերի վրայով, մահճակալի վրա երկչոտ ստվերներ էին անցնում՝ սողոսկում էին չար սատանայիկները: Օդը հեղձուցիչ եւ ան-

շարժ էր: Այրված օղու հոտ էր փչում: Խռմփոցն ու հարբած զառանցանքը լցնում էի ողջ ննջարանը: Ողջ նախասենյակը հանց մարմնացած զառանցանք լիներ:

Դողդողացող ձեռքերով Վարվարան նամակը հանեց եւ դրամապանակը խոթեց նախկին տեղը: Առավոտյան Պերեդոնովը հիշեց նամակը, չգտավ այն, վախեցավ ու գոռաց.

-Ո՞ւր է նամակը, Վարյա:

Վարվարան, դաժանորեն սնգսնգալով, չթաքցնելով այդ, ասաց.

-Դե ես ի՞նչ գիտեմ, Արդալյոն Բորիսիչ: Դու բոլորին ցույց ես տալիս, ահա, երեւի թե, ինչ-ր տեղ էլ գրպանիցդ գցել ես: Կամ հանել են: Դե դու ընկեր ու մտերիմներ շատ ունես, որոնց հետ դու գիշերները թափառում ես:

Պերեդոնովը մտածում էր, որ նամակը առեւանգել են իր թշնամիները, ամենից հավանականը՝ Վոլոդինը: Հիմա Վոլոդինը պահում է նամակը, իսկ հետո իր ճանկերի մեջ կառնի եւ բոլոր թղթերը, եւ նշանակումը ու տեսուչ կդառնա, իսկ Պերեդոնովն այստեղ կմնա խղճալի բոսյակ:

Պերեդոնովը որոշեց պաշտպանվել: Նա ամեն օր մի մատնագիր էր կազմում իր թշնամիների վրա՝ Վերշինայի, Ռուտիլովների, Վոլոդինի, ծառայակիցների, որոնք, նրան թվում էր աչք էին դրել հենց նույն տեղի վրա: Երեկոները նա այդ մատնագրերը տանում էր Ռուբովսկուն: Ժանդարմային սպան ապրում էր երեւելի տեղում, հրապարակի վրա, գիմնազիայի մոտ: Իրենց պատուհաններից շատերը նկատում էին, թե ինչպես էր Պերեդոնովը դարպասից մտնում ժանադարմայինի մոտ: Իսկ Պերեդոնովը կարծում էր՝ ոչ մեկը գլխի չի ընկնում: Չէ որ նա զուր չէ մատնագրերը բերում երեկոյան եւ ետնամուտքից, խոհանոցի միջով: Թուղթը նա պահում էր փեշի տակ: Մեկեն նկատելի էր, որ նա ինչ-որ բան էր պահում: Եթե ստիպված էր լինում ձեռքը հանել, բարեւելու, նա պահում էր թուղթը վերարկուի տակ ձախ ձեռքով եւ մտածում էր, որ ոչ մեկը չի կարող գլխի ընկնել: Եթե հանդիպակացները նրան հարցնում էին, ուր է գնում, նա խաբում էր բավական անհմուտ, բայց ինքը գոհ էր իր անհմուտ հորինվածքներից:

Ռուբովսկիին նրան բացատրում էր.

-Բոլորը՝ դավաճաններ են: Ընկերներ են ձեւանում, ուզում են ավե-

լի լավ խաբել: Եւ բնավ չեն էլ մտածում, որ բոլորի մասին էնպիսի բաներ գիտեմ, որ դրանց Սիբիրում էլ տեղը քիչ է:

Ռուբովսկին լուռ լսում էր նրան: Առաջին մատնագիրը, ակնհայտորեն անհեթեթ, նա ուղարկեց տնօրենին՝ այդպես էր վարվել եւ որոշ մյուսների հետ: Ոմանք թողնում էր, ինչ-որ պատահմունքի հանար: Տնօրենը գրեց հոգաբարձուին, որ Պերեդոնովը հոգեկան ճնշվածության բացահայտ նշաններ է ցույց տալիս:

Տանը Պերեդոնովը մշտապես շրշյուններ էր լսում, անդադար, տաղտկալի, նոջավանջային: Նա անձկալի ասում էր Վարվարային.

-Ինչ-որ մեկն այնտեղ ոտնամատների վրա է քայլում, լրտեսներ են մեզ մոտ վխտում: Դու, Վարիչկա, ինձ չես պահպանում:

Վարվարան չէր հասկանում, թե ինչ է նշանակում Պերեդոնովի զառանցանքը: Մեկ հոգու հետ էր խաղում, մեկ վազվզում էր: Խոսում էր-բարկացկոտ ու երկչոտ.

-Հարբած աչքիդ ինչ ասես երեւում է:

Նախասենյակի դուռը Պերեդոնովին հատկապես կասկածելի էր թվում: Այն կիպ չէր փակվում: Անցքը դրա երկու կեսերի միջեւ դրսում թաքնված ինչ-որ բան էր ակնարկում: Արդյոք վալետը չի՞ այնտեղ աչք ածում: Ինչ-որ մեկի աչքը փայլում էր, չար ու սուր: Կատուն ամենուր հետեւում էր լայնականաչ աչքերով: Երբեմն նա աչքով էր անում, երբեմն մռլտում էր: մեկեն երեւում էր, որ նա ուզում է Պերեդոնովին ինչ-որ բանում բռնացնել, բայց միայն է չի կարողանում եւ այդու չարանում է: Պերեդոնովը թուքումրում էր նրան, բայց կատուն պոկ չէր գալիս: Դյուրազայրաց-դարձվորյակը վազում էր աթոռների տակ ու անկյուններում ու կաղկանձում էր: Նա կեղտոտ էր, գարշահոտ, զզվելի, սարսափելի: Արդեն պարզ էր, որ նա չարակամ է Պերեդոնովի հանդեպ եւ որ գիլ-գլորվել էր հատկապես նրա համար, եւ որ նախկինում երբեք եւ ոչ մի տեղ նա չկար: Սարքել նրան եւ զրպարտել էին: Եւ ահա ապրում է նա, ի սարսափ եւ կործանում իրեն, կախարդական, բազմակերպարան, հետեւում է նրան, խաբում, ծիծաղում է՝ մեկ թավալվում է գետնատարած, մեկ փալաս է ձեւանում, ժապավեն դրոշ, ամպիկ, շնիկ, փոշեյուն փոողոցում, եւ ամենուր սողում ու վազում է Պերեդոնովի ետքից՝ հյուծում, ուժասպառում էր նրան իր ծփուն կաքավումով: Դե թեկուզ մեկն ազատեր, խոսքով կամ հետահարվածով: Բայց այստեղ ընկերներ չկան, որչ

մեկը չի փրկելու, պիտի ինքդ հնար գտնես, քանի դեռ չարանենգն իրեն չի կործանել:

***

Պերեդոնովը միջոց հորինեց՝ ողջ հատակին սոսինձ քսեց, որպեսի դարձվորյակը կպչի: Կպչում էին սապոգների ներբաններն ու Վարվարայի զգեստների փեշերը, իսկ դարձվորյակը գլորվում էր ազատ եւ կաղկանձուն հռհռում էր: Վարվարան բարկացկոտ հայհոյում էր: Պերեդոնովին աննահանջ իշխում էին կպչուն պատկերացումները հետապնդման մասին ու սարսափեցնում էին նրան: Նա ավելի ու ավելի էր թաղվում վայրի անուրջների աշխարհում: Դա արտացոլվել էր եւ նրա դեմքի վրա՝ այն դարձել էր սարսափի անշարժ դիմակ:

Այժմ արդեն Պերեդոնովը երեկոները չէր գնում բիլիարդ խաղալու: Ճաշից հետո նա փակվում էր ննջարանում, դռան ետեւում իրեր էր կուտակում,- աթոռն աթոռի վրա,- ջանադրավբար պատնեշվում էր խաչերով ու հմայաթափությամբ եւ նստում էր բոլորի վրա մատնություններ գրելու, ում որ կհիշի: Մատնություններ էր գրում ոչ միայն կենդանի մարդկանց վրա, այլ նաեւ թղթախաղի աղջիկների: Գրում՝ եւ տեղնուտեղը տանում է ժանդարմային սպային: Եւ այդպես էր նա անկացնում ամեն երեկոն:

Ամենուր Պերեդոնովի աչքերի առաջ թղթախաղի ֆիգուրներ էին քայլում, ինչպես ողջեր՝ թագավորներ, թղթախաղի կին պատկերներ, խլապ-վալետներ: Քայլում էին նույնիսկ փոքր խաղաթղթերը: Դրանք՝ բացագույն կոճակներով մարդիկ են՝ գիմնազիստներ, քաղաքապահ ոստիկաններ: Մեկանոցը՝ ցցած փորով, համարյա միայն փորը: Երբեմն թղթաաղերը վերածվում էին ծանոթ մարդկանց: Խառնվում էն կենդանի մարդիկ եւ տարօրինակ դարձվորյակները:

Պերեդոնովը համոզված էր, որ դռան ետեում կանգնել ու սպասում է վալետը եւ որ այդ վալետն ինչ-որ ուժ եւ իշխանություն ունի, ինչպես ոստիկանը՝ կարող է ինչ-որ տեղ տանել, ինչ-որ սարսափելի բաժանմունք: Իսկ սեղանի տակ նստել է դարձվորյակը: Եւ Պերեդոնովը վախենում էր նայել սեղանի տակ կամ դռնից այն կողմ:

Ճստպստան տղեկ-ութանոցները ծաղրում էին Պերեդոնովին՝ դրանք դարձվորյակ-գիմնազիստներն էին: Նրանք բարձրացնում էին

ոտքերը տարօրինակ, անկենդան շարժումով, ինչպես կարգինի տոտիկները, միայն թե նրացն ոտքերը բրդոտ էին, սմբակներով: Պոչերի փոխարեն նրանց մոտ վարոցներ էին աճում, լակոտները սուլոցով թափահարում էին դրանք եւ ամեն թափահարումից ճվճվում էին: Դարձվորյակը սեղանի տակից խռնչում էր, ծիծաղելով այդ ութանոցների զվարճանքների վրա: Պերեդոնովը չարությամբ մտածում էր, որ ինչ-որ ղեկավարի մոտ դարձվորյակը չէր համարձակվի հասնել: «Չեք թողնի, երեւի թե,- նախանձոտ մտածում էր նա,- լակեյները շվաբրերով կքոթակեն»:

Վերջապես Պերեդոնովը չտարավ նրա չարալի, լկտի-ճղճղան ծիծաղը: Նա խոհանոցից բերեց կացինը եւ կոտրատեց սեղանը, որի տակ դարձվորյակը թաքնվել էր: Դարձվորյակը խղճալի ու չարախնդորեն ծվծվաց, սեղանի տակից դուրս նետվեց եւ չքվեց: Պերեդոնովը ցնցվեց: «Կկծի»,- մտածեց նա, սարսափից ճվվաց ու նստեց: Բայց դարձվորյակը խաղաղ թաքնվեց: Կարճատեւ:

Երբեմն Պերեդոնովը վերցնում էր թղթախաղերը եւ կատաղած դեմքով գրչահատով կտրատում է թղթախաղի ֆիգուրները: Հատկապես աղջիկներինը: Արքաներին կտրատելիս, նա շուրջբոլորն էր նայում, որպեսզի չտեսնեին եւ չմեղադրեին քաղաքական հանցագործության մեջ: Բայց եւ այդպիսի հաշվեհարդարներն էլ երկարատեւ չէին օգնում: Հյուրեր էին գալիս, թղթախաղեր էին գնում, եւ նոր թղթախաղերի մեջ դարձյալ բնակվում էին չար լրտեսները:

Պերեդոնովն արդեն իրեն գաղտնի հանցագործ էր համարում: Նա երեւակայեց, թե դեռ ուսանողական տարիներից ոստիկանական հսկողության տակ է: Այդ իսկ պատճառով, կշռադատում էր նա, եւ իրեն հետեւում են: Դա եւ սարսափեցնում եւ գոռոզամտացնում էր նրան:

Քամին տարուբերում էր վարագույրները: Դրանք շրշում էին հանդարտ, չարագույժ շրշյունով, եւ թեթեւ կիսաստվերները սահում էին դրանց վառ նախշերի վրայով: «Լրտեսը այնտեղ է թաքնվում, այդ պաստառների ետեւում»,- մտածում էր Պերեդոնովը: «Չար մարդիկ,- մտածում էր նա, տրտմելով,- զուր չէ, որ նրանք պաստառները պատի վրա այդպես ծուռ են փակցրել, այդքան վատ, որպեսզի կարողանա դրանց տակ թաքնվել չարագործը, ճարպիկ, տափակ ու համբերատար: Չէ որ նախկինում էլ այդպիսի օրինակներ եղել են»:

Աղոտ հիշողություններ շարժվեցին նրա գլխում: Ինչ-որ մեկը թաքնվում էր պաստառների ետեւում, ինչ-որ մեկին խոցել էին, ոչ այն է դաշույնով, ոչ այն է մախաթով: Պերեդոնովը մախաթ գնեց: Եւ երբ նա տուն դարձավ, պաստառները անհավասար ու տագնապալից շարժվեցին՝ լրտեսը զգում էր վտանգը եւ ուզում էր, գուցե թե, ինչ-որ տեղ ավելի հեռու սողալ: Խավարը դեսուդեն նետվեց, ցատկեց առաստաղի վրա եւ այնտեղից սպառնում ու ծամածռվում էր:

Չարությունը եռեփվեց Պերեդոնովի մեջ: Նա շեշտակի մախաթով խփեց պաստառներին: Սասանումը վազեց պատի վրայով: Պերեդոնովը, հրճվանքով, ոռնաց ու սկսեց, մախաթը թափահարելով, պար գալ: Ստավ Վարվարան:

-Ի՞նչ ես դու մենակ պար գալիս, Արդալյոն Բորիսիչ,- հարցրեց նա, քմծիծաղելով, բութ եւ լկտի:

-Փայտոջիլ եմ սպանել,- մռայլ բացատրեց Պերեդոնովը:

Նրա աչքերը շողում էին վայրի հրճվանքով: Միայն մի բան էր վատ՝ գեշ հոտ էր փչում: Նեխում եւ հոտում էր պաստառների տակ խոցված լրտեսը: սարսափն ու հրճվանքը ցնցում էին Պերեդոնովին՝ սպանել էր թշնամուն: Սիրտը նրա իսպառ անողոքացել էր այդ սպանության մեջ:

Չկատարված սպանություն,- բայց Պերեդոնովի համար այն նույնն էր, թե կատարվածը: խելագար սարսափը նրա մեջ կոփել էր պատրաստակամություն առ հանցագործությունը, եւ անիմանալի, մթին, հոգեւոր կյանքի ստորին ոլորտներում թաքչած գալիք սպանության պատկերացումը, տանջալի մարմաջն առ սպանությունը նախնադարյան քարացածության վիճակը ճնշում էր նրա արատավոր կամքը: Դեռեւս կաշկանդված,- շատ սերունեդներ էին ընկել հինավուրց Կայենի վրա,- այն բավականություն էր ստանում այն բանում, որ փշրում ու փչացնում էր իրերը, հատում էր կացնով, դանակով, կտրում էր ծառերն այգում, որպեսզի դրանց ետեւից չնայեր լրտեսը: եւ առարկաների քայքայման մեջ զվարճանում էր հնամենի դեւը, նախաժամանակային խառնակման ոգին, հնախարխուլ քաոսը, այնինչ վայրի աչքերը խենթ մարդու սարսափ էին արտացոլում, համանման մերձիմահ հրեշային տանջանքների սարսափներին:

Եւ այդուհանդերձ միեւնույն պատրանքները կրկնվում եւ տանջում էին նրան: Վարվարան, ծանակելով Պերեդոնովին, եբեմն գողոնի մո-

տենում էր այն վերնահարկի դռներին, որտեղ նստած էր Պերեդոնովը, եւ այնտեղից խոսում էր օտար ձայներով: Նա սարսափում էր, կամացուկ մոտենում էր, որպեսզի բռներ թշնամուն,- եւ Վարվարային էր գտնում:

-Ո՞ւմ հետ էիր դու էստեղ փսփսում,- տրտմալի ասում էր նա:

Վարվարան քմծիծաղում ու պատասխանում էր.

-Դե քեզ, Արդալյոն Բորիսիչ, թվում է:

-Դե ամեն ինչ հո չի թվում,- տրտմալի քրթմնջում էր Պերեդոնովը,- չէ որ աշխարհի երեսին ճիշտն էլ կա:

Դե, չէ որ Պերեդոնովն էլ ձգտում էր առ ճմարտությունը, ամենայն գիտակցական կյանքի ընհանրական օրենքով, եւ այդ ձգտումը տոչորում էր նրան: Նա ինքն էլ չէր գիտակցում, որ նույնպես, ինչպես եւ բոլոր մարդիկ, ձգտում էր առ ճշմարտություն, եւ այդու աղոտ էր նրա անհանգստությունը: Նա չէր կարողանում գտնել իր համար ճշմարտությունը եւ խճճվում, եւ կործանվում էր:

Արդեն ծանոթներն էլ սկսել էին խաբեության համար ծաղրել Պերեդոնովին: Մեր քաղաքում սովորական կոպտությամբ առ թույլերը խաբեության մասին խոսում էին նրա ներկայությամբ: Պրեպոլովենսկայան նենգադավ քմծիծաղով հարցնում էր.

-Դե դուք այդ ի՞նչ, Արդալյոն Բորիսիչ, դեռեւս ձեր տեսուչական տեղը չեք գնում:

Վարվարան նրա փոխարեն Պրեպոլովենսկայային զսպված չաությամբ պատասխանում էր.

-Ահա թուղթը կստանանք եւ կգնանք:

Պերեդոնովին այդ հարցերը տրտմության մեջ էին նետում: «Դե ինչպե՞ս ես կարող եմ ապրել, եթե ինձ տեղ չեն տալիս»,- մտածում էր նա:

Նա թշնամիներից պաշտպանվելու նորանոր պլաններ էր մտմտում: Խոհանոցից գողացել էր կացինն ու այն մահճակալի տակ էր թաքցրել: Ծվեդական դանակ էր գնել ու այն միշտ կրում էր իրր գրպանում: Աշտապես ամփոփվում էր իր մեջ: Գիշերով տան շուրջ թակարդներ էր դնում, դե նաեւ վերնասենյակներում, իսկ հետո զննում էր դրանք: Այդ թակարդները, իհարկե, այնպես էին կառուցված, որ դրանց մեջ ոչ մեկը չէր կարող ընկնել՝ դրանք ճզմում էին, բայց չէին պահում, եւ դրանցով կարելի էր գնալ: Պերեդոնովը չուներ ոչ տեխնիկական գիտելիք, ոչ էլ

խելամտություն: Ամեն առավոտ տեսնելով, որ ոչ մեկը չի բռնվել, Պերեդոնովը մտածում էր, որ իր թշնամները թակարդները փչացրել են: Դա նրան դարձյալ սարսափեցնում էր:

Հատկապես ուշադիր Պերեդոնովը հետեւում էր Վոլոդինին: Նա հաճախ գալիս էր Վոլոդինի մոտ, երբ գիտեր,մոր նա տանը չէ, եւ տնտղում էր, որդյոք նա ինչ-որ թղթեր չի առեւանգել:

***

Պերեդոնովը սկսել էր գլխի ընկնել, թե իշխանուհին ինչ է ուզում,- որպեսզի ինքը դարձյալ սիրի նրան: Նրա համար նա նողկալի է, զառամյալը: «Չէ որ նա հարյուրհիսուն տարեկան է»,- բարկացկոտ մտածում էր նա: «Այո, ծեր է,- մտածում էր նա,- բայց փոխարենը տես ինչ ուժեղ է»: Եւ զզվանքը միածուլվում էր հրապուրանքին: Փոքր-ինչ տաքուկ, դիակ է հոտում,- պատկերացնում էր Պերեդոնովը եւ վայրի վավաշոտությունից քարանում էր:

«Գուցե թե, կարելի է նրա հետ միավորվել, եւ նա կողորմա: Արդյոք նրան նամակ չգրե՞լ»:

Եւ այս անգամ Պերեդոնովը, երկար չմտածելով, իշխանուհու համար հորինեց: Նա գրում էր.

«Ես սիրում եմ ձեզ, որովհետեւ դուք՝ պաղ եւ հեռու եք: Վարվարան քրտնում է, նրա հետ շոգ է քնելը, տաք է փչում, ինչպես վառարանից: Ես ուզում եմ պաղ եւ հեռավոր սիրուհի ունենալ: Եկեք եւ համապատասխանեք»:

Գրեց, ուղարկեց,- եւ զղջաց: «Ղե ի՞նչ դրանից դուրս կգա»: Գուցե թե, չէր կարելի գրել,- մտածում էր նա,- հարկ էր սպասել, երբ իշխանուհին ինքը կգա»:

Այսպես պատահաբար ստացվեց այս նամակը, ինչպես եւ շատ բաներ, որ Պերեդոնովը պատահաբար էր անում,- ինչպես դիակ, արտաքին ուժերից շարժվող, եւ կարծես թե այդ ուժերը չեն ախորժում նրա հետ գլուխ դնել՝ կխաղա մեկն ու կնետի մյուսին:

Ծուտով դարձվորյակը կրկին հայտնվեց, նա երկար գլորվում է Պերեդոնովի շուրջը, ինչպես օղապարանի վրա, եւ հար ծանակում էր նրան: Եւ նա արդեն անհունչ էր եւ ծիծաղում էր լոկ իր մարմնի դողով: Բայց նա բնակվում էր աղոտ-ոսկեգույն կայծերով, չար, անամոթ,-

սպառնում ու վառվում էր անտանելի հրճվանքով: Եւ կատուն էլ սպառնում էր Պերեդոնովին, փայլկտում էր աչքերով եւ մլավում էր հանդուգն ու սպառնալից:

«Ինչի՞ վրա են ուրախանում»,- տրտմալի մտածեց Պերեդոնովը եւ հանկարծ հասկացավ, որ վերջը մոտենում է, որ իշխանուհին արդեն այստեղ է, մոտիկ, լրիվ մոտիկ: Գուցե թե, խաղաթղթերի այս կապուկում:

Այո, անկասկած, նա՝ նա ագռավի կամ կարմիր աղջիկն է: Գուցե թե, նա թաքնվում է եւ այլ կապոցում, կամ մյուղ խաղաթղթերի ետեւում, իսկ ինչպիսին է նա՝ անհայտ է: Դժբախտությունն այն է, որ Պերեդոնովը երբեք նրան չի տեսել: Վարվարային հարցնել չարժե՝ կխաբի:

Վերջապես Պերեդոնովը մտածեց այրել ողջ կապոցը: Թող բոլորը վառվեն: Եթե նրանք դիտավոյալ խցկվում են իր խաղաթղթերի մեջ, դե ուրեմն իրենք էլ մեղավոր են:

Պերեդոնովը հարմարեցրեց պահը, երբ Վարվարան չկար եւ վառարանը սրահում վառվում էր, եւ նետեց թղթերը, ողջ խաղը, վառարանի մեջ:

Ճթճթոցով բացվեցին չտեսնված, դալկակարմիր ծաղիկներն ու վառվում էին, ծայրերից մոխրանալով: Պերեդոնովը սարսափած նայում էր այդ բոցավառ ծաղիկներին:

Խաղաթղթերը կորանում, ծռմռվում, շարժվում էին, ասես ուզում էին վառարանից դուրս թռչել: Պերեդոնովը ճանկեց ակիշն ու խառնշտկում էր խաղաթղթերը: Բոլոր կողմերի վրա շաղվեցին մանրիկ, վառ կայծերը,- եւ հանկարծ, կայծերի վառ եւ չար իրարանցման մեջ ելավ կրակից իշխանուհին, փոքրիկ, մոխրամոխրագույն կինը, ամբողջովին ծածկված մարմրող կրակներով՝ նա բարալիկ ձայնով սուր ճչում էր, ֆշշում ու թքում էր կրակի վրա:

Պերեդոնովը երեսնիվեր ընկավ եւ սարսափից ոռնաց: Խավարը գրկել էր նրան, խուտուտ տալիս ու ծիծաղում էր ղունղունացող ձայներով:

XXVI

Սաշան հմայվել էր Լյուդմիլայով, բայց ինչ-որ բան խանգարում էր նրան խոսել նրա մասին Կոկովկինայի հետ: Ասես ամաչում էր: Եւ ար-

դեն երբեմն սկսել էր վախենալ նրա այցելություններից: Նրա սիրտը նվաղում էր, եւ հոնքերն ակամա կիտում էր, երբ նա տեսնում էր պատուհանի տակ նրա արագ առկայծող վարդադեղին գլխարկը: Բայց այդուհանդերձ տագնապով եւ անհանգստությամբ սպասում էր նրան,- կարոտում էր, եթե նա երկար չէր գալիս: Հակասական զգացմունքները խառնվել էին նրա հոգում, մթին, անպարզ զգացմունքները՝ արատավոր՝ որովհետեւ վաղահաս էին, եւ քաղցր՝ որովհետեւ ախտավոր էին:

Լյուդմիլան չկար ոչ երեկ, ոչ այսօր: Սաշան սպասումից տոչորվել էր եւ արդեն դադարել էր սպասել: Եւ հանկարծ նա եկավ: Նա շողաց, նետվեց նրա ձեռքերը համբուրելու:

-Դե, չքացել եք,- փնթփնթան ասում էր նա նրան,- երկու օր է չեք երեւում:

Նա ծիծաղում եւ ուրախանում էր, եւ ճապոնական ֆունկիայի բարկ բույրը տարածվում էր նրանից, ասես կայլակվում էր նրա մուգ-խարտյաշ վարսերից:

Լյուդմիլան ու Սաշան գնացին քաղաքից դուրս զբոսնելու: Կանչում էին Կոկովկինային՝ չգնաց:

-Դե ուր ես պառավս զբոսնեմ,- ասաց նա,- միայ ձեր ոտքերի տակ եմ ընկնելու: Դե մենակ զբոսնեք:

-Իսկ մենք չարաճճիություն կանենք,- ծիծաղում էր Լյուդմիլան:

***

Տաք օդը, ետեւում, անշարժ, փաղաքշում եւ հիշեցնում էր անդառնալիի մասին: Արեւը հանց հիվանդ, աղոտ այրվում ու շառագունում էր դալուկ, հոգնած երկնքի վրա: Չոր տերեւները մթին հողի վրա ընկած էին հեզ, մեռյալ:

Լյուդմիլան ու Սաշան իջան խանդակ: Այնտեղ զով էր, թարմ, համարյա խոնավ,- նրբինացած աշնանային խոնջանքն էր տիրում նրա ստվերամած զառիթափերի վրա:

Լյուդմիլան առջեւից էր քայլում: Նա բարձրացրեց շրջազգեստը: Բացվեցին փոքրիկ մաշիկներն ու մարմնագույն գուլպաները: Սաշան նայում էր վար, որպեսզի չդիպչի արմատներին, եւ տեսավ գուլպանները: Նրան թվաց, թե մաշիկներն հագած են առանց գուլպաների: Ամոթ-

խած եւ կրքոտ զգացմունքը ելավ նրա մեջ: Նա շառագունեց: Գլուխը պտտվեց: «Դե ընկնեի, ասես պատահաբար, նրա ոտքերի մոտ,- երազում էր նա,- հանեի նրա մաշիկը, համբուրեի նրա նրբին ոտքը»:

Լյուդմիլան ասես զգաց իր վրա Սաշայի թոունդ հայացքը, նրա անհամբեր ցանկությունը:

Նա, ծիծաղելով, շրջվեց Սաշայի կողմը, հարցրեց.

-Գուլպաների՞ս ես նայում:

-Չէ, ես էնպես,- շփոթված քրթմնջում էր Սաշան:

-Ախ, ես էնպիսի գուլպաներ ունեմ,- քրքջալով եւ նրան չլսելով, ասում էր Լյուդմիլան,- սարսափելի բաներ են: Կարելի է կարծել, թե ես բոբոիկ ոտքերիս վրա եմ մաշիկները հագել, լրիվ մարմնագույն: Ճիշտ չէ՞, սաստիկ ծիծաղելի գուլպաներ են:

Նա դեմքովշրջվեց Սաշայի կողմն ու զգեստի ծայրը վեր վբարձրացրեց:

-Ծիծաղելի՞ են,- հարցրեց նա:

-Ոչ, գեղեցիկ են,- ասաց Սաշան, շվարմունքից շառագունած:

Լյուդմիլան ծեւական զարմանքով հոնքերը վեր բերեց ու բացականչեց.

-Ասացեք խնդրեմ, այնտեղ էլ գեղեցկություն տարբերել:

Լյուդմիլան ծիծաղեց ու առաջ անցավ: Սաշան, շփոթմունքից այրվելով, անհմուտ քայլում ր րա ետքից եւ պեն մեկ սայթաքում էր:

Ձորակն անցան: Նսեցին քամուց կոտրած կեչու բնի վրա: Լյուդմիլան ասաց.

-Ախ էս ինչքան ավազ է լցվել մաշիկներիս մեջ,- քայլե չեմ կարողանում:

Նա հանեց մաշիկները, ավազը թաք տվեց, խորամանկ Սաշային նայեց:

-Գեղեցի՞կ տոտիկ է,- հարցրեց նա:

Սաշան ավելի շատ կարմրեց եւ արդեն չգիտեր, ինչ ասի, Լյուդմիլան հանեց գուլպաները:

-Ձերմա՞կ տոտիկներ են,- հարցրեց նա նորից եւ խորամանկորեն ժպտալով:- Ծնկիր: Համբուրիր,- խիստ ասաց նա, եւ հաղթական դաժանություն հայտնվեց նրա դեմքին:

Սաշան ժրաշարժ ծնկի եկավ եւ համբուրեց Լյուդմիլայի ոտքերը:

-Իսկ առանց գուլպաների ավելի հաճելի է,- ասաց Լյուդմիլան, գուլպաները թաքցրեց գրպանում եւ ոտքերը խրեց մաշիկների մեջ:

Եւ դեմքը նրա դարձյալ հանգիստ ու զվարթ դարձավ, ասես Սաշան չէր էլ կռացել հիմա նրա առաջ, համբուրելով նրա մերկ ոտնաթաթերը:

Սաշան հարցրեց.

-Սիրելիս, իսկ դու չե՞ս մրսի:

Քնքուշ եւ թրթռուն էր հնչում ձայնը նրա: Լյուդմիլան ծիծաղեց:

-Այ քեզ բան, սովորել եմ,- ես էնքան էլ քնքուշի մեկը չեմ:

Մի անգամ Լյուդմիլան եկավ երեկոյան կողմ Կոկովկինայի մոտ եւ կանչեց Սաշային.

-Գնանք ինձ մոտ նոր գրապահարան կախելու:

Սաշան սիրում էր մեխեր գամել ու մի անգամ Լյուդմիլային խոստացել էր օգնել նրան կահավորանքի կարգաբերման մեջ: Եւ հիմա համաձայնվեց, ուրախանալով, որ Լյուդմիլայի հետ ու նրա մոտ գնալու անմեղ առիթ կա: Եւ extra-muguet-ի անմեղ, թթվաշ բույրը, որ փչում էր Լյուդմիլայի կանաչավուն զգեստից, քնքշորեն հանգստացնում էր նրան:

***

Աշխատանքի համար Լյուդմիլան առաջակալի ետեւում զգեսափոխվեց ու Սաշայի մոտ ելավ կարճ, պաճուճազարդ շրջազգեստով, բաց թեւերով, օծանված քաղցր, քնքշանվաղուն, բարկ ճապոնական ֆունկիայով:

-Այ քեզ, ինչ զարդարուն է,- ասաց Սաշան:

-Դե հա, զարդարուն: Տեսնում ես,- ասաց Լյուդմիլան,- բոբիկ ոտքերս,- արտաբերեց նա այդ խոսքերը ամաչկոտ-կրքոտ հապաղումով:

Սաշան ուսերը թոթվեց ու ասաց.

-Դե դու միշտ էլ զարդարուն ես: Դե ինչ, սկսենք խփել: Իսկ մեխ դուք ունե՞ք,- հարցրեց նա մտահոգ:

-Փոքր ինչ սպասիր,- պատասխանեց Լյուդմիլան,- դե թեկուզ մի քիչ հետս նստիր, թե չէ ոնց որ միայ գործով ես գալիս, իսկ ինձ հետ խոսելը ծանձրալի է:

Սաշան կարմրեց ո քնքուշ ասաց.

-Սիրելի Լյուդմիլոչկա, դե ձեզ հետ ինչքան ասես կնստեի, մինչե որ

քշեիք, միայն թե դասերն է պետք անել:

Լյուդմիլան թեթեւակի հոգոց անեց ու դանդաղ շշնջաց.

-Դու անընդհատ լավանում ես, Սաշա:

Սաշան շառագունեց, ծիծաղեց, խողովակիկի պես լեզուն դուրս հանելով:

-Դուք էլ կհորինեք,- ասաց նա,- միթե ես օրիորդ եմ, ինչ պիտի լավանամ:

-Դեմքդ հիասքանչ է, դե իսկ մարմինդ: Ցույց տուր գոնե մինչեւ գոտկատեղը,- գրգվելով Սաշային, խնդրում էր Լյուդմիլան եւ ուսից գրկեց նրան:

-Դե ահ դուք էլ, հորինեցիք,- ամոթխած ու սրտնեղած ասաց Սաշան:

-Դե իսկ ի՞նչ է որ,- անհոգ ձայնով հարցրեց Լյուդմիլան,- դե դու ինչ գաղտնքիներ ունես:

-Դե մեկ էլ մեկը մտավ,- ասաց Սաշան:

-Ո՞վ պիտի մտնի,- նույնքան թեթեւ ու անհոգ ասաց Լյուդմիլան:- Դե մենք դուռը կկողպենք, դե եւ ոչ մեկն է չի մտնի:

Լյուդմիլան ճարպկորեն մոտեցավ դռանը եւ կողպեքով այն փակեց: Սաշան գլխի ընկավ, որ Լյուդմիլան կատակ չի անում: Նա ասաց, ամբողջովին շառագունելով, այնպես որ ճակատի վրա քրտնքի կաթիլներ հայտնվեցին.

-Դե, պետք չի, Լյուդմիլոչկա:

-Հիմար, ինչո՞ւ պետք չի,- համոզիչ ձայնով հարցրեց Լյուդմիլան:

Նա դեպ իրեն քաշեց Սաշային եւ սկկսեց նրա բլուզն արձակել: Սաշան դիմադրում էր, կառչելով նրա ձեռքերից: Նրա դեմքը վախեցած էր դառնում, եւ, վախին համանման, ամոթը համակեց նրան: Եւ դրանից նա ասես հանկարծ թուլացավ: Լյուդմիլան հոնքերը շարժեց եւ վճռական հանվեցնում էր նրան: Հանեց գոտին, մի կերպ բլուզը պոկեց: Սաշան դիմադրում էր ավելի ու ավելի հուսահատ: Նրանք դեսուդեն էին գնում, պտտվում էին վերնահարկով մեկ, դեմ էին առնում աթոռներին ու սեղաններին: Բարկ անուշահոտություն էր փչում Լյուդմիլայից, արբեցնում էր Սաշային եւ թուլացնում էր նրան:

Արագ հրոցով կրծքին Լյուդմիլան Սաշային գցեց թախտի վրա: Վերնաշապկից, որից նա քաշել էր, թռավ կոճակը: Լյուդմիլան արագ

մերկացրեց Սաշայի ուսն ու սկսեց ձեռքը թեւքից դուրս քաշել: Դիմադրելով, Սաշան ակամա ափով հարվածեց Լյուդմիլայի այտին: Չէր ուզում, իհարկե, խփել, բայց հարվածն ընկավ Լյուդմիլայի այտին թափից, ուժգին եւ զրնգուն: Լյուդմիլան ցնցվեց, օրորվեց, շառագունեց արյան կարմրությամբ, բայց Սաշային ձեռքից բաց չթողեց:

-Չար տղա, կռիվ է անում,- շնչահատ ձայնով ճչաց նա:

Սաշան սաստիկ շփոթվեց, ձեռքերը վար բերեց ու մեղավոր նայում էր Լյուդմիլայի ձախ այտով մեկ ձգված ճերմակավուն բծերին, հետքերին իր մատների: Լյուդմիլան օգտվեց նրա շվարմունքից: Նա արագ իջեցրց նրա վերնաշապիկը երկու ուսերից մինչեւ արմունկները: Սաշան ուշքի եկավ, պոկվեց նրանից, բայց ավելի վատ եղավ,- Լյուդմիլան ճարպկորեն պոկեց թեւքերը նրա թեւերից,- վերնաշապիկն իջավ մինչեւ գոտկատեղը: Սաշան ցուրտ եւ նոր ամոթի ալիք զգաց, պարզ ո անողոք, գլուխը պտտեցնող: Հիմա Սաշան մինչեւ գոտկատեղը բաց էր: Լյուդմիլան ամուր բռնել էր նրա ձեռքից եւ դողացող ձեռքով խփում էր նրա մերկ մեջքին, նայելով նրա կապտասեւ թարթիչների տակ վար հառած, տարօրինակ-պսպղուն աչքերին:

եւ հանկարծ այդ թարթիչները թրթռացին, դեմքն այլայլվեց խեղճ մանկական ծամածռանքով,- եւ նա արտասվեց, հանկարծ, հոնկուր-հոնկուր:

-Չարաճճուհի,- հեծկլտացող ձայնով գոռաց նա,- թողեք:

-Նվնվաց երեխան - բարկացկոտ ու շփոթված ասաց Լյուդմիլան եւ հրեց նրան:

Սաշան շրջվեց, ափերով արցունքները սրբելով: նա ամաչեց, որ լաց էր լինում: Նա ջանում էր զսպել իրեն: Լյուդմիլան ագահորեն նայում էր նրա մերկ մեջքին:

«Որքան հիասքանչություն կա աշխարհում,- մտածում էր:- Սարդիկ իրենցից այնքան գեղեցկություն են թաքցնում,- ինչո՞ւ:

Սաշան ամոթխած կծկվելով մերկ ուսերով, փորձեց հագնել շապիկը. բայց այն միայն ճմռթվում, ճաքճքում էր նրա դողացող ձեռքերի տակ, եւ ոչ մի կերպ չէր ստացվում ձոքը թեւքերի մեջ խցկել: Սաշան ճանկեց բլուզը,- դե թող շապիկը դեռ մնա:

-Ախ, ձեր սեփականության համար վախեցաք: Չեմ գողանա,- ասաց Լյուդմիլան չար արցունքներից զրնգացող ձայնով:

Նա թափով նրան նետեց գոտին եւ շրջվեց դեպի պատուհանը: Սոխրագույն բլուզով փաթաթված, Շատ պետք է նա նրան, գեշ տղեկը, կոտրատվող այլանդակը:

Սաշան արագ հագավ բլուզը, մի կերպ շտկեց վերնաշապիկը եւ վախվորած, անվսահ եւ ամոթխած նաեց Լյուդմիլային: Նա տեսավ, որ նա ձեռքերով այտերն է սրբում, երկչոտ մոտեցավ նրան եւ նայեց նրա դեմքին,- եւ արցունքները, որ հոսում էին նրա այտերով, հանկարծ նրան թունավորեցին նրա հանդեպ քնքուշ խղճահարությամբ, եւ նրա համար արդեն ոչ ամոթ էր, ոչ էլ տհաճ:

-Դե ի՞նչ եք դուք լալիս, սիրելի Լյուդմիլոչկա,- կամացուկ հարցրեց նա:

Եւ հանկարծ շառագունեց,- հիշեց իր հարվածը:

Ես ձեզ խփեցի, կներեք: Չէ որ ես դտմամբ չարեցի,- երկչոտ ասաց նա:

-Կհալվե՞ս, ի՞նչ է, հիմար տղա, եթե մերկ ուսերով նստես,- ասաց Լյուդմիլան բողոքող ձայնով:- Կայրվես, վախենում ես: Գեղեցկությունն ո անմեղությունը քեզանից կքաշվեն:

-Դե քո ինչի՞ն է պետք, Լյուդմիլոչկա,- ամաչկոտ ծամածռությամբ հարցրեց Սաշան:

-ինչո՞ւ,- կրքոտ խոսեց Լյուդմիլան:- Սիրում եմ գեղեցկությունը: Հեթանոս եմ ես, մեղավոր: Ինձ պետք էր հին Աթենքում ծնվել: Սիրում եմ ծաղիկներ, օծանելիք, վառ զգեստներ, մերկ մարմին: Ասում են, հոգի կա, չգիտեմ, չեմ տեսել: Դե եւ ինչի՞ս է այն պետք: Թող մեռնեմ լրիվ, ինչպես ջրահարս, ինչպես ամպիկ արեւի տակ հալչեմ: Ես մարմինն եմ սիրում ուժեղ, ճարպիկ, մերկ, որը կարող է ախորժանք ապրել:

-Այո, բայց չէ որ կարող է եւ տառապել,- կամացուկ ասաց Սաշան:

-Եւ տառապել, եւ դա լավ է,- կրքոտ շշնջում էր Լյուդմիլան:- Քաղցր է եւ երբ ցավոտ է,- միայն թե մարմինը զգաս, միայն թե տեսնես մարմնական մերկությունն ու գեղեցկությունը:

-Բայց չէ՞ որ ամոթ է առանց հագուստի,- երկչոտ ասաց Սաշան:

Լյուդմիլան թափով նրա առաջ ծնկի եվեց: Ծնչահատվելով, համբուրելով նրա ձեռքերը, շշնջում էր.

-Սիրելիս, իմ կուռք, պատանի աստվածահավասար, մի որպե հիանամ քո ուսիկներով:

Սաշան հոգոց հանեց, կարմրեց եւ անշնհորք կերպով հանեց իր բլուզը: Լյուդմիլան տաք ձեռքերով ճանկեց նրան եւ համբույրներով ծածկեց նրա ամոթից ցնցվող ուսերը:

-Ահա թե ինչ լսող եմ ես,- ասաց Սաշան, բռնի ժպտալով, որպեսզի կատակով քշեր շփոթմունքը:

Լյուդմիլան փութանակի համբուրում էր Սաշայի ձեռքերը ուսերից մինչեւ մատները, եւ Սաշան ետ չէր քաշում դրանք, խորասուզված կրքոտ եւ դաժան երազների մեջ: Հուզմունքով էին ջերմացած Լյուդմիլայի համբույրները, եւ արդեն ասես ոչ թե տղայի, ասես պարմանի-աստծո էին լափլիզում նրա ջերմ շուրթերը ծաղկող Մարմնի սարսռալի ու խորհրդավոր ծառայության մեջ:

Իսկ Դարյան ո Վալերիան կանգնած էին դռան եեւում եւ փոխնի-փոխ, անհամբերությունից միմյանց հրմշտելով, նայում էին բանալո անցքից եւ քարանում էին կրքոտ ու այրող հուզմունքից:

***

Դե ժամանակն է եւ հագնվելու,- ասաց վերջապես Սաշան:

Լյուդմիլան հոգոց հանեց եւ աչքերի մեջ միեւնույն ակնածանքով նրան հագցրեց շապիկն ու բլուզը, պատկառանքով եւ զգույշ ծառայելով նրան:

-Դու ուրեմն՝ հեթանո՞ս ես,- տարակուսանքով հարցրեց Սաշան:

Լյուդմիլան զվարթ ծիծաղեց:

-Իսկ դո՞ւ,- հարցրեց նա:

-Դե ահա քեզ,- վստահ պատասխանեց Սաշան. - ես ողջ կատեխիզիսն հաստատապես գիտեմ:

Լյուդմիլան քրքջում էր: Սաշան նայելով նրան, ժպտաց ու ասաց.

-Եթե դու՝ հեթանոս ես, ուրեմն ինչո՞ւ ես եկեղեցի գնում:

Լյուդմիլան դադարեց ծիծաղել, մտքերի մեջ ընկավ:

-Դե ինչ,- ասաց նա,- դե պետք է աղոթել: Աղոթել, լալ, մոմ դնել, ողորմություն տալ, հիշատակել: Եւ ես այդ ամենը սիրում եմ, մոմերը, ջահերը, խունկը, շուրջառները, երգեցողությունը,- եթե երգողները լավն են,- սրբապատկերները, դրանք մետաղե դրվագներ ունեն, ժապավեններ: Այո, այդ ամենը այքան հիասքանչ է: Եւ նաեւ սիրում եմ... գիտես, խաչյալին...

Լյուդմիլան արտաբերեց վերջին բառերը լրիվ կամացուկ, համարյա շշուկով, կարմրեց, հանց մեղավոր. եւ աչքերը վար բերեց:

-Գիտես, երբեմն երազվում է,- նա խաչի վրա, եւ մարմնի վրա արյան կաթիլներ:

***

Այդ ժամանակվանից Լյուդմիլան բազմիցս, Սաշային տանելով իր ննջարան, սկսում էր արձակել նրա բաճկոնը: Սկզբում նա լալու աստիճան ամաչում էր, բայց շուտով ընտելացավ: Եւ արդեն նայում էր պարզ ու հանգիստ, ինչպես էր Լյուդմիլան իջեցնում իր շապիկը, մերկացնում էր նրա ուսերը, շոյում եւ խփում էր մեջքին: Եւ արդեն, վերջապես, ինքն էր սկսում հանվել:

Եւ Լյուդմիլային հաճեի էր նրան բռնելը, կիսամերկ, իր ծնկների վրա, գրկած, համբուրելով:

***

Սաշան մենակ էր տանը: Նա հիշեց Լյուդմիլային ու նրա մերկ ուսերն իր ջերմին հայացքի ներքո:

«Եւ ի՞նչ նա ուզում»,- մտածեց նա: Եւ հանկարծ բոսորավառ կարմրեց, եւ ցավոտ-ցավոտ սիրտը խփեց: Սոլեգին զվարթություն համակեց նրան: Նա մի քանի անգամ շուռումուռ եկավ, նետվեց հատակին, թռչում էր կահույքի վրա,- հազարավոր խենթ շարժումները մի անկյունից մյուսն էին նետում, եւ խնդագին, պարզ քրքիջ էր տարածվում տնով մեկ:

Կոկովկինան այդ ժամանակ վերադարձավ տուն, անսովոր աղմուկ լսեց եւ մտավ Սաշայի վերնասենյակ: Տարակուսանքի մեջ նա կեցավ շեմին եւ գլուխն էր տարուբերում:

-Այդ ինչ ես դու դիվոտում, Սաշենկա,- ասաց նա,- դե դիվոտեիր ընկերներիդ հետ, թե չէ մենակ ես դիվոտում: Ամաչիր, տեր իմ,- փոքր չես:

Սաշան կանգնել էր, եւ շփոթմունքից նրա ձեռքերն ասես անշարժացել էին, ծանր, անհմուտ,- իսկ ողջ մարմինը դեռ հուզմունքից դողում էր:

***

մի անգամ Կոկովկինան Լյուդմիլային իր մոտ գտավ,- նա Սաշային կոնֆետ էր կերակրում:

-չարաճճուհի եք դուք,- քնքշորեն ասաց Կոկովկինան,- դե քաղցր նա սիրում է:

-Դե ահա նա ինձ կռվազան է ասում,- բողոքեց Լյուդմիլան:

-Ախ, Սաշենկա, միթե կարելի է,- քնքուշ կշտամբանքով ասաց Կոկովկինան:- Դե այդ ինչո՞ւ ես դու այդպես ասում:

-Դե նա ինձ քաշքշում է,- կմկմալով ասաց Սաշան:

Նա բարկացկոտ նայում էր Լյուդմիլային ու բոսորավառ կարմրում էր: Լյուդմիլան քրքջում էր:

Բամբասկոտ,- շշնջաց նրան Սաշան:

-Դե ինչպես արելի է, Սաշենկա, կոպտել,- հանդիմանում էր Կոկովկինան:- Չի կարելի կոպտել:

Սաշան քմծիծաղելով նայեց Լյուդմիլային եւ կամացուկ շշնջաց.

-Դե, էլ չեմ անի:

***

Հիմա արդեն ամեն անգամ, երբ Սաշան գալիս էր, Լյուդմիլան փակվում էր նրա հետ եւ սկսում էր նրան հանվեցնել եւ տարբեր համդերձանքներով զուգել: Ծիծաղով եւ կատակներով էր հանդերձավորվում նրանց քաղցր ամոթը: Երբեմն Լյուդմիլան Սաշային սեղմիրանի մեջ էր առնում եւ իր զգեստն էր հագցնում: Դեկոլտեավոր իրանակալի մեջ Սաշայի ձեռքերը, լիքը եւ նրբին-կլորիկացած, եւ նրա կլոր ուսերը շատ գեղեցիկ էին թվում: Նրա մաշկը դեղնավուն էր, բայց ինչ-որ հազվադեպ է պատահում, հավասար, նրբին գույնի: Լյուդմիլայի շրջազգեստը, մաշիկները, գուլպաները՝ ամեն ինչ Սաշայի հագով էր եւ ամեն ինչ սազում էր նրան: Իր վրա կանացի հանդերձանքը հագնելով Սաշան հնազանդ նստել եւ հովհարն էր թափահարում: Այդ հանդերձանքով նա իրոք աղջկա նման էր եւ ջանում էր իրեն աղջկա պես պահել: Մի բանն էր միայն անհարմար՝ Սաշայի խուզած մազերը: Սաշայի գլխին կեղծամ հագցնել կամ ծամ կապել Լյուդմիլան չէր ուզում՝ զզվելի է:

Լյուդմիլան Սաշային սովորեցնում էր ռեւերանսներ անել: Անհմուտ եւ ամաչկոտ նա սկզբում կքանստում էր Բայց նրա մեջ տղայական

անաշությանը միախառնված նազանիություն կար: Կարմրելով ու ծիծաղելով, նա ջանասիրաբար սովորում էր ռեւերանսներ անել եւ հախուռն կոկետություն էր անում: Երբեմն Լյուդմիլան վերցնում էր նրա ձեռքերը, մերկացած եւ բարեկազմ, եւ համբուրում էր դրանք: Սաշան չէր դիմադրում եւ ծիծաղելով նայում էր Լյուդմիլային: Երբեմն նա ինքն էր ձեռքերը դեմ տալիս նրա շուրթերին ու ասում էր.

-Համբուրիր:

Բայց ամենից շատ իրեն եւ նրան դուր էին գալիս հենց Լյուդմիլայի կարած հանդերձանքները՝ մերկ ոտքերով ձկնորսի հագուստը, աթենացի բոկոտն տղայի քիթոնը:

Զուգում է նրան Լյուդմիլան եւ հիանում է: Իս ինքը դժգունում, տրտմում է:

***

Սաշան նստել էր Լյուդմիլայի անկողնի վրա, հավաքում էր քիթոնի ծալքերը եւ տարուբեռում էր մերկ ոտքերը: Լյուդմիլան կանգնել էր նրա առաջ եւ երջանկության եւ տարակուսանքի արտահայտությամբ նայում էր նրան:

-Ի՞նչ հիմարն ես դու,- ասաց Սաշան:

-Իմ հիմարության մեջ այնքան շատ երջանկություն կա,- թոթովում էր դժգույն Լյուդմիլան, արտասվելով ու համբուրելով Սաշայի ձեռքերը:

-Իսկ ինչո՞ւ դու արտասվեցիր,- անհոգ ժպտալով, հարցրեց Սաշան:

-Իմ սիրտը խայթված է ուրախությամբ: Իմ կուրծքը ծակել են երջանկության յոթ սրերը,- ինչպես ես չարտասվեմ:

-Հիմարիկ ես դու, իրոք, հիմարիկ,- ծիծաղելով ասաց Սաշան:

-Իսկ դու՝ խելոք ես,- հանկարծակի սրտնեղությամբ պատասխանեց Լյուդմիլան, սրբեց արցունքներն ու հոգոց հանեց:- Հասկացիր, հիմար,- խոսեց նա կամացուկ համոզիչ ձայնով,- միայն խելագարության մեջ է երջանկությունն ու իմաստությունը:

-Դե հա,- անվստահ ասաց Սաշան:

-Հարկ է մոռանալ, ուշքը կորցնել, եւ աղժամ ամեն ինչ կհասկանաս,- շշնջում էր Լյուդմիլան:- Ըստ քեզ, ինչպե՞ս է, իմաստուն մարդիկ մտածո՞ւմ են:

-Դե ուրիշ ինչպե՞ս:

-Նրանք այդպես գիտեն: Նրանց մեկեն տրված է՝ միայն կնայի, եւ արդեն ամեն ինչ բաց է...

***

Լուռ ծգվում էր աշնանային երեկոն: Պատուհանից հազիվ լսելի երբեմն հասնում էր շրշյունը, երբ քամին հընթացս տարուբերում էր ծառերի ճյուղերը: Սաշան ու Լյուդմիլան մենակ էին: Լյուդմիլան նրան հագցրել էր մերկոտն ձկնորսի պես,- կապույտ զգեստը նրբին կտավից,- պառկեցրել էր ցածրիկ մահճակալի վրա եւ նստել էր նրա բոբիկ ոտքերի մոտ, բոբիկ, միայն վերնաշապկով: Սաշայի եւ հագուստը, եւ մարմինը նա օծանելիքներով էր ցողել,- դրանք հոծ, խոտավետ եւ բեկուն բույր ունեին, ինչպես սարերում փակված տարօրինակծաղկող հեռաստանի ներփակ ոգին:

Լյուդմիլայի վզի վրա շողշողում էին վառ խոշոր հուլունքները, ոսկյա նախշազարդ ապարանջանները զրնգում էին ձեռքերի վրա: Նրա մարմնից հիրիկի բույր էր գալիս,- հեղձուցիչ, տափակ, գրգռող, նինջ ու ծուլություն բերող, դանդաղ ջրերի գոլորշիով հագեցած: Նա տոչորվում եւ հոգոց էր անում, եւ նայում էր նրա թուխ դեմքին, նրա կապտասեւ թարթիչներին, կեսգիշերային աչքերին: Նա գլուխը դրել էր նրա մերկ ծնկներին, եւ նրա բացագույն խոպոպները շոյում էին նրա թուխ մաշկը: Նա համբուրում էր Սաշայի մարմինը, եւ բուրմունքից, տարօրինակ եւ ուժեղ, երիտասարդ մաշկի հոտին միախառնված, նրա գլուխը պտտվում էր:

Սաշան պառկել ու ժպտում էր հանդարտ, անհաստատ ժպիտով: Նրա մեջ անպարզ ցանկություն էր ծնվում եւ քաղցր տոչորում էր նրան: Եւ երբ Լյուդմիլան համբուրում էր իր ծնկներն ու թաթերը, քնքուշ համբույրները բարկ, կիսանիրհուն երազանքներ էին առաջացնում: Նա ուզում էր նրան ինչ-որ բան անել, հաճելի կամ ցավոտ, քնքուշ կամ ամոթալի,- բայց ի՞նչ: Համբուրել նրա ոտքե՞րը: Կամ ծեծել նրան, երկար, ուժգին, երկար ճկուն ճյուղերո՞վ: Որպեսզի նա բերկրանքից ծիծաղի կամ ցավից ճչա՞: Ահա նրանք երկուսն է կիսամերկ, եւ նրանց ազատված մարմնի հետ է կապված ցանկությունը եւ պահպանիչ ամոթը,- բայց ի՞նչն է այդ մարմնի գաղտնախորհորդը: Եւ ինչպես բերես քո արյունն ու քո մարմինը նրա ցանկություններին եւ իր ամոթին քաղց-

ռալի զոհ: Իսկ Լյուդմիլան տոչորվում եւ դեսուդեն էր նետվում նրա ոտքերի մոտ, դալուկ նրա անհնարին ցանկություններից, մեկ այրվելով, մեկ պաղելով: նա կրքոտ շշնջում էր.

-Արդյոք ես գեղեցկուհի չեմ: Արդյոք իմ աչքերը կիզիչ չեն: Արդոք իմ մազերը փարթամ չեն: Դե փաղաքշիր ինձ: Դե շոյիր ինձ, պոկիր ինձանից ապրանջանը, հանիր իմ մանյակը:

Սաշան սկսեց սարսափել, եւ անհնարին ցանկությունները տանջալիորեն տոչորում էին նրան:

XXVII

Պերեդոնովն արթնացավ լուսադեմին: Ինչ-որ մեկը վիթխարի, պղտոր, քառանկյունի աչքերով նրան էր նայում: Արդյոք դա Պիլնիկովը չէ՞ր: Պերեդոնովը մոտեցավ պատուհանին եւ չարագույժ ուրվականի վրա ջուր լցրեց:

Ամեն ինչի վրա հմայքներ ու հրաշքներ էին: Ճղճղում էր վայրի դարձվորյակը, բարկացկոտ եւ դավադրաբար Պերեդոնովին էին նայում եւ մարդիկ, եւ կենդանիները: Ամեն ինչ թշնամի էր նրան, նա միայնակ էր ամենքի դեմ:

Գիմնազիայում դասերին Պերեդոնովը չարախոսում էր իր ծառայակիցներից, տնօրենից, ծնողներից, աշակերտներից: Գիմնազիստները վրդովմունքով լսում էին: Գտնվում էին Ոմանք, ըստ բնույթի գռեհիկները, որոնք հարմարվում էին Պերեդոնովին, արտահայտում էին նրան իրենց կարեկցանքը: իսկ մյուսները խիստ լռում էին կամ, երբ Պերեդոնովը կպչում էր նրանց ծնողներին, կրքոտ միջամտում էին: Այդպիսիներին Պերեդոնովը նայում էր մռայլ եւ նրանցից, ինչ-որ բան քրթմնջալով, հեռու էր կենում:

Որոշ դասերին Պերեդոնովը գիմնազիստներին ծիծաղեցնում էր անհեթեթ մեկնություններով:

մի անգամ կարդում էր ուշկինի բանաստեղծությունը.

Ելնում է արշալոյսը վաղ մուշում:
Արտերում գործերի աղմուկն է լռել,
Իր սոված գայլուհու հետ
Գայլն է ճամփա ելնում:

-Կանգնեք,- ասաց Պերեդոնովը,- սա պետք է լավ հասկանալ: Այստեղ այլաբանություն է թաքնված: Գայլերը զույգ-զույգ են քայլում՝ գայլը սոված գայլուհու հետ: Գայլը՝ կուշտ է, իսկ նա՝ սոված Կինը միշտ պետք է ամուսնուց հետո ուտի: Կինը ամեն ինչում պիտի ենթարկվի ամուսնուն:

Պիլնիկովը զվարթ էր, նա ժպտում ե նայում էր Պերեդոնովին խաբուսիկ-մաքուր, սեւ, անհատակ աչքերով: Սաշայի դեմքը տանջում եւ գայթաղում էր Պերեդոնովին: Դյութում էր նրան անիծյալ լակոտը իր դավադիր ժպիտով: Դե եւ տղա՞ է արդյոք: Կամ, գուցե թե, նրանք երկուսն են՝ քույր ու եղբայր: եւ չես տարբերի, ով որտեղ է: Կամ, նույնիսկ, գուցե թե, նա կարողանում է տղայից աղջկա վերածվել: Զուր չէ, որ նա միշտ այդքան մաքուր է,- փոխակերպվելիս զանազան կախարդական ջրերով է պարզացողվում,- այլ կերպ չէ որ չի կարելի, չես փոխակերպվի: Եւ միշտ նրանից օծանելիք է բուրում:

-Այդ ի՞նչ եք դուք օծանվել, Պիլնիկով,- հարցրեց Պերեդոնովը,- կեղտերո՞վ, ի՞նչ է:

Տղաները ծիծաղեցին: Սաշան նեղացած կարմրեց ու լռեց:

Զուտ դուր գալու ցանկությունը, զզվելի չլինելը Պերեդոնովը չէր հասկանում: Ամենայն այդպիսի դրսեւորում, թեկուզ ե տղեկի կողմից, նա համարում էր որսորդություն իր վրա: Ով զուգվել է, նա, կնշանակի, եւ մտադիր է Պերեդոնովին հմայել: Թե չէ ինչո՞ւ զուգվել: Զուգվածությունն ու մաքրությունը Պերեդոնովի համար նողկալի էին, օծանելիքները նրան գարշահոտ էին թվում. ամենայն օծանելիքին նա գերադասում էր գոմաղբով պարարտացած դաշտը, ըստ նրա կարծիքի, առողջության համար օգտակար: Զուգվելը, մաքրվելը, լվացվելը՝ այդ ամենի համար ժամանակ ու աշխատանք է պետք. աշխատանքի մասին միտքը Պերդոնովին համակում էր անձկությամբ եւ վախով: Լավ կլինի ոչինչ չանել, ուտել, խմել, քնել՝ եւ միայն:

Ընկերները ծաղրում էին Սաշային, որ նա «կեղտերով» է օծվել եւ որ Լյուդմիլոչկան նրան սիրահարված է: Նա շիկնում եւ մոլեգին առարկում էր. ոչ էլ, իբր, սիրահարված է, այդ ամենն, իբր, Պերեդոնովի մոգնած բաներն են՝ դե իբր նա ուզում էր պսակվել Լյուդմիլոչկայի հետ, իսկ Լյուդմիլոչկան նրա քիթը քաշեց, ահա եւ նրա վրա բարկանում է եւ նա մասին վատ լուրեր է տարածում: Ընկերները նրան հավատում էին,-

Պերեդոնովը, հայտնի է,- բայց չէին դադարում նրան ծանակել՝ ծաղրելն այնքան հաճելի է:

Պերեդոնովը համառորեն բոլորին ասում էր Պիլնիկովի այլասերության մասին:

Լյուդմիլկայի հետ է կապվել,- ասում էր նա:- Այնքան ջանադիր համբուրվում են, որ նա արդեն մեկին պատրաստ ծնել է, հիմա մյուսին է կրում:

Լյուդմիլայի առ գիմնազիստը սիրո մասին խոսեցին քաղաքում չափազանցված, հիմար, անպատկառ մանրամասներով: բայց քչերն էին հավատում՝ Պերեդոնովը չափն անցել էր: Սակայն ծանակելու սիրահարները,- չէ որ դրանք մեր քաղաքում բավական շատ են,- հարցնում էին Լյուդմիլային.

-Դուք այդ ի՞նչ եք տղեկի սիրահարվել: Մեծահասակ սիրատածուների համար վիրավորական է:

Լյուդմիլան ծիծաղում եւ ասում էր.

-Հիմարություններ:

Քաղաքացիք նայում էին Սաշային աղտեղի հետաքրքրությամբ: Գեներալ Պոլույանովի այրին, հարուստ մի կին վճառականուհիներից, տեղեկանում էր նրա տարիքի մասին եւ գտավ, որ նա դեռ չափազանց փոքր է, բայց որ մի երկու տարուց նրան կկանչի եւ զբաղվի նրա զարգացմամբ:

Սաշան արդեն սկսել էր եւ երբեմն Լյուդմիլային կշտամբել, որ իրեն նրա պատճառով ծանակում են: Նույնիսկ երբեմն, պատահում էր, թակում էր, ինչից Լյուդմիլան զրնգուն քրքջում էր:

Սակայն որպեսզի վերջ դնեն հիմար բամբասանքներին եւ Լյուդմիլային տհաճ պատմությունից պաշտպանելու համար, բոլոր Ռուտիլովներն ու նրանց բազմաթիվ ընկերները, բարեկամներն ու խնամիները ջանադիր գործում էին Պերեդոնովի դեմ եւ ապացուցում էին, որ բոլոր այդ ֆանտազիաները՝ խելագար մարդու ֆանտազիա են: Պերեդոնովի վայրի արարքները շատերին էին ստիպում հավատալ այդպիսի բացատրություններին:

Միաժամանակ մատնագրեր տեղացի Պերեդոնովի վրա ուսումնական շրջանի հոգաբարձուին: Շրջանից հարցում ուղարկեցին տնօրենին: Խրիպաչը վկայակոչեց իր նախկին տեղեկացումները եւ հավելեց,

որ Պերեդոնովի հետագա մնալը գիմնազիայում դառնում է հաստատապես վտանգավոր, քանի որ նրա հոգեկան հիվանդությունը նկատելի զարգանում է: Պերեդոնովն արդեն վայրի պատկրացումների իշխանության տակ է: Ուրվականները նրանից ծածկել էին աշխարհը: Նրա աչքերը, խենթ, բութ, հածում էին, առարկաների վրա կանգ չառնելով, ասես նա միշտ կամենում էր, դրանց հեռուն տեսնել, առարկայական աշխարհից անդին, եւ նա ինչ-որ լուսաառաքումներ էր փնտրում:

Մենակ մնալով, նա ինքն իր հետ խոսում էր, ինչ-որ մեկին անիմաստ սպառնալիքներ էր գոռում.

-Կսպանեմ, կմորթեմ, կխծուծեմ:

Իսկ Վարվարան լսում եւ քմծիծաղում էր.

«Դիվոտիր»,- չարախնդորեն մտածում էր նա:

Նրան թվում է, դե դա՝ լոկ չարություն է՝ գլխի է ընկնում, որ իրեն խաբել են, եւ չարանում է: Խելքը չի թոցնի, հիմարը խելքը կորցնելու բան չունի: Իսկ եթե թոցնի էլ, դե ինչ, խելագարությունը հիմարներին զվարճացնում է:

-Գիտեք, Արդալյոն Բորիսիչ,- մի անգամ ասաց Խրիպաչը,- դուք շատ անառողջ տեսք ունեք:

-Գլուխս ցավում է,- մռայլ ասաց Պերեդոնովը:

-Գիտեք ինչ, հարգելիս,- զգույշ ձայնով շարունակում էր տնօրենը,- ես ձեզ խորհուրդ կտայի դեռես գիմնազիա չգալ: Դե բուժվեիք, հոգ տանեիք ձեր նյարդերի մասին, որոնք ձեզ մոտ, հավանաբար, բավական քայքայված են:

««Չգալ գիմնազիա: Իհարկե,- մտածում էր Պերեդոնովը,- դա ամենալավն է: Ինչպես ես առաջ գլխի չէի ընկել: Հիվանդ ձեւանալ, տանը նստել, նայել, թե դրանից ինչ դուրս կգա»:

-Այո, այո, չեմ գա, ես հիվանդ եմ,- ուրախալի ասում էր նա Խրիպաչին:

Տնօրենն ադ ընթացքում մեկ անգամ էլ էր գրել շրջան եւ օրը օրին բուժաքննման համար բժիշկների նշանակմանն էր սպասում : Բայց չինովնիկները չէին շտապում: Դե դրա համար էլ նանք չինովնկներ են:

Պերեդոնովը գիմնազիա չէր գնում եւ նույնպես ինչ-որ բանի էր սպասում: Վերջին օրերս նա անընդհատ կպչում էր Վոլոդինին: Սարսափելի էր նրան աչքից բաց թողնելը,- հանկարծ վնաս չտա: Արդեն

առավոտից, հենց արթնանում էր, Պերեդոնովն անձկությամբ հիշում էր Վոլոդինին՝ որտե՞ղ է նա հիմա, ինչ որ բան անո՞ւմ է: Երբեմն Վոլոդինը նրա աչքին էր երեւում՝ ամպերը լողում էին երկնքով, հանց ոչխարների հոտ, եւ դրանց միջեւ վազում է Վոլոդինը թասակը գլխին, մկկացող ծիծաղով. խողովակներից ելնող ծխում, եբեմն արագ անցնում էր նա, այլանդակ ծամածռվելով եւ օդում ցատկելով:

Վոլոդինը մտածում եւ բոլորին հպարտությամբ պատմում էր որ Պերեդոնովն իրեն շատ սիրեց՝ պարզապես առանց նրա չի կարողանում արել:

-Վարվարան նրան խաբեց,- ասում էր Վոլոդինը,- իսկ նա տեսնում է, որ միայն ես եմ նրան հավատարիմ ընկեր, դե նա էլ ինձ է կպչում:

Ելնում է Պերեդոնովը տնից, Վոլոդինին այցելելու, իսկ նա արդեն նրան հանդիման է գալիս, թասակով, ձեռնափայտով, խնդուն ցատկոտում է, բերկրալի մկկացող ծիծաղով է բռնվում:

-Այդ նչո՞ւ ես դու թասակով,- մի անգամ նրան հարցրեց Պերեդոնովը:

-Իսկ ինչո՞ւ ես, Արդալյոն Բորիսիչ, թասակ չդնեմ,- զվարթ եւ կշռադատված պատասխանեց Վոլոդինը,- համեստ եւ պատշաճ է: Ինձ աստղանշանով գդակ չի կարելի, իսկ ցիլինդր կրել՝ դե դա թող ազնվականները պարապեն, մեզ դա չի սազում:

-Դու թասակի մեջ կեփվես,- մռայլ ասաց Պերեդոնովը:

Վոլոդինը քթի տակ ծիծաղեց:

Գնացին Պերեդոնովի մոտ:

-Ախ ինչքան քայլել է պետք,- զայրացկոտ ասաց Պերեդոնովը:

-Դա օգտակար է, Արդալյոն Բորիսիչ, զբոսնելը,- համոզում էր Վոլոդինը,- կաշխատես, կզբոսնես, կուտես՝ առողջ կլինես:

-Դե հա,- առարկում էր Պերեդոնովը,- դու կարծում ես, երկու հարյուր կամ երեք հարյուր տարի հետո մարդիկ աշխատելո՞ւ են:

-Դե իսկ ի՞նչ: Չես աշխատի, ուրեմն հաց էլ չես ուտի: Հացը փողով են տալիս, իսկ փողն աշխատել է պետք:

-Ես հաց չեմ էլ ուզում:

-Եւ բուլկի, եւ կարկանդակ էլ չի լինի,- քմծիծաղելով ասում էր Վոլոդինը,- եւ օղի առնելու բան էլ չես ունենա, եւ թրմօղի սարքելու բան էլ չի լինի:

-Չէ, մարդիկ իրենք չեն աշխատի,- ասաց Պերեդոնովը,- ամեն ինչի համար մեքենաներ կլինեն՝ բռնակը պտտացրիր, արիստոնի պես, եւ պատրաստ է... Դե եկար պտտելն էլ տաղտկալի է:

Վոլոդինը մտակալեց, գլուխը հակեց, շուրթերը փքեց ե մտորուն ասաց.

-Հա, դա շատ լավ կլինի: Միայն թե մենք արդեն չենք լինի:

Ժերեդոնովը չարալի նայեց նրան ու մռթմռթաց.

-Այդ դու չես լինի, իսկ ես կնգեմ:

-Աստված տա,- զվարթ ասաց Վոլոդինը,- երկու հարյուր տարի ապրել եւ երեք հարյուր էլ չորեքթաթ սողալ:

Պերեդոնովն արդեն չիմայաթափվեց էլ,- ինչ լինում է լինի: Նա բոլորին հաղթահարի, ետք է միայն աչքերը չորս անել ու չտրվել:

Տանը, ճաշասենակում Վոլոդինի հետ նստած, Պերեդոնովը նրան պատմում էր իշխանուհու մասին: Իշխանուհին, Պերեդոնովի պատկերացման մեջ, օրը օրին զառամում եւ ավելի սարսափելի էր դառնում՝ դեղին, կնճռոտ, կորացած, ժանիքավոր, չար,- անդադրում երեւում էր Պերեդոնովի աչքին:

Նա երկու հարյուր տարեկան է,- ասում էր Պերեդոնովը եւ տարօրինակ ու տրտմալի նայում էր իր առջեւ:- Եւ նա ուզում է, որ ես իր հետ կապվեմ: Մինչդեռ այդ տեղն էլ չի ուզում տալ:

-Այ թե ինչ ուզեց,- գլուխը տարուբերելով, ասում էր Վոլոդինը:- Պառվուկի մեկը:

***

Պերեդոնովը սպանությամբ էր զառանցում: Նա Վոլոդինին ասում էր, կատաղի հոնքերը կիտելով.

-Այնտեղ ինձ մոտ պաստառների ետեւում արդեն մեկը թաքնված է: Իսկ ահա մյուսին գետնի տակով կանեմ:

Բայց Վոլոդինը չէր վախենում ու քմծիծաղում էր:

-Գարշահոտը զգո՞ւմ ես պաստառների տակից,- հարցրեց Պերեդոնովը:

-Չէ, չե զգում,- քմծիծաղելով ու կոտրատվելով, ասում էր Վոլոդինը:

-Քո քիթը փակվել է,- ասաց Պերեդոնովը,- զուր չէ քո քիթը կարմրել: Նեխում է այնտեղ, աստառների ետեւում:

-Փայտոջիլ է,- ճչաց Վարվարան ու քրքջաց: Պերեդոնովը նայում էր բութ եւ հանդիսավոր:

***

Պերեդոնովը, ավելի ու ավելի խորասուզվելով իր խելագարության մեջ, արդեն սկսել է մատնագրեր գրել խաղաթղթի ֆիգուրների վրա, դարձվորյակի վրա, ոչխարի վրա, որ նա, ոչխարը, ինքնակոչ է, իրեն Վոլոդինի տեղն է անցկացնում, մտադիր է մեծ պաշտոն ստանալ, իսկ ինքը՝ պարզապես ոչխար է. անտառահատների վրա,- ողջ կեչին հատեցին, շոգեհարվելու բան չկա եւ երեխաներին դաստիարակելը դժվար է, իսկ կաղամախին թողեցին, իսկ ինչի՞ն է պետք կաղամախին:

Փողոցում գիմնազիստներին հանդիպելիս, Պերեդոնովը սարսափեցնում էր փոքրիկներին եւ ծիծաղեցնում էր մեծերին անամոթ եւ անհեթեթ խոսքերով: Մեծահասակները նրա ետքից ամբոխով էին գնում, փախչելով, երբ տեսնում էին ուսուցիչներից որեւէ մեկին, փոքրերն իրենք էին նրանից փախչում:

Ամեն ինչում Պերեդոնովի աչքին դյութանքներ ու հրաշքներ էին երեւում, հալյուցինացիաները նրան սարսափեցնում էին, նրա կրծքից խեազար ոռնոցներ ու ճվճվոցներ պոկելով: Դարձվորյակը հայտնվում էր նրան մեկ արյունալի. մեկ բոցավառ, նա տնքում եւ ոռնում էր, եւ նրա ոռնոցը Պերեդոնովի գլուխը կոտրում էր անասելի ցավով: Կատուն սարսափելի չափերի աճում էր, խփում էր սապոգներով եւ շիկահեր երկայնահասակ բեղավոր էր ձեւանում:

XXVIII

Սաշան ճաշից հետո գնաց եւ նշանակված ժամին, յոթի կողմերը, չվերադարձավ: Կոկովկինան անհանգստացավ՝ Աստված չանի. որ ճիշտ ժամին ուսուցչների ձեռքի տակ ընկնի: Կպատժեն, դե եւ իր համար էլ անհարմար կլինի: Իր ոտ միշտ համեստ տղաներ էին մնում, որ գիշերները չէին թրեւում: Կոկովկինան գնաց Սաշային փնտրելու: Հայտնի է, դե ու, եթե ոչ Ռուտիլովների մոտ:

Թարսի պես, Լյուդմիլան այսօր մոռացել է դուռը գոցել: Կոկովկինան մտավ, եւ դե ի՞նչ տեսավ: Սաշան կագնած է հայելու առաջ կանացի զգեստով եւ հովհարով հով է անում: Լյուդմիլան քրքջում եւ շտկում

է վառ-գունավոր գոտու ժապավենները:

-Ախ, Տեր, կամքը քոնն է,- սարսափած բացականչեց Կոկովկինան,- դե այս ի՞նչ բան է: Ես անհանգստանում, փնտրում եմ, իսկ նա էստեղ կատակերգություն է սարքում: ախ ինչ ամոթ, շրջազգեստով էգուգվել: Դե եւ ձեզ էլ, Լյուդմիլա Պլատոնովնա, ինչպես ամոթ չէ:

Լյուդմիլան առաջին րոպեին շփոթվեց անսպասելիությունից, բայց շուտ ուշքի եկավ: Զվարթ ծիծաղով, գրկելով ու կոկովկինային բազկաթոռին նստեցնելով, նա տեղնուտեղը նրան հորինած մի բան պատմեց.

-Մենք ոգում ենք տնային բեմադրություն անել,- ես տղա եմ լինելու, իսկ նա աղջիկ, եւ դա չափազանց զվարճալի կլինի:

Սաշան կանգնած էր ամբողջովին կարմիր, վախեցած, արցունքերն աչքերին:

-Այ քեզ հիմարություններ,- զայրացկոտ ասում էր Կոկովկինան,- նա պետք է դասերը սվորի, այլ ոչ թե բեմադրություններ խաղա: Ինչ եք հորինել: Հաճիր տեղնուտեղը հագնվել, Ալեքսանդր, եւ մարշ ինձ հետ տուն:

Լյուդմիլան զրնգուն ու զվարթ ծիծաղում էր, համբուրում էր Կոկովկինային,- եւ պառավը մտածում էր, որ զվարթ աղջիկը մանկան պես երեխայամիտ է, իսկ Սաշան հիամարավարի պատրաստ է նրա բոլոր քմահաճությունները կատարելու: Լյուդմիլայի զվարթ ծիծաղը ցուցանում էր այս դեպքը որպես երեխայական չարաճիություն, որի համար պետք է լոկ մի լավ նախատել: Եւ նա փնթփնթում էր, բարկացկոտ դեմք ընդունելով, բայց նրա սիրտն արդեն հանգիստ էր:

Սաշան ժրաշարշ զգեստափոխվեց միջնորմի ետեւում, որտեղ դրված էր Լյուդմիլայի մահճակալը: Սաշան ամաչեցված եւ վախեցած, արդեն չէր էլ արդարանում: «Դե դեռ տանն ի՞նչ կլինի»,- վախվորած մտածում էր նա:

Իսկ տանը Կոկովկինան նրա հետ խիստ վարվեց, նրան կարգադրեց ծնկի գալ: Բայց հազիվ էր Սաշան մի քանի րոպե մնացել, երբ նա արդեն, նրա մեղավոր դեմքից խղճահարված, բաց թողեց նրան: Փնթփնթալով ասաց.

Պճնասերի մեկը, մի վերստի վրա օձանեիք է փչում:

Սաշան հմտորեն ոտքերն իրար խփեց, համբուրեց նրա ձեռքը,- եւ պատժված տղայի սիրալիրությունը ավելի շատ նրան հուզեց:

***

Այնինչ Սաշայի վրա ամպեր էին կուտակվում: Վարվարան եւ Գրուշինան հորինել ու Խրիպաչին էին ուղարկել անանուն նամակ առ այն, թե գիմնազիստ Պիլնիկովը տարված է օրիորդ Ռուտիլովայով, ողջ երեկոներ է նրա մոտ անցկացնում եւ անառակության է տրվում: Խրիպաչը վերջերս տեղի ունեցած մի խոսակցություն մտաբերեց: Օրերս ազնվականության ներկայացուցչի մոտ տեղի ունեցած երեկոյին ինչ-որ մեկը պարմանու սիրահարված օրիորդի կապակցությամբ , ոչ մեկի ուշադրությանը չարժանաված, մի ակնարկ արեց: Խոսակցությունը տեղնուտեղը անցավ այլ առարկաների՝ խրիպաչի ներկայությամբ բոլորը, մարդկանց լավ հասարկությանն ընտել, մունջ համաձայնությամբ, դա զրույցի համար միանգամայն անհարմար թեմա համարեցին եւ ձեւացրին, թե խոսակցությունն անհարմար է տիկնանց ներկայությամբ եւ որ ինքը խոսակցության առարկան չնչին ու քիչ հավանական է: Խրիպաչն այդ ամենը, իհարկե, նկատեց, բայց նա այնքան միամիտ չէր, որպեսզի ինչ-որ մեկին հարցներ: Նա լիովին համոզված էր, որ ամեն ինչ շուտով կիմանա, որ բոլոր տեղեկություններն իրենք են հասնում, այս կամ այլ ճանապարհով, բայց միշտ էլ բավական ժամանակին: Ահա այդ նամակն էլ սպասելի լուր էր:

Խրիպաչը ոոպե անգամ չհավատաց Պիլնիկովի այլասերությանը եւ այն բանին, որ նրա ծանոթությունը Լյուդմիլայի հետ անպատշաճ կողմեր ունի: «Դա,- մտածումէ ր նա,- գալիս է Պերեդոնովի միենույն հիմար հերյուրանքից եւ սնվում է Գրուշինայի նախանձոտ չարությամբ: Բայց այդ նամակը,- մտածում էր նա,- ցույց է տալիս, որ անցանկալի լուրեր են շրջում, որոնք կարող են ստվեր նետել իրեն վստահված գիմնազիայի արժանապատվության վրա: Եւ այդու հարկ է միջոցներ ձեռնարկել»:

Ամենից առաջ խրիպաչը հրավիրեց Կոկովկինային, որպեսզի նրա հետ խոսեր իրավիճակների մասին, որոնք կարող էն աջակցել անցանկալի խոսակցությունների ծագմանը:

Կոկովկինան արդեն գիտեր, թե բանն ինչ է: Նրան հաղորդել էին նույնիսկ ավելի պարզ, քան տնօրենին:

Գրուշինան սպասել էր նրան փողոցում, խոսակցություն էր բացել եւ պատմել էր, որ Լյուդմիլան վերջնականապես այլասերել է Սաշային:

Կոկովկինան ապշել էր: Տանը նա Սաշային կշտամբանքների տարափի տակ գցեց: Նա առավել քան սրտնեղած էր, որ ամեն ինչ տեղի էր ունենում համարյա իր աչքերի առաջ եւ Սաշան գնում էր Ռուտիլովների մոտ իր գիտությամբ: Սաշան ձեւացրեց, թե ոչինչ չի հասկանում, եւ հարցրեց.

-Դե ես ի՞նչ վատ բան եմ արել:

Կոկովկինան կարկամեց:

-Ինչպե՞ս ինչ վատ բան: Իսկ ինքդ դու չգիտե՞ս: Իսկ վաղո՞ւց էր, որ ես քեզ շրջազգեստով գտա: Սոռացե՞լ ես, անամոթի մեկը:

-Գտաք, դե եւ ի՞նչ առանձնահատուկ բան կա, չէ որ դրա համր էլ ինձ պատժեցիք: Եւ ի՞նչ է որ, ասես ես գողացած շրջազգեստ եմ հագել:

-Ասացեք խնդրեմ, ինչպես է դատում,- ասում էր մոլորված Կոկովկինան:

-Ես քեզ, երեւում է, քիչ եմ պատժել:

-Դե, էլի պատժեք,- ըմբոստ, անարդարացի նեղացվողի տեսքով, ասաց Սաշան:

-Ինքներդ այն ժամանակ ներեցիք, իսկ հիմա քիչ է: Իսկ ես այն ժամանակ չէի խնդրում ձեզ ներել, կկանգնեի ծնկածալ թեկուզ եւ ողջ երեկո: Թե ինչ, անընդհատ կշտամբել:

-Դե արդեն քաղաքում էլ, եղբայր, քո եւ քո Լյուդմիլայի մասին են խոսում,- ասաց Կոկովկինան:

-Իսկ ի՞նչ են ասում որ,- անմեղ-հետաքրքրասեր ձայնով հարցրեց Սաշան:

Կոկովկինան դարձյալ կարկամեց:

-Ինչ են ասում,- հայտնի թե ինչ: Ինքդ գիտս, թե ինչ կարելի է ձեր մասին ասել: Դե լավ բան քիչ կասեն: Ծատ ես դու քո Լյուդմիլայի հետ չարաճճիություններ անում, ահա թե ինչ են ասում:

-Դե ես չարաճճիություն չեմ անի,- խոստացավ Սաշան այնքան հանգիստ, ասես խոսքը պահմտոցի խաղալու մասին էր:

Նա անմեղ դեմք ընդունեց, իսկ նրա հոգում ծանր էր: Նա հարցուփորձում էր Կոկովկինային, թե ինչ են խոսում, եւ վախենում էր ինչ-որ կոպիտ խոսքեր լսել: Ի՞նչ կարող են խոսել իրենց մասին: Լյուդմիլայի վերնասենյակը պատուհաններով դեպ այգի է դուրս գալիս, փողոցից այն չի երեւում, դե Լյուդմիլոչկան էլ վարագույրներն իջեցնում է: Իսկ

եթե մեկը աչք է ածել, ապա ինչպե՞ս կարող են այդ մասին խոսել: Գուցե թե, սրտնեղիչ, վիրավորական խոսքե՞ր են: Կամ էլ այդպես խոսում են, միայն այն մասին, որ նա հաճախ է գնո՞ւմ:

Եւ ահա հաջորդ օրը Կոկովկինան հրավեր ստացավ տնօրենի մոտ: Այն լրիվ տագնապեցրեց պառավին: Նա արդեն Սաշային ոչինչ չէր էլ ասում, կամացուկ հավաքվեց եւ նշանակված ժամին ուղեւորվեց: Խրիպաչը սիրալիր փափկանկատ նրան հաղորդեց իր ստացած նամակի մասին: Նա արտասվեց:

-Հանգստացեք, մենք ձեզ չենք մեղադրում,- ասում էր Խրիպաչը,- մենք ձեզ լավ ճանաչում ենք: Իհարկե, դուք ստիպված կլինեք ավելի խիստ նրան հետեւել: Իսկ հիմա դուք ինձ միայն պատմեք, թե ինչ է իրոք այնտեղ եղել:

Տնօրենի մոտից Կոկովկինան եկավ նոր կշտամբանքներով Սաշային:

-Մորաքրքոջդ կգրեմ,- ասաց նա, արտասվելով:

-ես ոչ մի բանում մեղավոր չեմ, թող մորաքույրը գա, ես չեմ վախենում,- ասում էր Սաշան եւ նույնպես լալիս էր:

Հաջորդ օրը Խրիպաչն իր մոտ կանչեց Սաշային եւ չոր ու խիստ նրան հարցրեց.

-Ես ուզում ես իմանալ, դուք ինչ ծանոթություններ եք քաղաքում հաստատել:

Սաշան նայում էր տնօրենին կեղծ-անմեղ եւ հանգիստ աչքերով:

-Դե ի՞նչ ծանոթություններ,- ասաց նա. - Օլգա Վասիլեւնան գիտի, ես միայ նընկերներիս մոտ եմ գնում եւ մեկ էլ՝ Ռոտիլովների:

-Դե, հենց այդ,- շարունակեց իր հարցաքննությունը Խրիպաչը,- դուք ի՞նչ եք անում Ռուտիլովների մոտ:

-Առանձնապես ոչինչ էնպես,- միենույն անմեղ տեսքով պատասխանեց Սաշան,- հիմնականում մենք կարդում ենք: Օրիորդ Ռուտիլովները բանաստեղծություններ շատ են սիրում: Եւ ես միշտ յոթի մոտ տանն եմ լինում:

-Գուցե թե, եւ ոչ միշտ,- հարցրեց Խրիպաչը, հառելով Սաշայի վրա իր հայացքը, որն աշխատում էր ներթափանցող դարձնել:

-Այո, մեկ անգամ ուշացել եմ,- անմեղ տղայի հանգիստ անկեղծությամբ ասաց Սաշան,- դե այն էլ Օլգա Վասիլեւնայից ինձ հասավ, եւ

հետո ես չեմ ուշացել: Խրիպաչը լռեց: Սաշայի հանգիստ պատասխանները նարն փակուղու առաջ էին կանգնեցնում: Համենայն դեպս, պետք է խրատ տալ, նկատողություն, բայց ինչպե՞ս եւ ինչո՞ւ: Որպեսզի տղային վատ մտքեր չներշնչես, որոնք նա նախկինում /Խրիպաչը հավատում էր/ չուներ, եւ որպեսզի տղային չնեղացներ, եւ որպեսզի ամեն ինչ աներ տհաճությունների վերացման համար, որոնք կարող են պատահել ապագայում այդ ծանոթության պատճառով, Խրիպաչը մտածեց, որ մանկավարժի գործը՝ դժվար եւ պատասխանատու գործ է, հատկապես եթե պատիվ ունես ղեկավարելու ուսումնական հաստատությունը: Մանկավարժի ծանր ու պատասխանատու գործը: Այդ տափակ ձեւակերպումը թեւավորեց Խրիպաչի այն է քարացող մտքերը: Նա սկսեց խոսել,- արագ, հստակ եւ աննշան: Սաշան լսում էր ականջի ետեւը գցելով.

-...ձեր առաջին պարտականությունը որպես աշակերտի՝ սովորելն է... չի կարելի տարվել հասարակությամբ, թեկուզ եւ բավական հաճելի եւ լիովին անպարսավելի. համենայն դեպս հարկ է ասել, որ ձեր տարիքի տղաների շրջապատը ձեզ համար շատ ավելի օգտակար է... Հարկ է իհարկե գնահատել եւ քո եւ ուսումնական հաստատության համբավը... Վերջապես,- կասեմ ձեզ ուղիղ,- ես հիմքեր ունեմ ենթադրելու, որ ձեր հարաբերությունները օրիորդների հետ կամայականության բնույթ են կրում, որ անթույլատրելի է ձեր տարիքում, եւ ամենեւին հարիր չէ պատշաճության համընդհանուր կանոններին:

Սաշան լաց եղավ: Նա ափսոսաց, որ Լյուդմիլայի մասին կարող են մտածել ու խոսել որպես մի անձնավորության մասին, ում հետ կարելի է ազատ եւ անպատշաճ պահել:

-Ազնիվ խոսք, ոչ մի վատ բան չի եղել,- վստահեցնում էր նա,- մենք միայն կարդում էինք, զբոսնում, խաղում,- դե, վազում էինք,- այլեւս ոչ մի կամայականություն:

Խրիպաչը թփթփացրեց նրա ուսին եւ ասաց ձայնով, որին ջանաց սրտամոտություն հաղորդել, բայց եւ չորուկ.

-Լսեք, Պիլնիկով...

/Դե ինչ եթե նա երբեմն տղային Սաշա կոչեր: Ոչ ձեւական, դե Ի՞նչ, դրա համար դեռ չկա մինիստական շրջաբերականը/:

-Ես ձեզ հավատում եմ, որ ոչ մի վատ բան չի եղել, բայց այդուհան-

դերձ ավելի լավ է դադարեցրեք այդ հաճախակի այցելությունները: Հավատացեք ինձ, այդպես ավելի լավ կլինի: Դա ձեզ ասում է ոչ միայն ձեր դաստիարակն ու դեկավարը, այլ նաեւ ձեր ընկերը:

Սաշային մնում էր միայն գլուխ տալ, շնորհակալություն հայտնել: Եւ Սաշան սկսեց անցողակի մտնել Լյուդմիլայի մոտ միայն երբեմնակի, մի հինգ, տաս րոպեով,- բայց այդուհանդերձ ջանում էր ամեն օր լինել: Սրտնեղիչ էր, որ ստիպված էր երբեմնակի տեսնվել, եւ Սաշան սրտնեղությունը թափել Լյուդմիլայի գլխին: Նա արդեն ավելի հաճախ էր նրան կոչում Լյուդմիլոչկա, հիմարիկ, սիամյան ավանակ, թեթեւակի թակում էր նրան: Իսկ Լյուդմիլան այդ ամենի վրա միայն քրքջում էր:

Քաղաքով մեկ լուր տարածվեց, որ տեղի թատրոնի դերասանները հասարակական հավաքում դիմակահանդես են կազմակերպում լավագույն՝ տղամարդկային եւ կանացի հանդերձանքների համար մրցանակներով: Մրցանակների մասին չափազանցված լուրեր տարածվեցին: Ասում էին, կովը կնոջն են տալու, հեծանիվը տղամարդուն: Այդ լուրերը հուզում էին քաղաքացիներին: Ամեն մեկն ուզում էր հաղթել՝ այնքան ծանրակշիռ բաներ էին: Փութանակի հանձերձանքներ էին կարում: Անխնա ծախսում էին: թաքցնում էին հորինած հանդերձանքները նույնիսկ մտերմագույն ընկերներից, որպեսզի որեէ մեկը չփախցներ փայլուն միտքը:

Երբ հայտնվեց դիմակահանդեսի մասին տպագիր հայտարարությունը,- վիթխարի աֆիշները, ցանկապատերի վրա փակցրած եւ երեւելի քաղաքացիներին ուղարկած,- պարզվեց, որ տալու են ոչ թե կով եւ ոչ էլ հեծանիվ, այլ միայն կնոջը՝ հովհար եւ տղամարդուն՝ ալբոմ: Դա բոլոր դմակահանդեսին պատրաստվողներին հիասթափեցրեց եւ սրտնեղության մեջ նետեց: Սկսեցին տրտնջալ: Ասում էին.

Արժեր որ ծախս անել:

-Դա պարզապես ծանակում է՝ էդպիսի մրցանակներ:

Պիտի մեկից հայտարարեին:

Այդ միայն մեզ մոտ է հնարավոր հասարակության հետ այդպես վարվել:

Բայց այդուհանդերձ պատրաստությունները շարունակվում էին՝ ինչ էլ որ լինի մրցանակը, բայց ստանալը հաճելի էր: Դարյային եւ Լյուդմիլային մրցանակը չէր հուզում, ոչ սկզբում, ոչ հետո: Ծատ պետք

է կովը: Չտեսնված բան՝ հովհար: Դե եւ ո՞վ պիտի մրցանակները հանձնի: Ի՞նչ ճաշակ ունեն այդ դատավորները: Բայց երկու քույրն էլ տարվել էին Սաշային կանացի հանդերձանքվ դիմակահանդես ուղարկելու Լյուդմիլայի երազանքով՝ այդպիսի եղանակով ողջ քաղաքին խաբել եւ այնպես անել, որպեսզի մցանակը նրան տան: Եւ Վալերիան ձեւացնում էր, թե համաձայն է: Երեխայի պես նախանձոտ ու թույլ, նա սրտնեղում էր՝ Լյուդմիլայի ընկերը, դե հո իր մոտ չի գալիս, բայց երկու ավագ քույրերի հետ վիճել նա չէր համարձակվում: Միայն քամահրական քմծիծաղով ասաց.

-Նա չի համարձակվի:

-Դե ահա,- վճռական ասաց Դարյան,- մենք այնպես կանենք, որ ոչ մեկը չի իմանա:

Եւ երբ քույրերը Սաշային պատմեցին իրենց մտադրության մասին եւ Լյուդմիլոչկան նրան ասաց. «Մենք քեզ ճապոնուհի կզուգենք»: Սաշան թռչկոտաց եւ հիացմունքից ճվճվաց: դե որեմն ինչ լինելու է թող լինի,- եւ հատկապես, եթե ոչ մեկը չի իմանա,- բայց միայն թե ինքը համաձայն է,- դե էլի որ համաձայն չլիներ,- չէ որ դա սաստիկ զվարճալի է բոլորին հիմարացնելը:

Տեղնուտեղը որոշեցին, որ Սաշային հարկ է գեյշայի պես զուգել: Քույրերն իրենց մտադրությունը խսագույնս գաղտնի էին պահում, չասացին նույնիսկ ոչ Լարիսային, ոչ իրենց եղբորը: Զգեստը գեյշայի համար Լյուդմիլան ինքն էր պատրաստել կարիլոպսիսի պիտակից՝ դեղին մետաքսից զգեստը կարմիր կերպասի վրա, երկար ու լայն. զգեստի վրա կարած վառ նախշ, արտասովոր ուրվագծերով խոշոր ծաղիկներ: Հենց իրենք օրորդները նրբին ճապոնական նկարազարդ թղթից հովհար էին սարքել, բամբուկե փայտիկների վրա, եւ նրբին վարդագույ մետաքսից հովանոց, նույնպես բամբուկե բռնակի վրա: Ոտքերի վրա՝ վարդագույն գուլպաներ եւ նստարանիկներով փայտյա մաշիկներ:

Եւ գեյշայի դիմակն էլ նկարազարդել էր ճարտար Լյուդմիլան՝ դեղնավուն, բայց քնքուշ նիհարիկ դեմք անշարժ, թեթեւ ժպիտով, շեղկտրված աչքեր, նեղլիկ ու փոքրիկ բերան: Միայն կեղծամը ստիպված եղան Պետերբուրգից դուրս գրել,- սեւ, հարթ, սանրված մազերով:

Զգեստը չափելու համար ժամանակ էր պետք, իսկ Սաշան միայն երբեմնակի էր կարողանում անցնել, եւ այն էլ ոչ ամեն օր: Սաշան գիշ-

երով փախավ, երբ արդեն Կոկովկինան քնել էր, պատուհանից: Բարեհաջող անցավ:

***

Վարվարան էլ պատրաստվեց դիմակահանդեսի: Հիմար մռութով մի դիմակ առավ, իսկ զգեստի համար երկար չմտածեց,- խոհարարուհու շորեր հագավ: Գոտկի մոտ շերեփ կախեց, գլխի վրա սեւ կապագլխարկ դրեց, ձեռքերն արմոնկից վեր բացեց եւ դրանք խիտ կարմրացրեց,- խոհարարուհի հենց սալօջախի մոտից,- եւ զգեստը պատրաստ է: Մրցանակ կտան՝ լավ, չեն տա՝ պետք չի:

Գրուշինան մտածել էր Դիանայի պես հագնվի: Վարվարան ծիծաղեց ու հարցրեց.

-Դե ինչ, եւ վզնո՞ց էլ եք կապելու:

-Վզնոցն ինչի՞ն է պետք,- զարմանքով հարցրեց Գրուշինան:

-Դե ինչպե՞ս թե,- բացատրեց Վարվարան. - շուն Դիանկա ենք ուզում զուգվել:

-Դե ահա, հորինեցիք,- պատասխանեց Գրուշինան ծիծաղելով,- բնավ էլ ոչ Դիանկա, այլ աստվածուհի Դիանա:

Վարվարան եւ Գրուշինան դիմակահանդեսի համար հագնվում էին Գրուշինայի մոտ: Գրուշինայի հանդերձանքը բավականին թեթեւ դուրս եկավ՝ մերկ ձեռքեր եւ ուսեր, մերկ մեջք, մերկ կուրծք, ոտքերը թեթեւ մաշիկներով, առանց գուլպաների, մերկ մինչեւ ծնկները, եւ թեթեւ հագուստ սպիտակ կտավից կարմիր բոլորակարով, հենց մերկ մարմնի վրա,- հագուստը կարճ է, բայց փոխարենը լայն բազմաթիվ ծալքերով: Վարվարան, քմծիծաղելով, ասաց.

Մերկավուն է:

Գրուշինան, լկտիավարի աչքով անելով, ասաց.

-Փոխարենը բոլոր տղամարդիկ հետեւիցս կնգվեն:

-Իսկ ծալքերն ինչո՞ւ են այդքան շատ,- հարցրեց Վարվարան:

-Կոնֆետներ կարելի է խցկել իմ սատանայիկների համար,- բացատրեց Գրուշինան:

Այդպես համարձակ բացված ամեն ինչը գեղեցիկ էր՝ բայց ինչ հակասություններ: Մաշկի վրա՝ լվի կծածներ, շարժուձեւը կոպիտ, անտանելի գռեհկության բառեր: Նորից անարգված մարմնական գեղեցկությունը:

***

Պերեդոնովը մտածում էր, որ դիմակահանդեսը դիտմամբ էին նախաձեռնել, որպեսզի իրեն ինչ-որ բանի վրա բռնացնեն: Եւ այդուհանդերձ նա գնաց այնտեղ,- ոչ փեսացու, սերթուկով: Որպեսզի անձամբ տեսներ, ինձ չարագործություններ են արվում:

***

Միտքը դիմակահանդեսի մասին մի քանի օր զվարճացնում էր Սաշային: Բայց հետո կասկածները սկսեցին նրան հաղթահարել: Ինչպե՞ս տնից պոկվել: Եւ հատկապես հիմա, այս տհաճություններից հետո: Դժբախտություն, եթե գիմնազայում իմանան, հենց կվտարեն:

Վերջերս դասարանի դաստիարակը,- մի երիտասարդ, այնքան լիբերալ, որ չէր կարողանում կատվին Վասկա կոչել, այլ ասում էր՝ Վասիլի կատու,- Սաշային նկատեց գնահատականները հանձնելիս.

-Տեսեք Պիլնիկով, հարկ է գործով զբաղվել:

-Բայց ես երկուսներ չունեմ,- անհոգ առարկեց Սաշան:

Իսկ սիրտը նրա նվաղեց՝ էլ ի՞նչ կասի: Ոչ, ոչինչ, լռեց, միայն խիստ նայեց:

Դիմակահանդեսի օրը Սաշային թվում էր, թե ինքը չի վճռի գնալ: Սարսափելի է: Այլ միայն մի բան՝ պատրաստի հանդերձանքը Ռուտիլովների մոտ՝ մի՞թե այն կորչի: Եւ բոլոր երազանքներն ու աշխատանքները զո՞ւր անցնեն: Չէ որ Լյուդմիլոչկան կարտասվի: Ոչ, պետք է գնալ:

Վերջին շաբաթների ընթացքում նոր ձեռք բրված Սաշայի գաղտնապահ մնալու սովորությունը նրան օգնում էր Կոկովկինայի մոտ իր հոգմունքը չհայտնել: Բարեբախտաբար, պառավը շուտ է պառկում քնելու: Սաշան էլ շուտ պառկեց,- աչքից հեռու մնալու համար հանվեց, վերնազգեստը դրեց դռան մոտի աթոռի վրա եւ դռան ետեւում սապոգները դրեց: Մնում էր միայն գնալ՝ ամենադժվարը: Արդեն ուղին նախօրոք գծված էր, պատուհանից, ինչպես այն ժամանակ չափելու համար: Սաշան հագավ բացագույն ամառային բլուզը,- այն կախված էր պահարանում իր վերնասենյակում,- տնային թեթեւ հողաթափերը եւ զգուշորեն պատուհանից փողոց ելավ, պահը որսալով, երբ մոտակայքում ոչ մի տեղ ձայներ ու քայլեր չէին լսվում: Սանրամաղ անձրեւ էր

տեղում, կեղտոտ էր, ցուրտ, մութ: Բայց Սաշային հար թվում է, որ իրեն ճանաչում են: Նա հանեց գդակը, հողաթափերը, ե նետեց ր վերնահարկ, հագոստը քշտեց եւ թռչկոտալով վազեց անձրեւից սկսուն եւ երերուն կամրջակների վրայով: Մթության մեջ դեմքը վատ է երեւում, հատկապես վազողինը, եւ, ով հանդիպի, կրպակ ուղարկած հասարակ տղայի տեղ կդնի:

***

Վալերիան եւ Լյուդմիլան իրենց համար մտահնար բայց գեղատեսիլ հանդերձներ էին կարել՝ Լյուդմիլան գնչուհի էր զուգվել, իսկ Վալերիան՝ իսպանուհի: Լյուդմիլայի վրա՝ մետաքսից ու թավշից վառ կարմիր քրջեր, Վալերիայի վրա, վտիտ եւ փխրուն՝ սեւ մետաքս, ժանյակներ, ձեռքին՝ սեւ ժանեկավոր հովհար: Դարյան իրեն որ հանդերձանք չէր կարել,- անցյալ տարվանից մնացել էր թրքուհու հագուստը, նա այն էլ հագավ,- վճռական ասաց.

-Հորինելու կարիք չկա

Երբ Սաշան հասավ, բոլոր եք քույրերը սկսեցին նրան զուգել: Ամենից շատ Սաշային հուզում էր կեղծամը:

-Բա որ ընկնի,- վախվխելով կրկնում էր նա:

Վերջապես կեղծամն ամրացրին, դնչի տակ կապած ժապավեններով:

XXIX

Դիմակահանդեսը կատարվում էր հասարակական վայրում՝ քարե, երկու կացարանով, զորանոցային տեսքի մի շինություն, վառ կարմիր գույնով ներկած, շուկայի հրապարակում:

Դիմահանդեսը կատարում էր Գրոմով-Չիստոպոլսկին, տեղի քաղաքային թատրոնի անտրեպրենյորն ու դերասանը:

Կոլենկորե ծածկով ծգած մուտքի վրա վառվում էին կանթեղները: Ամբոխը փողոցում դիմավորում էր ժամանողների եւ դիմակահանդես եկողներին քննադատական նկատողություններով, մեծ մասամբ անխրախուսական, առավել եւս, որ փողոցում, հյուրերի վերնահագոստի տակ, զգեստները համարյա չէին երեւում, եւ ամբոխը դատում էր գերազանցապես ներշնչումով:

Ոստիկանները փողոցում բավական ջանադիր կարգ էին պահպանում, իսկ սրահում որպես հյուր ներկա էին գավառաոստիկանապետն ու գլխավոր պրիստավը:

Յուրաքանչյուր այցելու մտնելիս երկու տոմսակ էր ստանում՝ մեկը՝ վարդագույն, լավագույն կանացի հանդերձանքի համար, մյուսը՝ կանաչ, տղամարդկային հագուստի համար: Հարկ էր դրանք տալ արժանավորներին: Ոմանք տեղեկանում էին.

Իսկ ինձ համար կարո՞ղ եմ վերցնել:

Սկզբում գանձապահը շվարած հարցնում էր.

-Ինչո՞ւ ձեզ համար:

-Իսկ եթե, ըստ իս, իմ կոստյումը՝ լավագույնն է,- պատասխանում էր այցելուն:

Հետո գանձապահն արդեն նմանատիպ հարցից չէր զարմանում, այլ հեգնական ժպիտով ասում էր /ծաղրասեր երիտասարդ էր/.

-Շնորհ արեք: Դե թեկուզ երկուսն էլ ձեզ պահեք:

Սրահներում կեղտավուն էր, եւ արդեն հենց սկզբից ամբոխը մեծ մասամբ թվում էր հարբած: Յուղոտած պատերով ու առաստաղներով նեղ սենյակներում վառվում էին ծուռտիկ ջահերը. դրանք թվում էին վիթխարի, ծանր, շատ օդ կլանող: Դռների մոտի խունացած վարագույրները անպիսի տեսք ունեին, որ նողկալի էր դրանց դիպչելը: Մեկ աստեղ, մեկ այստեղ ամբոխներ էին ողողվում, բացականչություններ ու ծիծաղ էին հնչում,- այդ քայլում էին զուգված ե ընդհանուր ուշադրությունը գրավող հանդրջձանքները:

Նոտար Գուդաեւսկին վայրի ամերիկացի էր պատկերում՝ մազերի մեջ աքլորի փետուրներ, դիմակը պղնձե-կարմիր անհեթեթ տարանջատումներով, ուսի վրա վանդակավոր ծածկոցաշալ եւ կանաչ վրձիններով կաշվե բարակաճիթ սապոգներ: Նա ձեռքերը թափահարում, թռչկոտում եւ քալում էր գիմնազիստի քայլվածքով, առաջ մղելով սաստիկ ծռած մերկ ծունկը: Նրա կինը հասկով էր զուգվել: Նրա վրա կանաչ ու դեղին կտորտանքներով բազմաբղետ զգեստ էր. բոլոր կողմերից ցցվել էին ամեն տեղ խրած հասկերը: Դրանք բոլորին դիպչում ու ծակում էին: Նրան քաշքշում ու ծակծկում էին: Նա չարացած հայհոյում էր.

Կճանկռոտեմ,- ճղճղում էր նա:

Շուրջբոլորը հռհռում էին: Ինչ-որ մեկը հարցնում էր.

-Որտեղի՞ց է նա էսքան հասկ հավաքել:

Ամառվանից է պահեստավորել,- պատասխանում էին նրան,- ամեն օր դաշտ գողության էր գնում:

Մի քանի անբեղ չինովնիկ, Գուդաեւսկայային սիրահարված եւ այդու նրա կողմից տեղեկացած այն մասին, թե ինչ է նա հագնելու, ուղեկցում էին նրան: Նրանք նրա համար տոմսակներ էին հավաքում,- համարյա թե բռնի, կոպտություններով: Ոմանց մոտից, ոչ առանձնապես խիզախների, պարզապես խլում էին:

Կային եւ այլ զուգված տիկնայք, իրենց սիրատածուների միջոցով տոմսակներ հավաքող:

Ոմանք ագահորեն նայում էին չտրված տոմսակներին եւ խնդրում էին: Նրանց հանդգնություններով էին պատասխանում:

Տրտմած մի տիկին, որպես գիշեր զուգված,- ապակյա աստղիկով եւ ճակատին թղթե լուսնով կապույտ հանդերձ,- երկչոտ Մուրինին ասաց.

-Ինձ տվեք ձեր տոմսակը:

Մուրինը կոպիտ պատասխանեց:

-Դե դու այդ ինչ: Տոմսակ քեզ: Մոռթդ չի ստացվել:

Գիշերն ինչ-որ բան փնթփնթաց ու կողմ գնաց: Նա կուզենար տանը դե թեկուզ մի երկու-երեք տոմսակ ցույց տալ, իբր ահա, իրեն էլ են տվել: Ունայն են լինում համեստ երազանքները:

Ուսուցչուհի Սկոբոչկինան արջ էր զուգվել, այսինքն պարզապես ուսերին արջի մորթի էր գցել, սիսկ արջի գլուխը դրել էր իր գլխին, որպես սաղավարտ, սովորական կիսադիմակի վերեւից: Դա ընդհանուր առմամբ ալանդակ էր, բայց այդոհանդերջ հարիր էր նրա ամոր կազմվածքին եւ թավ ձայնին: Արջը քայլում ր ծանր քայլերով եւ ողջ սրահով մեկ բղավում էր, այնպես որ ջահերի կրակները թրթռում էին: Ճատերին արջը դուր էր գալիս: Նրան քիչ ոմսեր չտվեցին: Բաց նա ինքը չկարողցա դրանք պահել, իսկ գխի ընկող ողեկց, նրան բաժին չհասավ. նրա տմսերի կսից ավելին գողացան, երբ նրան խմեցնում էին վաճառականները,- նրանք կարեկցում էին նրա արջի շարժուձեւերը պատկերելու ոնակությանը: Ամբոխի մեջ գոռում էին.

-Վլը նայեք, արջը օղի է տկում:

Սկոբոչկինան չէր կարողանում հրաժարվել օղուց: Նրան թվում էր,

որ արջը պիտի օղի խմի, եթե նրան մատուցում են:

Հասակով եւ ամրակազմությամբ առանձնանում էր որպես հին գերմանացի հագնված մեկը: Շատերին դուր էր գալիս, որ նա այդպես պնդակազմ է եւ որ երեւում են ձեռքերը, հուժկու ձեռքերը, հիանալի զարգացած մկաններով: Նրա ետքից գնում էին հերազանցապես տիկնայք, եւ նրա շուրջ լսվում էր սիրալիր ու գովաբանական շշունջը: Հին գերմանացու մեջ ճանաչում էին դերասան Բենգալսկուն: Բենգալսկին մեր քաղաքում սիրված էր: Դրա համար շատերը նրան տոմս էին տալիս:

Շատերն այսպես էին դատում.

-Դե եթե մցանակն ինձ չի հասնելու, ապա ավելի լավ է դերասանին /կամ դերասանուհուն/: Թե չէ, եթե մեզանից մեկին՝ պարծենկոտությամբ կտանջի:

Հաջողություն ուներ եւ Գրուշինայի հանդերձանքը,- սկանդալի հաջողություն: Տղամարդկ հոծ ամբոխով գնում էին նրա ետքից, անհամեստ դատողություններ էին անում: Տիկնայք շրջվում, վրդովվում էին: Վերջապես իսպրավնիկը մոտեցավ Գրուշինային եւ, քաղցր շուրթերը լիզելով, արտաբերեց.

-Տիկին, ծածկվել է պետք:

-Դե իսկ ի՞նչ է որ: Ինձ մոտ ոչ մի անպատկառ բան չի երեւում,- աշխույժ պատասխանեց Գրուշինան:

-Տիկին, տիկնայք նեղանում են,- ասաց Սինչուկովը:

-Թքած ունեմ ձեր տիկնանց վրա,- գոռաց Գրուշինան:

-Դե ոչ տիկին,- խնդրում էր Սինչուկովը,- դուք թեկուզ թաշկինակով ձեր կուրծքն ու մեջքը ջանացեք ծածկել:

-Իսկ եթ ես խնչե՞լ եմ դրա մեջ,- լկտի ծիծաղով առարկեց Գրուշինան:

Բայց Սինչուկովը պնդում էր.

-Դե ինչպես կհաճեք, տիկին, եթե չծածկվեք, ստիպված ենք վտարել:

Հայհոյելով ու թքոտելով, Գրուշինան ուղեւորվեց զուգարան եւ անտեղ, աղախնի օգնությամբ, շտկեց իր զգեստածալքերը կրծքի եւ մեջքի վրա: Սրագ վերադառնալով, թեպետ եւ ավելի համեստ տեսքով, նա այդուհանդերձ ջանադրաբար իրեն երկրպագուներ էր փնտրում: Նա

կոպտորեն բոլոր տղամարդկանց հետ կոկետություն էր անում: Հետո, երբ նրանց ոշադրությունը շեղված էր այլ կողմի վրա, նա գնաց բուֆետ քաղցրավենիք գողանալու: Ծոտով նա վերադարձավ սրահ, Վոլոդինին մի զույգ դեղձ ցույց տվեց, լկտի քմծիծաղեց ու ասաց.

-Ինքս եմ հայթայթել:

Եւ տեղնուտեղը դեղձերը թաքցվեցին նրա հանդերձանքի ծալքերում: Վոլոդինը ուրախալի բացեց բերանը.

-Դե,- ասաց նա,- ես էլ գնամ, որ էդպես է:

Ծուտով Գրուշինան հարբեց ու իրեն կատաղի էր պահում,- ճչում էր, ձեռքերն էր թափահարում թքոտում էր:

-Ուրախ տիկին է Դիանկան,- ասում էին նրա մասին:

-Այդպիսին էր դիմակահանդեսը, որ տարան ամզուսպ օրիորդները թեթեւսոլիկ գիմնազիստին: Երկու կառք նստելով, երեք քույրերը Սաշայի հետ գնացին արդեն բավական ուշ,- ուշացան նրա պատճառով: Նրանց հայտնվելը սրահում նկատվեց: Հատկաես գեյշան շատերին էր դուր գալիս: Լուր անցավ, դե Գեյշայի պես հանդերձավորվել է Կաշտանովան, դերասանուհի, որին սիրում էր տեղի տղամարդկանց մեծ մասը: Եւ այդ պատչճառով Սաշային շատ տոմսակներ էին տալիս: Իսկ Կաշտանովան բնավ էլ դիմակահանդեսին չկար,- նախօրյակին նրա փոքրիկ տղան վտանգավոր հիվանդացել էր:

Սաշան, նոր վիճակից արբած, աջ ու ձախ կոկետություն էր անում: Որքան շատ էին գեյշայի փոքիկ ձեռքի մեջ տոմսակներ խցկում, այնքան ավելի խնդագին ու աշխոյժ էին դիմակի անցքերից փայլում կոլկետուհի ճապոնուհու աչքերը: Գեյշան կիսանստում էր, հովհարն էր թափահարում, դրանով մեկ այս մեկ այն տղամադու ուսին էր թփթփացնում, ծածկվում էր հովհարով, եւ ոոպեն մեկ բացում էր իր վարդագույն հովանոցը: Պարզ հնարքներ, սակայն, բավարար, դերասանուհ Կաշտանաովային երկրպագող, բոլորին հմայելու համար:

-Ես տոմսակն իմ կտամ տիկնանց մեջ ամենահիսաքանչիկին,- ասաց Տիշկովն ու կտրիճավարի խոնարհումով տոմսակը մատուցեց գեյշային:

Նա արդեն շատ էր խմել եւ կարմիր էր. նրա անշարժ ժպտացող դեմքը եւ անդյուրաշարժ իրանը նրան տիկնիկի նման էին դարձնում: Եւ հար հանգաբանում էր: Վալերիան նայում էր Սաշայի հաջողությունևե-

րին եւ սրնեղած նախանձում էր. արդեն նա էլ էր ուզում, որ իրեն ճանաչեն, որ իր հանդերձանքն ու նրա նրբին, կառուցիկ կազմվածքը դուր գար ամբոխին եւ որ իրեն մրցանակ տային: Եւ տեղնուտեղը սրտնեղած նա հիշեց, որ այդ ոչ մի կերպ հնարավոր չէ՝ բոլոր երեք քույրերն էլ պայմանավորվել էին տոմսակներ ստանալ միայն գեյշայի համար, իսկ իրենք, եթե նույնիսկ ստանան էլ, ապա փոխանցեն դրանք իրենց ճապոնուհուն:

Սրահում պարում էին: Վոլոդինը, արագ հարբելով, պպզուկի պար բռնեց: Ոստիկանները նրան կանգնեցրին: Նա զվարթախոնարհ ասաց.

-Դե, եթե չի կարելի, ապա ես չեմ անի: Բայց նրա օրինակով տրեպակ պար բռնած երկու քաղքենի չկամեցան ենթարկվել:

-Ի՞նչ իրավունքով, մեր հիսուն կոպեկանոցով,- բացականչում էին նրանք եւ դուրս բերվեցին:

Վոլոդինն ողեկցում էր նրանց, ծռմռվելով, ատամները ցցելով եւ պար էր գալիս:

Օրիորդ Ռուտիլովները փութացին գտնել Պերեդոնովին, որպեսզի ծանակեին նրան: Նա նստած էր մենակ, պատուհանի մոտ եւ դեգերող աչքերով նաում էր ամբոխին: Բոլոր մարդիկ եւ առարկաները նրան անիմաստ էին եեւում, բայց հավասարաչափ թշնամական: Լյուդմիլան, գնչուհու հանդերձանքով, մոտեցավ նրան եւ փոխված կոկորդայի ձայնով ասաց.

-Բարին իմ սիրելի, տուր ես բախտդ բանամ:

-Գնա գրողի ծոցը,- գոռաց Պերեդոնովը:

Գնչուհու հանկարծակի հայտնվելը վախեցրեց նրան:

-Իմ լավ բարին, ոսկի իմ բարին, ինձ տուր ձեռքդ: Դեմքիցդ տեսնում եմ՝ հարուստ ես լինելու, մեծ ղեկավար ես լինելու,- աղաչում-պաղատում էր Լյուդմիլան եւ վերցրեց Պերեդոնովի ձեռքը:

-Դե տես, միայն թե լավ գուշակիր,- փնթփնթաց Պերեդոնովը:

-Ախ բարին իմ ադամանդյա,- գուշակում էր Լյուդմիլան,- քո թշնամիները շատ են, կմատնեն քեզ, լաց կլինես, կմեռնես ցանկապատի տակ:

-Ախ դու գարշանք,- ճչաց Պերեդոնովն ու ձեռքը ետ քաշեց:

Լյուդմիլան ժրաշարժ սողոսկեց ամբոխի մեջ: Նրան փոխարինելու եկավ Վալերիան, նստեց Պերեդոնովի ողքին եւ քնքուշ շշնջում էր

նրան.

-Ես ջահել իսպանուհի եմ:

Ես սիրում եմ այսպիսի տղամարդկանց: Իսկ կինը քո՝ նիհար է:

Իմ հիասքանչ պարոն:

-Խաբում ես, հիմար,- փնթփնթում էր Պերեդոնովը:

Վալերիան շշնջում էր.

Կեսօրից տաք եւ գիշերից քաղցր է

Իմ համբույրը սեւիլյան:

Իսկ կնոջդ շատ տխմար,

ուղիղ աչքերի մեջ՝թքիր:

Քո կինն է՝ Վարվարան,

Դու, Արրդալյոնը-գեղատեսիլ:

Վարվարան քեզ զույգ չէ: Դու խելոք ես, հանց Սողոմոնը:

-Այդ դու ճիշտ ես ասում,- ասաց Պերեդոնովը,- միայն թե ես ինչպե՞ս նրա աչքերին կթքեմ: Նա իշխանուհուն կբողոքի, եւ ինձ տեղ չեն տա:

-Իսկ տեղը քո ինչին է պետք: Դու առանց տեղի էլ լավն ես,- ասաց Վալերիան:

-Դե հա, դե ինչպես ես կարող եմ ապրել, եթե ինձ տեղ չտան,- մռայլամած ասաց Պերեդոնովը:

***

Դարյան Վոլոդինի ձեռքը, վարդագույն բոլորաթղթիկով սոսնձած, նամակ խոթեց: Ուրախալի մկկոցով այն բացեց Վոլոդինը, կարդաց, մտորմունքի մեջ ընկավ,- եւ պարծենկոտեց, եւ ասես ինչ-որ բանից շփոթվեց: Գրված էր կարճ եւ պարզ.

«Արի, քնքուշս, վաղն ինձ հետ ժամադրության գիշերվա ժամը տասնմեկին: Ջինվորական բաղնիքում: Ամբողջովին օտար Ժ»:

Վոլոդինը նամակին հավատաց, բայց ահա հարց՝ արդյոք արժե՞ գնալ: Եւ ո՞վ է այդ Ժ-ն: Ինչ-որ Ժե՞յա: Թե՞ այդ ազգանունն է Ժ-ով սկսվում:

Վոլոդինը նամակը ցույց տվեց Ռուտիլովին:

-Գնա, իհարկե, գնա,- հրահրում էր Ռուտիլովը,- տես, դրանից ինչ դուրս կգա: Գուցե թե, դա հարուստ հարս է, իսկ ծնողները խոչընդոտում են, դե նա էլ ուզում է քեզ հետ բացատրվել:

Բայց Վոլոդինը մտածեց դե եւ որոշեց, որ չարժե գնալ: Նա հանդիսավոր ասում էր.

-Վզիցս կախվում են, բայց ես էդպիսի այլասերվածների չեմ ուզում:

Նա վախենում էր, որ այնտեղ իրեն կքոթակեն: Զինվորական բաղնիքը խուլ տեղում էր գտնվում, քաղաքի ծայրամասում:

***

Երբ արդեն ամբոխը ակումբի բոլոր կացարաններում նեղվում էր, հոծ, ճղճղան, չափազանց զվարթ, մուտքի դռների մոտ աղմուկ, քրքիջ, քաջալերիչ բացականչություններ լսվեցին: Բոլորը կողմ քաշվեցին: Միմյանց հաղորդում էին, որ սաստիկ յուրահատուկ դիմակ է եկել: Վտիտ, երկայն, կարկատած յողոտ խալաթով մի մարդ, ավելը թեւատակին, կոթով դույլիկը ձեռքին, խցկվում էր ամբոխի մեջ: Նրա վրա կարտոնից դիմակ էր՝ նեղլիկ մորուսով, այտամորուսով հիմար մի դեմք, իսկ գլխին կլոր աստղանշանով քաղաքացիական գդակ: Նա զարմացած ձայնով կրկնում էր.

-Ինձ ասացին, որ այստեղ դիմակահանդես է, իսկ այստեղ չեն էլ լվացվում:

Եւ տրտմորեն դույլիկն էր թափահարում: Ամբոխը քայլում էր նրա ետքից, ախ քաշելով ու պարզասիրտ հիանալով նրա խորամանկամիտ հորինվածքից:

-Տես, երեւի, մրցանակ էլ ստանա - նախանձոտ ասում էր Վոլոդինը:

Իսկ նախանձում էր նա, ինչպես եւ շատերը, ինչ-որ անմիտ, անմիջական,- չէ որ ինքը զուգված չէր, դե, թվում էր նախանձելու ի՞նչ կար: Իսկ Մաչիգինն ահա, դե նա արտասովոր հիացմունքի մեջ էր՝ աստղանշանը հատկապես հիացնում էր նրան: Նա բերկրալի քրքջում, ծափ էր զարկում եւ ծանոթ-անծանոթին ասում էր.

-Լավ քննադատություն է: Էդ աստիճանավորները շատ են գոռոզամտում, աստղանշան են սիրում կրել, համազգեստներ, ահա եւ քննադատության են արժանացել՝ շատ հմուտ է:

Երբ շոգեց, խալաթով չինովնիկը սկսեց ավելը թափահարել, բացականչելով.

-Ա՛յ թե ինչ բաղնիք է:

Ծրջապատողները ուրախալի քրքջում էին: Դույլիկի վրա տոմսեր

էին թափվում

Պերեդոնովը նայում էր ամբոխում թափահարվող ավելին: Այն նրան դարձվորյակ էր թվում:

«Կանաչել է, սրիկան»,- սարսափած մտածում էր նա:

XXX

Վերջապես սկսվեց կարգագրերով ստացված տոմսերի համրումը: Ակումբային ավագանին կոմիտե կազմեց: Դատավորական սենյակի դռների մոտ հավաքվեց լարված սպասող ամբոխը: Ակումբում մի կարճ ժամանակ դարձավ լուռ եւ տաղտկալի: Երաժշտությունը չէր հնչում: Հյուրերը սսկվել էին: Պերեդոնովը սկսեց սահմռկել: Բայց շուտով աբոխի մեջ խոսակցություններ սկսվեցին, անհամբեր տրտունջ, աղմուկ: Ինչ-որ մեկը վստահեցնում էր, որ երկու մրցանակն էլ հասնելու է դերասաններին:

-Ահա դուք կտեսնեք,- լսվում էր ինչ-որ մեկի գրգռված, ֆշշացող ձայնը:

Ծատերը հավատացին: Ամբոխը հուզվում էր: Քիչ տոմսեր ստացածները շատ էին հուզվում հնարավոր անարդարության սպասումից:

Հանկարծ զիլ ու նյարդային զրնգաց զանգուլակը: Ելան դատավորները՝ Վերիգան, Ավինովիցկին, եւ Կիրիլովն ու ավագանու մյուս անդամները: Խուճապն ալիքով անցավ սրահով,- եւ հանկարծ բոլորը սսկվեցին: Ավինովիցկին թավ ձայնով ողջ դահլիճով մեկ ասաց.

-Մրցանակը, ալբոմ, լավագույն տղամարդկային հանդերձանքի համար տրվել է, ստացված տոմսկների մեծամասնությամբ, հին գերմանացու հանդերձանքվ պարոնին:

Ավինովիցկին բարձր բարձչացրց ալբոմը եւ բարկացկոտ նայում էր կուտակված հյուրերին:

Բարձրահասակ գերմանացին սկսեց ամբոխի միջով առաջանալ: Նրա վրա թշնամաբար էին նայում: Նույնիսկ ճանապարհ չէին տալիս:

-Մի հրեք, խնդրում եմ,- լացակումած ձայնվ գոռած կապտազգեստ մռայլ մի տիկին, ճակատին ապակյա աստղիկով եւ լուսնով,- Գիշերը:

-Մրցանակ են տվել, դե արդեն երեւակայել է իրեն, որ տիկնայք պիտի իր առաջ փռվեն,- ամբոխից լսվեց չար-ֆշշացող մի ձայն:

-Թե որ ինքներդ չեք թողնում,- զսպված նեղսրտությամբ պատաս-

խանեց գերմանացին:

Վերջապես նա մի կերպ հասավ դատավորներին եւ վերցրեց ալբոմը Վերիգայի ձեռքից: Երաժշտությունը տուշ հնչեցրեց: Բայց երաաժշտության հնչյունները ծածկվեցին անկարգ աղմուկով: Հայհոյական խոսքեր թափվեցին: Գերմանացուն շրջապատեցին, նրան քաշքշում ու գոռում էին.

-Դիմակը հանեք:

Գերմամացին լռում էր: Ամբոխի միջով անցնելը նրա համար խնդիր չէր, բայց նա հավանաբար, ամաչում էր իր ուժը կիրառելուց: Գուդաեւսկին ճանկեց աբոմը, եւ միաժամանակ ինչոր մեկն արագ գերմանացու վրայից պոկեց դիմակը: Ամբոխի մեջ ոռնացին.

-Դերասան է, որ կա:

Ենթադրությունները արդարացան՝ դա դերասան Բենգալսկին էր: Նա զայրացկոտ գոռաց.

-Դե, դերասան եմ, դե ուրեմն ինչ դրանից: Չէ որ դուք ինքներդ եք տոմսակները տվել:

Ի պատասխան չարացած ճիչեր լսվեցին.

-Չէ որ կարելի է լրացուցիչ լցնել:

-Չէ որ տոմսերը դուք եք տպել:

-Այդքան մարդ էլ չկա, որքան որ տոմս է բաժանվել:

-Նա գրպանում մի հիսուն տոմս է բերել:

Բենգալսկին շառագունեց ու ճչաց.

-Ստորություն է այդպես խոսելը: Ստուգեք, ով ուզում է,- այցելուների քանակով կարելի է ստուգել:

Այդ ընթացքում Վերիգան ասում էր իրեն մոտ կանգնածին.

-Պարոնայք, հանգստացեք, ոչ մի կեղծիք չկա, ես հավաստիացնում եմ՝ տոմսերի քանակը ստուգված է մուտքի տոմսերով:

Ավագանու ներկայացուցիչները մի կերպ մի քանի ողջախոհ հյուրերի օգնությամբ ամբոխը խաղաղեցրին: Դե եւ բոլորին հետաքրքիր եղավ, թե ում կտան հովհարը: Վերիգան հայտարարեց.

-Պարոնա՛յք, տոմսերի ամենաշատ քանակը տրվել է գեյշայի կանացի հանդերձանքի ամար, ով էլ հենց ստացել է մրցանակը, հովհարը: Գեյշա, համեցեք այստեղ, հովհարը՝ ձերն է: Պարոնայք, խոնարհաբար խնդրում եմ ձեզ, սիարլիր եղեք, գեյշային ճանապարհ:

Երաժշտությունը երկրորդ անգամ տուշ նվագեց: Վախեցած գեյշան ուրախ կլիներ փախչել: Բայց նրան հրեցին, բաց թողեցին, առաջ բերեցին: Վերիգան, սիրալիր ժպիտով, նրան հանձնեց հովհարը: ինչ-որ վառվռուն ու զուգված բան առկայծեց վախից ու շփոթմունքից մշուշված Սաշայի աչքերում: Հարկ է շնորհակալություն ասել,- մտածեց նա: Ի հայտ եկավ բարեկիրթ տղայի ընտել քաղաքավարությունը: Գեյշան կքանստեց, ինչ-որ անպարզ մի բան ասաց, քթի տակ ծիծաղեց, մատները վեր բերեց,- եւ դարձյալ սրահում անսելի աղմուկ բարձրացավ, սուլոցներ ու հայհոյանքներ լսվեցին: Բոլորը սրընթաց շարժվեցին դեպի գեյշան: Կատաղի փշոտած Հասկը գոռում էր.

-Ծնկածալվիր, անպիտան, ծնկածալվիր:

Գեյշան նետվեց դեպի դուռը, բայց նրան դուրս չթողեցին: Գեյշայի շուրջ հուզվող ամբոխում, չար ճիչեր էին լսվում.

-Ստիպեք նրան դիմակը հանել:

-Դիմակը հանեք:

-Բռնի նրան, բռնի:

-Պոկեք նրանից:

-Հովհարը խլեք:

Հասկը ճչում էր.

-Արդյոք դուք գիտե՞ք, ո՞ւմն է մրցանակը: Դերասանուհի Կաշտանովային: Նա ուրիշի ամուսնուն է խլել, իսկ նրան՝ մրցանակ: Ազնիվ տիկնանց չեն տալիս, իսկ անպիտանին տվեցին:

եւ նա նետվեց գեյշայի վրա, սուր ճղղում էր եւ սեղմում էր չորուկ բռունցքները: Նրա ետքից եւ մյուսները,- ավելի շատ նրան սիրատածողներից: Գեյշան հուսահատ դիմադրում էր: Վայրի հալածանք սկսվեց: Հովհարը ջարդեցին, նետեցին հատակին, տրորում էին: Ամբոխը մեջտեղում գեյշայի հետ կատաղի դեսուդեն էր ընկնում սրահով մեկ, տապալելով նայողներին: Ոչ Ռուտիլովները, ոչ ավագանին չէին կարողանում գեյշային մոտենալ: Գեյշան ժրաշարժ, ուժեղ, սուր ճղրտում էր, ճանկռում ու կծում էր Դիմակը նա ամուր պահում էր մեկ աջ, մեկ ձախ ձեռքով:

-Դրանց բոլորին ծեծել է պետք,- ճղճղում էր ինչ-որ չարացած տիկին:

Հարբած Գրուշինան, թաքնվելով մյուսների ետեւում, հրահրում էր

Վոլոդինին եւ իր մյուս ծանոթներին:

-Կճմտեք դրան, կճմտեք,- գոռում էր նա:

Մաչիգինը, քթից բռնած,- արյուն էր կաթում - դուրս թռավ ամբոխից եւ բողոքում էր.

-Ուղիղ քթիս բռունցքով տվեց:

Ինչ-որ կատաղի երիտասարդ ատամները խրել էր գեյշայի թեւքի մեջ եւ կիսով չափ պատառոտել էր այն: Գեյշան ճչաց.

-Փրկեցեք:

Եւ մյուսները սկսեցին նրա հանդերձանքը պատառոտել: Դարյան ու Լյուդմիլան հուսահատ հրմշտում էին, ջանալով խցկվել գեյշայի մոտ: Վոլոդինն այնպիսի ջանադրությամբ էր քաշքշում գեյշային, եւ վժժում, եւ այնպես էր ծամածռվում, որ նույնիսկ խանգարում էր մյուսներին, նրանից ավելի քիչ խմածներին ու ավելի շատ զայրացածներին՝ իսկ նա ջանում էր, ոչ թե չարությունից, այլ զվարթությունից, երեւակայելով, որ շատ զվարճալի զվարճանք է խաղարկվում: Նա լիովին պոկեց գեյշայի հագուստի թեւը եւ դրանով կապեց իր գլուխը:

-Պետք կգա,- ճղճղան գոչում էր նա, ծամածռվում ու քրքջում էր:

Ամբոխից դուսր պրծնելով, ուր նրան նեղ էր թվում, նա զվարճանում էր ազատ տարածության մեջ եւ վայրի ճղճղոցով պար էր գալիս հովհարի կտորտանքների վրա: Մեկը չկար, որ սանձեր նրան: Պերեդոնովը սարսափով նայում նրան ու մտածում էր.

««Պար գալիս, ինչ-որ բանից ուրախանում է: Էսպես նա իմ գերեզմանի վրա էլ պար կգա»:

Վերջապես գեյշան պոկվեց,- նրան շրջապատած տղամարդիկ չդիմացան նրա ճարպիկ բռունցքների ե սուր ատամների հանդիման:

Գեյշան նետվեց դահլիճից դուրս: Միջանցքում Հասկը նորից դեմ առավ ճապոնուհուն եւ բռնեց նրա զգեստից: Գեյշան այն է պոկվում էր բայց նրան արդեն նորից շրջապատեցին: Հետապնդումը վերսկսվեց:

-Ականջներից, ականջներից են քաշում,- ճչաց ինչ-որ մեկը Ինչ-որ տիկին բռնեց գեյշայի ականջից եւ թափահարում էր այն, հաղթական բարձր ճիչեր հանելով: Գեյշան ճվվաց եւ մի կերպ ազատվեց, բռունքով խփելով չար տիկնոջը:

Վերջապես Բենգալսկին, ով այդ ընթացքում հասցրել էր զգեստափոխվել եւ իր սովորական հագուստը հագնել, ամբոխի միջով խցկվեց

գեյշայի մոտ: Նա դղդողացող ճապոնուհուն վերցրեց իր ձեռքերի վրա, նրան իր վիթխարի մարմնով ու ձեռքերով ծածկեց, որքան կարողացավ, եւ արագ տարավ, ճարպկորեն արմունկներով ու ձեռքերով ամբոխը ցրելով: Ամբոխի մեջ գոռում էին.

-Սրիկա, անպիտան:

Բենգալսկուն բռնել էին, խփում էին մեջքին: Նա գոչում էր.

-Ես թույլ չեմ տա կնոջից դիմակ պոկել. ինչ ուզում եք արեք, թույլ չեմ տա:

Այդպես ողջ միջանցքով մեկ նա տարավ գեյշային: Միջանցքը վերջանում էր դեպ ճաշասենյակ նեղ դռնով: Այստեղ Վերիգային հաջողվեց փոքր ինչ հապաղեցնել ամբոխին: Ջինվորականի վճռականությամբ նա կանգնեց դռան առաջ, իրենով փակեց այն ու ասաց.

-Պարոնայք, դուք առաջ չեք գնա:

Գուդաեւսկայան, շրշալով քրքրված հասկերի մնացուկներով, վրա էր գալիս Վերիգայի վրա, նրան իր բռունցքկներն էր ցույց տալսի, սուր ճղրտում էր.

-Կողմ քաշվեք, թողեք:

Բայց գեներալի տպավորիչ-պաղ դեմքը եւ նրա վճռական գորշագույն աչքերը նրան գործողություններից ետ էին պահում: Նա անօգ կատաղության մեջ ճչաց ամուսնու վրա:

-Դե վերցնեիր եւ նրան մի ապտակ տայիր,- ինչ էիր հորանջում, ցանցառ:

-Անհարմար էր մտնելը,- արդարանում էր հնդկացին, անմտորեն ձեռքերը թափահարելով:

-Պավլուշկան էր ձեռքիս տակ պտտվում:

-Պավլուշկայի ատամներին, նրա կաանջին, ինչ էիր փափկանկատություն ցուցաբերում,- ճչում էր Գուդաեւսկայան:

Անբոխը ճնշում էր Վերիգային: Հրապարակային հայհոյանք էր լսվում: Վերիգան հանգիստ կանգնած էր դռան առաջ ե մոտիկ կանգնածներին համոզում էր անկարգությունը դադարեցնել: Խոհանոցի տղան բացեց Վերիգայի ետեւի դուռն ու շնջաց.

-Գնացին, ձերդ գերազանցություն:

Վերիգան կողմ քաշվեց: Ամբոխը ներխուժեց ճաշասենյակ, հետո խոհանոց,- գեյշային էին փնտրում, բայց արդեն չգտան: Բենգալսկին

վազքով գեյշային տարավ հյուրանոցով խոհանոց: Նա հանգիստ պառկած էր նրա ձեռքերի վրա եւ լռում էր: Բենգալսկուն թվում էր, թե ինքը լսում է գեյշայի սրտի ուժեղ բաբախյունը: Նրա մերկ ձեռքերի վա նա նկատեց մի քանի ճանկռվածք եւ արմունկի մոտ մի կապտադեղին բիծ հարվածից: Հուզված ձայնով Բենգալսկին ասաց խոհանոցում կուտակված սպասավորներին.

-Արագ-արագ, վերարկու, խալաթ, սավան, ինչ-որ բան,- հարկ է օրիորդին փրկել:

Ինչ-որ մեկի վերարկուն նետվեց Սաշայի ուսերին, ինչ-որ ձեւով Բենգալսկին ճապոնուհուն փաթաթեց եւ նեղլիկ, մուր տարածող նավթավառի լամպերի լույսի ներքո նրան դուրս բերեց բակ, եւ դռնակը բանալով դեպի նրբանցք:

Դիմակը հանեք, դիմակով ավելի շուտ կճանաչեն, հիմա միեւնույնն է մութ է ,- բավական անհետեւողական ասում էր նա,- ես ոչ մեկին չեմ ասի:

Նրա համար հետաքրքրական էր: Նա հաստատ գիտեր որ դա Կաշտանովան չի, բայց ո՞վ է դա: Ճապունուհին լսեց: Բենգալսկին տեսավ անծանոթ թուխ դեմքը, որի վա վախը հաղթահարվում էր վտանգից խուսափած ուրախության արտահայտությամբ: Ավյունոտ, արդեն զվարթ աչքերը կանգ առան դերասանի դեմքի վրա:

-ինչպես ձեզ երախտապարտ լինել,- ասաց գեյշան հնչեղ ձայնով:- դե ինչ կպատահեր ինձ հետ, եթե դուք ինձ դուրս չբերեիք:

«Կինը վախկոտ չէ, հետաքրքիր կնիկ է,- մտածեց դերասանը,- բայց ո՞վ է նա: Հավանաբար, եկվորներից է»,- տեղի տիկնանց Բենգալսկին ճանաչում էր: Նա Սաշային կամացուկ ասաց.

-Ձեզ պետք է շուտ տուն հասցնել: Ասացեք ինձ ձեր հասցեն, ես կառապան կանգնեցնեմ:

Ճապոնուհու դեմքը վախից մռայլվեց:

-Ոչ մի կերպ, չ մի կերպ,- թոթովեց նա,- ես մենակ կհասնեմ, դուք ինձ թողեք:

-Դե, ինչպես դուք կհասնեք ձեր փայտիկների վրա էդպիսի ցեխի միջով, կառապան է պետք,- վստահորեն առարկեց դերասանը:

-Ոչ, ես վազեմ, Աստծո սիրույն, թողեք,- պաղատում էր գեյշան:

-Պատվով եմ երդվում, ոչ մեկին չեմ ասի,- վստահեցնում էր Բեն-

գալսկին:- Ես չեմ կարող ձեզ թողնել, դուք մրսեք: Ես ձեզ իմ ատաս-խանատվության տակ եմ վերցրել, եւ չեմ կարող: Եւ շուտ ասեք,- նրանք այստեղ էլ կարող են ձեզ ծեծ տալ: Չէ որ դուք տեսաք, դրանք լրիվ վայրենի մարդիկ են: Նրանք ամեն ինչի ունակ են:

Գեյշան դողդողաց: Արագ արցունքները հանկարծ գլորվեցին նրա աչքերից: Հեծկլտալով, նա ասաց.

-Սարսափելի, սարսափելի չար մարդիկ են: Տարեք ինձ դեռ Ռուտի-լովների մոտ, ես նրանց մոտ կգիշերեմ:

Բենգալսկին կառապանին ձայն տվեց: Նստեցին ու գնացին: Դերա-սանը նայում էր գեյշայի թուխ դեմքին: Այն նրան արօրինակ էր թվում: Գեյշան շրջվում էր: Աղոտ կռահում առկայծեց նրա մեջ: Ստաբերվեցին քաղաքային բամբասանքները Ռուտիլովների մասին, Լյուդմիլայի եւ նրա գիմնազիստի մասին:

-Ահա, դե դու՝ տղա ես,- ասաց նա հետո, որպեսզի կառապանը չլ-սեր:

-Աստծու սիրույն,- սարսափից դժգունած, աղատեց Սաշան:

եւ նրա թուխ ձեռքերը պաղատական շարժման մեջ ձգվեցին մի կերպ հագցրած վերարկուի տակից դեպի Բենգալսկին: Բենգալսկին կամացուկ ծիծաղեց եւ նույնքան կամացուկ ասաց.

-Դե ես ոչ մեկին չեմ ասի, մի վախեցիր: Իմ գրածը՝ քեզ տեղ հասց-նելն է, իսկ ավելին ես չգիտեմ: Սակայն դու՝ հանդուգն ես: Իսկ տանը չե՞ն իմանա:

-Եթե դուք չասեք, ոչ մեկը չի իմանա,- խնդրողական-քնքուշ ձայնով ասաց Սաշան:

-Դե ինձ վրա հույս դիր, իմ մեջ ինչպես գերեզմանում,- պատասխա-նեց դերասանը: Ինքս էլ տղեկ եմ եղել, կատակներ եմ արել:

***

Արդեն իրարանցումը սկսել էր հանդարտել,- բայց երեկոն լրվեց նոր դժբախտությամբ: Մինչեւ որ միջանցքում գեյշա էին հալածում, հրա-վառ դարձվորյակը թռչում էր ջահերի վրայով, ծիծաղում եւ անրեսա-բար հուշում էր Պերեդոնովին, թե պետք է լուցկին վառել եւ բաց թող-նել նրան, հրավառ դարձվորյակին, բայց ոչ ազատ, այդ պղտոր, աղ-տոտ պատերի վրա, եւ այդժամ, հագենալով ոչնչացմամբ, խժռելով այս

շինությունը, որտեղ այդպիսի սարսափելի ու անհասկանալի գործեր են տեղի ունենում, նա Պերեդոնովին հանգիստ կթողնի: Եւ Պերեդոնովը չէր կարողանում դիմակայել նրա համառ ներշնչանքին: Նա մտավ փոքրիկ հյուրասենյակ, որ պարասրահի կողքին էր: Ոչ մեկն այնտեղ չկար: Պերեդոնովը շուրջբոլորը նայեց, վառեց լուցկին, մոտեցրեց այն ներքեւից պատուհանի վարագույրին, հատակի մոտ, եւ սպասեց, մինչեւ որ վարագույրը վառվեց: Հրե դարձվարյակը ճարպիկ օձի պես սողաց վարագույրրն ի վեր, կամացուկ եւ բերկրալի ճղճղալով: Պերեդոնովը ելավ հյուրասենյակից եւ իր ետքից դուռը փակեց:

Ոչ մեկը հրդեհը չնկատեց:

Հրդեհը տեսան արդեն փողոցից, երբ ողջ վերնասենյակն արդեն կրակի մեջ էր: Հորը արագ էր տարածվում: Մարդիկ փրկվեցին, բայց տունն այրվեց:

Հաջորդ օրը քաղաքում միայն խոսում էին գեյշայի հետ կապված երեկվա իրարանցման եւ մեկ էլ հրդեհի մասին: Բենգալսկին խոսքիտ երը եղավ եւ ոչ մեկին չասաց, որ գեյշայի պես տղա էր զգեստափոխվել:

Իսկ Սաշան դեռ գիշերը, զգեստափոխվելով Ռուտիլովների մոտ եւ դարձյալ վերածվելով հասարակ, բոբիկ տղայի, փախավ տուն, պատուհանից ներս մտավ ու հանգիստ քնեց: Բամբասանքներով խլրտացող քաղաքում, որտեղ բոլորն ամենքի մասին ամեն ինչ գիտեին, Սաշայի գիշերային արկածն այդպես էլ գաղտնիք մնաց: Երկար, իհարկե, ոչ ընդմիշտ:

XXXI

Եկատերինա Իվանովնա Պիլնիկովան, Սաշայի մորաքույրն ու դաստիարակչուհին, մեկեն երկու նամակ ստացավ Սաշայի մասին՝ տնօրենից ու Կոկովկինայից: Այդ նամակները սարսափելի տագնապեցրին նրան: Աշնանային ճամփախաբանքին, թողնելով իր բոլոր գործերը, նա փութանակի ելավ գյուղից մեր քաղաք: Սաշան մորաքրոջը ուրախությամբ դիմավորեց՝ նա սիրում էր նրան:

Մորաքույրն իր սրտում նրա վրա մեծ փոթորիկ էր բերում: բայց նա այնքան բերկրալի նրա վիզն ընկավ, այնպես համբուրեց նրա ձեռքերը, որ նա առաջին րոպեին խիստ տոնը չգտավ:

-Քնքուշ մորքուրիկ, ինչ բարի ես դու, որ եկար,- ասում էր Սաշան ու բերկրալի նայում էր այտերի վրա բարի փոսիկներով եւ գործունյա-խիստ դարչնագույն աչքերով նրա գեր,շառագույն դեմքին:

-Դեռ վաղ է ուրախանալը, դեռ ես քո սանձերը կքաշեմ,- անորոշ ձայնով ասաց մորաքույրը:

-Դա ոչինչ,- անհոգ ասաց Սաշան,- քաշիր, միայն թե իմանայի ինչի համար, բայց այսդուհանդերձ դու ինձ սարսափելի ուրախացրիր:

-Սարսափելի,- կրկնեց մորաքույրը դժգոհ ձայնով,- ահա քո մասին ես սարսափներ իմացա:

Սաշան հոնքերը վեր բերեց եւ անմեղ, չհասկացող աչքերով նայեց մորաքրոջը: Նա բողոքեց.

-Էստեղ մի ուսուցիչ կա, Պերեդոնովը, հորինել էր, իբր թե ես՝ աղջիկ եմ, կպել էր ինձ, իսկ հետո տնօրենն իմ գլուխն արդուկեց, թե ինչու եմ ես օրիորդ Ռուտիլովների հետ ծանոթացել: Կարծես թե ես նրանց մոտ գողության եմ գնում: Իսկ նրանց ի՞նչ գործն է:

-«Լրիվ նույն երեխան է, ինչ կար,- շվարմունքի մեջ մտածում էր մորաքույրը:- Թե նա արդեն այնպես `է փչացել, որ նույնիսկ դեմքո՞վ է խաբում»:

Նա փակվեց Կոկովկինայի հետ եւ երկար զրուցում էր: Տխուր դուրս եկավ նրա մոտից: Հետո գնաց տնօրենի մոտ: Վերդարձավ լրիվ վշտացած: Սաշայի վրա թափվեցին մորաքրոջ ծանր կշտամբանքները: Սաշան լալիս էր, բայց կրքոտ վստահեցնում էր, որ դա՝ հերյուրանքներ են, որ ոչ մի անզսպություն օրիորդների հետ նա իրեն թույլ չի տվել: Մորաքույրը չէր հավատում: Նախատում էր, նախատում, արտասվեց, սպառնաց Սաշային քոթակել, ցավոտ քոթակել, հենց հիմա, հենց այսօր, միայն թե նախ այդ աղջիկներին կտեսնի: Սաշան հեծկլտում ու շարունակում էր վստահեցնել, որ ոչ մի վատ բան էլ չի եղել, որ այդ ամենը սարսափելի չափազանցված ու հորինած է:

Հորաքույրը բարկացած, արտասված, ուղեւորվեց Ռուտիլովների մոտ:

Հյուրասրահում Ռուտիլովների մոտ սպասելով՝ Եկատերինա Իվանովնան հուզվում էր: Նա ուզում էր մեկեն ամենադաժան կշտամբանքներով հարձակվել քույրերի վրա, եւ արդեն նախատալից չար խոսքերը նրա մոտ պատրաստ էին,- բայց խաղաղ, գեղեցիկ հյուրասենակը

նրանց նրան, իր ցանկություններից անկախ, ներշնչում էր հանգիստ մտքեր եւ մխիթարում էր նրա սրտնեղությունը: Սկսած եւ այստեղ թողնված ձեռագործը, կիպսեկները, պատերի վրայի փորագրանկարները, պատուհանների կողքերի մանրակրկիտ խնամված բույսերը, եւ ոչ մի տեղ փոշի չկա, եւ ընտանեկանության առանձնահատուկ տրամադրությունը, ինչ-որ մի բան, որ չի լինում ոչ կարգին տներում եւ որ միշտ գնահատում են տանտիրուհիները՝ մի՞թե այս կահավորանքի մեջ կարող էր տեղի ունենալ իր համեստ տղայի գայթակղությունը այս հյուրասենյակի հոգատար երիտասարդ տանտիրուհիների կողմից: Ինչ-որ սարսափելի անհեթեթ թվացին Եկատերինա Իվանովնային այն բոլոր ենթադրությունները, որոնք նա կարդում եւ լսում էր Սաշայի մասին, եւ, ընդհակառակը, անքան ճշմարտանման էին պատկերանում նրան Սաշայի բացատրություններն առ այն, թե ինչ էր նա անում Ռուտիլով օրիորդների մոտ՝ կարդում էին, զրուցում էին, կատակում էին, ծիծաղում էին, խաղում էին, ուզում էին տնային բեմադրություն սարքել, բայց Օլգա Վասիլեւնան չթույլատրեց:

Իսկ երեք քույրերը կարգին վախեցան: Նրանք դեռ չգիտեին, արդյոք գաղտնիք էր մնացել Սաշայի ծպտանքը: Բայց չէ որ նրանք երեքով էին, եւ նրանք բոլորը միմյանց հետ համերաշխ էին: Դա նրանց ավելի խիզախ դարձրեց: Նրանք երեքն էլ հավաքվեցին Լյուդմիլայի մոտ եւ շշուկով խորհրդակցում էին:

Վալերիան ասաց.

-Դե պետք է գնալ նրա մոտ,- սիրալիր չէ: Սպասում է:

-Ոչինչ, թող փոքր ինչ մեղմանա,- անհոգ պատասխանեց Դարյան,- թե չէ նա արդեն շատ բարկացկոտ կհարձակվի մեզ վրա:

Բոլոր քույրերը անուշահոտվել էին հրանունկի օծանելիքով,- ելան հանգիստ, զվարթ, բարետես, ինչպես միշտ շքեղազարդ, հյուրասենյակը լցրին իրենց քնքուշ թոթովանքով, սիրալիրությամբ եւ զվարթությամբ: Եկատերինա Իվնովնան մեկեն հմայվեց նրանց քնքուշ եւ վայելուչ տեսքով: Ցոփակյացների գտան,- մտածեց նա սրտնեղած գիմնազիստակական մանկավարժների մասին: Իսկ հետո մտածեց, որ նրանք, գուցե թե, իրենց համեստ տեսք են հաղորդում: Որոշեց նրանց դյութանքներին չտրվել:

-Կներեք, տիկնայք, ես պետք է ձեզ հետ լրջորեն բացատրվեմ,-

ասաց նա, ջանալով իր ձայնին գործնական չորություն հաղորդել:

Քույրերը նրան նստեցնում եւ զվարթ խոսում էին:

-Դե ձեզանից ո՞րն է,- անվստահորեն սկսեց Եկատերինա Իվանովնան:

Լյուդմիլան ասաց ուրախ եւ այնպիսի տեսքով, ասես թե նա, սիրալիր տանտիուհին, դժվար կացությունից հանում է հյուրին.

-Ամենից շատ ես էի ձեր զարմիկի հետ գլուխ դնում: Մեք շատ բաներում միեւնույն հայացքներն ու ճաշակն ունենք:

-Նա շատ հաճելի տղա է, ձեր զարմիկը,- ասաց Դարյան ասես վստահ, որ իր գովասանքը կերջանկացնի հյուրին:

-Ճիշտ որ, հաճելի է, եւ այնքան զվարճալի,- ասաց Լյուդմիլան:

Եկատերինա Իվանովնան իրեն ավելի ու ավելի անհարմար էր զգում: Նա հանկարծ հասկացավ, որ ինքը կշտամբանքների որեւէ նշանակալից առիթ չունի: Եւ նա արդեն սկսել էր դրա վրա բարկանալ, եւ Լյուդմիլայի վերջին խոսքերը նրան հնարավորություն տվեցին արտահայտելու իր սրտնեղությունը: Նա բարկացկոտ ասաց.

-Ձեզ զվարճանք է, իսկ նրան...

Բայց Դարյան ընդհատեց նրան եւ կարեկցող ձայնով ասաց.

-Ա՜խ, մենք արդեն տեսնում ենք, որ ձեզ են հասել Պերեդոնովի հերյուրանքները: Բայց չէ որ դուք գիտեք, նա՝ լրիվ գիժ է: Նրան տնօրենը գիմնազիա էլ չի թողնում: Միայն հոգեբույժի են սպասում զննման համար, եւ այդժամ նրան գիմնազիայից կվտարեն:

-Բայց թույլ տվեք,- իր հերթին ընդհատեց նրան Եկատերինա Իվանովնան, ավելի ու ավելի սրտնեղելով,- ինձ հետաքրքրում է ոչ թե այդ ուսուցիչը, այլ իմ զարմիկը: Ես լսել եմ, որ դուք,- կներեք, խնդրում եմ,- նրան անառակացնում եք:

Եւ, բորբոքված քույրերին նետեց այդ վճռական խոսքը: Եկատերինա Իվանովնան մեկեն իսկ մտածեց, որ շատ հեռու գնաց: Քույրերը միմյանց նայեցին տարակուսանքի եւ վրդովմունքի անչափ խաղարկված արտահայտությամբ, որ ոչ միայն Եկատերինա Իվանովնան խաբված կլիներ,- կարմրեցին, բոլորը մեկից բացականչեցին:

-Այ սիրալիր է:

-Սարսափելի է:

-Նորություններ:

-Տիկին,- սառն ասաց Դարյան,- դուք ընհանրապես արտահայտությունները չեք ընտրում: Մինչեւ կոպիտ խոսքեր ասելը, հարկ է իմանալ, թե դրանք որքանով են տեղին:

-Ախ, դա այնքան հասկանալի է,- աշխույժ խոսեց Լյուդմիլան նեղացած, բայց իր վիրավորանքը ներած սիրալիր աղջկա տեսքով,- չէ որ նա ձեզ օտար չէ: Իհարկե, ձեզ չեն կարող հուզել բոլոր այդ հիմար բամբասանքները: Մենք կողքանց էլ խղճում էինք նրան այդ պատճառով էլ փաղաքշեցինք: Իսկ մեր քաղաքում այժմ ամեն ինչից հանցագործություն են սարքում: Այստեղ, եթե դուք չգիտեք, այնքան սարսափելի, սարսափելի մարդիկ են:

-Սարսափելի մարդիկ,- կամացուկ կրկնեց Վալերիան զնգուն, փխրուն ձայնով, եւ ամբողջովին դողդողաց, ասես ինչ-որ անմաքուր բանի էր հպվել:

-Դե դուք հենց իրեն հարցրեք,- ասաց Դարյան,- դուք նրան նայեք՝ չէ որ նա դեռ սարսափելի երեխա է: Այդ դուք, գուցե թե, ընտել եք նրա պարզասրտությանը, իսկ կողքից ավելի լավ է երեւում, որ նա բացարձակաես, բացարձակապես փչացած տղա չէ:

Քույրերը այնքան վստահ ու հանգիստ էին ստում, որ չէր կարելի նրանց չհավատալ: Դե ինչ, չէ որ սուտը հենց հաճախ ճշմարտությունից ավելի ճշմարտանման է: Համարյա միշտ: Դե իսկ ճիշտը, իհարկե, ճշմարտանման չէ:

-Իհարկե, դա՝ ճիշտ է, որ նա մեզ մոտ շատ հաճախ էր լինում,- ասաց Դարյան:- Բայց մենք նրան ալեւս շեմից ներս էլ չենք թողնի, եթե դուք այդպես եք ուզում:

-Եւ ես ինքս այսօր կգնամ Խրիպաչի մոտ,- ասաց Լյուդմիլան:- Այդ ի՞նչ նա հորինել: Դե մի՞թե նա ինքը հավատում է այդ անհեթեթությանը:

-Ոչ, նա, ոնց որ թե, ինքն էլ չի հավատում,- խոստովանեց Եկատերինա Իվանովնան,- միայն թե նա ասում է, որ զանազան վատ լուրեր են պտտվում:

-Դե ահա, տեսնում եք,- ուրախալի բացականչեց Լյուդմիլան,- նա, իհարկե, ինքն էլ չի հավատում: Դե ուրեմն ինչո՞ւ է այս ողջ աղմուկը:

Լյուդմիլայի զվարթ ձայնը հրապուրում էր Եկատերինա Իվանովնային: Նա մտածում էր.

«Դե ի՞նչ է որ իրականում պատահել»: Չէ որ տնօրենն էլ է ասում, որ

նա այդ ամենին չի հավատում»:

Քույրերը դեռ երկար իրար ընդհատելով ծլվլում էին, Եկատերինա Իվանովնային համոզելով Սաշայի հետ իրենց ծանոթության բացարձակ անմեղության մեջ: Առավել համոզիչ ինելու ամար նրանք այն է սկսել էին ավելի մանրամասն պատմել, թե հատկապես երբ եւ ինչ են նրանք արել Սաշայի հետ, բայց այդ թվարկման մեջ շուտով շեղվեցին՝ չէ որ դրանք այնքան անմեղ, հասարակ բաներ են, որ պարզապես դրանք հիշելու հնարավորություն էլ չկա: Եւ Եկատերինա Իվանովնան, վերջապես, լիովին հավատաց այն բանին, որ իր Սաշան ե քնքուշ աղջիկներ Ռուտիլովները հիմար բամբասանքի անմեղ զոհեր են:

Հրաժեշտ տալիս, Եկատերինա Իվանովնան քնքշորեն համբուրվեց քույրերի հետ եւ նրանց ասաց.

-Դուք՝ քնքուշ, պարզ աղջիկներ եք: Ես սկզբում մտածում էի, թե դուք, կներեք կոպիտ խոսքի համար,- անպատկառներ եք:

Քույրերը զվարթ ծիծաղում էին: Լյուդմիլան ասում էր.

-Ոչ, մեք միայն խնդուն ենք եւ լեզվանի, դրա համար էլ մեզ տեղի որոշ սագեր չեն սիրում:

Ռուտիլովների մոտից վերադառնալուց հետո մրաքոյրը Սաշային ոչինչ չասաց: Իսկ նա նրան դիմավորեց վախեցած, շփոթված եւ նրան աչք էր ածում զգույշ եւ ուշադիր: Մորաքույրը գնաց Կոկովկինայի մոտ: երկար զրուցեց: Վերջապես մորաքույրը որոշեց.

«Մեկ էլ տնօրենի մոտ կգնամ»:

***

Նույն օրը Լյուդմիլան ուղեւորվեց Խրիպաչի մոտ: Նստեց հյուրասենյակում Վարվարա Նիկոլաեւնայի հետ, հետո հայտարարեց, որ նա գործով է եկել Նիկոլայ Վասիլեւիչի մոտ:

Խրիպաչի գրասենյակում աշխույժ խոսակցություն տեղի ունեցավ,- ըստ էության ոչ այն պատճառով, որ զրուցակիցներն իրար շատ բան ունեին ասելու, այլ այն պատճառով, որ երկուսն էլ սիրում էին խոսել: եվ նրանք միմյանց թափեցին արագահոս խոսակցությունները. խրիպաչը՝ իր չոր, ճղճղան շուտասելուկով, Լյուդմիլան՝ հնչեղ, քնքուշ թոթովանքով: Սահուն չճշմարտության անհերքելի համոզչականությամբ, Խրիպաչի վրա լցվեց կիասասուտ պատմությունը առ Սաշա Պիլնիկո-

վը հարաբերությունների մասին: Նրա գլխավոր մղումը, իհարկե, կարեկցանքն էր առ տղան, վիրավորված այդպիսի կոպիտ կասկածանքով, Սաշայի բացակայող ընտանիքի տեղը լրացնելը, եւ, ի վերջո, նա ինքն էլ այնքան հիանալի, կենսախինդ եւ պարզասիրտ տղա է: Լյուդմիլան նոյնիսկ արտասվեց, եւ արագահոս փոքրիկ արցունքները զամանալիորեն գեղեցիկ գլորվեցին նա վարդագույն այտերի վրայով նրա շփոթված ժպտացող շուրթերի վրա:

-Ճիշտ որ, ես նրան սիրեցի, ինչպես եղբոր: Նա՝ հիանալի եւ բարի է, նա այնպես է գնահատում փաղաքշանքը, նա համբուրում էր իմ ձեռքերը:

-Դա, իհարկե, շատ սիրալիր է ձեր կողմից,- ասում էր փոքր ինչ շփոթված Խրիպաչը,- եւ ձեր բարի զգացմունքներին պատիվ է բերում, բայց դուք զուր եք այդքան սրտին մոտ ընդունում այն հասարակ փաստը, որ ես պարտքս համարեցի տեղեկացնել բարեկամներին նձ հասած լուրերի մասին:

Լյուդմիլան, նրան չլսելով, շարունակում էր թոթովել, արդեն անցնելով հեզաբարո կշտամբանքի տոնայնությանը.

-Դե ինչ վատ բան կա այն բանում, ասացեք խնդրեմ, որ մենք մասնակցություն ունեցանք տղայի կյանքում, որի վրա էր հարձակվել ձեր այդ կոպիտ, խելագար Պերեդոնովը,- եւ երբ նրան կչքացնեն մեր քաղաքից: Եւ միթե դուք ինքներդ չեք տեսնում, որ այդ ձեր Պիլնիկովը՝ դեռ բոլորովին երեխա է, իրոք, բոլորովին երեխա:

Թափահարեց փոքրիկ գեղեցիկ ձեռքերը, զնգացրեց ոսկյա ապարանջանը, քնքուշ ծիծաղեց, ասես արտասվեց, հանեց թաշկինակը,- արցունքները սրբելու, Խրիպաչի վրա նրբին բուրմունք փչեց: Եւ Խրիպաչը հանկարծ կամեցավ ասել, որ նա «հիասքանչ է, ինչպես երկնային հրեշտակը», եւ որ այդ վշտալի միջադեպը «նրա թանկագին տրտմության մի ակնթարթն էլ չարժի»: Բաց նա զսպեց իրեն:

Եւ կարկաչում ու կարկաչում էր Լյուդմիլայի նրբին, արագահոս թոթովանքը, եւ ծխացրիվ էր անում Պերեդոնովի ստի պատրանածին շինությունը: Միայն թե համեմատես՝ խելագար, կոպիտ, աղտոտ Պերեդոնովը՝ եւ զվարթ, լուսավոր, զուգված բորումնավետ Լյուդմիլոչկան: Արդյոք բացարձակ ճիշտ է ասում Լյուդմիլան, թե ստով է համեմում, դա խրիպաչի համար միեւնույն էր, բայց նա զգում էր, որ Լյուդմիլոչկային

հավատալը, նրա հետ վիճելը, ինչ-որ հետեւանքներ թույլատրելը, թեկուզ եւ Պիլնիկովից տույժեր պահանջելը՝ կնշանակեր վրիպել եւ ողջ ուսումնական շրջանով մեկ խայտառակվել: Առավել եւս, որ դա կապված է Պերեդոնովի գործի հետ, ում, իհարկե, անոորմալ կճանաչեն Եւ Խրիպաչը, սիրալիր ժպտալով, ասում էր Լյուդմիլային.

-Ես շատ ափսոսում եմ, որ դա ձեզ ադպես հուզեց: ես ոոպե իսկ անգամ ինձ թույլ չեմ տվել Պիլնիկովի հետ ձեր ծանոթության հարցում ինչ-որ վատ մտքեր ունենալ: Ես շատ բարձր եմ գնահատում այն բարի եւ հաճելի մղումները, որոնք իշխել են ձեր արարքներն, եւ ոոպե իսկ անգամ ես քաղաքում տարածված եւ ինձ հասած լուրերին այլ կերպ չեմ նայել, քան որպես հիմար եւ խենթ բամբասանքի, որն ինձ իրապես վրդովեցրել է: ես պարտավոր էի տեղեկացնելու տիկին Պիլնիկովային, առավել եւս, որ նրան կարող էին էլ ավելի խեղաթյուրված տեղեկություններ հասնել, բայց ես մտադիր չեմ եղել անհնազանդացնել ձեզ եւ չեմ մտածել, որ տիկին Պիլնիկովան կշտամբանքներով ձեզ կդիմի:

Դե, տիկին Պիլնիկովայի հետ մենք խաղաղ լեզու ենք գտել,- զվարթ ասաց Լյուդմիլան,- բայց այ դուք, մեր պատճառով, Սաշայի վրա մի հարձակվեք: Դե եթե մեր տունն այդքան վտանգավոր է գիմնազիստների համար, ապա մենք, եթե ուզում եք, նրանց ներս էլ չենք թողնի:

-Դուք նրա հանդեպ շատ բարի եք,- անորոշ ասաց Խրիպաչը:- Մենք ոչինչ չենք կարող ունենալ այն բանի դեմ, որպեսզի նա ազատ ժամանակ, իր մորաքրոջ թույլտվությամբ, այցելի իր ծանոթներին: Մենք հեռու ենք աշակերտական բնակարանները կալանավայրերի վերածելու մտադրությունից: Սակայն, քանի դեռ Պերեդոնովի հարցը չի լուծվել, ավելի լավ կլինի, եթե Պիլնիկովը տանը նստի:

***

Ծուտով Ռուտիլովների եւ Սաշայի վստահ սուտը հաստատվեց Պերեդոնովների տանը սարսափելի իրադարձությամբ: Դա վերջնականապես քաղաքացիներին համոզեց այն բանում, որ Սաշայի եւ Ռուտիլով օրիորդների մասին բոլոր ասեկոսեները խելի զառանցանքներ են:

XXXII

Թխպոտ, ցուրտ օր էր: Պերեդոնովը վերադառնում էր Վոլոդինի մոտից: Անձկությունը տանջում էր նրան: Վերշինան Պերեդոնովին գայթակղելով իր այգի բերեց: Նա կրկին ենթարկվեց նրա դյութող կանչին: Երկուսով անցան տաղավար, թաց շավիղներով, ծածկված թափված, փտող, մուգ տերեւներով: Տաղավարում տրտմալի խոնավություն էր հոտում: Մերկ ծառերի ետեւում երեւում էր փակ պատուհաններով տունը:

-Ես ուզում եմ ձեզ ճշմարտությունը բանալ,- մռթմռթում էր Վերշինան՝ արագ նայելով Պերեդոնովին եւ դարձյալ սեւ աչքերը կողմ տանելով:

Նա փաթաթված էր սեւ կոֆտայի մեջ, կապված սեւ գլխաշորով, եւ ցրտից կապտած շուրթերով սեղմելով սեւ ծխամորճը, հոծ ամպերով սեւ ծուխ էր թողնում:

-Թքած ունեմ ես ձեզ ճշմարտության վրա,- պատասխանեց Պերեդոնովը,- վերին աստիճանի թքած ունեմ:

Վերշինան ծուռ քմծիծաղեց ու հակաճառեց.

-Մի ասեք: ես ձեզ սարսափելի խղճում եմ,- ձեզ խաբել են:

Նրա ձայնի մեջ չարախնդություն էր լսվում: Չար խոսքերը տեղում էին նրա լեզվից: նա ասում էր.

-Դուք հույսներդ դրեցիք հովանավորության վրա, բայց միայն թե դուք չափազանց դյուրահավատորեն վարվեցիք: Ձեզ խաբեցին, իսկ դուք այնքան հեշտ հավատացիք: Դե նամակ գրելն ամենքի համար էլ հեշտ է: Դուք պիտի իմանայիք՝ ում հետ գործ ունեք: Ձեր կինը՝ անխտրող անձ է:

Պերեդոնովը դժվարությամբ էր հասկանում Վերշինայի քրթմնջացող խոսքը. դրա ավելորդաբանությունների միջով հազիվ նրա համար նշմարվում էր իմաստը: Վերշինան վախենում էր բարձր ու պարզ խոսել՝ բարձր ասի՝ ինչ-որ մեկը կլսի, Վարվարային կհաղորդեն, կարող են անախորժություններ լինել, Վարվարան չի ամաչի կագ ու կռիվ սարքել, պարզ ասած՝ ինքը Պերեդոնովը կբարկանա, թերեւս, դեռ ծեծի էլ: Դե ակնարկես երեւի, որպեսզի նա ինքը գլխի ընկնի: Բայց Պերեդոնովը գլխի չէր ընկնում: Չէ որ առաջ էլ, պատահում էր, նրա երեսին ասում էին, որ նա խաբված է, իսկ նա ոչ մի կերպ չէր կարողանում գլխի ընկ-

նել, որ նամակները կեղծված են, եւ անընդհատ մտածում էր, որ իրեն հենց իշխանուհին է խաբում, քթից բռնած տանում է: Վերջապես Վերշինան ուղիղ ասաց.

-Դե նամակները, դուք կարծում եք, իշխանուհի՞ն է գրել: Դե հիմա արդեն ամբողջ քաղաքը գիտի, որ դրանք Գրուշինան է մոգոնել, ձեր կնոջ պատվերով. իսկ իշխանուհին ոչինչ չգիտի էլ: Ում ուզում եք հարցրեք, բոլորը գիտեն,- նրանք իրենք էին բերանից թռցրել: Իսկ հետո Վարվարա Դմիտրիեւնան եւ նամակներն էլ ձեզնից տարավ ու այրեց, որպեսզի հանցանշան չլինի:

Ծանր, մթին մտքեր էին պտտվում Պերեդոնովի ուղեղում: նա մի բան էր հասկանում, որ իրեն խաբել են: Բայց, որ իշխանուհին իբր թե չգիտի,- ոչ, դե նա գիտի: Ջուր չէ, որ նա կրակից ողջ դուրս եկավ:

-Դուք խաբում եք իշխանուհու մասին,- ասաց նա,- ես իշխանուհուն այրեցի, բայց չայրալրեցի՝ դուրս էր թքում: Հանկարծ մոլեգին ցասումը համակեց Պերեդոնովին: Խաբեցին: նա կատաղի բռունցքով խփեց սեղանին, պոկվեց տեղից եւ, Վերշինային հաջողություն չասելով, արագ տուն գնաց:

Վերշինան խնդությամբ նայեց նրա ետքից, եւ սեւ ծխալի ամպերը արագ թռչում էին նրա մթին բերանից ու գնում ու նետվում էին քամու բերանը:

Պերեդոնովին այրում էր ցասումը: Բայց երբ նա տեսավ Վարվարային, տանջալից վախը կալեց նրան եւ թույլ չտվեց նրան խոսք անգամ ասել:

Հաջորդ օրը Պերեդոնովն առավոտից պատրաստեց դանակը, փոքրիկ, կաշվե պատյանի մեջ, եւ խնամքով այն կրում էր գրպանում: Ողջ առավոտ, ընդհուպ մինչեւ իր վաղ ընթրիքը, նա նստեց Վոլոդինի մոտ: Նայելով նրա աշխատանքին, անհեթեթ դիտողություններ էր անում: Վոլոդինն աաջվա պես ուրախ էր, որ Պերեդոնովը նրա հետ գլուխ է դնում, իսկ նրա հիմարությունները նրան զվարճալի էին թվում:

Փնթփնթանը ողջ օրը պտույտ էր գալիս Պերեդոնովի շուրջը: Ընթրիքից հետո չթողեց քնի: Վերջնականապես տանջեց: Երբ, արդեն երեկոյան կողմ, նա այն է սկսել էր ննջել, նրան արթնացրեց չգիտես որտեղից հայտնված խեւ կնիկը: Կճատաքիթ, այլանդակ, նա մոտեցավ նրա անկողնուն ու փնթփնթաց.

-Կվասը ճզմել, կարկանդակը լմել, տապակածը տապակել:

Նրա այտերը մթին էին, իսկ ատամները փայլում էին:

-Գնա գրողի ծոցը,- գոչեց Պերեդոնովը:

Կտաճաքիթ կնիկը թաքնվեց, ասես նա երբեք չէր էլ եղել:

***

Իջավ երեկոն: Թախծոթ քամին ոռնում էր խողովակում: Դանդաղ անձրեւը մեղմիվ, համառորեն խփում էր լուսամուտներին: Պատուհաններից անդին բացարձակ սեւ էր: Պերեդոնովների մոտ Վոլոդինն էր: Պերեդոնովը դեռ առավոտյան կանչել էր նրան թեյ խմելու:

-Ոչ մեկի չթողնել: Լսո՞ւմ ես Կլավդյուշկա,- գոչեց Պերեդոնովը:

Վարվարան քմծիծաղում էր: Պերեդոնովը քրթմնջում էր.

-Ինչ-որ կնիկներ են էստեղ թրեւ գալիս: Պետք է նայել: Մեկն իմ ննջարան է խցկվել, խոհարարուհի վարձվելու: Իմ ինչի՞ն է պետք կճատաքիթ խոհարարուհին:

Վոլոդինը ծիծաղում, ասես մկկում, եւ ասում էր.

-ինչ-որ կնիկներ են բարեհաճում փողոցով քայլել, իսկ մեզ հետ նրանք ոչ մի կապ չունեն, եւ մենք մեր սեղանին նրանց չենք թողնի:

Երեքով սեղան նստեցին: Սկսեցին օղի խմել եւ կարկանդակներով խորտկել: Ավելի շատ խմում էի, քան ուտում: Պերեդոնովը մռայլ էր: Իսկ Վոլոդինը շուտ հարբում եւ, ի զվարճանս Վարվարայի, ինչ-որ անկապ բաներ էր դուրս տալիս:

Պերեդոնովը տագնապած էր: Նա քրթմնջում էր.

-Ինչ-որ մեկը գալիս է: Ոչ մեկին չթողնեք: Ասացեք, որ ես գնացել եմ աղոթելու փայտաճճվի Վանք:

Նա վախենում էր, թե հյուրերը կխանգարեն:

Ժերեդոնովը տագնապած էր: Նա քրթմնջում էր.

-Ինչ-որ մեկը գալիս է, ոչ մեկին չթողնեք: Ասացեք, որ ես գնացել եմ աղոթելու, փայտաճճվի վանք:

Նա վախենում էր, թե հյուրերը կխանգարեն: Վոլոդինն ու Վարվարան զվարճանում էին,- մտածում էին, թե նա լոկ հարբած է: Միմյանց աչքով էին անում, մեկուսի, թակում էին դուռը, տարբեր ձայներով խոսում էին:

-Գեներալ Պերեդոնովը տանն է:

-Գեներալ Պերեդոնովին ադամանդե աստղ:

Բայց Պերեդոնովն այսօր աստղով չգայթակղվեց: Գոռում էր.

-Չթողնել: Վզներին տալով քշել: թող առավոտյան բերեն: Հիմա ժամանակը չէ:

«Չէ,- մտածում էր նա,- հենց էսօր էլ պետք է գոտեպնդվել: Էսօր ամեն ինչ կպարզվի, իսկ դեռեւս թշնամիները պատրաստ են նրա գլխին ինչ ասես բերելու, որպեսզի ավելի հաստատ կործանեն»:

-Դե, մենք նրանց քշեցինք, վաղն առավոտյան կբերեն,- ասաց Վոլոդինը, նորից սեղանի մոտ նստելով:

Պերեդոնովը պղտոր աչքերով սեւեռվեց նրա վրա ու հարցրեց.

-Դու ինձ ընկեր ես, թե՞ թշնամի:

-Ընկեր, ընկեր, Արդաշա,- պատասխանում էր Վոլոդինը:

-Ընկեր սրտալի, փայտաճճի վառարանի ետեւի,- ասաց Վարվարան:

-Ոչ թե փայտաճճի, այլ ոչխար,- շտկեց Պերեդոնովը:- Դե, մենք քեզ հետ, Պավլուշա, կխմենք, միայն երկուսով: Եւ դու, Վարվարա, խմիր՝ միասին խմենք երկուսով:

Վոլոդինը քմծիծաղելով, ասաց.

-Եթե Վարվարա Դմիտրիեւնան էլ մեզ հետ խմի, ապա դա արդեն երկուսով չի ստացվում, այլ երեքով:

-Երկուսով,- մռայլ կրկնեց Պերեդոնովը:

-Մարդ ու կնիկ՝ մի սատանա,- ասաց Վարվարան ու հռհռաց:

Վոլոդինը մինչեւ վերջին րոպեն չէր կասկածում, որ Պերեդոնովն ուզում է իրեն մորթել: Նա մկկում, տխմարանում, հիմարություններ էր ասում, Վարվարային էր զվարճացնում: Իսկ Պերեդոնովը ողջ երեկո հիշում էր իր դանակի մասին: Երբ Վոլոդինը կամ Վարվարան մոտենում էին այն կողմից, որտեղ թաքցրած էր դանակը, Պերեդոնովը վայրագորեն գոռում էր, որպեսզի հեռանան: Երբեմն նա ցույց էր տալիս գրպանն ու ասում.

-Էստեղ, ախպեր ինձ մոտ էնպիսի մի բան կա, որ դու, Պավլուշկա, կկռնչաս:

Վարվարան ու Վոլոդինը ծիծաղում էին:

-Կռնչալ, Արդաշա, ես միշտ կարող եմ,- ասում էր Վոլոդինը,- կռ, կռ: Նույնիսկ շատ հասարակ:

Կարմիր, օղուց ապուշ կտրած, Վոլոդինը կռնչում ու շուրթերն էր փքում: Նա Պերեդոնովի հետ ավելի ու ավելի լկտի էր դառնում:

-Հիմարացրին քեզ, Արդաշա,- ասաց նա քամահրական ափսոսանքով:

-Ես քեզ կհիմարացնեմ,- կատաղի մռնչաց Պերեդոնովը:

Վոլոդինը նրան սարսափելի, սպառնալի թվաց: Հարկ էր պաշտպանվել: Պերեդոնովն արագ ճանկեց դանակը, նետվեց Վոլոդինի վրա եւ կոկորդը կտրեց: Արյունը գետի պես հոսեց:

Պերեդոնովը վախեցավ: Դանակը նրա ձեռքից վայր ընկավ: Վոլոդինն անընդհատ մկկում էր եւ ջանում էր ձեռքերով կոկորդից կառչել: Երեւում էր, որ նա մահացու վախեցած է, թուլանում է եւ ձեռքերը մինչեւ կոկորդը չի հասցնում: Հանկարծ նա փայտացավ ու փլվեց Պերեդոնովի վրա: Ընդհատ ճղավոց հնչեց,- ասես նա շնչասպառվել էր,- ու լռեց: Սարսափի մեջ ճչաց եւ Պերեդոնովը, նրա ետքից Վարվարան:

Պերեդոնովը հրեց Վոլոդինին: Վոլոդինը ծանրորեն փռվեց հատակին: Նա խռխռում էր, ոտքերն էր տարուբերում եւ շուտով մահացավ: Նրա բաց աչքերը ապակիանում էին՝ ուղիղ վեր հառած: Կատուն ելել էր հարեւան վերնասենյակից, հոտոտում արյունն ու չարաբար մռլտում էր: Վարվարան քարացածի պես կանգնել էր: Աղմուկի վրա վազ տվեց Կլավդիան:

-Տե՛ր իմ, մորթել են,- ճչաց նա:

Վարվարան ուշքի եկավ ու Կլավդիայի հետ ճվաղոցով դուրս թռավ հյուրասենյակից:

Լուրն իրադարձության մասին արագ տարածվեց: Հարեւանները հավաքվում էին փողոցում, բակում: Ով ավելի համարձակ էր, տուն անցան: Հյուրասենյակ երկար չէին համարձակվում մտնել: Աչք էին ածում, քչփչում էին: Պերեդոնովը խելագար աչքերով նայում էր դիակին, լսում էր դռան ետեւի շշուկները... Բութ տաղտուկը տոչորում էր նրան: Մտքեր չկային:

Վերջապես համարձակվեցին, մտան,- Պերեդոնովը նստել էր վիատ եւ ինչ-որ անկապ ու անիմաստ բան էր քրթմնջում:

Հունիսի 19, 1902թ..

Հեղինակի եւ նրա ստեղծագործության մասին

Ֆյոդոր Սոլոգուբ
/1863-1927/

Ֆյոդոր Տետերնիկովը /Սոլոգուբը/ ծնվել է Սանկտ-Պետերբուրգում, Պոլտավայի նահանգի գյուղացի, դերձակ Կուզմա Աֆանասեւիչ Տետերնիկովի ընտանիքում: Երկու տարի անց ծնվում է գրողի քույրը՝ Օլգան: Ընտանիքն աղքատ էր ապրում, վիճակը վատթարացավ, երբ 1867 թ. մահացավ Ֆյոդորի հայրը: Ընտանիքի ողջ հոգսը բաժին հասավ մորը, ով դաստիարակության գլխավոր միջոցն էր համարում ծեծը, դաժանորեն պատժելով որդուն փոքրագույն զանցանքի կամ սխալի համար, ինչն իր կնիքը դրեց նրա բարդ ու տառապալից բնավորության վրա:

Սկսնակ բանաստեղծի առաջին ավարտուն բանաստեղծությունները հայտնվեցին 1877 թվականին: Դրանից մեկ տարի առաջ Ֆյոդոր Տետերնիկովը ընդունվեց Վլադիմիրի քաղաքային ուսումնարան, իսկ 1879 թվականին՝ Պետերբուրգի Ուսուցիչների ինստիտուտ: Ինստիտուտն ավարտելուց հետո նա գնաց դասավանդելու հյուսիսային նահանգներում՝ սկզբում Կրեստցի, այնուհետեւ շատ այլ տեղեր՝ գավառում անցկացնելով ընդհանուր առմամբ մոտ տասը տարի:

Գրողի առաջին տպագրված ստեղծագործություն ն էր «Աղվեսն

ու ոգնին» առակը, որը տպագրվեց «Գարուն» մանկական ամսագրում, 1884թ. հունվարի 28-ին:

1892թ. սեպտեմբերին Ֆյոդոր Տետերնիկովը տեղափոխվեց Սանկտ-Պետերբուրգ, որտեղ դարձավ «Սեվերնի վեստնիկ» ամսագրի մշտական աշխատակիցը, եւ որտեղ տպագրվում էին ոչ միայն նրա բանաստեղծությունները, այլ նաեւ առաջին պատմվածքները, վեպը, թարգմանությունները Վերլենից, ակնարկները: Այդտեղ էլ ծնվեց նրա Սոլոգուբ կեղծանունը: Առաջինն այդ կեղծանունով լույս տեսավ «Ստեղծագործություն» բանաստեղծությունը՝ 1893 թ.: Ավելի ուշ, 1919 թվականի մայիսի 20-ին, «Սոլոգուբ» կեղծանունը դարձավ նրա պաշոնական ազգանունը:

1890-ական թվականների երկրորդ կեսից նա մտավ Սանկտ-Պետերբուրգի գրական շրջանակների մեջ՝ հաճախ էր լինում Մերեժկովսկիների մոտ, ինչպես նաեւ հետագայում սկսվեցին իր շփումները նաեւ կրտսեր սիմվոլիստների հետ:

1895-1896 թվականների վերջում լույս տեսան Ֆյոդոր Սոլոգուբի առաջին երեք գրքերը:

1902 թ. ամռանը նա ավարտեց «Չնչադեւը» վեպը, որը 1905 թվականին սկսվեց տպագրվել «Վոպրոսի ժիզնի» ամսագրում, բայց այն մինչեւ վերջ չտպագրվեց: 1907 թվականին «Չնչադեւը» լույս տեսավ առանձին գրքով:

1905-1907 թվականներին մեծ հաջողություն ունեին Ֆյոդոր Սոլոգուբի քաղաքական հեքիաթները: «Հեքիաթները» կարճառոտ, անպաճույճ եւ սրամիտ սյուժեով ստեղծագործություններ էին, որոնք գրվում էին մեծահասակների համար, թեպետ Սոլոգուբն առատորեն օգտագործում էր մանկական պատումի բառապաշարն ու հնարքները:

1907-1910 թվականներին Սոլոգուբի ստեղծագործության մեջ գերակշռող տեղ էր հատկացվել դրամատուրգիային: Առաջին փոր-

ձը եղավ «Պատարագ Ինձ» միստերիան:

Սոլոգուբի պիեսները բեմադրել են Վսեվոլոդ Մեյերհոլդը, այնուհետեւ Նիկոլայ Եվրեինովն ու շատ ուրիշներ:

1907-1913 թվականներին տպագրվեցին «Արարվող լեգենդ» վեպ-եռագրության բոլոր մասերը:

1908 թվականին Ֆյոդոր Սոլոգուբը կնության վերցրեց Անաստասիա Նիկոլաեւնա Չեվբոտարեւսկայային, ով, ըստ գրողի վկայության, դարձավ նրա մշտական եւ գործունյա նեցուկը:

1921 թվականին Սոլոգուբը Ռուսաստանից հեռանալու թույլտվություն ստացավ, սակայն այն բանից հետո, երբ Անաստասիա Չեբոտարեւսկայան ինքնասպան եղավ, Սոլոգուբը մնաց Ռուսաստանում:

Ֆյոդոր Սոլոգուբը մահացավ 1927թ. դեկտեմբերի 5-ին: Թաղված է Պետերբուրգի Սմոլենսկի ուղղափառ գերեզմանոցում:

Ինչպես ասում էր Օսիպ Մանդելշտամը. «Անցյալից նա ժառանգություն ստացավ մի բուռ խոսք, աղքատիկ բառարան եւ ոչ շատ կերպարներ: Բայց ինչպես քարերով խաղացող մանուկ, նա մեզ ուսուցանեց խաղալ եւ ժամանակի այդ աղքատիկ շնորհներով պարզ ազատությամբ եւ ներշնչանքով»:

...

Եթե Ֆյոդոր Սոլոգուբի պոեզիան ու թարգմանությունները բավականաչափ ծանոթ են ընթերցողին, մանավանդ Պոլ Վերլենից ու Արթյուր Ռեմբոյից կատարած հիասքանչ թարգմանությունները, ապա նրա արձակը, չնայած առկա նաեւ միջակ կամ թույլ գործերին, գոյում է հիմնականում որպես անծանոթ աշխարհ:

«Իր ողջ արձակով Սոլոգուբը կտրուկ շրջադարձ է կատարում նատուրալիզմի տրորված արահետներից՝ կենցաղային, լեզվական, հոգեբանական: Եւ նորագույն ռուս արձակի ոճական որոնում-

ներում, նատուրալիզմի ավանդույթների դեմ նրա պայքարում, առ Արեւմուտք ինչ-որ կամրջակ նետելու նրա փորձերում՝ այդ ամենի մեջ, եթե ուշադիր զննենք, մենք կտեսնենք Սոլոգուբի ստվերը: Սոլոգուբից է սկսվում ռուսական արձակի նոր գլուխը,- այդպես էր գրում 1924 թվականին ռուս ուշագրավ արձկագիրներից մեկը՝ Եվգենի Զամյատինը, եւ եզրափակում էր.- Դաժան ժամանակը շատերին կջնջի, բայց Սոլոգուբը ռուս գրականության մեջ կմնա»:

Չնայած ժամանակն ամեն ինչ արեց, որ «ջնջի» նրան, սակայն Ֆ.Սոլոգուբը, եթե գրած լիներ անգամ միայն «Չնչադեւը» վեպը՝20-րդ դարասկզբի գլուխգործոցներից մեկը, որն առաջին անգամ տպագրվեց 1905 թվականին, եւ կենդանության օրոք տասնմեկ հրատարակություն ունեցավ, եւ որի վերահրատարակությունն եղավ նոր միայն 1958 թվականին, որին հաջորդեց երկարատեւ դադարն ու լռությունը,- դարձյալ կմնար ռուս գրականության պատմության նշանավոր էջերում: :

Ինչպես ասված է վեպի հեղինակի առաջաբանում, այն գրվել է տասը տարի /1892-1902/, թեպետ իրականում Սոլոգուբի աշխատանքը հենց «Չնչադեւի» վրա սկսվել է դեռ 1897 թվականից. մինչ այդ կային բազում ուրվագծեր, դրվագներ, որոնք մասամբ ենթադրվում էին «Ծանր երազների» համար, բայց որոնք այդպես էլ չմտան այդ վեպի մեջ: Վեպը տպագրելը հեշտ չեղավ:

1905 թվականին, հեղափոխության թեժ շրջանում, երբ, ըստ Ա.Բլոկի հայտնի խոսքի? «երաժշտություն չէր լսվում», հայտնվեց Սոլոգուբի հանճարավոր «Չնչադեւը», եւ այդ ժամանակից ի վեր տարածվեց միֆը հոռետես Սոլոգուբի մասին, ում մեջ բուն է դրել «մահվան խայթը», չնայած, ինչպես նկատել է Վ.Երոֆեեւը, դեռեւս Հին Հունաստանում գոյություն ուներ փիլիսոփայության դիտարկումը, որպես միակ գիտություն, որը մարդուն ուսուցանում էր մահանալու արվեստը: Բացի այդ, Սոլոգուբը շատ էր գրում մահվան

մասին, քանի որ անհնար էր այդ մասին չգրել համատարած մղձավանջի ու մահացման մեջ: Այդ ցնորական աշխարհում կյանքը փոխելն անհնար էր, այնտեղից կարելի էր լոկ փախուստ իրագործել առ իրականության այլ հարթություն:

20-րդ դարի գրականության մեջ, ինչպես նկատել են որոշ մշակութաբաններ ու գրաքննադատներ, նշանակալից դեր է խաղացել դեստրուկտիվ պոետիկան, այդ թվում նաեւ՝ աբսուրդի պոետիկան: Առողջ բանականության համընդհանուր հերքումը եւ դրա փոխարինումը ալոգիզմով ազդարարում էին արդեն ավագ սերնդի սիմվոլիստները: Ֆյոդոր Սոլոգուբն առաջիններից մեկն էր այդ շրջանում, որ գեղարվեստորեն մարմնավորեց այդ աշխարհը իր «Չնչադեւը» վեպում, որի որոշ հատվածներում, ինչպես նաեւ դրան հաջորդող «Հեքիաթներ» գրքում, արդեն կան այն սերմերը որոնք հետո այլացում ապրելով պիտի հայտնվեին Դանիիլ Խարմսի «Պատահարներ» եւ այլ շատ ու շատ գրքերում: Նմանությունը տարածվում է ոչ միայն բովանդակության /երկու գրողներն էլ ներկայացնում են աշխարհի գրոտեսկային-աբսուրդ պատկերը/, այլեւ գեղարվեստական կերպի ու պոետիկայի առանձնահատկությունների վրա: Գոյության անհեթեթության զգացողությունը, որը բնորոշ է թե Սոլոգուբին, թե Խարմսին, հավանաբար պայմանավորված էր պատմական դարաշրջանի անասելի անիմաստությամբ:

Ֆյոդոր Սոլոգուբի «Չնչադեւը» հայտվեց 1905 թվականին, երբ հոգեբանական գերակշռող հատկանիշը դարձել էր տագնապը, թախիծը, ահն ու կարոտը, երբ աբսորդի պոետիկան ակտուալանում էր: Կարծում եմ? մեզ չէ, որ այդ պետք է բացատրել:

Վարդան Ֆերեշեթյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

.....7

ՖՅՈԴՈՐ ՍՈԼՈԳՈՒԲ

ՉՆՉԱԴԵՎԸ

Թարգմանիչ՝
Վարդան ՖԵՐԵՇԵԹՅԱՆ

Ստեփանակերտ 2018

Հրատ. խմբագիր՝ Հրանտ Ալեքսանյան
Սրբագրիչ՝
Էջադրումը՝ Սարինա Ավանեսյանի
Կազմի ձեւավորումը՝ Սարինե Սայիյանի

Թուղթը՝ օֆսեթ,տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 28 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ,
Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը. Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ(հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016

Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն. ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան» (անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ(հատոր 4) - 2017
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքները ընդդեմ նախագծերի» - 2017
Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
Հեռ.: +37497252323